



ԵՄԻԼԻ ԲՐՈՆՏԵ
ՍԱՆՉԻՆ,
ՀՈՂՈՎԵՐ
ԿՐԵՆՈՒԹ

ԷՄԻԼԻ ԲՐՈՆՏԵ

**ՄԱՆԵԳԻՆ
ՀՈՂԱՆԵՐԻ
ԴՄՆԱԿԱՆԻ**

ՎԵՊ



ԵՐԵՎԱՆ «ՆԱԻՐԻ» 1998

Emily Brontë
Wuthering Heights
Translated into Armenian
by Aram Boudaghian

ԲՐՈՆՏԵ Է.

*Ք 914 Մուկդին հողմերի դարավանդ: Վեպ/էմիլի Բրոնտե;
անգլ. թարգմ. Ա. Բուդագյանը.— Եր.: «Նաիրի»,
1991.— 416 էջ:*

Անգլիական նշանավոր գրող էմիլի Բրոնտեն (1818—1848) սրտկե-
րում է 18-րդ դարի վերջի և 19-րդ դարի սկզբի անգլիական գավառի
կյանքը:

Վեպի գլխավոր հերոսի բովանդակալից ու խոր ներաշխարհը խեղձած
է սոցիալական անարդարությունը նա համակված է խոր ատելությունը,
շրջապատող հասարակության հանդեպ: Յուր վրեժխնդրության գենքը
դարձնելով փողի իշխանությունը, նա դաժանորեն պատժում է իր թշնա-
միներին:

Ր $\frac{4702010100 (38)}{705 (01) 91}$ 100-91

ԳՄԻ 81.4 ԱճՊԼ.-44

ISBN 5-550-00662-6

© «Նաիրի» հրատարակչություն
Թարգմանված է հայերեն, 1992



ՊԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

1801... Ծն հենց նոր եմ վերադարձել իմ տանտիրոջ մոտից՝ միակ հարևանիս, որը դեռ կհասցնի ինձ էլ ձանձրացնել: Այս վայրը, անկասկած, գեղեցիկ է: Ամբողջ Անգլիայում հազիվ թե գտնվի մարդկային ժխորից լիովին մեկուսացած այսպիսի մի տեղ: Հոռետեսի համար սա կատարյալ եղեմ է: Իսկ միտար Հիթքլիֆը և ես այդ մենությունը կիսելու շատ հարմար զույգ ենք: Նա մի սքանչելի մարդ է: Այդ մարդը չի էլ պատկերացնում, թե ինչպի՞սի ջերմությամբ իմ սիրտը լցվեց իր հանդեպ, երբ ձիով մոտենալիս տեսա, թե ինչպես հոնքերի տակ քաշվեցին կասկածով լի նրա սև աչքերը, և ինչպես նախանձելի վճռականությամբ նա մասներն ավելի խոր մտցրեց իր ժիլետի մեջ, հենց որ հայտնեցի իմ անունը:

— Միտար Հիթքլիֆ, — հարցրի ես:

Ի պատասխան նա լռելյայն գլխով արեց:

— Միտար Լոքվուդ՝ ձեր նոր վարձակալը, սբր: Ինձ համար պատիվ եմ համարում ժամանելուց անմիջապես հետո հույս հայտնել, որ ձեզ նեղություն չեմ պատճառել, երբ այդպես համառորեն խնդրում էի թույլատրել տեղափոխվելու Կեոնեխենի: Գազարակատուն: Լսեցի, որ երեկ ինչ-որ մտահոգության մեջ եք եղել:

— Կհոնեխների ազարակատունը իմ սեփականութունն է, սըր,— ջղաձիգ շարժումով ընդհատեց նա:— Ոչ մեկին թույլ չեմ տա անհանգստացնել ինձ, երբ դա իմ իրավունքն է: Ներս անցնը:

«Ներս անցեքը» նա արտասանեց սեղմած ատամների արանքից, և դա հնչեց որպես անեծք. «Գրողը տանի քեզ», և դարպասն էլ, որին հենվել էր, այդ անեծքի վրա շրացվեց. կարծում եմ, հենց դա էլ դրոշեց ինձ ընդունել նրա հրավերը: Այդ մարդը հետաքրքրութուն շարժեց իմ մեջ նրանով, որ ավելի շատ էր խուսափում մահկանացուներից, քան ես:

Երբ նա տեսավ, որ ձիուս կուրծքը համարձակորեն ուղղվում է դեպի փակոցը, ձեռքը պարզեց, դռան շղթան քաշեց, ապա խորասուզված քայլեց խճածածկ շավիղով, և հենց որ բակ մտանք, կանչեց.

— Զոգեֆ, տար միստր Լոքվուդի ձին և մի քիչ գինի բեր: «Ահա ուրեմն և սպասարկող ամբողջ անձնակազմը,— մտածեցի ես՝ լսելով նրա միանգամից տրված հրկու հրամանը:— Զարմանալի չէ, որ սալաքարերի արանքներում խոտ է բուսնում, իսկ թարմ ցանկապատի միակ խուզողները անասուններն են:

Զոգեֆը տարիքով, ոչ, ավելի շուտ մի ծեր մարդ էր, գուցե շատ ծեր, բայց առույգ ու ջլապինդ:

«Տեր աստված, օգնիր մեզ»— ցածրաձայն ինքն իրեն ասաց նա՝ ընդդժմած դժգոհությամբ օգնելով ինձ իջնել ձիուց: Այդ պահին ինձ վրա գցած նրա մռայլ հայացքից գթասրտորեն ենթադրեցի, որ աստվածային օգնութունը հարկավոր է նրան ճաշը մարսելու համար, և որ նրա բարեպաշտական այդ բացականչութունը ոչ մի կապ չունի իմ անսպասելի ժամանման հետ:

«Մոլեգին հողմերի դարավանդ» է կոչվում միստր Հիթքլիֆի բնակավայրը: «Մոլեգին» բառը բազմիմաստ մակդիր է, որ պատկերացում է տալիս մթնոլորտային այն ահավոր խառնաշփոթության մասին, որին այդ վայրը հենթակա է մրրկածուփ եղանակներին. երևի այդ բարձունքի վրա անընդհատ ուժգին հողմեր են սուրում: Մտորոտում սլացող հյուսիսային քամու թափի մասին կարելի է դատել տնից ոչ հեռու աճող մի քանի ցածրիկ եղևնիներից և դալուկ տատաս-

կաթփերից, որոնց բոլոր ոստիկները հակվում են միայն մի կողմ, ասես ողորմություն են հայցում արևից: Բարեբախտաբար, ճարտարապետը հեռատես է եղել և ամուր է կառուցել տունը՝ նեղ լուսամուտները խորանում են պատի մեջ, իսկ անկյունները պաշտպանված են քարե մեծ ելուստներով:

Դռան շեմքից ներս անցնելուց առաջ ես կանգ առա, որ հիացմունքով դիտեմ ճակատին, հատկապես զլխավոր մուտքի վերևում, առատորեն դեսուդեն ցրված գրոտեսկային հարթաքանդակները, որոնց մեջ մաշված, գունաթափ գրիֆաքանդակների ու շարաճճի տղաների վայրագ քառուսմ նկատեցի «1500» տարիթիվը և «Հևրթըն էրնշոու» անունը: Ուզում էի մի քանի դիտողություն անել և սան նոթոտ տիրոջը խնդրել համառոտակի պատմել տեղի պատմությունը, բայց նա երևաց դռան մոտ այնպիսի տեսքով, ասես պահանջում էր ներս մտնել կամ էլ անմիջապես թողնել հեռանալ, իսկ ես չէի ուզում նրան համբերությունից հանել, մինչև որ շտեսնեի տան ներսի մեկուսի անկյունները:

Մեկ աստիճան բարձրանալով, մենք, առանց նախասենյակ կամ միջանցք մտնելու, անցանք հյուրասենյակ. դս այստեղ կոչվում է տուն: Այն առհասարակ հանդիսանում է թի խոհանոց և թի ճաշասենյակ: Բայց Դարավանդում խոհանոցին, ըստ երևույթին, հատկացված էր մի այլ տեղ. համենայն դեպս, ձայների աղմուկը և խոհանոցի սպասքի շխկշխկոցը լսվում էր պատի մյուս կողմից: Մեծ բուխարու մեջ ոչինչ չէին տապակում կամ թխում, չէին փայլում պատերին շարված պղնձե կաթսաները և թիթեղյա քամիչները: Եվ, սակայն, մի անկյունում թե՛ ջերմությունից և թե՛ լույսից փայլին էին տալիս բազմաթիվ անազե ափսեներ, որոնք արծաթե սափորների ու գավաթների հետ միասին, մեջընդմեջ շարված կաղնեփայտե լայն դարակների վրա, շարք-շարքի հետևից հասնում էին մինչև տանիք, որի տակ ոչ մի ծածկ չկար, բացի կառուցապատ այն տեղերից, ուր կախված պահվում էին վարսակի բլիթներ, տավարի, ոչխարի ու խոզի ապխտած ազդրեր: Բուխարու վերևի մասում կախված էին զանազան տեսակի մաշված հին հրացաններ և մի զույգ հեծելազորային ատրճանակ, և, որպես զարդարանք, բուխարու ելուստի երկայնքով դրված էին անճաշակ

ներկված երեք թիթիղյա տուփ: Հատակը պատած էր ողորկ սպիտակ քարով. բարձր թիկնակներով հնաոճ բազմոցները ներկված էին կանաչ գույն, իսկ մեկ-երկու սև գույնի ծանր աթոռներ թաքնված էին ստվերում: Դարակների տակ պառկած էր ձագերի ոհմակով շրջապատված կարմրադարչնագույն կոշիկներ՝ փոշնափրկ. ուրիշ շներ էլ կային, որ տեղավորվել էին մյուս խորշերում:

Սենյակն ու կահույքը անսովոր չէին թվա, եթե պատկանեին հյուսիսաքնակ հասարակ ֆերմերի, որն աչքի է ընկնում իր համառության նշաններ արտահայտող դեմքով և մարմնի ամրակազմ անդամներով, որոնց ուժը ցայտուն կերպով ընդգծում էին նրա կարճ շավարն ու զանգապանները: Եթե շրջապատում, այդտեղից հինգ-վեց մղոն հեռու, ճաշից հետո ներս մտնեք որևէ տուն, ապա այդ տիպի անհատներ կտեսնեք կլոր սեղանի մոտ, բազկաթոռին բազմած, առջևը դրած փրփրակալած էլլով լի մի գավաթ: Բայց միստր Հիթթլիֆը իր բնակավայրի ու ապրելակերպի տարօրինակ հակադրությունն է: Արտաքինով նա թխադեմ գնչու է, հագուստով ու շարժումներով՝ ջենտլմեն, այսինքն՝ ջենտլմեն այնքանով, որքանով այդպիսին կարող է լինել գյուղական սքուայրը¹: Գուցե զգեստը անկարգ է, բայց թափփված չէ, որովհետև կազմվածքը սլացիկ է, գեղեցիկ և փոքր ինչ անբարեհամբույր է: Ոմանք, երևի, կմտածեն, որ նա ունի լավ դաստիարակությունը չհամապատասխանող գոռոգության որոշ նշաններ: Բայց իմ մեջ հղած համակրանքի զգացումը ինձ հուշում է, որ դա բոլորովին էլ այդպես չէ. բնազդով զգում եմ, որ միստր Հիթթլիֆի զսպվածությունը բխում է նրանից, որ նա իր զգացմունքները չի արտահայտում և չի ձգտում փոխադարձ բարեկամական կապերի: Նա հավասարապես կսիրի ու կատի թաքուն և հանդգնություն կհամարի, եթե իրեն սիրեն կամ ատեն: Բայց ոչ, ես չափն անցա, իմ սեփական հատկությունները առատորեն շնորհում եմ նրան: Գուցե միստր Հիթթլիֆը իր այլազան պատճառներն ունի ձևովը հետ քաշելու, երբ նրան պարտադրում են ծանոթություն. դրանք ինձ դրդող պատճառների նման չեն: Թույլ

¹ Կալվածատեր (անգլ.):

տվիք հուսալ, որ իմ խառնվածքը եղակի խառնվածք է: Սի-
րելի մայրս հաճախ ասում էր, որ ես երբեք բարեհարմար
բնտանեկան օջախ չեմ ունենա, և հենց այս ամառ ապա-
ցուցեցի, որ ես բոլորովին արժանի չեմ դրան:

Երբ հրաշալի եղանակին մի ամիս անց էի կացնում ծո-
վափին, հանդիպեցի մի շատ հմայիչ էակի, որը աչքիս իս-
կական աստվածուհի էր թվում, քանի դեռ ինձ վրա ոչ մի
ուշադրութիւն չէր դարձրել: Ես իմ սերը երբեք չէի արտա-
հայտում խոսքով, բայց եթե հայացքը կարող էր խոսել,
ամենասովորական ապուշն անդամ գլխի կընկներ, որ ես
սիրահարված եմ մինչև ականջներս: Նա, ի վերջո, հասկա-
ցավ և սկսեց նայել ինձ պատասխան հայացքով, որն ամե-
նաբաղցրն էր բոլոր այն հայացքներից, որ կարելի է հրկա-
կայել: Իսկ ինչպե՞ս վարվեցի ես: Խոստովանում եմ ամա-
չելով. դարձա սառույցի պես սառը և խխունջի նման քաշվեցի
պատշանիս մեջ. նրա ամեն մի հայացքից հետո դառնում էի
ավելի սառը և ավելի շատ էի հետ քաշվում, մինչև որ, վեր-
ջապես, խեղճ ու անմեղ աղջիկը դադարեց հավատալ իր
պացմունքներին և, իր հավանական սխալից շփոթված ու
ճնշված, համոզեց մորը, որ իսկույն մեկնեն: Տրամադրութիւն
այս տարօրինակ շրջադարձից հետո ես վաստակեցի հաշ-
վեկկատ ու անսիրտ մարդու համբավ. թև որքան անիրավացի
էր դա, միայն ինքս գիտեմ:

Նստեցի բուխարու կողքին ուղիղ տանտիրոջ բաղկաթոռի
դիմաց, և տիրող լուսթյան մեջ փորձեցի շոյել շանը, որը
լակոտներին թողած, գալլի պես սկսեց հետևից մոտենալ իմ
սրնբամսին: Նրա շրթունքը վեր սողաց մերկացնելով մխրճե-
լու պատրաստ սպիտակ տտամները: Ի պատասխան իմ շո-
յանքին, ես լսեցի երկար ու խուլ գոմոց:

— Կավ կանեք, շանը հանդիստ թողնեք,— քրթմնջաց
մխտոր Հիթքլիֆը, քացի տալով շանը և կանխելով նրա էլ
ավելի կատաղի հարձակումը:— Դա երես տված շուն չէ,
դրա համար չէ, որ պահում ենք:— Ապա քայլելով դեպի
կողքի դուռը՝ կանչեց.

— Զոզե՛ֆ:

Զոզեֆը մառանի խորքից ինչ-որ անհասկանալի բան
փնթփնթաց, բայց վերև բարձրանալու նշաններ ցույց չտվեց,

ուստի տանտերն ինքը իջավ նրա մոտ՝ թողնելով ինձ դեմառ-
դեմ այդ անզգամ էգ շան և երկու վայրադ, փռչոտ գամփռերի
հետ, որ միասին աշալուրջ հետևում էին իմ բոլոր շարժում-
ներին: Ես բոլորովին տրամադիր չէի զգալու նրանց ժանիք-
ների ուժը և սուսուփուս հատած էի իմ տեղում, բայց մտա-
ծելով, որ նրանք հազիվ թե հասկանան ինձ հասցրած իրենց
անխոս վիրավորանքները, դժբախտություն ունեցաւ երեքին
էլ աչքով անել և ծոմոկ բերանս. իմ ծամածոություններից
մեկն այնպէս դայրացրեց դամային, որ նա հանկարծ կա-
տաղեց և նետվեց ծնկներին: Ես նրան հրեցի մի կողմ և
խկույն սեղանը քաշեցի՝ իմ ու նրա միջև: Այդ բանը ոտքի
հանեց ամբողջ ոհմակը. կես դուժին տարբեր մեծության և
տարիքի շորքոտանի դեեր ծածուկ որջերից դուրս նետվելով,
վազեցին դեպի սենյակի կենտրոն: Ես զգացի, որ իմ կրունկ-
ներն ու բաճկոնիս փեշերը դառնում են գրոհի առարկա.
Ինչքան կարող էի աշխատում էի անթրոցով հետ մղել ավելի
խոշորներին և խաղաղությունը վերահաստատելու համար
ստիպված էի բարձրաձայն օգնության կանչել տնեցիներից
որևէ մեկին:

Միտար Հիթքլիֆը և նրա ծառան մառանի աստիճաններ-
ով վերև էին բարձրանում զայրացուցիչ սառնասրտությամբ:

Չեմ կարծում, որ նրանք շտապում էին գեթ մի վայրկյան
սովորականից շուտ երևալ, թեև բուխարու մոտ աղմուկն ու
կաղկանձյունը շարունակում էին փոթորկվել: Բարեբախտա-
բար, խոհանոցից շտապեցին օգնության հասնել. քշած
փեշերով ու թևքերով, կրակից կարմրատակած այտերով մի
կին, ձեռքի տապակը թափահարելով, նետվեց մեր մեջտեղը:
Նա իր գենքով ու լեզվով այնքան հաջող սկսեց գործել, որ
փոթորիկը, ասես կախարդական մի ուժով իսկույն խաղաղ-
վեց, և միայն այդ ուղմիկի կուրծքն էր, ուժեղ քամուց փո-
լորկահատույզ եղած ծովի պես, արագորեն բարձրանում ու
իջնում, հրը շեմին երևաց տանտերը:

— Հր, գրողը տանի, ի՞նչ է պատահել, — հարցրեց տան-
տերը և նայեց ինձ այնպիսի հայացքով, որ ես քիչ էր մնում
պոռթկայի ալդպիսի անհյուրընկալ ընդունելությունից:

— Իրոք որ, գրողը տանի, — փնթփնթացի, — ավետարա-
նական դիվահար խոզերի հոտի մեջ շար ոգին հազիվ թե

ավելի ուժեղ լիներ, քան ձեր այս շների մեջ է, սըր: Հյուրին նրանց հետ թողնելը նույնն է, թե վազրի երախը գցել նրան:

— Նրանք երբեք չեն դիպչի մարդուն, եթե նա ինքը որևէ բանի ձեռք չտա, — նկատեց Հիթքլիֆը՝ շիշը գնելով իմ առջև և սեղանը տեղադրելով իր նախկին տեղը: — Շները պետք է զգոն լինեն: Դե, մի բաժակ գինի:

— Ոչ, շնորհակալ եմ:

— Հո չեն կծել:

— Եթե կծած լինեին, ես գիտեմ, թե կծողին ինչ կանեի: Հիթքլիֆի դիմագծերը մեղմացան, ժպիտ անցավ դեմքով:

— Դե լավ, լավ, — ասաց նա, — դուք հուզված եք, միստր Լորվուդ: Մի քիչ գինի խմեք: Այս տան մեջ այնքան հազվապեպ են հյուրեր երևում, որ ես, ինչպես և իմ շները, խոստովանում եմ, չենք կարողանում նրանց ընդունել պատշաճ ձևով: Դե, ձեր կենացը, սըր:

Կիսով ողջունեցի և ի պատասխան ասացի. «ձեր կենացը»: Զգացի, որ հիմարություն կլիներ շների ոհմակի անքաղաքավարության պատճառով նստել և մռայլվել, բացի այդ, չէի ուզեցու հնարավորություն տալ տանտիրոջը զվարճանալ իմ հաշվին՝ եթե այդպիսի մի ցանկություն առաջանար նրա մեջ. նա, համարաբար, ավելի խոհեմ գործ համարեց չվիրավորել շահավետ տնտրին, մի փոքր մեղմացրեց իր լակոնիկ սեր՝ կրճատելով դերանունները և օժանդակ բայերը և մտածեց, որ իմ մեջ հետաքրքրություն կառաջանա, եթե սկսի խոսել իմ մեկուսացած տեղի առավելությունների ու թերությունների մասին: Ես համոզվեցի, որ մեր շոշափած հարցերին նա լավ տեղյակ է և, տուն գնալուց առաջ, ոգևորված հայտնեցի, որ վաղը նորից կանցնեմ: Նա, ինչպես երևում է, բնավ չէր ցանկանում, որ ես իմ ներխուժումը կրկնեմ: Այնուամենայնիվ, ես կգամ: Զարմանալի է՝ նրա հետ համեմատած ես որքան մարդամոտ եմ:

Այն կեսորից հետո մառախուղ էր ու ցուրտ: Յախինճըով ծած: ված հարթավայրով ու ցեխոտ ճամփեքով դժվարութեամբ Մուկյուն հողմերի դարավանդ գնալու փոխարեն ես գրե: Մե որոշել էի նստել աշխատասենյակում բուխարու մոտ:

Սակայն ճաշելուց հետո (ի դեպ ես ճաշում եմ ժամը մեկի մոտերքը, տնտեսուհին պատվարժան մի տիկին, որն ինձ փոխանցվեց որպես տան անկապտելի մի մասնիկը, չէր կարողանում կամ չէր ուզում հասկանալ իմ խնդրանքը՝ ճաշը ուս ժամը հինգին) ծուլ-ծուլ բարձրացա վերև և, սենյակին մոտենալիս, նկատեցի աղախնին, որը խողանակներով ու ամիսի գույլով շրջափակված, բարձրացնելով դժոխային ծուխ ու փոշի, ծնկաշոք փորձում էր մոխրի կույտերով հանգցնել կրակը: Այդ տեսարանը ստիպեց ինձ անմիջապես վերադառնալ: Գլխարկս վերցրի և շորս մզոն քայլելուց հետո մոտեցա Հիթթիֆի պարտեզի դարպասին հենց այն պահին, երբ սկսեցին տեղալ ձյան առաջին փետրանման փաթիլները:

Այդ բլուրի մերկ կատարին հողը խիստ սառնամանիքի հետևանքով կարծրացել էր, ցուրտը թափանցում էր ոսկորներիս մեջ: Չկարողանալով շղթան տեղից շարժել, ցանկապատի վրայով ցատկեցի ներս, հաղարջի նոսր թփերով հզիրված խճապատ շավիղով վազեցի դեպի դուռը և ապարդյուն կերպով սկսեցի բախել այնքան ժամանակ, մինչև որ մասններս ցրտից կծկվեցին, և շները ոռնոց բարձրացրին:

— Թշվա՛ռ բնակիչներ,— մտքում բացականչեցի ես,— ձեզնիմաններին կոպիտ անհյուրընկալութեան համար արժե ենթարկել մեկուսացման: Ես, համենայն դեպս, օրը ցերեկով գտնեիս փակ չէի պահի. միևնույն է, մտնեմ ներս:

Այդպես որոշելով, բռնեցի մղակը և ամբողջ ուժով սկսեցի սնրել դուռը: Զոզեֆը քացախի պես թթված դեմքը մառանի կլորիկ պատուհանից դուրս ցցեց:

Ի՞նչ էք ուզում,— բղավեց նա.— Տանտերը փարախում է, եթե ուզում էք խոսել հետը, շրջանցեք բակը և մառանի վերջում կգտնեք նրան:

— Մի՞թե չկա մեկը, որ դուռը բաց անի,— ի պատասխան գոռացի ես:

— Ոչ, չկա, միայն միսիսն է տանը, իսկ նա դուռը երբեք չի բացի, թեկուզ թակեք մինչև գիշերը:

— Ինչո՞ւ: Բա չէք կարո՞ղ նրան ասել, թե ով եմ ես, Զողեֆ:

— Ոչ, չեմ կարող: Դա իմ գործը չէ, — փնթփնթաց նա, և դուրսը շքացավ:

Առատ ձյուն սկսեց տեղալ: Բռնեցի դռան բռնակը և նորից փորձեցի: Հետևի բակում երևաց առանց վերարկուի մի երիտասարդ՝ եղանը ուսին: Նա ձայն տվեց, որ հետևեմ իրեն, և անցնելով լվացքատան միջով, ապա սալարկված բակում գտնվող ցախանոցի, ջրհան պոմպի ու աղավնանոցի մոտով, փերջապես մտանք մի ընդարձակ ու լուսավոր սենյակ, որտեղ ինձ բնդունել էին մի օր առաջ:

Այն ողողված էր բուխարու մեջ պայծառ բոցավառվող տծխի, տորֆի ու փայտի կրակից արտացոլող և ուրախություն պատճառող լույսով: Առատ ընթրիքի համար զցած սեղանի մոտ ես հաճույք ունեցա տեսնել «տիրուհուն»՝ մի կակ, որի գոյություն մասին երբեք չէի էլ կասկածել:

Ես պիտով ողջունեցի և սպասեցի՝ ենթադրելով, որ կառաքելի նստելու Հենդելով տիտի թիկնակին, նա նայեց ինձ և նստած մնալով՝ անշարժ ու անխոս:

Դարչելի՞՜ ևզանակ է, — նկատեցի ես: — Վախենում եմ, միսիս Հիթրիֆ, որ ձեր դուռը տուժած լինի ծառաների անուշադրություն հետևանքով. բավականին տանջվեցի, մինչև որ լսեցին ինձ:

Նա շարունակում էր լուռ մնալ: Անթարթ նայում էի նրան, նա էլ ակնապիշ նայում էր ինձ: Համենայն դեպս, ինձ վրա ուղղված նրա հայացքն այնքան սառն էր ու անտարբեր, որ ես բնկա սարսափելի դժվարին ու տհաճ կացություն մեջ:

— Նստեք, — ասաց երիտասարդը կոպիտ տոնով, — նա ջուտով կգա:

Ես ենթարկվեցի, հազացի և ձայն տվեցի անպիտան Զրնոյին, որը իմ այս երկրորդ այցի ժամանակ բարեհաճեց պոչի ծայրը շարժել ի նշան այն բանի, որ ճանաչում է ինձ:

— Հիանալի շուն է, — նորից նկատեցի ես: — Իսկ Դուք մտադիր չե՞ք բաժանվել այս փոքրիկներից, տիկին:

— Դրանք իմր շեն,— ասաց սիրալիր տիկինը ավելի խուսափողական տոնով, քան այդ կսուներ Հիթքրիֆը:

— Ա՛-ա, երևի նրանք են ձեր սիրելիները,— շարունակեցի ես՝ ցույց տալով, ինչպես ինձ թվաց, մութ անկյունում բազմոցին նստած կատուներին:

— Սիրո անսովոր առարկա,— նկատեց տիկինը արհամարհանքով:

Դժբախտաբար դա մորթած ճագարների կույտ էր: Ես նորից հազացի և ավելի մոտ նստեցի բուխարուն՝ կրկնելով իմ դիտողութունը վայրագ եղանակի մասին:

— Դուք չպետք է դուրս գայիք,— ասաց նա և վերկենալով, բուխարու ելուստից վերցրեց երկու ներկված մետաղյա տուփ:

Մինչ այդ նա նստած էր կիսախավարում. հիմա ես պարզորոշ տեսա նրա կազմվածքն ու դեմքը: Նա նուրբ էր ու ջահել, համարյա աղջնակ, ուներ հիանալի կառուցվածք և հմայիչ փոքր դեմք, որի նմանը ես երբեք չէի տեսել. մանր դիմազոները շատ քնքուշ էին, բաց-դեղնավուն, ավելի շուտ ոսկեգույն վարսերի գալարները ցրված կախվել էին նրա նրբազեղ պարանոցին, իսկ աչքերը, եթե սիրալիր տեսք ունենային, հմայիչ կլինեին. բարեբախտաբար, իմ զգայուն սրտի համար, դրանց դրսևորած միակ զգացումը սոսկ նման էր արհամարհանքի և մի տեսակ անհուսալիության, որը տարօրինակ ձևով անբնական էր նրա տարիքում: Նրա ձեռքը չէր հասնում թեյատուփերին, շատ բարձր էին, տեղիցս վեր կացա, որ օգնեմ, նա շուտ եկավ դեպի ինձ այնպես, ինչպես շուտ կգար ժլատը, եթե որևէ մեկը փորձեր օգնել նրան, երբ նա իր ոսկիներն էր հաշվում:

— Ձեր օգնության կարիքը չունեմ,— կոպիտ կտրեց նա,— ինքս կվերցնեմ:

— Ներեցեք,— շտապ պատասխանեցի ես:

— Ձեզ թեյի՞ են հրավիրել,— հարցրեց նա և իր կոկիկ սև զգեստի վրա կապելով գոգնոցը, թեյով լի գդալը ձեռքին՝ կանգնեց փոքրիկ կաթսայի մոտ:

— Ուրախությամբ կիմեի մի բաժակ,— պատասխանեցի ես:

— Ձեզ հրավիրե՞լ են,— կրկնեց նա:

— Ոչ,— ասացի՝ թեթևակի ժպտալով: Հենց դուք եք այն իսկական անձնավորութունը, որը պետք է հրավիրեր ինձ:

Նա ձեռքի գդալը գցեց տուփի մեջ և նեղացած տեսքով նորից նստեց աթոռին, ճակատը կնճռոտեց, ներքևի կարմրավուն շրթունքը դուրս ցցեց՝ պատրաստվելով լաց լինել երեխայի պես:

Մինչդեռ երիտասարդը, լիովին մաշված մի բաճկոն ուսին դրած, ուղղահայաց հասակով մեկ կանգնեց կրակի առաջ և աչքի տակով ոտքից գլուխ շափեց ինձ այնպես, ասես մեր մեջ զոյություն ունեւր մի անհաշտ թշնամանք: Ծս սկսեցի կասկածել՝ արդյոք ծառա է նա, թե ոչ: Նրա հագուստն ու խոսակցութունը կոպիտ էին, նա միանգամայն գուրկ էր միստր և միսիս Հիթքլիֆների, ուշադրության արժանի, հասարակական բարձր դիրքից. խիտ, դարչնագույն, թափթըփված գանգուրները սանրված չէին, այտամորուքը անկարգ փոփած էր դեմքին, ձեռքերը հասարակ աշխատողի ձեռքերի պես թխապույն էին, բայց ուներ անբռնաղբոսիկ, համարյա ամբարտաժան շարժումներ, տանտիրուհու առաջ չէր ցուցաբերում ծառայի ջանասիրություն: Չհասկանալով նրա ով և ինչ էր, ես հարմար համարեցի շնկատել նրա տարօրինակ լեզու, իսկ հինգ րոպե անց Հիթքլիֆի երևալը որոշ փոփոխեց իմ տեսանկյանս վիճակը:

Ինչպես տեսնում եք, սրբ, իմ խոստումը կատարեցի՝ եկա. բացականչեցի կեղծ ուրախությամբ,— վախենում եմ որ եղանակի պատճառով ստիպված լինեմ կես ժամ նրստել, եթե միայն ապաստան տաք ինձ:

Կես ժամ,— ասաց նա, սպիտակ փաթիլները թափ տալով շորերի վրայից,— դարմանում եմ, թե ինչը փշեց ձեր խեղճին գրոսնեկ հենց այս ձնահողմի ժամանակ: Իսկ գիտե՞ք, որ ձեր կյանքը ճահճուտներում կորցնելու վտանգին էք ենթարկում: Ճահճուտներին լավ ծանոթ մարդիկ անգամ այսպիսի երեկոներին շատ հաճախ մոլորվում, շեղվում են ճանապարհից, իսկ հիմա, պետք է ասել, որ եղանակի լավացման ոչ մի նշան դեռ չի նկատվում:

— Գուցե ձեր տղաներից մեկը ուղեկցի ինձ. նա գիշերը կարող է մնալ Ագարակատանը: Չէի՞ք կարող որևէ մեկին տալ ինձ:

— Ոչ, չեմ կարող:

— Իսկապէ՞ս: Դե, այդ դեպքում ես հույսս պետք է դնեմ իմ խելամտության վրա:

— Հը՛մ, Իսկ ե՞րբ ենք թեյելու, — հարցրեց նա մաշված բաճկոնով տղային՝ հրացայտ հայացքն ուղղելով մեկ դեպի ինձ, մեկ՝ երիտասարդ լեզիին:

— Նա էլ է՞ խմելու, — հարցրեց տիկինը, դիմելով Հիթֆլիֆին:

— Սեղանը պատրաստեք, — պատասխանը հնչեց այնպիսի զայրույթով, որ ես ցնցվեցի: Տոնը, որով ասվեցին այդ բառերը, բացահայտում էր Հիթֆլիֆի բնածին շար բնավորությունը: Այժմ նրան այլևս չէի համարի կատարյալ անձնավորություն:

Երբ ամեն ինչ պատրաստ էր, նա ինձ հրավիրեց սեղանի մոտ՝ ասելով. «Դե, սըր, մոտ բերեք ձեր աթոռը»: Մենք բուրս, ներառյալ և գեղջուկ տղան, տեղ գրավեցինք սեղանի շուրջը և կատարյալ լուսթյան մեջ սկսեցինք մեր ընթրիքը:

Եթե իմ պատճառով, մտածեցի ևս, ամպ էր կախվել օդում, իմ պարտքը համարեցի փորձել ցրել այն: Հո նրանք ամեն օր չէին կարող նոթերը կիտած լուռ նստած մնալ և, ինչքան էլ շար բնավորության տեր լինեին, անհնարին է, որ նրանք ամեն օր այդպես նստեին սեղանի շուրջ:

— Տարօրինակ է, — սկսեցի ես՝ կուլ տալով մի բաժակ թեյ և ստանալով երկրորդը, — տարօրինակ է, թե ինչպես սովորությունը կարող է ձևավորել մեր ճաշակներն ու հասկացողությունները: Շատերը շեն կարողանում պատկերացնել, թե ինչպես կարելի է աշխարհից լիովին կտրված այսպիսի մի աքսորավայրում ապրել երջանիկ կյանքով, ինչպես ապրում եք դուք, միստր Հիթֆլիֆ, և սակայն պետք է ասել, որ դուք շրջապատված եք ձեր ընտանիքով և ձեր սիրալիր տիկնոջով, որի հանճարը ղեկավարում է ձեր տունն ու ձեր սիրտը...

— Իմ սիրալի՛ր տիկնոջով, — ընդհատեց նա՝ համարյա դիվային քրքիջով: — Ո՞ւր է նա՛ իմ սիրելի տիկինը:

— Ծս նկատի ունեմ միսիս Հիթֆլիֆին՝ ձեր կնոջը:

— Ախ, հա՛... Դուք ուզում եք ասել, որ նրա հոգին կատարում է պահապան հրեշտակի դեր և պահպանում է Մո-

լիզին հողմերի դարավանդի երջանկությունը, նույնիսկ այն ժամանակ, երբ նրա մարմինն այլևս գոյութիւն չունի: Ա՛յդ էք ուզում ասել:

Զգալով թույլ աված կոպիտ սխալը, փորձեցի ուղղել այն: Պետք է կռահեի, որ սրւնց մեջ եղած տարիքային այսպիսի մեծ տարբերության գեպքում, քիչ հաւանական է, որ նրանք մարդ ու կին լինեին: Միտար Հիթքլիֆը մոտ քառասուն տարեկան է, դա հոգևոր ուժերի ծաղկման մի շրջան է, երբ սոցամարդիկ հազվադեպ են հույսեր փայփայում, որ աղջիկ-նհրր սիրելով կամուսնանան իրենց հետ. այդ անուրջը մեզ համար սփոփանք է դառնում կյանքի մայրամուտին: Իսկ մյուսը՝ տասնյոթ էլ չկար:

Այդ պահին իմ գլխում մի միտք ցոլաց՝ վայ թե կողքս Նասած այդ գեղջուկը, որը ափսեից էր թեյ խմում և անվաճ ձեռքերով հաց ուտում, նրա ամուսինն է: Դա, անշուշտ, կրասեր Հիթքլիֆն է: Աղջիկը կենդանի թաղեց իրեն՝ ահա և հետևանքը. նա նետվել է այդ բիրտ ռամիկի վիզը պարզապէս ատանց իմանալու, որ կյանքում ավելի լավ մարդիկ կան: Խախձալից օփսոսանքով պատկերացնում եմ, թե ինձ ահա՜հայտն է հաստ, նա որքան սկեռք է զղջար իր կատարած :՝ . . . թյան համար:

Այս վերջին միտքը կարող է սնապարծութիւն թվալ, բայց ոչ իմ հարեանը գրեթե նողկալի անձնավորութիւն էրևաց ինձ. անձնական փորձից գիտեմ, որ ես բավականին գրավիչ եմ:

Միտիս Հիթքլիֆն իմ հարսն է, — ասաց միտար Հիթքլիֆը, հաստատելով իմ ենթադրութիւնը: Այս ասելիս, նա մի տարօրինակ հայացք՝ ատելության հայացք, նետեց հարսի վրա, իսկ դիմքի մկանները նման շիինելով ուրիշների գեմբերի, շէին բացահայտում նրա հոգու լեզուն:

— Ա-ա՛, իհարկե, հիմա տեսնում եմ. այդ դուք եք բարերար-դիցանուշի արտոնյալ տերը, — նկատեցի ես, դառնալով գիպի հարևանս:

Այս անգամ նախկինից ավելի վատ ստացվեց: Երիտասարդը կասկարմիր կտրեց, բռունցքը սեղմեց, մտադրվելով հարձակման անցնել, բայց, ըստ երևույթին, իսկույն ուշքի եկավ և խեղեց իր մեջ բարձրացող փոթորիկը՝ կոպիտ հայ-

հոյանքներ թափելով իմ դլխին, որ, սակայն, ես բանի տեղ չդրի:

— Ձեր ենթադրությունները անհիմն են, սրբ,— նկատեց իմ տանտերը,— մեղանից և ոչ մեկը ձեր բարի դիցանուշին տիրելու բախտը չունի. նրա ամուսինը վախճանվել է: Ասացի, որ նա իմ հարսն է, հետևաբար ամուսնացած է եղել իմ որդու հետ:

— Իսկ այս երիտասարդը...

— Իհարկե, իմ որդին չէ:

Հիթթլիֆը նորից ժպտաց, ասես մի շատ հանդուգն կատակ էի արել, երբ այդ արջին համարել էի նրա որդին:

— Իմ անունը Հերթըն էրնշոու է,— գոռաց երիտասարդը:— Ես ձեզ խորհուրդ կտայի հարգել այդ անունը:

— Ես ոչ մի անհարգալից բան չասացի,— պատասխանեցի ես, ներքուստ ծիծաղելով այն արժանապատվության վրա, որով նա ներկայացրեց իրեն:

Նա ակնապիշ երկար նայում էր ինձ, իսկ ես մտադիր չէի դիմանալ նրա հայացքին, քանզի վախենում էի նրան ապտակելու փորձության ենթարկվել կամ էլ իմ ուրախությունը բարձրաձայն լսելի դարձնել: Ես ոչ մի կերպ չէի կարողանում հարմարվել ընտանեկան այդ «հաճելի» միջավայրին: Ծնշող մթնոլորտը ոչնչացնում է տան ջերմությունն ու անդորրը. ես որոշեցի զգուշ լինել և երրորդ անգամ նորից չմտնել այդ հարկի տակ:

Ընթրիքն ավարտվեց, և քանի որ ոչ ոք ընկերական զրույց չսկսեց, ես մոտեցա լուսամուտին, որ տեսնեմ հո եղանակը չի փոխվել:

Տխուր տեսարան էր. մութ գիշերը ժամանակից շուտ էր վրա հասել, սաստիկ հողմապտույտը և հեղձամահ անող ձյունը իրար էին խառնել երկինքն ու բլուրները:

— Առանց ուղեկցի դժվար թե կարողանամ տուն հասնել,— դուրս թռավ իմ բերանից:— Ծանապարհները լիովին կծածկվեն ձյան հաստ շերտով. նույնիսկ եթե դրանք մաքուր լինեին, հազիվ թե կարողանայի մի քայլ առաջ գնալ:

— Հերթըն, ոչխարները քշիր գոմ: Ձյունը կծածկի նրանց, եթե ամբողջ գիշեր մնան փարախում, մուտքն էլ փակիր տախտակով,— ասաց Հիթթլիֆը:

— Բա ես ի՞նչ անեմ,— շարունակեցի հարածուն դայ-
րույթով:

Հարցս մնաց անպատասխան. շուրջս նայելով՝ տեսա
միայն Ջողեֆին, որը դուլլով վարսակի շիլա էր բերում շնե-
րի համար, իսկ միսիս Հիթքլիֆը հակված, կրակի մեջ էր
նետում լուցկիների փունջը, որ թեյատուփը տեղը դնելիս
բնկել էր բուխարու ելուստից:

Ջողեֆը, երբ բուր ցած դրեց, քննական հայացքով դիտեց
սենյակը և բեկված ձայնով խզխզաց.

Ջարմանում եմ, թե ինչպես կարող եք կանգնած մնալ
այստեղ, հրր բոլորը դրսում զբաղված են գործով: Բայց դուք
ծույլ անբանի մեկն եք, ձեզ հետ խոսելը անիմաստ է: Դուք
երբեք չէք փոխի ձեր տղեղ սովորությունները և ձեր մոր
նման ուղիղ կզնաք գրողի ծոցը:

Մի պահ ինձ թվաց, թե ճարտասանության այդ նմուշը
հասցեատարված էր ինձ: Սաստիկ կատաղած քայլեցի դեպի
այդ ձերուկ սրիկան՝ մտադրվելով դուրս շարտել նրան սեն-
յակից:

Մայր միսիս Հիթքլիֆի պատասխանը կանգնեցրեց ինձ:
Ես գուցե կովարար ձեր փարիսեցի,— բացառիկանչեց
և ինչպես վախեցնում, սր այդ պրոպր, ամեն անգամ, որ
դու նրա առուն են տալիս, կարող է քեզ ողջ-ողջ քարշ տա-
լով տանել: Զգուշացիր և մի ջղախնացրու ինձ, թե չէ, նրա
հատուկ ոգորմածությանը կխնդրեմ, որ քեզ տանի իր մոտ:
Հասցա մի սպասիր, Ջողեֆ,— շարունակեց նա՝ դարակից
վերքնելով մեծածավալ մուգ կազմով մի գիրք,— հիմա ցույց
կտամ քեզ, թե ինչքան եմ առաջադիմել սև մոգության ար-
վեստի մեջ. շուտով կտիրապետեմ դրան և ինձ կզգամ ոնց
որ տանր: Պատահական չէր, որ կարմիր կովը սատկեց. քո
հողացավն էլ հաղիվ թե աստծո պատիժը լինի:

— Օ՛, շար, շարամիտ մարդ,— ծանր շնչելով ասաց ծե-
րուկը,— թող տերը փրկի մեզ շար սատանայից:

— Ոչ, անզգամ թշվառական, չքվիր, այլապես շարքից
կհանեմ քեզ. ես ձեզ բոլորիդ ծեփել եմ մոմից ու կավից,
և նա, ով առաջինն անցնի իմ նախանշած սահմանագիծը,
կլինի... չէ, չեմ ասի, թե ինչ կլինի նրա հետ... բայց ինք-
ներդ կտեսնեք: Դե հեռացիր, հապա մի տեսնեմ:

Փոքրիկ վհուկի սիրուն աչքերը պսպղացին կեղծ շարամտությամբ, իսկ Զոզեֆը անկեղծ սարսափից դողալով շտայեց դուրս՝ աղոթք մրմնջալով և բացականչելով. «Սխ, դու շա, սմիտ մարդ»:

Ես կարծեցի, թե միսիսի վարքագիծը ոչ այլ ինչ էր, եթե ոչ կատականման մի տխուր բան: Այժմ, երբ մենք մենակ մնացինք, փորձեցի իմ աղետալի վիճակի հարցով դիմել նրան.

— Միսիս Հիթքլիֆ,— լրջությամբ ասացի ես,— ներեցեք, որ անհանգստացնում եմ: Համարձակվում եմ դիմել ձեզ, քանի որ այդպիսի դեմք ունեցողը չի կարող բարի սիրտ շունենալ: Ցույց տվեք այն նշանները, որոնք կօգնեն ինձ տուն հասնել. շեմ պատկերացնում, թե ինչպես կարելի է տուն դնալ, իմ տան ճանապարհը ինձ համար նույնքան պարզ է, ինչպես ձեզ համար՝ Լոնդոնի ճանապարհը:

— Գնացեք ձեր եկած ճանապարհով,— պատասխանեց նա, հանգիստ տեղավորվելով բազկաթոռում՝ մոմը ձեռքին բռնած և հաստափոր բաց գիրքը առջևը դրած,— խորհուրդս հակիրճ է, բայց դրանից ավելի լավը չեմ կարող տալ:

— Ուրեմն, եթե լսեք, որ ինձ մեռած հայտնաբերել են մորուսում կամ ձյան տակ՝ փոսում թաղված, ձեր խիղճը չի՞ շնչա ձեզ, որ դրանում մասամբ մեղավոր եք և դուք:

— Ինչպե՞ս թե. բայց ես չեմ կարող ուղեկցել ձեզ, ինձ թույլ չեն տա հասնել նույնիսկ մինչև պարտեզի ցանկապատը:

— Դո՛ւմ: Ես շատ վատ կզգայի, եթե այսպիսի մի գիշեր իմ պատճառով տնից դուրս գայիք,— բացականչեցի ես.— Ես ուզում եմ, որ դուք ոչ թե ցույց տա՛մ, այլ ասե՛ք, թե ինչպես կարելի է ճանապարհը գտնել կամ էլ համոզեք միստր Հիթքլիֆին, որ մի ուղեկցող տա ինձ:

— Բայց ո՞ւմ: Այստեղ միայն մենք ենք՝ ինքը՝ էրնշոուն, Զիլլահը, Զոզեֆը և ես: Ո՞ւմ կուզենայիք ընտրել:

— Մի՞թե ֆերմայում տղաներ չկան:

— Ոչ: Ես արդեն ասացի, թե ովքեր կան:

— Ուրեմն, ես հարկադրված կլինեմ գիշերել այստեղ:

— Այդ մասին կարող եք խոսել տանտիրոջ հետ: Այդպէս էլ ես անելիք չունեմ:

— Հուսով եմ, որ դա ձեզ դաս կլինի, և դուք այլևս այդպիսի անխոհեմ ճամփորդութիւն չեք կատարի դեպի այս բլուրները, — խոհանոցի մուտքից լսվեց միտար Հիթլերի կողմից ձայնը: — Իսկ ինչ վերաբերում է այստեղ գիշերելուն՝ հյուրերի համար ես ոչ մի հարմարութիւն չունեմ, ձեռք մտնում եք, ապա պետք է անկողինը կիսեք Հերթլերի կամ էլ Քուկի հետ:

Կարող եմ սենյակում, հենց այս բազկաթոռում քնել, — պատասխանեցի ես:

Այ, ոչ մի դեպքում: Օտարականը մնում է օտարական, լինի հարուստ, թե աղքատ՝ միևնույն է. ինձ համար հարմար չէ, երբ որեւէ մեկը դեգերում է այստեղերում այն ժամանակ, երբ ես շեմ կարող պահակութիւն անել, — ասաց այդ անտաշ թշուառականը:

Այս վիրավորանքը ինձ համբերութիւնից հանեց: Վերգլխուկ արտահայտելով, նրա կողքով նետվեցի բակ, վազիս թափով բախվեցի էրնշտուին: Այնքան մութ էր, որ ուրիշ չէր երևում մինչ մոլորված փնտրում էի ելքը, լսեցի ինչ-որ բան, որք վկայում էր իրար նկատմամբ ունեցած սպառնալի վերաբերմանի մասին:

Երբտասարդը, ինչպես երևում է, ուզում էր ինձ օգնել:

Ու նրան կուզեցեմ մինչև պարտեղ, — ասաց նա:

Դու նրա հետ կզնաս մինչև դժոխքի դուռը, — բացականդ տերը կամ մինչև ինչը, չգիտեմ: — Բա ձիերին ո՞վ պետք է նայի:

Մարդկային կյանքն ավելի կարևոր է, քան մի գիշեր ձիերին առանց հսկողութեան թողնելը, ախր, մեկն ու մեկը պետք է գնա, — ավելի բարյացակամորեն շշնջաց միսիս Հիթլերի քրոջը, քան ես ակնկալում էի:

— Բայց ոչ ձեր հրամանով, — կտուկ ասաց Հերթլերը: — Եթե այդպես համակրում եք նրան, ավելի լավ է լռեք:

— Դե, ինչ ասեմ, հույս ունեմ, որ նրա ուրվականը հաճախ կայցելի ձեզ, նաև հույս եմ փայփայում, որ միտար Հիթլերի քրոջ էլ երբեք մի այլ կենսական շի ունենա մինչև այն

պահը, երբ Ազարակատունը կվերածվի ավերակների,— կուպիտ տոնով պատասխանեց միսիսը:

— Լսիր, լսիր, նա անհիծում է,— փնթփնթաց Ջողեֆը, որի կողմը ես ուղղվեցի:

Ծերուկը նստել էր ոչ հեռու և լապտերի լույսի տակ կթում էր կովերը. առանց քաշվելու լապտերը վերցրի և գոռուլով, որ հետևյալ առավոտ կուղարկեմ, սլացա դեպի բակի հետևի մասում դանվող ամենամոտիկ մուտքը:

— Տե՛ր, տե՛ր, նա լապտերը թոցրեց,— գոռաց ծերուկը և նետվեց իմ հետևից:— Հե՛յ, ժանիք: Հե՛յ, շուն: Հե՛յ, Գայլ, տարավ, հասեք, բռնեք նրան:

Դեռ նոր էի դռնակը բաց արել՝ երկու բրդոտ հրեշ նետվեցին դեպի իմ կոկորդը, ինձ տապալեցին գետին, լույսը հանգավ, իսկ Հիթքլիֆի ու Հերթրնի համերաշխ հոհոցը ինձ հասցրեց կատաղության և ստորացման ծայրահեղ աստիճանի:

Բարեբախտաբար, գամփոները կարծես ավելի շուտ հակված էին իրենց թաթերը դնել զոհի վրա, կաղկանձել և պոչերը շարժել, քան ինձ ողջ-ողջ լափել, բայց չէին թողնում, որ վերկենամ, և ես ստիպված էի պառկած մնալ, մինչև որ նրանց շարասիրտ տերերը բարեհաճեցին ազատել ինձ. ապա առանց զխարկի, ցասումից դողալով ստահակներին հրամայեցի բաց թողնել ինձ, այլապես իմ մի բուլեից ավելի մնալը վտանգի կենթարկի նրանց կյանքը: Միաժամանակ արտաբերում էի անկապ, սպառնալիքներով լի փոխհատուցման խոսքեր, որոնք հիշեցնում էին Արքա Լիրի նզովքները:

Սաստիկ հուզմունքից քթիցս արյուն հորդաց, Հիթքլիֆը շարունակում էր հոհոալ, իսկ ես՝ հայհոյանք թափել: Զգիտեմ, թե ինչով կավարտվեր այս տեսարանը, եթե այդտեղ չլիներ մի անձնավորություն, որն ավելի խելամիտ էր, քան ես, և ավելի բարեհոգի, քան ինձ հյուրընկալողները: Գա Ջիլլահն էր, մարմնեղ տնտեսուհին, որը վերջապես հայտնեց իմանալու, թե ինչ էր պատահել: Նա կարծեց, թե նրանցից մեկնումեկը ձեռք է բարձրացրել ինձ վրա, և շամարձակվելով հարձակվել տանտիրոջ վրա՝ իր բանավոր թնդանոթն ուղղեց ավելի երիտասարդ սրիկայի կողմը:

— Միսար էրնշոու,— բղավեց նա,— է՛լ ինչ խաղ եք

սարքել այստեղ: Ի՞նչ է, մա՞րդ եք սպանում մեր տան շի-
մին: Ես տեսնում եմ, որ երբեք հանգիստ չեմ զգա ինձ այս
տանը: Հապա մի նայիր այդ խեղճ մարդուն՝ հազիվ է շըն-
չում: Բայց այս տեսքով շի կարելի դուրս գալ, գնալ: Անցեք
տուն, ես կարգի կբերեմ ձեզ. դե, հիմա հանգիստ կանգնեք:

Այսպես ասելով՝ հանկարծ նա մի աման սառը ջուր շփեց
վզիս և ինձ քարշ տալով տարավ խոհանոց: Միստր Հիթքլիֆը
հետևեց մեզ, նրա անսովոր ուրախությունը արագորեն մա-
րեց, և դեմքն ընդունեց իր սովորական խստաբարո տեսքը:

Ես շատ վատ էի զգում, գլուխս պտտվում էր, շատ թույլ
էի, ստիպված համաձայնեցի գիշերել այդ տանիքի տակ:
Տանտերը Զիլլահին կարգադրեց մի բաժակ օղի տալ ինձ և
սպա մտավ ներսի սենյակը. տնտեսուհին ցավակցելով իմ
ողորմելի վիճակին, կատարեց կարգադրությունը, ես մի
փոքր աշխուժացա, և նա ինձ ներս տարավ քնեցնելու:

ԳՆՈՒԽ ԵՐՐՈՐԴ

Աստիճաններով բարձրանալիս, Զիլլահը խորհուրդ տվեց,
որ ձեռքի ափով մոմը. ծածկեմ և շաղմկեմ, որովհետև իր
տերը արտառոց կարծիք ուներ այն սենյակի մասին, որտեղ
ես պետք է մնայի: Նա երբեք ոչ մեկին հոժար կամքով թույլ
չէր տալիս այնտեղ գիշերել:

Հարցրի պատճառը: Նա ասաց, որ չգիտի. մեկ-երկու
տարի է, ինչ սալրում է այդտեղ: Այդ տանն այնքան արտա-
սովոր բաներ են կատարվում, որ ինքն ի վիճակի չէ գլուխ
հանել դրանցից:

Խիստ ապշեցի լսածիցս, դուռը կողպեցի, նայեցի շուրջս
և փնտրեցի մահճակալը: Ամբողջ կահույքը բաղկացած էր
մեկ աթոռից, սպիտակեղենի կոմոդից և կաղնուց պատ-
րաստված մի մեծ սնդուկից, որի վերևի մասում կային ծած-
կակառքի փոքր պատուհաններին նմանվող քառակուսաձև
անցքեր:

Մոտեցա այդ կահույցին: Նայեցի ներսը և տեսա, որ դա
մի ուրույն հնաոճ թախտ էր. այն հարմարեցված էր այնպես,

որ ընտանիքի յուրաքանչյուր անդամ իր առանձին սենյակն ունենար, երբ դրա անհրաժեշտությունն զգացվեր, Իրականում, դա սլատի մի փոքրիկ պահարան էր, որի պատուհանի քիվը ծառայում էր որպես սեղան:

Գրվադազարդ միջնորմը իրարից հեռացրի, մոմի լույսով մտա ներս, նորից իրար մոտեցրի, և Հիթքլիֆի ու այլոց զգոնությունից միանգամայն ապահով զգացի:

Մոմը դրեցի պատուհանի քիվին, որի մի անկյունում դարսած էին բորբոսով պատած մի քանի գիրք: Ներկած տախտակի վրա կային խզրզված մականագրություններ, բայց դրանք ոչ այլ ինչ էին, եթե ոչ մերթ խոշոր, մերթ մանր տառերով գրված լոկ մեկ անվան կրկնության տարբերակներ, Քեթրին էրնշուու, տեղ-տեղ այն դառնում էր Քեթրին Հիթքլիֆ, ապա նորից փոխվում, դառնում էր Քեթրին Լինթըն:

Հույլ անտարբերությամբ գլուխս հենեցի պատուհանին և շարունակեցի վանկ առ վանկ կարդալ՝ Քեթրին էրնշուու... Հիթքլիֆ... Լինթըն, մինչև որ աչքերս փակվեցին, բայց հինգ րոպե էլ չէի հանգստացել, երբ խավարի մեջ փայլին տվեցին սպիտակ տառերը, ինչպես կենդանի ուրվականները. օղբ և վեց Քեթրիններով: Ինքս ինձ արթնացրի, որ ինձնից հեռու վանեմ այդ սևեռուն անունը, տեսա՝ հին գրքերից մեկի վրա թեքվել էր մոմի պատրույզը, որի պատճառով սենյակը լցվել էր հորթի վառված կաշվի հոտով: Մոմի այրուբը պոկեցի, ցրտից ու տանջալից զզվանքից խիստ վրդովված նստեցի տեղս և վնասված հատորը բաց արած դրի ծնկներիս: Գա մաշված տառերով, սարսափելի բորբոսնած կազմով նոր կտակարան էր. գրքի կրկնաթերթի վրա մականգրված էր՝ «Քեթրին էրնշուուի գրքերից», և նշված էր մի տարեթիվ, որից արդեն քառորդ դար էր անցել:

Փակեցի այն, վերցրի գրքերը՝ մեկը մյուսի հետևից, ստուգեցի բոլոր հատորները: Քեթրինի գրադարանը ընտիր գրադարան էր: Գրքերի վիճակը ցույց էր տալիս, որ դրանցից շատերը հաճախ են կարդացվել. գրեթե չկար մի գլուխ, որ խուսափած լիներ մատիտով կամ թանաքով արված դիտողությունից, կամ գոնե դիտողության նման նշումից, և լրացված շիինեին գրաշարի բաց թողած ազատ տեղերը:

Գրանցից մի քանիսը իրարից անջատ դիտողություններ

ի ին, մյուսն էր կանոնավոր օրագրի ձև ունեին՝ գրված մ. և կական շճավորված ձևով գրով: Մի հավելյալ էջի վերևի մասում. — որը, հավանորեն իսկական դանձ է թվացել, — մեծ հաճույքով նկատեցի իմ բարեկամ Ջոզեֆի կոպիտ, բայց և ուժեղ պատկերված հիանալի ծաղրանկարը:

Իմ մեջ իսկույն հետաքրքրություն բորբոքվեց այդ անհայտ Քեթրինի նկատմամբ, և ես անմիջապես սկսեցի վերծանել խամբած հիերոգլիֆները:

«Մի սոսկալի կիրակի» — այդպես էր կոչվում հետևյալ պարբերությունը: — Կուզենայի, որ հայրս նորից ինձ հետ լինեի: Հինդլին դարձելի փոխարինող է, նա դաժանորեն է վարվում Հիթլիֆի հետ: Հ. — ն և ես որոշեցինք ընդվզել, և այսօր երեկոյան մենք դիմեցինք վճռական քայլի:

Ամբողջ օրը վարար անձրև էր տեղում. եկեղեցի շէինք կարող դնալ, ուստի Ջոզեֆը ստիպված եղավ աղոթածոգովն տնցկացնել ձեղնահարկում: Մինչ Հինդլին ու կինը ներքևում կրակի առաջ հանդիստ տաքանում, հետաքրքրվում էին ամեն ինչով, բայց ոչ աստվածաշնչով՝ դա հո վատահ կարող եմ տանել, Հիթլիֆին, ինձ և վար անող տղային հրամայվեց ազսթադիրքը վերցնել և բարձրանալ վերև: Մեզ նատեցրին իրար կողքի, զորինի պարկերի վրա: Հատաշնչով ու գողալով ույս էինք փայփայում, որ Ջոզեֆն էլ ցրտից կողոպտ և, հենց իր սեփական աղահոգության համար, քարոզը շատ չի երկարադնի: Ունա՞յն ակնկալիք: Արարողությունը տևեց ուղիղ երեք մամ, և, այնուամենայնիվ, երբ եղբայրս մեզ ներքև իջնելիս տեսավ, շամաչեց բացականչել.

Ի՞նչ, արդեն ավարտվեց:

Առնաստակ կիրակի երեկոները մեզ թույլատրվում էր խաղալ, եթե շատ շէինք աղմկում: Այժմ ամենաթեթև ծիծաղն անգամ բավական է, որ մեզ անկյուն կանգնեցնեն:

— Դուք մոռանում եք, որ տեր ունեք այստեղ, — ասում է բռնակալը: — Ես կոչնչացնեմ նրան, ով ինձ համբերությունից դուրս հանի: Ես պահանջում եմ բացարձակ զգաստություն և լռություն: Հը, տղա, այդ դո՞ւ ես, Ֆրենսիս, սիրելիս, մոտով անցնելիս քաշիր այդ տղայի մազերը. ես լսեցի, թե ինչպես նա շրխկացրեց մատնիքը:

Ֆրենսիսը բարեխղճորեն քաշեց նրա մազերը, ապա գնաց

նր՝ տեց իր ամուսնու ծնկներին. նրանք մի ամբողջ ժամ երեխաների պես համրուրվում, խոսում էին անհեթեթ բաներից, մենք կամաշեհինք խոսել այդպիսի հիմար բաների մասին:

Նստել էինք դարակների տակի խորշերում: Հազիվ էինք իրար կապել մեր գոգնոցները և կախել իբրև վարագույր, երբ Ջոզեֆը եկավ ախոռից, ուր ուղարկել էին ինչ-որ հանձնարարությամբ: Նա պատռանց իմ ձեռագիրը, ապտակեց ինձ ու գոռաց.

— Տիրոջը հենց նոր հողին հանձնեցինք, մի շաբաթ էլ չի անցել, ավետարանի խոսքերը դեռ հնչում են ձեր ականջներում, իսկ դուք այստեղ զվարճանում եք: Ամոթ ձեզ, նրստեք, անպետք երեխաներ. այստեղ կան բավականին լավ գրքեր, կարդացեք. նստեք և մտածեք ձեր հոգիների մասին:

Այս ասելուց հետո նա մեզ տեղավորեց օջախից ոչ հեռու այնպես, որ մենք կարողանայինք կրակի թույլ լույսի տակ կարդալ մեր ձեռքը խոթած անպետք գրքի էջը:

Ես չէի կարող երկար գրազվել ընթերցանությամբ. մրոտված հատորը վերցրի և շարտեցի շան որջը՝ հայտարարելով, որ ատում եմ լավ գիրքը:

Հիթթիֆն էլ իրենը նետեց նույն տեղը:

Ապա սկսվեց ժխորը:

— Միստր Հինդլի, — բղավեց մեր քահանան: — Միստր, եկեք այստեղ: Միսս Քեթին պատռել է «Փրկության ղեկ» գիրքը, իսկ Հիթթիֆը՝ «Լայն ճանապարհ դեպի կործանում» գրքի առաջին մասը: Պարզապես սարսափելի է, որ թույլ եք տալիս նրանց ընթանալ այդ ճանապարհով: Է՛հ, ձեր տերը մի լավ կիսարազաներ նրանց, բայց նա չկա՛:

Հինդլին բուխարու մոտի դրախտից շտապեց հեռանալ և բռնելով մեզնից մեկի օձիքը, իսկ մյուսի ձեռքը, մեզ հրեց խոհանոցից ներս, որտեղ Ջոզեֆը, երգվելով, հանգիստ հայտարարում էր, որ ձեր նիքը՝ մեզ քարշ տալով կշարտի դժոխք. այսպես մխիթարվելով մեզնից ամեն մեկը կուշ գալով նստեց մի անկյունում՝ սպասելով սատանայի հայտնեվելուն:

Ես դարակից վերցրի այդ գիրքն ու թանաքամանը, բաց արի բակի դուռը, որ լույս լինի և քսան բոպե գրում էի, որ

¹ Սատանա:

ժամանակն անցնի, բայց իմ ընկերն անհամբեր էր, Եւրոպայի յարկում էր հափշտակել կաթնավաճառուհու թիկնոցը, ծածկվել դրանով, փախչել ու թափառել մորուսներում: Դա հաճելի միտք էր, և երբ այդ ծնրուկը վերագառնա, նա կհավատա, որ իր մարդարեութունը հաստատվեց, իսկ մենք սնածրեի տակ ավելի շատ շենք տաքանա կամ մրսի, քան այստեղ:

Ըստ երևույթին Քեթրինը իր մտազրույթունն իրագործել էր, որովհետև հաջորդ նախադասութունը այլ բան էր ասում. Կայրույթից աղջկա աչքերից արցունքներ հորդացին:

«Սրբեք չէի կարծում, որ Հինգլին Լորելէ կստացի ինձ այդպես լաց լինել,— գրում էր նա:— Գլուխս այնպես է ցավում, որ ի վիճակի չեմ այն բարձին դնելու, և, այնուհանդերձ, չեմ կարողանում ձեռք քաշել: Խեղճ Հիթքլիֆ: Հինգլին նրան թափառաշրջիկ է անվանում, այլևս թույլ չի տալիս, որ նա մեզ հետ նստի ու մեզ հետ ուտի և ասում է, որ չպետք է խաղամ նրա հետ և սպանում է դուրս շարտել նրան տնից, էլ ինչ խախտենք իր հրամանները:

Եւրոպական պարսպում է մեր հորը (ինչպե՞ս է համարձակվում) այն բանի համար, որ շատ էր պատասխանատու տալիս Հիթքլիֆին. և երգվում է զույգ տալ նրան իր իսկական տեղը . . .

Սուրած՝ սկսեցի պանթել գունաթափ էջի վրա. աչքերս ձեռագրից համում էին տպագրվածին: Տեսնում էի «Յոթանասուն տնգամ յոթ և յոթանասուն առաջիններից առաջինը» գարգանախոյան խորագիրը: Գիմմերթրինի մատուցում գերաշուք, Ջեյրս Բրենդրիհեմի արտասանած բարեպաշտական խոսքը: Մինչ կիսաքուն վիճակում տանջվելով, փորձում էի պայտակել, թե Ջեյրս Բրենդրիհեմը ինչ ձևով կշարունակի իր թեման, զույգս իջավ բարձին և քունը պարուրեց ինձ:

Այսօր, դա վատ թեյի և վատ տրամադրություն հետևանք էր. էլ ուրիշ ինչ կարող էր լինել, եթե ոչ այն, որ հենց դրանց պատճառով ես անցկացրի մի սարսափելի գիշեր: Տառապանքին բնականաբար պահից չեմ հիշում մի գիշեր, որ նման լիներ այս մեկին:

Կեռ զգում էի, թե որտեղ եմ գտնվում, երբ սկսեցի երազ

տեսնել: Ինձ թվաց, թի առավուր է, տուն եմ գնում և ինձ ուղեկցում է Զոզեֆը: Ճանապարհը թաղված էր մի յարդ հաստություն ունեցող ձյան շերտի տակ և, քանի դեռ խարխափելով առաջ էի շարժվում, իմ ուղեկիցը իր հանդիմանություններով շարունակ նեղում էր ինձ այն բանի համար, որ ես հետս չէի վերցրել ուխտավորի դավազանը, առանց որի, — ասում էր նա, — ևս երբեք չեմ մտնի տուն, — և պարծենկոտությամբ թափահարում էր մի հաստազուխ մահակ, որը, ինչպես հասկացա, կոչվում էր ուխտավորի դավադան:

Նրա ասածը մի սլահ անհեթեթություն թվաց ինձ. սեփական տուն ընկնելու համար ինչո՞ւ պետք է ուխտավորի դավազան ունենալ: Այն ժամանակ մի նոր միտք հղացավ իմ մեջ. տուն չեմ գնում: Մենք գնում ենք հոշակավոր Զեյբս Բրենդերհեմի քարոզը լսելու «Յոթանասուն անգամ յոթ» գրքից վերցրած թեմայով: Մեզնից մեկը՝ Զոզեֆը, քարոզիչը կամ ես, կատարում է «Յոթանասուն առաջիններից առաջինը» և հրապարակորեն պետք է ենթարկվի դատապարտման ու բանադրանքի:

Հասանք մատուռ: Ես իսկապես երկու թե երեք անգամ գրոսնելով անցել էի նրա մոտով: Այն ընկած է երկու բլուրի արանքում՝ խոռոչի մեջ: Դա մի բարձրադիր խոռոչ է, ոչ հեռու մորուտից, որի տորֆային խոնավությունը, ասում են, բալասանի պես ներգործում է այնտեղ թաղված մի քանի դիակների վրա: Տանիքը ամբողջապես պահպանված է մինչև այսօր, բայց քանի որ քահանայի ռոճիկը per-annum¹ միայն քսան ֆունտ ստեռլինգ է, նրան հատկացվում է և երկու սենյականոց մի բնակարան, որը սպառնում է արագորեն վերածվել մեկի, դրա համար ոչ մի քահանա չի ցանկանում իր վրա վերցնել հովվի պարտականությունը, մանավանդ որ, ինչպես ասում են, ծխականները ավելի շուտ սովամահ կանեն, քան իրենց սեփական գրպանից մի պեննի կավելացնեն նրա ռոճիկին: Սակայն երազիս մեջ եկեղեցում հավաքված ժողովուրդը ուշադիր լսում էր Զեյբսի քարոզը: Նա քարոզում էր: Օ՛, բարեբար աստված, ի՞նչ քարոզ էր դա:

¹ Տարեկան (լատ.):

Այի բաժանվում էր շուրս հաբճյուր իննսուն մասի, որոնցից յուրաքանչյուրը հավասարվում էր ամբիոնից կարդացած սովորական քարոզին, և ամեն մեկի մեջ քննարկվում էր յուրահատուկ մի մեղք: Թե որտեղից էր նա այդ ամենը վերցրել, չեմ կարող ասել. նա ունեւր մեղք բարի յուրահատուկ մեկնաբանութունը, և թվում էր, թե քրիստոնէական հովատի յուրաքանչյուր եղբայր, ամեն մի առանձին դեպքում, անհրաժեշտորեն պետք է տարբեր տեսակ մեղքեր գործեր:

Մեղքերը ամենաանսովորական բնույթի էին՝ տարօրինակ գանդանքներ, որ առաջ երբեք իմ մտքով չէին անցնում:

Ա՛, ինչքա՛ն էի հոգնել: Ինչքա՛ն էի տանջվում, հորանջում, ննջում, նորից ուշքի գալիս: Կամթում, խոցում էի ինքս ինձ, շփում էի աչքերս, վեր էի կենում, նորից նստում, արմուկով բոթում էի Զոգեֆին, հարցնում, թե երբ է վերջանալու այդ քարոզը:

Սա դատապարտված էի լսել այն մինչև վերջ. վերջապես բարեպր հասավ «Յոթանասուն առաջիններից առաջինին»: Այդ տագնապալից պահին ինձ վրա իջավ հանկարծակի մի ներշնչում, որ ստիպում էր վերկենալ և Զեյբս Բրենդերհեմին պատասպարակել մի մեղքի համար, որը ոչ մի քրիստոնյա պարտավոր չէ երբել:

Սրբ, — բացականչեցի ևս, — այս շորս պատերի մեջ նստած միանգամից հանդուրժել, ներել եմ ձեր ճառի շորս հարչուր իննսուն դուխներ: Յոթանասունյոթ անգամ գլխարկս պրել, ցանկապել եմ հեռանալ՝ յոթանասուն և յոթ անգամ դուք անհեթեթ կերպով ստիպել եք ինձ նստել տեղում: Չորս հարչուր իննսունմեկերորդ դուխն արդեն չափից դուրս էր: Սկրայր-նահատակներ, գրոհեք: Նրան ամբիոնից ցած շարահեք, ջարդեք, փշրեք այնպես, որ նա այլևս չվերադառնա իր սուն, և նրան ճանաչողները լիովին մոռացութեան տան երան:

— Ա՛խ, այդ դո՛ւ ևս, — ճշաց Զեյբսը՝ հանդիսավոր լռութունից հետո հենվելով իր բարձին: — «Յոթանասուն և յոթ անգամ դու հորանջելով ազավաղեցիր դեմքդ, յոթանասուն և յոթ անգամ ես խորհրդակցեցի հոգուս հետ: Այդպիսին է մարդկային թուլութունը, նա դեռ կարող է քավել իր մեղքը:

Յոթանասուն տասնչորսերից առաջինը դալիս է: Եղբայրներ, մահապատժի ենթարկել նրան ըստ նախախնամության դատաստանի: Այդ պատվին արժանի են աստժո բոլոր սրբակյաց մարդիկ:

Այդ վերջին խոսքերի հետ միասին բոլոր ներկաները, բարձրացնելով իրենց զայազանները, միասին նհավեցին ինձ վրա, և քանի որ հս պաշտպանվելու ղենք շունեի, ուստի փորձեցի խլել ամենամոտիկ և իմ ամենակատաղի հարձակվողներից մեկի՝ Զողեֆի դավազանը: Խայտաբղետ բազմության մեջ խաշաձևվեցին մի քանի մահակներ. ինձ վրա ուղղված հարվածները տեղացին այլ գլուխների վրա: Մատուռում իսկույնեթ ղղրդացին զարկեր և հակազարկեր: Ամեն մեկի ձեռքն ուղղված էր հարևանի վրա, իսկ Բրենդերհեմը շցանկանալով անգործ մնալ, իր ավյունը արտահայտում էր հարվածների տարափը թափելով ամբիոնի վրա, և, ի պատասխան, բարձրացավ այնպիսի ուժեղ աղմուկ, որ ես, վերջապես, անասելի թեթևության զգացումով արթնացա:

Եվ ինչն էր այդ սարսափելի աղմուկի մասին տեսած իմ երազի պատճառը: Ինչի՞ց ծագեց Զիյբսի սարքած կոփվը: Պարզապես դա ոչ այլ ինչ էր, եթե ոչ՝ պատուհանիս կպած եղևնու ոստը, որ քամու պոռթկումից իր շոր կոներով շառաչելով դիպչում էր լուսամուտիս ապակիներին:

Մի՛ պահ կասկածանքով ականջ էի դնում, իսկ երբ խոսվարարին հայտնաբերեցի, շուռ եկա, սկսեցի ննջել և նորից երազ տեսա՝ շատ ավելի տհաճ մի երազ, քան առաջինը, եթե միայն հնարավոր է:

Այս անգամ ես գիտակցում էի, որ պառկած եմ կաղնուց պատրաստված արկղում և պարզորոշ կերպով լսում եմ մրրկահույզ ու ձյունախառն հողմի հեծեծյունը, լսում եմ նաև, թե ինչպես եղևնու ոստը կրկնում էր տաղտկալի դարձած իր հարվածները, և ես դա վերագրում էի իսկական պատճառին: Բայց այդ հարվածներն այնքան էին ձանձրացնում ինձ, որ վճռեցի, եթե հնարավոր է, լռեցնել և ինձ թվաց, թե ես վերկացա ու փորձեցի պատուհանը բաց անել: Կեռը զոդված էր կեռին. մի քան, որ նկատել էի դեռ արթուն ժամանակ, բայց մոռացել էի:

Միևնույն է, պետք է լռեցնել,— շնչացի և, մատներիս

հողերով ջարդելով ապակին, թէս դուրս պարզեցի, որ բռնեմ այդ համառ ոստը, բայց դրա փոխարեն մատներս դիպան սառույցի պես սառը մի փոքրիկ ձեռքի մատներին:

Մղձավանջի մի սոսկալի վախ պարուրեց ինձ, փորձեցի թեև հետ քաշել, բայց մատները կառչեցին իմ ձեռքից, և խիստ թախծալի մի ձայն հեկեկալով ասաց.

— Ինձ ներս թողե՛ք... թողե՛ք մտնեմ ներս:

— Ո՞վ եք դուք,— հարցրի և միաժամանակ ջանում էի ազատվել նրանից:

— Քեթրին Լինթընը,— դողողալով պատասխանեց նա (ինչո՞ւ մտածեցի հենց Լինթընի մասին: Ամեն մի «Լինթընի» համար քսան անգամ կարդացի «էրնշոուն»),— եկա տուն, մուրյիվել էի հավամբող թփուտներում:

Ոս լսում էի, ապակու միջից աղոտ կերպով տեսնում մի երեխայի դեմքը: Սարսափը ինձ դաժան դարձրեց և հասկանալով, որ անօգուտ է փորձ կատարել ազատվելու այդ էակից, նրա դաստակը ջարդված ապակու միջից ներս քաշեցի և այնքան շփեցի կոտրված ապակու եզրերին, որ արչուն սկսեց ծորալ ու կաթկթել անկողնու սպիտակեղենի վրա, ուրախով նա Լիի շարունակում էր. «Թո՛ւյլ տվեք մտնել ներս», և այնպես պիկոկ էր կառչել իմ ձեռքին, որ ես գրեթե զբժվում էի աճիլի:

Ինչպե՞ս կարող եմ,— ասացի ի վերջո: Ձեռքս բաց թողեք, եթե ուզում եք, որ ձեզ ներս թողնեմ:

Մատները թուլացան, ձեռքս անցքից ներս քաշեցի, գրգռեցին անմիջապես իրար վրա դարսելով՝ փակեցի անցքը, փակելիի և ականջներս, որ չսեմ խնդրողի ողբալի ձայնը:

Այդպես փակած պահեցի երևի մի քառորդ ժամ, և, սակայն, հրբ բացեցի ականջներս, նույն պահին նորից լսվեց աղերսալի հեծեծանքը:

— Հեռացեք,— ճշացի,— երբեք ներս չեմ թողնի, թեկուզ աղերսեք քսան տարի:

— Արդեն՝ քսան տարի է,— հառաչանքով ասում էր ձայնը,— քսան տարի: Քսան տարի է, ինչ ես անօթևան թափառում եմ:

Ապա դրսի կողմից լսվեց մի թեթև ճանկատոց, և գրգռի կույտը շարժվեց տեղից, ասես, այն հրում էին դրսից:

Փորձեցի ցս. սկիւ տեղից, բայց չլի կարողանում շարժվել: սարսափից խելագարված՝ բարձրաձայն ճշացի:

Անոթով պետք է տսի՝ ես հասկացա, որ իմ ճշոցն անիրական չէր. սենյակիս դռանը մոտենում էին շտապ քայլեր, ինչ որ մեկը ուժեղ ձեռքով հրելով լայն բաց արեց դուռը, և լույս շողաց սուսրիս մոտ: Ծս, նստած, դեռ էլի դողում էի, սրբում ճակատիս քրտինքը. ներս մտնողը, ասես, տատանվում, քրթմնջում էր ինքն իրեն: Ի վերջո, կիսաշշուկով, ակնհայտորեն, առանց պատասխանի սպասելու, ասաց.

— Ո՞վ կա այստեղ:

Ծս ավելի հարմար գտա շթաքցնել իմ ներկայությունը, որովհետև գիտեի Հիթբլիֆի սովորությունները՝ վախենում էի, որ եթե լուռ մնամ, նա կարող է շարունակել իր որոնումները: Ուստի մղլակը քաշեցի և բաց արի միջնորմը: Ծս այնքան էլ շուտ չեմ մոռանա իմ արածը:

Հիթբլիֆը շապիկով և տաբատով կանգնած էր մուտքի մոտ. ձեռքին բռնած մոմը հալվում, կաթում էր նրա մատների վրա, իսկ դեմքը հետևի պատի նման սպիտակ էր: Կաղնու տախտակների առաջին իսկ ճռճոցը էլեկտրական հոսանքի պես ցնցեց նրան, մոմը ձեռքից թռավ ընկավ մի քանի ոտնաչափ հեռու: Նրա հուզմունքն այնքան ուժեղ էր, որ հագիվ կարողացավ վերցնել այն:

— Ձեր հյուրն է միայն, սըր,— ճշացի՝ ցանկանալով ազատել նրան ստորացնող վախի հետագա դրսևորումից:— Ես դժբախտություն ունեցա քնած ժամանակ ճշալ սարսափելի մղձավանջից: Ցավում եմ, որ անհանգստացրի ձեզ:

— Օ՛, անիծվե՛ք դուք, միստր Լոքվուդ: Ես կուղենայի, որ կորչեիք գնայիք...— սկսեց տանտերը՝ մոմը դնելով աթոռի վրա, որովհետև չէր կարողանում պինդ պահել ձեռքում:

— Ո՞վ բերեց ձեզ այս սենյակը,— շարունակեց նա՝ եղունգները խրելով փեղի մեջ և ատամները իրար սեղմելով, որպեսզի ջղաձգումից ծնոտները չդողան:— Ո՞վ, Հենց այս բոպեիս ես նրան տնից դուրս կշարտեմ:

— Ձեր տնտեսուհին՝ Զիլլահը,— պատասխանեցի ևս, ցատկեցի տեղից և սկսեցի արագորեն հագնվել:— Եթե դուք նրան դուրս շարտեք, դրա համար չեմ ցավի, միստր Հիթբլիֆ, նա միանգամայն արժանի է դրան: Ենթադրում եմ,



լինայելով հյուրին նա ուղում էր ունենալ մի փաստ ևս, որ
այս տեղը ուրվականների վայր է: Եվ այո, հենց այդպես էլ
է՛ այստեղ վխա՛ււմ են ուրվականներ և ոգիներ: Հավատա-
լում եմ, Գուք իրավացի եք, երբ տունը փակ եք պահում:
Ոչ որ ձեզնից շնորհակալ չի լինի այսպիսի մի որջում գի-
շերելու համար:

— Ի՞նչ եք ուղում ասել, — հարցրեց Հիթբրիֆը, — ինչո՞ւ
եք հագնվում: Պառկեցեք, քնեք մինչև առավոտ, քանի որ
արդեն այստեղ եք: Բաց, ի սեր աստծո, այլևս այդպիսի
սարսափելի աշմուկ մի բարձրացրեք. այնպես էլիք նշում,
ասես ձեր կոկորդը կտրում էին:

— Եթե այդ փոքրիկ դեր լուսամուտից ներս մտնեք, հա-
վանաբար ինձ խնդրամահ կանեք, — ասացի: — Ես բոլորովին

էլ չեմ ուզում նորից ենթարկվել ձեր հյուրասեր նախնիների հալածանքներին: Մի՞թե պատվարժան Զեյքս Բրենդերհեյմը ձեզ ազգական չէ մոր կողմից: Եվ այդ շարաճճի Քեթրին Լինթընը կամ էրնշոուն, կամ ինչպես էլ ուզում է կոչվի, պետք է, որ շար էյֆ՝ փոքրիկ շար ոգի լինի... Նա ասաց, որ արդեն ըստ՝ն տարի է, ինչ թափառում է, դա արդարացի պատիժ է նրա երկրային մեղքերի համար. չեմ կասկածում:

Հազիվ էի այդ բառերը արտասանել, երբ հիշեցի գրքում հիշատակված Հիթքլիֆ և Քեթրին անունների կապը, մի կապ, որ լիովին դուրս էր թռել իմ հիշողութունից և այժմ հանկարծ վերհիշեցի: Ես շիկնեցի՝ ամաշելով իմ անխոհեմութունից, բայց առանց ցույց տալու, որ գիտակցել եմ իմ հասցրած վիրավորանքը, շտապեցի ավելացնել.

— Ծճմարտութունն այն է, սրբ, որ ես գիշերվա առաջին կեսն անցկացրի... — այստեղ նորից վրիպեցի, քիչ էր մնացել ասելի «ուշադիր թերթելով հին հատորները». դա կնշանակեր ցույց տալ, որ ես ծանոթ եմ ոչ միայն դրանց ձեռագրին, այլև տպագիր բովանդակությանը, ուստի նոր վրիպում թույլ չտալու համար, շարունակեցի.

— Կարդում էի պատահանի քիվին խղբղած անունները: Դա տաղտկալի մի զգացմունք է, հաշվելու պես մի բան, որ քնեցնում է կամ...

— Ինչո՞ւ եք այդպես խոսում ինձ հետ, — թնդաց Հիթքլիֆը վայրագ կատաղությամբ: — Ինչպե՞ս... ինչպե՞ս եք հանդգնում իմ հարկի տակ: Աստված իմ, հո չի խելագարվել, որ այդպես է խոսում ինձ հետ:

Եվ զայրացած նա հարվածեց իր ճակատին:

Ես չգիտեի՝ վիրավորվե՞մ նրա խոսքերից, թե՛ շարունակեմ իմ բացատրութունը: Բայց, ըստ երևույթին, նա այնքան ուժեղ էր ազդված, որ ես խղճացի նրան և սկսեցի պատմել իմ երազները. պնդում էի, որ նախկինում երբեք չէի լսել «Քեթրին Լինթըն» անունը, բայց այնքան հաճախ էի այն կարդացել, որ տպավորվեց իմ ուղեղում և ապա մարմնավորվեց մի կերպարի մեջ, երբ ես այլևս ի վիճակի չէի զբաղելու իմ երևակայութունը:

Մինչ ես խոսում էի, Հիթքլիֆը աստիճանաբար ընկրկեց մահճակալի կողմը, վերջապես նստեց, և համարյա թաքնվեց

այնտեղ: Բայց նրա անկանոն ու ընդհատվող շնչառությունից
ևս գլխի ընկա, որ ջանում էր հաղթահարել իր ծայրահեղ
հուզմունքը:

Չցանկանալով ցույց տալ, որ ես լսում եմ, թե նա ինչպես
է պայքարում իր հետ, շարունակում էի հազնվել, ժամա-
ցույցիս նայում, բարձրաձայն խոսում էի ինքս ինձ հետ այն
մասին, թե ինչ երկար է տևում գիշերը:

— Դեռ ժամը երեքը չկա, իսկ ես կարող էի երդվել, որ
ժամը վեցն է: Ժամանակն այստեղ ասես կանգնած է նույն
տեղում. քնելու համար մենք, երևի, ժամը ութին մեկուսա-
յանք ննջարանները:

— Ձմեռ ժամանակ մենք միշտ պառկում ենք ժամը
իսկին, իսկ վեր ենք կենում շորսին,— ասաց տանտերը՝
զսոյելով իր հառաչանքը. նրա ձեռքի ստվերի շարժումից
ևս ենթադրեցի, որ նա սրբեց աչքերի արցունքը:

Միտար լռքվուղ,— ավելացրեց նա,— կարող եք գնալ
իմ սենյակի: Դուք միայն անհանգստություն կպատճառեք,
եթե այսպես կանուխ ժամի ցած իջնեք, ձեր երեխայական
այլ ճիշդ իմ քունը ուղարկեց գրողի ծոցը:

Իմը նայնպես, — պատասխանեցի ես,— կզբոսնեմ
բակում մինչև լուսարաց, իսկ հետո կչքվեմ, դուք այլևս չեք
սարսափի իմ նոր ներխուժումից: Ես այժմ լիովին բուժվել
եմ հասարակության մեջ հաճույքներ փնտրելուց՝ լինի դա
զյուզում, թե քաղաքում, միևնույն է: Խելացի մարդը պետք
է իր մեջ բնկերակցություն դտնի:

Ճիտնալի բնկերակցություն, փնթփնթաց Հիթքլի-
ֆր: Վերցրեք մտքը և գնալեք ուր որ կամենում եք: Ես
ամմիջապես կմիանամ ձեզ: Ի՞նչու, բակ շմտնեք, շները
չգլխաներից արձակված են, իսկ տան պահակը Յունոնն է,
այնպես որ կարող եք թափառել միջանցքներում ու աստի-
ճանների վրա: Դե, չքվե՛ք: Կգամ երկու բուսեցից:

Ես ենթարկվեցի, սակայն թողեցի միայն սենյակը, բայց
չիմանալով, թե ուր են տանում այդ նեղ նախասրահները,
կանգ առա և ակամա ականատես եղա իմ տանտիրոջ նախա-
պաշարմունքին, որը տարօրինակ կերպով հերքում էր նրա
սկիհայտ ողջամտությունը:

Նո մոտեցավ մահճակալին, իրարից հեռացրեց միջնորմը և այդ ժամանակ անզուսպ արցունքներ հորդացին նրա աչքերից. նա պոռթկաց:

— Եկ ներս, ներս արի,— հեծկլտում էր նա,— Քեթի, ե՛կ: Օ՛, եկ գոնե այս անգամ: Օ՛, թանկագինս. լսի՛ր ինձ գոնե այս անգամ, Քեթրին:

Ուրվականը դրսևորեց ուրվականների համար սովորական դարձած քմահաճույք. նա երևալու ոչ մի նշան ցույց չէր տալիս. միայն ձյունն ու քամին վայրագորեն պտույտ գործելով ներխուժեցին, հասան նույնիսկ իմ կանգնած տեղը և հանգցրին մոմը:

Այնպիսի կարոտ կար այդ զառանցանքին ուղեկցող վշտի արտազեղման մեջ, որ կարեկցանքն ինձ ստիպեց ուշադրություն շդարձնել նրա խենթության վրա, և լսածիցս զայրացած հեռացա՛ մեղադրելով ինքս ինձ այն բանի համար, որ պատմել էի նրան այդքան տագնապ առաջացնող իմ անհեթեթ մղձավանջի մասին, քե ինչո՞ւ՝ պատճառն ինձ անհասկանալի էր:

Զգույշ իջա առաջին հարկ, անցա խոհանոց, որտեղ իրար վրա հավաքեցի մարմանդ այրվող կրակը և վառեցի մոմը:

Ոչ մի շարժում չէր նկատվում, բացի մոխիրների միջից դուրս սողացող, իր մլավոցով ինձ դժգոհությանմբ ողջունող մի խայտաբղետ ու գորշագույն կատվից:

Երկու կիսակլոր թիկնակով նստարան գրեթե շրջափակում էին բուխարին. դրանցից մեկի վրա պառկեցի ինքս, իսկ մյուսի վրա բարձրացավ կատուն: Երկուսս էլ ննջում էինք, քանի դեռ ոչ ոք չէր ասպատակել մեր առանձնարանը: Ապա Զոդեֆը քստքստոցով ցած իջավ փայտե սանդուղքով, որն անհետանում էր առաստաղի դռնակի մեջ, ըստ երևույթին, դա ձեզնահարկից դուրս գալու միակ ելքն էր:

Նա մի շարագուշակ հայացք գցեց բուխարու իմ ձեռքով կենդանություն ստացած կրակին, կատվին նստարանից ցած քշեց և, փովելով ազատված տեղում, սկսեց իր երեք մատնաշափ ծխամորճը ծխախոտով լցնելու արարողությունը: Իմ ներկայությունը նրա սրբավայրում, ըստ երևույթին, զնահատվում էր որպես շափազանց ամոթալի մի հանդգնություն, որը շարժե ուշադրության առնել: Նա լռելյայն ծխամորճը

տարավ բերանը, ձեռքերը խաշածև ծալեց կրծքին և սկսեց մերթ ընդ մերթ ծուխ արձակել:

Թույլ տվեցի, որ նա վայելի այդ հաճելի բավականութունը: Մխի վերջին քուլաները բերանից օղակ-օղակ թողնելով և խոր շունչ քաշելով վերկացավ և հանդիսավոր կերպով հեռացավ ինչպես որ եկել էր:

Այա լավեց ավելի առաձգական քայլվածք, և ես բերանս բաց արի, որ «բարի լույս» ասեմ, բայց առանց բարեկու իսկույն նորից փակեցի: Հերթըն էրնշոուն sotto voce¹ մըր-մընջում էր իր ազոթքը, որով անիծում էր ձեռքն ընկած ամեն մի իր, մինչ անկյունում պրպտում-փնտրում էր թիակ կամ բահ, որպեսզի ձյան շերտով ծածկված ճանապարհը մաքրի: Նա նայում էր նստարանի հետևի կողմը, լայնացնելով քթածակերը, և բոլորովին շէր մտածում սիրալիր խոսք փոխանակել ինձ հետ, ինչպես և իմ հարևան կատվի հետ:

Նրա վերցրած իրից ես հասկացա, որ կարելի է տնից դուրս գալ, և թողնելով իմ կոշտ մահիճը, պատրաստվեցի հետևել նրան: Նա նկատեց այդ և բահի ծայրով ցույց տվեց դեպի ճաշասենյակ տանող դուռը, անլուր հնչյուններով հասկացնելով, թե որ կողմը գնամ, եթե ես որոշել եմ տեղս փոխել:

Բաց արի ներսի դուռը. կանայք արդեն եռուզեռի մեջ էին: Զիլլահը հզոր փուքսով բորբոքում էր բուխարու մեջ պեծին սփող կայծերը՝ ծխնելուզից դուրս հղելով ծուխը, իսկ միսիս Հիթքլիֆը բուխարու առաջ ծնկաշոք նստած, բոցի լույսի սառկ գիրք էր կարդում: Նա ձեռքի ափով աչքերը պաշտպանում էր բուխարու ջերմութունից, և, ասես, ամբողջովին կլանված էր ընթերցանությունից. կարգալուց դադարում էր միայն այն պահին, երբ հանդիմանում էր իր վրա կայծեր թափող աղախնին կամ մի կողմ էր հրում շանը, որը մերթ ընդ մերթ քիթը համառորեն հպում էր նրա դեմքին:

Իս սպռնեցի, երբ այդտեղ տեսա և Հիթքլիֆին: Նա, մեջքով դեպի ինձ, կանգնած էր կրակի մոտ, հենց նոր վերջացրած լինելով խեղճ Զիլլահի հետ ունեցած բուռն տեսարան:

¹ Յածրահայն (խտալ.):

նը: Վերջինս շարունակ ընդհատում էր իր աշխատանքը և, գոգնոցի ծայրը բռնելով, զայրալից հառաչանքներ էր արձակում:

— Իսկ դու, դու, անպետքի մեկը,— գոռաց նա հարսի վրա, հրբես ներս մտա, և ավելացրեց «բազ» կամ «ոչխար» բառերի պես ոչ վիրավորական մի մակդիր, որը, սակայն, սովորաբար նշվում է բազմակետով:

— Նորի՞ց սկսեցիր քո անբովանդակ խաղերը: Բոլորն այստեղ աշխատում, հայթայթում են իրենց հացը, մինչ դու ապրում ես իմ գթասրտության շնորհիվ: Թո՛ղ քո այդ անհեթեթ զբաղմունքը և զբաղվիր մի այլ գործով: Դու դեռ կհատուցես այն բանի համար, որ շարունակ աչքիս երևալով տանջահար ես անում ինձ. լսո՞ւմ ես, անպետքի մեկը:

— Ես թողնում եմ իմ զբաղմունքը, որովհետև եթե հրաժարվեմ, դուք կարող եք ստիպել ինձ,— պատասխանեց հրիտասարդ կինը՝ գիրքը փակելով և նետելով աթոռի վրա:— Բայց ես ոչ մի բանով չեմ զբաղվի, թեև կուզեի հայհոյելով ձեր լեզուն արմատից պոկվի, կանեմ այն, ինչ ինձ է հաճելի:

Հիթբլիֆը ձեռքը բարձրացրեց, իսկ խոսողը ցատկեց մի ապահով տեղ, ըստ երևույթին, նրան ծանոթ էր այդ ձեռքի ծանրությունը:

Զցանկանալով խառնվել այդ կովին, աշխույժ քայլվածքով մոտեցա, իբր ուզում եմ բուխարու մոտ տաքանալ և ասես ոչինչ չգիտեմ այդ ընդհատված վեճի մասին: Երկուսն էլ քաղաքավարությունից դրդված դադարեցրին հետագա թշնամական գործողությունները: Հիթբլիֆը փորձության շենթարկվելու համար բռունցքները խոթեց գրպանները, միսիս Հիթբլիֆը, արհամարհանքով շրթունքները ծոմռելով, անցավ հեռու մի անկյուն, որտեղ հավատարիմ մնալով իր խոսքին, արձանի պես նստած մնաց, քանի դեռ ես գտնվում էի այդտեղ:

Դա երկար շտեկեց: Ես մերժեցի մասնակցել նախաճաշին, և օգտվելով առիթից, լուսաբացի առաջին շողերի հետ, դուրս եկա մաքուր օդ, որն այժմ պարզ ու խաղաղ և սառն էր անշոշափելի սառույցի պես:

Հաղիվ էի հասել պարտեզի ծայրը, հրբես տանտերը հետեւիցս կանչեց, առաջարկեց ուղեկցել ինձ և անցկացնել մո-

բուտենբրի միջով, Լամ էր, որ եկավ, որովհետև ամբողջ դարավանդը վերածվել էր մի ալեծուփ սպիտակ օվկիանոսի, խութերն ու խոռոչները չէին համապատասխանում հողի դարուփոսերին: Ինչևէ, բազմաթիվ փոսեր լցված էին մինչև եզրերը, իսկ բլրակների շարքերը ամբողջապես, ինչպես և մշակման ենթարկված քարհանքերի ապառների կույտերը, ջնջված էին քարտեզի վրայից. դրանք հրեկվա զբոսանքի պահին գծագրվել էին իմ հիշողության մեջ, ծս այն ժամանակ ճանապարհի մի կողմում նկատեցի վեց կամ յոթ յարդ իրարից հեռու քարե ուղղահայաց սյունիկներ, որոնք ձգվում էին դաշտի ամբողջ երկայնքով. դրանք ներկված էին սպիտակ կրով, որպեսզի ուղեցույց ծառայեն մթության մեջ, երբ առատ ձյուն է տեղում, ինչպես օրինակ այսօր, կարծր արահետներն ու խոր մորուտները խառնվում, հավասարվում, իրարից չեն տարբերվում, սակայն բացի այստեղ-այնտեղ նկատվող ցեխոտ հետքերից, դրանց գոյության բոլոր նշանները չքացել էին, և իմ ուղեկիցը անհրաժեշտ էր համարում հաճախ նախազգուշացնել ինձ, որպեսզի քայլերս ուղղեմ դեպի աջ կամ՝ ձախ, երբ ես երևակայում էի, որ հետևում եմ ճանապարհի ոլորապտույտներին:

Մենք համարյա չէինք խոսում: Թրրշքրոս զբոսայգու մուտքի մոտ նա կանգ առավ՝ ասելով, որ այդտեղ ես այլևս չեմ շեղվի ճանապարհից: Գլխի շարժումով մենք հրաժեշտ ասինք իրար, և ես առաջ գնացի՝ հույսս դնելով իմ հնարամրտության վրա, որովհետև դժնապանի տնակում դեռ ոչ ոք չէր սպրում:

Գարպասից մինչև Ագարակատուն տարածությունը երկու մղոն էր, բայց կարծես ես այն շորս էի դարձրել. մերթ տարուրիբում, զարնվում էի ծառերին, մերթ էլ մինչև կոկորդս խրվում էի ձյան մեջ: Տհաճ մի վիճակ, որը կարող են հասկանալ միայն նրանք, ովքեր ենթարկվել են այդ կարգի փորձություն: Ինչևէ, երբ ես իմ մոլորումներից հետո մտա տուն, ժամադրույցը խփեց տասներկուսը. և այսպես, Մուեզին հողմերի դարավանդից սովորական ճանապարհի ամեն մի մղոնի անցումը տևեց մի ժամ:

Տան կատավորիչը և նրա արբանյակները առաջ նետվելով ինձ բարձրաձայն աղմուկով, ինձ ողջունեցին. նրանք իրենց

հույսը լիովին կտրել էին ինձ տեսնելուց, ենթադրում էին, որ ես կործանվել եմ երեկ գիշեր, և շվարել մնացել էին, թե ինչ ձևով փնտրեն իմ դիակը:

Ես խնդրեցի նրանց հանգստանալ, քանի որ տեսնում են, որ ապահով վերադարձել եմ, և, խիստ սարսուռ զգալով, քաշվեցի վերև. այդտեղ հագա շոր շորերս և մի կես ժամ անցուդարձ անելուց ու կենսական ուժերս վերականգնելուց հետո, կատվի ձագի պես թուլացած, անցա իմ առանձնասենյակը: Այնքան թույլ էի, որ թվում էր, թե շեմ վայելի կրակի գուրգուրող ջերմությունն ու գուրգուրող արձակող սուրճը, որ աղախինը պատրաստել էր իմ ուժերը վերականգնելու համար:

ԳՆՈՒՆ ԶՈՐՐՈՐԻ

Ի՞նչ անզոր հողմացույցներ ենք մենք: Ես, որ որոշել էի անկախ լինել ամեն տեսակ հասարակական կապերից և շնորհակալ լինել իմ աստղին, որ, ի վերջո, ինձ հասցրել է այնպիսի մի տեղ, որտեղ մարդկանց հետ կապերի մեջ մըտնել անհնարին է, ես, թույլ թշվառականս, դիմացա մինչև աղջամուղջ՝ ջանալով պայքարել ոգու թուլության և մենության դեմ, վերջ ի վերջո, հարկադրված եղա իջեցնել իմ դրոշը՝ տան պարագաներին ծանոթանալու պատրվակով ինձ ընթրիք բերող միսիս Դինից խնդրեցի նստել մոտս, մինչև որ ուտելս վերջացնեմ: Անկեղծորեն հույս ունեի, որ նա կդառնա մի սովորական բամբասող և իր բամբասանքներով կամ կուրախացնի, կամ էլ կքնեցնի ինձ:

— Դուք այստեղ ապրել եք բավական երկար ժամանակ, — սկսեցի ես, — տասնվեց տարի, եթե շեմ սխալվում, այդպե՞ս ասացիք:

— Տասնութ, սրբ: Ես այստեղ եկա, երբ տիկինը ամուսնացավ, եկա, որ սպասարկեմ իրեն, իսկ երբ վախճանվեց, տանտերը պահեց ինձ որպես տնտեսուհի:

— Ախ այդպե՞ս:

Նա մի պահ լռեց: Ես վախենում էի, որ միսիս Դինը ավելի շուտ կշատախոսի իր անձնական գործերի մասին, որոնք հաղիվ թե որևէ հետաքրքրություն ներկայացնեին: Բայց, մտքերը հավաքելով և բռնեցքները դնելով ծնկներին, մտորմունքը թխպոտ կարմրավուն դեմքին՝ նա բացականչեց.

— Է՛հ, ժամանակները բուրբուրվին փոխվել են:

— Այո,— ասացի ես,— դուք կարծեմ, շատ փոփոխություններ եք տեսել:

— Այո, քաշել եմ և շատ դժվարություններ,— ասաց նա: «Ը՛հ, կսկսեմ խոսել իմ տանտիրոջ ընտանիքի մասին,— մտածեցի:— Սկզբի համար վատ նյութ չէ: Գեղեցիկ այրի աղջիկ է, կուզենայի իմանալ նրա պատմությունը՝ բնիկ տեղացի՞ է, թե՞, որ շատ հավանական է, տարաշխարհիկ մի էակ, որի հետ անհամբույր indigenae¹ ոչ մի ազգակցական կապ չեն ընդունում»: Եվ հարցրի միսիս Դինից, թե ինչո՞ւ է Հիթքլիֆը Կեռնեխների ազարակատունը վարձավ տալիս, և գերադասում է ապրել ավելի վատ տան մեջ ու ավելի վատ վայրում:

— Մի՞թե նա բավականաչափ հարուստ չէ, որ կալվածքը պահի պատշաճ միճակում,— նորից հարցրի ես:

— Բավականաչափ՝ հարուստ, սրբ,— կրկնեց միսիս Դինը, — ոչ ոք չգիտի, թե ինչքան փող ունի և տարեց-տարի այն քանի դնում ավելանում է: Այո, այո, սրբ, այնքան հարուստ է, որ կարող է սրանից ավելի լավ տան մեջ ապրել: Բայց և ժլատ է. եթե մտքովն անցեիր էլ տեղափոխվել Կեռնեխների ազարակատուն, մեկ է, հենց որ լսեր մի լավ կենդորի մասին, ոչ մի գեպքում չէր համաձայնի ձեռքից բաց թողնել մի քանի հարյուր էլ ունենալու առիթը: Տարօրինակ է, թե ինչպես կարող են մարգկկ այգքան ազահ լինել, հրբ ոչ ոք չունեն աշխարհիս երեսին:

— Նա, կարծեմ, արդի՞ ունեւր:

— Այո, մի տղա ունեւր, մեռել է:

— Իսկ այդ երիտասարդ կինը՝ միսիս Հիթքլիֆը, նրա որդու որբեայրի՞ն է:

— Այո:

¹ Բնիկներ (լատ.):

— Որտեղացի՞ է:

— Ա՛խ, հա՛, սըր, նա իմ հանգուցյալ տիրոջ դուստրն է, նրա օրիորդական անունը Քեթրին Լինթըն է: Ես խնամել, մեծացրել եմ խեղճ աղջկան: Կուզենայի, որ միստր Հիթքլիֆը տեղափոխվեր այստեղ: Այն ժամանակ մենք նորից միասին կլինեինք:

— Ինչպե՞ս թե Քեթրին Լինթըն,— ապշած բացականչեցի ես: Բայց մի բոպե մտածելուց հետո, համոզվեցի, որ դա գիշերային իմ մղձավանջի Քեթրինը չէ:— Ուրեմն,— շարունակեցի ես,— տանը Լինթըն ազգանունով մա՞րդ է եղել:

— Այո:

— Իսկ ո՞վ է այդ էրնշուուն, Հերթըն էրնշուուն, որ ապրում է միստր Հիթքլիֆի հետ: Նրանք ազգականնե՞ր են:

— Ոչ, նա հանգուցյալ միսիս Լինթընի եղբոր որդին է:

— Ուրեմն երիտասարդ տանտիրուհու ազգականն է:

— Այո, տանտիրուհու ամուսինն էլ Հիթքլիֆի ազգականն էր, մեկը՝ մոր կողմից, մյուսը՝ հոր: Հիթքլիֆն ամուսնացած էր միստր Լինթընի քրոջ հետ:

— Ես Մոլեգին հողմերի դարավանդի տան գլխավոր մուտքի վերևում փորագրված տեսել եմ «էրնշուուն»: Դա հի՞ն տոհմ է:

— Շատ հին, սըր. և Հերթընը նրանց ընտանիքում վերջին շառավիղն է, ինչպես միսիս Քեթրինը մեր՝ Լինթըններիս ընտանիքում: Իսկ դուք Դարավանդում եղե՞լ եք: Ներեցեք, որ հարցնում եմ, բայց կուզենայի լսել, թե ինչպե՞ս է նա այնտեղ ապրում:

— Ո՞վ, միսիս Հիթքլիֆը: Տեսքով նա միանգամայն առողջ և շատ լավիկն է, բայց, կարծեմ, շատ էլ երջանիկ չէ:

— Ա՛խ, սիրելիս, ես չեմ զարմանում: Իսկ տանտերը ինչպիսի՞ն է:

— Ավելի շոր մարդ է, միսիս Դին, այնպես չէ՞:

— Կոշտ է ջաղացի քարի պես և սղոցի պես սուր լեզու ունի: Ինչքան քիչ շփվեք հետը, այնքան ավելի լավ կլինի ձեզ համար:

— Ըստ երևույթին կյանքը տրորել է, շատ է նրան վերուվար նետել: Դրա համար էլ նա դարձել է այդպես կոպիտ: Որևէ բան գիտե՞ք նրա պատմությանից:

— Ինչպես չէ, գիտեմ, սըր, ամեն ինչ գիտեմ նրա մասին, միայն չգիտեմ, թե որտեղ է ծնվել, ովքեր են եղել նրա ծնողները և սկզբում ինչպես է փող ձեռք բերել: Իսկ Հերթընին շիկահամարի պես փետրահան արին և դեն շարտեցին: Այդ դժբախտ մարդը միակն է ամբողջ ծխում, որ գլխի շի ընկնում, թե ինչպես են իրեն խաբել:

— Իսկապես, միսիս Դին, գթասիրտ գործ կատարած կլինիք, եթե մի բան պատմեք իմ հարևանների մասին. զգում եմ, որ պառկեմ էլ քունս չի տանի, այնպես որ, բարի եղեք, նստեք ինձ հետ, և մենք մի ժամի շափ զուլց կանենք:

— Օ՛, իհարկե, սըր: Հենց հիմա կբերեմ կարելու իրերս ու կնստեմ ձեզ հետ ինչքան կուղիք: Բայց դուք մրսած եք. տեսնում եմ, որ դողում եք, ձեզ հարկավոր է վարսակի շիլա, որ ձեր դողն անցնի:

Բարի կինը սենյակից շտապ դուրս եկավ, իսկ ես ավելի մոտեցա կրակին. գլուխս տրաքվում էր ջերմությունից, ցուրտը թափանցում էր ամբողջ մարմինս, դեռ ավելին, ջղերս հ ուղեղս սաստիկ բորբոքվել էին, ես խելագարության եզրին էի: Զգում էի, չէի ասի թուլություն, այլ ինչ-որ վախ, որը հիմա էլ չէր անցել, միայն թե այն ամենը, ինչ պատահել էր ինձ երկև և այսօր, շհանգեցներ լուրջ հետևանքների:

Տնտեսուհին շուտով փրաղարձավ՝ հետը բերելով գոլորշի արձակող ճաշամանը և մի զամբյուղ կարելու պարագաներ. շիլան դնելով բուխարու երկաթե դարակին, որ շառչի, նստեց բազկաթոռին՝ ակնհայտորեն ուրախանալով, որ ես այդպես մարդամոտ գտնվեցի:

— Այստեղ գալուց ու հաստատվելուց առաջ,— սկսեց միսիս Դինը իր պատմությունը առանց նոր հրավերի,— ես համարյա ամբողջ ժամանակ ապրում էի Դարավանդում, որովհետև մայրս խնամել էր միստր Հինդլի էրնշուին, որը Հերթընի հայրն էր: Ես սովորականի պես խաղում էի տանտիրոջ երեխաների հետ, կատարում էի նաև այլ հանձնարարություններ, օգնում էի, որ խոտ հավաքեն, և ֆերմայում տնում ամեն տեսակ աշխատանք: Ամառային մի գեղեցիկ առավոտ, դա ինչքան հիշում եմ, հունձի սկզբներին էր, միստր էրնշուն, մեր ավագ տերը, ճանապարհի համար հպնված իջավ ցած, Զոզեֆին հանձնարարեց, թե օրվա մեջ

ինչ պետք է անի, ապա դարձավ Հինդլիին, Քեթիին ու ինձ, որովհետև ես նրանց հետ նստած վարսակի շիլա էի ուտում, և որդուն ասաց.

— Դե, իմ փոքրիկ, այսօր գնում եմ Լիվերպուլ... Ի՞նչ բերեմ քեզ համար: Ամեն ինչ կարող ես ընտրել, միայն թե ուզածդ մեծ բան չլինի, որովհետև վաթսուն մղոն պետք է ոտքով գնամ ու գամ. ճանապարհը երկար է: Հինդլին խընդրեց ջուրակ: Հայրը նույն հարցով գիմեց Քեթիին, — որն այդ ժամանակ հազիվ վեց տարեկան լիներ, բայց մեր ախոռի բոլոր ձիերը նստում, քշում էր, — նա խնդրեց՝ մտրակ: Միտար էրնշտուն շմոռացավ և ինձ, որովհետև բարեսիրտ մարդ էր, թեև ժամանակ առ ժամանակ ցուցաբերում էր խստություն: Նա խոստացավ ինձ համար բերել մի գրպան լիքը խնձոր ու տանձ, հետո համբուրեց երեխաներին, հրաժեշտ տվեց ու մեկնեց:

Նրա երեք օրվա բացակայությունը մեզ բավականին երկար թվաց, և փոքրիկ Քեթիինը հաճախ հարցնում էր, թե հայրիկը Լոբ է գալու: Միսիս էրնշտուն նրան սպասում էր երրորդ օրվա ընթացքում, ընթրիքը ժամ առ ժամ հետաձգվում էր, սակայն տանտերը շէր երևում, Եվ երեխաները, վերջ ի վերջո, նրան դիմավորելու համար դարպասի մոտ վազկուց հոգնեցին: Արդեն սկսել էր մթնել, մայրը ուզում էր նրանց քնեցնել, բայց արտասովալից աչքերով նրանք խնդրում էին, սր թույլ տան էլի նստել: Ժամը տասնմեկին մոտ դուռն փականը բարձրացավ և ներս մտավ տանտերը: Նա ծիծաղելով, ախ, ախ անելով, նետվեց բազկաթոռին և հրամայեց շանհանգատացնել, որովհետև ճանապարհին քիչ էր մնացել սպանելին իրեն, և հիմա եթե երեք թագավորություն էլ տան, այլևս երեք նման գրոսանք չի կատարի: Եվ վերջումն էլ իրեն փախուստի մատնեցին ու հասցրին կիսամեռ վիճակի, — ավելացրեց նա՝ բաց անելով լայն վերարկուն, որի մեջ ինչ-որ բան փաթաթած, պահում էր ձեռքին, — մի՛ նայիր, այ կին. կյանքումս որևէ մեկից երբեք այդպիսի հարված չէի ստացել, բայց դու պետք է ընդունես այդ որպես աստժո պարզև, թեև նա այնքան սև է, ասես սատանայից է ծնվել:

Մենք հավաքվեցինք շուրջը, իսկ ես, միսս Քեթիի գլխի



վրայից նայելով, տեսա մի կեղտոտ, փրչոտ, սևահեր երեխա: նա այնքան էլ մեծ չէր, բայց կարողանում էր քայլել և խոսել. դեմքով Քեթրինից ավելի մեծ էր երևում, և, սակայն, երբ նրան կանգնեցրին ոտքերի վրա, նա միայն շուրջն էր նայում, նորից ու նորից կրկնում էր ինչ-որ անհեթեթություններ, որ ոչ ոք չէր հասկանում: Ես վախեցա, իսկ միսիս էրնշոուն պատրաստ էր դուրս շարտել նրան: Հարձակվեց ամուսնու վրա՝ հարցնելով, թե ինչպես կարող էր տուն բերել այդ անշուշտ վիժվածքը, երբ իրենք պետք է կերակրեն ու խնամեն իրենց հարազատ երեխաներին: Խելագարվե՞լ է, ի՞նչ է. հիմա ի՞նչ է մտածում անել այդ երեխայի հետ:

Տանտերը փորձեց կատարվածի պատճառը բացատրել, բայց նա, իրոք, հոգնածությունից հազիվ էր շնչում, և ինձ հաջողվեց տանտիրուհու խլացնող հանդիմանությունների տարափի տակ ամուսնու ասածից հասկանալ միայն, որ քաղցից մեռնող, անտուն այդ երեխային ինքը գտել էր Լիվերպուլի փողոցներից մեկում, հարցրել էր, թե դա ում երեխան է: Ոչ ոք չէր կարողացել ասել, թե ում երեխան է. և քանի որ փողն ու ժամանակը սահմանափակ էին, ավելի խելացի է համարել օտար քաղաքում ավելորդ ծախսեր շանել և փոքրիկին իսկույնևեթ տուն հասցնել: Գործն ավարտվեց նրանով, որ տանտիրուհին փնթփնթաց, փնթփնթաց, հանգըստացավ, իսկ միստր էրնշոուն ինձ հրամայեց ընկեցիկին լողացնել, մաքուր սպիտակեղեն հագցնել և քնեցնել երեխաների հետ միասին:

Հինդլին ու Քեթին այս ամենը լսում էին, մինչև որ խաղաղությունը վերահաստատվեց. հետո նրանք երկուսն էլ սկսեցին հոր գրպանները սրբաբանել, փնտրելով նրա խոստացած նվերները: Հինդլին տասնչորս տարեկան էր. հոր վերարկուի միջից դուրս բերեց շութակի բեկորները և սկսեց բարձրաձայն հեկեկալ, իսկ Քեթին իմացավ, որ միստր էրնշոուն ընկեցիկով զբաղվելիս մտրակը կորցրել է, շարացած սկսեց քիթումուծել ծամուռն ու թքել փոքրիկ հիմարի վրա. իր ջանքերի համար նա հորից ստացավ մի ապտակ, որը նրան պետք է սովորեցնել բարեկիրթ լինել:

Նրանք ոչ մի կերպ չէին ուզում անժանոթ երեխայի հետ պառկել միևնույն անկողնում կամ գոնե թույլ տալ, որ նա մտնի իրենց սենյակը: Ես էլ խելամիտ շեղա և երեխային պառկեցրի սանդղահարթակում, այն հույսով, որ գուցե առավոտյան դեմ թողնի, հեռանա: Պատահաբար, թե լսելով միսսարը էրնշոուի ձայնը, ընկեցիկը սողալով հասել էր նրա դռան մոտ, տանտերը սենյակից դուրս գալու պահին տեսել էր նրան: Սկսվեցին հարցուփորձերը այն մասին, թե ինչու էր երեխան այդտեղ ընկել: Ես ստիպված խոստովանեցի և, որպես երկշոտության և անգթության վարձատրություն, ինձ հեռացրին տնից:

Այդպես Հիթթլիֆը մտավ այդ ընտանիքը: Երբ մի քանի օրից հետո վերադարձա տանտերերի մոտ՝ չէի գտնում, որ հեռացվել եմ մեկընդմիջտ, ինձ հայտնեցին, որ տղային կնքել, անվանել են Հիթթլիֆ: Դա մանկության տարիներին միտած նրանց որդու անուն էր, և այդ անունը այդ օրվանից ընկեցիկի համար դարձավ թե՛ անուն, և թե՛ ազգանուն:

Միսս Քեթին և Հիթթլիֆն այժմ անբաժան ընկերներ էին, բայց Հինդլին ատում էր նրան, և ճիշտն ասած՝ ես էլ. մենք նրան տանջում, հետը վարվում էինք խայտառակ ձևով, որովհետև ես անխոհեմ էի և չէի գիտակցում նրա նկատմամբ յուրաբերած իմ անարդար վերաբերմունքը, իսկ տանտիրուհին ոչ մի անգամ և ոչ մի խոսքով չէր պաշտպանում որդեկրածին, հրբ իր աչքի առաջ նեղացնում էին նրան:

Նա ինքնապարիակ, համբերատար երեխա էր, հավանորեն բնակույթի կր վատ վերաբերմունքի. սուանց աչքերը Քարթիկու ու մի կաթիլ արցունք թափելու, դիմանում էր Հինդլիի հարվածներին, իսկ իմ կամթոցներից շունչը պահում, աչքերը լայն բաց էր անում, ասես ինքն իրեն խոցել էր պատահաբար, և ոչ ոքի չէր մեղադրում:

Երեխայի համբերատարությունը զայրույթ էր պատճառում ծերուկ էրնշոուին, երբ իմանում էր, որ Հինդլին հալածում է խեղճ, որբ երեխային, ինչպես անվանում էր իր որդեկրին: Նա տարօրինակ ձևով տաքացել էր Հիթթլիֆի վրա, հավատում էր նրա ասածներին (ի դեպ, եթե երեխան զանդատվում էր, մեծ մասամբ ճշմարտությունն էր ասում) և

նրան ավելի շատ էր երես տալիս, քան շահագանց շարահանճի՝
և քմահաճ Քեթիին, որը դարձել էր ընտանիքի սիրելին:

Այսպիսով երեխան հենց սկզբից ևեթ տուն մտցրեց զրթ-
տուլթյան ոգին, իսկ երբ միսիս էրնշտուն վախճանվեց՝ տանը
որդեգրի երևալուց հետո նա երկու տարի էլ շապրեց, երի-
տասարդ պարոնը սովորեց ի դեմս հոր տեսնել ավելի շուտ
իրեն ճնշողի, քան բարեկամի, իսկ հանձինս Հիթքլիֆի՝
բռնատիրոջի, որը խլել էր իրենից ծնողական սիրը և ոտըն-
ձգություններ թույլ տվել իր իրավունքների նկատմամբ. նա
ավելի ևս գազազում էր, մտածելով իրեն հասցրած վիրա-
վորանքների մասին:

Ես մի որոշ ժամանակ նրան համակրում էի, բայց երբ
երեխաները կարմրուկ հանեցին, և նրանց խնամքի հետ կապ-
ված կանացի բոլոր հոգսերը միանգամից ընկան ինձ վրա,
իմ մտքերն այլ ընթացք ստացան: Հիթքլիֆի հիվանդությու-
նը շատ ծանր էր ընթանում, և հիվանդության ամենակրի-
տիկական պահին նա ուզում էր, որ ես միշտ իր անկողնու
մոտ լինեմ, ասես զգում էր, որ ես շատ բան եմ անում իր
համար, բայց գլխի չէր ընկնում, որ հարկադրված էի այդ
անում: Պետք է խոստովանել՝ նա շատ հանգիստ երեխա էր:
Նրա և մյուս երկուսի մեջ եղած տարբերությունը ստիպում
էր ինձ ավելի քիչ ուշադիր լինել նրա նկատմամբ: Քեթիին ու
եղբայրը անասելի կերպով տանջում էին ինձ, իսկ Հիթքլիֆը
հիվանդությունը տանում էր գառան պես, թեև ոչ թե նրա
հեղուկությունը, այլ շորությունն էր ստիպում իրեն, որ ավելի
քիչ անհանգստացնի ինձ:

Նա դուրս պրծավ հիվանդությունից: Բժիշկը պնդում էր,
որ դա հատկապես կատարվել էր իմ ջանքերի շնորհիվ և
զովում էր ինձ այդպիսի հոգատարության համար: Գովա-
սանքները շոյում էին իմ փառասիրությունը, մեղմացնում
իմ թշնամանքը մի էակի նկատմամբ, որի շնորհիվ ես վաս-
տակել էի այդ գովասանքները. և այսպես, Հինդլին կորցրեց
իր վերջին գաշնակցին և, այդուհանդերձ, ես չէի կարող
սիրել Հիթքլիֆին և շատ հաճախ զարմանում էի, թե ինչ լավ
բան էր իմ տերը տեսնում այդ մռայլատես տղայի մեջ, որը,
ինչքան հիշում եմ, շնորհակալության ոչ մի նշան ցույց չէր
տալիս տիրոջս այդ թուլության համար: Նա սլարդապես

ամբարտաժառե, անդգա երեխա էր, շատ լավ գիտեր, թե ինքը ինչ իշխանություն ունի նրա սրտի վրա և հասկանում էր՝ բավական է մի խոսք ասի և ամբողջ տունը ստիպված կլինի ենթարկվել իր ցանկություններին: Հիշում եմ, օրինակ, թե ինչպես մի անգամ միտար էրճոուն տոնավաճառում գնեց երկու քուռակ և տղաներից ամեն մեկին նվիրեց մի-մի հատ: Ավելի գեղեցիկին իր համար ընտրեց Հիթքլիֆը, բայց քուռակը շատ շուտով սկսեց կաղալ, և երբ տղան տեսավ դա, Հինդլին ասաց.

— Մենք պետք է փոխենք մեր քուռակները. իմը ինձ դուր չի գալիս, իսկ եթե շփոխես, հորդ կասես, թե ինչպես ես դու այս շաբաթ ինձ հրեք անգամ ծեծել, և ցույց կտամ թե, որ հիմա էլ մինչև ուսս սև է:

Հինդլին նրան լեզու ցույց տվեց և մի ապտակ հասցրեց ականջին:

— Փոխիր անմիջապես, — պնդում է Հիթքլիֆը, վազելով սյունազարդ Գավիթի կողմը (նրանք գտնվում էին ախոռում), — ախր, միևնույն է, կփոխես, և եթե ես պատմեմ այդ ծեծերի մասին, դու դրանք տոկոսներով հետ կստանաս:

— Դուրս կորիր, շո՛ւն, — ճշաց Հինդլին, սպառնալով նրան երկաթի կշռաքարով, որն օգտադործում էին կարտոֆիլ և շոր խոտ կշռելու ժամանակ:

— Հապա մի փորձիր, — ասաց նա՝ անշարժ մնալով իր տեղում, — հետո կպատմեմ, թե ինչպես էիր պարծենում, ասելով, որ ինձ դուրս կվճռես տնից հենց որ հայրիկը մեռնի, և այն ժամանակ կտեսնենք, թե նա ում կվճռի տնից՝ ինձ, թե՛ քեզ:

Հինդլին շարտեց կշռաքարը, որը դիպավ Հիթքլիֆի կրծքին: Նա փովեց գետնին, բայց իսկույն վեր կացավ. գունատ էր ու հազիվ էր շնչում, և եթե ես շրոնեի, անմիջապես կվազեր տանտիրոջ մոտ և շատ խիստ վրեժ կլուծեր: Նրա ամբողջ տեսքը կհաստատեր կատարվածը՝ հայտնելով թե ով է արել այդ:

— Դե լավ, բո՛շա, վերցրու իմ քուռակը, — ասաց երիտասարդ էրճոուն, — և ես կաղերսեմ աստծուն, որ ձին քո վիզը կոտրի: Վերցրու, խառնակիչ մուրացկան, շողոքորթությամբ կկողոպտես հորս ունեցածը, և թող հետո նա իմանա,

թե իրականում ով էս դու, սատանի ճուտ... Վերցրու իմ քուռակը, ես հույս ունեմ, որ նա իր սմբակով քո ուղեղը ցրիվ կտա:

Իսկ Հիթլերի՞ց զնաց քուռակին կապից արձակեց և հետևից քաշելով տանում էր ախոռ, երբ Հինդլին, ի լրումն իր ասածի, ոտք գցից նրան, և նույնիսկ շսպասեց, որ տեսնի՝ կատարվեց իր ցանկությունը թե ոչ, որովհետև իսկույն փախավ:

Ես ապշել էի, երբ տեսա, թե ինչպես տղան Գանգիստ վերկացավ, իրեն կարգի բերեց և շարունակեց անել այն, ինչ մտածել էր՝ փոխանակեց թամբը և հեծելասարքը, նստեց շոր խոտի կույտի վրա, որպեսզի թեթևացնի կրծքին հասցրած ուժեղ հարվածից առաջացած սրտախառնոցը, ապա մտավ տուն:

Հեշտությամբ Գամոզեցի նրան, որ թույլ տա ինձ իր կապտուկների ամբողջ մեղքը գցել քուռակի վրա. նրա համար միևնույն էր, թե ինչ էին ասում, քանի որ ստացել էր իր ցանկացածը: Եվ, իրոք, այդպիսի պարագաներում Հիթլերի՞ն այնքան հազվադեպ էր զանգատվում, որ նրան պարզապես ռիսակալ չէին համարում: Ես շարաշար սխալվում էի, ինչպես կտեսնենք հետագայում:

ԳՆՈՒՆ ՀԻՆԳԵՐՈՐԳ

Ժամանակի ընթացքում միտար էրնշոուն սկսեց տկարանալ: Նա միշտ էլ եղել էր աշխույժ ու առողջ, բայց ուժերը միանգամից լքեցին նրան, և երբ ստիպված եղավ սահմանափակվել բուխարու անկյունով, դարձավ սաստիկ դյուրագրգիռ: Ամեն դատարկ բան ջղայնացնում էր նրան, եթե հեղինակությանը մի թեթև դիպչում էին, նա համարյա նոպա էր ունենում:

Դա հատկապես լինում էր այն պահերին, երբ որևէ մեկը փորձում էր ձեռք բարձրացնել կամ բռնանալ իր սիրելիի վրա: Խիստ հետևում էր, որ ոչ մի շար խոսք չասվի երեխային, շգիտես ինչու, սնհանգստանում էր այն մտքից, որ բո-

լորն ասում, ցանկանում էին վիրավորել իր սիրած որդեգրին: Դա բավականին վնասեց Հիթթլիֆին, որովհետև մեզնից նա, ով ավելի բարի էր, շուգենալով զայրացնել տանտիրոջը, ներողամտաբար էր վերաբերվում նրա կողմնապահությանը, և այդ ներողամիտ վերաբերմունքը այն նյութն էր, որը սնունդ էր տալիս երեխայի հպարտությանն ու շարամտությանը: Սակայն դա անհրաժեշտ էր ինչ-որ շափով: Երկու-երեք անգամ հոր ներկայությամբ երեխայի հանդեպ Հինդլիի ցուցաբերած արհամարհանքը առաջացրեց ծերունու զայրույթը, նա ձեռքը մեկնեց ձեռնափայտին, որ հարվածի որդուն. դողում էր զայրույթից, գիտակցելով, որ ի վիճակի չէ այդ անելու:

Ի վերջո, փոխերեցը (այն ժամանակ փոխերեցն ապրում էր նրանով, որ սովորեցնում էր փոքրիկ Լինթըններին, էրնշոուններին և ինքն էր մշակում իր հողամասը) խորհուրդ տվեց երիտասարդին ուղարկել քուեջ: Միստր էրնշոուն, ոչ առանց դժվարության, համաձայնեց, բայց ասում էր. «Հինդլին ավարա է, ուր էլ որ ուղարկես, հաջողության չի հասնի»:

Ես իմ սրտում հույս էի փայփայում, որ այժմ մեր տանը խաղաղություն կտիրի: Ցավալի էր մտածել, որ մեր տերը, իր սեփական րարի գործի պատճառով պետք է ընկնի տհաճ վիճակի մեջ: Երևակայում էի, որ նրա ծերունական դժգոհությունն ու հիվանդությունը ծագում էին ընտանիքում տիրող անհամաձայնությունից, ախր, հենց ինքն էր տարաձայնությունների պատճառը, բայց իրականում, ինչպես գիտեք, սրբ, ցավն այն էր, որ նրա ուժերը պակասում, սպառվում էին:

Եվ սակայն, մենք կարող էինք ապրել տանելի կերպով, եթե չլինեին երկու հոգի՝ միսս Քեթրինը և Ջողեֆը՝ ծառան,— ենթադրում եմ, որ դուք նրան տեսել եք այնտեղ՝ նրանց մոտ,— դա մի շատ ձանձրալի ու ինքագոհ փարիսեցի էր (և, երևի, հիմա էլ է այդպիսին), որ երբևէ պրպտել է աստվածաշունչը, որպեսզի այնտեղ գտնի հուսալի խոստումներ իր համար և անեծքներ, որ թափի շրջապատի մարդկանց գլխին: Հմտություն ձեռք բերելով քարոզների ու բարեպաշտական ճառերի մեջ, նա ջանում էր տպավորություն թողնել միստր էրնշոունի վրա. և որքան շատ էր թուլանում տերը,

այնքան ավելի էր ուժեղանում Զոզեֆի ազդեցութիւնը նրա վրա:

Մառան, հոգու փրկութեան մասին իր խորատնտեսութեամբ, անողոք կերպով ձանձրացնում, խորհուրդներ էր տալիս, որ երեխաների դաստիարակութիւնը դնի ճշմարիտ ուղու վրա: Նա հրահրում էր տիրոջը, որ Հիեղլիին դիտի որպէս մի անառակ երեխայի և գիշերներ շարունակ առասպելներէ շարան էր հնարում Հիթթլիֆի և Քեթրինի մասին, միշտ աշխատում էր շողոքորթել էրնշոուի թուլութիւնը՝ աղջկա վրա բարդելով հանցանքի ամբողջ ծանրութիւնը:

Իհարկեւ, աղջիկն ուներ այնպիսի սովորութիւններ, որպիսիք ես մինչ այդ երբեք չէի տեսել ոչ մի երեխայի մոտ. օրը հիսուն անգամ նա մեզ բողբոխ համբերութիւնից հանում էր, աստիճաններից ցած իջնելու պահից մինչև քնելու ժամը նրա շարաճճիութիւններից մենք ոչ մի բոլոր հանգիստ չունեինք: Միշտ բարձր տրամադրութիւն էր ունենում, և լեզուն անդադար շարժման մեջ էր՝ երգում, ծիծաղում, անհանգստացնում էր յուրաքանչյուրին, ով չէր անում այն, ինչ անում էր ինքը: Նա մի վայրենի, շար աղջիկ էր, բայց ամբողջ ծխում միակն էր, որ ուներ շատ վճիտ աչքեր, գրավիչ ժպիտ ու թեթև ոտք, և, ի վերջո, այս ամենից հետո ես այն կարծիքին եմ, որ նա ոչ ոքի չէր վիրավորում: Երբ որևէ մեկին լացացնում էր, նրանից չէր հեռանում, ինքն էլ էր լաց լինում և ամեն կերպ աշխատում էր հանգստացնել նրան ի միտքարութիւն իրեն:

Նա շատ կապիված էր Հիթթլիֆին: Եթե մենք մի հնարքով կարողանայինք նրան անջատել Հիթթլիֆից, դա նրա համար կլինէր ամենամեծ պատիժը: Եվ, այնուամենայնիվ, Հիթթլիֆի պատճառով նրան ավելի շատ էին հանդիմանում, քան մեղանից որևէ մեկին:

Խաչերի ժամանակ նա սիրում էր հանդես գալ որպէս տանտիրուհի, ազատութիւն տալ ձեռքերին և հրամայել ընկերներին: Այդպէս էր վարվում և ինձ հետ, բայց ես չէի հանդուրժում, թույլ չէի տալիս բռնանալ ինձ վրա և կարգադրութիւններ անել. ես նրան այդ բանը հասկացնել էի տալիս:

Միտար էրնշոուն երեխաների նկատմամբ ոչ մի կատակ չէր հանդուրժում, նրանց հետ միշտ էլ խիստ էր և լրջախոհ,

իսկ Քեթրինը իր հերթին շէր հասկասուս, բա ըսելու հայրը հիվանդ վիճակում դարձել է ավելի ջղային ու անհանդուրժող, քան առաջ էր, իր ուժերի ծաղկման շրջանում:

Նոր անտանելի կշտամբանքները աղջկա մեջ առաջացնում էին շարաճճի երեխային հատուկ ցանկություն՝ ջղայնացնել նրան: Քեթին երբեք իրեն այնքան երջանիկ չէր զգում, որքան այն ժամանակ, երբ մենք բոլորս միասին հանդիմանում էինք իրեն, իսկ ինքը համարձակ ու հանդուգն հայացքով և խոսքերով հետ էր մղում մեր հարձակումները՝ ծաղրելով Զոգեֆի կրոնական անեծքները, հոգեհան անելով ինձ, անելով այն, ինչ ատելով ատում էր հայրը, նա ցույց էր տալիս, որ իր շինծու հանդգնությունը, որը հայրը լուրջ էր ընդունում, ավելի շատ իշխանություն ուներ Հիթքլիֆի վրա, քան հոր բարությունը, որ Հիթքլիֆը կատարում էր իր ամեն մի հրամանը, իսկ Խիբոջ հրամանները կատարում էր լոկ այն ժամանակ, երբ դրանք համապատասխանում էին իր ցանկություններին:

Լինում էր, որ ամբողջ օրն այդպես հանդգնաբար վարվելուց հետո, երեկոյան դեմ գալիս էր հոր մոտ, որպեսզի հաշտվի նրա հետ:

— Ոչ, Քեթի,— ասում էր հայրը,— չեմ կարող քեզ սիրել, դու ավելի վատն ես, քան քո եղբայրը: Գնա աղոթիր, զավակս, և աստծուց ներումն աղերսիր: Վախենում եմ, մայրդ և ես զղջանք քեզ մեծացնելու համար:

Սկզբում նրա այդ խոսքերից Քեթրինը լաց էր լինում, բայց հետո անընդհատ մերժված լինելով, դարձավ գորովազուրկ և ծիծաղում էր, երբ ես նրան ասում էի, որ գնա հորը խոստովանի իր հանցանքները ու ներում խնդրի:

Բայց, ի վերջո, վրա հասավ ժամը, երբ վերջ տրվեց միստրը Էրնշտուի երկրային ձախորդություններին: Հսկանքներ-յան մի երեկո, կրակի մոտ նստած, իր բազկաթոռում հանգիստ ավանդեց հոգին:

Քամին մոլեգնում էր տան շուրջը և ոռնում էր ծխնելույզի մեջ, մռնչում, գոռում էր վայրագաբար, և, սակայն, ցուրտ չէր, մենք բոլորս միասին էինք. ես հյուսում էի օջախից մի փոքր հեռու նստած, իսկ Զոգեֆը սեղանի մոտ նստած կարդում էր աստվածաշունչը (աշխատանքից հետո ծառաները



սովորաբար նստում էին տանը բոլորիս հետ միասին): Միսս Քեթին հիվանդացել էր, դրա համար էլ լուռ էր, նա հենվել էր հոր ծնկին, իսկ Հիթբլիֆը, հատակին պռակած, գլուխը դրել էր աղջկա գոգին:

Հիշում եմ՝ միստր էրնշունն նիրհելուց առաջ շոյեց նրա գեղեցիկ մազերը, քիչ էր պատահում, որ նա աղջկան տեսներ այդքան սիրալիր, և ասաց.

— Ինչո՞ւ միշտ այդպես լավը չես լինում, Քեթի:

Նա դարձավ, նայեց հորը, ծիծաղեց և պատասխանեց.

— Իսկ ինչո՞ւ դու միշտ այդպես բարի չես լինում, հայրիկ:

Բայց երբ նկատեց, որ հայրը շղայնանում է, համբուրեց նրա ձեռքը և ասաց, որ հիմա երգով կքնեցնի նրան: Շատ

մեղմ սկսեց երգել այնքան ժամանակ, մինչև որ հոր մասնակները իր ձեռքից դուրս սահեցին, և գլուխը հակվեց կրծքին: Այն յամանակ ես խնդրեցի ընդհատել երգը և օեղից շարժվել, որովհետև վախենում էի, որ արթնացնի հորը: Մենք բոլորս մոտ կես ժամ մկների պես համր մնացինք և ավելի երկար կսակվեինք, եթե Ջոզեֆը ընթերցումն ավարտելուց հետո չվերկենար և շասիր, որ տիրոջը պետք է արթնացնի, որպեսզի աղոթք անի ու պառկի քնելու: Մոտեցավ, կանչեց նրան անունով, ձեռքը տարավ ուսին, բայց նա շարժվեց, այդ ժամանակ Ջոզեֆը մոմը վերցրեց և նայեց նրան:

Երբ մոմը ցած դրեց, ես մտածեցի, որ տիրոջը մի բան է պատահե: Երկու երեսանների ձեռքերից բռնած, շնչացի, որ «բարձրանան վերև և շատ շաղմկեն, այսօր նրանք իրենք կարող են աղոթել... Ջոզեֆը խիստ զբաղված կլինի այլ գործով:

— Ես նախ հայրիկին պետք է բարի գիշեր ասեմ,— առարկեց Քեթրինը և գրկեց հոր պարանոցը, նախքան մենք կարողացանք արգելել նրան: Խեղճ աղջիկ, անմիջապես հայտնաբերեց իր կորուստը և ճշաց,— օ՛հ, մեռե՛լ է, Հիթբլիֆ, մեռե՛լ է:

Եվ նրանք երկուսն էլ սկսեցին այնպես լաց լինել, որ մարդու սիրար քրքրվում էր:

Ես էլ էի լաց լինում նրանց հետ, բարձրածայն ու դառնորեն: Ջոզեֆը հարցրեց, թե ինչու ենք այդպես աղիողորմ լալիս, երբ սուրբը երկնքումն է:

Նա ասաց, որ թիկնոցը գցեմ վրաս և վազեմ Գիմմերթըն բժշկի ու պաստորի հետևից: Չէի կարողանում հասկանալ, թե նրանք հիմա ում են հարկավոր: Այդուհանդերձ, գնացի քամու և անձրևի տակ, բայց բերեցի միայն մեկին՝ բժշկին, իսկ պաստորն ասաց, որ կգա վաղը՝ առավոտյան:

Թողնելով, որ Ջոզեֆը պատմի, թե այդ բոլորն ինչպես կատարվեց, ես վազեցի երեսանների սենյակ: Նրանց սենյակի դուռը լայն բաց էր. տեսա, որ նրանք չէին էլ մտածում քնելու մասին, թեև կեսգիշերից անց էր, բայց ավելի հանգիստ էին, և ես նրանց մխիթարելու կարիք չզգացի. փոքրիկները մխիթարում էին իրար ավելի լավ խոսքերով, քան ես կարող էի այդ անել: Աշխարհում ոչ մի պաստոր չէր նկա-

րագրի դրախտն այնպիսի գեղեցիկ գույներով, ինչպիսի գույ-
ներով այն պատկերացնում էին նրանք իրենց անմեղ գրույց-
ներում. ես լսում էի հեծկլտալով և ակամայից ցանկացա,
որ շուտով մենք բոլորս միասին ապահով ընկնենք երկինք։

ԳՆՈՒՆ ՎԵՑՆՐՈՐԿ

Միստր Հինդլին տուն եկավ մասնակցելու հոր թաղման
արարողություններին։ Մի բան մեզ շատ զարմացրեց և դար-
ձավ շրջապատի մարդկանց բամբասանքների նյութ՝ նա հե-
տը բերել էր մի կնոջ։

Քե ո՞վ էր նա և որտեղացի էր, շրարեհաճեց մեզ բա-
ցատրություն տալ, հավանաբար կինը ոչ փող ուներ, և ոչ
էլ անուն, այլապես Հինդլին իր ամուսնությունը դժվար թե
հորից թաքցներ։

Կինը նրանցից չէր, որը գալուց անմիջապես հետո ամբողջ
տունը տակն ու վրա է անում։ Այն պահից, երբ ոտքը շեմից
ներս դրեց, ամեն մի առարկա, շուրջը կատարվող ամեն մի
դեպք, ասես նրան հիացմունք էր պատճառում, բացի հու-
ղարկավորության առնչությամբ տեղի ունեցող պատրաստու-
թյուններից և վշտացող մարդկանցից։

Ես մտածեցի, որ խե է, գոնե իրեն այգպես էր պահում
կատարվող արարողությունների ժամանակ։ Վազեց իր սեն-
յակը և հրամայեց, որ հետևեմ իրեն, թեև ես պետք է
հազցնեի երեխաների շորերը. այնտեղ նստած՝ նա դողում
էր ամբողջ մարմնով, ձեռքերը սեղմում ու անընդհատ հարց-
նում էր.

— Նրանք արդեն գնացի՞ն։

Ապա, հիստերիկ մոլուցքով բռնված, սկսեց նկարագրել,
թե ինչ տպավորություն է թողնում իր վրա այն ամենը, ինչ
սև է. ցնցվում, հուզվում, դողում է և, ի վերջո, սկսեց ար-
տասվել, իսկ երբ հարցրի, թե ինչո՞ւ է լաց լինում, պատաս-
խանեց, որ չգիտի. բայց սարսափելի վախենում է մեռնելուց։

Քեև նա նույնքան էր նման մեռնողին, որքան և ես։ Նա
բարակ էր, երիտասարդ, դեմքի գույնը թարմ էր, իսկ աչքերը

փայլում էին ադամանդի պես: Ճիշտ է, ես նկատել էի, որ սանդուղքով արագորեն բարձրանալիս սկսում էր հեռալ և ամենաթեթև անսպասելի աղմուկ անգամ լսելիս ամբողջովին ցնցվում էր և երբեմն տանջալից կերպով հազում, բայց ես չգիտեի, թե այդ նշանները ինչ էին կանխագուշակում, և բուրբուրում հակված չէի խղճալ նրան: Մենք, առհասարակ, այստեղ չենք համակրում օտարերկրացիներին, միստր Լոբվուդ, մինչև որ իրենք առաջինը համակրանք չարտահայտեն մեր նկատմամբ:

Երիտասարդ էրնշոուն իր բացակայության երեք տարիների ընթացքում զգալիորեն փոխվել էր: Ավելի նիհարել, գունատվել էր, խոսում, հագնվում էր միանգամայն ուրիշ կերպ. վերադարձի հենց առաջին օրը Ջոզեֆին ու ինձ ասաց, որ մենք այսուհետև պետք է անցկացնենք խոհանոցում, իսկ ճաշասենյակը կտրամադրվի իրեն: Նույնիսկ ուզում էր այդ փոքրիկ, դատարկ սենյակում գորգ փռել, պատերը պաստառապատել և դարձնել հյուրանսենյակ, բայց նրա կինը այնպես հավանեց մաքուր հատակը, բոցավառ մեծ բուխարին, անագե խոշոր ափսեները, հախճապակու պահարանը, շների որջը և սենյակի լայն տարածքը, որտեղ կարելի էր ազատ շարժվել, և որտեղ իրենք սովորաբար նստում էին, որ Հինդլին դա տիրոջ լավ ինքնազգացման համար անհրաժեշտ չհամարեց և հրաժարվեց իր այդ մտքից:

Կինն էլ համակվեց ուրախությամբ, որ իր նոր ծանոթների շրջանում քույր էր գտել, բլբլում, համբուրում էր Քեթրինին, հետը վազվզում էր դեսուդեն, սկզբում առատ նվերներ էր տալիս: Շատ շուտով, սակայն, նրա խանդաղատանքը սպառվեց, իսկ երբ կինը դառնում էր անբարեհամբույր, Հինդլին էլ դառնում էր բռնակալ: Բավական էր, որ կինը մի քանի անհարգալից խոսքեր ասեր Հիթքլիֆի հասցեին, որպեսզի Հինդլիի մեջ նորից արթնանար նրա երբեմնի ատելությունը Հիթքլիֆի նկատմամբ: Նա տղային հեռացրեց իրենց ընկերակցությունից, ուղարկեց ծառանների մոտ, զբրկեց փոխերեցի մոտ սովորելու հնարավորությունից և պահանջեց, որ դրա փոխարեն աշխատի դաշտում, ստիպում էր ուրիշների պես ծանր աշխատանք կատարել ֆերմայում:

Հիթթըլիֆը սկզբում բավական հանգիստ տանում էր այդ ստորացումը, որովհետև Քեթին նրան սովորեցնում էր այն ամենը, ինչ ինքն էր սովորել, աշխատում էր նրա հետ միասին և խաղում նրա հետ միասին: Նրանք երկուան էլ հույս էին փայփայում, որ կաճեն ու կդառնան բոլի վայրենիներ: Երիտասարդ տանտիրը միանգամայն անտարբերությամբ էր դիտում, թե ինչպես էին նրանք իրենց պահում և ինչ էին անում՝ միայն թե հեռու լինեին իրենից: Նա նույնիսկ չէր հետևում, որ նրանք կիրակի օրերը եկեղեցի գնան, և երբ Զոզեֆն ու փոխերեցը կշտամբում էին նրան այդպիսի անհոգության համար, Հինդլին հրամայում էր ձաղկել Հիթթըլիֆին, իսկ Քեթրինին՝ զրկել ճաշից կամ ընթրիքից:

Բայց նրանց համար շատ հաճելի էր ամեն առավոտ փախչել մորուտները և ամբողջ օրը թափառել հավամբու թփուտներում, իսկ դրանից հետո թող պատժեն. դա պարզապես ծիծաղելի կլիներ: Թող փոխերեցը Քեթրինին ստիպի անգիր անել բազմաթիվ գլուխներ, Զոզեֆն էլ թող Հիթթըլիֆին ծեծի ու ջարդի այնքան ժամանակ, մինչև որ ձեռքերը ցավեն: Նրանք ամեն ինչ մոռանում էին այն պահից, երբ նորից միասին էին լինում, գոնե այն րոպեից, երբ նրանք միասին կազմում էին վրիժառուության որևէ շարաճճի ծրագիր. ինչքան էի կամացուկ լաց լինում տեսնելով, թե ինչպես էին նրանք օրավուր դառնում ավելի անհոգ, մինչև ես ոչ մի խոսք չէի համարձակվում ասել, վախենալով կորցնել այն շնչին իշխանությունը, որը դեռ պահպանում էի այդ լքված երեխաների վրա:

Մի կիրակի երեկոյան, պատահեց այնպես, որ ինչ-որ աղմուկ բարձրացնելու, թե ինչ-որ մի այլ մեղքի համար, նրանց վոնդեցին ճաշասենյակից, և երբ ես գնացի ընթրիքի կանչելու նրանց, ոչ մի տեղ չկարողացա գտնել:

Տակնուվրա արեցինք ամբողջ տունը, վերևից ներքև, բակը և ախոռը՝ ոչ մի տեղ չերևացին: Ի վերջո, Հինդլին կատաղած կարգադրեց դռները կողպել, ոչ ոքի մինչև լույս ներս չթողնել:

Տեսցիք պառկեցին քնելու, իսկ ես խիստ անհանգստացած չկարողացա պառկել, բաց արի պատուհանը և, շնայած անձրևին, գլուխս դուրս հանեցի ու սկսեցի ականջ դնել.

որոշեցի՝ թեկուզև արգելված է՝ ներս թողալ սրահ, — վերադառնան:

Որոշ ժամանակ անց տարբերեցի ճամփից լավող քայլերի ձայնը և դարպասից դուրս՝ լապտերի առկայծող լույսը:

Շալը գցեցի գլխիս և վազեցի նախազգուշացնելու, որ դուռը շթակեն և միաստը էրնշոուին շարթնացնեն: Գալիս էր միայն Հիթբլիֆը, ցնցվեցի, երբ նրան մենակ տեսա:

— Ո՞ւր է միսս Քեթրինը, — իսկույն ճշացի, — հույս ունեմ, որ նրան ուիինշ շի պատահել:

— Նա Կեռնեխների ագարակատանն է, — պատասխանեց տղան, — և ես էլ հիմա այնտեղ կլինեի, եթե բարեկիրթ լինեին և առաջարկեին մնալ:

— Օ՞հ, վերջը ծուղակը կընկնես, Հիթբլիֆ, — ասացի, — դու երբեք չես հանգստանա, մինչև որ քո ուզածը գլուխ չընթանա: Ի՞նչ փշեց խելքներիդ, որ գնաք Կեռնեխների ագարակատուն:

— Թող թրջված շորերս հանեմ, — ամեն ինչ կպատմեմ, նեւիի, — պատասխանեց նա:

Խնդրեցի զգույշ լինել, որ տանտերը շարթնանա, և քանի դեռ տղան հանվում էր, իսկ ես սպասում էի, որ լույսը հանդցնեմ, նա շարունակում էր պատմել:

— Քեթրի հետ միասին լվացքատան միջով փախանք թափառելու ազատության մեջ, բայց երբ հեռվում Ագարակատան լույսերը տեսանք, վճռեցինք ուղիղ գնալ այնտեղ և տեսնել, թե արդյո՞ք ճիշտ է, որ Լինթընները կիրակի երեկոն անց են կացնում ամեն մեկն իր անկյունում կանգնած, ցրտից դողալով, մինչ ծնողները սեղանի շուրջ ուտում, խմում են, երգում, ծիծաղում են և թեժ կրակի մոտ նստած փշացնում իրենց աչքերը: Կարծում ես սառչում էին, դողո՞ւմ: Կամ կարդում էին քարոզներ և ծառայի հարցերին պատասխանելով ստիպված լինում անդիր սերտել բիրլիական անունների ամբողջ սյունակներ, եթե ճիշտ չէին պատասխանում տրված հարցերին:

— Հավանաբար, ոչ, — պատասխանեցի ես, — նրանք, տարակույս չկա, որ լավ երեխաներ են, նրանց չեն պատժում, ինչպես ձեզ, երբ դուք ձեզ վատ եք պահում:

— Մի կեղծիր, նեւիի, — ասաց նա, — այդ ամենը դա-

տարկ բան է: Մենք վազեցինք Դարավանդից մինչև պարտեզ առանց շունչ առնելու: Քեթրինը իր ոտքերը հարեց, որովհետև բոբիկ էր: Վաղր նրա կողիկները մորուսում կփնտրեինք: Մենք ներս սողացինք ցանկապատի ճեղքից, խարխափելով անցանք շավիղով և ընկանք հյուրասենյակի լուսամուտի տակի ծաղկանոցը, ածուի մեջ: Լույսը շողում էր պատուհանից, որի փեղկերը բաց էին, վարագույրները քաշած էին լոկ կիսով շափ: Հիմքի ելուստին կանգնած և կոթնելով լուսամուտի գոգին, կարող էինք ներս նայել, և մենք տեսանք՝ ա՛հ, ինչքան գեղեցի՛կ էր: Դա մարեզույն գորգով պատած մի շքեզ սենյակ էր, որտեղ կային պաստառապատ մարեզույն բազկաթոռներ, սեղաններ, ոսկե եզրակով առաստաղը մաքուր սպիտակ էր, առաստաղի կենտրոնից արծաթե շղթաներով կախված ապակե կախոցները, ասես, փայլին տվող անձրև լինելին, և շողշողում էին բարակ մոմերը: Մեր միստրը և միսիս Լինթընները այդտեղ շէին երևում, սենյակը լիովին էղզարի և քրոջ տրամադրության տակ էր: Բա դա հրջանկություն չէ՞: Երկուսս էլ ասես դրախտում լինեինք: Եվ հիմա դուշակիր, թե ի՞նչ էին անում քո այդ գլավ երեխաները: Իզաբելան, նա կարծեմ տառամեկ տարեկան է, մեկ տարով փոքր է Քեթրից, սենյակի հեռավոր անկյան հատակին պառկած այնպես էր ճշում, ասես վճռիկները նրա մարմնի մեջ շփուցած առեղներ էին խրում: Էզգարը բուխարու մոտ կանգնած անձայն լաց էր լինում, կազկանձելով թաթն էր թափ տալիս սեղանին նստած փոքրիկ շունը, որին, ինչքան մենք կարողացանք հասկանալ իրենց փոխադարձ կշտամբանքներից, քիչ էր մնացել պատասխան, երկու մաս անեին: Ապուշնե՛ր. դա նրանց հաճույք էր պատճառում, դիճում էին, թե նրանցից որ մեկը իր ձեռքում բռնած կպահի տուք մազերի փունջը, և երկուսն էլ արցունք էին թափում, որովհետև շնիկի պատճառով կովելուց հետո նրանցից և ոչ մեկը չէր ուզում նրան վերցնել: Եվ ինչպե՛ս էինք մենք ծիծաղում այդ շփացած անասունների վրա: Մենք նրանց արհամարհում էինք ամբողջ սրտով: Դու ե՞րբ ես տեսել, որ ես ցանկանամ ունենալ այն, ինչ ուզում է Քեթրինը: Կամ ե՞րբ ես նկատել, որ մենք երկուսով, մենակ մնալով ընդարձակ սենյակի հրկու տարբեր ժայրերում, զոռանք, ճշանք, լաց

լինենք և հասակին թավալվելով գվարճանանք: Հազար կյանքերի դնով ես իմ այստեղի դրությունը չէի փոխի էդգար Լինթրենի Կեռնեխների ագարակատան կյանքի հետ, նույնիսկ եթե ինձ իրավունք տային Ջոզեֆին կտուրի ամենարարձր ծայրից շարտել ներքև և Հինդլիի արյամբ ներկել գլխավոր մուտքի դուռը:

— Կամա՛ց, կամա՛ց, — ընդհատեցի ես, — բայց դու դեռ չասացիր, Հիթքլիֆ, թե Քեթրինը ինչո՞ւ մնաց այնտեղ:

— Ասացի, որ մենք ծիծաղում էինք, Լինթրենները լսեցին և, ասես պայմանավորված, երկուսն էլ նետի արագությամբ նետվեցին դեպի դուռը: Սկզբում ձայն չէր լսվում, ապա լրսվեց ճշոց. «— Օ՛յ, մայրի՛կ, մայրի՛կ: Օ՛յ, հայրի՛կ: Օ՛յ, մայրի՛կ, այստեղ եկեք: Օ՛յ, հայրիկ, օ՛յ...»: Այո, իսկապես, նրանք գոռալով նման մի բան էին ասում: Մենք սոսկալի աղմուկ բարձրացրինք, որ նրանց է՛լ ավելի վախեցնենք, իսկ հետո լուսամուտի գոգից ցատկեցինք ցած, որովհետև ինչ-որ մեկը քաշեց սողնակը և մենք հասկացանք, որ պետք է ճողոպրել: Ես բռնել էի Քեթրիի ձեռքը և շտապեցնում էի, երբ տեսա՝ նա վայր ընկավ:

— Փախի՛ր, Հիթքլիֆ, փախի՛ր, — շշնջում էր նա: — Նրանք արձակել են բուլդոզը, որը բռնել է ինձ:

Աստանա շուկր բռնել էր նրա կոճից, Նելլի, ես լսում էի շան նողկալի փոնչոցը: Քեթրինը շճչաց ցավից, ոչ, շճչաց, չէր ճվճվա, նույնիսկ, եթե կատաղած կովը պողահարեր նրան: Բայց ես սկսեցի բղավել: Այնքա՛ն անեծքներ թափեցի, որ դրանցով կարելի էր ոչնչացնել քրիստոնեական աշխարհի ուղածո սատանային, քարը վերցրի, խրեցի շան ձևոտի մեջ և ամբողջ ուժով աշխատում էի զոռով մտցնել կոկորդը: Ի վերջո, այդ անասուն ծառան եկավ լապտերը ձեռքին, գոռաց.

— Պինդ բռնիր, Սողուն, պինդ բռնիր:

Սակայն նա ձայնը կտրեց, երբ տեսավ, թե Սողունը ինչ որս է բռնել: Շան կոկորդը սեղձվեց, խոշոք բոսորագույն լեզուն կես ոտնաշափ կախ ընկավ, իսկ բաց երախից ծորում էր արյունոտ լորձունքը:

Մտան Քեթրին բարձրացրեց: Նա ուշաթափ էր եղել. համոզված եմ՝ ոչ թե ահից, այլ ցավից: Նա աղջկան սու-

բավ ներս, իսկ ես, քրթմնջալով անեծքներ և վրեժխնդրու-
թյան բոցով վառված, հետևեցի նրանց:

— Հը, ի՞նչ որս է, Ռոբերտ,— մուտքից գոռաց ինձընը:

— Սողունը մի փոքրիկ աղջիկ է բռնել, սըր,— պատաս-
խանեց սպասավորը,— մի տղա էլ կա,— ավելացրեց նա,—
որ կառչել, պոկ լի գալիս ինձնից, հոյակապ տիպ է երևում:
Շատ հնարավոր է, որ ավազակներն ուզում էին նրանց լու-
սամուտից ներս մտցնել, որ, երբ բոլորս պառկեինք քնելու,
դուռը բացեին շայկայի առաջ, և մեզ հեշտությամբ մորթո-
տեին: Լո՛իբ, ստոր գող: Դու դրա համար կախաղան կհան-
վես: Միստր ինձըն, սըր, հրացանը ցած շղնեք:

— Այո, այո, Ռոբերտ,— ասաց հիմար ծերուկը,— սրի-
կաները իմացել են, որ ես երեկ վարձակալներից փող եմ
ստացել, կարծում են, թե ինձ հանկարծակիի կբերեն: Թող
գան, ես նրանց լավ ընդունելություն ցույց կտամ: Հե՛յ, Ջոն,
դուան շղթան գցիր, ամբացրու Ջեննի, Սողունին ջուր տվեք:
Հարձակվե՛լ դատավորի վրա, և այն էլ կիրակի՞ օրը: Մի
դրանց լիտիությունը տես: Օ՛հ, մի նայիր, սիրելի Մերի: Մի
վախենա, դա լոկ մի տղա է, մի տես, թե ինչ սարսափելի
է խոժոռվում... մի՞թե երկրի համար բարերարություն չի
լինի, եթե սրան շուտ կախաղան հանեն, նախքան կրացա-
հայտի իր բնավորության գծերը ոչ միայն դեմքի արտահայ-
տությամբ, այլև գործով:

Նա ինձ քաշեց տարավ ջահի տակ, իսկ միսիս ինձընը
ակնոցը դրեց քթին և սարսափահար ձեռքերը վեր կարկա-
ռեց: Երկշոտ երեխաները ավելի մոտ եկան, իսկ Իզաբելլան
բշփշաց:

— Ի՛նչ սարսափելի տիպ է: Փակիր նրան մառանում,
հայրիկ: Նա իսկ և իսկ նման է աչն գուշակուհու որդուն, որ
գողացավ իմ ձեռնասուն փասիանը, այդպես չէ՞, էդգար:

Քանի դեռ նրանք ղննում էին ինձ, Քեթրինը ուշքի եկավ,
լսեց վերջին բառերը և ծիծաղեց: էդգար ինձընը ուշադիր
դիտելուց հետո, ասես սթափվեց և ճանաչեց նրան: Նրանք
մեղ տեսած կլինեն եկեղեցում. մի որևէ այլ վայրում մենք
հավվադեպ էինք հանդիպում նրանց:

— Վայ, ախր, սա միսս էրնշոուն է,— շղնջաց նա մորը,—

հապա մի լավ նայիր, տես, թե ինչպե՞ս է Սողոմար սրաս կժոտել, մի տես, ոտքից արյուն է ծորում:

— Միսս էրնշոո՞ւն: Անմիտ բան ես ասում,— ճշաց մայրը,— հա՛, չէ մի, էդ էր պակաս, որ միսս էրնշոուն սկսե՛ր բողայի հետ շրջել: Ի դեպ, սիրելիս, աղջիկը իրոք սգի մեջ է, այո, իհարկե, նա կարող է ամբողջ կյանքում հաշմասու՛ւմ մնալ:

— Ինչպիսի՞ հանցավոր անփութություն նրա եղբոր կողմից,— բացականչեց միստր Լինթընը՝ հայացքը իմ վրա: Ե՛ր փոխադրելով Քեթրինի վրա:— Ես Շելդերից (Շելդերը մեր փոխերեցն է, սըր) լսել եմ, որ եղբայրը նրան հնարավորություն է տալիս, որպեսզի իսկական հեթանոս մեծանա: Բայց սա ո՞վ է: Աղջիկը որտեղի՞ց է գտել այսպիսի մի ուղեկից: Ախ հա՛, սա ըստ հրեույթին, այն երեխան է, որ իմ հանգուցյալ հարեանը գտել բերել էր Լիվերպուլից՝ սա հնդիկ նավաստու որդի կամ նավակներից դուրս շարտած փոքրիկ ամերիկացի, կամ էլ իսպանացի կլինի:

— Ինչ որ է, վատ տղա է,— նկատեց ծեր լեդին,— նրան ոչ մի դեպքում չի կարելի պահել պարկեշտ տան մեջ: Բա շնկատեցի՞ր, Լինթըն, թե ինչ բառեր է նա գործածում: Ես սարսափից ցնցվեցի, երբ իմ երեխաները լսեցին նրա խոսքերը:

Ես կրկին սկսեցի հայհոյել, մի բարկանա, նեղի, և այնպես, որ Ռոբերտին հրամայվեց ինձ հեռացնել սենյակից: Ես հրաժարվում էի գնալ առանց Քեթիի, նա ինձ քաշ տալով տարավ պարտեզ, լապտերը կոխեց ձեռքս, ասաց, որ իմ վարքագծի մասին անպայման կհաղորդվի միստր էրնշոուն և, հրամայելով անմիջապես հեռանալ, դուռը կողպեց:

Հետ քաշած վարագույրները դեռ մնում էին անշարժ: Ես բարձրացա իմ նախկին տեղը և սկսեցի դիտել. եթե Քեթրինը ուղենար վերադառնալ, և եթե նրանք նրան շուգենային ազատ արձակել, ես նրանց մեծ հայելին կջարդոտեի, վեր կածեի միլիոնավոր բեկորների:

Քեթրինը հանգիստ նստել էր բազմոցի վրա: Միսս Լինթընը նրա վրայից հանեց կովապահ կնոջ գորշ թիկնոցը, որ հետներս վերցրել էինք զբոսանքի համար, և, տարուբե-

բելով գլուխը, ինչպես ինձ թվաց, կշտամբում էր նրան. դե, Քեթին երիտասարդ լեզի է, և նրանք իրենց վերաբերմունքով տարբերություն են դնում նրա և իմ մեջ: Հետո աղախինը կոնքով տաք ջուր բերեց և լվաց նրա ոտքերը: Միստր Լինթընը նրա համար մի բմպանակ թերմոն պատրաստեց, Իզաբելլան նրա դոզը լցրեց մի սկահակ պաքսիմատ, իսկ էդգարը դարմանք արտահայտող հայացքով կանգնել էր մի փոքր հեռու: Ապա շորացրին ու սանրեցին նրա գեղեցիկ մազերը, սվեցին բավականին մեծ հողաթափեր և նրա բազկաթոռը սահեցրին, մոտեցրին կրակին: Ծա նրան թողեցի այնպիսի ուրախ տրամադրության մեջ, որ ավելին հարկավոր էլ չէր: Նա ուտելիքը կիսում, տալիս էր շնիկին ու բուլղոգին, որի քիթը կամթում էր ուտացնելիս: Լինթընների դատարկ, կապույտ աչքերում բոցավառվում էին կյանքի կայծեր, որոնք Քեթրինի սեփական գրավիչ դեմքի աղոտ արտացոլումն էին: Ծա տեսնում էի, որ նրանք բուլորն էլ տոգորված էին հիմար հիացմունքով: Քեթին անսահմանորեն շատ բարձր է նրանցից, բարձր է աշխարհում բոլորից, ճիշտ չէ՞, Նեյլի:

— Այդ խմորը ավելի շատ ջուր կվերցնի, քան դու կարծում ես, — պատասխանեցի և, նրան ծածկելով, լույսը հանցեցրի: — Դու անուղղելի ես, Հիթքլիֆ, և միստր Հինդլին ստիպված կլինի դիմել ամենախիստ քայլերի՝ կապրենք, կտեսնենք:

Իմ ասածներն ավելի ճիշտ դուրս եկան, քան ակնկալում էի: Այդ շարաբաստիկ արկածը կատաղեցրեց էրնշոուին: Իսկ հետո միստր Լինթընը, որպեսզի ուղղի իր թույլ տված անվայել վերաբերմունքը, հետևյալ օրն անձամբ այցելեց մեզ և երիտասարդ տանտիրոջ գլխին կարգաց մի երկար խրատ այն մասին, թե ինչ ձևով նա պետք է ընտանիքը ղեկավարի: Դա ստիպեց Հինդլին լրջորեն հետևել Հիթքլիֆին: Վերջինիս շփոթեցին, բայց հայտնեցին, որ եթե իրեն թույլ տա գեթ մեկ անգամ խոսել Քեթիի հետ, նրան տնից դուրս կվճռեն, իսկ միտիս էրնշոուն պարտավորվեց իր տալին պատշաճ հեռավորության վրա պահել, երբ տուն վերադառնա: Դրա համար միսիսը գործադրեց ոչ թե ուժ, այլ խորամանկություն. ուժի միջոցով նա, իհարկե, իր նպատակին չէր հասնի:

Քեթին Կեռնեխների ազարակատանը մնաց հինգ շաբաթ՝ մինչև ծննդյան տոնը: Այդ ընթացքում նրա կոճը լիովին բուժվեց, շարժուձևերը բավականին բարեփոխվեցին: Միսիս էրնշոուն հաճախ այցելում էր նրան, ժամանակ առ ժամանակ սկսում էր վերադաստիարակման իր ծրագիրը իրագործել գեղեցիկ շորեր հագցնելով ու շողոքորթելով, աշխատում էր ինքնահարգման զգացում ներշնչել նրան: Այդ ամենը Քեթին պատրաստակամորեն ընդունում էր: Այնպես որ, անզուսպ, գլխաբաց փոքրիկ վայրենու փոխարեն, — որը խայտալով տուն էր նետվում, մեզ ողջագուրում, շնչահեղձ էր անում, — տան առաջ սեւթույր, գեղեցիկ պոնիից ցած իջավ փետրազարդ, կղբենու գլխարկի տակից դուրս թափված շագանակագույն խոպոպիկներով մի արժանավայել անձնավորություն, որը երկու ձեռքով բռնած հետ էր պահում իր փշերը:

Հինգից օգնեց նրան ձիուց իջնել և հիացմունքով բացականչեց.

— Ախր, Քեթի, դու կատարյալ գեղեցկուհի ես, հազիվ թե ճանաչիի քեզ, հիմա իսկական լեզի ես: Բա Իզաբելլա Լինթրնը սրան կհավասարվի՞, Ֆրենսիս:

— Իզաբելլան զուրկ է Քեթիի բնական առավելություններից, — պատասխանեց նրա կինը: — Բայց նա պետք է լիրեն հետևի, որ այստեղ նորից վայրենի շղառնա: Էլլեն, օգնիր միսս Քեթրինին շորերը հանել: Սպասիր, սիրելիս, գանդուրներդ կխառնես, գլխարկիդ ժապավենը թող ես արձակեմ:

Ես հանեցի ամազոնկան, որի տակից ամբողջ փայլով շողաց փոթավոր, մետաքսե փարթամ զգեստը, սպիտակ կիսավարտիքը և փայլեցրած կոշիկները: Մինչ նրա աչքերը պսպղում էին բերկրանքից, շները ցատկոտելով մոտ վազեցին ողջունելու նրան, բայց նա հազիվ էր համարձակվում գիպչել նրանց, վախեմալով, որ իրենց թաթերով կարող են հետքեր թողնել իր շքեղ շորերի վրա:

Նա զգուշորեն համբուրեց ինձ, — ես ծննդյան տոնի նախօրեին կարկանդակներ էի պատրաստում, ամբողջապես

ալյուրոտովել էի, ուստի շէր կարելի ինձ հետ ողջագուրովել, —
ասյա նայելով շուրջը, փնտրեց Հիթքլիֆին: Միստր ու միսս
էրնշոուները տագնապալից հայացքով հետևում էին նրանց՝
հանդիպման պահին. մտածում էին, հենց հիմա պարզել, թե
ինչ ձևով և ինչի հիման վրա կարելի կլինի երկու բարեկամ-
ներին իրարից բաժանել:

Սկզբում հեշտ շէր գտնել Հիթքլիֆին: Եթե նա առաջ էլ,
երբ Քեթրինը տանն էր, թափփված ու անմաքրասեր էր,
ասյա վերջին ժամանակներս տասն անգամ ավելին էր դար-
ձել:

Ինձնից բացի ոչ ոք բարություն շէր ցուցաբերում, որ
նրան անվանի կեղտոտ տղա և առաջարկի շաքաթվա մեջ
գոնե մեկ անգամ լվացվել. իսկ նրա հասակի երեխաները
հազվադեպ են մեծ հաճույքով օգտվում օճառից ու ջրից:
Հենց դրա համար էլ, — եթե շխոսենք նրա շորի մասին, կեղ-
տոտ ու փոշոտ աշխատանքի մեջ երեք ամիս շարունակ ծա-
ռայել էր նրան, և զզղված մազերի մասին, — նրա դեմքն
ու ձեռքերը սարսափելի աղտոտ էին: Ահա թե ինչու նա
թաքնվեց բազմոցի հետևում, երբ տեսավ, որ իր նման գրգ-
գրղված մազերով աղջկա փոխարեն, ինչպես ակնկալում էր,
երևաց պերճաշուք հագնված, վայելուչ տեսքով մի օրիորդ:

— Հապա ո՞ւր է Հիթքլիֆը, — հարցրեց նա, հանելով
ձեռնոցները և ցույց տալով, ոչինչ շանելուց և սուներ նստե-
լուց, զարմանալիորեն ճերմակ մատները:

— Հիթքլիֆ, կարող ես մոտենալ, — գոռաց միստր Հինդ-
լին, գիտենալով, որ բավականություն է ստանալու նրա
շփոթվածությունը դիտելուց և ուրախանալով, որ տեսնելու է,
թե այդ գարշելի փոքրիկ անբանը ինչպես պետք է ներկա-
յանա Քեթրին: — Կարող ես մոտենալ և մյուս բոլոր ծառա-
ների պես ողջունել միսս Քեթրինի գալուստը:

Քեթրին, իր բարեկամին թաքստոցում նկատելով, նետվեց
դեպի նա, գրկեց, մի վայրկյանում յոթ-ութ անգամ համբույր
գրոշմեց նրա այտին, ապա հետ քաշվեց և սկսեց բարձրա-
ձայն ծիծաղել, բացականչելով.

— Այդ ի՞նչ կեղտոտ ու բարկացկոտ, ի՞նչ ծիծաղելի ու
թխպոտ տեսք ունես: Բայց դա նրանից է, որ ես ընտելացել

Լմ էդգար և Իզաբելլա Լինթըններին: Հը՞, Հիթքլիֆ, Ի՞նչ է, մոռացե՞լ ես ինձ:

Քեթին որոշ հիմք ուներ այդ հարցը տալու, որովհետև Հիթքլիֆի դեմքը ավելի ևս մոայլվեց ամոթից ու հպարտությունից, որի պատճառով նա անշարժ մեխված մնաց իր տեղում:

— Ձեռք տուր նրան, բարեիր, Հիթքլիֆ,— ներողամտաբար ասաց միստր էրնշոուն.— Այս անգամ թույլատրվում է:

— Ոչ,— պատասխանեց տղան. վերջապես լեզուն բացվեց,— այստեղ չեմ կանգնի, որ ծիծաղեն ինձ վրա: Ես դա չեմ հանդուրժի.— Եվ կճևղքեր մեր օղակը ու կփախչեր, եթե միսս Քեթին չբռներ նրան:

— Բոլորովին չէի ուզում քեզ վրա ծիծաղել,— ասաց նա,— ես չկարողացա պահել ինձ, Հիթքլիֆ, դե, գոնե ձեռքս սեղմիր: Ինչո՞ւ ես այդպես փքվում: Ես միայն ուզում էի ասել, որ դու տարօրինակ տեսք ունես: Եթե լվացվես և մազերդ սանրես, ամեն ինչ կարգին կլինի, ախր, դու շատ կեղտոտ ես:

Քեթին մտահոգված նայում էր իր ձեռքում բռնած նրա թխագույն մատներին, ինչպես և իր հագուստին. վախենում էր, որ եթե դիպչեն նրան, շորն այնքան էլ չի շքեղանա:

Կարիք չկար դիպչելու ինձ,— պատասխանեց Հիթքլիֆը, հետևելով նրա հայացքին և հետ քաշելով իր ձեռքը:— Ես կեղտոտ կլինեմ այնքան, որքան կամենում եմ, սիրում եմ կեղտոտ լինել և կեղտոտ կլինեմ:

Այդ խոսքերով նա, պարոնի և տիկնոջ ցնծության ներքո, դուրսը ցցած, սենյակից դուրս սլացած՝ սուր տազնապի մեջ թողնելով Քեթինին, որը շէր կարողանում հասկանալ, թե ինչու պետք է իր դիտողությունները այդպիսի զայրույթ պատճառեին նրան:

Նորեկի համար աղախինի դերը կատարելուց հետո կարկանդակը վառարանում տեղավորեցի, ինչպես պատշաճ է թագաթաման ևրեկոյին, սենյակն ու խոհանոցը ուրախ կրակի շողերով ջերմացրի, ասպա պատրաստվեցի նստել և մենության մեջ զվարճանալ՝ երգելով ծննդյան պվարթ երգեր, բանի տեղ շղնելով Զոդեֆի հանդիմանությունները, իբր իմ ընտրած

երգերի ուրախ հղանակները շատ նման են աշխարհիկ երգերին:

Ջողեֆն առանձնացավ, գնաց իր սենյակ աղոթելու, իսկ միստր և միսիս էրնշտուները ջանում էին սիրելի օրիորդին դբաղեցնել իրենց գնած զանազան գեղեցիկ մանր խաղալիքներով, որոնք պետք է նվիրաբերվեին փոքրիկ կինթըններին, որպես երախտագիտության նշան նրանց ցուցաբերած բարության համար:

Երեխաները հրավիրված էին, որ վաղվա օրն անցկացնեն Դարավանդում: Հրավերն ընդունված էր մի պայմանով. միսիս կինթընը խնդրում էր, որ իր սիրելիներին հեռու «պահեն» անվայել կերպով հայհոյող այդ տղայից:

Այդպիսի պարագաներում մնացի միայնակ: Ես ներշնչում էի թխվածքի անուշ բուրմունքը, հիանում էի խոհանոցի աման-չամանի փայլով, պատի՝ փշարմավով զարդարված, հղկված ժամացույցով, սկուտեղի վրա շարած արծաթե գավաթներով, որոնք ընթրիքի համար պետք է լցնեն համեմված տաք էյլով, իսկ ամենից շատ հիանում էի հատուկ խնամքով մաքրված և փայլեցրած անբիծ հատակով:

Ես ներքուստ հավանություն էի տալիս յուրաքանչյուր առարկային և հետո վերհիշեցի, թե ինչպես, երբ ամեն ինչ կարգի բերվեր, ծեր էրնշտուն ներս կամոներ կեցցես կասեր ու ձեռքիս մեջ կթողներ մեկ շիլլինգ, որպես ջրօրհնեքի նվեր. ապա սկսեցի մտածել այն մասին, թե նա ինչքան էր սիրում Հիթթլիֆին և վախենում էր, որ իր մահից հետո նրան անուշադրության կմատնեն, և այդ ամենը բնականաբար ստիպեց ինձ մտածել, թե ինչ դրության մեջ էր գտնվում խեղճ տղան հիմա, և երգելու փոխարեն սկսեցի արցունքներ թափել: Սակայն իսկույննեթ մտածեցի, որ ավելի խելացի բան արած կլինեմ, եթե փորձեմ ուղղել նրա մի քանի սխալ քայլերը, քան լաց լինել դրանց համար: Վերկացա, դուրս եկա բակ նրան փնտրելու:

Նա հեռու շէր. մտա ախոռ, որտեղ պոնիի թավշափայլ մեջքը սովորականի պես հարթելով, նա կերակրում էր մյուս ձիերին:

— Շուտ վերջացրու, Հիթթլիֆ,— ասացի,— խոհանոցն այնպես հանգստավետ է, Ջողեֆը գնաց վերև, իր սենյակը,

շուտ վերջացրու, և թող որ միսս Քեթիի գալուց առաջ քեզ կարգին հազցնեմ, այն ժամանակ դուք կարող եք վառարանի մոտ միասին նստել, մի լավ տաքանալ և մինչև քնելը շատախոսել:

Նա շարունակում էր զբաղվել իր գործով և բոլորովին չնայեց իմ կողմը:

— Դե ե՛կ, կգաս, չէ՞,— շարունակում էի ես,— ձեզնից յուրաքանչյուրի համար մի-մի բլիթ եմ թխել, գրեթե պատրաստ են, իսկ քեզ հազցնելը համարյա կես ժամ կխլի ինձանից:

Սպասեցի հինգ րոպե և պատասխան չստանալով, հեռացա...

Քեթրինը ընթրեց իր եղբոր ու հարսի հետ, Զոզեֆն ու եռ ընթրեցիներ սակավախոս ընկերակցությամբ՝ համեմված կըշտամքանքներով և հանդուգն խոսքերով: Հիթբլիֆի բլիթն ու պանիրը ամբողջ գիշեր մնացին սեղանի վրա՝ ասես փերիներին հյուրասիրելու համար: Նա շարունակեց աշխատել մինչև ժամը ինը և ապա համր ու խոժոռ դեմքով անցավ իր սենյակը:

Քեթին եկավ նստեց. զբաղված էր զանազան կարգադրություններ անելով իր նոր բարեկամների ընդունելության ատնչությամբ, լոկ մեկ անդամ մտավ խոհանոց, որ խոսի իր հին բարեկամի հետ, բայց նա չկար: Քեթին սոսկ մի պահ կանգնեց, որ հարցնի, թե ինչ է պատահել նրան, ապա գնաց:

Առավոտյան Հիթբլիֆը կանուխ արթնացավ, և, քանի որ տոն էր, իր ոչ բարի մտքերի հետ գնաց դեպի մորուսների շրջանը, մնաց այնտեղ այնքան ժամանակ, մինչև որ ամբողջ ընտանիքը գնաց եկեղեցի: Պասն ու մտածմունքը ասես նպաստեցին նրա տրամադրության բարձրացմանը: Մի պահ նա պտտվեց իմ շուրջը, ապա քաջություն ձեռք բերելով հանկարծ բացականչեց.

— Նելլի, կարգի բեր իմ տեսքը, ուզում եմ կոկիկ լինել:

— Վաղուց էր հարկավոր այդպես անել, Հիթբլիֆ,— ասացի,— դու վշտացրիր Քեթրինին, նա, ես կասեի, ցավում է, որ վերադարձել է տուն: Ստացվում է՝ նախանձում ես, որ ավելի շատ են մտածում նրա, քան քո մասին:

Քեթրինին նախանձելու մասին ասվածը Հիթբրիֆին անհասկանալի մնաց, բայց վիշտ պատճառելու մտադրությունը՝ խոցեց:

— Նա ի՞նքն ասաց, որ ևս վշտացրել եմ իրեն,— հարցրեց Հիթբրիֆը, լրջացած դեմքով:

— Նա արտասովեց, երբ ևս այս առավոտ հայտնեցի, որ դու դարձյալ գնացել ևս:

— Դե, ինչ արած, ևս էլ գիշերն եմ լաց եղել,— առարկեց նա,— և ևս ավելի շատ հիմք ունեմ լաց լինելու, քան ինքը:

— Այո, դու հիմք ունեիր քուն մտնելու հպարտ սրտով ու դատարկ ստամոքսով,— ասացի,— հպարտ մարդիկ իրենք են սնունդ տալիս իրենց տխուր վշտերին: Բայց եթե ամառում ևս քո գյուրագրդության պատճառով, ապա երբ նա վերադառնա, դու պետք է ներում խնդրես նրանից: Կբարձրանաս վերև և թույլավություն կխնդրես նրան համբուրելու, կասես... դե ինքդ գիտես, թե ինչ պիտի ասես, միայն թե արա անկեղծորեն և ոչ թե այնպես, իբր կարծել ես, որ իր շքեղ հագուստով նա դարձել է օտարական: Եվ հիմա, շնայած պետք է ճաշ պատրաստեմ, բայց կաշխատեմ ժամանակ որսալ և տեսքդ այնպես կարգի բերել, որ էզգար լինթընք քո կողքին պուպրիկ երևա. նա հենց պուպրիկ էլ է: Գու նրանից փոքր ես, սակայն, գրադ եմ գալիս, ավելի բարձրահասակ ևս և երկու անգամ ավելի լայն ուսեր ունես, քան նա: Գու կարող էիր նրան մի ակնթարթում գետին տապալել, մի՞թե չես զգում, որ կարող էիր:

Հիթբրիֆի դեմքը մի բոլոր պայծառացավ, սակայն նույն պահին նորից մթազնեց, և նա հառաչեց:

— Բայց, Նելլի, եթե քսան անգամ էլ նրան գետին տապալեմ՝ զրանից ոչ նա կտգեղանա, ոչ էլ ես կգեղեցկանամ: Կցանկանայի ունենալ նրա շքեղ մազերն ու նուրբ մաշկը, նրա պես լավ հագնվել ու պահել ինձ այնպես, որ բախտ ունենայի դառնալ հարուստ մարդ, որպիսին նա կդառնա:

— Եվ ամեն մի դատարկ բանի համար մայրիկ կանչել,— ավելացրի ես,— և սարսափից դողալ, երբ գյուղացի տղան քեզ վրա բռունցք բարձրացնի, և ամբողջ օրը անձրևի պատ-

ճառով նստել տանը: Օ՛, ՀիթլերիՖ, դու փոքրոգի ես: Հասպա մի մոտեցիր հայելուն, ես քեզ ցույց կտամ, թե ինչ պետք է ցանկանաս: Տեսնո՞ւմ ես այդ երկու զիծը քո հոնքերի մեջտեղը: Եվ այդ հաստ հոնքերը, որոնք, կամարածև բարձրանալու փոխարեն, ցած են իջնում քթարմատի մոտ: Տեսնո՞ւմ ես այդպես խոր թաղված այդ զույգ սև սատանաներին, որոնք իրենց լուսամուտները երբեք համարձակորեն չեն բացում, բայց սատանայի լրտեսների պես թաքուն նայում են այնտեղից: Ցանկացիր և սովորիր հղկել խոժոռ խորշոմները, համարձակորեն բարձրացնել կոպերը, փոխարինիր այդ սատանաները վստահելի և անմեղ հրեշտակներով, որոնք կասկածներից ու վարանումներից ազատ են և միշտ բարեկամներ են սեսնում այնտեղ, որտեղ հաստատ չգիտեն, որ թշնամիներ են կանգնած: Մի նմանվիր շարաճճի շանը, նա գիտի, որ քացիներ է ստանում ըստ արժանվույն, և, սակայն, ստում է խփողին, որ իրեն ցավ է պատճառում, և ամբողջ աշխարհը:

— Մի խոսքով, ես պետք է ցանկանամ ունենալ էզզար Լինթընի մեծ, կապույտ աչքերը և նրա ողորկ ճակատը,— սյատասխանից նա:— Դե, ուզում եմ, բայց իմ ուզենալով հո չի:

— Եթե բարի սիրտ ունենաս, դեմքդ էլ կդառնա գեղեցիկ,— շարունակեցի ես,— նույնիսկ, եթե կատարյալ սևամորթ լինեիր. շար սիրտ ունենալու դեպքում ամենագեղեցիկ դեմքն անգամ այլանդակից էլ վատ է: Իսկ հիմա, երբ մենք լվացվել ենք, սանրվել և այլևս չենք փքվում, ասա, մի՞թե չես կարծում, որ դու ավելի քան գեղեցիկ ես: Ես քեզ կասեմ, որ դու ինձ համար այդպիսին ես: Դու կարող էիր նմանվել շորերը փոխած արքայազնի: Ո՞վ գիտի, գուցե քո հայրը եղել է Չինաստանի բողոքիսան, իսկ մայրդ՝ Հնդկաստանի թագուհի, և նրանցից յուրաքանչյուրը կարող էր մի շաբաթվա եկամուտով գնել Մուլեգին հողմերի դարավանդն ու Կեռնեխների ազարակատունը միասին վերցրած: Դուցեև շար նավաստիները քեզ առևանգել, բերել են Անգլիա: Եթե բո տեղը լինեի, ամենաբարձր կարծիքը կունենայի իմ ծագման մասին, և այդ միտքը ինձ կդարձներ համարձակ ու

պատվավոր անձնավորութիւն, դրա շնորհիվ ես կհանդուրժեի՝
խղճուկ ֆերմերի գործադրած ճնշումները:

Ես շարունակում էի այդպես շատախոսել, իսկ Հիթքլիֆն
աստիճանաբար կորցնում էր իր խոժոռ նայվածքը և սկսում
էր միանգամայն հաճելի տեսք ընդունել, երբ մեր խոսակ-
ցութիւնը անսպասելի կերպով ընդհատեց մի շոնգալից աղ-
մուկ, որը ճանապարհով առաջ շարժվելով ներխուժեց բակ:
Հիթքլիֆը նետվեց դեպի լուսամուտը, իսկ ես՝ դեպի դուռ.
հենց այդ պահին մենք տեսանք, թե ինչպես թիկնոցների ու
մուշտակների մեջ փաթաթված երկու կինթընները շնչասպառ
լինելով ցած էին իջնում ընտանեկան կառքից, իսկ էրնշոու-
ները՝ իրենց ձիերից: Նրանք ձիերով հաճախ էին ձմեռ ժա-
մանակ եկեղեցի գնում: Քեթրինը երեխաների ձեռքից բռ-
նած ներս տարավ և նստեցրեց կրակին մոտ, որից նրանց
դժգույն դեմքերն իսկույն սկսեցին կարմրել:

Ես Հիթքլիֆին խորհուրդ տվեցի, որ շտապի ցույց տալ
իր բարի տրամադրութիւնը. նա սիրով համաձայնեց, բայց
շար բախտի բերմամբ հենց որ դեպի սենյակ տանող խոհա-
նոցի դուռը բացեց մի կողմից, Հինդլին էլ բացեց մյուս
կողմից: Նրանք հանդիպեցին, և տանտերը, նրան մաքուր
և ուրախ տեսնելով, զայրացավ, կամ գուցե ցանկանալով
միսիս կինթընին տված խոստումը պահել, նրան հանկար-
ծակի հարվածով հետ շարտեց ու զայրույթով հրամայեց
Ջոզեֆին.

— Սրան հեռու պահիր սենյակից, փակիր ձեզնահարկում,
մինչև որ մենք ճաշը վերջացնենք: Նա մատները կկոխի կար-
կանդակի մեջ և կթոցնի մրգերը, եթե մի րոպե անգամ մե-
նակ մնա:

— Ոչ, ոչ, սրբ, — առարկեցի ես, — նա ոչ մի բանի ձեռք
չի տա, երբեք: Ես ենթադրում եմ, որ նա անուշեղենից պետք
է իր բաժինը ստանա, ինչպես և մենք բոլորս:

— Նա կճաշակի իմ ձեռքի ուժը, եթե մինչև մութն ընկ-
նելը նրան տեսնեմ ներքևում, — գոռաց Հինդլին: — Գուրս
կորիր, թափառաշրջիկ: Ի՞նչ, դու դեռ փոքրում ես ցուցամո-
լի գե՞ր խաղալ, հը՞: Գեռ սպասիր, կբռնեմ, կբաշեմ քո
այդ շքեղ գանգուրները և կտեսնենք՝ դրանք մի քիչ ավելի
չե՞ն երկարի:

— Դրանք առանց այդ էլ բավականին երկար են, — սկսեց պարոն Լինթընը՝ գաղտագողի նայելով դռան շեմից:

— Զարմանում եմ, որ այդ մազերից նրա գլուխը չի ցավում: Դրանք ձիու բաշի նման կախվում են աչքերի վրա:

Իր դիտողութեամբ Լինթընը բուրբուխ չէր ուզում նրան վիրավորել: Բայց Հիթքլիֆն իր ցասկոտ բնավորութեամբ չէր կարող հանդուրժել լկտիութեան նման մի բան մի մարդու կողմից, որին ինչպես երևում է, դեռ այն ժամանակատեղի էր որպես ախոյանի: Նա իսկույն վերցրեց տաք խնձորի սոուսով լի ամանը՝ ձեռքն ընկած առաջին բանը, և թափով շարտեց նրա դեմքին ու կրծքին: Լինթընը անմիջապես սկսեց գոռալ և դրա վրա Իզաբելլան ու Քեթրինը շտապ ներս վազեցին:

Միտք էրնշոուն բռնեց հանցագործին և ուղիղ տարավ իր սենյակը, որտեղ անտարակույս գործադրեց շատ կոպիտ միջոց, որպեսզի սառեցնի անզուսպ Հիթքլիֆի նոպան. երբ վերադարձավ, շիկնել էր և շնչահեղձ էր լինում: Ես վերցրի սնձեռոցիկը և շարութեամբ սկսեցի մաքրել էզդարի քիթը, բերանը՝ ասելով, որ արժանի պատիժ ստացավ: Կարիք չկար մեջ ընկնելու: Նրա քույրն արտասովելով խնդրում էր տուն գնալ, իսկ Քեթին շփոթված կանգնել ու կարմրում էր բուրբի փոխարեն:

— Դուք չպետք է խոսեիք հետը, — կշտամբում էր նա Լինթընին, — Հիթքլիֆը վատ տրամադրութեան մեջ էր, և հիմա դուք փշացրիք ձեր այս այցը, իսկ Հիթքլիֆին կծեծեն, տանել շեմ կարող, երբ նրան խարազանում են: Ես ճաշել էլ չեմ կարող: Ինչո՞ւ, էզգար, ինչո՞ւ խոսեցիր:

— Ես ոչինչ չեմ ասել, — հեծկտում էր պատանին՝ դուրս պրծնելով իմ ձեռքից և սոուսի մնացորդը մաքրելով իր բատիստե թաշկինակով: — Ես մայրիկին խոստացա, որ նրան ոչ մի խոսք չեմ ասի և շասացի:

— Դե, բավական է լաց լինեք, — արհամարհանքով պատասխանեց Քեթրինը, — ձեզ հո չսպանեցին: Գործն ավելի ևս կփշացնեք: Վերադառնում է եղբայրս, հանգստացե՛ք, սուս, Իզաբելլա, մի՞թե նա վիրավորել է ձեզ:

— Դե լավ, երեսաներ, գրավեք ձեր տեղերը, — ըղավեց Հինդլին՝ ներս վազելով: — Ես այդ անասուն լակոտի պատ-

ճառով մի լավ քրանեցի: Մյուս անգամ, պարոն էդգար, արդարադատությունը հաստատեք ձեր սեփական բռունցքներով, դա կգրգռի՝ ձեր ախորժակը:

Անուշահոտ ուտելիքի բուրմունքը հյուրերին և տանտիրոջը հանգստություն պարգևեց: Ծանապարհից բուրոն էլ սովածացել էին, և դժվար չէր մխիթարվել, քանի որ ոչ մեկին իսկական վնաս չէր հասցվել:

Միստր էրնշուուն տապալկած միսը կտրտեց և առատորեն դրեց ափսեների մեջ, իսկ տանտիկինը իր աշխույժ խոսակցությամբ աշխատում էր ուրախացնել նրանց: Ես Քեթրինի աթոռի հետևը կանգնած ծառայում էի և վշտացած էի՝ տեսնելով, թե ինչպես նա շոր աչքերով ու անտարբեր տեսքով կտրատում էր իր առջև դրած սագի թևը:

— Անդդա աղչիկ,— մտածում էի ես,— ինչ հեշտությամբ է ներում իր հին բնկերոջը հասցրած վիրավորանքը: Ես չէի կարող պատկերացնել, որ նա կարող է այդքան եսամոլ լինել:

Նա մի կտոր տարավ բերանը, ապա նորից դրեց տեղը. այտերը կարմրեցին և արցունքների հեղեղ հոսեց դրանց վրայով: Նա պատառաքաղը պեց հատակին և շտապ մտավ սփռոցի տակ, որպեսզի թաքցնի իր հուզմունքը: Ես նրան այլևս անզգա չէի կոչում, որովհետև տեսնում էի, որ նա ամբողջ օրը ասես Քավարանում լիներ, և ամեն կերպ ջանում էր մի պատրվակ գտնել, որպեսզի մենակ մնա կամ էլ գնա գտնի Հիթքլիֆին, որին Հինդլին, ինչպես ես տեսա, երբ փորձում էի թաքուն մի փոքր ուտելիք հասցնել նրան, փականքի տակ դրեց:

Երեկոյան մեղ մոտ տեղի ունեցան պարեր: Քեթին խընդրեց, որ Հիթքլիֆն էլ մասնակցի, որովհետև Իդարելլա Լինթընը պարընկեր չունեիր. նրա խնդրանքը մնաց անպատասխան: Ինձ հրավիրեցին, որ այդ բացը լրացնեմ:

Շարժումներից տաքացած՝ մոռացության տվինք թախիծը, և ուրախությունն ավելի ևս ուժեղացավ, երբ Գիմմերթնից եկավ տասնհինգ գործիքից՝ փող, տրոմբոն, կլառնետ, թավափող, Ֆրանսիական եղջերափողից ու թավջութակից բաղկացած մի նվադախումբ՝ շահաված երգիչներին: Նվագողները յուրաքանչյուր ծննդյան սոնդին շրջանի բոլոր լարեկիրթ

տները շրջում, հարկ էին հավաքում: Մենք նրանց հրավիրեցինք նվագելու՝ գտնելով, որ նրանց պատշաճ ձևով պատիվ տված կլինենք, եթե լսենք նվագը:

Կրոնական սովորական հիմները կատարելուց հետո մենք առաջարկեցինք նվագել ուրախ և բազմաձայն երգեր: Միսիս էրնշտուն սիրում էր երաժշտություն, և նրանք իրենց երգերով լիովին բավարարում էին մեզ:

Քեթրինն էլ էր սիրում երաժշտություն, բայց ասաց, որ շատ հաճելի կլինի այն լսել աստիճանների վերևի հարթակից, և գնաց խավարի կողմը. ես հետևեցի նրան: Նրանք կողպեցին ներքևի դուռը՝ շնկատելով մեր բացակայությունը, քանի որ շատ ժողովուրդ էր հավաքվել: Քեթրինը հարթակում շմնաց, բարձրացավ ափելի վերև՝ ձեռնահարկ, որտեղ փակել էին Հիթլերֆին, և սկսեց կանչել նրան: Նա մի որոշ ժամանակ համառորեն չէր ուզում արձագանքել. Քեթրինը շրնկրկեց և, ի վերջո, ստիպեց նրան, որ խոսի տախտակե պատնեշի վրայից:

Ես հեռացա՝ թույլ տալով, որ խեղճ երեխաներն անարգել խոսեն իրար հետ, մինչև որ ժամանակը եկավ երգեցողությունն ավարտելու և նվագողներին հնարավորություն տալու՝ հանգստանալ ու մի քիչ բան ուտել: Այդ ժամանակ ես բարձրացա վերև, որ նախազգուշացնեմ Քեթրինին: Բայց նա դռան մոտ չէր, նրա ձայնը հնչեց ներսի կողմից: Փոքրիկ կապիկը մի ձեռնահարկի լուսամուտից կտուր էր բարձրացել ու ներս մտել մի այլ ձեռնահարկի լուսամուտից, և ես, մեծ դժվարությամբ սիրաշահելով, կարողացա նրան հետ բերել:

Երբ նա եկավ, նրա հետ եկավ և Հիթլերֆը: Քեթրինը պահանջեց, որ ես նրան տանեմ իոհանոց, քանզի սպասավորը՝ Ջոզեֆը, գնացել էր հարևանների մոտ, որ չլսի «չար ոգու սաղմոսերգությունը», ինչպես ինքը հաճույքով անվանում է երաժշտությունը: Ես ասացի, որ այլևս մտադիր չեմ խրախուսել նրանց շարճճիությունները, բայց քանի որ բանտարկվածը երեկվա ճաշից հետո նախաճաշ չէր արել, աչքս գոցեցի, որ նա Հինգլիին մի անգամ խաբի:

Հիթլերֆը իջավ ցած: Նրան նստեցրի աթոռին, կրակի մոտ, և առաջարկեցի համեղ ուտելիքների մի ամբողջ կույտ, բայց նրա սիրտը խառնում էր, չէր կարողանում շատ բան

ուտել. նրան խոսակցության մեջ ներգրավելու իմ փորձերը մերժվեցին: Նա արմուռնկներով հենվել էր ծնկներին և, կզակը ափերին դեմ տված, անխոս սուզվել էր մտածմունքների մեջ:

Երբ հարցրի, թե ինչ անուրջներով է նա տարվել, լրջորեն պատասխանեց.

— Մտածում եմ, թե ինչ ձևով փոխհատուցեմ Հինգլիին: Թե որքան կսպասեմ՝ կարևոր չէ, միայն թե վրեժս լուծեմ: Հույս ունեմ, որ մինչև մեռնելս կանեմ այդ:

— Ամաչիր, Հիթքլիֆ,— ասացի,— թող աստված պատժի շարամիտ մարդկանց. մենք պետք է սովորենք ներել:

— Ոչ, դա աստծուն այնքան բավականություն չի պատճառի, որքան ինձ,— առարկեց նա.— Միայն մտածում եմ, թե ինչ կերպ ավելի լավ կլինի, որ պատժեմ նրան: Ինձ հանգիստ թող, ես մի ճար կգտնեմ: Երբ մտածում եմ այդ մասին՝ ցավ չեմ դգում:

— Բայց ես մոռանում եմ, միստր Լոքվուդ, որ այս պատմությունները չեն կարող ձեզ համար հետաքրքիր լինել: Եվ չգիտեմ, թե ինչն ստիպեց ինձ սկսել այս շատախոսությունը. շիլան սառեց, և դուք էլ ննջում եք, ժամանակն է, որ անկողին մտնեք: Հիթքլիֆի պատմությունը ես պետք է պատմեի մի քանի խոսքով՝ պատմեի այն, ինչը հետաքրքրում է ձեզ:

Այս ձևով ընդհատելով ինքն իրեն՝ տնտեսուհին վերկացավ և սկսեց իր կարելու պարագաները հավաքել մի կողմ դնել: Բայց ես ի վիճակի չէի պոկվել օջախից և բոլորովին չէի կամենում քնել:

— Հանգիստ նստեք, միսիս Գին,— խնդրեցի ես.— Մի կիս ժամ էլ նստեք: Դուք ճիշտ եք վարվում, որ անշտապ եք պատմում ձեր պատմությունը: Այդ ձևը ինձ դուր է գալիս: Դուք ձեր պատմությունը պետք է ավարտեք նույն կերպ: Քիչ թե շատ ինձ հետաքրքրում է ձեր նկարագրած յուրաքանչյուր բնավորություն:

— Ժամը տասնմեկն է խփում, սըր:

— Դա կարևոր չէ, ես սովորություն չունեմ տասներկուսից շուտ անկողին մտնել: Գիշերվա ժամը մեկը կամ երկուսը

այնքան էլ ուշ չէ մի մարդու համար, որ քնում է մինչև տասր:

— Դուք չպետք է մինչև տասը քնեք: Այդպես կորչում են առավոտվա լավագույն ժամերը: Նա, ով առավոտյան մինչև տասը չի կատարում օրվա աշխատանքի կեսը, դժվար թե կարողանա կատարել երկրորդ կեսը:

— Եվ, այդուհանդերձ, միսիս Դին, նստեք ձեր բազկաթոռին, որովհետև ես մտադիր եմ գիշերը երկարացնել մինչև կեսօր: Նախազգուս եմ, որ բոլոր դեպքերում կունենամ ծանր մրսածուխյուն:

— Հույս ունեմ, սրբ, որ սխալվում եք: Եվ այսպես, պետք է թույլ տաք ինձ, որ ես մեջ տամ երեք տարի: Այդ տարիների ընթացքում միսիս էրնշոուն...

— Ոչ, ոչ, նման բան թույլ չեմ տա: Ծանոթ է ձեզ արդյոք ոգու այն վիճակը, երբ, նստած եք մենուիքյան մեջ, իսկ փոքր գորգի վրա կատուն ձեր աչքերի առաջ լիզում է իր ձագերին, դուք այնպիսի լարվածութամբ եք հետևում այդ գործողութայն ընթացքին, որ լրջորեն կվշտանաք, եթե նա մի ականջիկ մոռանա լիզել:

— Մի սարսափելի՜ անբան վիճակ՝ ես կասեի:

— Ընդհակառակը, հոպնեցնելու աստիճան գործունյա՜ վիճակ: Այդպես է հիմա իմ վիճակը, ուստի շարունակեք և պատմեք ամենայն մանրամասնությամբ: Ես տեսնում եմ, որ մարդիկ այս ծայրամասերում քաղաքի բնակիչների նկատմամբ ձեռք են բերում նույնպիսի առավելություն, որպիսին զնդանի սարդը ձեռք կբերեր կոտեջի մեջ ապրող սարդի նկատմամբ. և սակայն, հրապույրը լիովին կախված չէ դիտույի վիճակից: Մարդիկ այստեղ ապրում են ավելի լրջարարո, ինքնամոտի կյանքով, ավելի շատ ապրում են իրենց ներքին և ոչ թե մակերեսային, հեղեղուկ, թեթևաբարո և առերևութ կյանքով: Ինձ համար հիմա հասկանալի է, թե ինչու այսպիսի տեղում խուլ ապրելը կարող է անցանկալի լինել, մինչդեռ երեկ ես չէի հավատա, որ կամովի կարելի է մի ամբողջ տարի ապրել միևնույն վայրում: Դա նման է քաղցածին նույն ճաշատեսակով կերակրելու փորձին՝ ստիպելով նրան ճաշը ուտել մեծ ախորժակով, և ի հարկին, գնահատել այն կամ էլ, ասենք, նստում եք ֆրանսիական խոհան-

նոցի պատրաստած ուտելիքով լի սեղանի շուրջ. ամբողջից գուցե ստանաւ մեծ բավականութիւն, բայց յուրաքանչյուր ասիսե առանձին վերցրած մեր աչքում ու հիշողութեան մեջ ամբողջի միայն մի մասնիկն է:

— Է՛հ, երբ ավելի լավ ենք ճանաչում մեզ, ապա տեսնում ենք, որ մենք այստեղ էլ նույնն ենք, ինչպես և ամենուր,— նկատեց միսիս Դինը, մի փոքր շփոթված իմ մենախոսութիւնից:

— Ներհեցեք,— առարկեցի ևս,— դուք, իմ լավ բարեկամ, ինքներդ ձեր պնդումների ապշեցուցիչ բացասումն եք: Բացի սեղանական բարբառի մի քանի առանձնահատկութիւններէից, ձեր մեջ ակնարկ անգամ չես նկատի այն շարժումների մասին, որոնք ես սովոր եմ ձեր դասի մարդկանց համար յուրահատուկ համարել: Հա՛վատացած եմ, որ դուք ձեր կյանքում ավելի շատ եք մտորել, քան այդ անում է սպասավորների մեծ մասը: Դուք ստիպված էիք զարգացնել ձեր մտավոր ունակութիւնները, որովհետև հնարավորութիւն չունեք ձեր կյանքն անմիտ ձեռով վարելու:

Միսիս Դինը քմծիծաղ տվեց:

— Ես, իհարկե, ինձ համարում եմ լրջամիտ, խոհեմ կիին,— ասաց նա,— բայց ես այդպիսին եմ ոչ միայն այն պատճառով, որ ինձ վիճակված է եղել ապրել այս բլուրների մեջ, տարեց-տարի տեսնել նույն դեմքերը և ականատես լինել բաղում գործերի, ևս անցել եմ դաժան կարգապահութեան բովոյ, որն ինձ սովորեցրել է լինել ողջախոհ, ևս կարգացել եմ ավելի շատ, քան դուք ենթադրում եք, միստր Լոքվուդ: Այս գրադարանում դուք չեք գտնի մի գիրք, որ ես թերթած և դրանից ինչ-որ բան քաղած չլինեմ՝ շահաշված հունարեն և լատիներեն, ինչպես և ֆրանսերեն գրքերի դարակները, և, այդուհանդերձ, դրանք էլ կարողանում եմ տարբերել իրարից, ավելին ակնկալել շքավոր մարդու աղջկանից դուք չեք կարող: Սակայն, եթե ևս պիտք է շարունակեմ նույն ձեռով շատախոսել, ապա ավելի լավ է, որ սկսեմ պատմութիւնը, իսկ կթողնեմ ոչ թե երեք տարի, այլ թույլ կտամ ինձ անցնել հաջորդ ամռանը՝ հազար յոթ հարյուր յոթանասուներթ թվականի ամռանը՝ այսինքն մոտ քսաներեք տարի սրանից առաջ:

Հունիսյան մի պայծառ առավոտ ծնվեց իմ առաջին հիանալի մանկիկը՝ էրնշոուի հին տոհմի վերջին շառավիղը: Մենք հեռավոր դաշտում շոր խոտ էինք հավաքում, երբ սովորականի պես մեզ նախաճաշ բերող աղջիկը ժամանակից մի ժամ շուտ, մարգագետնի միջով և արահետով դեպի վեր վազելով, եկավ և կանչեց ինձ.

— Օ՛յ, ի՛նչ հիանալի մանկիկ է,— հևալով ասաց նա:— Մի սքանչելի երեխա, որ երբևէ հղել է աշխարհում: Բայց բժիշկն ասում է, որ տիկինը չի ապրի, ասում է, որ նա շատ ամիսներ տառապել է թոքախտից: Լսեցի, թե ինչպես միստր Հինդլիին ասաց. «Հիմա տիկինն այլևս ոչինչ չունի, որ նրան պահի, և նա մինչև ձմեռ հազիվ թե ապրի»: Դուք անհապաղ պետք է տուն գաք: Նրա խնամքը դուք պետք է ձեզ վրա վերցնեք, նեղի, կերակրեք՝ քաղցր կաթով և գիշեր-ցերեկ հետևեք նրան: Կլամենայի ձեր տեղը լինել, որովհետև երբ տիկինն այլևս չի լինի, մանուկը ձերը կլինի:

— Բայց մի՞թե նա շատ վատ է,— հարցրի ես՝ ցած նետելով փոցխը և արձակելով գլխարկիս կապերը:

— Կարծում եմ, որ վատ է, թեև շատ կայտառ տեսք ունի,— պատասխանեց աղջիկը,— և այնպես է խոսում, ասես, մտածում է ապրել մինչև այն օրը, երբ մանուկը կգանա տղամարդ: Տիկինը ուրախությունից խելքը թոցրել է: Երեխան այնքա՛ն շքնաղ է: Եթե նրա տեղը լինի, որոշակիորեն կարող եմ ասել, որ չէի մեռնի. միայն նրան նայելով՝ կլավանայի ի հեճուկս Քեննեթի: Պարզապես ես զրժվում եմ նրա համար: Տիկին Արչերը փոքրիկ հրեշտակին բերեց տուն, որ ցույց տա տիրոջը, և տիրոջ դեմքը պայծառացավ, իսկ ծեր ազգավր առաջ խցկվեց, ասելով. «էրնշոու, երջանկություն է, որ ձեր կինը ժամանակին ձեզ տղա պարգևեց: Երբ տիկինը եկավ, ես զգացի, որ մենք չենք կարող նրան երկար պահել. հիմա ես պետք է ասեմ՝ ձմռանը հավանորեն, նրա վախճանը վրա կհասնի: Միայն շատ մի մտածեք և մի տանջվեք, ոչնչով գործին չեք օգնի: Ծվ հետո, դուք պետք է լավ մտածեիք և շքնորեիք այս հղեգնակազմ աղջկան:

— Եվ ի՞նչ պատասխան տվեց տերը, հարցրի ես:

— Կարծեմ հայհոյեց, բայց ես բանի տեղ չդրի, ձգտում էի տեսնել մանկանը, — և աղջիկը դարձյալ սկսեց հիացմունքով նկարագրել նրան: Ես էլ իմ հերթին, նրա նման, բուռն ցանկութուն ունեի շտապել տուն, որպեսզի հիանամ նրանով, թեև խոր տխրությամբ համակված, մտածում էի Հինդլիի մասին: Նա իր սրտում տեղ ունեւր միայն երկու կուռքի՝ կնոջ և իր համար. անշափ սիրում էր երկուսին էլ, բայց պաշտում էր միայն մեկին, և ես չէի պատկերացնում, թե ինչպես կտանի այդ կորուստը: Երբ եկանք Մուեզին հողմերի դարավանդ, նրան կանգնած տեսանք մուռքի մոտ: Ներս մտնելիս հարցրի. «Ինչպե՞ս է նորածինը»:

— Քիչ է մնում վաղի, Նելլի, — պատասխանեց նա, ուրախ քմծիծաղ տալով:

— Իսկ տիկի՞նը, — հանդգնեցի հարցնել ես, — բժիշկն ասում է, որ նա...

— Անիծվի՛ր բժիշկը, — շիկնելով՝ ընդհատեց նա: — Յրենստիար իրեն շատ լավ է զգում, մի շաբաթ հետո լիովին առողջ կլինի: Վերև՝ ես գնում. ասա նրան, որ ես կգամ մոտը, եթե խոստանում է շխոսել: Հեռացա մոտից, որովհետև անվերջ խոսում է, իսկ նա պետք է... ասա՝ միտք Քեննեթը ասում է, որ պետք է հանգիստ լինի:

Նրա ասածը հաղորդեցի միսիս էրնշոուին, նա աշխույժ տրամադրություն մեջ էր և ուրախ պատասխանեց.

— Ես համարյա չէի խոսում, էլլեն, բայց նա երկու անգամ դուրս գնաց արցունքներն տչքերին: Դե, լավ, ասա՛ խոստանում եմ էլ շխոսել, բայց դա չի խանգարի, որ ծիծաղեմ նրա վրա:

Ենդճ կին: Նույնիսկ մահից մի շաբաթ առաջ նա չփոխեց իր զվարթ տրամադրությունը, իսկ ամուսինը ոչ թե համառորեն, այլ կատաղած, շարունակում էր պնդել, որ նրա առողջությունը քանի գնում, ամրանում է: Երբ Քեննեթը զգուշացրեց, որ հիվանդության այդ շրջանում բժշկությունը անդոր է որևէ բան անելու, և որ իր հաճախումներով ինքն այլևս չի ցանկանում նրան ավելորդ ծախսերի տակ զցել, նա առարկելով պատասխանեց.

— Գիտեմ՝ շեք ուզում ինձ ավելորդ ծախսերի սակ զցել.

նա առողջ է, էլ շի ուզում, որ դուք ձեր այցերը շարունակեք: Նա երբեք թոքախտով հիվանդ չի եղել: Դա ոչ այլ ինչ է, եթե ոչ՝ տենդ, և այն էլ արդեն անցել է, նրա զարկերակը բարախում է իմի պես դանդաղ, և այտերն էլ սառն են:

Նույն բանը ասաց կնոջը, որը ասես հավատում էր նրան, բայց մի անգամ, գիշերը, երբ նա, հենվելով ամուսնու ուսին, ասաց, որ վաղը, երևի, ի վիճակի կլինի վեր կենալ, սկսվեց հազի նոպա՝ մի շատ թեթև նոպա. Հինգլին նրան բարձրացրեց ձեռքերի վրա, կինը երկու ձեռքով գրկեց ամուսնու պարանոցը, դեմքն այլայլվեց, և՛ մեռավ:

Ինչպես աղջիկը գուշակել էր, մանուկ Հերթընը ամբողջապես հանձնվեց իմ ձեռքը: Միստր էրնշոուն տեսնելով, որ երեխան առողջ է և երբեք լաց չի լինում, համակվեց գոհունակությամբ, քանի որ խոսքը վերաբերում էր մանկանը: Բայց նա տոչորվում էր վշտից. նրա վիշտը այն վշտերից չէր, որ գանգատներ է թափում: Նա լաց չէր լինում, չէր աղոթում, նզովում էր, մարտահրավեր կարգում, անիծում էր աստծուն ու մարդկանց, վարում էր անառակ կյանք, որպեսզի մտքերը ցրվեն:

Մառանները երկար ժամանակ չէին կարողանում հանդուրժել նրա բռնություններն ու վատ արարքները. Զոզեֆն ու ես միակն էինք, որ դիմանում էինք: Միրտս թույլ չէր տալիս, որ լքեմ իմ երեխային և հետո, ինչպես գիտեք, ես եղել էի տիրոջ կաթնաքույրը և հեշտ էի ներում նրա վարքագիծը, քան այդ կաներ մի օտարական:

Զոզեֆը մնաց, որպեսզի բռնանա վարձակալների ու աշխատողների վրա, և մեկ էլ՝ նա իր կոշումն էր համարում լինել այնա:եղ, որտեղ կատարվում է շատ շարիք, որպեսզի առիթ ունենա պարսավելու:

Տիրոջ տգեղ արարքներն ու վատ ընկերները Քեթրինի ու Հիթքլիֆի համար հանդիսանում էին տխուր օրինակ: Նրա վերաբերմունքը վերջինիս նկատմամբ բավական էր, որ սուրբը սատանա դառնար: Եվ, հիրավի, Հիթքլիֆն այդ շրջանում, ասես, դիվահար էր եղել: Նա հաճույքով նկատում էր, թե ինչպես Հինգլին անհույս կերպով այլասերվում է: Օրեցօր ավելի ու ավելի հայտնի էր դառնում իր վայրագ մոայլությամբ և դաժանությամբ:

Հազիվ թե կարողանամ ասել, ինչ դժոխացին բան էր կատարվում մեր տանը: Մխական քահանայն դադարեց մեզ այցելելուց, և, ի վերջո, ոչ մի կարգին մարդ չէր մոտենում մեզ, բացի էդգար Լինթընից, որ այցի էր գալիս Քեթիին: Տասնհինգ տարեկան հասակում Քեթրինը, դարձել էր շրջանի թագուհին՝ շուներ իրեն հավասարը, դարձել էր մեծամիտ ու համառ: Մանկությունն հասակից դուրս գալուց հետո նրան այլևս չէի սիրում, հաճախ ջղայնանում էի, երբ փորձում էի մի քիչ կոտրել նրա մեծամտությունը, բայց իմ նկատմամբ նա երբեք հակակրանք չէր ցուցաբերում: Զարմանալիորեն հավատարիմ էր իր հին մտերմական կապերին. նույնիսկ Հիթլերիֆը անփոփոխ կերպով իշխում էր նրա զգացմունքների վրա. երիտասարդ Լինթընը իր բոլոր առաջնություններով հանդերձ չէր կարող նման խոր տպավորություն թողնել:

Հենց նա էլ իմ հանդուցյալ տերն էր. բուխարու վերևի նկարը նրա նկարն է: Մի կողմում կախված էր լինում նրա նկարը, իսկ մյուսում՝ կնոջ: Բայց տիկնոջ նկարը հետագայում հանվեց, այլապես դուք կկարողանայիք գաղափար կազմել, թե ինչպիսին է եղել նա: Դուք տեսնո՞ւմ եք այն:

Միսիս Դինը մոմը բարձրացրեց և ես Նշմարեցի տղամարդու մեղմ դիմագծեր, որոնք շատ նման էին դարավանդում ապրող ջահել կնոջ դիմագծերին, բայց ունեին ավելի մտախոհ ու շոյող արտահայտություն: Դա գրավիչ դեմք էր: Երկար, բաց գույնի մազերի գանգուրները մի թեթև կախ էին ընկել քունքերի վրա, խոշոր աչքերը՝ ունեի: Ըախծայից արտահայտություն, իրանը, կարելի է ասել, շտապազանց նրբագեղ էր: Զգարմացա, որ Քեթրին էրնշոուն ի սեր այդպիսի մարդու կարողացել էր մոռանալ իր առաջին բարեկամին: Ինձ զարմացրեց և այն, թե ինչպես մարդը, որի հոգեկան կերպարանքը այդքան համապատասխանում էր արտաքինին, կարող էր այդպես տարվել իմ պատկերացրած Քեթրին էրնշոունով:

— Շատ հաճելի նկար է,— ասացի տնտեսուհուն:— Նմա՞ն է իրեն:

— Այո,— սլառասխանեց նա:— Բայց նա ավելի լավ տեսք էր ունենում, երբ աշխուժանում էր, դա սովորական

դիմք էր, նրան ընդհանրապես պակասում էր աշխուժությունը:

Քեթրինը, հինգ շաբաթ կինթընների տանն ապրելով, շարունակում էր իր ծանոթությունը պահպանել նրանց հետ, քանի որ այդ միջավայրում առիթ չէր լինում, որ գայթակղվի և ի հայտ բերի իր բնավորության կոպիտ կողմերը՝ նա հասկանում, ամաշում էր կոպիտ լինել այնտեղ, որտեղ տեսնում էր անփոփոխ քաղաքավարություն. իր սրտաբուխ անկեղծությունամբ ակամայից կարողացավ նվաճել լեզրի ու ջենտլմենի սերը, արժանացավ Իդարելլայի հիացմունքին և գրավեց նրա եղբոր սիրտն ու հոգին: Դա սկզբում շոյում էր նրան, սրովհետև փառամուլ էր, իսկ հետո բոլորովին շատագրվելով խաբել որևէ մեկին՝ որոշեց երկդիմի դեր խաղալ:

Այնտեղ, որտեղ Հիթքլիֆին անվանում էին «գոհհիկ ջահել սրիկա», «անասունից էլ վատը», նա աշխատում էր շանել այն, ինչ անում էր Հիթքլիֆը, բայց տանը մի առանձին հակում չունեի քաղաքավարություն-ցուցաբերելու, որը միայն ծիծաղ կառաջացնեի, և զսպելու իր անսանձ բնավորությունը, երբ դա նրան ոչ պատիվ կբերեր և ոչ էլ գովասանք:

Միտտր էդգարը միայն հազվադեպ էր սիրտ անում այցի գալ Մոլեգին հողմերի դարավանդ: Նրան սարսափեցնում էր էրնշուտի վատ համբավը՝ խուսափում էր նրան հանդիպելուց, և, այնուամենայնիվ, նրան միշտ ընդունում էինք պատշաճ քաղաքավարությամբ: Տերն ինքը աշխատում էր չվիրավորել նրան՝ իմանալով, թե ինչի համար է եկել. եթե սիրալիք չէր լինում, ապա իրեն հեռու էր պահում նրանից: Ես կարծում եմ, որ նրա այցերը դուր չէին գալիս Քեթրինին, որը չէր կարողանում խորամանկել, երբեք չէր կտրատվում, պարզապես չէր ուղում, որ իր երկու բարեկամները հանդիպեն իրար: Երբ Հիթքլիֆը կինթընի ներկայությամբ նրա նկատմամբ արհամարհանք էր տածում, Քեթրինը չէր կարող համաձայնել դրա հետ, ինչպես դա անում էր նրա բացակայության ժամանակ, իսկ երբ կինթընն էր Հիթքլիֆի նկատմամբ զզվանք ու հակակրանք արտահայտում, Քեթին անտարբերությամբ էր վերաբերվում նրա զգացմունքներին, ասես նրա արհամարհանքը մանկության խաղընկերոջ նկատմամբ իր համար ոչ մի նշանակություն չուներ:

Սա շատ հաճախ ծիծաղելով էի նայում նրա վարանում-ներին ու ծածուկ անհանգստություններին, որոնք ամեն կերպ աշխատում էր թաքցնել, որ ես շժաղրեմ իրեն: Դա թերևս վատ էր, բայց Քեթրինն այնքան հպարտ էր, որ իրականում հնարավոր չէր լինում կարեկցել նրան իր ունեցած դառնու-թյունների համար, մինչև շտապելիք նրան, որ մի փոքր հնա-զանդվեր:

Վերջ ի վերջո, նա եկավ ինձ մոտ խոստովանելու և վըս-տահեց ինձ. այլևս չկար մեկը, որին կարողանար ընտրել որպես խորհրդատու:

Մի անգամ միսար Հինդլին կեսօրին տանից դուրս էր գնացել, և Հիթքլիֆը այդ առթիվ հանդգնեց իր համար տոն կատարել: Այդ ժամանակ նա արդեն տասնվեց տարեկան էր, և թեև դիմագծերն անդուր չէին ու խելքն էլ տեղն էր, բայց կարողանում էր թե ներքին և թե արտաքին տվյալ-ներով թողնել ինչ-որ վանող տպավորություն, որից, սակայն, նրա ներկայիս կերպարանքի մեջ ոչ մի հետք չէր մնացել:

Ամենից առաջ այդ ժամանակվա ընթացքում վերացել էր իր ստացած վաղ դաստիարակության բարերար ազդեցությունը. առավոտից մինչև ուշ երեկո տևող ծանր աշխատանքի հետևանքով նրա մեջ մարել էին երբեմնի հետաքրքրությունը դեպի գիտությունը, ամեն տեսակ սեր դեպի գիրքն ու ուսու-մը: Մանկության տարիների սեփական գերազանցության գիտակցումը, որ ծեր միսար էրնշուուի բարեհաճության շնոր-հիվ ներարկվել էր նրա մեջ, այլևս հանգել էր: Երկար ժա-մանակ նա պայքարում էր, որ հավասարվի Քեթրինին, հետ շմնա նրա պարապմունքներից, բայց տանջալից, թեև ան-խոս, ամսոսանքով անձնատուր եղավ: Հանձնվեց լիովին, երբ համոզվեց, որ անխուսափելիորեն պետք է իջնի իր նախկին կյանքի մակարդակին, նա այլևս ոչ մի ճիգ ու ջանք չթափեց, որ դուրս գա այդ ընկած վիճակից և վեր բարձրանա: Արտա-քին տեսքն արտացոլում էր հոգեկան անկում, քայլվածքը դարձել էր անշնորհք, հայացքը՝ անբարեհամբույր. նրա բնածին ինքնամոփոխությունը հասել էր գրեթե անհեթեթ ծայրահեղության՝ վերածվելով մարդախուսուծության, և, ըստ երևույթին, նա մոռյլ բավականություն էր զգում, երբ իր



մի քանի ժանոթների մեջ ոչ թե համակրանք, այլ հակակրանք էր առաջացնում:

Քեթրինն ու նա անփոփոխ կերպով շարունակում էին միասին անցկացնել ժամերը, երբ Հիթքլիֆը ազատ էր լինում աշխատանքից, բայց նա դադարեց Քեթրինին բառերով իր սերն արտահայտելուց և զայրալից կասկածանքով վանում էր նրա երեխայական շոյանքները, ասես գիտակցում էր, որ Քեթրինը չէր կարող սիրո այդպիսի նշանները հաճույքով շոսյլել նրա առաջ: Մի անգամ, մինչև ես օգնում էի միսս Քեթրինին, կարգի բերելու իր հագուստները, Հիթքլիֆը տուն եկավ և հայտարարեց, որ այլևս չի ուզում աշխատել: Քեթրինը չէր ենթադրում, որ նրա խելքին փչել էր ծուլություն անել, և, երևակայելով, որ ամբողջ տունը իր տրամագրության տակ է, ինչ-որ ձևով միսսը էզգարին հայտնեց, որ իր եզբայրը տնից բացակայում է, և ինքը պատրաստ կլինի նրան ընդունել:

— Այսօր կեսօրից հետո ազատ ես, Քեթի,— հարցրեց Հիթքլիֆը:— Հո տեղ չե՞ս գնում:

— Ոչ, անձրևում է,— պատասխանեց նա:

— Հապա ինչո՞ւ ես այդ մետաքսե շորը հագել,— ասաց նա:— Հույս ունեմ, որ ոչ ոք չի գալու:

— Որքան գիտեմ՝ ոչ ոք,— կմկմալով ասաց միսս Քեթրինը,— բայց դու հիմա պետք է դաշտում լինեիր, Հիթքլիֆ: Ճաշից արդեն անցել է մի ժամ. ես էլ կարծում էի, արդեն գնացել ես:

— Հինդլին այնքան էլ հաճախ մեզ չի ազատում իր ատելի ներկայությունից,— նկատեց տղան:— Այսօր ես այլևս չեմ աշխատի, կմնամ քեզ մոտ:

— Բայց Ջոզեֆը կհայտնի,— նկատեց Քեթրինը,— ավելի լավ է, գնաս:

— Ջոզեֆը Փենիսթըն Քրեգսի հեռավոր ծայրում կիր է բեռնում. այդտեղ նա կզբաղվի մինչև ուշ երեկո և ոչինչ չի իմանա:

Այս ասելով՝ նա երերալով մոտեցավ կրակին և նստեց: Քեթրինը մի պահ հոնքերը կիտած խորհում էր, անհրաժեշտ համարելով նախասլատրաստել հյուրերի գալը:

— Իզարելլա և էդգար Լինթընները գալու են այսօր

կեսօրին,— ասաց նա ՚րուպիական լուսթյունից հետո:— Քանի որ անձրև է, հաղիվ թև գան, իսկ հակառակ դեպքում, դու իզուր տեղը կենթարկվես կշտամբանքների:

— Հրամայիր, էլլենին, թող ասի, որ դու գրադված ես, Քեթի,— պնդում էր նա,— քո այդ ողորմելի՛ ու տխմա՛ք բարեկամների պատճառով ինձ դուրս մի անի: Ծս երբեմն պատրաստ եմ տրտնջալ, որ նրանք... բայց չէ, չեմ ասի:

— Որ նրանք ի՞նչ,— ճշաց Քեթրինը՝ տազնապալից հայացք զցելով նրա վրա: Օ, Նելլի,— հուզված ավելացրեց նա, մի ցնցումով հետ քաշելով գլուխը իմ ձեռքերի տակից,— այնքան երկար ես մտազերս սանրում, որ էլ գանգուրներ չեն ստացվի: Բավական է, ինձ հանգիստ թող: Գե, Հիթքլիֆ, ինչո՞ւ ես տրտնջում:

— Ոչինչ... Հապա մի նայիր պատի այդ օրացույցին,— նա ցույց տվեց լուսամուտի մոտ կախված շրջանակով թերթիկը և շարունակեց,— խաչերով նշված են այն երեկոները, որ անց ես կացրել էի ձեռքների հետ, իսկ կետերով՝ այն երեկոները, որ ինձ հետ ես եղել: Տեսնո՞ւմ ես: Ծս ամեն օր նշումներ եմ արել:

— Այո... շատ հիմար բան ես արել. կարծես ինձ պետք են այդ նշումները— պատասխանեց Քեթրինը զայրացած:— Եվ ի՞նչ իմաստ ես տեսնում դրա մեջ:

— Ցույց տալ, որ ես իսկապես հետևում էի,— ասաց Հիթքլիֆը:

— Եվ ես մի՞շտ պետք է քեզ հետ նստեմ,— հարցրեց Քեթին, է՛լ ավելի բորբոքվելով:— Իսկ դրանից ես ի՞նչ օգուտ ունեմ: Ինչի՞ մասին ես խոսում: Գու կարող էիր համր կամ անլեզու մանուկ լինել, որովհետև քո ամեն մի ասածը, կամ էլ արածը, շի գվարճացնում ինձ:

— Գու առաջ երբեք չէիր ասում, որ ես սակավախոս եմ կամ, որ իմ ընկերակցությունը քեզ հաճելի չէ, Քեթի,— խիստ հուզմունքով բացականչեց Հիթքլիֆը:

— Բայց դա ի՞նչ ընկերակցություն է, երբ մարդիկ ոչինչ չգիտեն և ոչ մի բանի մասին չեն խոսում,— փնթփնթաց Քեթին:

Նրա ընկերը վերկացավ, բայց էլ ժամանակ չունեցավ արտահայտելու իր զգացումները, որովհետև սալարկած ճա-

նապարհից լավեց սմբակների դոփյուն, և թույլ բախումից հետո գվարթ դեմքով ու անսպասելի հրավերից երջանկությամբ համակված, ներս մտավ երիտասարդ Լինթընը:

Անկասկած, Քեթրինը նկատեց իր երկու բարեկամների մեջ եղած տարբերությունը, երբ մեկը ներս մտավ, իսկ մյուսը դուրս գնաց: Հակադրությունը շատ նման էր այն փոփոխությունը, հորբ բուսականությունից զուրկ ածխահանքերի բլրապատ շրջանից իջնում ևս մի դեղեցիկ արգավանդ հովիտ. էդգարի ձայնն ու ողջույնը, ինչպես և արտաքինը Հիթքլիֆի հակապատկերն էին: Միստր Լինթընի խոսակցությունը հաճելի էր ու մեղմ, բառերն արտասանում էր ձեռք նման, ոչ այնպես կոպիտ, ինչպես խոսում են այս տեղերում:

— Հո շատ շուտ շեմ եկել,— հայացքը դեպի ինձ ուղղելով հարցրեց նա:

Ես սկսել էի սրբել խոհանոցի դարակների ափսեները և կարգի բերել գզրոցները:

— Ոչ,— պատասխանեց Քեթրինը,— այդտեղ ի՞նչ ես անում, Նելլի:

— Իմ գործը, միսս,— պատասխանեցի ես: (Միստր Հինդլին ինձ պատվիրել էր, որպես նրորդ անձ, միշտ ներկա լինել, եթե Լինթընը երբևէ մենակ այցի գա):

Քեթրին հետևից մոտեցավ ինձ և բարկացած շշնջաց.

— Դուրս գնա քո այդ փոշու. փալասների հետ. երբ հյուրերը տանն են, ծառաները չպետք է նրանց ներկայությամբ սենյակը մաքրեն ու կարգի բերեն:

— Լավ առիթ է, երբ տանտերը ռանը չէ,— բարձրաձայն պատասխանեցի ես,— նա չի սիրում, երբ ես դեսուդեն եմ ընկնում իր ներկայությամբ: Հավարացած եմ, որ միստր էդգարը կների ինձ:

— Իսկ ես չեմ սիրում, երբ դեսուդեն են ընկնում ի՛մ ներկայությամբ,— տիրաբար բացականչեց երիտասարդ լեդին՝ թույլ շտալով հյուրին, որ խոսի. Հիթքլիֆի հետ ունեցած վեճից հետո նա չէր կարողանում իր սառնասրտությունը պահպանել:

— Ես շատ ցավում եմ դրա համար, միսս Քեթրին,— եղավ իմ պատասխանը. և ջանասիրաբար շարունակում էի իմ գործը:

Ենթադրելով, որ էզզարը շի կարող տեսնել, նա իմ ձեռքից խլեց փալասը, թեև շարությամբ կամթեց և երկար ժամանակ բաց չէր թողնում:

Ասացի, որ ես նրան չէի սիրում, նույնիսկ երբեմն ջանում էի խոցել նրա փառասիրությունը, բացի այդ, դա խիստ ցավ պատճառեց ինձ և ես շոքած տեղից վեր թռա ու ճչացի:

— Օ՛յ, միսս, դա կեղտոտ խաղ է: Դուք իրավունք չունեք ինձ կամթել, ես դա չեմ հանդուրժի:

— Ես քեզ ձեռք չեմ տվել, ստախոսի մեկը,— գոռաց նա, և մատները ձգվում էին, որ կրկնի արածը, իսկ ականջները կատաղությունից կարմրեցին: Նա երբեք կամքի ուժ չէր ունենում թաքցնել իր կրթերը, և դեմքը միշտ էլ կասկարմիր էր կտրում:

— Բա սա ինչ է,— առարկեցի ես, ցույց տալով թևիս վրայի կապտուկը:

Նա ոտքը դրեց գետնին, մի պահ տատանվեց և ապա, մեջը արթնացած անդիմադրելի շարությունից հրահրված, ապտակեց դեմքիս. հարվածեց այնպես ուժգին, որ աչքերս լցվեցին արցունքով:

— Քեթրին, սիրելիս, Քեթրին,— միջամտեց Լինթընը՝ խիստ շփոթված իր կուռքի թույլ տված ստախոսության և վայրագության կրկնակի զանցանքից:

— Հեռացիր սենյակից, էլլեն,— ամբողջապես դողդողալով, կրկնեց Քեթրինը:

Փորրիկ Հերթընը, որ ամենուրեք հետս էր լինում և այժմ էլ կոպրիս նստած էր հատակին, տեսնելով արցունքներս՝ ինրև էլ սկսեց լսող լինել և հեծկտալով գանգատվել. Շար հորտքույր Քեթրինը, որ կատաղությունը թափեց իմ անբախտ գլխին: Միսս Քեթրին բռնեց նրա ուսերը և ցնցեց նրան այնքան, մինչև որ խեղճ երեխան ամբողջովին կապտեց: էզզարը առանց մտածելու պինդ բռնեց Քեթրինի ձեռքերից, որ ազատի երեխային: Մի ականթարթում մի ձեռքն ազատվեց, և ապշած երիտասարդը նրա ափը զգաց իր երեսին այնպիսի ուժով, որ այն չէր կարող սխալմամբ կատակ համարել:

Լինթընը սարսափից ապշած հետ քաշվեց: Ես երեխային առա գիրկս, հետս տարա խոհանոց՝ բաց թողնելով դուռը,

որովհետև հետաքրքրութեամբ համակված ուզում էի հետեւել,
թէ ինչով կվերջանա նրանց վեճը:

Վիրավորված այցելուն իր քայլերն ուղղեց դեպի այնտեղ,
ուր թողել էր գլխարկը. նա այլայլվել էր, իսկ շուրթերը դո-
զում էին: «Եվ վատ չեղավ,— ասացի ինքս ինձ:— Ստացար
նախագուշացում, դե, չքվիր: Լավ եղավ, որ իմացար, թե
ինչպիսին է նրա իսկական բնավորութունը»:

— Ո՞ւր եք գնում,— հարցրեց Քեթրինը՝ կանգնելով դռան
շեմին: Նա թերթեց և փորձեց կողքից անցնել:

— Դուք չպետք է գնաք,— տիրաբար պատասխանեց նա:

— Պետք է, և կգնամ,— խուլ ձայնով ասաց նա:

— Ոչ,— բռնելով դռան բռնակը, պնդեց Քեթրինը,— դեռ
ոչ: Էդգարը կինթըն, նստեք: Դուք ինձ չպետք է թողնեք այս-
պիսի վիճակում: Ողջ գիշեր ես դժբախտ կլինեմ, իսկ դժբախտ
լինել ձեր պատճառով, չեմ ուզում:

— Ինչպե՞ս կարող եմ մնալ, երբ հարվածեցիք ինձ,—
հարցրեց կինթընը:

Քեթրինը լուռ էր:

— Դուք վախեցրիք և ամոթահար արիք ինձ,— շարունա-
կեց նա,— այլևս այստեղ չեմ գա:

Քեթրի աչքերը փայլեցին, իսկ կոպերը սկսեցին դողալ:

— Դուք գիտակցաբար սուտ խոսեցիք,— ասաց կին-
թընը:

— Ոչ, չեմ խոսել,— ճշաց նա՝ տիրապետելով իրեն,—
ես գիտակցաբար ոչինչ չեմ արել: Դե, գնացեք, և թե կամե-
նում եք... հեռացեք: Իսկ ես հիմա լաց կլինեմ, լաց կլինեմ,
մինչև որ հիվանդանամ:

Նա ծնկաչոք իջավ աթոռի մոտ և լրջորեն սկսեց ար-
տասովել:

Էդգարը հետեւելով իր որոշմանը, դուրս եկավ բակ. այդ-
տեղ տատանվելով հապաղեց: Ես որոշեցի խրախուսել նրան:

— Միսս Քեթրինը սաբսափելի բժաշան է, սրբ,— ասա-
ցի՝ բղավելով,— ինչպես ամեն մի երես առած երեխա, լավ
կանեք, որ տուն գնաք, այլապես նա իրոք կհիվանդանա,
միայն թե վշտացնի մեզ:

Սիրահարվածը աչքի տակով նայեց լուսամուտին. նա

չէր կարողանում թողնել հեռանալ Վշա այնտեղ, ինչպես կատուն շի կարողանում հեռանալ յիսուսական դա՛ն մկից կամ կիսատ կերած թռչունից. «Ա՛հ, տածում էի ես, Լինթընին փրկել հնարավոր չէ, նա զատ: Խորոված է և նետվում է իր ճակատագրին ընդառաջ»:

Եվ հենց այդպես էլ էր նա կտրուկ շուռ եկավ, շտապ նորից տուն մտավ և դու ս իր հետևից ծածկեց, իսկ երբ մի փոքր հետո ներս մտա հայտնելու, որ էրնշտուն սարսափելի հարբած տուն է վերադարձել և պատրաստ է ամբողջ տունը տակնուվրա անել մեր գլխին (այդպիսին էր լինում այդ վիճակում նրա տրամադրությունը), տեսա, որ վեճը պարզապես ավելի մոտիկ մտերմություն էր առաջացրել նրանց մեջ, քանզի էր պատանեկան ամաչկոտություն պատնեշը, հնարավորություն էր տվել նրանց բարեկամության դիմակը դեն շարտել և իրար սեր արտահայտել:

Միտար Հինդլիի վերադարձի լուրը Լինթընին ստիպեց շտապ նետվել դեպի իր ձին, իսկ Քեթրինին՝ դեպի իր սենյակը: Ես վազեցի, որ Հերթընին թաքցնեմ և դատարկեմ տիրոջ որսորդական հրացանի լիցքը, որովհետև իր խելացնոր գրգռմունքի պահին սիրում էր հրացանով զվարճանալ և նա, ով կջղայնացներ նրան կամ պարզապես իր վրա կգրավեր նրա ուշադրությունը, վտանգի կենթարկեր իր կյանքը. ես փամփուշտը հանեցի, որ մեծ շարիք չկատարի, եթե մաքով անցնի կրակել հրացանից:

ԳՆՈՒՆ ԻՆՆԵՐՈՐԿ

Նա ներս մտավ, տեղալուծ այնպիսի հայհոյանք, որ սարսափելի էր լսելը. ինձ տեսավ այն պահին, երբ ես որդուն թաքցնում էի խոհանոցի պահարանի մեջ: Հերթընը սարսափում էր հանդիպել հորը, որը ցույց էր տալիս կամ իր անասնական վայրագ սերը, կամ էլ խելացնոր կատաղությունը, որովհետև մի դեպքում վտանգ էր սպառնում, որ որդուն տանջելով և համբուրելով կհասցնի մահվան դուռը, իսկ մյուս դեպքում՝ որ կնետի կրակի մեջ և կամ խփելով

պատին, ջարդուխուրդ կանի. դրա համար ուր էլ որ խցկում էի, խեղճ Լրեխան հանգիստ նստում էր:

— Ըհր, վերջապես բռնեցի,— գոռաց Հինդլին՝ վղիցս բռնելով ու հետ քաշելով ինձ, ինչպես շանը,— երզվում եմ դրախտով ու դժոխքով՝ դուք այստեղ որոշել եք սպանել այդ Լրեխային: Հիմա եմ հասկանում, թե ինչու եք նրան իմ աչքից միշտ հեռու պահում: Բայց սատանայի օգնությամբ ես քեզ կատիպեմ կույ տալ այս դանակը, նեղի: Մի ծիծաղիր: Ես հենց նոր Քեննեթին գլխավայր կոխեցի Սև Զիու ճահիճը. որտեղ մեկն է, այնտեղ կլինի և երկրորդը: Պետք է սպանեմ ձեզնից մեկն ու մեկին, չեմ հանգստանա, մինչև չսպանեմ:

— Բայց ես դանակ չեմ սիրում, միատր Հինդլի,— պատասխանեցի,— դրանով ապխտած հարինգ են կտրել: Ավելի լավ կլինի, որ կրակեք և սպանեք ինձ:

— Ավելի լավ կլինի, որ դու գրողի ծոցը գնաս,— ասաց,— և կգնաս: Ոչ մի օրենք Անգլիայում չի կարող արգելել, որ մարդը պատշաճ կարգ ու կանոն հաստատի իր տան մեջ: Իսկ իմ տունը գարշելի տուն է: Դե, բաց արա բերանդ:

Դանակը ձեռքին՝ նա փորձում էր ծայրով իրարից հեռացնել ատամներս, բայց ես շատ չէի վախենում նրա քմահաճույքներից: Քրեցի և սկսեցի հավատացնել, որ դանակը շատ անհամ է, չեմ ընդունի ոչ մի դեպքում:

— Ըհր,— ասաց նա՝ հանգիստ թողնելով ինձ:— Տեսնում եմ, որ այդ ժանտատեսիլ փոքրիկ սրիկան Հերթրնը չէ. ներիք ինձ, նեղի, եթե դա նա լիներ, ապա հարկավոր էր նրա կաշին քերթել այն բանի համար, որ ընդառաջ չվազեց ինձ ողջունելու և ճշում է, ասես ուրվական է տեսել: Մոտ եկ, հրեշավոր լակոտ, ես քեզ ցույց կտամ, թե ինչ ասել է խաբել բարեսիրտ հայրիկին: Իսկ չե՞ս կարծում, որ եթե Լրեխայի մազերը կարճ կտրենք, նա ավելի սիրուն կլինի: Շունը մազերը կտրելուց ավելի է կատաղում, իսկ ես սիրում եմ կատաղին, այն ինչը վայրագ է ու կոկիկ. տուր ինձ մըկբատը: Բացի այդ, մեր մեջ կա մի դժոխային տենչ, դիվային ինքնաբավականություն, որ շոյում է մեր ականջները, առանց որի մենք իսկական ավանակներ ենք: Սուս, փոքրիկս, սուս, ախր, դու իմ սիրելի պաճուխն ես: Դե լավ, սրբենք աչքերդ՝ ուրախանանք, պաշիկ արա ինձ: Ի՞նչ, նա չի՞ ուզում. պաշիկ

արա, Հերթըն: Գրողը տանի, պաշիկ արա: Աստված իմ, միթե ես այսպիսի հրեշ եմ մեծացնելու: Այո, անսպասման այս վիժվածքի վիզը կոտորեմ:

Խեղճ Հերթընը հոր ձեռքերի վրա զոռզոռում, քացի-քացի էր անում իր ամբողջ ուժով, և ալելի ուժգին գոռաց, երբ հայրը աստիճաններով վերև զնալիս երեխային տանում էր բազրիքի վրա սպահած: Ես ճշացի, որ նա այդպես երեխային կվախեցնի, կհասցնի կաթվածի, վազեցի՝ փրկելու նրան:

Երբ հասա նրանց, Հինդլին հակվեց բազրիքի վրա, որպեսզի ախանջ դնի ներքևից մոտեցող աղմուկին. գրեթե մոռացավ, թե ինչ կա ձեռքում:

— Ո՞վ է այնտեղ, — հարցրեց՝ լսելով աստիճաններին մոտեցող ինչ-որ մեկի քայլերի ձայնը:

Ես ճանաչեցի Հիթքլիֆի քայլերի ձայնը և նույնպես հակվեցի, որպեսզի զգուշացնեմ, որ էլ չմոտենա. մի ակնթարթում, երբ ես հայացքս շուռ տվեցի Հերթընից, երեխան հանկարծ դուրս պրծավ, ազատվեց իրեն անփույթ բռնած ձեռքերից և ընկավ:

Մի պահ սարսափի սարսուռ զգացինք, նախքան դժբախտ երեխային փրկված կտեսնեինք: Վտանգավոր պահին Հիթքլիֆը ներքևից հասավ և հետևելով բնազդին՝ հենց բնկնելու պահին օդում բռնեց ու ոտքի կանգնեցրեց երեխային, նայեց վերև՝ փնտրելով պատահարի հեղինակին:

Ժլատը, հինգ շիլլինգ արժողությամբ վիճակախաղի տոմսից բաժանվելով և հետևյալ օրը իմանալով, որ այդ գործարքի մեջ ինքը կորցրել է հինգ հազար ֆունտ, այնպես չէր այլայլվի, ինչպես այլայլվեց Հիթքլիֆը, երբ վերևում տեսավ միստր էրնշոուին: Նրա դեմքը ամեն մի բառից ավելի պարզորոշ արտահայտեց հոգեկան տվայտանք, այն բանի համար, որ հենց ինքն իրեն խանդարեց ի կատար ածելու իր վրեժը: Եթե մութ լիներ, նա, հավանաբար, կփորձեր ուղղել իր սխալը, աստիճաններին կզարկեր Հերթընին և զանգը ջարդուփշուր կաներ: Բայց մենք ապանատես եղանք նրա փրկությանը. արդեն ներքևում կանգնած՝ ես իմ թանկագին սանին սեղմել էի կրծքիս:

Զգաստացած ու ամոթահար եղած՝ Հինդլին անշտապ քայլերով իջավ ցած:

— Դու ես մեղավոր, էլլեն,— ասաց նա,— դու նրան պետք է հեռու պահեիր իմ աչքից, պետք է վերցնեիր իմ ձեռքից: Հո չի վնասվել:

— Վնասվե՛լ,— բարկացած գոռացի ես,— եթե չի սպանվել, ուրեմն ապուշ կլինի: Է՛հ, զարմանում եմ՝ մայրը գերեզմանից ոնց չի հլնում, որ տեսնի, թե դուք ինչպես եք վարվում նրա հետ: Դուք հեթանոսից էլ վատ եք, եթե այդպես եք վարվում ձեր հարազատի հետ:

Նա փորձ արեց փայփայել երեխային, որը, իմ գիրկն ընկնելուց հետո, անմիջապես դադարեց սարսափահար լաց լինելուց: Բայց հենց որ հայրը փորձեց շոյել նրան, նա սկսեց էլ ավելի բարձրաձայն ճշալ, ուժգին ցնցվել, և թվաց, թե ուր որ է կսկսվի նոպան:

— Մի մոտեցեք նրան,— շարունակեցի ես:— Նա ատում է ձեզ... ձեզ բոլորն էլ ատում են. դա ճշմարտությո՛ւն է: Այո, երջանիկ է ձեր ընտանիքը, և մի տեսեք, թե ինքներդ ինչ վիճակի եք հասել:

— Ես դեռ ավելի վատ վիճակի մեջ կլինեմ, նելլի,— սկսեց ծիծաղել մոլորված մարդը՝ զրսևորելով իր դաժանությունը: Իսկ հիմա հեռացիր աչքիցս, և նրան էլ հետդ տար: Դու էլ, Հիթքլիֆ, դու էլ չբվիր, որ այլևս քեզ շտեսնեմ ու չլսեմ... Այս գիշեր չէի կամենա քեզ սպանել: Գուցե միայն տունը հրդեհհեմ: Դե, նայած, թե խելքիս ինչ կփչի...

Այս ասելով՝ նա դարակից վերցրեց մի շիշ օղի և լցրեց գավաթը:

— Օ, ոչ, մի խմեք,— աղերսալից ասացի ես,— միտք չի նդլի, դուք արդեն զգուշացվել եք ի վերուստ: Խղճացեք այս դժբախտ փոքրիկին, եթե չեք ուզում խնայել ձեզ:

— Մեկ ուրիշը նրան ավելի լավ կխնամի, քան ես,— պատասխանեց նա:

— Գթացեք ձեր սեփական հոգին, — ասացի, փորձելով ձեռքից խլել գավաթը:

— Օ, ոչ, ընդհակառակը, մեծ հաճույքով ես հոգիս կուղարկեմ դեպի կործանում, ի պատիժ նրա ստեղծողի,— բացակա՛նչեց աստված անարգողը:— Սրտանց խմում եմ նրա դատասպարտման կենացը:

Մինչև վերջ օղին քաշեց գլուխը և անհամբերությամբ

հրամայեց մեզ հեռանալ, իր հրամանն ավարտելով այնպիսի նողկալի հայհոյական խոսքերով, որ հնարավոր չէ կրկնել կամ հիշել:

— Ափսոս, որ նա չի կարող հարբեցողությամբ սպանել իրեն,— ասաց Հիթքլիֆը, և որպես արձագանք, անեծքների տարափ տեղաց, երբ դուռը փակվեց:— Դրա համար նա անում է ամեն ինչ, բայց հսկայի առողջությունն ունի, դիմադրում է: Միտար Քեննեթը պատրաստ է գրազ գալ իր զամբիկով, որ այստեղից մինչև Գիմմերթըն ընկած տարածության վրա ապրող մարդը էրնշոուն, ավելի երկար կապրի և գերեզման կիջնի որպես մի ալեհեր մեղավոր, եթե միայն իր բախտից չհանդիպի արտասովոր պատահարի:

Ես մտա խոհանոց, նստեցի և սկսեցի օրորել իմ գառնուկին, որ քնի: Հիթքլիֆը, մտածում էի ես, գնաց մարագ: Հետո պարզվեց, որ նա անցել է բազմոցի հետևը միայն և պատի մոտ եղած նստարանի վրա, կրակից քիչ հեռու, լռելյայն պառկել:

Ես ծնկիս վրա օրորում էի Հերթընին ու մրմնջում մի երգ, որ սկսվում էր այսպես.

Ոչ գիշերին, երբ բարձրացավ լացի ձախ,
Մայրը, թաղված հողի տակ, լսեց այն.

երբ միսս Քեթին, որ լսել էր գոռգոռոցը, զլուխը դռնից ներս խոթեց և շշնջաց.

— Մենա՞կ ես, նեւլի:

— Այո, միսս,— պատասխանեցի ես:

Նա ներս անցավ, մոտեցավ օջախին: Ենթադրելով, որ ռզում է ինչ-որ բան ասել, նայեցի նրան: Նրա դեմքը, ասես, արտահայտում էր շփոթմունք ու կարոտ: Շրթունքները կիսաբաց, կարծես ուզում էր խոսել և արդեն շունչ էր բաշել, բայց խոսելու փոխարեն լավեց միայն հառաչանք: Սկսեցի նորից երգել. չէի մոռացել նրա քիչ առաջվա վարսունքը:

— Ո՞ւր է Հիթքլիֆը,— ընդհատելով ինձ, հարցրեց նա:

— Ախոռում. իր գործին է,— եղավ իմ պատասխանը: Հիթքլիֆը շփտեց իմ ասածները, գուցե նիրհում էր:

Նորից հետևեց երկար լռություն, որի ժամանակ նկատե-

ցի, ո՞ր Քեթրինի այտերից մեկ-երկու կաթիլ գլորվեց սա-
լարկված հատակին:

«Մի՞թե զղջում է իր ամոթալի արարքի համար,— հարցրի
ինքս Քնձ:— Դա նորություն է. էհ, թող ինքը խոսի այդ մա-
սին՝ ես նրան շեմ օգնի»:

Բայց ոչ, նրան քիչ բան է մտահոգում, բացի իր սեփա-
կան հոգսերից:

— Աստված իմ,— վերջապես բացականչեց նա,— ես
շատ դժբախտ եմ:

— Ափսո՛ս,— ասացի ես,— դժվար է ձեզ գոհացնել.
բարեկամները շատ են, հոգսերը՝ քիչ, բայց էլի դժգոհ եք:

— Նեղի, կպահե՞ս մի գաղտնիք, եթե հայտնեմ,— շա-
րունա կեց նա, մոտս ծնկի գալով և ինձ ուղղելով այնպիսի
գերող հայացք, որը մոռացնել է տալիս ամեն մի վիրավո-
րանք, նույնիսկ եթե վիրավորված լինելու բոլոր հիմքերն
ունես:

— Իսկ արժե՞ պահել,— հարցրի ես, արդեն ոչ բարկա-
ցած տոնով:

— Այո, այն հոշոտում է ինձ, և ես պետք է մեկին
հայտնեմ: Չգիտեմ, ինչ անեմ: էդգար Լինթընն այսօր ինձ
առաջարկություն արեց, և ես նրան պատասխանեցի: Հիմա,
նախքան քեզ հայտնելը՝ համաձայնվել եմ, թե մերժել, կու-
զենացի քեզնից իմանալ. ես ի՞նչ պիտի պատասխանեի:

— Իսկապես, միսս Քեթրին, իսկ ինչպե՞ս կարող եմ
իմանալ,— պատասխանեցի ես,— իհարկե, նկատի ունենա-
լով, թե այսօր կեսօրից հետո նրա ներկայությունը ինչ տե-
սարան սարքեցիք՝ կասեի, որ ավելի խելացի բան արած
կլինե՞՞ք, եթե մերժեիք, և քանի որ այդ բոլորից հետո ձեզ
առաջարկություն է արել, ապա նա կամ վերջնականապես
հրաժեշտ է, կամ էլ արկածասեր ապուշի մեկը:

— Եթե դու այդպես ես խոսում, ես այլևս քեզ ոչինչ չեմ
ասի. -- բարոքոված պատասխանեց նա և վերկացավ:— Ըն-
դունեցի, նեղի: Դե, շուտ ասա, մի՞թե սխալ գործեցի:

— Ընդունեցի՞ք. եթե ընդունել եք, էլ ի՞նչ միտք ունի
քննել այդ հարցը: Դուք խոսք եք տվել և հիմա այլևս չեք
կարո՞ղ այն հետ վերցնել:

— Բայց ասա, ես պե՞տք է ընդունեի,— զայրացած բա-

ցականչեց նա, ձեռքերը շփելով իրար և հոնքերը կիտելով:

— Այդ հարցի ճիշտ պատասխանը տալուց առաջ պետք է հաշվի առնվեն բազմաթիվ հանգամանքներ,— խրատական տոնով ասացի ես: Առաջինը և ամենագլխավորը՝ դուք սիրո՞ւմ եք միստր էդգարին:

— Ինչպե՞ս կարելի է նրան շսիրել: Իհարկե, սիրում եմ,— պատասխանեց նա:

Ես սկսեցի իսկական հարցաքննություն. քսաներկու տարեկան աղջկա համար դա այնքան էլ անխոհեմ քայլ չէ:

— Ինչո՞ւ եք սիրում նրան, միսս Քեթի:

— Անմիտ հարց: Սիրում եմ, և վերջ:

— Բայց դա հարցի պատասխանը չէ, պետք է ասեք, թե ինչո՞ւ:

— Դե, որովհետև նա գեղեցիկ է և նրա կողքին լինելը հաճելի է:

— Վա՞տ է,— ասացի ես:

— Եվ որովհետև նա երիտասարդ է, կենսուրախ:

— Ավելի՞ վատ:

— Եվ որովհետև նա սիրում է ինձ:

— Դա կարևոր չէ, ասացեք իսկական պատճառը:

— Եվ հարուստ կլինի, իսկ ես, ինչ խոսք, կլինեմ շքրջապատի ամենահայտնի կինը և կարող եմ հպարտանալ, որ այդպիսի ամուսին ունեմ:

— Ավելի ևս վատ. իսկ հիմա ասացեք, թե ինչպե՞ս եք սիրում նրան:

— Ինչպես սիրում են բոլորը... բայց դու հիմար ես, նեղի:

— Իսկի էլ չէ... պատասխանեք:

— Ես սիրում եմ նրա ոտքերի տակի հողը, գլխի վերևի օդը, և այն ամենը, ինչին որ դիպում է, նրա ասած ամեն մի բառը: Սիրում եմ նրա հայացքը, շարժումները, և նրան ամբողջապես: Ահա և բոլորը:

— Իսկ ինչո՞ւ:

— Զեղա՞վ. դու ամեն ինչ վեր՛ես ամուսնի կատակի: Դա շատ վատ է, իսկ ինձ համար կատակ չէ,— վրդովված ասաց երիտասարդ լեդին՝ դեմքը շքշելով դեպի կրակը:

— Ես բոլորովին էլ չեմ կատակում, միսս Քեթրին,—

պատասխանեցիւ — Դուք սիրում եք միստր էդգարին, որովհետեւ գեղեցիկ է, երիտասարդ, կենսուրախ ու հարուստ, և նա էլ ձեզ է սիրում. դա սակայն կարևոր չէ: Դուք, հավանաբար, նրան առանց այդ էլ կսիրեիք, բայց դուք նրան այդ դեպքում էլ չէիք սիրի, եթե շունենար առաջին շորս հմայիչ հատկութիւնները:

— Ձէ, իհարկե, չէի սիրի, միայն կկարեկցեի... Գուցեև ատեի, եթե լիներ այլանդակ ու անտաշ:

— Բայց աշխարհում կան ուրիշ գեղեցիկ, հարուստ երիտասարդներ, գուցե ավելի գեղեցիկ ու ավելի հարուստ, քան նա: Ի՞նչը ձեզ կխանգարեր նրանց սիրել:

— Եթե կան էլ այդպիսիները՝ նրանց չեմ հանդիպել, էդգարի պես մեկին ես չեմ տեսել:

— Գուցե մի օր հանդիպեք. միստր կինթընը միշտ չէ, որ գեղեցիկ ու ջահել կլինի, և ոչ էլ հարուստ:

— Այդ ամենը նա հիմա ունի, ինձ համար կարևոր է միայն ներկան: Ես կուզենայի, որ ավելի խելացի դատեք:

— Լավ, ուրեմն ամեն ինչ կարգին է, եթե ձեզ համար կարևոր է միայն այսօրվա օրը՝ ամուսնացեք միստր կինթընի հետ:

— Դրա համար քո թույլտվութիւնը հարկավոր չէ. միևնույն է կամուսնանամ նրա հետ, սակայն, դու շատացիր, թե արդյո՞ք ճիշտ եմ վարվում:

— Միանգամայն ճիշտ, եթե ճիշտ են վարվում, երբ ամուսնանում են միայն այսօրվա համար: Իսկ հիմա եկեք լսենք, թե ինչու երջանիկ չեք: Ձեր եղբայրը ուրախ կլինի... կարծում եմ, ծեր լնդին ու ջենտլմենը չեն առարկի, մի անկարգ ու անհարմարավետ տնից դուք կընկնեք մի հարուստ ու պատվավոր տուն. սիրում եմ էդգարին. նա էլ ձեզ է սիրում: Ամեն ինչ կարծես հաշտ ու խաղաղ է, հապա ի՞նչն է արգելքը:

— Այստեղ է, այստեղ, — պատասխանեց Քեթրինը՝ մի ձեռքը հպելով ճակատին, մյուսը՝ կրծքին: — Կամ որտեղ էլ որ ապրի հոգիս... Հոգով ու սրտով հավատացած եմ, որ ես իրավացի չեմ:

— Շատ տարօրինակ է, ոչ մի կերպ գլուխս չի մտնում:

— Հենց դա է իմ գաղտնիքը, բայց եթե դու ինձ չես ծաղ-

րի, ես ամեն ինչ կբացատրեմ. շեմ կարող այդ անել պարզորոշ կերպով, բայց կաշխատեմ այնպես բացատրել, որ գուհասկանաս, թե ես ինչ եմ զգում:

Նա նորից նստեց իմ կողքին, դեմքը դարձավ ավելի տխուր, ավելի լուրջ, իսկ իրար սեղմած ձեռքերը դողում էին:

— Նելլի, երբեք տարօրինակ երազներ չե՞ս տեսնում,— հանկարծ ասաց նա, մի պահ մտածելուց հետո:

— Այո, տեսնում եմ, երբեմն,— պատասխանեցի ես:

— Ես էլ. կյանքում տեսել եմ երազներ, որոնք հետագայում մեկընդմիջտ մնացել են ինձ հետ և փոխել մտքերիս ընթացքը, անցել, թափանցել են ամբողջ էությունս մեջ աստիճանաբար, ինչպես գինին է խառնվում ջրի հետ, և փոխել են իմ մտքերի գույնը: Ահա դրանցից մեկը. հիմա ուզում եմ պատմել, բայց, տես, շժպտաս մինչև պատմեմ վերջացնեմ:

— Օհ, մի պատմեք, միսս Քեթրին,— ճշացի ես:— Առանց քեզ շփոթմունք պատճառող սգիներ ու տեսիլքներ կանչելու էլ մենք բավականին շատ ցավեր ունենք: Դե, ուրախացեք, եղեք ինքնուրույն: Հապա մի նայեք փոքրիկ Հերթլինին: Նա ոչ մի սարսափելի երազ չի տեսնում: Ի՞նչ քաղցր է ժպտում քնի մեջ:

— Այո, հայրը մենության մեջ ինչպես է անարգում աստծուն: Դու, կարծեմ, հիշում ես, որք նա սրա պես մի կլորադեմ երեխա էր, բոլորովին ուրիշ, համարյա նույնքան փոքրիկ ու անմեղ: Ինչ որ է, Նելլի ես կստիպեմ քեզ լսել: Երազը կարճ է. այս գիշեր դու ինձ էլ չես ուրախացնի:

— Չեմ ուզում, շեմ լսի,— շտապ-շտապ կրկնեցի ես:

Այն ժամանակ ես, սնտիապաշտ էի, հավատում էի երազներին՝ հիմա էլ եմ հավատում, իսկ Քեթրինի մեջ կար ինչ-որ անսովոր մոռյլ բան, որը սարսափեցնում էր ինձ, և ես կանխատեսում էի մի սոսկալի աղետ:

Քեթրինը վիրավորվեց, բայց շարունակեց: Ձևացնելով, որ ուրիշ բանի մասին է խոսում, վերստին սկսեց.

— Եթե դրախտ ընկնեի, Նելլի, ես շափազանց դժբախտ կլինեի:

— Որովհետև դրախտը ձեզ համար չէ,— պատասխանեցի ես:— Բոլոր մեղավորները դրախտում իրենց դժբախտ կըզգային:

— Բայց ոչ գրա համար: Մի անգամ երազում տեսա, որ ես դրախտ եմ ընկել:

— Ասում եմ, որ շեմ կամենում ձեր երազները լսել, միսս Քեթրին, ես քնել եմ ուզում,— կրկին ընդհատեցի նրան:

Նա ծիծաղեց և նստեցրեց ինձ տեղում, որովհետև աթոռից վերկենալու շարժում արեցի:

— Այստեղ առանձին բան չկա,— բացականչեց նա:— Միայն ուզում էի ասել, որ թվում էր, թե դրախտը իմ տունը չէ. լացից սիրտս կառուկտոր էր լինում՝ ուզում էի երկիր վերադառնալ: Հրեշտակներն այնպես բարկացան, որ ինձ շարտեցին Մուլեգին հողմերի դարավանդ, ցախիների մեջ, և այստեղ ես արթնացա՝ ուրախությունից հեկեկալով: Դա քեզ կբացատրի իմ գաղտնիքը, ինչպես և մնացած ամեն ինչ: Այլևս իմ մտքով չի անցնում ամուսնանալ էդգար Լինթրնի հետ, ինչպես և վայելել դրախտի երանավետ կյանքը. և եթե այդ շար մարդն այդպես շտորացներ Հիթքլիֆին, ես չէի մտածի ամուսնության մասին, իսկ ամուսնանալ Հիթքլիֆի հետ՝ կնշանակեր իջնել նրա մակարդակին. նա երբեք չի իմանա, թե ինչքան եմ ես իրեն սիրում: Եվ սիրում եմ ոչ այն պատճառով, որ նա գեղեցիկ է, Նելլի, այլ որովհետև նրա մեջ ես ավելի շատ կամ, քան ինքս իմ մեջ: Ինչից էլ որ մեր հոգիները արարված լինեն, նրա հոգին և իմը նույնն են, իսկ Լինթրնինը տարբերվում է մեզնից ինչպես լուսնի ճաճանչը կայծակից կամ եղյամբ կրակից:

Նա դեռ չէր ավարտել իր խոսքը, երբ ես զգացի Հիթքլիֆի ներկայությունը: Որսալուվ թեթև շարժում՝ ես շուռ եկա և տեսա, թե ինչպես նա նստարանից բարձրացավ և անաղմուկ դուրս գնաց: Նա լսում էր մինչև այն տեղը, երբ Քեթրինն ասաց, ամուսնանալով նրա հետ, ես նվաստացնում եմ ինքս ինձ. այն ժամանակ նա վերկացավ, որ այլևս չլսի:

Բազմոցը խանգարեց հատակին նստած Քեթրինին նկատել Հիթքլիֆի ներկայությունը կամ հեռանալ, բայց ես ցնցվեցի և առաջարկեցի, որ լռի:

— Ինչո՞ւ,— հարցրեց նա՝ անհանգստացած նայելով իր շուրջը:

— Զոդեֆն այստեղ է,— պատասխանեցի՝ պատեհ պահին լսելով ճանապարհով գլորվող սայլի անիվների դղրդոցը,—

ներա հետ ներս կմտնի նաև Հիթթըլիֆը: Ինձ թվաց, թե հենց այդ պահին նա կանգնած էր դռան շեմքին:

— Բայց նա չէ՞ր կարող դռան շեմից ինձ լսել,— ասաց Քեթին:— Հերթընին տուր պահեմ, մինչև որ ընթրիքը զուգարեք, և երբ պատրաստ լինի, կանչիր ինձ, որ միասին ընթրենք: Ես ուզում եմ խաբել իմ անհանգիստ խիղճը և համոզվել, որ Հիթթըլիֆը ոչինչ չգիտի այս ամենի մասին: Ոչինչ չգիտի, այնպես չէ՞: Նա չգիտի, թե ի՞նչ ասել է սիրահարված լինել:

— Նա ձեզնից պակաս չգիտի, թե ինչ բան է դա,— առարկեցի ես,— և եթե նրա ընտրյալը դուք եք, ապա աշխարհում նա ամենադժբախտ էակը կլինի: Հենց որ դուք միսիս Լինթըն դառնաք, նա կկորցնի թե՛ բարեկամին, թե՛ սիրածին և թե՛ ամեն ինչ: Մտածե՛լ եք արդյոք դուք, թե ինչպես կդիմանաք այդ անջատմանը, և ինչպե՞ս կդիմանա Հիթթըլիֆը, երբ բոլորովին լքված մնա աշխարհում: Որովհետև միսս Քեթինը...

— Բոլորովին լքված, իրարից բաժանված,— զայրույթով բացականչեց Քեթին:— Ո՞վ մեզ կբաժանի, ասա խնդրեմ: Ով որ փորձի, նա կհանդիպի Միլոնի՝ ճակատագրին: Դա չի լինի, էլլեն, քանի զևո ես ողջ եմ, ի սեր որևէ մեկի: Ամեն տեսակ լինթըններ աշխարհում փոշի կդառնան, նախքան ես կհամաձայնեմ լքել Հիթթըլիֆին: Օ՞, այդպես չէի մտածում, ես այդ չէի ուզում ասել: Այդպիսի գնով ես չէի կամենա միսիս Լինթըն լինել: Հիթթըլիֆը ինձ համար կմնա այնպիսին, ինչպիսին եղել է կյանքում: Էդգարը պետք է մոռանա իր հակակրանքը և գոնե հանդուրժողաբար վերաբերվի նրան: Նա այդպես էլ կանի, երբ հասկանա Հիթթըլիֆի հանդեպ ունեցած իմ իսկական զգացմունքները: Նեյլի, տեսնում եմ, որ դու ինձ համարում ես մի թշվառ եսամուլ, բայց մի՞թե երբևէ քո մտքով չի անցել, որ եթե ես ու Հիթթըլիֆն ամուս-

¹ Միլոն Քրոտոնսկի—հունական ըմբիշ, որն ապրել է 6-րդ դ. մեր թվարկությունից առաջ, բազում անգամներ հաղթանակներ է տարել օլիմպիական ու պիֆիական խաղերում: Ըստ լեգենդի, մի անգամ ծերության հասակում նա փորձել է մերկ ձեռքերով ջարդել ծառը: Բնի ճեղքված մասերը նրա ձեռքերը սեղմել են իրենց արանքում և այդպես անօգնական վիճակում նրան հռչոտել են գալլերը:

Իսկ անհրաժեշտ է կրկնել, որ Իսկ եթե ամուսնանամ
Լինթրնի հետ, ես կկարողանամ օգնել Հիթլերին վեր բարձ-
րանալ, և կփրկեմ նրան եղբորս իշխանությունից:

— Ձեր ամուսնու փողերով, միսս Քեթրին,— հարցրի
ես:— Հազիվ թե նա այդքան դյուրաբեկ լինի, ինչպես կար-
ծում եք. և թեև այդ հարցում ես դատավոր չեմ, բայց են-
թադրում եմ, որ դա երիտասարդ Լինթրնի կինը դառնալու
օգտին խոսող ձեր բոլոր փաստարկներից ամենավատն է:

— Ոչ, այդպես չէ,— առարկեց նա,— ամենալավն է.
մյուս բոլորը իմ քմահաճույքները բավարարելու համար էր
արվում կամ էլ հանուն էդգարի սիրույն: Դա արվում էր ի
սեր մի մարդու, որն իր մեջ ամփոփում է և էդգարի հանդեպ,
և ինքն իր հանդեպ ունեցած զղացմունքները: Ես չեմ կարող
այդ արտահայտել, բայց անշուշտ ամեն ոք այն կարծիքին
է, որ մեր «եսը» գո է կամ պետք է գոյություն ունենա ինչ-
որ տեղ, մեզնից դուրս: Ի՞նչ միտք ուներ ստեղծել ինձ, եթե
ես ամբողջապես միայն այստեղ լինեի: Իմ մեծ դժբախտու-
թյունների պատճառն այս աշխարհում եղել են Հիթլերի
դժբախտությունները և ես դրանց հենց սկզբից դիտել եմ
ու զգացել: Իմ մեծ մտորումի պատճառը նա է՝ միայն նա:
Եթե ամեն ինչ կործանվի, և նա մնա, ես էլի կշարունակեմ
ապրել, իսկ եթե ամեն ինչ մնա, նա անհետանա, տիեզերքն
ինձ համար կդառնա մի հսկայական օտար բան, և ես այլևս
նրա մասնիկը չեմ լինի: Իմ սերը Լինթրնի նկատմամբ նման
է անտառի սաղարթին. լավ դիտեմ, որ ժամանակը կփոխի
այն, ինչպես ձմեռն է փոխում ծառերը: Իմ սերը Հիթլերի
հանդեպ նման է երկրի ընդերքի հավերժական վիճակա-
րին, որ հազիվ թե շնչին հաճույքի ակնաղբյուր լինի, բայց
անհրաժեշտ է: Նեյլի, ես հենց Հիթլերին եմ՝ նա շարունակ
նստած է իմ ուղեղում՝ ոչ որպես ուրախություն, և ոչ էլ որ-
պես մեկը, որի համար ուրախանում եմ ավելի շատ, քան
կուրախանայի ինքս ինձ համար, այլ որպես իմ իսկական
էությունը: Ուստի այլևս մի՛ խոսիր մեր բաժանման մասին,
դա անհնարին բան է, և...

Նա լուց և դեմքը թաքցրեց շորիս ծալքերի մեջ, բայց
ես ուժով հետ հրեցի նրան: Նրա խելացնորությունը ինձ
հանում էր համբերությունից:

— Եթե ձեր այդ անմտության մեջ տեսնեի որևէ միտք, միսս,— ասացի ես,— դա միայն կհամոզեր ինձ, որ դուք պատկերացում անգամ չունեք այն պարտականության մասին, որ ամուսնանալով, դուք վերցնում եք ձեզ վրա կամ էլ դուք շար, անսկզբունք աղջիկ եք: Եվ այլևս մի անհանգրստացրեք ինձ ձեր այդ գաղտնիքներով, խոսք չեմ տալիս, որ ես կպահեմ դրանք:

— Բայց կպահե՞ք այդ մեկը,— եռանդով հարցրեց նա:

— Ոչ, չեմ խոստանում,— պատասխանեցի:

Նա ձեռք չէր քաշում ինձնից, բայց Ջոզեֆի երևալը վերջ դրեց մեր խոսակցությանը: Քեթրինը քաշվեց մի անկյուն և սկսեց օրորել Հերթընին, մինչ ես ընթրիքի պատրաստություն էի տեսնում:

Երբ այն պատրաստ էր, Ջոզեֆի հետ սկսեցինք վիճել, թե մեզնից որ մեկը պետք է ընթրիքը տանի միստր Հինդլին. մենք չէինք կարողանում համաձայնության գալ, ամբողջ ընթրիքը համարյա սառեց: Հետո պայմանավորվեցինք սպասել, մինչև որ ինքը Հինդլին ուտելիք պահանջի՝ և թե միայն պահանջի: Մենք հատկապես վախենում էինք գնալ նրա մոտ, երբ նա երկար ժամանակ մնում էր մենության գրկում:

— Եվ ինչպե՞ս է, որ մինչև հիմա դաշտից չի վերագարձել: Որտե՞ղ է նա, ծուլություն է անում,— հարցրեց ծերուկը՝ նայելով իր շուրջը և փնտրելով Հիթքլիֆին:

— Հիմա կկանչեմ նրան,— ասացի ես:— Նա, երևի, մարագում է:

Դուրս եկա, կանչեցի, բայց ոչ մի պատասխան չստացի: Վերադառնալիս շնչացի Քեթրինին, որ Հիթքլիֆը, երևի իբր ասածներին մի զգալի մասը լսել է, և պատմեցի, թե ինչպե՞տ տեսա նրան խոհանոցից դուրս գալու պահին, երբ ինքը գանդատվում էր Հիթքլիֆի նկատմամբ իր եղբոր ունեցած կուպիտ վերաբերմունքից:

Քեթին սարսափահար իսկույն վեր թռավ տեղից, Հերթընին նետեց բազմոցի վրա և դուրս վազեց փնտրելու իր բարեկամին, առանց մի պահ անգամ մտածելու, թե ինչու ինքը այդքան վրդովվեց կամ ինչու իր խոսքերը կարող էին նրան վիրավորած լինել:

Նրա բացակայութիւնն այնքան երկար տեւեց, որ Զողեֆն առաջարկեց այլեւս չսպասել: Նա խորամանկորեն ենթադրեց, որ նրանք դիտմամբ ուշանում են, որպեսզի ճաշասեղանի շուրջը շսեն իր երկարածիգ աղոթքը: Նրանք «այնքան սրբապիղծ մարդիկ են, որ նրանցից ոչ մի լավ բան չի կարելի սպասել», — պնդում էր նա: Եվ ի հեճուկս նրանց, այդ երեկո, ի լրումն սովորական քառօրյ ժամ տեղող աղոթքի, ուսելուց առաջ կարդաց հատուկ աղոթք և դեռ ուզում էր գոհաբանական խոսքից հետո մեկնել ավելացնել, երբ երիտասարդ տիրուհին ներս նետվեց և շտապ հրամայեց նրան, որ անմիջապէս վաղի ճանապարհի կողմը, և, որտեղ էլ որ Հիթքլիֆը թափառելիս լինի, գտնի նրան, ստիպի իսկույնեւեթ տուն վերադառնալ:

— Ես ուզում եմ խոսել նրա հետ, և պետք է խոսեմ, նախքան վերել, իմ սենյակը բարձրանալը, — ասաց Քեթրին: — Դարպասը բաց է. նա մոտերքում չէ, որովհետև շարձագանքեց, թեև փարախի կտուրից ինչքան կարող էի բարձր ձայնով կանչում էի:

Զողեֆն սկզբում առարկեց, բայց Քեթրինն ընդունեց այնպիսի խստաբարո տեսք, որը ոչ մի առարկում չէր հանդուրժի: Ի վերջո, ծերուկը գլխարկը դրեց և փնթփնթալով դուրս քայլեց: Իսկ Քեթրինը խոհանոցում անցուդարձ էր անում, բացականչելով.

— Հետաքրքիր է, որտե՞ղ է նա, որտե՞ղ կարող է լինել: Ի՞նչ ասացի, Նելլի: Ես չեմ հիշում: Մի՞թե կեսօրվա իմ վատ տրամադրութիւնը վիրավորեց նրան: Դե, սիրելիս, հիշեցրո՛ւ ինչ եմ ասել, որ նա այդպէս վշտացել է: Ես ուզում եմ, շատ եմ ուզում, որ նա վերադառնա:

— Ի՞նչ եք շնչին բանի համար աղմուկ բարձրացնում, — ասացի ես, թեև ինքս էլ անհանգիստ էի: — Այդպիսի մի դատարկ բանից շեն վախենա: Եվ, իրոք, մի՞թե արժե անհանգստանալ, եթե Հիթքլիֆը որոշել է մասն գալ լուսնի լույսով ողողված մորուտների շրջանում կամ, գուցե, մռայլ տրամադրութեամբ պառկել է խոտանոցում և չի ցանկանում խոսել մեզ հետ: Գրազ եմ գալիս՝ նա թաքնվել է հենց խոտանոցում: Այ, կտեսնեք, ես հիմա նրան դուրս կկանչեմ այնտեղից:

Գնացի կրկին անդամ փնտրելու. հետևանքը հիասթափեցնող էր: Զողևֆի որոնումներն էլ ոչ մի արդյունք չտվեցին:

— Տղան լրիվ ձեռքից գնացել է, — նկատեց նա՝ ներս մտնելով: — Դարպասը լայն բաց է թողել, և միսս Քեթիի պոնին ախոռից դուրս է եկել, մտել մարագ, այնտեղից էլ փախել մարգագետին: Աստված իմ, տանտերը վաղը սատանի պես կկատաղի, և լավ էլ կանի: Նա ծով համբերություն է այսպիսի անհոգ, անփույթ մեկի համար: Բայց միշտ նա այդպես համբերատար չի լինի, ա՛յ, կտեսնեք, մի՞թե կարելի է տանջել այդպիսի մարդուն:

— Գտա՞ր Հիթքլիֆին, ավանակ, — ընդհատեց նրան Քեթրինը: — Փնտրո՞ւմ էիր, ինչպես հրամայել էի:

— Ես հաճույքով կփնտրեի ձին, — պատասխանեց նա: — Բայց այսպիսի մի գիշեր ո՛չ ձի կփնտրես, ո՛չ էլ մարդ՝ սե է ծխնելույզի պես, և Հիթքլիֆն էլ այն տղան չէ, որ վազելով գա իմ սուլոցի վրա. այ, եթե դուք կանչեք, նա անմիջապես կհայտնվի:

Ամառվա համար շատ մութ երեկո էր, ամպերը կարծես, գուշակում էին ամպրոպ, և ես ասացի, որ ավելի լավ է, բոլորս նստենք և սպասենք. վրա հասնող անձրևը նրան անպայման կբշի տուն, էլ կարիք չկա դեսուղեն ընկնել:

Բայց Քեթրինը ոչ մի կերպ չէր կարողանում հանգստանալ: Շարունակ անցուդարձ էր անում դարպասից դեպի դուռը, խիստ հուզված վիճակում, և, ի վերջո, որոշակի տեղ գրավեց ճանապարհին մոտիկ, ցանկապատի տակ, ուշադրություն չդարձնելով իմ հորդորանքներին, հարաճուն ամպրոպին և իր շուրջը ճողփացող հորդ անձրևին: Մերթ ընդ մերթ կանչում, ականջ էր դնում, լաց էր լինում: Լաց էր լինում ջղաձիգ լացով՝ Հերթլիից կամ մի այլ երեխայից էլ ավելի վատ:

Մոտ կես գիշերին, մենք դեռ նստած սպասում էինք, փոթորիկը կատաղի դղրդյունով պայթեց Դարավանդի վրա: Մոլեգին թափով շաշող քամին, ինչպես և որոտը, ճեղքեցին մեր տան անկյունի ծառը, մի ահագին ճյուղ ընկավ տանիքի վրա ու պոկեց արևելյան կողմում եղած ծխնելույզի մի բեկորը: Խոհանոցի կրակի վրա թափվեցին քարեր ու մրուր:

Մենք կարծեցինք, թե կայծակը խփեց մեզ: Զոզեֆը նրե-
րաց, ծնկի եկավ, աղերսելով աստծուն հիշել պատրիարք-
ներին՝ Նոյին ու Լոտին և, ինչպես վաղնջական ժամանակ-
ներում, խնայել արդարներին, պատժել անաստվածներին:
Զգում էի, որ աստծո դատաստանը պետք է ի կատար ածվի
նաև մեր նկատմամբ: Միստր էրնշտուն, իմ կարծիքով: Ինչք
Ցոնան է. ես նրա խցիկի դռան բռնակը շարժեցի, որպեսզի
համողվեմ՝ կենդանի՞ է, թե՞ ոչ: Նա պատասխանեց բավա-
կանին լսելի ձայնով և այն էլ այնպիսի տոնով, որ ստիպեց
Զոզեֆին առաջվանից ավելի բարձրաձայն աղերսել աստծուն,
որ խիստ տարբերություն դրվի մեզ նման անմեղների և իր
տիրոջ նման մեղավորների միջև: Մի քսան ռուպեից սրտն
անցավ՝ անվնաս թողնելով մեզ բոլորիս, բացի Քեթիից, որը
թրջվել էր մինչև ոսկորները, որովհետև համառորեն հրա-
ժարվում էր մտնել ապաստարան, կանգնած էր գլխարաց,
առանց շալի. ջուրն առատորեն ներծծվել էր նրա վարսերի
ու շորերի մեջ:

Նա ներս եկավ, ամբողջովին թրջված, պառկեց բազմոցի
վրա, երեսը շրջեց դեպի թիկնակը և ձեռքի ափով ծածկեց
գեմքը:

— Դե, բավ է, միսս, — դիպչելով նրա ուսին, բացական-
չեցի ես. — մի՞թե ուզում եք այդ ձևով մեռնել. Գիտե՞ք ժամը
քանիսն է: Տասներկուսն անց է կես: Գնացեք պառկեք:
Այլևս միտք չունի սպասել այդ խելառ տղային, նա հիմա
գնացած կլինի Գիմմերթըն և կպիշերի այնտեղ: Ենթադրել
է, որ մենք մինչև ուշ գիշեր նստած չենք սպասի իրեն, երևի
կարծում է, որ միայն միստր Հինզլին քնած չի լինի, իսկ
ինքը շէր ուզենա, որ դուռը նա բաց անի:

— Ոչ, ոչ, ոչ մի Գիմմերթըն էլ չի գնացել, — ասաց Զո-
զեֆը: — Ենթադրություններ մի արեք, վեր ընկած պառկած
է ճահճի խորքում: Դա արժանի պատիժ է, և ես կկամենայի,
միսս, որ դուք հաշվի առնեիք այդ նախազգուշացումը: Եկեք
շնորհակալ լինենք բարձրալից այս ամենի համար: Ամեն
ինչ լավ է դասավորվում բոլոր նրանց համար, ովքեր նշված,
ընտրված են տիրոջ կողմից: Գիտե՞ք, թե ինչ է ասված Սուրբ
գրքում:

Եվ նա սկսեց Սուրբ գրքից մի քանի քաղվածքներ բերել՝

ցույց տալով, թե որ գլխում և որ ոտանավորի մեջ կարելի է դրանք դնել: Իզուր փորձեցի խնդրել կամակոր աղջկան, որ վերկենա, հանի թրջված զգեստը: Թողեցի երկուսին էլ՝ քարոզ կարդացողին և սառչելուց դողացող Քեթրին, փոքրիկ Հերթընի հետ գնացի քնելու: Նա անմիջապես քնեց, ասես բոլորն էլ իր շուրջը վաղուց քուն էին մտել:

Ես լսում էի, թե ինչպես Զոգեֆը դեռ երկար շարունակում էր կարդալ, հետո լսեցի աստիճաններով բարձրացող դանգաղ քայլերի ձայնը, և շուտով քունս տարավ:

Երբ առավոտյան սովորականից մի փոքր ուշ ներքև իջա, փեղկերի արանքից ներս թափանցող արևի ճառագայթների լույսի տակ տեսա միսս Քեթրինին, որը դեռ նստած էր կրակի մոտ: Տան մուտքի դուռն էլ դեռ մնում էր լայն բաց արած, և լույսը թափանցում էր ներս: Հինդլին դուրս էր եկել, կանգնել էր խոհանոցի օջախի մոտ՝ նիհարած ու քնկոտ տեսքով:

— Ի՞նչ է պատահել, Քեթի,— ասում էր նա, երբ ես ներս մտա: Թրջված շան լակոտի պես մռայլ տեսք ունես, ինչո՞ւ ես այդպես թաց ու դժգույն, աղջիկ:

— Թրջվեցի,— ոչ սիրով պատասխանեց նա:— Մրսում եմ. ահա բոլորը:

— Օ՛հ, չարաճճի աղջիկ է,— բղավեցի ես՝ նկատելով, որ տերը միանգամայն զպաստ է:— Երեկ երեկոյան նա բնկավ հորդառատ անձրևի տակ և ամբողջ գիշեր մնաց այդպես նստած, և չկարողացա համոզել նրան, որ տեղից շարժվի:

Միսոր էրնշոուն ապշած նայում էր մեզ:

— Ամբողջ գիշեր...— կրկնեց նա:— Ի՞նչն էր նրան այդ տեղ պահել: Մի՞թե ամպրոպի ահը: Բայց այն արդեն մի քանի ժամ է, ինչ դադարել է:

Մեզնից ոչ մեկը չէր ուզում խոսել Հիթքլիֆի բացակայության մասին, քանի դեռ կարելի էր թաքցնել, ուստի պատասխանեցի, որ չգիտեմ, թե ինչ փշեց նրա խելքին, ամբողջ գիշեր այդպես նստած մնաց: Քեթրինն էլ ոչինչ չասաց:

Առավոտը թարմ էր ու սառը: Բաց արի լուսամուտը, այդու անուշ բուրմունքը իսկույն հեղեղեց սենյակը, բայց Քեթրինը բորբոքված դիմեց ինձ:

— Էլլեն, պատուհանը ծածկիր: Առանց այդ էլ մրսում եմ:— Նրա ատամներն սկսեցին շխշխկալ, և ամբողջությամբ

կուշ գալով ավելի ևս մոտեցավ գրեթե մարող կրակամոխիր-ներին:

— Նա հիվանդ է,— ասաց Հինդլին, շոշափելով աղջկա զարկերակը,— երևի հենց դրա համար էլ չէր ուզում պառկել: Գրո՞ղը տանի: Ես այլևս չեմ կամենում տանջվիլ ձեր հիվանդութունների պատճառով: Ի՞նչը քեզ քշեց անձրևի տակ:

— Սովորականի պես տղաների հետևից վազվզելը,— օգտվելով մեր անվճռականութունից, կոնչաց Ջոզեֆը, որ ազատութուն տա իր շար լեզվին:

— Եթե ձեր տեղը լինեի, տեր, նրանց բուրբի առաջ դռները պինդ կփակեի՝ հանգիստ ու սուսուփուս: Դեռ չի եղել մի օր, որ դուք գնացած լինեք և այդ սորամուտ կինթընը շտողոսկի այստեղ, իսկ միսս Նելլին լա՛վն է, ինչպե՛ս չէ. խոհանոցում նստած հսկում է, թե երբ կվերադառնաք, և հենց որ դուք ներս եք մտնում մի դռնից, նա ծլկում է մի այլ դռնից, իսկ հետո մեր ազնվաբարո լեզին ինքն է վազում իր պաշտածի հետևից: Ավելի հարմար է կես գիշերին այդպես աննկատ թափառել դաշտերում այդ վարջելի սատանա, բոշա Հիթքլիֆի հետ. նրանք էլ կարծում են. կույր եմ, բայց ես կույր չեմ, բուրբովին. տեսա, թե ինչպես երիտասարդ կինթընը եկավ և գնաց, տեսա քեզ (ուղիղ դիմելով ինձ), թե ինչպես դու, նենգ, շար վճուկ, սկզվեցիր տուն, հենց որ ճանապարհին լավեց տիրոջ նժույգի ոտքերի դոփյունը:

— Լո՛ի՛ր, շարախոս,— զոռաց Քեթրինը,— զրպարտանք չեմ հանդուրժի, և էդգար կինթընը երեկ պատահաբար եկավ, Հինդլի: Ես ինքս նրան ասացի, որ թողնի հեռանա, որովհետև գիտեի, որ դու չէիր ցանկանա հանդիպել նրան:

— Դու, իհարկե, ստում ես, Քեթի,— պատասխանեց եղբայրը,— դու չափազանց միամիտ ես, բայց հիմա թողնենք կինթընին: Ասա, երեկ գիշեր չե՞ս հանդիպել Հիթքլիֆին: Ծիշտն առա: Մի վախենա, չես վնասի նրան, թեպետ ատում եմ նրան, ինչպես միշտ, բայց նա ինձ վերջերս մի լավութուն է արել, խիղճս թույլ չի տա, որ նրա գլուխը պոկեմ, և որպեսզի այդ բանը չկատարվի, ես հենց այս առավոտ նրան կուղարկեմ աշխատանքի, և երբ նա գնա, խորհուրդ

եմ յալիս հնարամիտ լինել. տես, տրամադրությունս
փշացնես:

— Այդ գիշեր ես Հիթքլիֆին շնամ տեսել,— պատասխա-
նեց Քլեթրինը դառնորեն լաց լինելով,— և եթե նրան տանից
դուրս անես, ես կգնամ նրա հետ: Բայց դա, հավանաբար,
քեզ չհաջողվի. նա երևի արդեն գնացել է:— Այստեղ նա
պոռթկաց և անզուսպ սկսեց արտասվել, և նրա մնացած
բառերը հնարավոր չէր հասկանալ:

Հինդլին արհամարհական պարսավանքի մի ամբողջ հե-
ղեղ թափեց նրա գլխին և հրամայեց անմիջապես գնալ իր
սենյակը, կամ էլ դատարկ տեղը լաց շլինել: Ծս նրան ստի-
պեցի հնազանդվել, և երբեք չնմ մոռանա, թե Քլեթին ինչ տե-
սարան սարքեց, երբ մենք մտանք նրա սենյակը: Ծս սար-
սափեցի: Ինձ թվաց, թե նա խելագարվում է, խնդրեցի Ջո-
զեֆին, որ վազի բժշկի հետևից:

Քլեթրինն սկսեց զառանցել: Միտոր Քեննեթը հենց յա-
յեց նրան, ասաց, որ աղջիկը վտանգավոր հիվանդ է, տենդ
ունի:

Բժիշկը արյուն առավ և ինձ ասաց, որ նրան կերակրեմ
թանով ու ոսպի ապուրով, և ուշադիր լինեմ, որ աստիճան-
ներից կամ լուսամուտից իրեն ներքև շոցի: Հետո նա գնաց,
որովհետև բավականին շատ աննիքներ ունի ծխում, ուր մի
կոտակից մյուսը գնալու համար սովորաբար երկուսից-
երեք մղոն ճանապարհ էր կտրում:

Չնմ կարող ասել, որ ես լավ հիվանդապահ էի, իսկ Ջո-
զեֆն ու մեր տերը՝ ինձնից ավելի լավ չէին, և թեև մեր հի-
վանդը անտանելի էր՝ ու կամակոր, ինչպես սովորաբար լի-
նում են հիվանդները, բայց նա դիմացավ:

Պառավ միսիս Լինթընը, իհարկե, մի քանի անգամ այցի
եկավ, ամեն ինչ տանը կարգավորեց. կշտամբում էր, մեզ
բոլորիս կարգադրություններ անում, իսկ երբ Քլեթրինը
սկսեց ապաքինվել, պնդեց, որ նա տեղափոխվի Կեննեթների
ազարակատուն, և մենք բոլորս անշափ ուրախացանք, որ
պիտի ազատվենք նրանից: Բայց խեղճ կնոջը ծանր հատու-
ցում էր սպասվում իր արած բարության համար. նա և ամու-
սինը վարակվեցին տենդով և մի քանի օրում մեկը մյուսի
հետևից վախճանվեցին:

Մեր երիտասարդ լեզին վերադարձավ մեզ մոտ նախկինից էլ ավելի հանդուգն, ավելի դյուրաբորբոք ու ամբարտավան: Փոթորկախառն անձրևոտ երեկոյից հետո Հիթքլիֆի մասին մենք այլևս ոչինչ չլսեցինք: Մի օր, երբ Քեթին ինձ շատ խիստ ջղայնացրեց, ես դժբախտություն ունեցա ասելու, որ Հիթքլիֆի անհետացման մեջ հենց ինքն է մեղավոր. և, իրոք, այդպես էլ էր, նա ինքն էլ լավ գիտեր այդ: Սկսած այդ օրվանից, նա մի քանի ամիս իր կապերը խզեց ինձ հետ. ինձ դիմում էր միայն որպես աղախինի: Զոզեֆն էլ ենթարկվեց բանադրանքի, բայց նա, միևնույն է, իր մըտքերն արտահայտում, խրատներ էր կարդում, կարծես Քեթրինը մի փոքրիկ աղջիկ էր նրա համար. մինչդեռ նա իրեն համարում էր մեծահասակ կին՝ մեր տերն ու տիրականը, և կարծում էր, թե վերջին հիվանդությունից հետո նա իրավունք ուներ պահանջելու հարգալից վերաբերմունք իր նկատմամբ: Բժիշկն ասել էր, որ նա երկար շի դիմանա, եթե շարունակ հակաճառենք, պետք է զիջել նրան: Եթե մեղնից որևէ մեկը համարձակվում էր բնդիմանալ և վեճի բռնվել հետը. նրա աչքին դառնում էր գրեթե մարդասպան:

Քեթին իրեն հեռու էր պահում միասոր էրնշուուից ու նրա ընկերներից: Քեննեթի խորհուրդներից և աղջկա մուլեգին պոթկումներով ավարտվող հաճախակի կրկնվող նոպաներից լրջորեն վախեցած, և զբայրը քուշը թույլ էր տալիս այն ամենը, ինչ նա պահանջում էր և ընդհանրապես խուսափում էր Քեթինի մուլեգին բնավորութունը գրգռելուց: Հինգլին շափից ավելի ներողամտությամբ էր վերաբերվում նրա քմահաճույքներին՝ և դա ոչ թե սիրելուց, այլ հպարտությունից դրդված: Նա ի սրտե ցանկանում էր, որ քույրը միանալով Լինթրեններին, պատիվ բերի իր ընտանիքին, և քանի դեռ Քեթին անձնապես չէր դիպչում եզրորր, նա թույլ էր տալիս քրոջը սարուկների ոտնատակ տալ մեզ. նրա համար միևնույն էր:

Հոգար Լինթրենը, ինչպես նախկինում պատահել է շատերի հետ և դեռ հետագայում էլ կպատահի, հմայված էր Քեթիով և իրեն աշխարհի ամենաերջանիկ մարդը համարեց այն օրը, երբ նրան տարավ Գիմմերթլնի մատուռը՝ իր հոր մահից երեք տարի հետո:

Հակառակ իմ ցանկության, ինձ համոզեցին թողնել Մոլի-
գին հողմերի դարավանդը և ուղեկցել նորահարսին այստեղ:
Փոքրիկ Հերթընը այն ժամանակ մոտ հինգ տարեկան էր, և
ես հենց նոր էի սկսել նրան տառերը սովորեցնել: Երեխայից
բաժանվելը ծանր էր ինձ համար, բայց Քեթրինի արցունք-
ներն ավելի զորավոր էին, քան մերը: Երբ հրաժարվեցի հե-
տը գնալ, և երբ նա տեսավ, որ պաղատանքները ինձ վրա
չեն ազդում, ողբալով դիմեց ամուսնուն և եղբորը: Առաջինը
ինձ առաջարկեց առատաձեռն ոռճիկ, երկրորդը՝ հրամայեց
հավաքել իրերը, ասելով, որ հիմա է՛լ չի ցանկանում տանը
կին ունենալ, երբ տիրուհի չկա, իսկ ինչ վերաբերում է Հեր-
թընին, մի որոշ ժամանակ հետո ծխատեր քահանան նրան
կվերցնի իր մոտ: Այնպես, որ ինձ մնում էր միայն մեկ
ընտրություն՝ անել այն, ինչ հրամայվում էր: Ես ասացի
տանտիրոջը, որ նա անից զուրս արեց բոլոր հաճելի մարդ-
կանց միայն նրա համար, որպեսզի մի փոքր ավելի շուտ
մոտեցնի իր կործանումը, համբուրեցի Հերթընին, հրաժեշտ
տվեցի, և այդ պահից սկսած նա ինձ համար դարձավ մի
օտարական: Շատ տարօրինակ է այդպես մտածելը, բայց չեմ
կասկածում, որ նա լիովին մոռացել է էլլեն Դինին, մոռացել
է, թե ինչպես մի ժամանակ նա իր համար ամեն ինչից բարձր
էր աշխարհում, ինչպես և ինքը նրա համար:

Իր պատմության այդ տեղում տնտեսուհին հայացքը
պատահաբար զցեց բուխարու վերևի ժամացույցին և ապ-
շեց, երբ նկատեց, որ սլաքը ցույց էր տալիս մեկն անց կես:
Նա լսել անգամ չէր ուզում, որ մի վայրկյան ավել մնա, և,
ճիշտն ասած, ևս ինքս էլ ղեմ չէի, որ նրա պատմության շա-
րունակությունը հետաձգվի: Երբ նա գնաց հանգստանալու,
ես էլ մի երկու ժամ խորհելուց հետո, որոշեցի նույնպես
շունչ առնել և հանգստանալ՝ շնայած գլխիս ու մարմնիս
տանջալից հոգնածությունը:

Ճգնավոր կյանքի սքանչելի՛ նախարան: Չորս շաբաթվա տառապանք, ցնցում, հիվանդություն: Ա՛խ այդ ցրտաշունչ հողմերը, շարազետ հյուսիսային երկինքը, անանցանելի ճանապարհները, գյուղական դանդաղկոտ վիրաբույժները, ա՛խ մարդկային այդ խղճուկ դեմքերը, և ամենավատը, Քեննեթի այդ սարսափելի ակնարկներն այն մասին, որ մինչև գարուն ես դժվար թե կարողանամ դուան շեմից դուրս գալ:

Միստր Հիթքլիֆը հենց նոր ինձ պատվեց իր այցելությամբ: Մոտ մի շաբաթ սուաջ ինձ առաջարկեց մի զույգ կաքավ՝ սեզոնի վերջին զույգը: Սինլբորի մեկը: Իմ հիվանդության մեջ նա այնքան էլ անմեղ չէ. ես մեծ ցանկություն ունեի այդ բանը ասելու նրան: Բայց, ավա՛ղ, ինչպես կարող էի վիրավորել այնքան դիժասիրտ մի մարդու, որը մի ամբողջ ժամ նստեց մահճակալիս կողքին և ոչ մի խոսք չսսաց դեղահաբերի, հեղուկ դեղերի, սպեղանիների և տզրուկների մասին:

Դա միանգամայն թեթևացրեց իմ վիճակը: Շատ թույլ եմ, կարգալ դեռ չեմ կարողանում, բայց հաճելի կլիներ զբաղվել որևէ հետաքրքիր բանով: Իսկ ինչո՞ւ չկանչեմ միսիս Դինին, որ ավարտի իր պատմությունը: Գլխավոր դեպքերը կարող եմ վերհիշել մինչև այն օրը, երբ նա տեղափոխվեց այստեղ: Այո, հիշում եմ՝ նրա հերոսը փախավ, և երեք տարի նրանից ոչ մի լուր չկար, իսկ հերոսուհին ամուսնացավ. զանգը կխփեմ, նա կուրախանա, երբ տեսնի, որ ես ի վիճակի եմ ուրախ-զվարթ զրույց անելու:

Միսիս Դինը եկավ:

— Դեռ քսան րուպե կա, նրը, որ դեղ ընդունեք,— սկսեց նա:

— Թող կորչի դեղը,— պատասխանեցի ես,— ուզում եմ, որ դուք...

— Բժիշկն ասում է, որ այլևս դեղ չընդունեք:

— Ուրախությամբ չեմ ընդունի: Մի ընդհատեք ինձ: Եկեք նստեք մոտս: Ձեռքներդ հեռու պահեք սրվակների այդ դառնահամ փալանգից: Հանեք գրպանից ձեր ձեռագործը... այդպես, լա՛վ է... այժմ շաղունակեք միստր Հիթքլիֆի պատ-

մությունն այնտեղից, որտեղ ընդհատել էիք և պատմեք մինչև այսօրվա օրը: Արդո՞ք ավարտեց կրթությունը մայր ցամաքում և վերադարձավ որպես ջենտլմեն կամ որպես թոշակառու, ընդունվեց կոլեջ, կամ փախավ Ամերիկա, և այնտեղ, թափելով իր նոր հայրենակիցների արյունը, արժանացավ մեծարանքի, թե՞ Անգլիայի մեծ ճանապարհներին շատ շուտ ձեռք բերեց կարողություն:

— Հնարավոր է, որ փոքր ի շատե փորձեր կատարած լինի այդ բոլոր բնագավառներում, միստր Լոքվուդ, բայց դրանցից և ոչ մեկը չեմ կարող երաշխավորել: Արդեն ասացի, որ չգիտեմ, թե ինչ ձևով փուլ վաստակեց, ոչ էլ գիտեմ, թե ինչ միջոցներով նա դուրս եկավ վայրագ տգիտությունից, որի մեջ խրվել էր, բայց ձեր թույլտվությամբ կշարունակեմ ինչպես կարող եմ, եթե ենթադրում եք, որ դա կզվարճացնի ձեզ և չի հոգնեցնի: Լա՞վ եք զգում այսօր:

— Բավական լավ:

— Հաճելի նորություն է:

Եվ այսպես, միսս Քեթրինի հետ եկա Կեռնեխների ագարակատուն. և, ի հաճո իմ հիասթափության, Քեթրինը իրեն պահում էր շատ ավելի լավ, քան ես կարող էի ակնկալել: Թվում էր, թե նա գրեթե չափից ավելի սիրեց միստր Լինթընին. նույնիսկ նրա քրոջ հանդեպ ցուցաբերում էր շատ սիրալիր վերաբերմունք: Ծրանք երկուսն էլ, իհարկե, շատ ուշադիր էին Քեթրինի նկատմամբ: Ոչ թե փուշն էր հակվում ցախկեռասի կոմձըր, այլ ցախկեռասն էր փաթաթվում փշին: Այստեղ փոխադարձ դիջում չկար: Քեթրինը չէր հնազանդվում, իսկ մյուսները գիջում էին. ո՞վ կարող էր վատ և շարամիտ լինել, եթե չկար հակադրություն, չկար անտարբերություն: Ես նկատում էի, որ միստր Էդգարը սաստիկ վախենում էր, երբ նեղացնում էին իր կնոջը: Նա այդ բանը թաքցնում էր նրանից, բայց եթե լսեր կնոջը տված իմ սուր պատասխանը կամ էլ տեսներ, որ ծառաներից որևէ մեկը, լսելով տիկնոջ տիրական հրամանը, մոռալվում է, իր անհանգստությունը նա արտահայտում էր խոժոռ նայվածքով, սակայն, երբեք չէր մթազնում, եթե գործը վերաբերում էր իր անձին: Նա շատ հաճախ հանդիմանում էր ինձ իմ անհնազանդության համար, հավատացնում էր, որ դանակի

հարվածից էլ տանջալից է իր համար կնոջը տեսնել վրդովված վիճակում:

Որպեսզի շվտացնեմ իմ բարի տիրոջը, ես սովորեցի զնպել իմ վիրավորվածությունը. և կես տարի վառողը ավազի պես մնում էր անվնաս, որովհետև կրակ չէին մոտեցնում, որ պայթի: Քեթրինը երբեմն պարուրվում էր մռայլության ու լռության շղարշով. այդպիսի պահերին լռակցաց էր դառնում և ամուսինը, այդ երևույթները վերագրում էր կնոջ վտանգավոր հիվանդության հետևանքով նրա հոգեկանում առաջացած փոփոխություններին, որովհետև առաջ երբեք չէր նկատել նրա ոգու ընկճված վիճակը: Երբ արևի լույսը նորից շողում էր, պայծառանում էր և նա: Կարծում եմ, հաստատ կարող եմ ասել՝ նրանք իսկապես գտնվում էին խոր ու հարաձուռ երջանկության մեջ:

Այդ երջանկությունը վերջացավ: Դե, ինչ արած, ստիպված ենք լինում վաղ թե ուշ հիշել մեր մասին. մեղմաբար ու մեծահոգի մարդն է, որ սիրում է իր հսը ավելի մեծ իրավունքով, քան իշխանատենչը: Նրանց երջանկությունը հասավ իր վախճանին, երբ հանգամանքները հարկադրեցին յուրաքանչյուրին դալ, որ մեկի հետաքրքրությունների ոլորտը մյուսի խոհերի դիտավոր առարկան չէ: Սեպտեմբերյան մի մեղմ երեկո, պարտեզից տուն էի գնում իմ հավաքած խընձորներով լի ծանր զամբյուղը ձեռքիս: Մութն արդեն պատել էր, լուսինը նայում էր բակի բարձր պատի վերևից, և անորոշ ստվերները թաքնվում էին շենքի բազմաթիվ ելուստների անկյուններում: Բեռս դրի խոհանոցի դռան առջևի աստիճանին, նստեցի, որ հանգստանամ և մի փոքր էլ մեղմ ու անուշ օդ շնչեմ: Մեջքս մուտքին արած նայում էի լուսնին, երբ հետևում հնչեց մի ձայն:

— Նեյլի, այդ դո՞ւ ես:

Դա օտարերկրացու առողանությունամբ ցածր ձայն էր, բայց այն ձևով, ինչ ձևով արտասանվեց իմ անունը, ձայնը ինձ ծանոթ թվաց: Ծս վախեցած շուռ եկա, որ տեսնեմ, թե խոսողն ով է, որովհետև դուռը կողպած էր, և ինձ մոտեցող ոչ մի մարդ չէր երևում:

Ինչ-որ բան շարժվեց առմուտքի ծածկոցի տակ, և, երբ ավելի մոտեցավ, ես տեսա թուխ դեմքով և թուխ մազերով

սև զգեստ հագած մի բարձրահասակ մարդ: Նա դռան վրա հենվել, ձեռքով բռնել էր մղլակը, ասես ուզում էր դուռը բաց անել ու ներս անցնել:

— Ո՞վ կարող է լինել,— մտածեցի ես,— միստր էրընշո՞ւն: Օ՛, ոչ, դա նրա ձայնը չէր:

— Մի ամբողջ ժամ այստեղ սպասում եմ,— նորից սկսեց նա, մինչ ես շարունակում էի տպաշատ հայացքով նայել նրան,— այդ ամբողջ ժամանակ շուրջն ամեն ինչ մահվան պես լուռ էր: Չէի համարձակվում ներս մտնել: Չե՞ս ճանաչում ինձ: Հապտ մի լուվ նայիր, ես օտարական չեմ:

Մի ճառագայթ ընկավ նրա դեմքին. դեղնավուն այտերը կիսով չափ պատած էին սև այտամորուքով, հոնքերը կիտած էին, խոր ընկած աչքերն անսովոր էին: Հիշեցի այդ աչքերը:

— Ի՞նչ,— ճշացի ես,— մի՞թե ուրիշ աշխարհից այցի եկած մարդ է սա, ապշած, ձեռքերով պաշտպանեցի ինձ:— Ի՞նչ, դու վերադարձա՞ր: Այդ իսկապես դո՞ւ ես, դու ես, չէ՞:

— Այո, Հիթքլիֆը,— պատասխանեց նա, հայացքն իմ վրայից փոխադրելով լուսամուտներին, որոնց մեջ արտացոլվում էին երկու տասնյակ լուսիններ, բայց ներսից ոչ մի լույս չէր երևում:— Տա՞նն է: Որտե՞ղ է նա: Թե՞ ուրախ շես, նեղի. կարիք չկա այդպես շփոթվելու: Այստե՞ղ է նա: Գե, խոսիր: Ես ուզում եմ երկու խոսք ասել նրան՝ քո տիրուհուն: Գնա, հայտնիր, որ մի մարդ Գիմմերթլնից ուզում է տեսնել նրան:

— Ինչպե՞ս նա կընդունի այդ,— բացականչեցի ես:— Ի՞նչ քայլի կդիմի: Ինձ շփոթեցնող անակնկալը կգժվեցնի նրան: Ուրեմն դուք Հիթքլիֆն եք: Բայց ինչքա՞ն եք փոխվել: Ո՛չ, անհասկանալի է: Մառայել եք բանակո՞ւմ:

— Գնա և հայտնիր իմ ասածը,— անհամբերությամբ ընդհատեց նա:— Ես գեհենո՞ւմ եմ, քանի դեռ դու դանգադում ես:

Նա մղլակը բարձրացրեց, և ես ներս մտա, բայց երբ մոտեցա հյուրասենյակին, որտեղ գտնվում էին միստր ու միսիս կինթընները, չէի կարողանում ստիպել ինձ ներս մտնել: Ի վերջո, որոշեցի նրանցից ներողություն խնդրել, հարցնել՝ մոմեր վառեմ, թե ոչ, և բաց արի դուռը:

Նրանք միասին նստած էին լուսամուտի մոտ, բաց արած

Վեղկերը գեւ: էին առել պատին, իսկ պարտեզի ծառերից ու վայրի, կանաչապատ զոռսայգուց այն կողմ փռված էր Գիմմերթընի հովիտը, որը մինչև վերին ծայրը համարյա պարուրվել էր մշուշի մի երկար շերտով (որովհետև մատուռն անցնելուց հետո, ինչպես երևի նկատեցիք, ճահճից հոսող մի առու միանում է լեռնագոգից դեպի հովիտն ի վայր վազող գետակին: Մուկպին հողմերի դարավանդը այդ արծաթագույն մշուշի գոլորշու վրա խոչանում էր վեր, բայց մեր հին տունը շէր երևում, այն գտնվում էր լանջի մյուս կողմում, մի ավելի խոր ընկած տեղում: Սենյակը և այնտեղ նստածները, ինչպես և բնատեսարանը, որին նրանք նայում էին, զարմանալիորեն խաղաղ էին: Ես ակամայից խուսափում էի իմ հանձնարարութունը կատարելուց. մոմերի մասին հարցնելուց հետո այն է, ուզում էի առանց որևէ բան ասելու թողնել հեռանալ, երբ իմ սեփական հիմարության գիտակցումը ստիպեց ինձ վերադառնալ և շնջալ:

— Տիկին, մի մարդ Գիմմերթընից ցանկանում է տեսնել ձեզ:

— Ի՞նչ է ուզում, — հարցրեց միսիս Լինթընը:

— Չհարցրի, — ասացի ես:

— Լավ, վարագույրները ծածկիր, նելլի, — ասաց նա, — և թեյ տուր: Ես իսկույն կվերադառնամ:

Նա դուրս եկավ սենյակից: Միստր էդգարն անփույթ տունով հարցրեց, թե դա ինչ մարդ է:

— Մի մարդ, որին միսիսը շի սպասում, — պատասխանեցի ես: — Հիթքլիֆը, դուք հիշում եք նրան, սըր, նա, որ ապրում էր միստր էրնշոուի տանը:

— Ի՞նչ, այդ բոշա՞ն, գեղջուկի տղա՞ն, — ճշաց նա: — Ինչո՞ւ շասացիք Քեթրինին, թե ով է նա:

— Կամա՞ց: Դուք նրան շպետք է կոչեք այդ անուններով, տեր իմ, — ասացի ես: — Տիկինը շատ կվշտանա, եթե ձեր խոսքերը լսի: Նա քիչ էր մնում մեռնել վշտից, երբ Հիթքլիֆը շքացավ: Ենթադրում եմ, որ նրա վերադարձը տիկնոջ համար տոն կլինի:

Միստր Լինթընը զնաց սենյակի՝ բակի կողմ նայող մյուս լուսամուտի մոտ: Բաց արեց և հակվեց ցած: Նրանք, ըստ

ուսուցիչին, կանգնած էին ներքևում, որովհետև նա անմիջապես գուռաց.

— Այդտեղ մի կանգնիր, սիրելիս: Այդ մարդուն ներս բեր, եթե եկել է գործով:

Շուտով լսեցի մղլակի շխկոցը, և Քեթրինը նետվեց սենյակ շնչահատ ու խելահեղ, շափից ավելի հուղված, որպեսզի ուրախութուն արտահայտեր: Իրոք, նրա դեմքից ավելի շուտ կարելի էր կռահել, որ պատահել է մի սարսափելի աղետ:

— Օհ, էդգա՛ր, էդգա՛ր,— հեալով ճշաց նա՝ արագորեն թևերը գցելով նրա վրա:— էդգար, սիրելի՛ս, Հիթքլիֆը վերադարձել է՝ այդ նա է:— Եվ ամուսնու վրա պինդ գրկեց:

— Կա՛մ, լա՛վ,— ասաց բարկացած ամուսինը:— Դրա համար ինձ մի խեղդի: Նա իմ աչքին երբեք հրաշալի գանձ չի թվացել: Կարիք չկա գժվելու:

— Գիտեմ, դու նրան չէիր սիրում,— պատասխանեց Քեթրինը,— մի փոքր թուլացնելով իր հրճվանքի թափը:— Բայց ի սեր ինձ, դուք հիմա պետք է բարեկամներ լինեք: Կանչե՞մ նրան վերև:

— Այստե՞ղ,— ճշաց էդգարը,— հյուրասենյա՞կ:

— Բա էլ որտե՞ղ,— հարցրեց նա:

Մտնեղած էդգարն ասաց, որ նրա համար խոհանոցն ավելի հարմար տեղ կլինի: Միսիս Լինթընը ամուսնուն շափեց մի անսովոր հայացքով՝ շփտես բարկանում, թե ծածաղում էր նրա բծախնդրության վրա:

— Ո՛չ,— մի պահ հետո ավելացրեց Քեթրինը,— ես չեմ կարող խոհանոցում նստել: Պատրաստիր երկու սեղան, էլլեն, մեկը՝ քո տիրոջ ու միսս Իզաբելլայի համար, որովհետև նրանք ազնվականներ են, իսկ մյուսը՝ Հիթքլիֆի և ինձ համար, քանի որ մենք ավելի ստորին խավերից ենք: Այդպես քեզ հաճելի՞ է, սիրելիս: Թե՞ ասեմ, որ մի այլ տեղ կրակ վառեն մեզ համար: Եթե այդպես է, ցուցմունքներ տուր: Իսկ ես կվազեմ դուրս և կզբաղվեմ իմ հյուրով: Ուրախութունն այնքան մեծ է, որ վախենում եմ՝ այն անիրական լինի:

Նա ուզում էր նորից դուրս նետվել, բայց էդգարը կանգնեցրեց:

— Ասեք թող վերև գա,— ինձ դիմեց նա,— իսկ դու, Քեթրին, աշխատիր ուրախութունդ շհասցնել անհեթեթու-

թյան չափերի. սպասավորները շակտք է տեսնեն, թե դու
ոնց ես փախստական ծառային եղբոր պես ընդունում:

Ես ցած իջա և Հիթթլիֆին գտա անդաստակում կանգնած՝
երևի սպասում էր հրավերի, որ ներս մտնի: Առանց խոսքեր
վատնելու նա հետևեց ինձ և ներկայացավ տիրոջն ու տիրու-
հուն, որոնց շիկնած այտերը մատնում էին նրաց մեջ տեղի
ունեցած տաք խոսակցությունը: Բայց լեզրի դեմքը փայլեց
մի այլ գզացումով, երբ իր բարեկամը երևաց դռան մեջ: Նա
նետվեց առաջ, բռնեց նրա ձեռքերից և տարավ Լինթընի
մոտ, ապա բռնեց Լինթընի դժկամ ձեռքը և դրեց Հիթթլիֆի
ձեռքի մեջ:

Այժմ բուխարու և մոմերի լույսի տակ հյուրը երևաց իր
ամբողջ հասակով մեկ, իսկ ես է՛լ ավելի ապշեցի երբ տեսա,
թե Հիթթլիֆը ինչքան է կերպարանափոխվել: Նա անձել, դար-
ձել է բարձրահասակ, կորովի և վայելչակազմ մի երիտա-
սարդ, որի մոտ իմ տերն ասես մի վտիտ պատանի լիներ:
Նրա կեցվածքը վկայում էր այն մասին, որ նա ծառայել է
բանակում: Դեմքն ուներ տարիքով մարդու արտահայտու-
թյուն, իսկ դիմագծերն ավելի վճռական էին, քան միստր
Լինթընին: Խելացի դեմքը չէր պահպանել նախկին նվաս-
տության և ոչ մի նշան: Կիսաքաղաքակիրթ վայրագությունը
տակավին պահպանվում էր կախ ընկած հոնքերում ու աչ-
քերում, որոնք առլեցուն էին սև կրակով, բայց թափը
կոտրված էր, նույնիսկ արժանապատվություն էր գզացվում
նրա շարժումներում, որոնք կուպիս չէին, բայց այնքան խիստ
էին, որ դրանց նրբագեղ շէիր անվանի:

Իմ տերը զարմացել էր նույնքան, որքան և ես, նույնիսկ
ավելի շատ: Նա մի պահ մնաց շփոթված վիճակում, չգիտեր,
թե ինչ ձևով դիմի այդ գյուղացի տղային, ինչպես անվա-
նել էր նրան: Հիթթլիֆը բաց թողեց նրա նուրբ ձեռքը և,
սառնությամբ նայելով նրան, սպասում էր, թե երբ կսկսի
խոսել:

— Նստեցեք, սըր,— ի վերջո ասաց էդգարը:— Միսիս
Լինթընը, վերհիշելով հին օրերը, ցանկանում էր, որ ես ձեզ
ցույց տամ սրտաբուխ ընդունելություն, և իհարկե, ես գոհ
եմ, երբ իմ արած որևէ գործ նրան հաճույք է պատճառում:

— Ես նույնպես,— պատասխանեց Հիթթլիֆը,— հատկա-

պես, երբ ես այդ բանին հաղորդակից եմ: Նա սխրով մի էր-
կու ժամ կնստեմ ձեզ մոտ:

Նա նստեց ուղիղ Քեթրինի դիմաց, վերջինս անընդհատ
նայում էր նրան, ասես վախենում էր, որ կանհայտանա, եթե
աչքը հեռացնի նրանից: Իսկ Հիթթլիֆը նայում էր նրան ոչ
այնքան հաճախ: Միայն երբեմն մի արագ հայացք էր գցում
նրա վրա, բայց ամեն անգամ նրա հայացքն ավելի վստա-
հորեն արտացոլում էր այն բացահայտ բերկրութունը, որ նա
ըմպում էր Քեթրինի հայացքից:

Նրանք երկուսն էլ այնքան էին կլանված իրենց փոխա-
դարձ ուրախությամբ, որ ոչ մի շփոթվածություն չէին զգում:
Իսկ միատր էդգարը բոլորովին ուրախ չէր: Նա գունատվել
էր զայրույթից. այդ զգացումը հասավ իր գազաթնակետին,
երբ կինը վերկացավ, գորգի վրայով գնաց, նորից բռնեց
Հիթթլիֆի ձեռքերը և սաստիկ հուզված սկսեց ծիծաղել:

— Վաղը դա ինձ երա՞զ կթվա,— ճշաց նա,— չեմ կա-
րող հավատալ, որ ես մի անգամ ևս տեսել եմ քեզ, շփվել
ու խոսել եմ քեզ հետ: Եվ, այդուհանդերձ, դաժա՞ն Հիթթլիֆ,
դու արժանի չես այս սիրալիր ընդունելությունը: Բացակա-
յե՛լ, լռե՛լ երեք տարի և երեք շմտածե՛լ իմ մասին:

— Ես մի փոքր ավելի եմ մտածել քո մասին, քան դու
իմ մասին,— մրմնջաց նա:— Վերջերս լսեցի, որ ամուսնացել
ես, Քեթի: Ներքևում, բակում սպասելիս, ես խորհում էի այն
մասին, որ մի անգամ ևս նայեի քո դեմքին, որի վրա գուցե
կարդամ զարմանք և կեղծ ուրախություն, ապա մաքրեմ իմ
հաշիվները Հինդլիի հետ, իսկ հետո թույլ շտալով, որ օրեն-
քը միջամտի՝ ինքս տեսնեմ իմ ղառաստանը: Քո գրկաբաց
ընդունելությունը այս մտքերը դուրս վանեցին իմ զլխից,
բայց զգուշացիր՝ մի ուրիշ անգամ ինձ շնանդիպես այլ
նայվածքով: Բայց ոչ, դու նորից ինձ դուրս չես անի: Դու,
իրոք, խղճում էիր ինձ, այնպես չէ՞: Դե, պատճառ կար
Դժվարությունք պայքարելով ճանապարհ էի հարթում կյան-
քում, սկսած այն օրից, երբ վերջին անգամ լսեցի քո ձայնը.
և դու պետք է ներես ինձ, որովհետև ես պայքարում էի միայն
քեզ համար:

— Քեթրին, քանի դեռ թեյը չի սառել, խնդրում եմ մո-
տենալ սեղանին,— ընդհատեց կինը՝ աշխատելով պահ-

¹ պանել իր սովորական տոնը և քաղաքավարութեան պատշաճ շափը:— Միստր Հիթքլիֆը պետք է երկար զրոսանք կատարի՝ որտեղ էլ որ գիշերելիս լինի, և ինքս էլ ծարավ եմ:

Քեթրինը նստեց թեյամանի մոտ. զանգի ձայնին եկավ և Իզաբելլան: Աթոռներն առաջ քաշելուց հետո ես դուրս եկա սենյակից:

Թեյը խմեցին տասր րոպեում: Քեթրինը իր բաժակը շրջեց, ոչ կարողացավ ուտել, և ոչ էլ՝ խմել: Հոգարը մի փոքր լցրեց իր պնակի մեջ և հազիվ կարողացավ մեկ-երկու կում անել:

Հյուրը նստեց այդ երեկո մեկ ժամից ավել: Երբ մեկնում էր, ես հարցրի, Գիմմերթը՞ն է գնում:

— Ոչ՝ Մուլեգին հողմերի դարավանդ,— պատասխանեց նա,— միստր էրնշոուն հրավիրեց ինձ, երբ այս առավոտ այցելեցի նրան:

Միստր էրնշոուն հրավիրեց նրան. և նա այցելե՞ց միստր էրնշոուին: Ես վշտագին կշռադատում էի այդ խոսքերը, երբ Հիթքլիֆը արդեն գնացել էր: Չի՞ կեղծում, չի՞ եկել արդյոք այս կողմերը, որ բարեկամութեան դիմակի տակ շարագործութեան կատարի: Լոելլայն խորհրդածում էի ես. սրտիս խորքում նախազգում էի՝ ավելի լավ կլիներ, որ Հիթքլիֆը շերևար այս կողմերում:

Արդեն կես գիշերին սենյակս մտավ միսիս Լինթընը, առաջին թեթև քնից արթնացրեց ինձ, նստեց մահճակալին՝ իմ կողքին և մազերս քաշելով վերկացրեց:

— Չեմ կարողանում քնել, էլլեն,— ասաց նա, ներում խնդրելով:— Ես ուզում եմ որեէ կենդանի էակի հաղորդակից դարձնել իմ երջանկութեանը: Հոգարն անտրամադիր է, որովհետև ես ուրախ եմ մի բանի համար, որը նրան հետաքրքիր չէ. նա բերանը բաց չի անում և եթե բաց էլ է անում, ապա միայն նրա համար, որ դայրացնող հիմարութեաններ դուրս տա: Նրա կարծիքով, եթե կամենում եմ խոսել, ուրեմն դաժան ու եսասեր եմ, երբ ինքը հիվանդ է և քունը տանում է: Նա իրեն միշտ հիվանդ է ձևացնում, եթե որևէ բան իր ուղածի սլեւ չի արվում: Ես մի քանի զովասանական խոսքեր ասացի Հիթքլիֆի հասցեին, նա սկսեց լաց լինել՝ շփտես

դիտացավից, թե տանջալից նախանձից: Այն ժամանակ էս վերկացա և հեռացա:

— Ի՞նչ իմաստ ունի Հիթքլիֆի մասին նրան գովեստի խոսքեր ասել,— պատասխանեցի ես:— Դեռ երեխա ժամանակ նրանք խորշում էին իրարից. Հիթքլիֆն էլ նույնպիսի ատելությամբ կլսեր, եթե գովեստի խոսքեր ասվեին կինթընի հասցեին: Այդպիսին է մարդկային բնույթը: Հանգիստ թողեք միստր կինթընին, եթե շեք ուզում, որ նրանց մեջ սկսվի բացահայտ գժտություն:

— Բայց մի՞թե դա ցույց չի տալիս, որ նա շատ թույլ մարդ է,— համառում էր Քեթրինը:— Ես նախանձ չեմ, երբեք չեմ նեղանում, որ Իզաբելլան ունի վառ դեղին գույնի մազեր, սպիտակ մաշկ, այնքան նրբագեղ ու վայելչակազմ է, որ ամբողջ ընտանիքի ուշքը գնում է նրա համար: Նույնիսկ դու, Նելլի, եթե պատահում է, որ մենք վեճի ենք բռնվում, միշտ էլ նրան ես պաշտպանում, իսկ ես անխոհեմ մոր պես զիջում եմ, նրան անվանում եմ սիրելի աղջիկ, շողոքորթում եմ, մինչև որ մեղմանում, ընկնում է լավ տրամադրության մեջ: Դա հաճույք է պատճառում եղբորը, ես էլ հաճույք եմ զգում, երբ էդգարն այդպես գոհ է: Բայց նրանք շատ նման են իրար՝ երկուսն էլ երես առած երեխաներ են և երեակայում են, որ աշխարհը արարված է միայն իրենց հարմարավետության համար. թեև նրանց նկատմամբ ես ներողամիտ եմ լինում, բայց կարծում եմ, որ խիստ պատիժը կարող էր նրանց բարեփոխել:

— Դուք սխալվում եք, միսիս կինթըն,— ասացի:— Նրանք են ներողամիտ լինում ձեր նկատմամբ, և ես պատկերացնում եմ, թե ինչ կլիներ այստեղ, եթե նրանք ներողամտաբար շվերաբերվեին ձեզ: Դուք երբեմն եք ներողամտաբար վերաբերվում նրանց անցողիկ քմայքներին, քանի դեռ նրանք ձգտում են գուշակել ձեր ամեն մի ցանկությունը: Բայց եթե դուք ընդհարվեք մի որևէ բանի առնչությամբ, որ երկու կողմերի համար էլ հավասարապես արժեքավոր է, նրանք, որոնց դուք անվանում եք թույլեր, կարող են նույնքան համառ լինել, որքան և դուք:

— Եվ մենք կենաց-մահու պայքար կմղենք իրար դեմ, այնպես չէ՞, Նելլի,— ծիծաղելով ասաց նա:— Ոչ, ասում եմ

քեզ: Ես այնքան եմ հավատում Լինթընի սիրույն, որ կարծում եմ, եթե նույնիսկ սպաներ էլ նրան, նա մեռնելուց առաջ ինձ շարիք չէր կամենա:

Ես նրան խորհուրդ տվեցի, որ առավել ևս գնահատի նրա՝ իր նկատմամբ ունեցած սիրո զգացումը:

— Ես գնահատում եմ,— պատասխանեց նա,— բայց նա շպետք է լաց լինի մահն մի դատարկ բանի համար: Դա երեխայություն է: Երբ ասացի, որ Հիթքլիֆը հիմա արժանի է մահն մեկի հարգանքին, և որ մեր շրջանի առաջին ջենտրլմենի համար նրա հետ բարեկամություն հաստատելը պատիվ կհամարվեր, արցունքներ թափելու փոխարեն, նա ինքը պետք է դա ասեր ինձ և ուրախանար ինձ հետ միասին: Նա պետք է ընտելանա Հիթքլիֆին և հնարավոր է, որ սիրի էլ նրան, նկատի ունենալով, որ Հիթքլիֆը նրան շսիրելու պատճառներ ունի. կարծում եմ՝ նա իրեն շատ լավ պահեց:

— Իսկ ի՞նչ եք մտածում նրա Մոլեգին հողմերի դարավանդ գնալու մասին,— հարցրի ես:— Նա, ըստ երևույթին, լիովին վերափոխվել է, դարձել է իսկական քրիստոնյա և բարեկամության ձեռք է մեկնում իր բոլոր թշնամիներին:

— Դա ինքը բացատրեց ինձ,— պատասխանեց միսիս Լինթընը:— Ես էլ եմ ձեզ պես ապշել: Նա ասաց, որ եկել էք, որպեսզի ձեզանից տեղեկություն իմանա իմ մասին, ևնթադրելով, որ դուք դեռ ապրում եք այնտեղ, իսկ Ջոզեֆը այդ մասին հայտնել էր Հինդլիին, որը դուրս էր եկել ու սկսել էր հարցաքննել, թե ինչ էր անում, ինչպես էր ապրում: Վերջի վերջո, նրան ներս էր տարել: Այնտեղ մի քանի հոգի նրատած թուղթ խաղալիս էին եղել. Հիթքլիֆը միացել էր նրանց: Եղբայրս նրան տարվել էր մի որոշ գումար, և տեսնելով, որ նա բավական շատ փող ունի, խնդրել էր, որ երեկոյան դեմ նորից անցներ իր մոտ. Հիթքլիֆը համաձայնել էր:

Հինդլին խելացի ծանոթներ ընտրելու հարցում շափապանց անխոհեմ է: Նա իրեն նեղություն չի տալիս մտածելու, թե արժե՞ արդյոք հավատ ընծայել մի մարդու, որի հետ նա ժամանակին ստորաբար է վարվել: Բայց Հիթքլիֆը պնդում էր, որ նախկինում իրեն հալածողի հետ իր կապերի վերականգնման զլխավոր պատճառը Ագարակատնից ոչ շատ

հետու տեղավորվելու իր ցանկությունն էր, րապեսզի հնարավոր լինի քայլելով գնալ, հասնել տուն, որտեղ մենք ապրում էինք միասին. և, դրա հետ նաև հույս էր փայփայում, որ ես ավելի շատ առիթներ կունենամ իրեն տեսնելու այգտեղ, քան ի վիճակի կլինեի անել այդ, եթե նա հաստատվեր Գիմմերթընում: Նա մտադիր է առատ վարձատրություն առաջարկել դարավանդում ապրելու թույլտվության համար. և, անտարակույս եղբորս ազահությունը կղրդի նրան համաձայնել, որ Հիթթլիֆը ապրի այգտեղ: Նա միշտ էլ անհոգ է եղել, թեև այն, ինչ վերցնում էր մի ձեռքով, վերադարձնում էր մյուսով:

— Դա անշուշտ, մի հրիտասարդ մարդու համար հաճելի՞ չ'այր է,— ասացի ես:— Դուք հետևանքներից շե՞ք վախենում, միսիս Լինթըն:

— Իմ բարեկամի համար՝ ոչ,— պատասխանեց նա:— Նշա պինդ գլուխը նրան հեռու կպահի վտանգից: Մի փոքր վախենում եմ Հինդլիի համար, բայց բարոյական իմաստով նա ավելի վատը չի դառնա, քան կա. հանուն ինձ նրան ֆիզիկական վնաս չեն հասցնի: Այսօրվա երեկոն ինձ հաշտեցրեց աստժո և մարդկանց հետ: Զայրույթով լի ես ըմբոստացել էի նախախնամության դեմ: Օ՛հ, հս համբերությանը շատ խոր վիճշտ եմ տարել, Նելլի: Եթե այդ արարածը իմանար, թե ինչքա՞ն խորն է եղել վիշտս, նա ամոթահար կլիներ և իր դատարկ նեղացկոտությանը շէր մթազնի իմ ուրախությունը: Միայն էդգարին խղճալով է, որ ես միայնակ տանում էի իմ վիշտը: Եթե արտահայտեի ինձ հաճախ հոշոտող տվայտանքը, նա կսովորեր նույնքան ջերմությանը տենչալ, որ վերջ լինի դրան, որքան և ես: Ինչ որ է, վիշտս փարատվեց և ես էդգարից այլևս վրեժ չեմ լուծի նրա անմտության համար. սրանից հետո ես ի վիճակի կլինեմ տոկա՛լ ամեն ինչի համար: Եթե ամենաստոր մարզն անգամ ապտակի ինձ՝ ես ոչ միայն շուռ կտամ մյուս այտս էլ, այլև ներողություն կխնդրեմ, որ նրան համբերությունից հանեցի, և, որպես ապացույց, անմիջապես կգնամ, կհաշտվեմ էդգարի հետ: Դե՛, բարի՛ գիշեր. տեսնում ես, հրեշտա՛կ եմ:

Այդպիսի ինքնագոհ համոզմունքով Քեթրինը մեկուսա-

ցում. Թե ինչպիսի հարցողությունք կատարեց իր որոշումը, հայտնի դարձավ առավոտյան: Միստր Լինթընը ոչ միայն մոռացավ իր դժգոհությունը (թեև Քեթրինի շափեց ավելի աշխուժությունը ասես զեռ ճնշում էր նրան), այլև շահամարձակվեց առարկել, երբ Քեթրինը, իր հետ վերցնելով Իզաբելլային, կեսօրից հետո մեկնեց Մուլգրին հողմերի դարավանդ: Նա իր ամուսնուն հատուցեց այնպիսի ջերմ շոյանքով ու սիրով, որ մեր տունը մի բանի օր իսկական դրախտ էր դարձել: Հետագայում թե տիրոջ և թե ծառաների համար շողում էր հարատև փայլող արևը:

Հիթքլիֆը՝ միստր Հիթքլիֆը, այսուհետ ես նրան այդպես կանվանեմ, սկզբում զգուշությամբ էր այցելում Կեռնելսների ագարակատուն. նա կարծես, ստուգում էր, թե տանտերն ինչպես կվերաբերվեր իր ինքնակոչ այցին: Քեթրինը նույնպես ստիպված էր խոհեմաբար զսպել իր ուրախությունը, երբ ընդունում էր նրան, և Հիթքլիֆը աստիճանաբար իրեն իրավունք վերապահեց հաճախակի երևալ Գիմմերթընում:

Նա մեծ մասամբ պահպանել էր իր զսպվածությունը, որով աչքի էր ընկնում մանկության տարիներին: Դա օգնեց նրան, որ զսպի իր զգացումների ապշեցուցիչ պոռթկումները: Իմ տիրոջ անհանգստությունը թուլացավ, իսկ հետագա դեպքերը ժամանակավորապես փոխեցին այդ անհանգստության ընթացքը:

Տազնապի նոր ազդյուր առաջացավ Իզաբելլա Լինթընի շնախատեսված դժբախտությունից. նա անսպասելի ու անդիմադրելի կրքով տարվեց իրենց տուն մուտք ունեցող հյուրով: Այդ ժամանակ նա տասնութ տարեկան մի հմայիչ երիտասարդ լեզի էր, շարժուձևերը մանկական էին, թեև սրամիտ ու նրբազգաց էր, բայց երբեմն էլ դրսևորում էր խայթոզ ընավորություն, եթե դայրացնում էին: Նրան քնքշորեն սիրող եղբայրը սարսափեց այդ տարօրինակ նախապատվությունից: Մի կողմ թողնելով ընտանիքի համար այդ ստորացուցիչ միությունը անանուն ու անտոհմ մարդու հետ, և այն հնարավոր փաստը, որ Լինթընների սեփականությունը, արական ծառանդների բացակայության դեպքում, կանցնի այդպիսի մի անհատի իշխանության տակ՝ էզգարը

նաև լավ էր հասկանում Հիթքլիֆի խառնվածքը, գիտեր, ու փոխվել էր նրա արտաքին տեսքը, բայց հոգին մնացել էր անփոփոխ: Եվ սոսկում էր այդ հոգուց, այն դաշրացնում էր նրան, և նա խորշում էր, մտածել անգամ չէր ուզում, որ Իզաբելլային հանձնի այդպիսի մեկի ձեռքը:

Նա ավելի շատ նողկանք կղգար, եթե իմանար, որ քրոջ հակումը դեպի Հիթքլիֆը առաջացել էր առանց որևէ թախանձանքի նրա կողմից, և խորացել էր առանց պատասխան զգացմունք առաջացնելու. այն բույսից, երբ էդգարին հայտնի դարձավ քրոջ այդ հակումը, նա ամբողջ մեղքը բարդեց Հիթքլիֆի ու նրա մտացածին պլաններին վրա:

Որոշ ժամանակից սկսած մենք բոլորս նկատում էինք, որ միսս Լինթընը ինչ-որ բանի համար տոշորվում ու տանջվում էր: Նա դարձավ ջղային ու ձանձրալի, շարունակ հարձակվում, վիրավորում էր Քեթրինին, նրա արդեն սպառվող շափավոր համբերությունը ենթարկելով վերահաս վտանգի: Որոշ շափով մենք ներում էինք նրան՝ ամեն ինչ վերագրելով նրա տկարությունը, իսկ նա նվաղում, թոշնում էր մեր աչքերի առաջ: Բայց մի օր, երբ հատկապես դրսևորեց իր կամակորուստները՝ հրաժարվեց նախաճաշից, գանգատվեց, որ ծառաները չեն կատարում իր կարգադրությունները, որ տանտիրուհին իրեն բանի տեղ չի դնում, իսկ էդգարը արհամարհում է իրեն, որ ինքը մրսել է, որովհետև զոները բաց են թողնում, և որ հյուրասենյակի բուխարին ի հեճուկս իրեն հանգցնում ենք, և հարյուրավոր նման անհեթեթ մեղադրանքներ, միսս Լինթընը վճռական տոնով պահանջեց, որ Իզաբելլան անկողին մտնի, և, խիստ պախարակելով՝ սպառնաց, որ կուղարկի բժշկի հետևից:

Քեննեթի անունը հիշատակելիս, Իզաբելլան անմիջապես հայտարարեց, որ ինքը լիովին առողջ է, և որ միայն Քեթրինի բիրտ վերաբերմունքն է իրեն ապերջանիկ դարձնում:

— Ինչպե՞ս կարող ես ասել, որ ես բիրտ եմ, դու երես առած անպետք արարած,— ճշաց այդ անխոհեմ հայտարարությունից ապշած տանտիրուհին:— Դու պարզապես խելքդ թոցրել ես: Ե՞րբ եմ ես կոպիտ եղել՝ դե ասա:

— Երեկ,— հեկեկալով ասաց Իզաբելլան,— և հիմա:

— Երե՛կ,— ասաց հարսը:— Ի՞նչ առիթով:

— Երբ մենք զըրոսնում էինք ցախիների թփուաների շքր-
-ջանում, դու առաջիր, որ ես կարող եմ զըրոսնել որտեղ ուզում
եմ, իսկ դուք միստր Հիթբլիֆի հետ ճեմելով կթայլեք ավելի
հեռու վայրեր:

— Եվ դա քո կարծիքով կոպտութիւնն է,— ասաց Քեթ-
րինը, ծիծաղելով:— Դա բոլորովին էլ չէր նշանակում, որ
քո ընկերակցութիւնը ավելորդ է: Մեզ համար միեւնոյն էր՝
դու մեզ հետ ես, թե ոչ, պարզապէս ենթադրում էի, որ Հիթ-
բլիֆի զրույցները քեզ համար անհետաքրքիր կլինին:

— Օ՛, ոչ,— հեկեկաց ջահել լեդին,— դու քշում էի: Ինձ,
գիտեիր, որ ուզում էի մնալ:

— Սրա խելքը տե՞ղն է,— գիմելով ինձ, հարցրեց միսիս
Լինթընը:— Ծա բառ առ բառ կկրկնեմ մեր իրոսակցութիւնը,
Իզաբելլա, իսկ դու ցույց տուր, թե քեզ համար ինչ հետա-
քրքիր բան կար դրա մեջ:

— Խոսքը զրույցի մասին չէ,— պատասխանեց նա,—
ես ուզում էի լինել...

— Հը՛,— ասաց Քեթրինը՝ տեսնելով, որ նա չի համարձ-
ձակվում շարունակել:

— Նրա կողքին. և շեմ ուզում, որ ինձ միշտ հեռացնեն,—
տաքանալով շարունակում էր նա:— Դու նման ես դեղի վրա-
յի շանը, Քեթի, դու շեռ ուզում, որնէ մեկին սիրեն, բացի
քեզանից:

— Դու անպատկառ փոքրիկ կապիկ ես,— զարմացած
բացականչեց միսիս Լինթընը:— Բայց ես շեմ հավատում
այդ հիմարութեանը: Չի կարող պատահել, որ դու հրապուր-
վես Հիթբլիֆով, նրան համարես հաճելի մի մարդ: Հույժ
ունեմ, որ քեզ սխալ չհասկացա, Իզաբելլա, այո՛:

— Այո, բոլորովին չհասկացար,— պատասխանեց Հիթ-
բլիֆով հափշտակված աղջիկը:— Ծա նրան ավելի շատ եմ
սիրում, քան դու երբեք սիրել ես էդգարին: Նա չէր կարող
չսիրել ինձ, եթե դու նրան այդ բանը թույլ տայիր:

— Նույնիսկ եթե մի ամբողջ թագավորութիւն ինձ տա-
յին, չէի ուզենա քո տեղը լինել,— ընդգծված շեշտով հայ-
տարարեց Քեթրինը և կարծես անկեղծ էր ասում:— Նեւի,
օգնիր ինձ՝ ուզում եմ համոզել նրան, որ հրաժարվի իր այդ
խելացնոր քայլից: Բացատրիր նրան, թե ինչ է իրենից,

ներկայացնում Հիթթլիֆը: Դա մի անտաշ արարած է, գուրկ է նրբազգացությունից ու կուտուրայից, դա քարապատ, վայրի, անջրդի պարապուտ է: Ես ավելի շուտ ձմեռվա կեսին այդ դեղձանիկին պարտեզում ազատ կարձակեի, քան խորհուրդ կտայի քեզ սիրտդ պարգևել նրան: Նրա բնավորության ողբալիորեն անտեղյակ լինելն է, երեխա, որ այդ երազանքին թույլ է տվել սղոսկել քո գլուխը. խնդրում եմ շերեակայել, որ նրա դաժանաբարո արտաքինի տակ թաքնըվում են բարություն և խանդաղատանք: Նա ողորկ ադամանգ, մարգարիտ պարունակող ոստրէ չէ՝ նա գեղջուկ է, նա վայրագ, անգութ, գայլամուտ մարդ է: Ես երբեք նրան չեմ ասում... Մի դիպչիր այս կամ այն թշնամուն, որովհետև նրանց վնաս պատճառելը անազնիվ ու դաժան բան կլինի», ասում եմ՝ «նրանց հանգիստ թող, որովհետև ես չեմ կամենում, որ նրանց վիրավորես»: Նա ճնճղուկի ձվի պես կճղմի քեզ, Իզաբելլա, եթե տեսնի, որ դու իր համար մի տաղտկալի բեռ ես: Ես գիտեմ՝ նա չի կարող սիրել լիթնթըններից և ոչ մեկին, այդուհանդերձ, նա միանգամայն հնարավոր կհամարի ամուսնանալ քո հարստության հետ ի սեր իր գալիք ակնկալումների: Ազահությունը նրա գլխավոր արատն է: Այդպիսին եմ նրան պատկերացնում, իսկ ես նրա բարեկամն եմ, այնպես որ, եթե նա լրջորեն մտածի քեզ իր ցանցը պցել, ես թերևս պապանձվեմ և թույլ տամ, որ դու նրա ծուղակն ընկնես:

Միսս լիթնթընը իր հարսին նայեց դայրալից հայացքով:

— Ամո՞թ է, ամո՞թ,— ջղայնացած կրկնեց նա,— դու քսան թշնամուց էլ վատ ես, դո՛ւ, շար բարեկամ:

— Ա՛հ, ուրեմն ինձ չե՞ս հավատում,— ասաց Քեթրինը,— դու կարծում ես, ես այդ ասում եմ շարամիտ եսամոլությունից դրզված:

— Համոզված եմ,— պատասխանեց Իզաբելլան,— և ես սարսուռ եմ զգում, երբ մտածում եմ այդ մասին:

— Կա՛վ,— ճշաց Քեթինը:— Արա, ինչպես ուզում ես, եթե այդպես կամակոր ես. ես իմն ասացի, բայց փաստարկներն անզոր են քո անամոթ լկտիության առաջ:

— Ծվ ես պետք է տառապեմ այդ եսամոլի պատճառով,—

հէկէկաց Իզարելւան, երբ միսիս Լինթընը դուրս եկավ սենյակից:— Բոլորը, բոլորը դեմ են ինձ. նա խորտակեց իմ միակ սփոփանքը: Բայց Քեթին ստեր ասաց, այնպես չէ՞: Միստր Հիթքլիֆը սատանա չէ: Նա ազնիվ ու հավատարիմ հոգի ունի, այլապես ինչպես կարող էր հիշել Քեթիին:

— Դուրս վանեք Հիթքլիֆին ձեր գլխից, միսս,— ասացի ես:— Նա բարի պտուղ չէ, ձեզ զույգ չէ. միսիս Լինթընը խիստ խոսեց, սակայն, ես չեմ կարող առարկել նրան: Նա ինձանից կամ մեկ ուրիշից ավելի լավ գիտի նրա հոգին, երբեք չի սկսի նրան ավելի վատ գույներով նկարագրել, քան կա: Ազնիվ մարդիկ չեն թաքցնում իրենց գործերը: Իսկ ինչպե՞ս է նա ապրել: Ինչպե՞ս հարստացավ, ինչո՞ւ տեղավորվեց հենց Մուլեգին հողմերի դարավանդում, մի մարդու տանը, որին ատում է: Ասում են, որ նրա երեւալուց հետո միստր էրնշոուն քանի գնում ավելի ու ավելի է վատանում: Նրանք ամբողջ գիշեր միասին են նստում, Հինգլին նրանից պարտք է վերցնում իր հողերի դիմաց և ոչինչ չի անում, բացի այն, որ խաղում է ու խմում: Մի շաբաթ առաջ էր, որ լսեցի՝ Զոզեֆը պատմեց, որին հանդիպեցի Գիմմերթընում. «Նելլի,— ասաց նա,— այնքան ժողովուրդ է լցվել, որ հիմա ոչ մի դատական քննիչ մեզ հանգիստ չի թողնի: Քիչ էր մնացել, որ մեկի մատնեբը կտրվեին, երբ ուզում էր բռնել մյուսին, որը փորձում էր մորթել ինքն իրեն: Տանտերը, չէ որ պատրաստվում էր հանդես գալ դատական նստաշրջանի առաջ: Ոչ աշխարհի դատարանից է վախենում, ո՛չ Պողոսից, ո՛չ Պետրոսից, ո՛չ Հովհաննեսից, ո՛չ Մաթևոսից՝ նրանցից և ոչ մեկից. նա այդպիսին չէ: Նա բացահայտ կերպով ուզում է... տենչում է կանգնել նրանց առաջ իր լկտի կերպարանքով, և քո այդ սիրելի Հիթքլիֆը, կարծում ես, մի բարի պտուղ է: Նա, ինչպես և ամեն ոք, կարող է ծիծաղել, իսկ սատանան իր խաղն է խաղում: Երբ գալիս է ագարակատուն, մի՞թե չի պատմում, թե որքան լավ է մեզ մոտ: Ընդունված կարգ է՝ մեզ մոտ վեր են կենում արշալույսին՝ վեգ, օդի, փակված փեղկեր, վառած մոմեր մինչև կեսօր, իսկ կեսօրին մեր այս տխմարը գնում է իր ննջասենյակը և այնպիսի անհեթեթ բաներ է դուրս տալիս, այնպես է հայհոյում սատանի անունից, որ կարգին մարդիկ ամոթից փակում են իրենց ականջ-

նկրը, իսկ այդ թշվառականին ինչ՝ հաջվում է ըր փռերը ուտում, քնում, բակից դուրս գալիս, գնում բամբասելու հարևանի կնոջ հետ: Նա, անշուշտ, պատմում է տիկին Քեթրինին, թե ինչպես են նրա հոր ոսկիները հոսում իր գրպանը և թե ինչպես է նրա հոր որդին լայն ճանապարհով գլորվում գեպի դժոխք, իսկ ինքը նետվում է առաջ, որ դժոխքի դռները բաց անի նրա համար: Ինչ խոսք, միսս՝ Լինթըն, Ջոզեֆը ծեր սրիկա է, բայց ստախոս չէ, և եթե նրա պատմածները Հիթքլիֆի վարքի մասին ճիշտ են, ապա դուք երբևէ կցանկանա՞ք այդպիսի ամուսին ունենալ:

— Դուք էլ եք մյուսնորի կարծիքին, էլլեն,— պատասխանեց նա:— Ես լսել անգամ չեմ ուզում ձեր շարախոսությունները: Ինչ շարակամ եք, եթե ուզում եք համոզել ինձ, որ աշխարհում երջանկություն ասած բանը գոյություն չունի:

Արդյոք վերջ կտա՞ր Իզաբելլան իր երևակայական մտորումներին, եթե թողնվեր իր կամքին, թե կձգտեր հասնել իր ուզածին, չե՞մ կարող ասել, բայց նա ժամանակ շունեցավ մտածելու: Հաջորդ օրը հարևան քաղաքում նշանակված էր դատավորների ժողով և իմ տերը պարտավոր էր ներկա լինել: Միստր Հիթքլիֆը, իմանալով, որ տերը բացակայում է, սովորականից ավելի շուտ եկավ: Քեթրինն ու Իզաբելլան նստած էին գրահարանում, և երկուսն էլ թշնամաբար լուռ էին: Իզաբելլան վրդովված էր իր վերջին անխոհեմ արարքից և այն բանից, որ կրքի պոռթկման հպանցիկ պահին խոսել էր իր գաղտնի զգացմունքների մասին, Քեթրինը փոքրին խորհելուց հետո, իրեն շատ լուրջ վիրավորված համարեց: Եթե նորից ծիծաղում էր Իզաբելլայի հանգսնության վրա, ապա ուզում էր հասկացնել նրան, որ ծիծաղելու ժամանակը չէ: Քեթրինը իսկապես սկսեց ծիծաղել, երբ Հիթքլիֆին տեսավ լուսամուտի մոտով անցնելիս: Ես մաքրում էի օջախը և նրա շրթունքների վրա նկատեցի շարաճճի ժպիտը: Իզաբելլան իր մտքերով կամ գրքով տարված, նստած մնաց մինչև այն պահը, երբ դուռը բացվեց. արդեն ուշ էր և հնարավոր չէր ծլկել սենյակից՝ մի բան, որ նա ուրախություն կաներ, եթե կարողանար:

— Ներս արի, ժամանակի՞ն եկար,— ուրախ տոնով բացականչեց տիկինը՝ աթոռը քաշելով օջախի մոտ:— Մենք

Պշտակեղ տխրութեամբ համակված երկու հոգի ենք, մեզ հարկավոր է մի երրորդը, որպեսզի հալիցնի սառույցը մեր միջև և դու հենց այն մարդն ես, որին մենք երկուսս էլ կընտրեինք: Հիթթլիֆ, ես հպարտ եմ, որ վերջապես կարող եմ քեզ ցույց տալ նրան, որը խենթի պես սիրում է քեզ ավելի շատ, քան ես: Դու, իհարկե, քեզ շոյված կհամարես: Ոչ, դա Նելլին չէ, մի նայիր նրան: Իմ խեղճ փոքր տալը սրտաբեկ է լինում, հենց միայն դիտելով քո ֆիզիկական և հոգեկան գեղեցկությունը: Այժմ էղգարի եղբայրը զառնալը կախված է քեզնից: Ոչ, ոչ, Իզաբելլա, մի փախիր,— շարունակում էր նա, կեղծ կայտառութեամբ կանգնեցնելով շփոթված աղջկան, որը զայրույթով համակված վերկացավ տեղից:— Մենք քո պատճառով երկու կատունների պես կուշտում էինք իրար հետ, Հիթթլիֆ: Նվիրվածություն ու հիացմունք արտահայտելով նրանք գերադանցեցին ինձ. դեռ ավելին, ինձ հասկացրին, որ եթե ես պատշաճ ձևով մի կողմ քաշվեմ, ապա իմ ախոջանը, որպիսին նա համարում է իրեն, նետր կարձակի ուղիղ քո սրտին և կխորտակի քեզ առհասարակ, իսկ իմ կերպարը կմատնվի հավերժական մոռացություն:

— Քեթրին,— ասաց Իզաբելլան, օգնության կանչելով իր արժանապատվությունը և հպարտութեամբ հրաժարվելով պայքարից, որպեսզի ազատի իրեն պինդ բռնած ձեռքերից:— Ես խնդրում եմ հետևել ճշմարտությանը և չզրպարտել ինձ նույնիսկ կատակով: Միստր Հիթթլիֆ, բարի եղեք խնդրել ձեր բարեկամուհուն, որ ինձ բաց թողնի, նա մոռանում է, որ ես և դուք մտերիմ ծանոթներ չենք, և այն, ինչ զվարճացնում է նրան, ինձ անասելի վիշտ է պատճառում:

Քանի որ հյուրը ոչինչ չպատասխանեց, նստեց աթոռին և միանգամայն անտարբերութեամբ վերաբերվեց այն զգացմունքներին, որ ինքը ներշնչել էր աղջկան, Իզաբելլան շուռ եկավ և շնչալով լրջորեն խնդրեց իրեն տանջողից, որ բաց թողնի իրեն:

— Ոչ մի դեպքում,— ի պատասխան ճշաց միսիս Լինթընը:— Ես չեմ ուզում լսել, որ նորից դարձել եմ շուն խոտի դեղի վրա: Դու պետք է մնաս: Հիթթլիֆ, ինչո՞ւ պահանջություն չես արտահայտում իմ հաղորդած հաճելի լուրի համար: Իզաբելլան երգվում է, որ էղգարի իմ նկատմամբ փայփայած

սերը ոչինչ է այն սիրո առաջ, որ ինքը տածում է ղեպի քեզ: Հավատացած եմ, որ նման բան նա ասել է, չէ՞, էլլենն: Երեկ առավոտյան զբոսանքից հետո նա վշտից ու ցասումից ծոմ է պահում այն պատճառով, որ ես նրան դուրս ուղարկեցի՝ ենթադրելով, որ ձեր ընկերութիւնը անցանկալի է:

— Ես կարծում եմ, որ դու զրպարտեցիր աղջկան,— աթոռի հետ միասին շուռ գալով նրանց կողմը, ասաց Հիթթլիֆը:— Իմ ընկերութիւնը նրա համար ցանկալի չէ, համեմայն ղեպս՝ հիմա:

Եվ նա իրենց վեճի առարկային նայում էր այնպես, ինչպես ոմանք նայում են տարօրինակ ու գարշելի մի անասունի. օրինակ, հնդկական քառասունոտնանուն, որին հետաքրքրութեամբ ուսումնասիրում են՝ շնայած այն զզվանքին, որ նա առաջացնում է: Խեղճ աղջիկը շէր կարողանում հանդուրժել. մերթ գունատվում էր, մերթ կարմրում, մինչ արցունքների կաթիլները կախվել էին նրա թարթիչներից, և փոքրիկ մատները ամբողջ ուժով ջանում էին թուլացնել իրեն պինդ բռնած Քեթրինի ճանկերը: Հենց որ պոկում էր իր թևը պինդ բռնած նրա մի մատը, Քեթրի մյուս մատը է՛լ ավելի ամուր էր սեղմում նրա թևը և վերջապես տեսնելով, որ լի կարողանում ամբողջ ձեռքը պոկել իր թևից, սկսեց գործի գցել եղունգները: Սուր եղունգները իսկույն զարդարեցին իրեն բռնողի մատները մահիկաձև կարմիր նշաններով:

— Սա էգ վագր է,— բացականչեց միսիս Լինթընը՝ բաց թողնելով նրան և թափահարելով իր ճանկոտված ձեռքը:— Հեռացիր, ի սեր աստծո, և թաքցրու քո աղվեսային ղեմքը: Բա հիմարութիւն չէ՞, որ նրա ներկայութեամբ ցույց ես տալիս մագիլներդ: Մի՞թե շես հասկանում, թե ինչ եզրակացութիւն նա կանի: Հիթթլիֆ, հապա մի նայիր նրա խոշտանգող գործիքին և զգուշացիր քո աչքերից:

— Ես դրանք կպոկեմ արմատից, եթե երբէք համարձակվի դրանցով սպառնալ ինձ,— շարութեամբ պատասխանեց Հիթթլիֆը, երբ դուռը ծածկվեց Իզաբելլայի հետևից:— Բայց, Քեթի, ինչի՞ համար էիր աղջկան այդպես նեղում: Ախր դու ճշմարտութիւնը շէիր ասում, այնպես չէ՞:

— Հավատացնում եմ, որ ասում էի միայն ճշմարտութիւնը,— ասաց միսիս Լինթընը: Արդեն մի քանի ջաբաթ

է, որ նա հալումաշ է լինում քեզ համար, իսկ այս առավոտ
զառանցում էր և վիրավորանքների մի ամբողջ հեղեղ տեղաց
իմ գլխին, երբ ես պարզ լույսի տակ սկսեցի նրա առաջ ցու-
ցադրել քո թերությունները, որպեսզի թուլացնեմ նրա հիաց-
մունքը: Բայց այլևս մի մտածիր այդ մասին, ես ուզում էի
պատժել նրան իր հանդգնության համար. միայն այդքան:
Ես նրան սիրում եմ շափից ավելի, սիրելի Հիթքլիֆ, և թույլ
չեմ տա, որ դու բռնես և լավես նրան:

— Եվ ես ասում եմ նրան շափից ավելի, որպեսզի փոր-
ձեմ լավել, — ասաց Հիթքլիֆը, — թերևս միայն վամպիրի
պես ծծեմ արյունը: Դու կլսեիր արտասովոր բաներ, եթե ես
նույն տանիքի տակ ապրեի այդ նոզկալի, մոմե դեմքով
աղջկա հետ: Ամենասովորական գործն այն կլիներ, որ ամեն
երկու օրը մի անգամ նրա սպիտակ դեմքը կնախշազարդեի
ծիածանի գույներով, իսկ կապույտ աչքերը կգարձնեի սև,
որոնք գարշելիորեն այնքան նման են կինթրենների աչքերին:

— Սքանչելիորեն նման են, — նկատեց Քեթրինը, — իսկը
ազավնու, հրեշտակի աչքեր:

— Իզարելլան իր եղբոր ժառանգորդն է, այդպես չէ՞, —
մի պահ լռելուց հետո հարցրեց Հիթքլիֆը:

— Չէի կամենա մտածել, որ դա այդպես է, — առարկեց
զրուցակիցը, — Մի կես դյուժին հորեղբորորդիներ և քեռոր-
դիներ երկնքի կամքով ի շիք կգարձնեն նրա բոլոր իրա-
վունքները: Իսկ այժմ գլխիցդ դուրս վանիր այդ մտքերը,
շափից ավելի աչք մի տնկիր հարևանի բարիքների վրա, հի-
շիր, որ հարևանի բարիքները իմ բարիքներն են:

— Եթե դրանք իմը լինեին՝ կլինեին և քոնը, — ասաց
Հիթքլիֆը: — Թեև Իզարելլա կինթրենը հիմար է, բայց հազիվ
թե խելագար լինի. մի խոսքով, լսենք քո խորհուրդը և էլ
չնշափենք այդ հարցը:

Իրենց խոսակցության ժամանակ նրանք այլևս շանդա-
ղարձան այդ հարցին. Քեթրինը, հավանորեն, էլ չէր մտածում
այդ մասին: Բայց Հիթքլիֆը հավատացած եմ, երեկոները
հաճախ էր մտովի անզրադառնում դրան: Ես նկատում էի,
որ նա ինքն իրեն ժպտում էր, ավելի շուտ, ժպտում էր հեղ-
նական ժպտով և սուզվում էր շարագուշակ մտքերի մեջ,

երբ միստր Լինթընը մի որևէ առիթով բացակայում էր սենյակից:

Ես որոշեցի հետևել նրա շարժումներին: Իմ սիրտը անփոփոխ նվիրված էր իմ տիրոջը, և ես նախապատվութունը տալիս էի նրան և ոչ թե Քեթրինին, և կարծում եմ, որ իրավացի էի, որովհետև նա բարի, հավատարիմ ու պատվասեր մարդ էր, իսկ Քեթրինը՝ շէի ասի, որ նրա հակապատկերն էր, և, սակայն, նա իրեն թույլ էր տալիս այնպիսի մի ազատութուն, որ ես շատ էլ չէի հավատում նրա սկզբունքներին, և ավելի ևս քիչ համակրանք էի տածում դեպի նրա զգացմունքները: Ուզում էի այնպիսի մի բան կատարվեր, որ թե Մոլեդին հողմերի դարավանդը և թե ազարակատունը մեկընդմիջտ ազատվեին միստր Հիթքլիֆից, որպեսզի մենք ապրեինք այնպես, ինչպես ապրում էինք մինչև նրա վերադարձը: Նրա այցելութունը ինձ համար մղձավանջ էր, կարծում եմ՝ և իմ տիրոջ համար: Գարավանդում նրա ապրելը անասելի կերպով ճնշում էր մեզ: Զգում էի՝ այդ մոլորված ուխարին աստված թողել է, որ իր վատ հակումներով քարշ գա այդտեղ, իսկ շար գազանը փարախի մոտ դարան մտած սպասում է հարմար առիթի, որ նետվի և հոշոտի ուխարին:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՄԵԿԵՐՈՐԴ

Երբ մենության մեջ երբեմն խորհում էի այդ բաների մասին, հանկարծական սարսափով համակված վեր էի թռչում, գլխարկս դնում, դնում էի ազարակ, որ տեսնեմ, թե ինչպես են նրանք այնտեղ ապրում: Խիղճս հուշում էր ինձ և ես պարտքս էի համարում նախազգուշացնել Հինդլիին, հայտնել, որ մարդիկ խոսում են նրա ապրելակերպի մասին, բայց հետո հիշեցի, որ նրա վատ սովորությունները շատ կայուն են և ոչ մի հույս չկա, որ նա կարող է ուղղվել ու դառնալ բարի, խույս էի տալիս, չէի ուզում նրա շարագուշակ տան դռնից ներս մտնել, կասկածում էի՝ կարող էին արդյոք իմ խոսքերն ընդունվել այդտեղ:

Մի օր հին դարպասից դուրս եկա և ուղղութուն վերցրի

դեպի Գիմմերթըն: Դա հենց այն ժամանակաշրջանն էր, որին հասել էի իմ պատմության մեջ: Մի պայծառ, ցուրտ օր էր, դետինը մերկ էր, ճանապարհը կարծր ու շոր:

Մոտենում էի անտաշ, ավազոտ քարե մի սյան, որտեղից մեծ ճանապարհից սկսվող մի արահետ տանում էր դեպի ձախ՝ ցախիների կողմը, սյան հյուսիսային կողմում փորագրված էին՝ Մ. Հ. Գ., արևելյան կողմում՝ Գ., իսկ հարավ-արևմտյան կողմում՝ Կ. Ա.: Դրանք ցույց էին տալիս դեպի ազարակատուն, դարավանդ և գյուղ տանող ճանապարհները:

Արևի դեղնավուն փայլը շողում էր սյան գորշ դագաթին՝ հիշեցնելով ինձ ամառ: Չեմ կարող ասել, թե ինչու, բայց միանգամից մի ինչ-որ մանկական զգացողություն հեղեղեց իմ սիրտը: Քսան տարի առաջ Հինգլին և ես սիրեցինք այդ վայրը:

Ես երկար նայում էի հողմնահարված այդ քարին և, հակվելով, հիմքի մոտ նկատեցի փոքրիկ փոսը, որ տակավին լցված էր խեցիներով ու մանրախիճով, որոնք մենք սիրում էինք հավաքել և շուտ փշացող իրերի հետ միասին լցնել փոսի մեջ. դրանք այնքան թարմ ու իրական էին, որ թվում էր, թե ես տեսնում էի այդտեղ թառամած խոտին նստած մանկությունս տարիների իմ խաղընկերոջը, տեսնում էի դեպի առաջ հակված նրա թխազույն քառակուսի գլուխը և փոքրիկ ձեռքը, որը տափակ քարի մի կտորով փորում էր հողը:

«Խեղճ Հինգլի», — բացականչեցի ակամայից:

Ես ցնցվեցի: Խափուսիկ իմ աչքին մի պահ թվաց, թե երեխան բարձրացրեց դեմքը և ուղիղ նայեց ինձ: Մի ակընթարթում նա շքացավ, բայց ես անմիջապես մի անդիմադրելի ցանկություն զգացի՝ լինել Դարավանդում: Սնապաշտությունը հարկադրեց ինձ կատարել իմ այդ ցանկությունը: Իսկ եթե մեռել է՝ անցավ իմ մտքով, կամ շուտով կմեռնի. դա մահվան նախանշան է:

Որքան շատ էի մոտենում տանը, այնքան ավելի էի հուզվում, իսկ երբ տեսա մեր հին տունը, ամբողջ մարմնով սկսեցի դողալ: Տեսիլքը ինձանից առաջ անցավ. նա դարպասի մոտ կանգնած նայում էր ճանապարհին: Այդպիսին էր իմ առաջին միտքը, երբ ես տեսա խճճված մազերով, թխա-

գույն աշքերով տղային, որն իր կարմրավուն այտերը դեմ էր տվել ձողերին: Հետո մտածելով, որ դա կարող է Հերթընը՝ իմ Հերթընը լինել, որը մեր բաժանման տասը ամիսների ընթացքում այնքան էլ չէր փոխվել:

— Աստված օրհնի քեզ, սիրելի փոքրիկս, — ճշացի ես՝ անմիջապես մոռանալով իմ հիմար սարսափը: Հերթըն, ես եմ՝ Նելլին: Քո դայակ Նելլին: Նա մի քայլ ընկրկեց, և գետնից բարձրացրեց մեծ կայծքարը:

— Ես եկել եմ քո հորը տեսնելու, Հերթըն, — ավելացրի՞ նրա շարժումից գուշակելով, որ Նելլին, եթե նույնիսկ նա դեռ ապրում էր իր հիշողության մեջ, տղան չճանաչեց հանձինս ինձ:

Նա ձեռքը բարձրացրեց, որ քարը նետի ինձ վրա, ես փորձեցի փաղաքշական խոսքեր ասել, բայց չկարողացա նրան կանգնեցնել, քարը դիպավ գլխիս, ապա փոքրիկի թոթովախոս շուրթերից լավեց անեծքի մի ամբողջ հեղեղ, որը, հասկանո՞ւմ էր նա արդյոք դրա իմաստը, թե ոչ, արտասանվեց սովորական արտահայտիչ շեշտով և մանկական դիմադժերը աղավաղվեցին ինձ ապշեցնող շարութունից:

Հավատացեք, դա ինձ ավելի վշտացրեց, քան շղայնացուրեց: Գրեթե լացակումած, ես գրսյանից հանեցի մի նարինջ, մեկնեցի նրան, որպեսզի տրամադրեմ դեպի ինձ:

Նա մի սլահ տատանվեց, ապա խլեց այն իմ ձեռքից, ասես մտածում էր, որ ես միայն ուզում եմ նրան հրապուրել և հուսախաբ անել:

Ցույց տվեցի երկրորդը՝ պահելով այնպես, որ նա չկարողանա ձեռքը հասցնել դրան:

— Ո՞վ է քեզ սովորեցրել այդ խոսքերը, փոքրիկս, — հարցրեցի ես: — Փոխերե՞ցը:

— Գրողը տանի փոխերեցին էլ, քեզ էլ: Տուր, — սլատասխանեց նա:

— Ասա, թե որտեղ ես դու սովորել այդ խոսքերը, և դու կուտանաս այն, — ասացի ես: — Ո՞վ է քեզ սովորեցնում:

— Սատանա հայրիկը, — եղավ պատասխանը:

— Այդպես, և ի՞նչ ես սովորում հայրիկից, — շարունակում էի ես:

Նա վեր-վեր ցատկեց, որ պտուղը խլի իմ ձեռքից, ես

ձեռքս ավելի վեր բարձրացրի:— Ի՞նչ է նա քեզ սովորեցնում,— հարցրի ես:

— Ոչ մի բան,— ասաց նա,— միայն շընկենեմ նրա ոտքերի տակ: Հայրիկը ինձ տանել չի կարող, որովհետև ես հայհոյում եմ նրան:

— Ա՛հ, և սատանա՞ն է քեզ սովորեցնում հայհոյել հայրիկին,— ասացի ես:

— Ոչ-ուչ,— կմկմաց նա:

— Հապա ո՞վ:

— Հիթքլիֆը:

Ես հարցրի, թե սիրո՞ւմ է միտար Հիթքլիֆին:

— Ըհը՛,— նորից կմկմաց նա:

Ցանկանալով իմանալ, թե ինչի համար է սիրում Հիթքլիֆին, ես կարողացա միայն լսել:

— Չգիտեմ: Նա ծեծում է հայրիկին, երբ հայրիկը ծեծում է ինձ, անիծում է հայրիկին, երբ հայրիկը անիծում է ինձ: Ասում է, որ ես կարող եմ անել, ինչ որ ուզենամ:

— Ուրեմն փոխերեցը քեզ կարդալ, գրել չի՞ սովորեցնում,— հարցրի ես:

— Ոչ, ինձ ասացին, որ նրա ատամները կփշրեն, կրստիպեն կուլ տալ, եթե համարձակվի մեր տան շեմից ներս անցնել. այդպես խոստացել է Հիթքլիֆը:

Ես նարինջը տվեցի նրան և խնդրեցի հայտնել հորը, որ մի կին, Նելլի Դին անունով, պարտեզի դարպասի մոտ սպասում է իրեն, ուզում է խոսել հետր:

Նա վազելով մտավ տուն, բայց Հինդլիի փոխարեն ամուսնուհի երևաց Հիթքլիֆը: Ես անմիջապես շուռ եկա և ինչքան ուժ կար ոտքերիս մեջ ճանապարհով սլացա առանց կանգ առնելու, մինչև որ հասա ուղեցույց սյանը. անասելի մի ահ էր մտել մեջս, ասես շար ոգի էի տեսել:

Այս դեպքը կապ չունի միսս Իզաբելլայի պատմության հետ, բայց որոշեցի դրանից հետո աշալուրջ լինել, ճիգ ու ջանք շխնայել և թույլ չտալ, որ վատ ազդեցությունը ներթափանցի Ազարակատունը. եթե նույնիսկ պատահի, փոթորիկ կբարձրացնեմ տան մեջ և ներողամտաբար շեմ վերաբերվի միսիս Լինթընի քմահաճույքներին:

Հետևյալ անգամ, երբ Հիթքլիֆը եկավ, պատահեց այն-

պես, որ իմ երիտասարդ լեզին բակում կերակրում էր աղալ-
նիններին: Երեք օրվա մեջ ոչ մի բառ չէր խոսել իր հարսի
հետ, բայց վերջինս նույնպես հրաժարվեց անհանգստություն
պատճառող իր գանդատներից, և մենք մեծ թեթևություն
զգացինք:

Հիթբլիֆը, ես դիտեի, սովորություն չունեի հատուկ ուշա-
դրությամբ վերաբերվելու միսս Լինթընին: Այժմ, հենց որ
տեսավ նրան, առաջին հերթին զգուշությամբ մի վաղան-
ցիկ հայացք դեց տան ճակատին: Ծս կանգնած էի խոհա-
նոցի լուսամուտի մոտ, բայց հետ քաշվեցի, որ ինձ շտեսնեն,
ապա նա անցավ հրապարակը, մոտեցավ աղջկան և ինչ-որ
բան ասաց: Իզաբելլան, ըստ երևույթին, շփոթվեց և փորձեց
հեռանալ, իսկ Հիթբլիֆը բռնեց նրան, ձեռքը դրեց ուսին:
Միսս Լինթընը երեսը շուռ տվեց, նա ինչ-որ բան հարցրեց,
որին աղջիկը շուգեց պատասխանել: Հիթբլիֆը մի հայացք
էլ դեց տան վրա և, ենթադրելով, որ ոչ ոք իրեն չի տես-
նում, սրիկան, առանց ամոթ զգալու, գրկեց օրիորդին:

— Հուզա՛, դավաճա՛ն,— գոռացի ես:— Դուք կեղծավոր
էլ եք, այո, խաբեբայի մեկը:

— Այդ ո՞ւմ այդպես, նելիի,— հետևից լսվեց Քեթրինի
ձայնը. այնպես կլանված էի զույգին դիտելով, որ չնկատե-
ցի, թե ինչպես տիկինը ներս մտավ:

— Ձեր անարժան ընկերոջը,— բորբոքված պատասխա-
նեցի ես,— այդ սողուն սրիկային: Աա՛, նա նկատեց մեզ,
դալիս է այստեղ: Հապա մի տեսնեմ՝ ինչպես է փորձում ար-
դարանալ. սիրաբանում էր աղջկա հետ, իսկ ձեզ ասում է,
թե ատում է նրան:

Միսիս Լինթընը տեսավ, թե ինչպես Իզաբելլան դուրս
պրծավ նրա գրկից և վազելով մտավ պարտեզ: Մի րոպե
հետո Հիթբլիֆը բաց արեց դուռը:

Ծս չկարողացա պահել ինձ և ազատություն տվի իմ ցա-
սումին, բայց Քեթրինը պահանջեց, որ լռեմ, և սպառնաց, որ
դուրս կանի խոհանոցից, եթե չզսպեմ իմ հանգուզն լեզուն:

— Քեզ լսող մարդիկ կարող են մտածել, որ դու ես այս-
տեղի տիրուհին,— բղավեց նա:— Իմացիր, թե որն է քո
խսկակա՛ն տեղը: Հիթբլիֆ, ի՞նչ ես այստեղ աղմուկ բարձ-
րացնում: Ախր, ասացի, որ Իզաբելլային հանգիստ թողնես:

ենդրում եմ՝ շահհանդատացնել նրան, եթե այս տունը քեզ չի ձանձրացրել և շես ուզում, որ կինթընը տան դռները փակի քո առաջ:

— Աստված շանի, որ փորձի,— պատասխանեց այդ սև սինքլորը:— Աստօժ սզնությամբ մեզմ ու համբերատար կդառնա:

Ես հենց այն ժամանակ էլ նրան ատելով ատում էի: Ամեն օր նրան արքայություն ուղարկելուց հետո ավելի ու ավելի էի զայրանում:

— Կամա՛ց,— ասաց Քեթրինը և դուռը ծածկեց:— Մի բարկացրու ինձ: Ինչո՞ւ անտեսեցիր իմ խնդրանքը: Մի՞թե Իզաբելլան պատահմամբ հանդիպեց քեզ:

— Քեզ ի՞նչ,— մոնչաց շիթքլիֆը:— Ես իրավունք ունեմ համբուրելու նրան, եթե դա նրան դուր է գալիս: Իսկ դու իրավունք չունես առարկելու: Ես քո ամուսինը չեմ: Խանդելու ոչ մի հիմք չունես:

— Ես քեզ չեմ խանդում,— պատասխանեց միսիս կինթընը,— խանդում եմ Իզաբելլային: Մի մոռցվիր, հոնքերդ մի կիտիր: Եթե սիրում ես Իզաբելլային, ամուսնացիր նրա հետ: Բայց դու սիրո՞ւմ ես նրան: Ծիշտն ասա, շիթքլիֆ: Ա՛խ այդպես, դու շես պատասխանում: Հավատացած եմ, որ շես սիրում:

— Իսկ կհամաձայնի՞ միստր կինթընը, որ իր քույրը ամուսնանա այդպիսի մի մարդու հետ,— հարցրի ես:

— Միստր կինթընը պետք է հավանություն տա,— վճռական տոնով պատասխանեց տիրուհին:

— Նրան կարելի է նեղություն շտալ,— ասաց շիթքլիֆը:— Ես այդ կարող եմ անել և առանց նրա հավանության: Իսկ ինչ վերաբերում է քեզ, Քեթրին, քանի որ խոսվեց այդ մասին, ապա կուզենայի մի քանի խոսք ասել: Դիմացիր, ուզում եմ քեզ տեղյակ պահել, որ ես զիտեմ, թե որքան անմարդկային ես ինձ հետ վարվում: Լսո՞ւմ ես: Եվ եթե գուհույս ես փայփայում, որ ես դա չեմ նկատում՝ դու հիմար ես: Եթե գուհարժում ես, որ կարելի է սփոփել ինձ քաղցր խոսքերով, ապա ապուշ ես, և եթե երևակայում ես, որ ես հրաժարվել եմ վրեժից, շատ շուտով դու կհամոզվես, որ սխալվել ես: Միաժամանակ, շնորհակալ եմ, որ ինձ հայտ-

նեցիր քո տալի գաղտնիքը, երդվում եմ, որ ինպես հարկն է կօգտվեմ դրանից: Իսկ դու հեռու պահիր քեզ այս ամենից:

— Բնավորության նո՛ր գիծ է նա դրսևորում,— զարմացած բացականչեց միսիս Լինթընը:— Ծն քեզ հետ ստորաբաբա՛ր եմ վարվել և դու վրեժխնդիր կլինես: Հապա տեսնեմ՝ ինչպե՞ս վրեժխնդիր կլինես, դու անշնորհակալ անասուն: Եվ ո՞րն է իմ անմարդկային արարքը քո նկատմամբ:

— Քեզանից չէ, որ ուզում եմ վրեժ լուծել,— մի փոքր մեղմ պատասխանեց Հիթթլիֆը:— Դա իմ ծրագրի մեջ չի մտնում: Բռնակալը շարաշար տանջում է իր ստրուկներին, իսկ նրանք շեն ըմբոստանում և պատրաստ են խորտակել քոլոր նրանց, ովքեր իրենց կրնկի տակ են: Դու կարող ես տանջահար անել ինձ և զվարճանալ, բայց թույլ տուր ինձ էլ նույն այդ ձևով մի փոքր զվարճանալ և, եթե կարող ես, զսպիր քեզ և մի վիրավորիր: Դու հողին հավասարեցրիր իմ ապարանքը, իսկ հիմա, հյուղակ մի սարքիր և ինքնագոհ մի հմայվիր քո սեփական բարեգթությամբ՝ թույլ տալով ինձ, որ ապրեմ այնտեղ: Եթե ես երևակայեմ, որ դու իսկապես ուզում ես ինձ ամուսնացնել Իզաբելլայի հետ, կոկորդս կկտրեմ:

— Օ՛, ցավալին այն է, որ ես շեմ խանդում, այնպես չէ՞,— ճշտց Քեթրինը:— Լավ, այլևս քեզ ոչ մի կնոջ հետ չեմ ամուսնացնի: Դա նույնն է, թե կործանված հողին հանձնես սատանային: Քեզ համար, ինչպես և նրա համար, կա լոկ մի հրանություն՝ մարդկանց զցել դժբախտության մեջ: Դու դա ապացուցեցիր: Էդգարը բուժվեց իր շարամտությունից, որին ենթարկվեց քո երևալու պահին, ես սկսել եմ ապահով ու հանգիստ գալ, իսկ դու հանգիստ չունես, քանի դեռ մեր սանր տիրում է խաղաղություն. և՛ դու որոշեցիր կռիվ բորբոքել: Դե ինչ, գժտվիր էդգարի հետ, Հիթթլիֆ, խաբիր քրոջր: Դա կլինի ինձնից վրեժ առնելու ամենակտրուկ միջոցը:

Խոսակցությունն ընդհատվեց: Միսիս Լինթընը նստած էր կրակի մոտ: Եիկնած ու մթազնած: Նրան ծառայող ոգին չէր նայանդովում իրեն՝ ո՛չ կարողանում էր հանգստացնել, ո՛չ էլ դեկավարել այն: Հիթթլիֆը ձեռքերը կրծքին կանգնած էր բուխարու մոտ ու խորհում էր իր եղկելի մտադրության մասին: Այդ դրության մեջ ես թողեցի նրանց, գնացի փնտրելու

տանտիրոջը, որը զարմանում էր, թե ինչու էր Քեթրինն այդքան երկար մնում ներքևում:

— Էլլեն, — ասաց նա, երբ ես ներս մտա, — շե՞ս տեսել քո տիրուհուն:

— Տեսել եմ, խոհանոցում է, սրբ, — պատասխանեցի: — Միստր Հիթքլիֆի վարքագիծը նրան խիստ ջղայնացրել է: Եվ իրոք, ես կարծում եմ՝ ժամանակն է, որ նրա այդ այցերին վերջ արվի: Շատ մեղմ լինելը երբեմն շարիք է ծնում. հիմա հենց այդպես էլ եղավ:

Եվ ես պատմեցի բազում եղած տեսարանի մասին, համարձակվեցի որքան հնարավոր էր ճշտությամբ վերարտադրել տեղի ունեցած վեճը: Ենթադրում էի, որ դա շատ վնաս չի պատճառի միսիս Լինթընին, եթե միայն, պաշտպան կանգնելով հյուրին, նա ինքն իրեն վնաս չհասցնի:

Էդգար Լինթընը հագիվ կարողացավ մինչև վերջ լսել ինձ: Նրա առաջին բառերը ցույց տվեցին, որ նա մտադիր չէր արդարացնել կնոջը:

— Դա անտանելի է, — դուռաց նա: — Խայտառակություն է, եթե Քեթրինը նրան համարում է իր բարեկամը և ինձ էլ ստիպում է, որ հաշտվեմ նրա ընկերակցություն հետ: Գավիթից երկու հոգու կանչեք ինձ մոտ, էլլեն: Քեթրինը այլևս չպետք է խոսակցության բռնվի այդ սրիկայի հետ, բավական է ինչքան ներողամիտ եմ եղել:

Նա իջավ ներքև և, ծառաներին հրամայելով, որ սպասեն միջանցքում, ինձ հետ միասին մտավ խոհանոց: Այն երկուսը՝ վերսկսել էին իրենց բուռն վեճը, համենայն դեպս, միսիս Լինթընը նոր ավյունով շարունակում էր կշտամբել Հիթքլիֆին, որը մոտեցել էր պատուհանին և կախել դուխը, ըստ երևույթին, մի փոքր ընկճված էր Քեթրինի կատաղի հարձակումներից:

Նա առաջինը նկատեց միստր Լինթընին և մի արագ շարժումով նշան արեց, որ Քեթրինը լռի. հասկանալով նրա ակնարկը՝ տիկինը իսկույն սակվեց:

— Սա ի՞նչ է, — դիմելով կնոջը՝ հարցրեց նա: — Որքան նո՞վ է հարմար, որ դու մնում ես այստեղ այն բանից հետո, երբ այդ ստոր արարածն այնքան նախատինք թափեց քո գլխին: Ենթադրում եմ, որ դու ոչ մի առանձին բան նրա

խոսքերում շես գտնում, որովհետև դա նրա սովորական խոսակցութիւնն է: Դու ընտելացել ես նրա ստորութիւններին և գուցե, երևակայում ես, որ ես էլ կարող եմ ընտելանալ:

— Դու թաքուն լսո՞ւմ էիր, դուան հետևից, էդգար,— հարցրեց տիկինը արհամարհական տոնով, դիտավորյալ կերպով ցանկանալով ջղայնացնել ամուսնուն, ասես բոլորովին բանի տեղ շղենելով նրա զայրույթը:

Հիթքլիֆը, որը էդգարի խոսքերի վրա բարձրացրել էր աչքերը, այդ պատասխանը լսելիս՝ շարամտորեն ծիծաղեց: Թվում էր, դիտավորյալ արեց, որպեսզի միստր Լինթընի ուշադրութիւնը սկսեցի իր վրա: Դա հաջողվեց, բայց էդգարն իր կրթերին ազատութիւն տալով բոլորովին մտադիր շէր զվարճացնել հյուրին:

— Ես շատ համբերատար եմ եղել ձեր հանդեպ, սըր,— հանդիստ տոնով ասաց նա,— և դա ոչ այն պատճառով, որ ծանոթ չէի ձեր ողորմելի ու ստոր բնավորութեանը, բայց ես ձեզ միայն մասամբ էի մեղավոր համարում դրա համար, և երբ Քեթրինը ցանկացավ շարունակել իր ծանոթութիւնը ձեզ հետ, ես հիմարաբար համաձայնեցի: Ձեր ներկայութիւնը բարոյական թույն է. դա ամենառաքինի էակին անդամ կկործանի, այդ պատճառով, և ամենավատ հետևանքներից խուսափելու համար, ես այլևս չեմ հանդուրժի՝ արգելում եմ ձեր մուտքն այստեղ և այժմ պահանջում եմ, որ դուք անհապաղ հեռանաք այստեղից: Եթե երեք ըրպե ևս հապաղեք, ձեզ խայտառակ ձևով այստեղից դուրս կվռնդեն:

Հիթքլիֆը հեզնական հայացքով շափեց խոսողին:

— Քեթի, քո գառնուկը սպառնում է, ասես ցուլ լինի,— ասաց նա:— Վայ թի գանգր դիպչելով բռունցքիս ջախջախովի: Աստված վկա, միստր Լինթըն, շատ ցավում եմ՝ դուք արժանի չեք, որ ես ձեզ դետին տապալեմ:

Իմ տերը նայեց միջանցքի կողմը և նշան արեց, որ ես մարդկանց ներս բերեմ: Նա մտադիր շէր ոխակի դիմել և անձամբ կովի բռնվել հակառակորդի հետ: Ես հնազանդվեցի, բայց միսիս Լինթընը ինչ-որ բան կասկածելով, եկավ իմ հետևից, և երբ փորձեցի կանչել նրանց, նա ինձ հրեց մի կսգմ, դուրը շրխկացնելով ծածկեց ու կողպեց:

— Հրաշալի՛ է,— ասաց միսիս Լինթընը՝ ի պատասխան



իր ամուսնու դայրալից, դարմացած հայացքին:— Եթե դու ինքդ չես համարձակվում հարձակվել նրա վրա, ապա ներողություն խնդրիր կամ թույլ տուր, որ քեզ ծեծեն: Դա կօգնի քեզ, որ քաջարի մարդ չձևանաս: Ոչ, ես ավելի շուտ կույ կտամ բանալին, քան դու կստանաս այն: Հիանալի կերպով ինձ վարձատրեցիք ձեր երկուսի նկատմամբ ունեցած բարության դիմաց: Մեկի թուլության և մյուսի շարակամության նկատմամբ ցուցաբերած իմ ներողամտության դիմաց որպես վարձատրություն վաստակեցի անհեթեթության ու հիմարության հասնող լոկ կույր շնորհակալություն: Էդդար, ես պաշտպանում եմ քեզ և քո տունը, ուզում եմ, որ Հիթքլիֆը քեզ մի լավ ջարդի այն բանի համար, որ դու համարձակվեցիր վատ մտածել իմ մասին:

Կարիք չեղավ ծեծելու, որ իմ տերը վատ զգար իրեն: Նա փորձեց խլել բանալին Քեթրինից, բայց ապահովության համար վերջինս շարտեց այն կրակի ամենաթեժ տեղը. միստրը էդդարին նյարդային դող բռնեց, նա մեռելի պես գունատվեց: Ի սեր իր կյանքի, նա չկարողացավ կանխել իր ծայրահեղ հուզմունքը. ցավն ու նվաստացումը լիովին ընկճեցին նրան: Նա հենվեց աթոռի մեջքին և ծածկեց դեմքը:

— Օ՛, աստված իմ: Հին օրերում ձեզ դրա համար ասպետի կոչում կշնորհեին,— բացականչեց միսիս Լինթընը:— Մենք պարտված ենք, պարտված: Հիթքլիֆը մատով անգամ չէր դիպչի քեզ, դա նույնն է, թե թագավորն իր զորքերով արշավի մկների գաղութի վրա: Պինդ կաց, քեզ ոչ ոք ձեռք չի տա: Դու նույնիսկ զառ չես, դու՛ նապաստակի ձագ ես:

— Ցանկանում եմ քեզ երջանկություն, Քեթի, այդ երկշոտի հետ, որի երակներում կաթ է հոսում,— ասաց նրա բարեկամը:— Դուզում եմ քո ճաշակը: Եվ դու գերադասեցիր բնտրել այդ թշվառ փսլնքոտին: Բռունցքով չեմ հարվածի, բայց աքացի տալով կտասլալեմ նրան և մեծ բավականություն կստանամ: Նա, ինչ է, լալի՞ս է, թե՞ ուշաթափ է լինում սարսափից:

Հիթքլիֆը ծագրելով մոտեցավ և ոտքով հրեց բազկաթոռը, որին հենված նստել էր Լինթընը: Ավելի լավ կլիներ, եթե նա իրեն հեռու պահեր: Իմ տերը տեղից իսկույն ցատկեց, կանկնեց և նրա կրծքին հասցրեց մի ուժգին հարված, որը

թույլ մարդուն գետին կտապալներ: Հիթթըլիֆը մի բոպե շնչահեղձ եղավ, և մինչ նրա ջունշը տեղը կգար, միստր Լինթընը հետևի դռնից դուրս եկավ բակ և զլիսավոր մուտքով գնաց ներս:

— Եվ այսպես: Այլևս այս կողմերում չես երևա, — բղավեց Քեթթինը: — Հիմա հեռացիր: Նա կվերագառնա զույգ ատրճանակ ձեռքին, մի տասնյակ օգնականների հետ: Եթե լսել է մեզ, նա, իհարկե, քեզ երբեք չի ների: Դու շար կատակ արեցիր նրա հետ, Հիթթըլիֆ: Բայց գնա, դե շտապիր. ետ ավելի շուտ կուզենամ էդգարին տեսնել պատին դեմ տված, քան քեզ:

— Եվ դու կարծում ես կգնամ, երբ ամբողջ ներսս վառվում է նրա հարվածից, — մռնչաց Հիթթըլիֆը: — Գրողը տանի, ո՛չ: Նախքան այս դռան շեմից դուրս գալը, ես նրա կողոսկրերը փուշ ընկույզի պես փշուր-փշուր կանեմ: Եթե հիմա ըջարդեմ նրան, ապա մի օր կսպանեմ, և, եթե նրա կյանքը թանկ է քեզ համար, թույլ տուր, որ նրա դատաստանը տեսնեմ:

— Նա չի գա, — ընդհատեցի Հիթթըլիֆին՝ որոշելով սուտ ասել, — գալիս է կառապանը երկու պարտիզպանների հետ: Դուք, իհարկե, չեք սպասի, որ նրանք ձեզ դուրս վճռեն բակից: Նրանցից ամեն մեկը մի-մի մահակ ունի ձեռքին, իսկ տերը, ամենայն հավանականությամբ, հյուրասենյակի լուսամուտից կգիտի, թե ինչպես են նրանք կատարում իր հրամանը:

Պարտիզպաններն ու կառապանը իրոք գալիս էին, բայց նրանց հետ էր նաև Լինթընը: Նրանք արդեն մտել էին բակ: Հիթթըլիֆը մի պահ մտածեց և որոշեց խուսափել երեք հոգու դեմ պայքարելուց. նա ակիշը վերցրեց, ջարդեց ներսի դռան կողպեքը և դիմեց փախուստի, նախքան նրանք ծանրաքայլ ներս էին մտնում:

Միսիս Լինթընը, խիստ հուզված, վերնահարկ բարձրանալիս խնդրեց ինձ ուղեկցել իրեն: Նա շփտեր, թե ինչպես էի ես նպաստել այդ աղմկոտ կովին, շէի ուզում, որ իմանար այդ մասին:

— Քիչ է մնում խելագարվեմ, նեւի, — բացականչեց

Քեթրինը՝ նետվելով բազմոցին:— Դարբինների հազարավոր մուրճեր զարկում են ուղեղիս: Իզաբելլային ասա, որ աչքիս շերևա: Այս ամբողջ իրարանցումը կատարվեց նրա պատճառով, և եթե նա կամ որևէ մեկը հիմա բորբոքի իմ զայրույթը, ես կգազազեմ: Եվ, Նելլի, էդգարին ասա, եթե այս գիշեր նորից տեսնես նրան, որ լուրջ հիվանդանալու վտանգ է սպառնում ինձ: Ծա կուզենայի, որ հենց այդպես էլ լիներ: Ծա ցնցված եմ, նա սարսափելի զարմացրեց ու վշտացրեց ինձ. թող վախենա: Նա դեռ կարող է գալ և նախատել կամ գանգատվել, ես էլ, իհարկե, կսկսեմ մեղադրել և, աստված գիտի, թե այդ ամենը ինչով կվերջանա: Կանե՞ս այն, ինչ խնդրում եմ, իմ բարի Նելլի: Ախր, դու տեսնում ես, որ ես այս բանում մեղավոր չեմ: Ի՞նչը նրան դրդեց թաքուն ականջ գնել ու լսել: Քո գնալուց հետո Հիթքրիֆը շատ վիրավորական խոսքեր ասաց: Բայց ես նրան շատ հեշտ հետ կպահեմ Իզաբելլայից, իսկ մնացածը նշանակութուն չունի: Եվ հիմա ամեն ինչ կորավ. իմ ամուսինը տեսնում էր, որ վատ բաներ լսի իր մասին, իսկ այդ տեսչը սատանայի պես հետապնդում է որոշ հիմար մարդկանց: Եթե էդգարը ոչինչ չիմանար մեր խոսակցության մասին, նա երբեք իրեն վատ չէր զգա: Եվ իրոք, նա անմիտ դժգոհությամբ հարձակվեց ինձ վրա այն բանից հետո, երբ ի սեր նրա ես խուսափեցի նախատինք թափեցի նրա գլխին՝ ինձ համար արդեն միևնույն էր, թե նրանք ինչպես կվարվեն իրար հետ: Ծա հատկապես զգում էի՝ ինչով էլ որ այդ տեսարանը վերջանար, մենք բոլորս էլ բաժանվելու ենք իրարից, և ով գիտի, թե ինչքան ժամանակով: Դե լավ, եթե ես չեմ կարող Հիթքրիֆին պահել որպես ընկեր, եթե էդգարն ուզում է անարգ ու խանդոտ լինել, ես կկործանեմ ինձ և կկոտրեմ նրանց երկուսի սրտերն էլ: Միայն այդ ձևով ես շատ շուտ ամեն ինչին վերջ կտամ: Բայց դա կլինի սոսկ այն դեպքում, երբ հույսս կործանվի. դա լինթընի համար այնքան էլ անակնկալ չի լինի: Մինչև հիմա նա զգույշ էր, վախենում էր զայրացնել ինձ: Դու պետք է բացատրես նրան, թե ինչքան վտանգավոր է այդ քաղաքականութունից նահանջելը, և հիշեցնես նրան, որ իմ անզուսպ բնավորութունը, եթե բորբոքվի, կվերածվի մոլեգնության: Ծա ուզում

եմ, որ դու էլ քո դեմքից վերացնես այդ սառնությունը և փոխարենը ավելի շատ անհանգստանաս ինձ համար:

Այն անտարբերությունը, որով ես ստանում էի այս հրահանգները, անկասկած, զայրացուցիչ էր, որովհետև դրանք արվում էին կատարյալ անկեղծությամբ, բայց ես այն կարծիքին եմ, որ մարդը, որը նախօրոք տրամադրված է իր ցամառն նուպաները օգտագործել հանուն իր սեփական շահերի, նույնիսկ նուպայի ամենաթեթ պահին կարող է լարել իր կամրի ուժը և բավականաչափ տիրապետել իրեն: Ես չէի ցանանում «վախեցնել» նրա ամուսնուն, ինչպես խնդրում էր Քեթրինը, և խորացնել նրա հուզմունքներն ի սեր իր իսկ եսասիրական նպատակների: Ուստի ոչինչ չասացի, երբ հյուրասենյակ գնալիս հանդիպեցի իմ տիրոջը, բայց թույլ տվեցի ինձ վերադառնալ և թաքուն լսել, թե արդյոք չե՞ն վերսկսի նրանք իրենց վեճը: Առաջինը խոսեց միստր Լինթընը:

— Սպասիր, Քեթրին, մի դեռ, — ասաց նա, առանց զայտրույթ արտահայտող ձայնի, բայց վշտալից հուսահատությամբ: — Երկար չեմ խոսի: Չեմ եկել վիճելու և ոչ էլ հաշտվելու, բայց ուզում եմ իմանալ, թե այսօրվա կատարվածից հետո մտադի՞ր ես արդյոք շարունակել քո մտերմությունը...

— Օ՛, ի սեր աստծո, — ընդհատեց տիկինը՝ ոտքը խփելով գետին, — ի սեր աստծո, այժմ այլևս չխոսենք այդ մասին: Քո սառը արյունը չի կարող տենդ առաջացնել. քո երակներում սառը ջուր է հոսում, բայց իմ երակներում արյուն է ելում, և քո այդ սառնությունը ցնցում է ինձ:

— Եթե ուզում ես ազատվել ինձանից, պատասխանիր իմ հարցին, — պնդում էր միստր Լինթընը: — Պետք է պատասխանես. քո կատաղությունը ինձ չի անհանգստացնում: Ես համոզվեցի, որ դու, եթե ուզենաս, կարող ես զուսպ լինել, ինչպես ամեն ոք: Այսուհետ խզելո՞ւ ես կապերդ Հիթքլիֆի կամ ինձ հետ: Անհնարին է, որ միաժամանակ լինես թե՛ իմ, և թե՛ նրա ընկերը, և ես անպայման ուզում եմ իմանալ, որ մեկիս ես ընտրում:

— Ես պահանջում եմ ինձ հանգիստ թողնել, — ճշաց Քեթրինը՝ կատաղած: — Ես դա պահանջում եմ: Մի՞թե չես տես-

նում, որ հաղիվ հմ կարողանում կանդնած մնալ ոտքերիս վրա: էդգար, դու... դու յբո՞ւմ ես ինձ:

Քեթրինը ձգեց զանգի լարն այնպես, որ այն զնզոցով կտրվեց. և դանդաղաքայլ ներս մտաւ: Սրբին անգամ համբերությունից դուրս կրեբեր այդ անիմաստ ու շար մոլուցքը: Բազմոցի վրա փռված, նա դուռը խփում էր բազմոցի արմնկակալին, պտամներն այնպես էր կճտացնում, որ թվում էր, թե հիմա կփշրվեն:

Միստր Լինթընը, հանկարծական զղշումով ու սարսափով համակված, նայում էր նրան: Նա ինձ խնդրեց ջուր բերել: Քեթրինի շունչը կտրվում էր, և նա շէր կարողանում խոսել:

Բերեցի մի բաժակ ջուր և, քանի որ նա շէր կարողանում խմել, ցանեցի երեսին: Մի քանի վայրկյան հետո նա, ընդարմացած, ձգվեց, աչքերը մարեցին, այտերը միանգամից սպիտակեցին, կապտեցին և դարձան մեռելային: Լինթընը սարսափեց:

— Առանձնապես ոչինչ չի պատահել — շշնջացի: Չէի ուզում, որ նա զղջա, թեպետ վախն ինձ էլ էր համակել:

— Նրա շուրթերին արյուն է երևում, — ցնցվելով ասաց նա:

— Մի անհանգստացեք, — խիստ տոնով ասացի ես: Եվ սլառմեցի, թե ինչպես, մինչև իր գալը, միսիս Լինթընը որոշել էր իրեն խելագար ձևացնել:

Անզգուշաբար դա ասացի բարձրաձայն և Քեթրինը լսեց. նա վեր թռավ տեղից, վարսերը փռվեցին ուսերին, աչքերը փայլեցին, պարանոցի ու թևերի մկանները անբնականորեն լարվեցին: Ես սպասում էի, որ ոսկորներս կջարդի, բայց միսիս Լինթընը մի պահ միայն նայեց շուրջը և ապա սենյակից դուրս նետվեց: Տերը հրամայեց, որ հետևեմ նրան. հասա նրա ննջասենյակի դռան մոտ: Նա թույլ շտվեց, որ ներս մտնեմ, դուռը ներսից փակեց:

Քանի որ հետևյալ առավոտ նա չբարեհաճեց ցած իջնել Կաթաճաշելու, ուստի գնացի, որ իմանամ, արդյոք չի՞ ցանկանա, որևէ բան բերեմ իր համար:

— Ոչ, — պատասխանեց նա վճռական տոնով:

Նույն հարցը կրկնվեց ճաշին և թեյի ժամանակ, դա կրկնվեց և հաջորդ առավոտ, բայց պատասխանը նույնն էր:

Միսար Լինթընը, իր հերթին, ժամանակն անց էր կացնում գրադարանում և շէր հետաքրքրվում, թե իր կինը ինչով է գրադված: Իզաբելլան և եղբայրը խոսակցութեան բռնվեցին մի ամբողջ ժամ, որի ընթացքում նա շանում էր քրոջը համոզել, որ իր զայրույթն արտահայտի Հիթլերի արարքների դեմ, բայց ոչինչ չկարողացավ հասկանալ քրոջ խուսափողական պատասխաններից և, ստիպված, ընդհատեց հարցաքննումը առանց մի բավարար բացատրություն ստանալու, հանդիսավոր կերպով վերջում նախազգուշացրեց քրոջը, որ եթե նա իր անխոհեմության պատճառով սկսի խրախուսել այդ անարժան սիրահետողին, ապա աղգակցական կապերը նրա և իր միջև կխզվեն:

ԳՆՈՒԽ ՏԱՍՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

Մինչ միսս Լինթընը ընկճված հոգով, միշտ լռելյայն ու համարյա միշտ արտասուքն աչքերին, թափառում էր այգում, իսկ եղբայրը փակված էր գրքերի մեջ (որոնք երբեք բաց չէր անում), հոգնաբեկ, ինչպես ենթադրում էի, մշտական ազոտ ակնկալումով, որ Քեթրինը կզղչա և ինքը կգա ներում խնդրելու ու հաշտվելու, և մինչ վերջինս համառութեամբ ծոմ էր պահում, մտածելով, որ հավանաբար, ամեն անգամ ճաշելիս էզգարի կերածը կոկորդում է կանգնում՝ իր բացակայության պատճառով,— և միայն հպարտութունը նրան թույլ չէր տալիս, որ վազելով գնա և ընկնի Քեթիի ոտքերը,— ևս զբաղված էի իմ տնտեսական գործերով՝ հավատացած լինելով, որ Ազարակատանը կա սոսկ մի խելամիտ անձնավորություն. և այդ անձնավորությունը ես եմ:

Չէի փորձում մխիթարել օրիորդին կամ համոզել միսս Լինթընին, և ոչ էլ ուշադրություն էի դարձնում իր կնոջ անուներ լսելու կարոտը քաշող իմ տիրոջ հառաչանքներից, քանի որ նրան թույլ չէին տալիս նույնիսկ լսել այդ ձայնը:

Ես մտածում էի՝ թող ապրեն, ինչպես ուզում են, ինձ համար մեկ է. և, թեպետ ամեն ինչ ընթանում էր տառապալից դանդաղկոտությամբ, ես՝ աստիճանաբար համակվում էի

ուրախությամբ, որ հաջողութեան ազոտ լույսն սկսում էր առկայծել:

Երրորդ օրը միսիս Լինթընը բացեց իր դուռը և, քանի որ ջուրը երկու ջրամաններում էլ վերջացել էր, պահանջեց նորից լցնել և տալ մի աման շիլա, որովհետև ինքը կարծես թե մեռնում է... Ես վճռեցի, որ այդ խոսքերը նախանշված էին էդգարի ականջների համար և չհավատացի, ոչ մեկին ոչինչ չասացի, իսկ նրա համար բերեցի թեյ ու բոված հացի կտորներ:

Նա սկսեց ազահաբար ուտել ու խմել, հետո տնքալով ու հուսահատ շարժումներ անելով՝ նորից մեջքով հենվեց բարձրին:

— Օ՛հ, ուզում եմ մեռնել,— բղավեց նա,— որովհետև ոչ մեկը իմ մասին չի մտածում: Լավ կլիներ, որ շուտեի:

Ապա ավելի ուշ լսեցի նրա շշնջոցը.

— Ոչ, չեմ մեռնի... նա կուրախանա... նա բոլորովին էլ ինձ չի սիրում... երբեք իմ կարոտը չի քաշում:

— Ինչ-որ բան ուզեցիք, տիկին,— հարցրի ես՝ տակավին պահպանելով արտաքին հանգստութուն, զնայած նրա մեռելագույն դեմքին ու չափից ավելի տարօրինակ շարժումներին:

— Այդ անխռով մարդն ի՞նչ է անում,— հարցրեց նա, իր հյուծված դեմքից խճճված խիտ մազերը մի կողմ տանելով:— Նա լեթարգիական քո՞ն է մտել, թե՞ մեռել է:

— Ոչ այս և ոչ էլ այն,— պատասխանեցի ես,— եթե դուք նկատի ունեք միստր Լինթընին: Նա, կարծեմ, բավականին լավ է, թեև պարզված է լինում ավելի շատ, քան պետք է. շարունակ զրքերի մեջ է, քանի որ ուրիշ բնկեր չունի:

Այդպես չէի խոսի Քեթիի հետ, եթե իմանայի նրա իսկական վիճակը, բայց չէի կարողանում ազատվել այն մըտքից, որ նրա տկարութունը մասամբ շինծու է:

— Գրքերի մե՞ջ,— շփոթված ճշաց նա:— Իսկ ես մեռնում եմ, գերեզմանի եզրին եմ: Աստված իմ, իսկ դիտի՞, թե ինչքան եմ փոխվել,— շարունակում էր նա՝ իրեն դիտելով դիմացի պատին կախված հայելու մեջ:— Մի՞թե սա Քեթրին Լինթընն է: Նա կարծում է, թե ես քմահաճում եմ, գուցեև խաղում եմ: Չե՞ս կարող բացատրել նրան, որ դա սարսա-

փեւլի լուրջ է, եթե միայն դեռ ուշ չէ, նեւլի, օգնիր, ինձ ստուգել նրա անկեղծ զգացմունքները, և ես այդ երկուսի մեջ բնորութիւն կանեմ կամ էլ միանգամից սովամահ կլինեմ... Թեև դա բոլորովին էլ պատիժ չի լինի, քանի որ նա սիրտ չունի կամ էլ կապաքինվեմ ու կհեռանամ այս վայրերից: Ծի՞շտ ես ասում նրա մասին: Զգուշացիր: Մի՞թե նա իսկապես այդքան անտարբեր է իմ ճակատագրի հանդեպ:

— Ինչո՞ւ, տիկին,— ասացի ես,— միսոր կինթընը գազափար էլ չունի, որ դուք տկար եք: Եվ, իհարկե, բոլորովին չի վախենում, որ դուք ձեզ սովամահ կանեք:

— Կարծո՞ւմ ես: Իսկ դու շե՞ս կարող նրան ասել, որ ես կանեմ այդ,— հայտարարեց նա:— Համոզի՛ր, ասա՛ նրան իբր քո կողմից, ասա՛, որ հավատացած ես, որ ես ինձ սովամահ կանեմ:

— Ո՛չ, միսիս կինթըն, դուք մոռանում եք,— հիշեցրի ես,— որ այսօր երեկոյան ախորժակով կերաք, իսկ դրա բարեբար ազդեցութիւնը դուք կզգաք վաղը:

— Եթե միայն համոզված լինեի, որ դա կսպանի էդգարին,— ընդհատեց նա,— ես անմիջապես կսպանեի ինձ: Երեք սարսափելի գիշեր ես կոպերս բոլորովին շեմ փակել... և, օ՛, ինչքա՛ն եմ տանջվել: Աչքիս տեսիլքներ էին երևում, նեւլի: Սկսում եմ կասկածել, որ դու ինձ շես սիրում: Ի՞նչ տարօրինակ է: Թեև մարդիկ ասում են իրար, արհամարհում, բայց ես կարծում էի, թե նրանք շեն կարող ինձ շփրել: Եվ մի քանի ժամվա ընթացքում նրանք բոլորը իմ թշնամիները դարձան: Բոլորն էլ՝ հավատացած եմ, այս տան բոլոր մարդիկ: Ինչ սարսափելի է հանդիպել մահվան, երբ շուրջ-բոլորդ սառած դեմքեր են: Իզաբելլան սարսափի ու զայրույթի զգացումով համակված, նույնիսկ վախենում է սենյակ մըտնել. սարսափելի կլինի տեսնել, թե ինչպես է մեռնում Քեթրինը: Իսկ կողքիդ հանդիսավոր տեսքով կանգնած էդգարը դիտում է վախճանդ. հետո ազոթքներով շնորհակալութիւն կհայտնի աստծուն, որ տան մեջ հաստատեց խաղաղութիւն և կվերագառնա իր գրքերի մոտ: Ով մի փոքր զգացմունք ունի, թող ասի՝ ի՞նչ է փնտրում զՄեքի մեջ, երբ ես մեռնում եմ:

Նա շէր կարողանում հաշտվել այն մտքի հետ, որ ես նրան

հուշեցի՝ ճակատագրին հնազանդվելու միտքը կրնա՞ր նրա փրկության համար հետադարձելու նրա տենդանքը տարակուսանքը խորացավ, վերածվեց խելագարութեան, ատամներով պատառոտեց բարձր, ապա ջերմությունից վառվելով վերկացավ, պահանջեց բաց անել լուսամուտը: Չմեռվա կեսն էր, հյուսիս-արևելքից փչում էր ուժեղ քամի. նա առարկեցի: Նրա հանկարծակի այլալված դեմքը և տրամաշարութեան մեջ արագ կատարվող փոփոխութեաններն սկսեցին անհանգստացնել ինձ, վերհիշեցի նրա նախկին հիվանդութեանը և բժշկի պատվերը՝ շահակաճառել նրան:

Մի բուսե առաջ նա համակված էր ցատումով: Այժմ հենվելով ձեռքին ու շնկատելով իմ անհնազանդութեանը, ասեո, մանկական զվարճանք էր գտնում այն բանում, որ հենց նոր պատառոտած անցքերից փետուրները քաշում հանում էր և ըստ տեսակների շարում սավանի վրա. նրան զբաղեցնում էին այլ մտքեր:

— Սա հնդկահավի փետուր է, — ինքն իրեն շնջաց նա, — սա վայրի բադի, իսկ սա՝ աղավնու: Ա՛հ, բարձի մեջ աղավնու փետուր են դնում և զարմանալի է չէ, որ ես շեմ կարողանում մեռնել: Երբ պառկեմ, դրանք շաղ կտամ հատակին: Ահա և ցախաբլրի փետուրը, իսկ սա՝ հազարի մեջ կճանաչեի, եղտյուրիկինն է: Միրուն թռչուն է. նա հավամրգու դաշտերում մեր գլխավերևը պտույտներ էր կատարում. ուզում էր շուտ հասնել իր բույնը, որովհետև բլուրների վրա կուտակվում էին ամպեր, և նա զգում էր, որ անձրև է գալու: Այդ փետուրը մենք գտանք հավամրգու դաշտում, թռչունը խփված չէր, նրա բույնը մենք գտանք ձմեռ ժամանակ, այն լի էր փոքրիկ կմախքներով: Հիթթրիֆը բույնի վրա թակարդ էր դրել և մեծերը չէին համարձակվում մոտենալ. ես նրան ստիպեցի խոստանալ, որ նա այսուհետև էլ երբեք լի կրակի այդ թռչունի վրա. և չէր կրակում: Ըհ, մի հատ էլ: Մի՞թե կրակել, խփել է իմ եղտյուրիկներին, նելլի: Կարմիր են փետուրները՝ գոնե մեկն ու մեկը: Թող մի նայեմ:

— Վերջ տվեք ձեր մանկական խազերին, — ընդհատեցի կո և գլխի տակից բարձր քաշելով՝ պատառոտված տեղերը ջուռ տվեցի ներքնակի կողմը, որովհետև բուռ-բուռ փետուրներ էր հանում միջից: — Պառկեցեք և փակեք ձեր աչքերը:

Դուք զառանցում եք: Սա ի՞նչ անկարգութիւնն է: Այնքան բմբուլ եք շաղ տվել հատակին, որ կարծես ձյունն է գալիս: Ես պատվում էի շուրջը, հավաքում փետուրները:

— Ես քեզ, Նելլի,— շարունակում էր նա, անուրջներով պարուրված,— տեսնում եմ պառաված. ալիհեր ես, ուսերդ կորացած են: Այս մահճակալը Փենիսթըն Քրեգսի դիցանուշներ քարանձավն է, դու հավաքում ես կայծքարից ագուցվող սրածայր նետեր, որպեսզի վնաս հասցնես մեր երինջներին: Երբ ես մոտենում եմ, դու ձեացնում ես, որ դրանք բրդի կտորներ են: Ահա թե ինչպիսին դու կլինես հիսուն տարի հետո. ես գիտեմ, դու հիմա այդպիսին չես: Ես չեմ զառանցում, սխալվում ես, այլ անպէս կհավատայի, որ դու իրոք, այդ հյուծված վհուկն ես, և որ ես իսկապես գտնվում եմ Փենիսթըն Քրեգսում. գիտակցում եմ, որ գիշեր է և սեղանի վրա վառվում է երկու մոմ, որոնց լույսից սև պահարանը սև սաթի պես փայլին է տալիս:

— Սև պահարան, ո՞ւր է,— հարցրի ես:— Դուք երագում եք տեսել:

— Պատի մոտ, ինչպես միշտ,— պատասխանեց նա:— Այն շատ տարօրինակ տեսք ունի. դրա մեջ ինչ-որ դեմք է երևում:

— Սենյակում ոչ մի պահարան չկա և երբեք էլ չի եղել,— ասացի ես ու կրկին նստեցի նրա կողքին, բարձրացրի վարագույրը, որ կարողանամ հետևել նրան:

— Մի՞թե չես տեսնում այդ դեմքը,— հարցրեց նա՝ հայացքը լրջորեն սևեռելով հայելուն:

Եվ ինչքան էլ փորձում էի, չէի կարողանում համոզել նրան, որ դա հենց նա ինքն է, որ կա, ուստի վերկացա և շալով ծածկեցի հայելին:

— Նա տակավին այնտեղ է՝ շալի հետևում,— անհանգրստացած պնդում էր Քեթին:— Եվ շարժվում է: Ո՞վ է դա: Հույս ունեմ, որ դուրս չի գա այնտեղից, երբ դու գնաս: Օ, Նելլի, սենյակում ոգի կա: Ես վախենում եմ, չեմ ուզում մեռնակ մնալ:

Բռնեցի ձեռքը և խնդրեցի հանգստանալ, որովհետև նորից ու նորից դողը ցնցում էր նրան, և նա չէր կարողանում իր լարված հայացքը հեռացնել հայելուց:

— Այնտեղ ոչ ոք չկա, — պնդում էի ես: — Այդ արուք լճերն ենք: Էիք, միսիս Լինթըն, դուք էլ գիտեք:

! — Ծս ինքս, — հեալով ճշաց նա: — Ժամացույցը խփեց տասներկուսը: — Ուրեմն ճիշտ է. դա սարսափելի է:

! Մատներով ամուր բռնեց սավանը և քաշեց աչքերին: Ծս փորձեցի մոտենալ դռանը և կանչել ամուսնուն, բայց ինձ հետ դարձրեց մի սուր ճշոց՝ շալը պահարանից ներքև էր սահել:

, — Հը, ի՞նչ պատահեց, — գոռացի: — Մի՞թե կարելի է այդպես երկշոտ լինել: Դե, սթափվեք: Ախր դա ապակի է՝ հայելի, միսիս Լինթըն, դուք ձեզ եք տեսնում այնտեղ, և ես էլ եմ այնտեղ՝ ձեր կողքին:

Դողալով ու շփոթված՝ նա պինդ բռնել էր ինձ, բայց սարսափը կամաց-կամաց վերացավ նրա դեմքից: Գունատ դեմքն ամոթից կաս-կարմիր կտրեց:

— Օ՛, աստված իմ: Կարծեցի տանն եմ, — հառաչեց նա: — Ինձ թվում էր, թե Մուլգին հողմերի դարավանդում պառկած եմ իմ սենյակում: Ծս տկար եմ և թուլությունից ուղեղս մթազնել է, ճշում էի առանց գիտակցելու: Դու մի խոսիր, միայն նստիր մոտս: Ծս վախենում եմ քնել՝ երազները սարսափեցնում են ինձ:

— Եթե հանգիստ քնեք, լավ կզգաք ձեզ, — պատասխանեցի ես: — Եվ հույս ունեմ, որ տանջանքները ձեզ հեռու կպահեն սովամահ լինելու նոր փորձից:

— Օ՛, եթե միայն պառկած լինեի հին տանը իմ մահճակալին, — դառնությամբ շարունակում էր նա, ոլորելով ձեռքերը: — Եվ այդ քամին, եղևինների մեջ աղմկելով, ինչպես է խփում ապակիներին: Թող ես զգամ հավամբզու դաշտերից փշող այդ հովը, թող գեթ մեկ անգամ ներշնչեմ այն:

Նրան հանգստացնելու համար մի քանի վայրկյան կիսաբաց արի լուսամուտը, և սառը հոսանքը թափանցեց ներս: Լուսամուտը ծածկեցի ու վերադարձա տեղս: Միսիս Լինթընը հիմա հանդիստ պառկած էր, արցունքները զլորվում էին այտերի վրայով: Ֆիզիկական ու ժասպառությունը լիովին ընկճել էր նրա ոգին: Մեր կրակոտ Քեթրինը հիմա ասես լալկան Լրեխա լինեք:

— Ինչքա՞ն ժամանակ է, որ ես փակված եմ այստեղ,—^Վ
հարցրեց նա՝ հանկարծ աշխուժանալով:

— Երկուշաբթի երեկոյան փակվեցիք,— պատասխանեցի,— իսկ հիմա հինգշաբթի լույս ուրբաթ գիշեր է, ավելի ճիշտ հիմա ուրբաթ առավոտ է:

— Ինչպե՞ս թե, դեռ նույն շաբաթն է,— բացականչեց նա:— Այդքան քի՞չ:

— Բավականին երկար ժամանակ է,— եթե ապրես միայն սառը ջրով ու սեփական շարությամբ,— նկատեցի ես:

— Արդարև, տաղտկալի ժամեր էին,— կասկածանքով փնթփնթաց նա:— Երևի ավելի երկար է տևել. հիշում եմ, նստել էի հյուրասենյակում այն բանից հետո, երբ նրանք վեճի բռնվեցին, և էդգարը դաժանորեն զայրացրեց ինձ, ես կատաղած փախա, մտա այս սենյակը: Հենց որ դուռը կողպեցի, կատարյալ խավարը պարուրեց ինձ, և ես վայր ընկա: Էդգարին շէի կարողանում բացատրել, թե ինչպես ստույգ կերպով զգում էի, որ նույա է սկսվում ինձ մոտ, որ կխելագարվեմ, եթե շարունակի ինձ ջղայնացնել: Լեզուս շէր ենթարկվում ինձ, խելքս էլ տեղը շէր, իսկ նա գուցե զլխի էլ շէր ընկնում, թե ինչպես եմ տառապում. հազիվ գիտակցեցի, որ պետք է փախչեմ նրանից ու նրա ձայնից: Երբ ուշքի եկա այնքան, որ տեսնեմ և լսեմ, արդեն լուսանում էր, և կասեմ քեզ, նելլի, թե ինչ էի մտածում, ինչի մասին էի նորից ու նորից կշռադատում, մինչև որ սկսեցի երկյուղ կրել իմ բանականության համար: Երբ պռոկել էի, զլխով սեղանի ոտքին հենված, իսկ աչքերս աղոտ կերպով տարբերում էին լուսամուտի գորշ քառակուսին,— ես մտածում էի, որ տանը պռոկած եմ կաղնեփայտե մահճակալին, և սիրտս ցավում է մեծ վիրավորանքից, թե ինչպիսի՞ քնաթաթախ վիճակում շէի կարողանում հիշել: Խորհում, տանջվում էի, մտածելով, թե դա ինչ վիրավորանք կարող է լինել. և ամենազարմանալին այն էր, որ իմ կյանքի վերջին յոթ տարին կարծես ջնջվել էր: Ես գրանք շէի հիշում, ասես իսկի շէին էլ եղել: Ես դարձյալ երեխա եմ: Հայրիկիս նոր էին թաղել, վշտաբեկ էի այն բանի համար, որ Հինդլիի պատճառով ինձ անջատում են Հիթքլիֆից: Առաջին անգամ ինձ մենակ պռոկեցրին, ես ամբողջ գիշեր լաց եղա, հետո արթնացա շարագուշակ նիրհից, ձեռքս

բարձրացրի, որպեսպի միջնորմները իրարից հեռացնեմ, ձեռքս դիպավ սեղանի տախտակին, հետո ձեռքս պարզելով՝ շոշափեցի գորգը, և այն ժամանակ հիշողությանս մեջ ամեն ինչ շողաց, իմ երբեմնի վիշտը կլանվեց հուսահատության մոլուցքի մեջ: Չգիտեմ ինչու, ես ինձ խորապես դժբախտ էի գտում. երևի ուղեղի ժամանակավոր խանգարում էր, որովհետև դրա համար ոչ մի պատճառ չկար: Բայց, երևակայիր, ես՝ տասներկուամյա աղջիկս, կարված էի Դարավանդից, ամեն տիպի վաղեմի կապերից ու Հիթքլիֆից, որն այդ ժամանակ ինձ համար ամեն ինչից վեր էր, և հանկարծ դարձա միսիս Լինթըն՝ Կեռնեխների ազարակատան տիրուհին, անծանոթ մարդու կինը, դարձա աքսորյալ, վտարանդի, կտրրվեցի այն ամենից, ինչ հարազատ էր ինձ: Պատկերացրու այդ ամենը և քո աչքերի առաջ կբացվի այն վիհը, որի մեջ գլորվել էի ես: Ինչքան ուզում ես գլուխդ օրորիր, նեղի, այնուամենայնիվ, այդ գու էիր, որ օգնեցիր նրանց խախտելու իմ կյանքի ընթացքը: Դու պետք է խոսեիր էդգարի հետ, պետք է խոսեիր և համոզեիր նրան, որ ինձ հանգիստ թողնեի: Օ՛, ես տոշորվում եմ: Ուզում եմ բաց օդում լինել: Ուզում եմ նորից աղջնակ դառնալ՝ կիսավայրենի, խիպախ ու ազատ, ծիծաղել ի պատասխան վիրավորանքների և դրանց պատճառով շիջազարվել: Ինչո՞ւ եմ ես այդպես փոխվել: Ինչո՞ւ, հենց որ ինձ մի խոսք են ասում, արյունս եռ է գալիս, ասես այրվելիս լինեմ դեհենի ժխորում: Հավատացած եմ, որ վերստին կլինեի այն, ինչ եղել եմ, միայն թե լինեմ բուրների ցախիների մեջ: Նորից լուսամուտը լայն բաց արա, փեղկերն ամրացրու, շուտ արա, ինչո՞ւ ես անշարժ կանգնած մնացել:

— Որովհետև չեմ ուզում, ո՞ր մրսեք և մեռնեք,— պատասխանեցի ես:

— Ուզում ես ասել, որ չես ցանկանում կյանք վերադարձնել ինձ,— բորբոքված գոռուց նա:— Բայց ես այնքան էլ անճար չեմ, ինքս բաց կանեմ:

Եվ նախրան կկարողանայի խանգարել նրան, նա ցած թռնվ մահճակալից, երերուն քայլերով անցավ սենյակի միջով, լայն բաց արեց լուսամուտը, հակվեց դեպի դուրս՝ ուշադրություն չդարձնելով իր վրա սուրացող սառը օդին:

Սա խնդրում, պաղատում էի և, ի վերջո, փորձեցի զոռով հետ քաշել նրան: Բայց իսկույն համոզվեցի, որ զառանցանքի մեջ նա ինձնից ավելի ուժեղ է (նա, անշուշտ, զառանցում էր, դա հասկացա նրա հետագա շարժումներից և անհարիր խոսքերից):

Լուսնյակ շկար, ներքևում ամեն ինչ պարուրված էր մշուշապատ խավարի մեջ. ոչ մի տնից լույսը չէր առկայծում՝ ո՛չ հեռվում և ո՛չ էլ երկնքում լույսերը ամենուր վաղուց մարել էին, իսկ Գարավանդի լույսերն առհասարակ չէին նրշմարվում, և, սակայն, նա պնդում էր, որ այդտեղ լույս է շողում:

— Հապա մի նայիր,— ոգևորված ճշաց նա,— ահա իմ սենյակը, այնտեղ մոմ է վառվում, ծառերն էլ լուսամուտի առաջ ճոճվում են. մի մոմ էլ վառվում է Զոզեֆի ձեղնահարկում: Զոզեֆը նստում է մինչև ուշ գիշեր, այնպես չէ՞: Նա սպասում է, թե ես երբ տուն կգամ, որպեսզի դարպասը փակի: Բայց պետք է երկար սպասի: Ճանապարհը դժվարանց է, տիրույթյամբ համակված սրտով ես ինչպե՛ս կտրեմ անցնեմ այն: Բացի այդ, այնտեղ գնալու համար պետք է անցնել Գիմմերթընի եկեղեցու մոտով: Երբ միասին էինք լինում, մենք մեռյալներից երբեք չէինք վախենում և, իրար համշտելով, կանգնում էինք գերեզմանների մեջ ու հանգուցյալների կանչում, որ գերեզմաններից դուրս գան... Բայց այժմ, Հիթթիֆ, եթե քեզ կանչեմ, դրա համար քաջություն կունենա՞ս: Եթե այո՞ դու իմը կլինես: Այն ժամանակ ես այնտեղ մենակ չեմ պառկի. թող ինձ տասներկու ոտնաչափ հորեն գետնի տակ և մի ամբողջ եկեղեցի փլեցնեն գերեզմանիս վրա, բայց չեմ հանգստանա, մինչև որ դու ինձ հետ չլինես... Երբեք չեմ հանգստանա:

Նա լռեց և տարօրինակ ժպիտով դարձյալ սկսեց.

— Նա խորհրդածո՞ւմ է, ուզում է, որ ինքս զնամ իր մոտ: Գե՛, ճանապարհ գտիր, բայց ոչ գերեզմանատան միջով: Ինչո՞ւ ես հապաղում: Գոհ եղիր, որ միշտ հետևել ես ինձ:

Տեսնելով, որ անօգուտ է վիճել նրա խելացնորության հետ, մտածում էի, թե ինչ ձևով առանց հեռանալու նրան փաթաթեմ մի ինչ-որ բանով (չէի համարձակվում մենակ թողնել բաց լուսամուտի մոտ), երբ ի սարսափ ինձ, լսեցի



հռան բռնակի շխկոցը, և ներս մտաւ միտար Լինթընը: Նա դրադարանից նոր էր գալիս և, միջանցքով անցնելիս, լսել էր մեր ձայները, հետաքրքրությունից, թե սարսափից դըրդված, ուզեց իմանալ, թե ինչու ենք մենք այդպիսի ուշ ժամին խոսում:

— Ա՛խ, սըր,— ճշացի ես՝ կանխելով բացականչությունը, որը պատրաստ էր պոկվել նրա շուրթերից, երբ տեսավ իր առաջ փոկած տեսարանը ու սենյակի տխուր մթնոլորտը:— Իմ խեղճ տիրուհին հիվանդ է և շեմ կարողանում նրա հետ լեզու գտնել: Նա բոլորովին չի ենթարկվում ինձ: Խնդրում եմ մոտեցեք և համոզեք նրան, որ անկողին մտնի: Մոռացեք ձեր դայրույթը, նա ուրիշ ճանապարհով չի գնա, կգնա միայն իր ընտրած ճանապարհով:

— Քեթրինը հիվանդ է,— հարցրեց նա և նետվեց մեզ մոտ:— Փակեք լուսամուտը, էլլեն: Քեթրինը, ինչո՞ւ...

Նա լուեց: Միսիս Լինթընի վտիտ տեսքն այնպես շշմեցրեց նրան, որ լեզուն կարկամեց, և միայն սարսափած հայացքն էր զարմանքով նրա վրայից փոխադրում ինձ վրա:

— Նա անհանգիստ էր,— շարունակեցի ես,— գրեթե ոչ մի բան չի դրել բերանը և ոչ մի անգամ չի գանգատվել. մինչև այս երեկո մեզնից ոչ մեկին չէր ընդունում, ուստի չէինք կարող նրա վիճակի մասին իրազեկ դարձնել ձեզ. ավր մենք ինքներս էլ ոչինչ չգիտեինք, բայց ոչինչ, դատա՛րկ բան է:

Զգացի, որ հիմար բացատրություն տվեցի. իմ տերը դեմքը խոժոռեց:

— Դատարկ բան է, մի՞թե, էլլեն Դին,— խիստ տոնով ասաց նա:— Դուք դեռ պետք է ավելի պարզ բացատրեք, թե ինչու եք թաքցրել ինձնից:— Եվ կհորը բարձրացրեց ձեռքերի վրա ու վշտալից հայացքով նայեց նրան: Սկզբում Քեթրինը նրան շճանաչեց: Ամուսինը անտեսանելի էր մնում նրա հեռուն հառած հայացքից: Սակայն նրա զառանցանքը ձանձրացնող չէր: Աչքերը հեռացնելով դրսի խավարից, Քեթրինը կամաց-կամաց ուշադրությունը կենտրոնացրեց իմ տիրոջ վրա և գլխի ընկավ, թե ով է նրան իր ձեռքերի վրա պահում:

— Աա՛, եկա՛ր, էդգար Լինթըն, եկա՛ր,— ասաց նա գայրալից ողևորությամբ:— Դու այնպիսի մի բան ես, որը

հեշտությամբ գտնվում է, երբ այն ամենից քիչ է հարկավոր, իսկ երբ հարկավոր է, երբեք չես գտնի: Ծս կարծում եմ, որ հիմա կսկսվեն անվերջանալի գանգատներ, տեսնում եմ, որ այդպես էլ կլինի, բայց դրանք չեն խանգարի, որ ես գնամ այնտեղի իմ անձուկ տունը՝ իմ հանգստավայրը, ուր կմտնեմ նախքան զարնան վերջանալու: Այդ վայրն այնտեղ է՝ ոչ Լինթընների մեջ, հիշիր, ոչ էլ եկեղեցու կամարների տակ, այլ բաց երկնքի տակ, իսկ սնարիս՝ քար: Իսկ դու, ինչպես ուզում ես՝ կարող ես գնալ նրանց մոտ կամ էլ գալ ինձ մոտ:

— Քեթրին, այդ ինչ արեցիր,— սկսեց իմ տերը:— Ծս քեզ համար այլևս ոչի՞նչ եմ: Դու սիրում ես այդ թշվառական Հիթ...

— Լոհ՛ր,— զոռաց միսիս Լինթընը:— Իսկույնեթ լոիր: Եթե նրա անունը տաս, ես անմիջապես լուսամուտից դուրս կցատկեմ և վերջ կտամ կյանքիս: Այն, ինչ հիմա բռնած պահում ես ձեռքերիդ վրա, կարող է քոնը լինել, բայց իմ հոգին կլինի այն բլուրի գագաթին, եթե մի անգամ էլ դիպչես ինձ: Ծս քեզ չեմ ուզում, էդգար. դու ինձ պետք էիր, բայց դա անցավ: Վերադարձիր զրքերիդ մոտ: Ծս ուրախ եմ, որ միսթարվելու բան ունես, որովհետև այն, ինչ ունեիր իմ մեջ, անցավ գնաց:

— Նրա մտքերը հաճում են, սըր,— միջամտեցի ես:— Ամբողջ երեկո անմիտ բաներ է ասում: Բայց տվեք նրան հանգստություն, պատշաճ խնամք, և նա ուշքի կգա: Այսուհետև պետք է զգույշ լինել և շղայրացնել նրան:

— Ծս ձեր հետագա խորհուրդների կարիքը չունեմ,— պատասխանեց միստր Լինթընը:— Դուք գիտեիք ձեր տիրուհու բնավորությունը և այնուամենայնիվ, թույլ տվեցիք, որ ես վշտացնեմ նրան: Եվ ինձ ոչ մի խոսք չեք ասել այն մասին, թե այս երեք օրը ինչ է կատարվում նրա հետ: Ի՞նչ անգութն եք դուք: Մի քանի ամսվա հիվանդությունը շէր կարող այդպիսի փոփոխություններ առաջացնել:

Ծս սկսեցի պաշտպանվել՝ մտածելով, որքա՞ն անարդարացի կերպով ինձ մեղադրում է ուրիշի շարակամ կամակորության համար:

— Գիտեի, որ միսիս Լինթընն ունի համառ և իշխանատենչ բնավորություն,— պատասխանեցի ես,— բայց չդիտեի,

որ դուք ուզում եք խրախուսել նրա կատաղի բնավորութունը՝ նրա Չգիտեի, որ ի հաճույս տիկնոջ, ես պետք է աչքերս փակեի միտար Հիթթլիֆի մեքենայութունների առաջ: Ես կատարեցի հավատարիմ ծառայի պարտականութունը, հայտնեցի ձեզ և ստացա հավատարիմ ծառայի ոռճիկը: Դե, ինչ արած, դա ինձ համար դաս կլինի, մյուս անգամ զգուշ կլինեմ: Մյուս անգամ ինքներդ կարող եք ձեզ համար հարկավոր տեղեկությունները հավաքել:

— Եթե մյուս անգամ որևէ տեղեկություն հաղորդեք ինձ, կազատվեք աշխատանքից, էլլեն Դին, — պատասխանեց նա:

— Ուրեմն Դուք այլևս ոչինչ չէ՞ք ուզում լսել այդ մասին, միտար Լինթրն, — ասացի ես: — Հիթթլիֆը ձեր թույլտրվությամբ գալիս է, սիրաբանում օրիորդի հետ և ներս է նետվում ամեն անգամ, երբ դուք բացակայում եք տնից, որպեսզի թունավորի տիկնոջ հոգին ու նրան տրամադրի ձեր դեմ:

Քեթրինը ինչքան էլ խանգարված լիներ, խելքը գլխին էր, որ յուրովի մեկնաբանի մեր խոսակցությունը:

— Ա՛, Նելլին ինձ մատնեց, — կրքոտությամբ բացականչեց Քեթրին: — Նելլին իմ թաքուն թշնամին է: Վհ՛՛կ: Ուրեմն դու կայծքարե ու սրածայր նետեր ես հավաքում, որ օգտագործես մեր դեմ: Թողեք միայն գնամ, և նա կղզջա, գոռալով կհրաժարվի իր ասածից:

Մի մոլեգին կատաղություն բոցավառվեց աչքերում. նա հուսահատորեն ջանում էր ազատել իրեն Լինթրնի ձեռքերից: Ոչ մի ցանկություն չունեի սպասել և տեսնել, թե ինչով կվերջանա այդ տեսարանը. որոշեցի իմ պատասխանատվությամբ բժիշկ կանչել և դուրս եկա սենյակից:

Պարտեղի միջով անցա, որ ճանպարհ դուրս գամ այն տեղից, ուր ցանկապատին խփած էր մի կեռ՝ ձի կապելու համար, երբ տեսա ինչ-որ մի սպիտակ բան, որ երբում էր օդի մեջ և, իհարկե, ոչ քամուց: Չնայած շտապում էի, բայց կանգ առա տեսնելու, թե դա ինչ բան է, որ հետո երևակայություններով շտանջեմ ինձ՝ մտածելով, որ այն աշխարհից գնած մի էակ էր: Մեծ եղավ իմ վարմանքն ու շփոթվածությունը, երբ տեսա՝ ավելի շուտ շոշափելով, քան դիպելով,

որ դա Ֆաննին էր, միսս Իդաբելլայի սպանիելը, որին թաշկինակով կապել, կախել էին կեռից. շունը սատկելու վրա էր:

Արագորեն ազատեցի կենդանուն և տարա պարտեզ: Երբ միսս Իդաբելլան բարձրացավ իր սենյակ քնելու, տեսա, թե ինչպես շունը վազելով հետևեց նրան. զարմանում էի, թե ինչպես էր նա ընկել այդտեղ, և ով էր այն շարամիտ մարդը, որ այդպես էր վարվել շան հետ: Մինչ կեռից արձակում էի կապը, ինձ թվաց, թե հեռվից անընդհատ լսում եմ քառատրոփ սլացող ձիու սմբակների դոփշուն, բայց իմ մտքերն այնքան զբաղված էին ուրիշ բաներով, որ շմտածեցի այդ հանդամանքի մասին, թեև տարօրինակ էր գիշերվա ժամը երկուսին այդպիսի ձայն լսել այդ վայրերում:

Միստր Քեննեթը, բարեբախտաբար, հենց նոր էր տնից դուրս գալիս և պատրաստվում էր գնալ գյուղ մի հիվանդի մոտ, երբ ես մոտեցա նրան: Իմ ասածը Քեֆրին լինթընի հիվանդության մասին դրդեց նրան անմիջապես գնալ Ադարակատուն: Դա մի հասարակ, անտաշ մարդ էր, առանց վարանելու նա կասկած հայտնեց այն մասին, որ հիվանդը երկրորդ նուպային չի դիմանա, եթե առաջվա պես շենթարկվի ու չլսի բժշկի խորհուրդները:

— Նևլլի Դին,— ասաց նա,— ես կարծում եմ, որ նուպան առաջացել է մի ինչ-որ բացառիկ պատճառից: Ի՞նչ էր պատահել Ազարակատանը: Մեզ հասնում էին արտաստվոր լուրեր: Առողջ, ամուր կազմվածք ունեցող աղջիկը, որպիսին է Քեթրինը, դատարկ բանի համար անկողին չի ընկնի. նրա կերտվածքն ունեցող մարդկանց հետ այդպիսի բան չի լինում: Եվ այնքան էլ հեշտ չէ բուժել նրանց, երբ գործը հասել է տենդին և նման բաներին: Ինչի՞ց սկսվեց:

— Ամուսինը ինքը կասի ձեզ,— պատասխանեցի ես:— Բայց ձեզ ծանոթ է էրնշոուների կատաղած բնավորությունը, իսկ միսս Լինթընը նրանց բուրդին էլ իր գրպանը կմտցնի: Կարող եմ ասել՝ դա սկսվեց վեճի ժամանակ: Քեթրինը հույժ կատաղեց, և նրա մոտ նույնպես նուպա սկսվեց: Գոնե այդպես է հավատացնում նա ինքը: Վեճի թեժ պահին փախավ և փակվեց իր սենյակում: Հետո հրաժարվում էր ուտելիքից, իսկ հիմա մերթ զառանցում է, մերթ նիհնում,

չըջապատի մարդկանց ճանաչում է, բայց զլուխը լի է ամեն տեսակ սարսօրինակ մտքերով ու պատրանքներով:

— Միստր Լինթընը շա՞տ կվշտանա,— հարցրեց Քեննեթը:

— Կվշտանա՞:— նրա սիրտը կճաքի, եթե որևէ բան պատահի,— պատասխանեցի ես:— Դուք նրան պետք եղածից ավելի շատ մի վախեցրեք:

— Ախր ասում էի, որ զգույշ լինի,— ասաց իմ ուղեկիցը,— արճամարհեց իմ նախազգուշացումը, և ասա ձեզ հետևանքը: Չէ՞ որ վերջերս նա մտերմացել էր միստր Հիթքլիֆի հետ:

— Հիթքլիֆը հաճախ է այցի գալիս Ագարակատուն,— պատասխանեցի ես,— բայց ոչ այն պատճառով, որ նրա այցերը տիրոջը հաճելի են, այլ ավելի շուտ որպես տիկնոջ մանկության տարիների ծանոթ: Բայց հիմա իր այցերով նա այլևս չի անհանգստացնի, որովհետև հանդգնեց ցույց տալ, որ սպասելիքներ ունի միսս Լինթընից: Չեմ կարծում, որ նա նորից ընդունվի այս տանը:

— Իսկ միսս Լինթընը սառնությամբ վերաբերվեց նրան,— շարունակում էր հարցնել բժիշկը:

— Ես նրա վստահելի անձը չեմ,— պատասխանեցի՝ շքանկանալով շարունակել այդ խոսակցությունը:

— Իհարկե նա խորամանկ աղջիկ է,— զլուխը ճոճելով, նկատեց բժիշկը,— ոչ մեկի հետ չի խորհրդակցում: Բայց մի փոքր հիմար է: Վստահելի մարդկանցից լնում եմ, որ անցյալ գիշեր (և ինչ գեղեցիկ գիշեր էր) ձեր տուն հետևի տնկարանում նա երկու ժամից ավելի զբոսնում էր Հիթքլիֆի հետ: Հիթքլիֆը ստիպում էր նրան, որ տուն չգնա, այլ ձի նստի և փախչի իր հետ: Ըստ իմ ունեցած տեղեկությունների, աղջկան հաջողվեց զլուխը նրանից ազատել՝ խոստանալով, որ մյուս հանդիպման ժամանակ ինքը պատրաստ կլինի. թե երբ կլինի այդ հանդիպումը, իմ տեղեկատուն չէր լսել, բայց նախազգուշացրեք միստր Լինթընին, որ նա աչալուրջ լինի:

Այդ լուրը ինձ համակեց նոր երկյուղով: Ես թողեցի Քեննեթին և համարյա ամբողջ ճանապարհը վազել եմ, որ տուն հասնեմ: Փոքրիկ շունը դեռ կաղկանձում էր պարտեզում: Մի բոպե հապաղեցի, որ դարպասը բաց անեմ նրա համար, բայց տուն գնալու փոխարեն, նա խոտերը հոտո-

տելով դուրս էր նետվում ճանապարհի վրա, եթե ես նրան չբռնեի ու տուն շտանեի:

Երբ բարձրացա Իզաբելլայի ննջասենյակը, իմ կասկածները հաստատվեցին. այն դատարկ էր: Եթե մի երկու ժամ շուտ հասած լինեի, միսիս Լինթրնի հիվանդությունը երևի Իզաբելլային հետ պահեր շմտածված քայլից: Բայց հիմա ի՞նչ կարելի էր անել: Եթե անմիջապես հետապնդեին նրան, հնարավոր է, որ բռնեին ու հետ բերեին: Բայց ես ինքս չէի կարող սլանալ նրանց հետևից, իսկ տնեցիներին հայտնել և աղմուկ բարձրացնել չէի համարձակվում. ավելի ևս չէի կարող կատարվածը հայտնել իմ տիրոջը, որը շափից ավելի կլանված էր իր դժբախտությունամբ. սիրտը չէր արձագանքի այդ նոր վշտին:

Մնում էր միայն լռել ու թույլ տալ, որ դեպքերը ընթանան իրենց հունով, և քանի որ Քեննեթն արդեն եկել էր, ես, չկարողանալով թաքցնել հուզումս, գնացի, որ հայտնեմ նրան:

Քեթրինը պառկած էր անհանգիստ քնով: Ամուսնուն հաջողվեց զսպել նրա կատաղության նուպան. հիմա հակվել էր կնոջ բարձին, հսկելով նրա տանջահար դեմքի ամեն մը ստվիքը և ամեն մի փոփոխությունը:

Հիվանդության պատկերը պարզելուց հետո բժիշկը հույս տվեց ամուսնուն, որ ամեն ինչ դեպի լավը կգնա, եթե միայն հիվանդին շրջապատենք կատարյալ և մշտական հանգստությամբ: Իսկ ինձ հասկացնել տվեց, որ սպառնացող վտանգը ոչ այնքան մահն էր, որքան հարատև խելացնորությունը:

Այդ գիշերը ես և միստր Լինթրնը աչք չփակեցինք. իրոք, չէինք էլ ուզում քնել: Բոլոր ծառաները վերկացան սովորական ժամից շատ շուտ, տանը սուսիկ-փուսիկ քայլում էին ոտքերի մատների ծայրերին և խոսում էին շշուկով, երբ աշխատելիս հանդիպում էին իրար: Բոլորն էլ, բացի Իզաբելլայից, շտապում էին մի որևէ բանով օգնել. նրանք սկսեցին ակնարկներով խոսել այն մասին, թե որքան խորն է նա քնած:

Սղբայրը նույնպես հարցրեց, թե արդյոք քույրը վե՞ր է կացել, ասես, անհամբեր սպասում էր նրա գալուն և վիրավորված էր, որ նա այդպես քիչ է անհանգստանում հարսի

համար: Ես դողում, վախենում էի, որ նա ինձ հանկարծ շուղարկի օրիորդին կանչելու, բայց ազատվեցի առաջինը նրա փախուստի մասին հայտնելու պարտականությունից: Աղախիններից մեկը՝ մի հիմար աղջիկ, որ առավոտ շուտ ինչ-որ հանձնարարությամբ գնացել էր Գիմմերթըն, աստիճաններով շնչակտուր բարձրանալով, շշմած նետվեց սենյակ և ձայնը գլուխը գցելով գոռաց.

— Ա՛հ, ողորմած տեր... Հիմա ի՞նչ պետք է լինի: Տեր, տեր իմ, մեր երիտասարդ լեզին...

— Ի՞նչ ես ձենդ գլուխդ գցել,— բղավեցի ես, նրա գոռոցից կատաղած:

— Կամաց խոսիր, Մերի... Ի՞նչ է պատահել,— ասաց միստր Լինթընը:— Ի՞նչ է եղել ձեր օրիորդին:

— Նա փախավ, փախավ: Հիթքլիֆը տարավ, փախավ նրա հետ,— հեալով հայտնեց աղջիկը:

— Ճիշտ չէ,— բացականչեց Լինթընը և հուզված վերկացավ:— Չի կարող պատահել. որտեղի՞ց հնարեցիր: էլլեն Դին, գնացեք և փնտրեք միսս Իզաբելլային: Դա անհավատալի է, անհնարին:

Այդ խոսքերով նա աղջկան տարավ դռան մոտ և նորից պահանջեց, որ բացատրի, թե ինչու է այդպիսի հայտարարություն անում:

— Ճանապարհին հանդիպեցի կաթ բերող տղային,— կակազելով խոսում էր աղջիկը,— և նա հարցրեց, Ազարակատանը հո իրարանցում չկա: Ես կարծեցի, թե տիկնոջ հիվանդությունը նկատի ունի, ուստի պատասխանեցի՝ այո կա: Այն ժամանակ նա ասաց. «Երևի նրանց հետևից մա՛րդ է գնացել»: Ես անթարթ աչքերով նայում էի նրան: Նա հասկացավ, որ ոչինչ չգիտեմ, և պատմեց, թե ինչպես երկու մղոն Գիմմերթընից հեռու, գիշերվա կեսին մի ջննալմեն ու մի լեզի կանգ առան դարբնոցի առաջ, որ ձին պայտեն: Իսկ դարբնի աղջիկը վեր էր կացել, որ տեսնի, թե ովքեր էին նրանք և երկուսին էլ իսկույն ճանաչել էր: Նա նկատեց, որ տղամարդը՝ Հիթքլիֆն էր. չէր կասկածում, որ դա հենց նա էր, և ով կարող էր նրան շճանաչել, հաշիվը փակելիս նա իր հոր ձեռքը խոթեց մի ոսկեդրամ: Լեզին դեմքը ծածկել էր քողով: Բայց նա ջուր խնդրեց և խմելիս քողը հետ սահեց,

աղջիկը շատ ուշադիր դնեց նրան: Հիթքլիֆը բռնել էր սան-
ձևը, և հենց որ նստեցին, շուռ եկան, գնացին գյուղի հա-
կառակ ուղղությամբ, սլանալով այնպիսի արագությամբ,
որքան որ թույլ էին տալիս մեր խորդուբորդ ճանապարհնե-
րու: Դարբնի աղջիկը հորը ոչինչ չասաց, բայց այս առավոտ
այդ նորությունը տարածվեց ամբողջ Գիմմերթընում:

Ձևի համար ես վազեցի Իզաբելլայի սենյակը և վերա-
դառնալով հաստատեցի աղախնի ասածը: Միտար կինթընը
նստել էր իր նախկին տեղում՝ մահճակալի մոտ. երբ ներս
մտա, նա նայեց ինձ, հասկացավ իմ շվարած հայացքի
իմաստը, ապա աչքերը հռռեց հատակին, ոչ մի կարգադրու-
թյուն չարեց, ոչ մի բառ չարտասանեց:

— Արժե՞ արդյոք միջոցներ ձեռք առնել, որ դրանց բռ-
նենք և աղջկան տուն վերադարձնենք, — հարցրի ես: — Ի՞նչ
կհրամայեք անել:

— Օրիորդը իր կամքով է գնացել, — պատասխանեց իմ
տերը, — նա իրավունք ուներ գնալու, եթե դա իրեն հաճելի
էր: Այդ հարցով այլևս մի անհանգստացրեք ինձ: Այսուհետև
նա միայն անունով է իմ քույրը. և դա ոչ այն պատճառով,
որ ես հրաժարվում եմ նրանից, այլ նրա համար, որ ինքը
հրաժարվեց ինձանից:

Եվ այս էր այն ամենը, ինչ նա ասաց այդ առթիվ: Դրանից
հետո այլևս ոչ մի բան չէր հարցնում քրոջ մասին, երբեք
չէր հիշում նրա անունը, միայն ինձ հրամայեց նրա բոլոր
իրերն ուղարկել նոր բնակավայրի հասցեով, երբ այն հայտ-
նի դառնա:

ԳԼՈՒԽ ՑԱՍՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Երկու ամիս փախստականները անհայտ մնացին: Այդ
երկու ամսվա մեջ միսիս կինթընը մաքառեց ու հաղթահա-
րեց այն ահավոր ցնցումը, որը բժիշկներն անվանում են
ուղեղի տենդախտ: Ոչ մի մայր այնպիսի նվիրվածությամբ
չէր խնամի իր միևնուճար երեխային, ինչպիսի նվիրվածու-
թյամբ էր դարձրել խնամում էր կնոջը: Նա հետևում էր նրան

զոր ու գիշեր և համբերությամբ տանում էր այն բոլոր նեղությունները, որ կարող էին պատճառել բորբոքված նյարդերը և խախտված բանականությունը. թեպետ Քեննեթը նշեց, որ այն, ինչ սիրող ամուսինը այդպիսի խնամքով փրկում է գերեզմանից, ապագայում կհանդիսանա իր մշտական անհանգստության աղբյուրը. իրականում իր առողջությունն ու ուժերը զոհարելու է, որպեսզի պահպանի երբեմնի մարդու սոսկ ավերակներ, նրա շնորհակալությունը և ուրախությունը շափ ու սահման չկար, երբ հայտարարվեց, որ Քեթրինի կյանքին այլևս վտանգ չի սպառնում: Նա ժամերով նստում էր կնոջ կողքին և հետևում, թե ինչպես էին նրա ֆիզիկական ուժերը աստիճանաբար վերականգնվում, և խաբուսիկ հույսեր էր փայփայում, որ կնոջ բանականությունը կվերականգնի նրա հավասարակշռությունը և շուտով լիովին կդառնա նախկին Քեթրին:

Առաջին անգամ Քեթին իր սենյակից դուրս եկավ մարտ ամսվա սկզբներին, միասր լինթընը առավոտյան նրա բարձի վրա դրեց մի փունջ բրբուռ. երբ նա արթնացավ, աչքերը, որոնք վաղուց չէին փայլել բավականությամբ, կանգ առան ծաղիկների վրա ու հրճվանքից պայծառացան. նա ազահարար հավաքեց փունջը:

— Սրանք Դարավանդի ամենավաղ ծաղիկներն են,— բացականչեց նա:— Սրանք ինձ հիշեցնում են ձնհալի մեղմ քամի, ջերմացնող արևաշող և զրեթե հալված ձյուն. էդգար, երևի այնտեղ փշում է հարավային քամին, և ձյունը համարյա հալվել վերջացել է:

— Ձյունը լիովին հալվել վերջացել է, սիրելիս,— պատասխանեց ամուսինը. հավամբողու դաշտերում ես տեսնում եմ երկու սպիտակ բիծ. երկինքը կապույտ է, արտույտները երգում են, իսկ առվակներն ու վտակները մինչև եզրերը լցված են, Քեթի: Անցյալ գարնանը այս ժամանակ ես տեսնում էի քեզ բերել այս տանիքի տակ, իսկ հիմա կուզենայի, որ դու մեկ-երկու մղոն բարձրանայիր դեպի այն բլուրները, այնտեղ օդն այնպես անուշաբույր է, համոզված եմ, որ այն կապաքինի քեզ:

— Ես այնտեղ մեկ անգամ էլ կլինեմ,— ասաց հիվանդը, իսկ հետո դու կթողնես, կհեռանաս, և ես կմնամ այնտեղ

տոհավետ: Հաջորդ գարնան դու վերստին կտենչաս ինձ տեսնել այս տանիքի տակ և հետադարձ հայացքով կնայես անցյալին ու կմտածես, թե այսօրը ինչքա՞ն երջանիկ էիր:

Լինթընը երկար, ջերմորեն շոյում, փաղաքշում էր, ջաշնում էր սիրո խոսքերով ուրախացնել նրան, բայց նա տարտամ հայացքով նայում էր ծաղիկներին, և արցունքի կաթիլները նրա թարթիչներից կախվում, արագ գլորվում էին այտերի վրայով:

Մենք գիտեինք, որ իրականում նա իրեն լավ էր զգում, և այդ հուսահատությունը վերապրում էինք նրա երկար ժամանակ շորս պատերի մեջ փակված մնալուն, ուստի որոշեցինք, ինչ-որ շափով փոխել նրա ապրելակերպի պայմանները:

Միտար Լինթընը հրամայեց ինձ շաբաթներով դատարկ մնացած հյուրասենյակում կրակ վառել և բազկաթոռը դնել արևոտ կողմի լուսամուտի մոտ, ապա կնոջը տարավ ներքև, և նա երկար ժամանակ նստած մնաց՝ վայելելով հաճելի ջերմությունը և, ինչպես սպասում էինք, տեսնելով շրջապատի առարկաները՝ աշխուժացավ. թեև դրանք սովորական իրեր էին, բայց նա ազատվեց մռայլ մտքերից, որոնք պաշարում էին նրա սենյակում, որտեղ անցնում էր իր հիվանդությունը:

Երեկոյան դեմ նա սաստիկ հոգնեց, բայց ոչ մի կերպ հնարավոր չէր համոզել նրան, որ վերադառնա ննջասենյակ: Ես ստիպված էի անկողին պատրաստել հյուրասենյակի բազմոցի վրա, մինչև նրա համար կնախապատրաստեին մի այլ սենյակ:

Աստիճաններով բարձրանալիս և իջնելիս նրան շնորհակցանքներ համար մենք հարմարեցրինք այս սենյակը, որտեղ դուք այժմ պառկում եք, որը գտնվում է նույն հարկում, որտեղ է և հյուրասենյակը. շուտով հիվանդն այնքան կազդուրվեց, որ հենվելով էղգարի թևին՝ կարողանում էր քայլել մի սենյակից մյուսը:

Ախ, ես ինքս էլ էի կարծում, որ շրջապատված լինելով այդպիսի խնամքով՝ նա դեռ կարող է ապաքինվել: Իսկ մենք կրկնակի պատճառ ունեինք այդպես ցանկանալու համար, որովհետև նրա կյանքից կախված էր մի այլ կյանք. մենք

Նույս էինք փայփայում, որ շատ շուտով միտար կինթընի սիրտը կլցվի ուրախությամբ, և ժառանգի ծնվելուց հետո նրա հողերը ուրիշի ձեռքը չեն ընկնի:

Ես մոռացա հիշել, որ իր գնալու օրվանից վեց շաբաթ հետո միսս Իզաբելլան եղբորն ուղարկեց մի հակիրճ նամակ, որով հայտնում էր, որ ինքը պսակվել է Հիթլերիֆի հետ: Նամակի տոնը կարող էր չոր ու սառը թվալ, բայց նամակի վերջում մատիտով գրված էր մի հավելում, որի մեջ խճճված ներողություններով խնդրվում էր պահպանել իր մասին բարի հիշատակ և ներել իրեն, եթե իր վարքագիծը վիրավորել է նրան. պնդում էր, որ այն ժամանակ ինքը չէր կարող այլ կերպ վարվել, իսկ ինչ արված է, էլ հետ չես դարձնի:

Կինթընը, կարծեմ, չպատասխանեց քրոջ նամակին, բայց երկու շաբաթ անց ես ստացա մի երկար նամակ, որը տարօրինակ թվաց ինձ, եթե հիշեմք, որ այն գրել էր երիտասարդ կինը գրեթե իր մեղրամսի շրջանում: Ես այն հիմա կկարդամ, որովհետև պահում եմ մինչև այսօր: Մեռածներից մնացած հիշատակները թանկ են մեզ համար, եթե նրանք իրենց կենդանության օրոք սիրելի են եղել մեզ:

«Սիրելի էլլեն,— այդպես է սկսվում նամակը,— երեք գիշեր ես եկա Մուլեգին հողմերի դարավանդ և առաջին անգամ լսեցի, որ Քեթրինը հիվանդ է եղել ու հիմա էլ շատ հիվանդ է: Ենթադրում եմ, որ նրան չպետք է գրեմ, իսկ եղբայրս խիստ բարկացած կամ շատ վշտացած լինելու պատճառով չպատասխանեց իմ նամակին, բայց որևէ մեկին ես պետք է գրեմ և ընտրությունս ընկավ ձեզ վրա:

Հայտնեք էդգարին, որ ամեն ինչ կտամ, միայն թե կրկին անգամ տեսնեմ իրեն... որ իմ գալուց արդեն մի օր հետո իմ սիրտը վերադարձավ Կեռնեխների ապարակատուն և այս պահին էլ, նրա և Քեթրինի նկատմամբ ջերմ ղգացմունքներով լի սիրտս դեռ այնտեղ է: Սակայն հետևել իմ սրտին չեմ կարող (այդ բառերն ընդգծված են)՝ նրանք չպետք է սպասեն ինձ. ինչ եզրակացություն ուզում են, թող անեն, միայն թե ամեն ինչ թող չվերագրեն իմ թուլությունը կամ նրանց նկատմամբ ունեցած ոչ բավականաչափ սիրուն:

Նամակի մնացած մասը միայն ձեզ համար է: Ուզում եմ ձեզնից երկու հարցում անել: Առաջին.

Այստեղ ապրելով՝ ինչպե՞ս էիք դուք կարողանում պահպանել մարդու բնությանը յուրահատուկ սովորական բարի հակումները: Ինձ այստեղ շրջապատող մարդկանցից ոչ մեկի մեջ չհանդիպեցի որևէ զգացմունքի, որ նման լիներ իմ զգացմունքներին:

Ինձ շատ հետաքրքրում է երկրորդ հարցը, որ հետևյալն է.

Արդյոք միտքը Հիթլերիֆը մա՞րդ է: Եթե այո, արդյոք խելագար չէ՞: Եվ եթե ոչ, ապա ո՞վ է նա՝ սատանա՞: Չեմ ասի, թե ինչի համար եմ հարցնում, բայց ազաշում եմ բացատրեք ինձ, եթե կարող եք, այդ ո՞ւմ հետ եմ ես ամուսնացել. այդ կանեք, երբ գաք ինձ տեսնելու. պետք է գաք, էլլեն, և այն էլ շատ շուտ: Մի գրեք, այլ եկեք և մի քանի խոսք բերեք ինձ էղգարից:

Այժմ լսեք, թե ինչպես ընդունեցին ինձ իմ նոր տանը, թեև պատկերացնում էի, թե ինչպիսին պետք է լինի Դարավանդը: Չէի ուզենա կանգ առնել այնպիսի բաների վրա, ինչպիսին, օրինակ, արտաքին հարմարությունների թերությունն է. դրանք իմ մտքերը զբաղեցնում են այն պահին, երբ ինձ համար գոյություն չունեն: Ես կծիծաղեի և ուրախությունից խայտալով պար կգայի, եթե պարզվեր, որ իմ ամբողջ թշվառությունը բխում է հենց այդ հարմարությունների բացակայությունից, իսկ մնացածը սոսկ անբնական երազ է:

Արևը Ագարակատանը մայր էր մտնում, երբ մենք թեքվեցինք հավամբու դաշտերի կողմը. դա այն պահն էր, երբ ժամը մոտենում էր վեցին: Իմ ուղեկիցը հապաղեց կես ժամ, որ այդին ու պարտեզը, գուցե և ամբողջ տարածքը, ավելի ուշադիր դիտի: Մութն արդեն կոխել էր, երբ մենք ֆերմայի սալահատակված բակով շտապ քայլում էինք և ձեր նախկին ընկերակիցը՝ Ջուզեֆը, թաթախովի մոմի լույսի տակ ընդառաջ եկավ մեզ: Ի պատիվ նրա, պետք է ասել, որ նա այդ արեց քաղաքավարություն: Նրա առաջին քայլը եղավ այն, որ կիսայրուկ մոմը մոտեցրեց դեմքիս, շարամտորեն խեթ-խեթ նայեց, դուրս ցցեց ներքին շրթունքը և շուտ եկավ:

Հետո երկու ձիերն էլ ընդունեց, տարավ ախոռ. կրկին դուրս եկավ, որ իբր կողպի «գրսի դարպասը», կարծես թե ապրում ենք հին ամրոցում:

Հիթբլիֆը մնաց, որ խոսի հետը, իսկ ես անցա խոհանոց՝ այդ կեղտոտ ու անմաքուր խուցը. համոզված եմ, որ դուք շեք ճանաչի այն՝ այնչափ փոխվել է այն պահից ի վեր, երբ գտնվում էր ձեր տնօրինության տակ:

Կրակի մոտ կանգնած էր վայրագ տեսքով և պինդ կազմվածքով, կեղտոտ շորեր հագած մի տղա, որի աչքերն ու բերանի ծալքերը հիշեցնում էին Քեթրինին:

«Դա էդգարի զարմիկն է,— մտածեցի ես,— ուրեմն որոշ շափով՝ և իմ. պետք է ձեռքով բարևել... այո... և համբուրել նրան: Հարկավոր է անմիջապես հաստատել բարի հարաբերություններ»:

Մոտեցա և, փորձելով բռնել նրա պինդ սեղմած բռունցքը, ասացի.

— Ինչպե՞ս ես, սիրելիս:

Նա պատասխանեց անիմաստ բառերով, ես ոչինչ չհասկացա:

— Լինե՞նք բարեկամներ, Հերթըն,— փորձեցի նորից խոսակցություն սկսել:

Իմ համառության վարձատրությունը եղավ հայհոյանք. նա սպառնաց, որ Վիշապօձին կարծակի ինձ վրա, եթե ձեռք չքաշեմ իրենից:

— Հեյ, Վիշապօձ, մանչուկ,— շնչաց փոքրիկ թշվառականը՝ անկյունում եղած որջից դուրս կանչելով կիսացեղական բուլդոզին:— Դե՛, հիմա կչքվե՞ս այստեղից,— հրամայաբար հարցրեց նա:

Կյանքի հանդեպ ունեցած սերը դրդեց ինձ զիջող լինել. շեմից դուրս եկա և սպասեցի, մինչև որ մյուսները գան: Միստր Հիթբլիֆը ոչ մի տեղ չէր երևում, իսկ ախոռ զնալիս հետևեցի Զոզեֆին և խնդրեցի ուղեկցել ինձ տուն: Նա աչքերը հառեց ինձ վրա, ինչ-որ բան փնթփնթաց և քիթը կնճռոտելով պատասխանեց.

— Ողորմա՛ծ տեր: Քրիստոնյան երբևէ առիթ ունեցե՞լ է այդպիսի բան լսել. ծամծամում է, ծամծամում: Ո՞նց հասկանա:ս, թե ինչ է ասում:

Սա ասում եմ՝ խնդրում եմ ուղեկցել ինձ տուն,— բղա-
վեցի ես, կարծելով, որ խուլ է, բայց և այնպես խիստ զայ-
րայած նրա բիրտ տոնից:

— Էդ էր պակաս: Ասես է՛լ ուրիշ անելիք շունեմ,— պա-
տասխանեց նա և շարունակեց աշխատել՝ մերթ ընդ մերթ
յապտերն ուղղելով ինձ վրա և անսահման արհամարհանքով
յննհիով դեմքս ու հագուստս (վերջինը շատ շքեղ էր, բայց
դեմքս, անկասկած այնպես վհատ էր, որպիսին նա կարող
էր ցանկանալ):

Սա քայլեցի բակի շուրջը և դռնակից անցա, մոտեցա մի
այլ դռան, վճռեցի թակել, հուսալով, որ դուրս կգա մի ավելի
քաղաքավարի ծառա:

Մի որոշ ժամանակ անց, դուռը բացեց բարձրահասակ,
վտիտ, առանց շալի, վիզը բաց և շափազանց թափթփված
տեսքով մի մարդ: Նրա դեմքը թաղված էր ուսերին փոված,
զոգզոված մազերի կույտի մեջ, աչքերն էլ ասես Քեթրինի
աչքերի տեսիլային արտահայտությունը լինեին՝ առանց
դրանց գեղեցկության:

— Ի՞նչ գործ ունեք այստեղ,— սպառնալից տոնով
հարցրեց նա:— Ո՞վ եք դուք:

— Իմ անունը Իգարելլա լինթրն է,— պատասխանեցի
ես:— Առաջներում դուք ինձ տեսել եք, սրբ: Վերջերս ես
ամուսնացա միսսր Հիթքլիֆի հետ, և նա ինձ բերեց այստեղ՝
անշուշտ, ձեր թույլտվությամբ:

— Ուրեմն նա վերադարձե՞լ է,— հարցրեց ճշնավորը՝
նայելով ինձ սոված գայլի կատաղի հայացքով:

— Այո, հենց նոր եկանք,— ասացի:— Բայց նա ինձ թո-
ղեց խոհանոցի դռան մոտ, իսկ երբ ուզում էի ներս մտնել,
ձեր փոքրիկ տղան որոշեց պահակի դեր խաղալ և վախեցրեց՝
սպառնալով, որ բուլդոզին բաց կթողնի ինձ վրա:

— Լավ է, որ դժոխքի սրիկան իր խոստումը չի կատա-
րել,— մոնչաց իմ ապագա տանտերը՝ մթության մեջ իմ թի-
կունքում փնտրելով և հուսալով, որ կտեսնի Հիթքլիֆին,
հետո կարգաց անեծքներով ու սպառնալիքներով լի մի մե-
նախոսություն, րացատրելով, թե ինչ կաներ այդ «սատա-
նային», եթե նա իրեն խարեր:

Սա զղջացի, որ երկրորդ անգամ փորձեցի տուն մտնել և

համարյա հակված էի թողնել փախչել, քանի դեռ նա չէր ավարտել իր անեծքները, բայց շհասցրի իմ մտադրությունը ի կատար ածել, տանտերը հրամայեց ներս անցնել, իմ հետևից դուռը ծածկեց ու փականքը գցեց:

Բուխարու մեջ թունդ բոցկլտում էր կրակը, ցուքերը լուսավորում էին մեծ սենյակը, որի հատակը դարձել էր համաշափ գորշագույն, և երբեմնի փայլուն անագե ափսեները, որոնցից ես աղջիկ ժամանակ չէի կարողանում հայացքս պոկել, նույնպես փոշու շերտով պատած, կորցրել էին իրենց փայլը: Ես հարցրի, կարելի՞ է արդյոք կանչել աղախնին, որպեսզի ինձ ննջասենյակ տանի: Միտք էր նշոուն շքարեհաճեց պատասխանել: Ձեռքերը գրպանները դրած՝ նա անցուդարձ էր անում, ըստ երևույթին, բուրբուկին մոռացության էր տվել իմ ներկայությունը. նա այնպես էր սուզվել վերացական խոր մտքերի մեջ և մարդատյացի այնպիսի տեսք ուներ, որ ես շհամարձակվեցի նորից անհանգստացնել նրան:

Ձեզ, էլլեն, թող շղարմացնի, թե որքան էի ես հոգեպես շրկված, երբ նստած էի թեև ոչ մեծակ, բայց ավելի վատ վիճակում այդ անհյուրընկալ օջախի մոտ և մտածում էի այն մասին, որ շորս մղոն այստեղից հեռու կանգնած է իմ բարեհամբույր տունը, որի մեջ գտնվում էին միայն նրանք, որոնց սիրում էի աշխարհում ամենից շատ, բայց այդ շորս մղոնի փոխարեն մեր մեջ, կարծես, ընկած էր Ատլանտյան օվկիանոսը. ես չէի կարող անցնել այդ տարածությունը:

Ինքս ինձ հարցնում էի՝ ո՞ւր գնամ, որտե՞ղ գտնեմ մխիթարություն. միայն, աստված սիրես, այդ բանը շհաղորդես էզգարին կամ Քեթրինին, իմ բուրբ վշտերից ինձ ամենից շատ ճնշում էր այն հուսահատությունը, որ ես շեմ գտնի մեկին, որը կարողանար կամ ուզենար դառնալ իմ դաշնակիցը ընդդեմ Հիթլերիֆի:

Ես գրեթե ուրախությամբ էի գալիս Մուլեգին հողմերի դարավանդ, որովհետև այդտեղ ես հարկադրված չէի լինի դեմառդեմ հանդիպել իմ ամուսնուն, բայց նա գիտեր, թե ինչ մարդկանց մեջ ենք մենք ապրելու, և նրանց միջամտությունից չէր վախենում:

Վշտով համակված՝ նստած մտածում էի երկար ժամա-

ևակ. խփեց ժամը ութը, ինը, իսկ միստր էրնշոուն դեռ շարունակում էր քայլել սենյակում՝ գլուխը կրծքին կախած, լիովին լռակյաց, և միայն երբեմն նրա բերանից դուրս էր թույլում հառաչանք կամ դառնագին բացականչություն:

Սա ականջ էի դնում՝ տան մեջ չի՞ լսվի արդյոք մի կանխացի ձայն, և խորապես զղջում, անձնատուր էի լինում մոայլև կախագզուշացումներին, որոնք, վերջ ի վերջո, պայթեցին անդուսպ հառաչանքով ու հեկեկանքով:

Սա ինքս էլ չէի նկատում, թե ինչպես էի բացահայտ կերպով վշտահար լինում, մինչև որ էրնշոուն դադարեցրեց իր ուրիշիկ քայլվածքը և, կանդ առնելով ուղիղ իմ դիմաց, հանկարծ արթնացած զարմանքով աչքերը սևեռեց ինձ վրա: Օգտվելով նրա այդ ուշադրությունից, ես ճշացի.

— Սա հոգնած եմ ճանապարհից, քնել եմ ուզում, աղախինը որտե՞ղ է: Տարեք ինձ նրա մոտ, եթե նա չի ուզում գալ ինձ մոտ:

— Մենք աղախիններ չունենք,— պատասխանեց նա,— դուք ինքներդ պետք է ձեզ սպասարկեք:

— Հապա ո՞րտեղ պետք է քնեմ,— հեկեկում էի ես. հոգնածությունն ու վիշտն այնպես էին ճնշել ինձ, որ ես մոռանում էի մտածել իմ արժանապատվության մասին:

— Զոգեֆը ձեզ ցույց կտա Հիթբլիֆի սենյակը,— ասաց նա:— Բաց արեք այ այն դուռը. նա այնտեղ է:

Հենց այն է ուզում էի գնալ, երբ նա հանկարծ կանգնեցրեց ինձ և շատ տարօրինակ ձևով ավելացրեց.

— Բարի եղեք շմոռանալ կողպել ձեր դուռը և սողնակը գցել:

— Լավ,— ասացի ես:— Բայց ինչո՞ւ, միստր էրնշոու:— Հիթբլիֆի հետ կամովին փակված մնալու միտքը ինձ՝ այնքան էլ չէր հրապուրում:

— Հապա մի նայեք,— ի պատասխան ասաց նա՝ բաճկոնի գրպանից հանելով արտասուվոր տեսքի մի ատրճանակ, որի փողաբերանին կցված էր երկսայր ծալովի մի դանակ:— Դա հուսահատված մարդու համար մեծ գայթակղիչ է՝ այնպես չէ՞: Չեմ կարողանում դիմանալ, մեեն գիշեր այդ իրը ձեռքիս բարձրանում եմ վերի հարկը և ստուգում եմ նրա

դուռը: Եթե մեկ անգամ այն բաց գտնեմ՝ վերջ նրա կյանքին: Ես դա անում եմ անփոփոխ կերպով... թեև ամեն անգամ դրանից մի բուսկ առաջ մտաբերում եմ հարյուրավոր պատճառներ, որոնք պետք է որ ինձ զսպեին. ինչ որ մի սատանա հրահրում է ինձ նրան սպանելու պլաններից ձեռք քաշել: Կովիբ այդ սատանայի դեմ ինչքան կարող ես, բայց երբ գա ժամանակը, երկնային հրեշտակները շեն փրկի Հիթքլիֆին:

Ես հետաքրքրությամբ դիտում էի զենքը: Իմ մեջ հղացավ սոսկալի միտք՝ ինչ ուժեղ կլինեի, եթե տիրեի այդ զենքին: Նրա ձեռքից վերցրի այն և շոշափեցի սայրը. էրնշուուն զարմացած նայեց դեմքիս, մի պահ հայտնված արտահայտությանը. դա սարսափ չէր, դա նախանձ էր: Նա ատրճանակը ընդոստ շարժումով խլեց իմ ձեռքից, դանակը ծալեց և նորից զենքը թաքցրեց ծոցում:

— Ինձ համար մեկ է, կարող եք նրան հայտնել, — ասաց նա: — Հսկողություն սահմանեք, պահպանեք նրան: Դուք գիտեք, թե ինչ հարաբերությունների մեջ ենք մենք. ես տեսնում եմ, որ նրան սպառնացող վտանգը ձեզ շի ցնցում:

— Հիթքլիֆը ի՞նչ է արել ձեզ — հարցրի ես: — Ի՞նչ վիրավորանք է ձեզ հասցրել, որ արժանացել է այդ սոսկալի ատելությունը: Ավելի խելացի չէ՞ր լինի՝ առաջարկել նրան, որ թողնի, հեռանա:

— Ո՛չ, — որոտաց էրնշուուն, — եթե փորձի ինձ թողնել, նա կմեռնի: Համոզեք նրան, որ փորձի, և դուք նրա սպանողը կդառնաք: Մի՞թե ես պետք է ամեն ինչ կորցնեմ առանց բախտ ունենալու, որ կորցրածը վերադարձնեմ: Եվ մի՞թե Հերթլը պետք է չքավոր դառնա: Օ՛, գրո՛ղը տանի: Ես իմը կվերադարձնեմ. և ճեռ ոսկուն էլ տեր կդառնամ: Ապա կթափեմ նրա արյունը, իսկ նրա հողին դժոխք կընկնի: Այդպիսի կենվոր ունենալով, դժոխքը տասն անգամ ավելի կսևանա, քան երբևէ եղել է:

Դուք, էլլեն, պատմել եք ձեր նախկին տիրոջ սովորությունների մասին: Պարզ երևում է, որ նա խելագարություն է գրի ինչ. համենայն դեպս, այդպիսի վիճակում էր երեկ գիշեր: Նրա մոտ ես դողում էի սարսափից և տգետ ծառայի

զմխեմությունը ինձ համար համեմատաբար ավելի հա-
ճելի էր:

Միստր էրնշտուն դարձյալ սկսեց ժանգոտ տեսքով քայ-
լել՝ սենյակում, ես սողնակը հետ քաշեցի ու փախա խո-
հանոց:

Ջոզեֆը հակված դիտում էր կրակի վրա ճոճվող մեծ կաթ-
սան, իսկ նրա մոտ, նստարանին դրված էր վարսակի շի-
լայով լի փայտե խոր ճաշամանը: Կաթսայի ջուրն սկսեց
եռալ, և նա շուռ եկավ, որպեսզի ձեռքը կոխի ճաշամանի
մեջ. ես գլխի ընկա, որ ընթրիք է պատրաստվում մեզ հա-
մար, և քանի որ քաղցած էի, վճռեցի այն դարձնել ուտելու
համար պիտանի, ուստի բարձրաձայն ճշացի. «Վարսակի
շիլան ես կեփեմ».— ամանը նրա մոտից հեռացրի, ապա
հանեցի գլխարկս և ամազոնկաս:— Միստր էրնշտուն,— շա-
րունակում էի ես,— առաջարկում է, որ ինքս ինձ սպասար-
կեմ, և կսպասարկեմ: Չեմ ուզում տանտիկնոջ դեր խաղալ,
բայց և վախենում եմ սովամահ լինել:

— Բարեբար աստված,— փնթփնթաց նա՝ նստելով և
շփելով իր շերտավոր գուլպաները. ծնկից մինչև ոտքի կոճե-
րք:— Եթե այստեղ սկսեն նոր կարգուկանոն սահմանել, երբ
հագիվհալ հարմարվել եմ երկու տերերին, եթե տանտիկնոջն
էլ նստեցնեն գլխիս, ապա դա կնշանակի, որ ժամանակն է
այստեղից շփելու: Չէի կարծում, թե կհասնեմ այնպիսի օրի,
որ ստիպված լինեմ հեռանալ վաղեմի վայրից, և դպում էի,
որ այդ օրը հեռու չէ:

Նրա ողբը չէր արժանանում իմ ուշադրությանը: Ես արա-
գորեն ձեռնամուխ եղա աշխատանքի, հառաչում, հիշում էի
այն ժամանակները, երբ դա ինձ համար ուրախ զվարճալիք
էր, սակայն շատ շուտ հեռու վանեցի այդ հուշերը: Դրանք
ինձ ստիպեցին վերհիշել անցած-գնացած երջանկությունը,
և ինչքան ավելի մեծ էր դրա պատկերը վերականգնելու
վտանգը, այնքան ավելի արագ էի ես կաթսայի մեջ փայտե
գդալով խառնում ու ավելի հաճախ էի ջրին բուռ-բուռ վար-
սակ ավելացնում:

Ջոզեֆը հարածուն զայրույթով հետևում էր իմ խոհարա-
րությանը:

— Դե, դե,— բացականչեց նա,— Հերթըն, այսօր դու
ընթրիքին շիլա շես ուտի. դրա մեջ կլինեն միայն գունդ-
գունդ կտորներ: Եվ նորից: Եթե ես ձեր տեղը լինեի, ամբող-
ջը միանգամից կլցնեի մեջը: Այդպե՛ս, հիմա մնում է միայն
կրակի վրայից վերցնել, և պատրաստ է: Շըխկ-թըխկ: Վրաջք
է, որ կաթսայի տակը չի պոկվել:

Իմ շիլան, խոստովանում եմ, դեռ հում էր, երբ լցրի ափ-
սեները. դրեցի շորս ափսե, կաթնարանից բերին թարմ կա-
թով լի մեծ սափորը, որը Հերթընը քաշեց իր մոտ և սկսեց
դրանից թափթփելով խմել:

Ես հանդիմանեցի և պահանջեցի, որ նրա բաժինը լցնեն
զավաթը. պնդում էի, որ ես շեմ կարող խմել մի ամանից,
որի հետ վարվում են այդպես անշնորհք ձևով: Մեր անամոթը
շատ վիրավորվեց իմ այդ բծախնդրությունից, մի քանի ան-
գամ կրկնեց, որ տղան նույնքան ազնվաբարո է, որքան և
ես, նույնքան էլ առողջ է, և ինքը՝ Ջոզեֆը, զարմանում է, թե
ինչու եմ ես այդպես երևակայում ինձ: Մինչ փոքրիկ սրիկան
շարունակում էր լակել, նա բարկացած տեսքով նայում էր
ինձ՝ լորձունքը թափելով սափորի մեջ:

— Ես ընթրելու կգնամ մի ուրիշ սենյակ,— ասացի,—
դուք այստեղ հյուրասենյակ չունե՞ք:

— Հյուրասենյա՛կ,— քմծիծաղ տալով՝ արձագանքեց
Ջոզեֆը:— Հյուրասենյա՛կ: Ո՛չ, հյուրասենյակ չունենք:
Եթե մեր ընկերությունը ձեզ դուր չի գալիս, նստեք տանտի-
րոջ հետ, իսկ եթե նրա ընկերությունն էլ դուր չի գալիս՝
նստեք մեզ հետ:

— Կգնամ վերնահարկ,— պատասխանեցի ես,— ցույց
տվեք ինձ մի որևէ սենյակ:

Ափսես դրի սկուտեղի վրա և գնացի, որ էլի կաթ բերեմ:
Ջոզեֆը տրտնջալով վերկացավ, ընկավ առաջ: Բարձրա-
ցանք ձեղնահարկ. նա բաց էր անում մերթ մեկ, մերթ մյուս
դուռը, նայում էր ներս, երբ անցնում էինք այս կամ այն
զոան մոտով:

— Ահա ձեզ սենյակ,— ի վերջո ասաց նա՝ հրելով ոչ թե
դուռը, այլ ծղխնուն ամրացված մի խախուտ տախտակ:—
Այստեղ շիլա ուտելու համար շատ հարմար է: Այ, այն անկ-

յունում կա ցորենի պարկ, որը, իսկապես, կեղտոտ է: Եթե վախենում եք աղտոտել ձեր մետաքսե շքեղ հագուստը, վրան թաշկինակ փռեք:

«Սենյակը» պարզապես խորդանոցի նման մի բան էր, որտեղից ածիկի ու հացահատիկի ուժեղ հոտ էր փչում. գրանցով լի պարկերը կուտակվել էին իրար վրա՝ մեջտեղը թողնելով մի լայն տարածք:

— Այ մարդ,— գոռացի ես՝ զայրացած դառնալով դեպի նա.— Այստեղ քնելու տեղ չկա, ես ուզում եմ տեսնել իմ ննջասենյակը:

— Ննջասենյակը,— հեզնական տոնով կրկնեց նա:— Դուք տեսել եք այստեղ եղած բոլոր ննջասենյակները՝ ահա այն մեկն էլ իմն է:

Նա ցույց տվեց երկրորդ ձեղնահարկը, որն առաջինից տարբերվում էր միայն նրանով, որ պատերը մերկ էին, և մի անկյունում էլ դրված էր մի մեծ, ցածր, առանց առագաստի մահճակալ, որի ոտքերի կողմը կապույտ վերմակ էր փռած:

— Ձերը ինձ հարկավոր չէ,— առարկեցի ես:— Ենթադրում եմ, որ միստր Հիթքլիֆը հենց կտուրի տակ չի ապրում, այնպես չէ՞:

— Օ՛, դուք միստր Հիթքլիֆի սենյակն եք ուզում,— ճշացնա, ասես մի նոր գյուտ արեց:— Ձէի՞ք կարող միանգամից այդպես ասել: Ծն իսկույն, առանց այլևայլության, կպատասխանեի, որ հենց այդ սենյակը ձեզ չի կարելի տեսնել: Նա, դժբախտաբար, կողպած է պահում, և ոչ ոք այնտեղ քիթը չի խոթում՝ բացի իրենից:

— Դուք հաճելի տուն ունեք, Ջոզեֆ,— շարողանալով զսպել ինձ, նկատեցի ես,— և այստեղ ապրում են հաճելի մարդիկ. հավանաբար, աշխարհի ամբողջ խելացնորությունը մտավ իմ ուղեղը այն օրը, երբ որոշեցի բախտս կապել նրանց հետ: Սակայն հիմա դա գործին չի վերաբերում: Կան նաև ուրիշ սենյակներ: Ի սեր աստժո, ջուտ արեք, տեղավորեք ինձ մի որևէ տեղ:

Նա շպատասխանեց իմ այդ թախանձանքին, փայտե սանդուղքով համառորեն քարշ գալով իջավ և կանգ առավ մի սենյակի առաջ: Նրա դանդաղ ջարժվելուց, և սենյակում

եղած շքեղ կահույքից, ես հասկացա, որ դա տան ամենալավ սենյակն է: Այստեղ դորգ էր փռված՝ մի լավ գորգ, բայց նախշերը շքացել էին փոշու տակ, բուխարու առջևի փորագրովի դիմակալը պատաստոտված էր, կաղնեփայտե ժամանակակից ոճով գեղեցիկ մահճակալն ունեւր փարթամ, թանկարժեք կտորից, մորեղույն վարագույր, բայց գրա հետ, ըստ երևույթին, կոպիտ էին վարվել՝ կարճ վարագույրները կախված էին ծաղկեշղթաներով, որոնք պոկված էին իրենց օղակներից, իսկ դրանք պահող մետաղե ձողիկը մի կողմից ծռվել, դարձել էր աղեղնաձև, որի պատճառով կտորը կախվել, փռվել էր գետին: Աթոռներն էլ այնպես էին վնասված՝ ջատերն ուղղակի ջարդված էին, խոր քերծվածքներն այլանգակել էին միջնորմը:

Աշխատում էի համարձակ ներս մտնել և տեղավորվել այդտեղ, երբ իմ հիմար ուղեկիցը հայտարարեց.

— Սա տանտիրոջ ննջարանն է:

Իմ ընթրիքն արդեն սառել էր, ախորժակս էլ փակվել էր, համբերությունս էլ հատել: Ես պահանջեցի անմիջապես տեղավորել ինձ և հնարավորություն տալ հանգստանալու:

— Գրողը տանի, ի՞նչ եք ուզում,— սկսեց ծեր բարեպաշտը: Թող աստված խղճա, ների մեզ: Ո՞ր դժոխքը կհրամայեք ձեզ տանել, այն անհասկացող, ձանձրալի կին. բոլորը տեսաք, բացի Հերթլենի սենյակից: Տանն այլևս ոչ մի անկյուն չկա, որտեղ կարելի լիներ պառկել:

Չարացել էի այնքան, որ սկուտեղը ամբողջ եղածի հետ շարտեցի գետին, ապա նստեցի սանդուղքի վերին աստիճանին, ձեռքերով դեմքս ծածկեցի ու սկսեցի լաց լինել: Կ.

— Է՛հ, է՛հ,— բացականչեց Ջոզեֆը:— Ապրեք, միսթեթի, կեցցեք, միսս Քեթի: Հիմա տանտերը կգա և ջարդված սափորին դիպչելով՝ վայր կընկնի. այն ժամանակ մենք ինչ-որ բան կլսենք, կտեսնենք, թե ինչ կլինի: Անպիտան, խելագար կին, դուք ըստ արժանվույն կպատժվեք մինչև ծննդյան տոնը. հիմար շարամտությամբ աստծո թանկարժեք բարիքները շարտե՛լ ոտքերի տակ: Բայց ես սխալվում եմ, դուք երկար չեք հոխորտա: Կարծում եք Հիթթլիֆը կհանդուրժի՞ այսպիսի ինքնակամություն: Կուղենայի, որ նա ձեզ բռներ այդպիսի արարքի պահին: Ինչքա՛ն կուղենայի:

Այսպես հայհոյելով նա գնաց ներքևում գտնվող իր որջը՝ հետը տանելով մոմը. ևս մնացի խավարի մեջ: Այդ հիմար արարքից հետո մտորմունքը ստիպեց ինձ խոստովանել, որ անհրաժեշտ է զսպել հսկարտութիւնը, սանձահարել կատաղութիւնը և աշխատել վերացնել դրա հետևանքները: Այստեղ վրա հասավ անակնկալ օգնութիւնը՝ Վիշապօժի կերպարանքով, որին հիմա ճանաչեցի. դա մեր Սողունի ձագն էր. իր շան լակոտութիւնն ամբողջ մանկութիւնը նա անց էր կացրել Ազարակատանը. հայրս նրան նվիրել էր միստր Հինդլիին: Շունն էլ ճանաչեց ինձ, դունչը դեմ արեց քթիս, ի նշան ողջույնի, ապա շտապեց լափել վարսակի շիւան, մինչ ես խարխափելով գնում էի աստիճան առ աստիճան, հավաքելով շարդված կավե ամանի կտորները և թաշկինակով մաքրելով կաթի ցայտուքները բազրիքի վրայից:

Հագիվ էինք մեր աշխատանքները վերջացրել, երբ միջանցքից ականջիս հասավ էրնշոուի քայլերի ձայնը: Իմ օգնականը պոչն իրեն քաշեց և սեղմվեց պատին. ես մոտիկ դռնից դուրս սողոսկեցի: Տանտիրոջից խուսափելու շան փորձերը չհաջողվեցին. դա ես հասկացա սանդուղքով դեպի ներքև նրա սրընթաց վազքից, երկարատև ողբալի կաղկանձից: Իմ բախտը բերեց. նա անցավ, մտավ իր սենյակը և գուռը փակեց:

Դրանից անմիջապես հետո Զոզեֆը Հերթրնի հետ միասին բարձրացավ վերև, որպեսզի տղային քնացնի: Ես ապաստան էի գտել Հերթրնի սենյակում, և ինձ տեսնելով, ծերուկն ասաց.

— Պետք է ենթադրել, որ հիմա տանը տեղ կլինի և՛ ձեզ, և՛ ձեր զոռոգութեան համար: Այստեղ ազատ է, կարող եք տեղավորվել, և ավա՛ղ, աստված ինքը կլինի երրորդը այսպիսի վատ ընկերակցութեան մեջ:

Ես ուրախութեամբ օգտվեցի առաջարկութեանից, ինձ գցեցի բուխարուն մոտիկ դրած բազկաթոռին. նույն ըոպեին սկսեցի դանթել ու քնեցի:

Քունս խորն էր ու քաղցր, բայց շատ շուտ այն ընդհատվեց: Միստր Հիթքլիֆը արթնացրեց ինձ. նա հենց նոր էր ներս մտել և իր սիրալիք շարժուձևով հարցրեց, թե ի՞նչ եմ անում այդտեղ:

Ասացի, որ այդքան ուշ արթաւ: Եմ միում, որովհետև մեր սենյակի բանալին իր գրպանումն է:

Մեք բառը նրան սաստիկ վիրավորեց: Նա հաստատեց, որ սենյակն իմը չէ և երբեք էլ իմը չի լինի և որ նա... բայց ես շեմ կրկնի նրա բառերը և ոչ էլ կնկարագրեմ նրա սովորական վարքագիծը. նա հնարամիտ ու անխոնջ է իմ մեջ զրգովանք առաջացնելու իր ջանքերում: Երբեմն ես հույժ զարմանում եմ նրա վրա, և դա վերացնում է իմ սարսափը: Եվ, այնուամենայնիվ հավատացնում եմ, որ վագրը կամ թունավոր օձը չէին կարող ինձ ներշնչել այնպիսի սարսափ, որ նման լիներ նրա իմ մեջ արթնացրած սարսափին: Նա խոսեց Քեթրինի հիվանդության մասին և դրանում մեղադրեց եղբորս, ապա խոստացավ, որ ես իր համար կփոխարինեմ էղգարին և կդիմանամ տառապանքներին, մինչև որ ինքը էղգարի հախիցը գա:

Ես ատում եմ նրան... ես դժբախտ եմ... հիմար եմ եղել: Զգույշ եղեք, այդ մասին Ագարակատանը ոչ ոքի ոչ մի բան չասեք: Ես ամեն օր կսպասեմ ձեզ. ինձ չհիասթափեցնեք: Ի գ ա բ ե լ լ ա :

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Այս նամակը կարդալուց հետո ես գնացի իմ տիրոջ մոտ և հայտնեցի, որ քույրը ժամանել է Դարավանդ և ինձ հղել է մի նամակ, որի մեջ իր ափսոսանքն է արտահայտում միսիս Լինթընի հիվանդության կապակցությամբ և ջերմորեն ցանկանում է տեսնել եղբորը: Ծանկանում է, որ եղբայրը իմ միջոցով ըստ հնարավորին շուտ, մի լուր ուղարկի ներման մասին:

— Ներմա՞ն մասին, — ասաց Լինթընը, — ես ներելու բան չունեմ, էլլին: Այսօր ևեթ դուք կարող եք գնալ Մոլեզին հողմերի դարավանդ, եթե կամենում եք, և հայտնել նրան, որ ես չեմ բարկանում, սակայն ցավ եմ զգում նրան կորցնելու համար. ոչ մի կերպ չեմ կարող մտածել, որ նա երջանիկ կլինի: Բայց խոսք անգամ չի կարող լինել, որ ես այցելեմ նրան, մենք բաժանված ենք առհավետ, և եթե նա, իրոք,

ցանկանում է ինձ լավություն անել, սպա թող այդ սրիկ.սձ յին, որի հետ ամուսնացել է, համողի, որ նա թողնի հեռա- նա այս տեղերից:

— Եվ շե՞ք գրի նրան, սըր, թեկուզ մի հակիրճ գրու- թյուն,— աղերսանքով հարցրի ես:

— Ոչ,— պատասխանեց նա,— կարիք չկա: Իմ հարաբե- րությունները Հիթքլիֆի ընտանիքի հետ պետք է լինեն նույն- քան սահմանափակ, որքան և նրանը՝ իմ ընտանիքի հետ: Ես նրա համար գոյություն չունեմ:

Միստր էդգարի սառնությունը շատ ընկճեց ինձ: Ամբողջ ճանապարհին՝ Ագարակատնից մինչև Դարավանդ, գլուխ էի կոտրում, թե նրա ասածը քողքը հայտնելիս, ինչ ձևով գոնե մի քիչ սրտացավություն մտցնեմ այդ խոսքերի մեջ, ինչպես մեղմացնեմ Իզաբելլային գոնե մի քանի մխիթարական տող գրելու նրա կտրուկ մերժումը:

Նա, հավատացեք, առավոտից անհամբեր սպասում էր ինձ: Պարտեզի խճուղով տանը մոտենալիս նրան տեսա լու- սամուտի մոտ և գլխով արեցի, բայց նա հետ քաշվեց, կար- ծես վախենալով, որ կնկատեն իրեն:

Ներս մտա առանց դուռը ծեծելու: Տեսարանը տխուր էր ու մռայլ, այդ երբեմնի ուրախ տունը դեռ երբեք չէր ունեցել այնպիսի տեսք, որպիսին ուներ հիմա: Պետք է խոստովա- նեմ, որ եթե ջահել լեդիի տեղը լինեի, գոնե օջախի առաջը կավլեի և սեղանների փողին կմաքրեի: Բայց Իզաբելլան են- թարկվել էր շրջապատում տիրող լքվածության ոգուն: Նրա դուրեկան դեմքը դարձել էր դժգույն ու անտարբեր, վարսերը ցրված էին, խոպոպիկները մասամբ կախվել էին ցած, մա- սամբ էլ ինքը ուղորել, անփույթ կերպով փաթաթել էր գլխի շուրջը: Հավանաբար, երեկվանից նա չէր դիպել իր հա- գուստին:

Հինդլին շկար: Միստր Հիթքլիֆը նստել էր սեղանի մոտ և թերթում էր իր հուշատետրի մեջ դրած ինչ-որ թղթեր, իսկ երբ ներս մտա, նա վերկացավ և միանգամայն բարեկամա- բար հարցրեց, թե ինչպես եմ ապրում, և աթոռ առաջարկեց:

Նա միակ անձնավորությունն էր, որը մարդավայել տեսք ուներ, նույնիսկ ինձ թվաց, թե նա երբեք այդպիսի լավ

սակաբէ շէր ունեցեալ, Երկարոյն էլ հաւգումամ քանոր, այնպէս էին փոխել, որ ով նախկինում նրանց շէր ճանաչել, Հիթքլիֆը կզվար ի ծնե ջենտլմեն, իսկ նրա կինը՝ մի իսկական փոքրիկ փնթի:

Իզաբելլան նետվեց ինձ ընդառաջ՝ ողջագուրվելու. ձեռքը մեկնեց սպասելիք նամակին:

Սա գուլիս տարուրերեցի: Նա ակնարկը շհասկացավ, և երբ մոտեցա պահարանին պիտարկս հանելու, հետևեց ինձ և համառորեն շշնջաց, որ իսկույննեթ իրեն տամ այն, ինչ բերել եմ հետս:

Հիթքլիֆը հասկացավ նրա խորամանկությունը և ասաց.

— Եթե ինչ-որ բան բերել եք Իզաբելլայի համար (անկասկած, բերել եք, Նելլի), տվեք իրեն: Կարիք չկա թաքուն տալ. մենք իրարից ոչինչ չենք թաքցնում:

— Բայց ես նրա համար ոչինչ չեմ բերել, — պատասխանեցի, մտածելով, որ ավելի լավ է միանգամից ճշմարտությունն ասել: — Իմ տերը խնդրեց հայտնել քոջը, որ նա հիմա իրենից ոչ նամակ սպասի, և ոչ էլ այցելություն: Ձեր ևղբայրը, տիկին, բարևում է, ցանկանում է ձեզ հրջանկություն և ներում է ձեզ իրեն հասցրած վիրավորանքի համար, բայց ենթադրում է, որ այսուհետև իր և ձեր ընտանիքների միջև եղած բոլոր կապերը պետք է խզվեն, որովհետև դրանք ոչ մի լավ բանի չեն հանդեցեի:

Միսիս Հիթքլիֆի շրթունքները մի թեթև դողացին, նա վերադարձավ իր տեղը՝ լուսամուտի մոտ: Ամուսինը կանգնեց իմ կողքին՝ օջախի առաջ, և սկսեց հարցուփորձ անել Քեթրինի մասին:

Սա նրա հիվանդության մասին պատմեցի այնքան, որքան հարմար համարեցի, իսկ նա իր հարցերով ինձնից կորզեց նրա հիվանդության պատճառների հետ կապված բոլոր փաստերը:

Սա իրավացի կերպով մեղադրեցի Քեթրինին այն բանի համար, որ այդ ամենը իր նկատմամբ հարուցեց հենց ինքը: Վերջում հույս հայտնեցի, որ Հիթքլիֆը կհետևի միտար Լինթրնի օրինակին և կխուսափի հետագայում նրա ընտանիքի հետ որևէ հարաբերություն ունենալուց:

— Միսիս Լինթընը հիմա սկսում է ապաքինվել, — ասացի, — նա է՛լ երբեք նախկինը չի դառնա, բայց կյանքը փրկեցինք: Եթե իրոք, Քեթրինը ձեզ համար ինչ-որ բան նշանակում է, պետք է խուսափեք նրա ճամփին կանգնելուց: Լավագույնը կլինի, որ դուք բոլորովին հեռանաք այս վայրերից, և որպեսչի առանց ափսոսանքի վճռեք այդ, ես կասեմ ձեզ, որ Քեթրին Լինթընը հիմա նման չէ ձեր նախկին բարեկամին՝ Քեթրին էրնշուուին նույնքան, որքան այս երիտասարդ լեդին՝ ինձ: Նրա արտաքինը շատ է փոխվել, բնավորությունը՝ առավել ևս: Այն մարդը, որն անհրաժեշտությամբ ստիպված է նրա կյանքի ուղեկիցը լինել, իր զգացմունքը նրա նկատմամբ ապագայում կարող է պահպանել միայն այն հիշողություններով, որ նա մի ժամանակ եղի է մարդասիրությամբ և սեփական պարտքի պիտակցությամբ օժտված:

— Միանգամայն հնարավոր է, — նկատեց Հիթքլիֆը՝ աշխատելով հանգիստ երևալ. — միանգամայն հնարավոր է, որ քո տերը հենվի միայն սովորական մարդասիրության և պարտքի պիտակցության վրա: Բայց մի՞թե դու կարծում ես, որ ես Քեթրինին կթողնեմ նրա պարտի՛ զխաակցության և մաքախրության հույսին: Եվ ինչպե՞ս ես կարողանում Քեթրինի նկատմամբ ունեցած իմ զգացմունքները համեմատել նրա զգացմունքների հետ: Այս տնից հեռանալուց առաջ, դու պետք է խոստանաս, որ կհաջողացնես իմ տեսակցությունը Քեթրինի հետ. ուզում ես դա, թե չես ուզում, միևնույն է, ես կտեսնեմ նրան: Սրան ի՞նչ կասես:

— Կասեմ, միտար Հիթքլիֆ, — պատասխանեցի ևս, — որ դուք չպետք է հանդիպեք նրան, մանավանդ իմ միջոցով: Մի հանդիպում ևս իմ տիրոջ հետ, և դուք վերջնականապես կսպանեք Քեթրինին:

— Քո օգնությամբ կարելի է դրանից խուսափել, — սկսեց նա, — իսկ եթե այդպիսի վտանգ լինի, եթե Լինթընը նորից փորձի կնոջ կյանքը սնկառնալիքի տակ դնել, ապա, կարծում եմ՝ ես կարգարացվեմ, եթե դիմեմ ծայրահեղ քայլի: Խնդրում եմ ամենայն անկեղծությամբ ասել ինձ՝ շա՞տ կտանջվի Քեթրինը, եթե կորցնի նրան: Հենց այդ վախն է.

Որ դստում է ինձ: Դրանում է, երևի, Լինթընի և իմ զգացման անբնական միջև եղած տարբերությունը. եթե նա իմ տեղը լիներ, իսկ ես նրա, թեկուզև ամենաուժեղ ատելությունը թունավորեր իմ կյանքը, երբեք ձեռք չէի բարձրացնի նրա վրա: Կարող ես չհավատալ, դա քո գործն է: Ծն երբեք նրան չէի հեռացնի Քեթրինի ընկերակցությունից, քանի դեռ նա կուզենար, որ իր ամուսինը մտքը լինի: Բայց հենց որ Քեթրինը դադարեր նրան հարգելուց, ես նրա կրճթից սիրտը կպոկեի և արյունը կխմեի: Բայց մինչև այն օրը՝ եթե չես հավատում, ուրեմն չես ճանաչում ինձ, մինչև այն օրը, թույլ կտայի, որ ինձ կտոր-կտոր անեն, բայց նրա գլխի մի մազին անգամ չէի դիպչի:

— Եվ, այնուամենայնիվ, — ընդհատեցի ես, — առանց խղճի խայթ զգալու դուք ուզում եք լիովին սպանել այդ կնոջ վերջնական ապաքինման ամեն մի հույսը, ներխուժելով նրա հիշողության մեջ այժմ, երբ նա ձեզ գրեթե մոռացել է, նորից եք նրան ներգրավում գծություն ու անհանգստության ժխորի մեջ:

— Կարծում ես գրեթե մոռացել է ինձ, — հարցրեց նա, — օ՛հ. նեղի, ախր, դու գիտես, որ այդպես չէ: Դու լավ գիտես, լավ գիտեմ և ես, որ Լինթընին տված իր ամեն մի մտածմունքի դիմաց, նա հազարը նվիրում է ինձ: Իմ կյանքի ամենածանր պահերին թվում էր, թե Քեթրինը մոռացել է ինձ: Այդ միտքը հետապնդում էր ինձ և այն ժամանակ, երբ ես անցյալ ամառ վերադարձա այս կողմերը. միայն Քեթրինի մի խոսքը կհարկադրեր ինձ նորից հնարավոր համարել այդ սոսկալի միտքը: Եվ այն ժամանակ ինձ համար ոչնչություն կդառնային և՛ Լինթընը և՛ Հինդլին, և՛ բոլոր այն երազները, որ երբևէ տեսնելիս եմ եղել: Երկու բառ այն ժամանակ կորոշեին իմ ապագան՝ մահ և դժոխք. նրան կորցնելուց հետո կյանքն ինձ համար կդառնար գեհեն:

Բայց ես հիմար էի, երբ մի պահ հավատացի, որ Քեթրինը էղգար Լինթընի նվիրվածությունը գնահատում է ավելի շատ, քան իմը: Եթե էղգարն իր ամբողջ ողորմելի էությունը սիրեր չհան, ութսուն տարվա մեջ նա չէր սիրի կնոջն այնպես, ինչպես ես՝ մի օրվա մեջ: Քեթրինի՝ սիրտը իմի նման խորն

է. Ինչպես ձիու սմբակի հետքի մեջ հնարավոր չէ ծովը տեղավորել, այնպես էլ նրա զգացմունքը անբաժան կերպով չի կարող պատկանել Լինթընին: Չէ մի: Հազիվ թե նա Քեթրինի համար ավելի թանկ լինի, քան իր շունը կամ ձին: Էդգարը չի կարող սիրվել ինձ պես: Ինչպե՞ս կարող է Քեթրինը սիրել այն, ինչ չկա նրա մեջ:

— Քեթրինն ու Էդգարը սիրում են իրար այնպես, ինչպես ամեն մի զույգ կարող է սիրել,— բղավեց Իզաբելլան անսպասելի գրգռվածությամբ:— Ոչ ոք իրավունք չունի այդ ձևով խոսել Էդգարի մասին, և ես չեմ հանդուրժի, որ ինձ մոտ անարգեն եղբորս:

— Ձեր եղբայրը ձեզ էլ է սիրում անսովոր կերպով, այնպես չէ՞,— հեզնանքով նկատեց Հիթքլիֆը:— Նա զարմանալի պատրաստակամությամբ թույլ տվեց, որ դուք լող տաք աշխարհի ալեծածան ջրերում:

— Նա չգիտի, թե ես ինչպես եմ տանջվում,— պատասխանեց Իզաբելլան:— Դա ես նրան չեմ հայտնել:

— Ուրեմն ինչ-որ բան, այնուամենայնիվ, հաղորդել եք. դուք գրել եք նրան, գրել եք, չէ՞:

— Գրել եմ, որ ես ամուսնացել եմ, դուք այդ նամակը տեսել եք:

— Եվ հետո էլ ոչի՞նչ:

— Ոչինչ:

— Իմ երիտասարդ լեզին իր կյանքում կատարված փոփոխության պահից ի վեր շատ վատ տեսք ունի,— ասացի ես:— Ինչպես երևում է ինչ-որ մեկը քիչ է սիրում նրան, և ես կռահում եմ, թե ով է նա, բայց, թերևս, ավելի լավ է անունը շտալ:

— Ես կռահում եմ, որ այդպիսին նա հենց ինքն է,— ասաց Հիթքլիֆը:— Նա այլասերվում, գառնում է փնթի: Այլևս չի ջանում դուր գալ ինձ՝ զարմանալիորեն շատ շուտ ձանձրացավ: Դու գուցե չհավատաս, բայց մեր պսակվելուց հետո հետևյալ առավոտ սկսեց լաց լինել և ասել, որ ուզում է վերադառնալ տուն: Ի դեպ, նրա մեջ ինչքան քիչ գերող բան կա, այնքան ավելի շուտ նա հարմար էակ է այս տան հա-

մարտի Եվ ես հոգ կտանեմ, որ իմ կիներ ինձ շխայտառակի՛ դրսերում թափառելով:

— Կալ, սբր,— առարկեցի ես,— բայց հուշս ունեմ, որ ուշադրության կառնեք հետևյալը՝ միսիս Հիթթլիֆը սովոր է, որ իրեն հետևեն ու խնամեն և որ նա դաստիարակված է որպէս մինուճար աղջիկ, որին ամեն մեկն ուրախ կլինի ծառայել: Դուք պետք է աղախին վերցնեք նրա համար, որպէսզի շրջապատում մաքրություն պահպանի, և ինքներդ էլ ձեր կնոջ նկատմամբ պետք է սրտագին վերաբերմունք ցուցաբերեք: Ինչ էլ որ մտածեք միտար էզգարի մասին, դուք շեք կարող կասկածել, որ նրա քույրն ընդունակ է ուժեղ զգացմունքի, այլապէս ինչու պետք է թողներ իր պերճաշուք տան հարմարավետ պայմանները, բարեկամներին, կապվեր ձեզ հետ և գոհությամբ տեղափոխվեր այս ամալի վայրը:

— Ընկնելով պատրանքների մեջ՝ նա լքեց նրանց,— պատասխանեց Հիթթլիֆը,— երևակայելով, որ ես ռոմանտիկական հերոս եմ, և իմ ասպետական նվիրվածութունից անսահման ներողամտություն սպասելով: Հագիվ թե ես կարողանամ նրան առողջ դատողության տեր էակ համարել: Նա համառորեն հավատում է իմ մասին ունեցած իր առասպելական պատկերացմանը և իր ամբողջ վարմունքով աշխատում է գուրգուրել իր այդ մտացածին հերոսին: Բայց, ի վերջո, կարծեմ, նա սկսում է ճանաչել ինձ. ես այլևս չեմ տեսնում սկզբում ինձ ջղայնացնող հիմար ժպիտներ, ծամածոթութուններ և բթամիտ անկարողություն հասկանալու, որ ես չեմ կատակում, երբ լրջորեն երեսին ասում եմ իմ կարծիքը իր և իր սիրահարվածության մասին: Նրանից պահանջվեց մտավոր կարողութունների մեծ լարում հասկանալու համար, որ ես իրեն չեմ սիրում: Մի ժամանակ ես մտածում էի՝ ինչքան ուզում ես ասա իրեն, միևնույն է, այդ բանը նրա գլուխը չի մտնի, բայց հիմա էլ նա այդ բանը վատ է հասկանում, որովհետև այսօր առավոտյան հայտարարեց որպէս ցնցող հայտնություն, որ ինձ իրոք հաջողվեց իր մեջ առելություն ներշնչել իմ նկատմամբ: Դա Հերկուլեսյան սխրանք էր՝ հավատացնում եմ ձեզ: Եթե ես հասա դրան, ուրեմն շնորհակալ լինելու հիմք ունեմ: Կարո՞ղ եմ հավատալ

ձեր հայտարարութեանը, Իգարեւա: Հաճատաջա՞ծ եք, սք
 ատում եք ինձ: Եթե ես մի կես օր ձեզ միայնակ թողնեմ,
 դուք հառաչելով ու շողոքորթելով նորից շե՞ք գա ինձ մտա:
 Կարծում եմ՝ նա կուզենար, որ քո ներկայութեամբ ես դառ-
 նամ քնքշութեան մարմնացում: Նրա փառասիրութեանը խոց-
 ված է, երբ ճշմարտութեանը ի ցույց է հանված, բայց ինձ
 համար մեկ է, թող բոլորն էլ իմանան, որ կիրքը եղել է
 միայն միակողմանի. ես երբեք այդ մասին նրան սուտ բան
 չեմ ասել: Նա շի կարող մեղադրել ինձ իր նկատմամբ խա-
 բուսիկ փափկանկատութեան ցուցաբերելու մեջ: Առաջին բա-
 նը, որ Ազարակասանից դուրս գալուց հետո ես արեցի նրա
 աչքերի առաջ՝ կախեցի նրա փոքրիկ շանը, և երբ նա սկսեց
 աղերսել շան համար, իմ առաջին խոսքերը եղան այն մասին,
 որ ես հաճույքով կկախեի նրա տանը պատկանող ամեն մե-
 կին, բացառությամբ մի էակի. հնարավոր է, որ նա կարծեց,
 թե այդ բացառությունը ինքն է: Բայց ոչ մի գազանություն
 նողկանք չառաջացրեց նրա մեջ. կարծում եմ, որ գազանու-
 թեամբ հրճվելը ի ծնե յուրահատուկ է նրան, միայն թե իր
 թանկարժեք անձն ապահով լինի փտանգից: Եվ մի՞թե ան-
 հեթեթութուն և իսկական ապուշություն չէ, երբ այդպիսի
 մի ողորմելի ստրկուհի. ստորամիտ մի քած, բնկնում է երա-
 զանքների գիրկը՝ երևակայելով, որ ես կարող եմ սիրել իրեն:
 Քո տիրոջն ասա՝ նեղի, որ ես կյանքում երբեք չէի հանդի-
 պել այնպիսի մի արգահատելի էակի, որպիսին է նրա քույրը:
 Նա նույնիսկ խայտառակում է կինթըն անունը: Երբեմն,
 հնարամիտ լինելու պատճառով, մեղմանում էի. երբ փորձեր
 էի անում ստուգել, թե էլ ինչ նվաստացում կարող է նա տա-
 նել և հետո նորից անամոթալ, ար սողալ և ստրկորեն քծնել
 իմ ոտքերի տակ: Բայց ասա՝ նաև ոչ իր եղբայրական ու
 դատավորական սիրտը թող շանհանգստանա. հս խոստորեն
 վարվում եմ օրենքի սահմաններում: Մինչև օրս խոստովել
 եմ նրան ամենափոքր իրավունքն անգամ տալ, որ ապահար-
 զան պահանջի: Դեռ ավելին, նա հարկադրված չի լինի խրնդ-
 րել որևէ մեկին, որ մեզ բաժանի: Եթե կամենում է, կարող
 է հեռանալ: Նրա ձանձրացնող ներկայությունը չի հատուցի
 այն հաճույքը, որ ստանում ես՝ նրան տանջելով:

— Միտար Հիթքրիֆ, — ասացի ես, — դա խելացնոր մար-

դու խոսակցութիւնն է: Ձեր կինը, ամենայն հավանականութեամբ, համոզված է, որ դուք խելագար եք. դրա համար նա մինչև հիմա համբերատար է եղել ձեր հանդեպ, բայց այժմ, երբ ասում եք, որ կարող է գնալ, նա, անշուշտ, կօգտվի այդ թույլտվութիւններից: Ախր դուք, տիկին, այնքան էլ հմայված չեք նրանով, որ կամովին մնաք մտոր:

— Զգո՛ւյշ, էլլեն,— պատասխանեց Իզաբելլան, որի աչքերը փայլատակեցին ցասումից. դրանց արտահայտութիւններից, անկասկած երևում էր, որ ամուսնուն լիովին հաջողվել էր կնոջ մեջ ատելութիւն առաջացնել իր հանդեպ:— Նրա ոչ մի խոսքին մի հավատաւ: Նա ստախոս սատանա է, հրեշ է և ոչ թե մարդկային էակ: Նա առաջ էլ էր ասում, որ ես կարող եմ հեռանալ. մի անգամ փորձ արեցի, բայց նորից շեմ համարձակվի կրկնել այն: Միայն, էլլեն, խոստացիր, որ դու նրա անարգ խոսակցութեան մի վանկն անգամ չես հաղորդի եղբորս կամ Քեթրինին: Ինչ էլ որ պնդի, նա ցանկանում է մի բան՝ զրգոել էղգարին և հասցնել նրան հուսահատութեան, ասում է՝ ամուսնացել է ինձ հետ լոկ մի նպատակով, որպեսզի էղգարին գցի իր իշխանութեան տակ, բայց այդ իշխանութիւնը նա չի ստանա, ես ավելի շուտ կմեռնեմ: Հույս ունեմ և աղոթում եմ միայն այն բանի համար, որ նա մոռանա իր դիվային խոհեմութիւնը և սպանի ինձ: Իմ միակ հաճույքը կլինի այն, որ կամ ինքս մեռնեմ, կամ էլ նրան մեռած տեսնեմ:

— Եվ այսպե՛ս, այսօրվա համար բավական է,— ասաց Հիթքլիֆը:— Երբ քեզ կանչեն դատարան, նեւի, հիշիր նրա այդ խոսքերը: Եվ ուշադիր նայիր նրա դեմքին. մի քիչ էլ, և նա ինձ համար հարմար դույզ կդառնա: Ոչ, հիմա դուք, Իզաբելլա, չեք կարող ձեր սեփական պահապանը լինել: Որպես օրինավոր հովանավորող, ես պետք է պահեմ ձեզ իմ խնամակալութեան տակ, ինչքան էլ այդ պարտականութիւնը անախորժ լինի ինձ համար: Գնացե՛ք վերնահարկ, ես անձնական բան ունեմ էլլեն Դինին ասելու: Ոչ, ոչ այս կողմը. ասացի, որ բարձրանաք վերնահարկ: Մանկիկս, այ սա է դեպի սանդուղք տանող ճանապարհը:

Նա դուրս հրեց նրան սենյակից ու փնթփնթալով հետ վերադարձավ:

— Ես գթասիրտ շեմ, գութ շունեմ: Ինչքան ավելի շատ է որդը գալարվում, այնքան ավելի ուժեղ ցանկություն է մեջս առաջանում ճգմել, դուրս թափել նրա աղիքները: Դա բարոյական մարմաջ է. ես ավելի մեծ եռանդով շփում եմ խոցը, որ ավելի ևս ուժեղացնեմ ցավը:

— Դուք հասկանո՞ւմ եք, թե ինչ է նշանակում «գութ» բառը,— ասացի ես՝ շտապելով, գլխարկս վերցնել:— Դուք գեթ մեկ անգամ ձեր կյանքում զգացե՞լ եք այն:

— Գլխարկը դիր տեղը,— ընդհատեց նա՝ տեսնելով, որ ես մտադիր եմ մեկնել:— Դեռ շեռ գնա: Մոտ եկ, նեւլի: Ես կամ պետք է համողեմ, կամ էլ ստիպեմ քեզ՝ օգնել ինձ իրագործելու Քեթրինին անհապաղ տեսնելու իմ որոշումը: Երդվում եմ՝ ես շեմ ուզում նրան շարիք պատճառել, շեմ ցանկանում աղմուկ բարձրացնել, զայրացնել կամ վիրավորել միստր Լինթընին. միայն ուզում եմ հենց Քեթրինից լսել, թե ինչպես է զգում իրեն և ինչու է հիվանդացել, հարցնել, թե ինչով կարող եմ նրան օգտակար լինել: Երեկ գիշեր ես վեց ժամ սպասեցի Ագարակատան պարտեզում և այս գիշեր էլ կգնամ այնտեղ, կգնամ ամեն գիշեր, ամեն օր, մինչև, որ պատեհ առիթ ունենամ տուն մտնելու: Եթե հանդիպեմ էդգար Լինթընին, առանց վարանելու ես նրան գետին կտապալեմ, և այնքան կտամ, որ նա հանգիստ մնա, քանի դեռ ես այնտեղ կլինեմ: Եթե ծառաները դիմադրեն ինձ, ես նրանց կսպառնամ այս տորճանակներով: Բայց ավելի լավ չի՞ լինի կասեցնել իմ հանդիպումը նրանց կամ նրանց տիրոջ հետ: Իսկ դու շատ հեշտությամբ կարող ես այդ բանն անել: Իմ գալու մասին կհայտնեմ քեզ, և դու աննկատելիորեն ինձ ներս կթողնես, հենց որ Քեթրինը միայնակ մնա, և մինչև իմ հեռանալը կհսկես ինձ. քո խիղճը լիովին հանգիստ կլինի՞ դու շարիքը կիսափանես:

Ես բողոքում էի, շէի ուզում դավաճանել իմ տիրոջը, բացի այդ Հիթքլիֆին համարում էի դաժան ու եսամոլ այն պատճառով, որ նա իր անձնական բավականության համար խախտում էր միսիս Լինթընի իսաղաղ կյանքը:

— Ամենահառաբակ պատահարը ցավագին ցնցում է նրան,— ասացի ևս:— Նա նյարդերի կծիկ է, համոզված եմ, չի դիմանա այդ անակնկալ ցնցումին: Մի՛ պնդեք, սրբ,

այլապէս ես ստիպված կլինեմ ձեր դիտաժողովի անդամների մասին հայտնել իմ տիրոջը: Նա միջոցներ ձեռք կառնի, իր տունը և տեղիներին կպաշտպանի անթույլատրելի ներխուժումից:

— Այդ դեպքում ես էլ միջոցներ ձեռք կառնեմ, որ քեզ ապահով փակեմ այստեղ, սիրելիս, — ճշաց Հիթլերի՛ֆը: — Դու մինչև առավոտ չես հեռանա Մոլեզին հողմերի դարավանդից: Հիմարություններ ես ասում, երբ պնդում ես, թե Քեթրինը չի ուղում ինձ տեսնել, ես չեմ ցանկանում նրան անակնկալի բերել: Դու պետք է նախապատրաստես նրան, հարցնես՝ կարո՞ղ եմ գալ, թե՛ ոչ: Ասում ես, որ նա երբեք իմ անունը չի հիշում և որ այն երբեք չի հիշվում նրա ներկայութեամբ: Ո՞ւմ հետ խոսի իմ մասին, եթե այդ տանը ես արգելված թեմա եմ: Նա կարծում է, որ դուք բոլորդ էլ նրա ամուսնու լրտեսներն եք: Օ՛հ, ես կասկած չունեմ՝ նա ձեր մեջ ասես զժողովում լինի: Նրա լությունից կուհուս եմ այն ամենը, ինչ նա զգում, վերապրում է: Դու ասում ես նա հաճախ անհանգիստ է, տազնապալից տեսք ունի: Մի՞թե դա անգործութեան նշան է: Դու ասում ես, որ նրա մտքերը խախտված են: Գրողը տանի, ինպե՞ս կարող է այլ կերպ լինել, երբ նա գտնվում է սոսկալի մեկուսացման մեջ: Եվ այդ ձանձրալի ողորմելի մարդը խնամում է կնոջը՝ ելնելով պարտի գիտակցումից ու մաքախիությունից: Գրաստությունից ու կարեկցանքից: Հոգարը կարող է կաղնի տնկել ծաղկամանի մեջ և սպասել, որ այն աճի, ճիշտ այդպես էլ կարող է սպասել, որ Քեթրինը ուժերը վերականգնի շնորհիվ իր հոգատարութեան: Եվ միանգամից պայմանավորվենք. ուզո՞ւմ ես այստեղ մնալ, որ ես ինձ համար ճանապարհ հարթեմ Քեթրինի մոտ՝ շնայած կինթրնի և նրա ծառաների դիմադրութեանը: Թե՛ կլինես իմ բարեկամը, ինչպես եղել ես մինչև հիմա, և կկատարես այն, ինչ պահանջում եմ: Որոշիր, որովհետև միտք չունի մի բոպե անգամ հապաղելու, եթե դու համառ շարամտութեամբ պնդում ես քոնձը:

Եվ այսպէս միստր Լոքվուդ, ես վիճում, բողոքում և հիսուն անգամ նորակ կերպով հրաժարվում էի, բայց, վերջ ի վերջո, նա ստիպեց ինձ համաձայնել: Ես պարտավորվեցի

նրա նամակը տանել իմ տիկնոջը, և եթե տիկինը համաձայնի, խոստացա հայտնել նրան Լինթրնի առաջին իսկ բացակայության մասին, որպեսզի նա կարողանա գալ և տուն մտնել, ինչպես կարող է. ես ինքս այդ պահին այնտեղ չեմ լինի և ծառաներին էլ կուղարկեմ մի տեղ: Լա՞վ էր, թե վատ: Վախենում եմ, որ վատ էր, թեև անխուսափելի էր: Ես կարծում էի, թե իմ զիջողությամբ կասեցրի մի նոր պայթյուն, և մեկ էլ կարծում էի, որ այդ հանդիպումը գուցե նպաստավոր ճգնաժամ առաջացնի Քեթրինի հոգեկան հիվանդության մեջ. դրա հետ միասին, հիշում էի միտար էդգարի խստիվ կշտամբանքը՝ զեկուցումներով շներկայանալ իրեն, ջանում էի մեղմացնել տագնապներս՝ շարունակ կրկնելով, որ եթե, խիստ դատելով, կարելի է իմ արարքը խաբված վստահություն համարել, ապա դա կլինի իմ վերջին արարքը: Այնուամենայնիվ, իմ վերադարձի ուղին շատ ավելի տխուր էր, քան իմ ճանապարհը դեպի Գարավանդ. ես տանջվում էի վարանումների մեջ, մինչև որ կարողացա նամակը հասցնել միսիս Լինթրնի ձեռքը:

— Բայց Քեննեթն արդեն այստեղ է, ես կգնամ ներքև և կասեմ իրեն, որ դուք լավ եք զգում: Իմ պատմությունը, ինչպես մենք ասում ենք, երկարաշունչ է, այն դեռ մի ամբողջ առավոտվա համար կրավականացնի:

Տանջալից է և մռայլ, մտածում էի ես, երբ բարի կինը ցած իջավ, որ բժշկին ընդունի, և բուրբուլին էլ ոչ այնպիսի մեկը, որին ես կընտրեի հաճույքի համար: Բայց միևնույն է, ես միսիս Դինի դառնահամ խոտերից կպատրաստեմ բուժիչ հեղուկ, և ամենից առաջ կասեմ ինքս ինձ՝ զգուշացիր, Քեթրին, Հիթքլիֆի փայլող հայացքի թովչանքից: Ես կընկնեմ անախորժ վիճակի մեջ, եթե սիրտս տամ այդ ջահել անձնավորությունը, և աղջիկը կգառնա իր մոր երկրորդ հրատարակությունը:

Անցավ մի շաբաթ ևս: Իմ առողջութիւնը օրեցօր ավելի ու ավելի էր ամրանում: Ես հարեանիս ամբողջ պատմութիւնը լսեցի մի քանի անգամ նստելով նրա մոտ, երբ տնտեսուհին պատմում էր ավելի կարևոր զբաղմունքների ժամերի հաշվին: Այժմ կշարունակեմ իր սեփական խոսքերով՝ միայն մի քիչ ավելի սեղմ: Ընդհանուր առմամբ նա հիանալի պատմող է, և շեմ կարծում, որ կկարողանամ նրա ոճը բարեփոխել:

— Երեկոյան, — ասաց նա, — Դարավանդ այցի գնալու երեկոյան, ես գիտեի, ասես, տեսնում էի, որ միտար Հիթքրիֆը ինչ-որ մտտիկ տեղ սպասում է: Խուսափում էի դըրսում երևալ, որովհետև նրա նամակը տակավին գրպանումս էր, և չէի կամենում, որ ինձ նորից վախեցնեն ու ջղայնացնեն:

Վճռեցի նամակը շհանձնել, մինչև որ իմ տերը մի որևէ տեղ շգնա, որովհետև չէի կարող գուշակել, թե այն ինչպես կազդի Քեթրինի վրա: Հետևանքը եղավ այն, որ նամակը երեք օրից շուտ շհասավ նրա ձեռքը: Զորրորդ օրը կիրակի էր, նամակը տարա հիվանդի սենյակը միայն այն ժամանակ, երբ տան բոլոր անդամները գնացել էին եկեղեցի:

Մնացել էր մի ծառա, որպեսզի ինձ հետ միասին տունը պահպաներ: Ժամերգության պահերին մենք տան դռները ընդհանրապես փակած էինք պահում, բայց այս անգամ եղանակն այնքան տաք էր ու հաճելի, որ ես դռները լայն բաց արի և այդպես կատարեցի իմ խոստումը, քանի որ գիտեի, ինչ ով պիտի գար, և ծառային ասացի, որ տիկինը նարինջ է ուզում, և որ նա վազելով պետք է գնա գյուղ հասնի և մի քանի հատ բերի, իսկ դրանց արժեքը կվճարվի վաղն առավոտյան: Նա մեկնեց, իսկ ես բարձրացա վերնահարկ:

Միսիս Լինթընը սովորականի պես լայն, սպիտակ շորը հագնելով, թեթև շալը ուսերին, սենյակի խորքում նստել էր լուսամտի մոտ: Հիվանդութեան սկզբի օրերին նրա խիտ ու նրբ կարծր մասամբ կտրել էին, և հիմա կարճ կտրած փափուկ բնական գանգուրները սանրած էր դեպի քունքերն ու վիզը: Նրա տեսքը փոխվել էր, ինչպես ասել էի Հիթքրիֆին,

բայց երբ հանգիստ էր լինում, փոխված դիմագծերի մեջ փայլին էր տալիս երկնային գեղեցկություն:

Աչքերի փայլը փոխարինվել էր երազկոտ ու մելամաղձոտ մեղմություններ: Դրանք այլևս շրջապատի իրերին նայող հայացքի տպավորություն չէին թողնում, դրանք, ասես, շարունակ հառած էին անհաս հեռուներ, այս աշխարհի սահմաններից դուրս՝ կասեիք դուք: Դեմքի գունատությունը (կազդուրվելուց հետո հյուծված տեսքը շքացել էր), մտային խանգարման հետևանքով առաջացած դրա տարօրինակ արտահայտությունը, թեև ունեին իրենց ցավոտ պատճառները, բայց, այդուհանդերձ, առաջացնում էին հուզիչ համակրանք նրա նկատմամբ: Ես կարծում եմ՝ ինձ, ինչպես և նրան տեսած ամեն մեկի համար, այս բոլորը շոշափելի ապացույցներ էին, դրանք ժխտում էին ապաքինումը և նրա վրա դնում դատապարտվածության դրոշմը:

Պատուհանի գոգին նրա առաջ դրված էր բաց արած մի գիրք: Հաղիվ նկատելի քամին ժամանակ առ ժամանակ շուռ էր տալիս էջերը: Ես կարծում էի, որ գիրքն այնտեղ դրել էր կինթընը, որովհետև Քեթրինը երբեք չէր փորձում միտքն զբաղեցնել ընթերցանությամբ կամ մի որևէ այլ բանով, և էդգարը ժամեր էր վատնում՝ ջանալով նրա ուշադրությունը զբաղեցնել մի ինչ-որ բանով, որ առաջներում նրան հաճույք էր պատճառում:

Քեթրինը հասկանում էր նրա նպատակը և, եթե տրամադրությունը լավ էր լինում, հանգիստ հանդուրժում էր նրա ջանքերի լարումը, և միայն հասկացնել էր տալիս, որ դրանք անօգուտ են՝ մերթ ընդ մերթ զսպելով իր հոգնած հառաչանքը և, ի վերջո, ընդհատելով նրան իր շատ տխուր ժպիտով ու համբույրով: Մի ուրիշ անգամ նա անհամբերությամբ շուռ էր գալիս և դեմքը թաքցնում ձեռքերի ափերի մեջ կամ նույնիսկ ջղայնացած հրում էր էդգարին մի կողմ. այդպիսի դեպքերում նա կնոջը միայնակ թողնում, հեռանում էր՝ զգալով, որ ոչնչով չի կարող օգնել նրան:

Գիմմերթընի եկեղեցու զանգերը շարունակում էին դողանջել, լսվում էր հովտում ջրառատ գետակի ականջ շոյող մեղմ աղմուկը, որին փոխարինում էր ծառերի դեռ շքացված սաղարթի սոսափյունը, հատկապես ամառ ժամանակ,

երբ շ. Երզնկանաչ էին հասնում, իւրացնում էր Ազարակատան շրջապատի այդ երաժշտութիւնը Մուլեգին հողմերի դարավանդում: Խաղաղ օրերին գետակի աղմուկը, ուժեղ հալոցից կամ անընդհատ տեղացող անձրևներից հետո, միշտ լսվում էր: Քեթրինը լսում, մտածում էր Մուլեգին հողմերի դարավանդի մասին, եթե միայն առհասարակ մտածում, լսում էր որևէ բան: Նա ուներ անմիտ, սառը հայացք. տեսողութիւն կամ լսողութիւն միջոցով հազիվ թե կարողանար ճանաչել շրջապատը:

— Ահա ձեզ նամակ, միսիս Լինթըն,— ասացի ես, այն զգուշութեամբ ղնելով գոգը:— Դուք պետք է կարդաք անմիջապէս, որովհետև սպասում են պատասխանի: Բացե՛մ նամակը:

— Այո,— պատասխանեց նա՝ շնայելով նամակին:

Ծրարը բաց արի: Դա մի շատ հակիրճ նամակ էր:

— Դե հիմա կարդացեք,— շարունակեցի ես: Նա ձեռքը հետ քաշեց և նամակն ընկավ հատակին: Ես բարձրացրի այն, դրեցի գոգը և կանգնած սպասեցի, թե երբ կբարեհաճի ցած նայել, բայց նա երկար ժամանակ հայացքը չէր իջցնում, և ես, ի վերջո, կրկին խոսեցի:

— Կարդա՛մ ձեզ համար, տիկին: Նամակը միտար Հիթքրիֆից է:

Նա ցնցվեց, հիշողութիւնն աղոտ լույս արտացոլեց՝ դեմքին, ճիգ թափեց, որ մտերբը կարդավորի: Հետա նամակը վերցրեց և, կարծես, ուզում էր կարդալ, բայց երբ տեսավ ստորագրութիւնը, հառաչեց: Այդուհանդերձ, ես հասկացա, որ բովանդակութիւնը նրան չհասավ, որովհետև, երբ ցանկացա պատասխանը լսել, նա միայն ցույց տվեց ստորագրութիւնը և տխուր ու պրպտող ագահութեամբ նայեց ինձ:

— Նա ցանկանում է ձեզ տեսնել,— ասացի ես՝ կռահելով, որ հարկավոր է բացատրութիւն տալ:— Հիմա նա պարտեզում անհամբեր սպասում է, թե ես իրեն ինչ պատասխան կբերեմ:

Խոսքը շավարտած, ևս տեսա, թե ինչպէս մի մեծ շուն, որ պտուկի էր արևի տակ՝ խոտի վրա, ցցեց ականջները, ասես ուզում էր հաշիլ, բայց հետո իջեցրեց պոչը և սկսեց

խաղացնել, այդ շարժումով ուզեց հայտնել, թե մտահնում է ինչ-որ մեկը, որն իր համար օտարական չէ:

Միտիս Լինթընը հակվեց առաջ և շունչը պահած ականջ դրեց: Մեկ բույս անց գավիթում ոտնաձայներ լսվեցին: Բաց դուռը շահագանց ուժեղ փորձություն եղավ Հիթքլիֆի համար. շփմացավ, ներս մտավ: Ըստ երևույթին, նա կարծել էր, թե ես խուսափում էի իմ խոստումը կատարելուց և որոշեց ապավինել իր սեփական համարձակությունը:

Քեթրինը լարված ազահուսթյամբ նայում էր դռան կողմը: Ներս մտնողը քիչ էր մնացել սենյակը շփոթի: Քեթրինը ձեռքի շարժումով հասկացրեց ինձ, որ նրան ներս թողնեմ, բայց դռան շնմին դեռ չէի հասել, երբ նա գտավ մեր դուռը և մի ակնթարթ հետո արդեն կանգնած էր Քեթրինի կողքին ու նրան սեղմում էր իր կրծքին:

Հինգ բույս նա ո՛չ խոսում, և ո՛չ էլ բաց էր թողնում Քեթրինին, և այդ ընթացքում Հիթքլիֆը նրան պարզեց շատ ավելի համբույրներ, քան իր ամբողջ անցյալ կյանքում, բայց նախկինում իմ տիրուհին միշտ առաջինը ինքն էր նրան համբուրում: Եվ ես պարզ տեսնում էի, որ Հիթքլիֆը հազիվ էր կարողանում դիմանալ անտանելի սովայտանքին և շնայել նրա դեմքին: Նա, ինչպես ես, Քեթրինին տեսնելու պահից համոզվեց, որ վերջնական ապաքինման ոչ մի հույս չկա. նա դատապարտված է և, իհարկե կմեռնի:

— Օ՛, Քեթի, օ՛, կյանքս, ինչպե՞ս կարող եմ դիմանալ,— դա նրա արտասանած առաջին նախադասությունն էր, որ ասվեց անկեղծ հուսահատությունով:

Հիմա Հիթքլիֆը նրան նայում էր այնպիսի սևեռուն ու լուրջ հայացքով, որ թվում էր, թե հայացքի լարվածությունից ուր որ է արցունքներ կթափվեն աչքերից, բայց աչքերը վառվում էին տառապանքից. աչքերի մեջ արցունքներ չկային:

— Դե՞, հիմա էլ ինչ,— ասաց Քեթրինը՝ հենվելով բազկաթուռի մեջքին, ու խոժոռված հոնքերի տակից հանկարծ նայեց Հիթքլիֆին. նրա տրամադրությունը շարունակ տատանվում էր արագորեն փոփոխվող քմահաճույքների հետ միասին:

— Դու և էդգարը ինձ սրտաբեկ արեցի՞ք, Հիթքլիֆ: Եր-

կուսդ էլ գալիս եք ինձ մոտ, որպէսզի ողբաք ձեր արարք-
ների համար, կարծես զու՛յ այն մարդիկն եք, որոնց պետք
է կարեկցել: Ես չեմ կարեկցի, չեմ խղճաւ: Դու սպանեցիր
ինձ, և կարծեմ դա քեզ օգուտ բերեց. ի՛նչ ուժեղ մարդ ես:
է՛, իմ մեռնելուց հետո ինչքա՛ն պիտի ապրես:

Հիթթլիֆը մի ծնկով հենվիլ էր հատակին, որ զրկի նրան.
փորձեց վերկենալ, բայց Քեթրինը բռնեց նրա մազերից և
չէր թողնում շարժվի:

— Կուզենայի քեզ այ այսպէս բռնած պահել, — շարու-
նակում էր նա դառնութեամբ, — մինչև որ երկուսս էլ մեռ-
նենք: Ինչքան ուզում է տառապես, ինձ համար միևնույն է:
Իսկ ինչո՞ւ չպետք է տառապես, ախր, ես էլ եմ տանջվում:
Կմոռանա՞ս ինձ: Քեզ երջանիկ կզգա՞ս, երբ ես հողի տակ
լինեմ: Քսան տարի հետո չե՞ս ասի. «Սա Քեթրին էրնշուռի
գերեզմանն է: Տարինհր առաջ ես սիրում էի նրան, դժբախ-
տություն ունեցա կորցնելու, բայց դա անցավ, զնաց: Այդ
ժամանակվանից ի վեր ես շատերին եմ սիրել: Իմ երեխա-
ներն ինձ համար ավելի թանկ են, քան նա, մահվան մահի-
ճում չեմ ուրախանա, որ զնալու եմ նրա մոտ, ես կտխրեմ,
որ պետք է թողնեմ նրանց»: Այդպես չե՞ս ասի, Հիթթլիֆ:

— Մի տանջիր ինձ, այլապես ես կխելագարվեմ քեզ
նման, — ճշաց Հիթթլիֆը՝ նրա ձեռքից զլուխն ազատելով և
ատամները կրճտացնելով:

Երկուսով միասին սառնարյուն դիտուլի համար ներկա-
յացնում էին մի տարօրինակ ու զարհուրելի տեսարան: Իզուր
չէր, որ Քեթրինը ենթադրում էր, թե դրախտն իր համար կլի-
ները աքսորավայր, եթե միայն բաժանվելով մեռնող մարմ-
նից, շհրաժարվեր նաև իր բարոյական կերպարից: Այժմ նրա
ղեմքը իր սպիտակ այտերով, անարյուն շրթունքներով և
փայլող հայացքով արտահայտում էր վայրագ վրեժխնդու-
թյուն: Մատնհրի մեջ պինդ բռնած պահում էր մի փունջ
մազ, որ պոկել էր նրա գլխից: Հիթթլիֆը, մի ձեռքով հեն-
վելով հատակին, մյուսով բռնելով նրա թևից, վերկացավ:
Նրա զգուշութունը հիվանդի նկատմամբ այնքան շնչին էր,
որ երբ մատները հետ քաշեց, ես Քեթրինի անգույն մաշկի
վրա նկատեցի շորս կապույտ բիծ:

— Մի՞թե մոլագար ես դարձիլ, — զայրալից ասաց նա, —

որ մեռնելու պահին անգամ այդ ձևով ես ինձ հետ խոսում: Չե՞ս մտածել այն մասին, որ այդ բոլոր խոսքերը դրոշմված կմնան իմ հիշողության մեջ և հետագայում ավելի խոր կմխրճվեն հիշողությանս խորքերը, երբ դու այլևս չես լինի: Դու ինքդ էլ գիտես, որ ստում ես, երբ ասում ես, թե ես սպանեցի քեզ: Քեթրին, գիտես, որ ես ավելի շուտ կմոռանամ ինքս ինձ, քան քեզ: Մի՞թե քո դիվային եսամոլության համար բավական չէ այն, որ ես տանջալից կերպով կգալարվեմ դժոխքում, մինչ դու կապրես խաղաղ կյանքով:

— Ես հանդիստ չեմ ունենա, — հառաչեց Քեթրինը, որի սրտի ուժեղ ու անհավասար բարասյունը փոխարինվեց ֆիզիկական թուլության զգացումով. ծայրահեղ հուզմունքից սիրտն այնպես էր խփում, որ դա և՛ լսվում, և՛ նկատվում էր:

Նա այլևս ոչինչ շատաց, մինչև որ նույն անցալ. հետո շարունակեց, բայց ավելի մեղմ.

— Ես չեմ ցանկանում, որ դու ավելի շատ տանջվես, քան ես ինքս, Հիթքլիֆ: Ես միայն ուզում եմ, որ մեզ այլևս երբեք չբաժանեն իրարից. եթե իմ որևէ խոսքը հետագայում քեզ տանջի, մտածի, որ հույի տակ ես էլ եմ տանջվում և, ի սեր ինձ, ներիր ինձ: Մոտեցիր և նորից շոքիր կողքիս: Դու կյանքում երբեք ինձ վատություն չես արել: Ո՛չ, եթե զայրանում ես՝ ինձ համար ավելի ծանր կլինեն հիշել այդ, քան քեզ համար, երբ կհիշես իմ կուպիտ խոսքերը: Չե՞ս ուզում նորից մոտենալ: Մո՞տ եկ:

Հիթքլիֆը հետևից մոտեցավ նրա բազկաթոռին և հակվեց նրա վրա, բայց հակվեց այնպես, որ նա շտեսնի իր դեմքը, որը հուզմունքից դարձել էր մեռելագույն: Քեթրինը շուտ հկավ, որ նայի նրան, նա թույլ շտվեց: Կտրուկ շուտ գալով մոտեցավ բուխարուն և լուռ կանգնած մնաց՝ մեջքով դեպի մեղ:

Միսոր Լինթընի հայացքը կասկածանքով հետևում էր նրան: Նրա ամեն մի շարժումը Քեթրինի մեջ արթնացնում էր մի նոր միտք: Լոկուց և նրան երկար նայելուց հետո Քեթրին շարունակեց՝ զայրալից հուսահատական տոնով դիմելով ինձ.

— Օ՛, տեսնում ես, Նեյլի, նա ոչ մի բոպե չի ուզում գթաշարժվել, որ փրկի ինձ գերեզմանից: Ահա թե ինչպես եմ ես սիրված եղել: Բայց դա կարևոր չէ: Դա իմ Հիթքլիֆը չէ: Իմ Հիթքլիֆին ես, այնուամենայնիվ, կսիրեմ և կտանեմ նրան հետս, նա իմ հոգու մեջ է: Եվ,— մտածկոտ ավելացրեց,— վատն այն է, որ ձանձրացել եմ այս ողորմելի բանտից: Հոգնել հմ այստեղ փակված մնալուց: Զգտում եմ ընկնել այն հրաշագիղ աշխարհը և միշտ մնալ այնտեղ՝ թեկուզև արցունքների միջից, աղոտ կերպով շտեմնելով այն և դրա համար տանջվելով հալումաշ եղած սրտիս պատերի մեջ. բայց իրականում ես այդ աշխարհի հետ եմ, նրա մեջ եմ: Նեյլի, կարծում ես դու ավելի լավ ես և ավելի երջանիկ, քան ես, որովհետև դու առողջ ես և ուժեղ: Դու խղճում ես ինձ՝ շատ շուտով դա կփոխվի: Ես կխղճամ քեզ: Ես աներևակայելի հեռու և բարձր կլինեմ ձեր բոլորից: Տարօրինակն այն է, որ նա իմ կողքին չի լինի,— շարունակում էր նա ինքն իրեն:— Ես կարծում էի, նա այդպես էլ ցանկանում է: Հիթքլիֆ, սիրելիս, հիմա դու չպետք է համառես: Մոտեցիր ինձ, Հիթքլիֆ:

Քեթրինը անհամբերությամբ վերկացավ՝ հենվելով բազկաթոռի բազուկին: Նրա այդ հրամայական կանչի վրա Հիթքլիֆը ծայրահեղ հուսահատությամբ շուռ եկավ դեպի նա: Նրա լայն բացված ու արտասովալից աչքերը մոլեղնաբար փայլելով նայում էին Քեթրինին, կուրծքը ջղաձդարար բարձրանում իջնում էր: Մի պահ կանգնած մնացին իրարից անջատ, իսկ թե ինչպես նրանք միացան, ես շտեսա, բայց Քեթրինը նետվեց առաջ, Հիթքլիֆը բռնեց նրան, և նրանք զրրկախառնվեցին, որից ինձ թվաց, իմ տիրուհին երբեք կենդանի դուրս չի պրծնի. և կարծես նա իսկապես անզգայացել էր: Հիթքլիֆը նետվեց դեպի ամենամոտ բազկաթոռը, ես շտապ մոտեցա Քեթրինին, որ տեսնեմ՝ հո չի ուշաթափվել, Հիթքլիֆը մոնչաց ինձ վրա և կատաղած շան նման, փրփուրը բերանին, տենչացող եռանդով նրան քաշեց դեպի իրեն: Ես այնպիսի զգացում ունեի, որ ասես կողքիս կանգնած էր մի ուրիշ էակ. թվում էր, թե նա չի հասկանում մարդկային լեզուն՝ թեև ես խոսում էի հետը, ուստի քաշվեցի մի կողմ և շփոթված լռեցի:



Քեթրինի կատարած մի շարժումը մի փոքր հանգստացրեց ինձ. նա ձեռքը բարձրացրեց, որ գրկի Հիթքլիֆի վիզը և նրա գրկում իր այտը հպեց նրա այտին, իսկ Հիթքլիֆը խելացնոր համբույրներով նրան գուրգուրում, կատաղորեն ասում էր.

— Դու ինձ հասկացնել ես տալիս, թե ինչքան դաժան ես եղել՝ դաժան և կեղծ: Ինչո՞ւ էիր ինձ արհամարհում: Ինչո՞ւ դավաճանեցիր քո սեփական սրտին, Քեթի: Ես սփոփանքի խոսքեր չունեմ: Դու արժանի ես դրան: Դու ինքդ քեզ սպանեցիր: Այո, դու կարող ես համբուրել ինձ, լաց լինել և համբույրներ ու արցունքներ կորզել ինձնից: Դրանք կխորտակեն, կդատապարտեն քեզ: Դու սիրում էիր ինձ, հապա ի՞նչ իրավունք ունեիր լքել ինձ, ի՞նչ իրավունքով, դե պատասխանիր, ի սեր այն հակումի՞, որ ունեիր Լինթընի նկատմամբ: Երբ ո՞չ աղետը, ո՞չ ստորացումը և ո՞չ էլ մահը՝ մի խոսքով այն ամենը, որ աստված և սատանան կարող են ուղարկել, չէին կարող մեզ իրարից անջատել, ինչո՞ւ արեցիր այդ, քո սեփական կամքով: Ես չեմ կոտրել քո սիրտը, ինչո՞ւ կոտրեցիր այն, և դրանով դու կոտրեցիր նաև իմ սիրտը: Եվ ամենավատն այն է, որ ես պինդ եմ: Մի՞թե ևս ուզում եմ ապրել: Եվ դա ի՞նչ կյանք կլինի, երբ դու... Օ՛, աստված իմ, մի՞թե կուղենաս ապրել, երբ հոգիդ գերեզմանում է:

— Հանգիստ թող, — հեկեկում էր Քեթրինը: — Եթե վատ եմ վարվել՝ դրա համար ես մեռնում եմ: Բավական է: Դու էլ լքեցիր ինձ, բայց ես քեզ չեմ մեղադրի: Ես ներում եմ քեզ, դու էլ ինձ ներիր:

— Դժվար է ներել և նայել այդ աչքերին, և բռնել ու զգալ այդ հյուծված ձեռքերը, — պատասխանեց նա: — Մի անգամ էլ համբուրիր ինձ և մի թող, որ նայեմ քո աչքերին: Ես ներում եմ քեզ ինձ պատճառած ցավի համար: Ես սիրում եմ ինձ սպանողին... բայց ինչ սպանողին... ինչպե՞ս կարող եմ նրան էլ սիրել:

Նրանք լռեցին... այտերը հպելով իրար, արցունքները խառնվում, թրջում էին նրանց դեմքերը: Գոնե ինձ այնպես էր թվում, թե երկուսն էլ լաց են լինում. ինչպես երևում է, այդպիսի ցնցող պարագաներում Հիթքլիֆը կարող էր լաց լինել:

Միևնույն ժամանակ ես շատ անհանգիստ վիճակում էի:

Օրն արագ անցավ: Իմ հանձնարարութեամբ ուղարկված մարդր վերադարձավ: Մայրամուտին մոտեցող արևի լույսի տակ հուվտում ես նշմարում էի Գիմմերթընի հկեղեցու դավիթում խտացող բազմութունը:

— Արարողութունը վերջացավ,— հայտարարեցի ես:— Պարոնը այստեղ կլինի կես ժամ հետո:

Հիթբլիֆը հառաչելով անիծեց, ավելի պինդ գրկեց Քեթրինին, որը տեղից չշարժվեց:

Շուտով ես նկատեցի ծառաների մի խումբ, որ ճանապարհով բայում էր դեպի այն թևաշենքը, որտեղ դտնվում էր խոհանոցը: Նրանց հետևից պալիս էր միստր Լինթընը. նա ինքը դարպասը բաց արեց և դանդաղաքայլ մոտենում էր առմուտքին, հավանորեն բավականութուն դգալով հաճելի երեկոյից, որն ամառվա երեկոյի պես մեղմ էր:

— Նա արդեն այստեղ է,— բացականչեցի ես:— Ի սերաստժո, շուտ արեք: Շտապեցեք ներքև: Գիմացի սանդուղքի վրա դուր ոչ ոքի չեք հանդիպի: Դե, շուտ արեք, թաքնվեք ծառերի մեջ, մինչև որ նա անցնի իր սենյակը:

— Ես պետք է գնամ, Քեթի,— ասաց Հիթբլիֆը, աշխատելով ազատվել նրա գրկից:— Բայց եթե կենդանի մնամ, ևս քիչ քնկույց տուաջ նորից կտեսնեմ: Կսպասեմ հինգ յարդքո լուսամուտից հետո:

— Դու չպետք է գնաս,— պատասխանեց Քեթրինը՝ բռնոր ներածին շափ պինդ բռնելով նրան:— Չէ՞, քեզ ասում եմ, չե՛ս գնա:

— Միայն մի ժամով,— լրջորեն խնդրում էր նա:

— Մեկ րոպեով էլ չեմ թողնի,— պատասխանեց Քեթրինը:

— Բայց պե՛տ է, Լինթընը հենց հիմա ներս կմտնի,— պնդում էր տագնապահար եղած անկոչ հյուրը:

Հիթբլիֆը ջանում էր վերկենալ, ուժով փորձում էր ազատվել նրա մատներից, բայց Քեթրինը էլ ավելի ամուր բռնեց նրան. նրա գեմբն արտահայտում էր խելացնոր վճռականութուն:

— Ոչ,— ճշաց Քեթրինը:— Մի դե՛ս, մի գնա: Մենք միասին ենք վերջին տնգամ: Էդգարը մեզ չի դիպչի: Հիթբլիֆ, ևս կմեռնեմ, կմեռնեմ:

— Գրողը տանի: Գալիս է,— ասաց Հիթթլիֆը, նորից ընկղմվելով իր բազկաթոռի մեջ:— Մ'ս, սիրելիս, ս'ս, սուս կաց, Քեթրին: Ես մնում եմ: Եթե նա կրակի ինձ վրա, ես հոգիս կավանդեմ օրհնելով նրան:

Նրանք նորից գրկախառնվեցին: Ես լսում էի, թե ինչպես իմ տերը աստիճաններով բարձրանում էր վերև: Սառը քրտինքը պատել էր ճակատս. սարսափից ցնցվում էի:

— Ինչո՞ւ եք լսում նրա զառանցանքները,— կրքոտությամբ ասացի ես:— Նա ինքն էլ չգիտի, թե ինչ է ասում: Դուք ուզում եք կործանե՞լ նրան, որովհետև նա խելագարվել է և չի՞ կարող պաշտպանել ինքն իրեն: Վերկացեք և իսկույն հեռացեք: Սա ձեր արարքներից ամենասարսափելին է: Ձեր պատճառով մենք՝ տերը, տիրուհին և ծառաները, բոլորս կործանվեցինք:

Ես ձեռքերս էի կոտրատում ու ճշում: Միստր Լինթընը լսելով աղմուկը արագացրեց քայլերը. շնայած հուզումնալից վիճակին, ես անկեղծորեն ուրախացա, երբ նկատեցի, թե ինչպես Քեթրինի ձեռքերը թուլացան, կախ ընկան, և գլուխը հակվեց կրծքին:

«Ուշաթափվեց կամ մեռավ,— մտածեցի ես,— ավելի լավ: Ավելի լավ է, մեռնի, քան թե մի կերպ քարշ գա, բեռ ու դժբախտություն դառնա շրջապատի բոլոր մարդկանց համար»:

Ձարմանքից ու ցասումից գունատված էղգարը նետվեց անկոշ հյուրի վրա: Թե ի՞նչ էր ուզում անել, չեմ կարող ասել. բայց Հիթթլիֆը նրան իսկույն կանգնեցրեց և կնոջ ասես անկենդան մարմինը ցած սահեցրեց ձեռքերից:

— Հապա մի տեսեք,— ասաց նա,— եթե դուք մարդ եք, առաջ օգնեցեք կնոջը, իսկ ինձ հետ հետո կխոսեք:

Նա անցավ հյուրասենյակ և նստեց: Միստր Լինթընը կանչեց ինձ և մեծ դժվարությամբ, տարբեր միջոցների դիմելով, մենք կարողացանք Քեթրինին ուղքի բերել. բայց նրա գիտակցությունը ամբողջովին մթազնած էր՝ հառաչում, տնքում էր և ոչ մեկիս չէր ճանաչում: Էղգարը կնոջ համար անհանգստացած, մոռացավ նրա ատելի բարեկամին: Բայց ես շմոռացա: Առաջին իսկ հնարավորություն դեպքում անցա

Հիթքլիֆի մոտ և խնդրեցի, որ թողնի հեռանա, հավատացնելով, որ Քեթրինը իրեն լավ է զգում, և որ առավոտյան կանցնեմ իր մոտ ու կասեմ, թե գիշերը ինչպես է անցկացրել:

— Լավ, կհեռանամ,— պատասխանեց նա:— Բայց կրուպասեմ պարտեզում, և, նեւի, տես, շմոռանաս խոստումդ: Ես կսպասեմ այ այն կվենիներ ձեզ, տես, շմոռանաս, թե չէ նորից ներս կմտնեմ. ինձ համար միևնույն է՝ կինթրեր տանը կլինի, թե ոչ:

Նա մի արագ հայացք գցեց ննջասենյակի կիսարաց դրուխից ներս և համոզվելով, որ ես, հավանաբար, նրան ճշմարտությունն ասացի, տունը ազատեց իր շարարաստիկ ներկայությունից:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՎԵՑԵՐՈՐԳ

Գիշերվա ժամը տասներկուսին մոտ ծնվեց յոթամսական մի տկար երեխա: Դա այն Քեթրինն էր, որին դուք տեսաք Մոլեգին հողմերի դարավանդում: Երկու ժամ հետո վախճանվեց մայրը, որը ոչ մի անգամ աչքի չեկավ այնքան, որ նկատեր միտար Հիթքլիֆի բացակայությունը կամ ճանուցեր էզգարին:

Ես չեմ նկարագրի, թե ինչ սոսկալի վիճակի մեջ բնկավ կինթրեր իր կրած ծանր կորուստի պատճառով. նրա խոր վշտի ազդեցությունը պարզվեց միայն հետագայում:

Բացի այդ, իմ աչքում նրա գմբախաությունը խորացավ և այն պատճառով, որ տանտերը մնաց անժառանգ: Ըս վրշտանում էի այդ բանի համար, երբ նայում էի այդ տկար որբուկին, մտովի նախատում էի ծեր կինթրնին, որ նա՝ թեև դա միանգամայն բնական ցանկություն էր, կարվածքը հաստատակ տվեց իր ազգի և ոչ թե իր որդու ազգի վրա:

Ին՝ զճ փոքրիկ, անժամանակ նա աշխարհ եկավ: Իր գոյությունն առաջին ժամերի բնթացքում փոքրիկը կարող էր ճաքել լացից, ոչ որ նրանով չէր հետաքրքրվում: Հետագայում մենք փոխեցինք մեր անփույթ վերաբերմունքը երեխայի

նկատմամբ, սակայն իր կյանքի սկզբնական շրջանում նա միայնակ էր, որպիսին, հավանաբար կլինի և վերջում:

Հետևյալ առավոտ, պայծառ ու բերկրալից, վարագույրով մեղմացած հաճելի ու գորովալից յույսը ներս սողաց խաղաղ սենյակ և ողողեց բազմոցը ու նրա վրա պառկած տիկնոջ մարմինը:

էղզար Լինթընը, աշրերը փակ, գլուխը դրել էր բարձին: Նրա երիտասարդ ու գեղեցիկ դեմքը համարյա նույնքան մեռելագույն էր, որքան և կողքը պառկածինը և գրեթե նույնքան էլ անշարժ էր. միայն թե նրա լուռությունը սպառված կարոտի, իսկ կնոջ լուռությունը՝ կատարյալ խաղաղության լուռություն էր: Տիկնոջ ճակատը հարթ էր, կոպերը փակ էին, շուրթերը պահպանել էին ժպիտի արտահայտություն: Երկնային հրեշտակը չէր կարող ավելի գեղեցիկ լինել: Ինձ ևս համակեց նույն այդ անվախճան հանդստությունը, որի մեջ պառկած էր նա: Իմ մտքերը դեռ երբեք այդպես նվիրական չէին եղել, ինչպես այժմ, երբ ես դիտում էի այդ աստվածային անվրդով հանգստությունը: Եվ բնազդորեն իմ մտքովն անցան մի քանի ժամ առաջ ասած նրա խոսքերը. «Մեզնից աներևակայելի հեռու և բարձր»: Արդյոք տիկնոջ ոգին դեռ երկրի վրա՞ է, թե հիմա արդեն երկնքում է՝ աստծո տան մեջ: Զգիտեմ, գուցե իմ տարօրինակությունն է դա, բայց ես հազվադեպ եմ ունենում մի այլ զգացում, բացի երջանկության զգացումից, երբ նստած եմ լինում հանգուցյալի կողքին, եթե միայն այդ սպավոր պարտականությունը ինձ հետ չի բաժանում նա, ով գտնվում է խելացնոր հուսահատության մեջ: Այդ պահին ես տեսնում եմ մի հանգստություն, որը ո՛չ երկրի և ո՛չ էլ գեհենի ուժերը չեն կարող խափանել և տոգորվում են հավատով դեպի այդ անսահման ու անամպ ապագան՝ այն հավերժական աշխարհը, ուր մտել են հոգիները, մի աշխարհ, որտեղ կյանքն անվտխճան է իր տեականության մեջ, սերը՝ իր կարեկցության մեջ և ուրախությունը՝ իր լիակատարության մեջ: Այս անգամ ես նկատեցի, թե որքան հսամուլություն կա, նույնիսկ այնպիսի սիրո մեջ, որպիսին է միտար Լինթընի սերը, երբ նա այդպես տանջվում է Բեթրինի երջանիկ վախճանի պատճառով:

Անշուշտ, կարելի է կասկածել, թե իր կենդանության

օրոք քմահաճ ու անհամբեր լինելուց հետո, վերջ ի վերջս, արժանի՞ էր արդյոք նա խաղաղ հանգրվանի: Այդ բանում կարելի է կասկածել սառը դատողութեան պահին, բայց ոչ այն ժամանակ, երբ նստած եք մեռածի դիակի մոտ: Անշունչ դիակը հաստատում էր իր անխռովութունը, որն ասես նրա նախկին հոգու հավիտենական հանգստի գրավականք լիներ:

— Դուք հավատո՞ւմ եք, սրբ, որ այն աշխարհում այդպիսի մարդիկ ապրում են երջանիկ կյանքով: Շատ բան կուսայի այդ իմանալու համար:

Ես խուսափեցի պատասխանել միսիս Դինի տված հարցին, որի հերևիկոսական բնույթը ինձ ցնցեց:

— Հետևելով Քեթրին Լինթլնի կյանքի ընթացքին, դժվար թե մենք իրավունք ունենանք մտածել նրա երջանկության մասին: Բայց թողնենք տիկնոջը իրեն արարչի հետ:

Իմ տերը կարծես քնեց, և երբ լո՛ւսացավ, ես որոշեցի թողնել սենյակը ու դուրս գալ մաքուր օդ շնչելու: Ծառաները ևնթաղում էին, որ ես դուրս գնացի թոթափելու քնկոտությունն զիշերային երկարատև հերթափոխությունից հետո, իսկ իրականում, իմ գլխավոր նպատակն էր տեսնել միտքը Հիթլիֆին: Եթե նա ամբողջ զիշեր կանգնած մնացել է խեղճափիճիների մեջ, դժվար թե լսած լինի Ադարակատունը եղած իրարանցման ազմուկը, թերևս տեսած լինի Դիմմերթրնի կողմը քառասմբակ սլացող հեծյալին: Եթե նա ավելի մոտ եկած լիներ, ապա դեսուդեն սլացող լույսերից, բացվող ու փակվող արտաքին դռների շրխկոցներից համանարար գուշակած կլիներ, որ տանը ամեն ինչ վատ է: Այս ուզում էի, բայց և վախենում էի գտնել նրան: Հասկանում էի, որ այդ սոսկալի լուրը պետք է հայտնել, փափաղում էի շատ ասել վերջացնել, բայց չգիտեի ինչպես սկսել:

Նա այնտեղ էր, ավելի ճիշտ, մի քանի չարդ հետո, պարտեկում. կանգնած էր գլխարաց, հենված հին հուշեկու ծառին, մայկերը թրջվել էին ոտների բոցբոցների վրա կուտակված շալից, և կաթիլները կակտացնում էին նրա շուրջը: Երևում էր, որ նա երկար կանգնած էր մնացել այդ գիրքով, որովհետև նկատեցի մի գույզ կեննելու, որ հազիվ էր, և նա շափ հեռու պաուլսներ էին գործում նրա գլխով: Երևում էր, որ



նրանք բույն էին հյուսում և բանի տեղ շէին դնում մարդուն, ասես դա փայտի կտոր լիներ: Երբ ես մոտեցա, նրանք թռան գնացին, իսկ նա հայացքը բարձրացրեց ու սկսեց խոսել.

— Քեթրինը մեռավ,— ասաց նա:— Ես քեզ դրա համար շէի սպասում, որ գաս, այդ լուրը հաղորդես ինձ: Թաքցրու թաշկինակդ, մի նվնվա իմ առաջ: Գրո՞ղը տանի ձեզ բոլորիդ: Ձեր արցունքները նրան հարկավոր չեն:

Ես ավելի շատ լաց էի լինում նրա և ոչ թե տիկնոջ համար. մենք երբեմն խղճում ենք մարդկանց, որոնք կարեկցությունը շունեն ո՛չ իրենց և ո՛չ էլ ալլոց նկատմամբ: Երբ նայեցի նրա երեսին, հասկացա, որ տեղյակ է աղետի մասին, և իմ մեջ առաջացավ մի անհեթեթ միտք՝ նրա սիրտը կոտորվել է, նա աղոթում է, որովհետև շուրթերը շարժվում են, իսկ հայացքը հառած է գետին:

— Այո, մեռավ,— պատասխանեցի ես, զսպելով հեկեկանքս և սրբելով այտերս:— Հույս ունեմ, որ նա համբառնեց երկինք, որտեղ մեզնից յուրաքանչյուրը կարող է հանդիպել նրան, եթե ընդունի նախազգուշացումը, թողնի իր վատ ճանապարհներն ու ընթանա բարության ուղիով:

— Ուրեմն նա ընդունե՞ց նախազգուշացումը,— հարցրեց Հիթթլիֆը, փորձելով հեզնորեն ժպտալ,— և մեռավ սրբի՞ նման: Դե պատմիր ճշմարտությունը: Ինչպե՞ս մեռավ...

Նա ջանում էր արտասանել անունը, բայց չէր կարողանում. շրթունքները սեղմելով, լռելյայն մաքառում էր իր ներաշխարհի տվայտանքի դեմ, միաժամանակ վճռական ու վայրալից հայացքով մերժում էր իմ կարեկցանքը:

— Ինպե՞ս մեռավ,— վերջապես արտաբերեց նա և ստիպված եղավ՝ շնայած իր ամուր կազմվածքին, մեջքով հենվել ծառի բնին, որովհետև ներքին պայքարի պատճառով դողում էր ամբողջապես՝ մինչև մատների ծայրերը:

«Ին՞չ թշվառական,— մտածեցի ես,— դու ունես նույն սիրտն ու նույն ջղերը, ինչպես և քո հղբայր տղամարդիկ: Ինչո՞ւ ես մտահոգվում, փորձում թաքցնել այդ: Քո հպարտությունը չի՞ կարող կուրացնել աստծուն: Դու գայթակղեցնում ես նրան, որ ծվատի դրանք այնքան ժամանակ, մինչև որ ստիպի քեզ ամոթալի ճիշ արձակել:

— Հանգի՛ստ, գառնուկի պես,— պատասխանեցի ես

բարձրաձայն:— Քեթրինը հառաչեց և ձգվեց այն մանկան նման, որ արթնանում է ու կրկին քնում. իսկ հինգ բոլոր անց զգացի, որ նրա սիրտը շատ թույլ թպրտաց, — և՛ վերջ:

— Եվ... և ոչ մի անգամ չհիշե՞ց ինձ, — հարցրեց նա՝ վարանումով ասես վախենում էր, որ ի պատասխան իր հարցին կհետևեն մանրամասնություններ, որոնք լսելը անտանելի կլինեիր:

— Տիկինը ուշքի չեկավ: Այն պահից ինչ դուք հեռացաք նրանից, նա ոչ մեկին չէր ճանաչում, — ասացի հստակ: — Նա պառկած էր պայծառ ծիծաղը երեսին. իր վերջին մտքերում նա վերադառնում էր վաղ մանկության հաճելի օրերին: Իր կյանքն ավարտեց խաղաղ քնով: Երանի այն աշխարհում էլ այդպես անվրդով արթնանա:

— Երանի թե արթնանա տանջանքներով, — ճշաց շիթքլիֆը սոսկալի ուժով և ոտքը դեպից գետնին ու սկսեց հառաչել անզուսպ կրքի անակնկալ մոլուցքի մեջ: — Նա մինչև վերջ էլ մնաց որպես խաբեբա: Ո՛ւր է նա: Ոչ այնտեղ՝ երկրնքում... չմեռավ... հապա որտե՞ղ է: Օ՛հ, դու ասացիր, որ իմ տառապանքները քեզ համար ոչ մի նշանակություն չունեն: Ես ունեմ սոսկ մի աղոթք, որը շարունակ կրկնում եմ, մինչև որ լեզուս կարծրանա: Քեթրին էրնշուռ, դու հանգիստ չես ունենա, քանի դեռ ես կենդանի կլինեմ: Դու ասացիր, որ ես սպանեցի քեզ, ուրեմն հաճախակի երևա ինձ: Սպանվածները՝ ես հավատում եմ, հաճախ են երևում իրենց սպանողներին: Գիտեմ՝ ուրվականները թափառում են երկրում: Միշտ եղիր ինձ հետ... ընդունիր ինչ կերպարանք ուզում ես... գծվեցրու ինձ, միայն մի թողնի ինձ այս անդնդախոր վիհում, որտեղ չեմ կարող քեզ գտնել: Օ՛, աստված իմ: Դրա համար խոսք չեմ գտնում: Ես առանց իմ կյանքի չեմ կարող ապրել: Չեմ կարող ապրել առանց իմ հոգու:

Նա գլուխը խփում էր ծառի կնճռոտ քնին և աչքերը բարձրացնելով ոռնում էր ոչ թե մարդու, այլ վայրի գազանի պես, որին դանակներով ու նիզակներով ծակծկոտել, հասցրել են մինչև մահվան դուռը:

Ես նկատեցի արյան մի քանի կաթիլ ծառի կեղևի վրա, իսկ նրա ձեռքն ու ճակատը շաղախավել էին արյան մեջ. ըստ երևույթին, իմ աչքերի առաջ կատարվող տեսարանը կրկը-

նությունն էր նույնպիսի տեսարանների, որոնք տեղի էին ունեցել այստեղ ամբողջ գիշերու Այն իմ մեջ գրեթե չէր արթնացնում որևէ կարեկցություն, այլ սարսափեցնում էր ինձ և այդուհանդերձ, ես չկարողացա լքել նրան: Բայց երբ բավականին տիրապետեց իրեն և նկատեց, որ իրեն հետևում են, նա որոտալից ձայնով հրամայեց ինձ հեռանալ, և ես հնազանդվեցի: Այլ կերպ ինչպես կարող էի հանգստացնել և սփոփել նրան:

Միսիս Լինթընի թաղումը նշանակված էր առաջիկա ուրբաթ օրը: Մինչև այդ օրը նրա բաց դագաղը թաղված էր ծաղիկների ու անուշաբույր տերևների մեջ և գտնվում էր մեծ դահլիճում: Լինթընը գիշեր-ցերեկ անց էր կացնում այդտեղ որպես արթուն պահակ, և Հիթքլիֆը, — մի հանգամանք, որ բոլորի համար մնաց գաղտնիք, բացի ինձանից, — բոլոր այդ գիշերները անց էր կացնում դրսում, առանց քուն ու դադարի:

Ես նրա հետ ոչ մի կապ չէի պահպանում, բայց հասկանում էի, որ նա մտադիր էր ներս գալ, եթե միայն կարողանար: Եվ երեքշաբթի օրը, մութն ընկնելուց հետո, երբ իմ տերը ծայր աստիճան հոգնած, հարկադրված էր մի քանի ժամ հանգստանալ, ևս գնացի և բաց արի լուսամուտներից մեկը. Հիթքլիֆի հաստաստակամությունից հուզված, վճռեցի հնարավորություն տալ նրան, որ վերջին հրաժեշտը տա իր կուռքի թոշնած պատկերին:

Նա շահապաղեց օգտվել առիթից, զգույշ և արագ՝ այնքան զգույշ, որ շմասնեց իր ներկայությունը ամենաթեթև ազմուկով անդամ: Իրոք ևս չէի էլ իմանա, որ եկել է, եթե չնկատեի ննջեցյալի դեմքի վրա շղարշի խախտված ծալքերը և հատակին ընկած արծաթե թելով ամրացված շեկ խոպուպիկը, որը ստուգելուց հետո համոզվեցի, որ հանված էր Քեթրինի պարանոցին կախված մեղալիոնից: Հիթքլիֆը այն բաց էր արել և դեն էր նետել միջի խոպուպիկը՝ փոխելով այն իր սեփական սև մազափնջով: Ես դրանք երկուսն էլ հյուսեցի իրար և դրեցի մեղալիոնի մեջ:

Միսար էրնշոուն, իհարկե, հրավեր ստացավ, որ գա և ներկա դառնալի քրոջ աճյունի թաղման արարողությունը: Նա չներկայացավ և ներողություն էլ չխնդրեց, այնպես որ, բացի

ամուսնուց, դագաղն ուղեկցեցին միայն վարձակալներն ու սպասավորները: Իզաբելլային շահարկեցին:

Ի զարմանս գյուղացիների, Քեթրինին թաղեցին ոչ թե եկեղեցու պատի տակ Լինթընների քարակերտ դամբարանում, ոչ էլ իր սեփական ազգականների շիրմների կողքին, այլ գերեզմանատան կանաչապատ լանջի մի անկյունում, որտեղ ցանկապատն այնքան ցածր էր, որ ցախիների ու հապալասի մացառները մորուտի կողմից աճելով, բարձրանում անցնում էին դրա վրայով և գերեզմանի թումբը կորչում էր աշդտեղ տորֆի մեջ: Նրա ամուսինը թաղված է հիմա նույն տեղում. նրանցից յուրաքանչյուրի գլխավերևը դրված է հասարակ շիրմաքար, իսկ ոտքերի մոտ՝ մի անպաճույճ քարի բեկոր, որպեսզի գերեզմանները նշվեն:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՅՈՒԵՐՈՐԳ

Այդ ուրբաթ օրը մեզ մոտ ամսվա վերջի պարզ օրն էր: Երեկոյան դեմ եղանակը կոտորվեց: Հարավային քամին փոխվեց, սկսեց փչել հյուսիս-արևելյան քամին, որն իր հետ բերեց սկզբում անձրև, ապա մանր կարկուտ ու ձյուն:

Առավոտյան դեմ դժվար էր պատկերացնել, որ սրանից հրեք շաբաթ առաջ ամառ է եղել. ձնծաղիկներն ու քրքմները թաքնվեցին ձյան շերտերի տակ: Արտույտները լոնցին, վաղաժամ բացված ծառերի մատաղ տերևները թոշնեցին ու սևացան: Տաղտկալի, մռայլ ու ցուրտ շաբաթվա առավոտը տանջալից կերպով շարունակվում էր: Իմ տերն իր սենյակից դուրս չէր գալիս: Ես տիրացա ամայացած հյուրասենյակին՝ դարձնելով այն մանկասենյակ. այնտեղ նստած ծնկներին վրա օրորում էի աիկնիկի նման լացող մանկանը և միաժամանակ դիտում, թե ինպես ձյան տեղացող փաթիլները կուտակվում էին բաց լուսամուտի գոգին, հրք դուռը բացվեց, շնչակտուր ու ծիծաղելով ներս նետվեց մի կին:

Առաջին բույսերն իմ գայրույթը զարմանքից ավելի ուժեղ էր: Ես կարծեցի, թե դա աղախիսներից մեկն էր և ճշացի.

— Վերջ տվե՛ք: Ինչպե՞ս եք համարձակվում ձեր ան-

զուսպ ուրախությամբ ներխուժել այս տունը: Ի՞նչ կասեր միտար Լինթընը, եթե լսեր ձեր ձայնը:

— Ներեցեք,— պատասխանեց մի ծանոթ ձայն,— ես գիտեմ, որ էղգարը պառկած է, բայց շեմ կարողանում տիրապետել ինձ:

Այդ խոսքերով հյուրը մոտեցավ կրակին՝ ծանր շնչելով և ձեռքը սեղմելով կողին:

— Մոլեգին հողմերի դարավանդից մինչև այստեղ ամբողջ ճանապարհը վաղել եմ,— մի պահ լռելուց հետո նորից սկսեց խոսել նա:— Ոչ թե վազում, այլ թռչում էի: Թե քանի անդամ եմ ճամփին վայր ընկել, շեմ կարող հաշվել: Օ՛հ, էլ սաղ տեղ չկա վրաս: Մի վախեցեք, ես հիմա, հենց որ հանգստանամ, բոլորը կբացատրեմ: Միայն բարի եղևք, գնացեք կարգադրեք, որ կառքը լծեն և ինձ Գիմմերթըն հասցնեն, աղախիններից մեկին էլ ասեք, որ իմ պահարանից զգեստ բերի ինձ համար:

Այդ ինքնակոշ հյուրը միսիս Հիթքլիֆն էր: Նա, իհարկե, խղճալի վիճակում էր: Հալված ձյունից թրջվել էին ուսին փոված գիսակները: Նա հագել էր իր աղջկական տնային շորը, որ ավելի շատ համապատասխանում էր իր տարիքին, քան դրուժյանը. կարճ թևքերով զգեստը էժանագին էր, վիղն ու գլուխը ոչնչով պաշտպանված չէին: Թրջված մետաքսե թիթե շորը կպել էր մարմնին, իսկ ոտքերին հագել էր միայն բարակ ներբան ունեցող հողաթափեր, դրան ավելացրեք ականջի տակի խոր կտրվածքը, որից միայն ցրտի պատճառով հորդառատ արյուն շէր ծորում, գունատ դեմքը ծածկված էր բծերով ու քերձվածքներով, հոգնածությունից հագիվ էր կարողանում կանգնած մնալ ոտքերի վրա, և դուք անշուշտ կհավատաք, որ իմ առաջին սարսափը շթեթեացավ, երբ հնարավորություն ստացա ազատորեն զննել նրան:

— Իմ սիրելի ջահել լեդի,— բացականչեցի,— ոչ մի տեղ էլ ես չեմ գնա և ոչ մի բան էլ չեմ լսի, մինչև որ չհանեք ձեր վրայի ամբողջ հղածը և փոխարենը շոր շորեր չհագնեք: Եվ գուք, իհարկե, Գիմմերթըն այս գիշեր չեք գնա, այնպես որ հիմա միաք շունի կառք պատվիրել:

— Կգնամ անպայման,— ասաց նա,— կգնամ եթե ոչ կառքով, ապա ոտքով, բայց պատշաճորեն հագնվելուն դեմ

շեմ: Եվ... ա՛հ, հապա մի տեսեք, թե ինչպես է արյունը վզիցս հոսում: Կրակի ջերմությունից սաստիկ ցավ եմ զգում:

Նա թույլ շէր տալիս մոտենալ իրեն, պնդում էր, որ կատարեմ իր կարգադրությունները. և միայն այն ժամանակ, երբ կառապանին հրամայվեց պատրաստել կառքը և ազատիներից մեկը դրազվեց անհրաժեշտ շորերը դասավորելով ճամպրուկների մեջ, ևս նրանից թույլտվություն ստացա կապել վերքը և օգնել, որ շորերը փոխի:

— Հիմա, էլլեն,— ասաց նա, երբ ավարտվեց իմ անելիքը և ևս նստեցրի նրան բազկաթոռին բուխարու մոտ ու առաջը դրի մի բաժակ թեյ,— նստեք իմ դիմաց և մի կողմ դրեք հեգ Քեթրինի մանկանը: Ծս շեմ կարող տեսնել նրան: Մի կարծեք, որ եթե այդպես հիմար ձևով ներխուժեցի այստեղ, ուրևմն բողբոլվին շեմ տանջվում Քեթրինի համար: Ծս էլ եմ լաց եղել, և դառնորեն... այո, ես ավելի շատ պատճառներ ունեմ լաց լինելու, քան որևէ մեկը: Մենք իրարից բաժանվեցինք անհաշա՛ղ դուք հիշում եք այդ, և ես շեմ կարողանում ներել ինձ: Եվ, այնուամենայնիվ, ես շեմ ուզում կարևկցել Հիթքլիֆին՝ այդ բէրտ անասունին: Օհ, տվեք ինձ ակիշը: Սա այդ անասունի վերջին իրն է, որ մնացել է մոտս: Եվ նա մատնեմատից հանեց ոսկե մատանին ու շարտեց հատակին:— Կշարդեմ,— շարունակում էր միսիս Հիթքլիֆը, մանկական շարությամբ տրորելով այն:— Իսկ հետո կայրեմ,— ապա վերցրեց ջարդված մատանին և նետեց շիկացած ածուխների մեջ:— Եվ Լթե նրան հաջողվի վերադարձնել ինձ իր մոտ, այն ժամանակ թող նորը գնի: Էդգարին ջղայնացնելու համար նա դեռ կգա ինձ փնտրելու: Ծս շեմ համարձակվում մնալ այստեղ, վայ թե հանկարծ մի շար միտք ծագի նրա դիտում: Բացի այդ Լորայրս դեռ չի մեղմացել, մի՞թե մեղմացել է: Իսկ ևս շեմ գա նրանից օդնություն հայցելու և ոչ էլ ուզում եմ նրան նեղություն տալ: Միայն անհրաժեշտությունը ստիպեց ինձ ապաստան գտնել այստեղ: Ծս հաստատ գիտեի, որ շեմ հանդիպի եղբորս, այլապես կմնայի խոհանոցում, կվացվեի, կտաքանայի, կխնդրեի ձեզ, ինչ-որ պետք է բերել ինձ համար և նորից կհեռանայի մի որևէ տեղ, ուր ինձ չէր հասնի նզովյալը... այդ շար ոգու մարմնավորումը: Նա այնպե՛ս կատաղած էր: Եթե լուներ

ինձ... Ափսո՛ս, որ էրնշոուն ուժի մեջ զիջում է նրան. ես չէի փախչի, մինչև որ տեսնեի, թե ինչպես Հինդլին կխորտակեր նրան, եթե միայն ուժը պատեր...

— Դե, այդպես արագ մի խոսեք, միսս,— ընդհատեցի ես,— տեղից կշարժեք թաշկինակը, որով կապել եմ ձեր դեմքը, նորից արյուն կհոսի: Խմեք ձեր թեյը, հանգստացեք և դադարեք ծիծաղելուց: Ծիծաղն այս հարկի տակ ցավալիորեն անտեղի է, և այն էլ ձեր վիճակում:

— Անժխտելի ճշմարտություն,— պատասխանեց նա:— Տարեք այդ երեխային հեռու... Անդադար լաց է լինում... Գեթ մի ժամով տարեք նրան մի տեղ, որ նրան չլսեմ. ես այստեղ երկար չեմ մնալու:

Ես ղանգեցի և մանկանը հանձնեցի աղախնի խնամքին, ապա հարցրի եկվորին, թե ինչը նրան ստիպեց այսպիսի անվայել տեսքով հեռանալ Մուլեգին հողմերի դարավանդից և ուր է մտածում գնալ, եթե չի ուզում մնալ մեզ մոտ:

— Ես պետք է մնայի և կցանկանայի մնալ այստեղ,— պատասխանեց նա,— երկու պատճառով՝ բարոյապես նեցուկ հանդիսանալ էդգարին և խնամել մանկանը: Եվ մեկ էլ նրա համար, որ Ագարակատունը իմ իսկական տունն է, բայց, ասում եմ ձեզ, Հիթթլիֆը թո՛ւյլ չի տա: Դուք կարծում եք, իհարկե՞ր «հանդուրժի», որ ես առողջ և ուրախ լինեմ, կհանդուրժի՞, որ մենք ապրենք հանգիստ ու խաղաղ, չի՞ փորձի թունավորել մեր հանգիստը: Հիմա ես հաճույք ունեմ հաստատ իմանալու, որ նա լրջորեն զգվում է ինձանից, չի ուզում լսել իմ ձայնը կամ տեսնել ինձ: Ես նկատում եմ, որ երբ մտնում եմ սենյակ, որտեղ նա նստած է լինում, նրա դեմքը ակամայից ծռմուխում, ստանում է ատելություն արտահայտություն. դա մասամբ բխում է այն գիտակցությունից, որ ես լուրջ պատճառներ ունեմ նրա նկատմամբ տածել նույն զգացումը, մասամբ էլ վաղեմի հակակրանքից: Այն բավականին ուժեղ է և ինձ հաստատ հավատ է ներշնչում, որ Հիթթլիֆը չի փորձի ամբողջ Անգլիայում հետապնդել ինձ, եթե ես կարողանամ հնարք գտնել և ապահով փախչել. ահա թե ինչու ես պետք է բոլորովին հեռանամ: Իմ առաջին ցանկությունն էր, որ նա սպանի ինձ: Ավելի լավ է թող ինքն իրեն սպանի: Նա լիովին ոչնչացրեց իմ սերը, այնպես որ ես հիմա հանգիստ

եմ: Հիշում եմ, թե ինչպես էի նրան սիրում և աղոտ կերպով պատկերացնում եմ, որ կարող էի նորից սիրել, եթե... ոչ, ոչ: Եթե նույնիսկ խենթի պես սիրեր ինձ, նրա դիվային բնավորութունը իր գոյութունը զգացնել կտար մի որևէ ձևով: Քեթրինը սարսափելի այլասերված ճաշակ ուներ, եթե, Հիթքլիֆին լավ ճանաչելով հանդերձ, այդպես թանկ էր գնահատում նրան: Հրե՛շ: Թո՛ղ ջնջվի նա աշխարհի երեսից, թո՛ղ կորչի իմ հիշողութունից:

— Հանգիստ, հանգիստ, այնուամենայնիվ, նա մարդ է,— ասացի ես:— Եղեք ավելի գթասիրտ, նրանից ավելի վատերը կան:

— Նա մարդ չէ,— առարկեց Իզաբելլան,— նա արժանի չէ իմ կարեկցանքին: Ծս տվի նրան սիրտս, իսկ նա ճմլեց այն, հասցրեց մահվան դուռը և հետ շարտեց ինձ: Մարդիկ սրտով են զգում, էլլեն, և քանի որ նա ոչնչացրեց իմ սիրտը, ես չեմ կարող նրան համակրել, ոչ, թեկուզև աղերսներ ինձ հենց այս օրվանից մինչև իր մահվան օրը, և արյունոտ արցունքներ թափեր Քեթրինի համար: Ոչ, իսկապես չեմ կարող:— Եվ այստեղ հանկարծ Իզաբելլան սկսեց լաց լինել, բայց անմիջապես արտասուքները մաքրելով, վերստին սկսեց:

— Դուք հարցրիք, թե ի՞նչը, վերջ ի վերջո, ստիպեց ինձ փախչել տնից: Հարկադրված էի փախչել, որովհետև ինձ հաջողվեց բորբոքել ամուսնուս այնքան, որ նրա ցասումը վերածվեց շարամտության: Շիկացած ունելիով նյարդերը քաշելը պահանջում էր շատ ավելի սառնասրտություն, քան մի անգամ գլխին հարվածելը: Ծս նրան հասցրի այն բանին, որ նա մոռացավ իր դիվային զգուշութունը, որով պարծենում էր, և անցավ վայրագ կատաղության: Ծս հաճույք էի զգում նրա կատաղութունից: Իսկ վայրացնող հաճույքիս զգացումը իմ մեջ առաջացրեց ինքնապահպանման բնագդ, ես ձեռք բերեցի ազատություն, և եթե երբևէ ընկնեմ նրա ճանկը, նա վրեժ կլուծի հնձնից:

— Դուք գիտեք, որ երեկ միստր էրնշոուն պետք է ներկա լիներ թառման արարողությանը: Ի սեր այդ նպատակի նա նույնիսկ մինչև դիշեր զգաստ էր, զգաստ էր միանգամայն. խենթացած շմտավ անկողին առավոտյան ժամը վեցին և

կեսօրին հարբած շվիրկացավ: Նա, վերկացավ ընկճված հոգով և, նույնքան տրամադիր էր և կեղեցի գնալ, որքան և պարահանդես, նստեց բուխարու մոտ ու սկսեց բաժակներով կուլ տալ օղի կամ կոնյակ:

Հիթքլիֆը՝ հս սարսուռ եմ զգում, երբ տալիս եմ նրա անունը, անցյալ կիրակի օրվանից մինչև այս շաբաթ օրը տանը չէր երևում: Թե ո՞վ էր նրան կերակրում՝ հրեշտակները, թե սանդարամետի իր ազգակիցները, չեմ կարող ասել, բայց մի ամբողջ շաբաթ ոչ մի անգամ մեկ հետ ճաշի շնասեց: Տուն էր գալիս ուղիղ լուսաբացին, բարձրանում էր, փակվում իր սենյակում, ասես որևէ մեկը երազում տենչում էր նրա ընկերակցությունը: Այնտեղ սենյակ նստում, աղոթում էր որպիս բարեպաշտ մի մարդ. միայն աստվածություն, որին աղերսում, կանչում էր, անզգա աճյուն ու մոխիր. իսկ ևրդ դիմում էր աստծուն, տարօրինակ ձևով նրա անունը շփոթում էր իր հոր սև անվան հետ: Այդ թանկագին աղոթքներն ավարտելուց հետո, իսկ դրանք շարունակվում էին այնքան ժամանակ, մինչև որ ձայնը խոպոտում, խեղդվում էր, նա նորից էր գնում, դնում էր ուղիղ Ազարակասուն: Ապշում եմ, թե ինչու էդգարը շուղարկեց ոստիկանի հետևից և նրան բանտարկել շտվեց: Իսկ ես, ինչքան էլ վշտացած լինեի Քեթրինի մահվան պատճառով, չէի կարող շուրախանալ, ասես ստորացուցիչ ճնշումից հետո փրկություն այդ պահը ինձ համար տոն էր:

Ես բավականաչափ ուժերս հավաքեցի, որպեսզի առանց արցունքների լսեմ Ջողեֆի մշտական քարոզները և առաջվա պես վախեցած գողի նման ման գամ տան մեջ: Չկարժեք, թե Ջողեֆն ինչ էլ որ ասի, կարող է ինձ լացացնել. բայց նա և Հերթընը զարշելի ընկերակիցներ են: Ես ավելի շուտ գերադասում եմ նստել Հինդլիի հետ և լսել նրա սարսափելի խոսակցությունները, քան «փոքր տանտիրոջ» և նրա հավատարիմ հովանավորի՝ այդ զազբելի ծերուկի հետ:

Երբ Հիթքլիֆը տ ինն է լինում, ես հաճախ ստեպված եմ լինում գնալ նրանց մոտ խոհանոց կամ էլ սոված նստ լի մնալ խոնավ, անբնակելի սենյակներում, իսկ երբ նա յայնչի լինում, ինչպիս եղավ այս ամբողջ շաբաթը, ես ինձ համար տան մի անկյունում, կրակի մոտ, դնում եմ սեղան,

բազկաթոռ և ուշադրութիւն շեմ դարձնում, թե ինչով է գրազված լինում միստր էրնշոուն. նա շի խանդարում, որ ես դասավորեմ ինչպես ինքս եմ ուզում: Նա հիմա ավելի հանգիստ է, քան կար, եթե միայն ոչ ոք նրան շի գայրացնում: Զոզեֆը պնդում է, որ տանտերը լիովին փոխվել է, որ ասաված շարժել է նրա սիրտը, ասես կրակով մաքրազատված լինի: Ես ինչ-որ շեմ նկատում նրա մեջ այդպիսի բարեփոխութեան նշաններ, բայց դա իմ գործը չէ:

Երեկ երեկոյան նստեցի իմ անկյունում և երկար, համարյա մինչև կես գիշեր, հին գրքեր էի կարդում: Վերնահարկ շեմ գնում, տխուր է այնտեղ: Գրսում ձյունախառն փոթորիկ է, մտքերս շարունակ վերադառնում են հանգստարանին՝ թարմ գերեզմանին: Հենց որ աչքս հեռացնում եմ էջից, իմ առաջ իսկույն պատկերանում է այդ տխուր տեսարանը:

Հինգլին նստել էր իմ դիմաց, գլուխը ձևաքին հենած, գուցեև մտածում էր նույն բանի մասին: Գիտակցութիւնը կորցնելու աստիճան հարբելուց հետո նա դադարեց խմելուց և երկու-երեք ժամ, առանց տեղից շարժվելու, լուռ մնաց: Տանը ոչ մի ձայն չէր լսվում. դրսում ոռնում էր քամին, որը երբեմն ցնցում էր լուսամուտի ապակիները, և կամ թույլ ճթճթում էին ածուխները, և շխկում էր ունելին, երբ ժամանակ առ ժամանակ կտրում էի մոմի երկար այրուքը: Հերթընն ու Զոզեֆը երևի խոր քնած էին անկողնում: Շատ ու շատ տխուր էր, և ես կարդալիս հառաչում էի, որովհետև թվում էր, թե ամեն տեսակ ուրախութիւն վերացել է աշխարհից և էլ երբեք հետ չի գա:

Թախծալից լուռից: Նք վերջապես խախտեց խոհանոցի փականի շրխկոցը՝ Հիթթիլիքը սովորականից ավելի շուտ վերադարձավ պահակաթոսից, երևի անակնկալ սկսված փոթորկի պատճառով:

Մուտքի դռան փակույնը դճված էր, և մենք լսեցինք, թե ինչպես նա ներս մտնելու համար շրջան կատարեց, մատեցավ մի այլ մուտքի: Ես վեր կացա. շուրթերիցս դուրս թուան իմ զգացումներն արտահայտող անդուսպ խոսքեր, որոնք անթարթ հայացքը դռանը հառած Հինգլիին ստիպեցին շուտ գալ և նայել ինձ:

— Ես հինգ բույս նրան դռան շեմից հեռու կպահեմ,— բացականշեց նա:— Հո չե՞ք առարկում:

— Ոչ, նրան կարող եք պահել այնտեղ թեկուզև ամբողջ փշեր,— պատասխանեցի ևս:— Խնդրեմ: Բանալին դրե՞ք կողպեքի մեջ և սողնակն էլ գցեք:

էրնշուուն կատարեց այդ, նախքան նրա կենվորը կմտենար գլխավոր մուտքին: Նա վերադարձավ և բազկաթոռը մյուս կողմից մոտեցրեց իմ սեղանին, նստեց, հենվելով սեղանին, իր մեջ բոցավառված այրող ատելության համակրանքը փնտրելով իմ աչքերում, բայց քանի որ նա նայում, զգում էր մարդասպանի պես, ճշտորեն չկարողացավ դանել այն, ինչ փնտրում էր. սակայն իմ դեմքի արտահայտությունն էլ բավական էր, որ ոգևորեր նրան, և նա սկսեց խոսել.

— Դուք և ես,— ասաց նա,— մեր մեծ հաշիվները պետք է փակենք այն մարդու հետ, որ կանգնած է այնտեղ: Եթե մեղանից մեկն ու մեկը իրեն երկշտ ցույց չտա, մենք երկուսով կարող ենք ստիպել նրան, որ պարտքը վճարի: Դուք հո ձեր եղբոր նման թուլակամ չե՞ք: Համաձա՞յն եք համբերություն մը տանել մինչև վերջ, և ոչ մի անգամ չփորձել ստիպելու նրան, որ փոխհատուցի:

— Արդեն հոգնել եմ հանդուրժելուց,— առարկեցի ես:— Ուրախ կլինեի պահանջել նրանից փոխհատուցում, բայց այնպես, որ ինքս շտուժեմ, իսկ դավաճանությունն ու բռնությունը երկսայր նիզակներ են, որ աչելի խորն են խոցում դրանք գործադրողին, քան նրա թշնամիներին:

— Դավաճանությունն ու բռնությունը՝ դավաճանության ու բռնության համար իրավացի փոխհատուցում են,— դռաց Հինդլին:— Միսիս Հիթթլիֆ, ևս ոչինչ չեմ խնդրում. միայն հանգիստ նստեք և լռեք: Հիմա ասեք՝ դուք դա կարո՞ղ եք: Հավատացած եմ, որ դուք ինձնից ոչ պակաս հաճույքով կդիտեք, թե ինչպես է այդ սատանան իր շունչը փչում. նա կսպանի ձեզ, եթե դուք խորամանկությամբ չգերազանցեք իրեն, իսկ ինձ՝ կխորտակի: Թո՛ղ անիծվի այդ դիվային սրիկան: Թակում է դուռը, ասես նա է այստեղ տանտերը: Խոստացեք, որ կզսպեք ձեզ և, մինչև ժամ սցույցի խփելը, մեկից երեք բույս պակաս դուք կդառնաք ազատ կին:

Նա ծոցից հանեց զենքը, որը ես նկարագրեցի ձեզ

ուղղված իմ նամակում, և ուզում էր մոմը հանգցնել. բայց
ես մի կողմ քաշեցի մոմը և բռնեցի նրա ձեռքը:

— Ես չեմ լռի,— ասացի:— Դուք շպետք է դիպչեք
ներան... դուռը մի բացեք, թող փակ մնա:

— Ո՛չ: Ես որոշում ընդունեցի և, աստված վկա, ի կա-
տար կածեմ այն,— ճշաց այդ անխոհեմ մարդը:— Ես ձեզ
լավություն կանեմ հակառակ ձեր կամքին և կվերականգնեմ
Հերթընի իրավունքները: Դուք նույնիսկ ստիպված չեք լինի
գուլի կոտրել, թե ինչպես ինձ թաքցնեք: Քեթրինը մեռավ.
կենդանի մնացածներից ոչ մեկը չի վշտանա և ամոթահար
չի լինի ինձ համար նույնիսկ, եթե այս բոպեին կոկորդս
կտրեմ... Ժամանակն է, որ վերջացնենք ամեն ինչ:

Ես նույն հաջողությամբ կարող էի դիմադրել արջին կամ
խելագարին համոզել: Ինձ մնում էր լոկ մի բան՝ վազելով
մոտենալ լուսամուտին և նշված զոհին զգուշացնել իրեն
սպասող ճակատագրից:

— Ավելի լավ է, որ դուք ձեզ համար գիշերելու մի այլ
տեղ ճարեք,— գոչեցի ես հաղթական տոնով:— Միտար
էրնշտուն մտադիր է սպանել ձեզ, եթե համառորեն փորձեք
ներս մտնել:

— Ավելի լավ է, որ դուռը բաց անես, դու...— պատաս-
խանեց նա՝ դիմելով ինձ ինչ-որ մի նրբագեղ արտահայտու-
թյամբ, որը չեմ ուզում կրկնել:

— Ես չեմ խառնվի այդ գործին,— նորից առարկեցի
ես:-- Ներս մտեք և թող ձեզ սպանեն, եթե ուզում եք: Ես
իմ պարտքը կատարեցի:

Այդ խոսքերով ծածկեցի լուսամուտը և վերադարձա տեղս՝
օջախի մոտ. կեղտոտությունների շատ քիչ պաշար ունեի, որ-
պեսզի անհանգստություն: Գուցե ցույց տայի նրան սպառնացող
վտանգի համար:

էրնշտուն սկսեց սաստիկ հայհոյել ինձ, պնդելով, որ ես
տակավին սիրում եմ այդ սրիկային, և փոքրագույնի հա-
մար ինձ կոչեց բոլոր ռեսակի վիրավորական անուններով:
Ծսկ ես հոգուս խորքում (և խիղճս երբեք ինձ չհանդիմանեց)
մտածում էի, թե ինչ բարիք արած կլինի Հիթլերի, եթե
ազատի նրան տառապանքից, և թե ինչ բարի գործ կատարած
կլինի ինձ համար Հինդլին, եթե Հիթլերին ուղարկի իր իս-

կական բնակավայրը: Մինչ ես նստած փայփայում էի այդ մտքերը, իմ հետևում ղնդոցով հատակին թափվեցին Հիթքլիֆի ջարդած ապակիները, և նրա սև դեմքը հուսահատ տեսքով ներս սողաց լուսամուտի բացվածքից: Նկնուկապս... լուսամուտը թույլ չէր տալիս, որ նրա ուսերը ներս մտնեն, և ես ժպտում էի ուրախանալով իմ երևակայական անվտանգության համար: Հիթքլիֆի մազերն ու հագուստը ձյունից սպիտակել էին, և ցրտից ու կատաղությունից սուր, մարդակեր ատամները փայլին էին տալիս խավարի մեջ:

— Իզարեյլա, ներս թող ինձ, այլապես կզղջաս,— սեպերը ցույց տալով գոռաց նա, ինչպես Ջոզեֆն է ասում:

— Ես չեմ կտրուղ սպանութուն գործել,— պատասխանեցի ես,— միսար Հինդլին դանակով և լիցքավորված ատրճանակով պահակ է կանգնած:

— Ներս թող խոհանոցի դռնից,— ասաց նա:

— Հինդլին ինձնից ավելի շուտ այնտեղ կլինի,— պատասխանեցի ես,— ինչ ողորմելի սեր է ձեր սերը, եթե դուք չեք կարողանում դիմանալ ձյան տարափին: Քանի դեռ ամառային լուսնյակը լուսավորում էր, դուք մեր քունը չէիք խանգարում, բայց հենց որ նորից փչեց ձմեռային քամին, վազում եք հարկի տակ: Եթե ձեր տեղը լինեի, Հիթքլիֆ, ես կգնայի կպսոկեի Քեթրինի գերեզմանի վրա և կմեռնեի հավատարիմ շան պես... Աշխարհը, անկասկած, հիմա արժանի չէ, որ ապրեք այնտեղ, այնպես չէ՞: Դուք հաստատապես ինձ ներշնչել եք, որ Քեթրինը ձեր կյանքի միակ ուրախությունն էր. ես չեմ կարող պատկերացնել, թե դուք ինչպես եք տանելու այդ կորուստը:

— Նա այնտեղ է, չէ՞,— գոռաց իմ տերը, նետվելով դեպի ջարդված լուսամուտի բացվածքը:— Եթե կարողանամ ձեռքս դուրս հանել, ես կսպանեմ նրան:

— Վախենում եմ, էլլեն, որ դու ինձ իսկապես շարագործ համարես, բայց դու ամեն ինչ չգիտես, ուրեմն մի դատիր. ոչ մի վնով ես չէի դրդի կամ օգնի մահափորձ կատարելու որևէ մեկի, նույնիսկ Նրա կյանքի դեմ, բայց ես չէի կարող շնանկանալ նրա մահը. դրա համար սոսկալի հիասթափված, սարսափելի ջղային վիճակում էի իմ խայթիչ ճառի պատ-

ճառով, և որ Հիթթրիֆը ուղիղ նետվեց էրնշոուի ատրճանակի վրա և խլեց այն նրա պինդ բռնած ձեռքից:

Կրակոց լսվեց. դուրս ցցված դանակը խրվեց տիրոջ դաստակը: Հիթթրիֆը ուժգին թափով քաշեց հանեց այն, կտրելով տիրոջ մաշկն ու միսը, և արյունոտ զենքը գրպանը դրեց: Ապա վերցրեց քարը, ջարդեց երկու լուսամուտի մեջ եղած պատնեշը և ներս ցատկեց սենյակ: Նրա հակառակորդը, ուժեղ ցավից ու զարկերակից կամ լայն երակից դուրս ցայտող արյան կորուստից, անզգա վայր ընկավ:

Իսկ շարագործը նրան աքացի էր տալիս, ոտնահարում, գլուխը կրկին ու կրկին խփում սալաքարին, միաժամանակ մի ձեռքով ինձ բռնած պահում էր, որ Ջոզեֆին չկանչեմ:

Նա ցուցաբերեց գերմարդկային ինքնահրաժարում՝ զրսպելով իրեն, որ շսպանի Հինդլիին. վերջապես շնչահեղձ լինելով, դադարեց և անկենդան թվացող մարմինը քարշ տալով ընկավ նստարանին:

Այդտեղ նա միստր էրնշոուի պիջակի թևքից պատռեց մի կտոր և գազանային կոսյուտի վրա կապեց նրա վերքը. այդ անելիս, նա թքում, հայհոյում էր նույնպիսի եռանդով, որպիսի եռանդով աքացի էր տալիս մինչ այդ:

Իսկ ես հենց որ ազատվեցի նրանցից, առանց ժամանակ կորցնելու դտա ծերուկին, որը մի կերպ հասկացավ իմ հապճեպ պատասաժի իմաստը և շնչակտուր լինելով նետվեց ներքև, որովհետև թափով իջնում էր աստիճանները մեկընդմեջ տալով:

— Հիմա ի՞նչ անենք, ի՞նչ պետք է անել:

— Ահա թե ինչ,— որոււաց Հիթթրիֆը, քո տերը խելագարվել է, եթե մի ամիս էլ կենդանի մնա, ես նրան զժանոց կուղարկեմ: Գրողը տանի, ինչո՞ւ դուռը փակեցիր իմ առջև, դու անատամ շուն: Ի դուր մի փնթփնթա ու մի մրթմրթա: Ապա մոտ եկ, ես մտադիր չեմ նրան խնամելու: Լվա այս կեղտը և զգուշացիր, որ մոմից մի կայծ անգամ չընկնի վրան՝ այստեղ օդին շատ շատ է:

— Գուք ուրեմն փորձում էիք սպանել նրան,— գոչեց Ջոզեֆը՝ հայացքն ու ձեռքերը յարսափից վեր բարձրացնելով: Ես այդպիսի բան երբեք չեմ տեսել, թող աստված...

Հիթթրիֆը նրան հրեց դեպի Հինդլիի ծնկի վրա գոյացած

արյան լճակը, սրբիչը նետեց նրան, բայց արյունը սրբելու փոխարեն, նա ձեռքերը միացրեց և սկսեց աղոթել այնպիսի անսովոր ոճով, որ ես սկսեցի ծիծաղել: Ծս հոգեկան այնպիսի վիճակում էի, երբ ամեն մի դատարկ բան մարդուն վրդովմունք է պատճառում. իրոք, ես ինձ պահում էի այնպես անխոհեմ, ինչպես իրեն պահում է կախադանի տակ կանգնած ուճադործը:

— Է՛, քիչ մնաց մոռանայի ձեզ,— ասաց բռնակալը:— Դո՛ւք պետք է անեք դա: Մոտեցեք նրա ծնկին: Դուք նրա հետ միասին դավադրություն էիք կազմել իմ հե՛մ, այնպես չէ՞, օձի ծնունդ. դի, սրբեք, այդ աշխատանքը հենց ձեզ համար հարմար է:

Նա այնպես ցնցեց ինձ, որ ատամներս շխկշխկացին և շոքեցրեց ինձ Զոզեֆի կողքին, որը տոկունությունը ավարտեց իր աղոթքը, ապա վերկացավ, երդվելով, որ անմիջապես կմեկնի Ազարակատուն: Միստր Լինթընը դատավոր է. թեկուզև նրա հիսուն կինն էլ մեռած լինեն, նա պետք է քրնություն անցկացնի:

Ծերուկն այնպես համառորեն էր պնդում իրենը, որ Հիթքլիֆը նպատակահարմար դտավ եզրակացությունը կատարվածի մասին լսել իմ շուրթերից. շարությունից ծանր շնչելով կանգնած էր իմ դիմաց, որովհետև ես սիրով չէի պատասխանում իր հարցերին:

Շատ ջանք գործադրվեց համոզելու համար ծերուկին, որ հրահրողը Հիթքլիֆը չէր, մանավանդ, որ նա հազիվ էր ինձնից պատասխաններ պոկում: Սակայն միստր էրնշտուն շուտով համոզեց նրանց, որ ինքը տակավին կենդանի է. Զոզեֆը շտապեց նրա մեջ լցնել սպիրտի մեծ դոզա. և այդ օգնությունը միանգամից վերադարձրեց դժբախտի գիտակցությունն ու շարժելու ունակությունը:

Հիթքլիֆը, գիտակցելով, որ էրնշտուն անաեղյակ է սյն վերարերմունքից, որին ենթարկվեց, քանի դեռ ուշաթսփ ընկած պառկած էր, հայտարարեց, որ նա հարբե՛լ, ուշքը կորցրել է. և ասաց, որ ինքը անտեսում է նրա կոպիտ վարքը, բայց խորհուրդ է տալիս պառկել քնել: Հուրախություն ինձ, այդ խելացի խորհուրդը տալուց հետո նա թողեց մեղ,

իսկ Հինգլին փուլեց օջախի առաջ: Ծա անցա իմ սենյակը, զարմանալով, որ այդպես հեշտ էի դուրս պրծել:

Այսօր առավոտյան, երբ կեսօրին մոտ իջա ներքև, միստր էրնշոուն սարսափելի հիվանդ վիճակում նստել էր կրակի առաջ. նրա շար հանճարը, համարյա նույնքան ուժից ընկած ու մեռելի պես դժգույն, հակվել էր բուխարու վրա: Ոչ ոք չէր ուզում ճաշիկ և, ես, երբ ամեն ինչ սեղանի վրա արդեն սառել էր, սկսեցի միայնակ ճաշել:

Ոչինչ չէր խանգարում ինձ ախորժակով ուտել. և բավականություն ու գերազանցության զգացումով մերթ ընդ մերթ նայում էի ճաշիս անխոս վկաներին, հաճելիորեն զգում էի, որ իմ խիղճը հանգիստ է:

Ճաշելուց հետո ես ինձ թույլ տվեցի մի անսովոր ազատություն՝ քաշվեցի կրակի մոտ, պտտվեցի միստր էրնշոուի բազկաթոռի շուրջը և անկյունում ծնկի եկա նրա կողքին:

Հիթքլիֆը չէր նայում իմ կողմը և ես աչքի տակով նայում էի նրան, համարձակորեն դիտում նրա դեմքը, որն ասես քարացել էր: Նրա ճակատին, որ մի ժամանակ ինձ թվում էր այնպես առնական, իսկ այժմ սատանայական, խիստ ստվեր էր ընկած. անքնությունից նրա հիպնոսացնող աչքերը համարյա խամրել էին, գուցե արցունքներից, որովհետև թերթերունքները թաց էին, շուրթերը, որ զուրկ էին վայրագ ծաղրից, դրոշմած էին անասելի տխրության արտահայտությամբ: Եթե դա մի այլ անձնավորություն լիներ, գլուխ կխոնարհելի այդպիսի վշտի առաջ: Բայց տվյալ դեպքում ես բավարարված էի, թեև ստորություն է վիրավորել ընկած թշնամուն, ես չէի կարող այդ հնարավորությունը բաց թողնել և չխայթել նրան. միայն նրա թուլության պահին ես հաճույքով կարող էի նրա շարունակյալ շարունակյալ փոխհատուցել:

— Թո՛ւհ, օրհորդ, — ընդհասեցի ես: — Կարելի է կարծել, որ դուք ձեր կյանքում երբևէ ավետարան չեք թերթել: Եթե աստված հեղում է ձեր թշնամիներին, դա, անկասկած, պետք է որ բավարարի ձեզ: Եվ ստորություն է, և մեծամտություն, երբ դուք ձեր շարժարանքները ավելացնում եք նրա ուղարկած տանջանքներին:

— Ընդհանրապես ես էլ նույն կարծիքին եմ, էլլեն,— շարունակում էր Իզաբելլան,— բայց Հիթքլիֆին բաժին ընկած ի՞նչ շարժարանք կարող է ինձ հաճույք պատճառել, եթե իմ մատը դրա մեջ խառը չէ։ Ես կուզենայի, որ նա ավելի էլի տանջվեր, միայն թե նրա տառապանքների պատճառը ես լինեի, և կկամենայի, որ նա իմանար այդ։ Օ՛հ, ես մեծ հաշիվ ունեմ նրա հետ։ Լոկ մի պայմանով կարող եմ հույս ունենալ, որ կներեմ այդ մարդուն։ Կներեմ նրան, եթե կարողանամ փոխհատուցել ակն ընդ ական և ատամն ընդ ատաման... յուրաքանչյուր հասցրած ցավին՝ ցավ պատճառելով։ Նա առաջինը վիրավորեց ինձ և թող առաջինն էլ ներում խնդրի։ Իսկ այն ժամանակ... այն ժամանակ, ինչո՞ւ չէ, էլլեն, կարող է պատահել, որ մեծահոգուծյուն ցուցաբերեմ։ Բայց անհնարին է մտածել, որ ես երբևիցե վրեժ կլուծեմ, ուրեմն, շեմ կարող ներել նրան։ Հինդլին խմելու ջուր խնդրեց, և ես նրան մի բաժակ ջուր տվեցի ու հարցրի, թե ինչպես է զգում իրեն։

— Ես այնքան էլ վատ չեմ, ինչպես կցանկանայի լինել,— պատասխանեց նա։— Բայց հենց ձեռքս պարզում եմ, մարմնիս յուրաքանչյուր մասն այնպես է ցավում, ասես, կովիլ եմ դեերի մի ամբողջ լեզիոնի դեմ։

— Այո, դարմանալի չէ,— ավելացրի ես։— Քեթրինը հաճախ պարծենում էր, որ ինքը ձեզ պատնեշում է մարմնային վնասվածքներից, դրանով նա ուզում էր ասել, որ որոշ անձինք նրան վիրավորելու վախից չեն համարձակվի ձեզ ձեռք տալ։ Լավ է, որ մարդիկ իրականում գերեզմանից դուրս չեն դալիս, այլապես անոյսով դիշեր տիկինը ստիպված կլիներ ականատես լինել մի նողկալի տեսարանի։ Ձեզ վրա կապույտ բծեր չկա՞ն։ Ձեր կուրծքն ու ուսերը հո վնասված չեն։

— Չեմ կարող ասել,— պատասխանեց նա։— Բայց ինչո՞ւ եք հարցնում։ Մի՞թե նա համարձակվեց հարվածել ինձ, երբ ես վայր ընկա։

— Նա ձեզ ոտքով հարվածում, արորում էր, ձեր գլուխը խփում էր հատակին,— շնչոցով ասացի ես։— Փրփուրը բերանին ուզում էր ատամներով կարատել ձեզ, որովհետև նա մարդ է սոսկ կիսով չափ, ոչ ավելին։

Միստր էրնշոուն, ինձ նման սկսեց ցածից հետևել մեր

ընդհանուր թշնամու դեմքին, որը այնքան էր խորասուզված իր տառապանքների մեջ, որ թվում էր, թե իր շուրջը ոչինչ չէր նկատում. որքան ավելի երկար էր կանգնած մնում, այնքան ավելի պարզ էին դիմագծերը մատնում իր մտքերի սևությունը:

Ո՞ր, եթե միայն աստված ուժ տար ինձ խեղդել նրան իմ վերջին հոգեվարքի պահին, ես հաճույքով դժոխք կգնայի,— ծանր տնքոցով հառաչեց անհանգիստ Հինգլին, կծկվեց, ճիգ թափեց վեր կենալու և հուսահատված նորից ընկավ բազկաթոռին, համոզվելով, որ ի վիճակի չէ պայքարել:

— Ոչ, բավական է, որ նա սպանեց ձեր քրոջը,— բարձրաձայն ասացի ես:— Ազարակատանը բոլորը գիտեն, որ նա հիմա կենդանի կլիներ, եթե շլիներ Հիթքլիֆը: Գերադասելի է, որ նա ատի, քան սիրի քեզ: Երբ հիշում եմ, թե մենք ինչքա՞ն հրջանիկ էինք, ինչքա՞ն երջանիկ էր Քեթրինը մինչև նրա գալը, ես պատրաստ եմ անիծել այդ օրը:

Ամենայն հավանականությունով, Հիթքլիֆն ավելի շատ ուշադրություն դարձրեց ասածի մեջ հղած ճշմարտության, քան խոսողի ոգևորության վրա: Ես տեսա, որ նրա ուշադրությունը արթնացավ, որովհետև աչքերից սկսեցին արցունքներ կաթկթել մոխրի վրա և շնչասպառ տնքոցներով հազիվ էր շնչում:

Ուղիղ նայեցի նրա դեմքին և արհամարհանքով ծիծաղեցի: Դժոխքի մթազնած լուսամուտները մի պահ բռնկվեցին և ուղղվեցին ինձ վրա, սակայն սատանան, որ սովորականի պես նայում էր դրանց միջից, նայում էր մշուշով ու առատ անձրևից ողողված այնքան հեռվից, որ ես չվախեցա և համարձակվեցի մի անգամ ևս բարձրաձայն ծիծաղել:

— Վեր կաց և կորիր իմ աչքից,— ասաց սգավորը:

Ես հասկացա, որ այդ խոսքերը արտասանեց նա, թեև նրա ձայնը հազիվ կարելի էր տարբերել:

— Ներեցեք,— ասացի ես,— բայց ես էլ էի սիրում Քեթրինին. նրա հղբայրը կարիք ունի խնամքի, որը ես, ի սերքրոջը, չեմ մերժի: Այժմ, երբ նա մեռած է, ես նրան տեսնում եմ Հինգլիի մեջ՝ Հինգլին ունի ճիշտ նույն աչքերը, թեև դուք փորձել եք հանել դրանք, սևից դարձնել կարմիր և...

— Վերկաց, ողորմելի ապուշ, քանի դեռ մահացու հարված չեմ հասցրել քեզ,— գոռաց նա և կատարեց մի շարժում, որն ինձ ստիպեց վերկենալ:

— Բայց,— շարունակում էի ես, պատրաստվելով փախչել,— եթե խեղճ Քեթրինը ձեզ վստահեր, ընդուներ ծիծաղելի, արգահատելի ու ստորացուցիչ միսիս Հիթքլիֆ կոչումը, նա էլ շուտով կներկայացնէր նույն պատկերը: Նա լռելյայն չէր հանդուրժի ձեր գարշելի արարքները, բացահայտորեն կարտահայտեր իր ատելությունն ու զղվանքը:

Բազմոցի թիկնակն ու միստր էրնշոուի մարմինը գտնուվում էին իմ և Հիթքլիֆի արանքում. այնպես, որ ինձ հասնելու փորձ կատարելու փոխարեն նա սեղանի վրայից վերցրեց ճաշի դանակը և շարտեց իմ գլխին: Այն խրվեց ականջիս տակ և ընդհատեց իմ ասելիք նախադասությունը, բայց ես դանակը դուրս քաշեցի և ցատկեցի դռան կողմը, նրա վրա նետեցի մեկ ուրիշ դանակ, որը, կարծեմ, նրան մի փոքր ավելի խոր վիրավորեց, քան նրա դանակը՝ ինձ:

Ես հասցրի տեսնել, թե ինչպես նա կատաղած նետվեց առաջ, բայց էրնշոուն կասեցրեց նրան. նրանք կպան իրար, երկուսն էլ ընկան հատակին, օջախի առաջ:

Խոհանոցի միջով փախչելիս, ճշարով կանչեցի Ջոզեֆին, որ շտապի իր տիրոջ մոտ, վայր զյեցի Հերթընին, որը, դռան մեջ կանգնած, աթոռի մեջքին ինչ-որ խաղալիքներ էր կախում: Հոգեպես երջանիկ զգալով, դուրս նետվեցի քավարանից. ցատկոտում, վաղում, սլանում էի զառիթափ ճանապարհով դեպի ցած, ասյա դուրս գալով ճանապարհի ոլորաններից, գլորվելով մորուտի ափերով, ճահիճների միջով, իրականում սրընթաց սլանում էի դեպի Ազադակատան փորոս լույսերը: Ես ավելի շուտ կհամաձայնեի ենթարկվել դժոխքի հավերժական տանջանքներին, քան թեկուզև մեկ գիշեր նորից անցկացնել Մոյեզին հողմերի դարավանդի հարկի տակ...

Իզոբելլան լռեց, մի բաժակ թեյ խմեց, սպա վերկացավ, հրամայեց, որ գլխարկը դնեմ, կապեմ իմ բերած մեծ շալը և, ականջ չդնելով իմ աղերսանքին՝ ևս մեկ ժամ մնալ մեղ մոտ, կանգնեց աթոռի վրա, համբուրեց էզգարի ու Քեթրինի նկարները, ապա հրաժեշտի պահին նաև ինձ, իջավ ցած,

կառք նստեց իր Ֆանիի ուղեկցութեամբ, որը իր տիրուհուն գտնելով, ճշգրտում էր անզուսպ ուրախությունից: Այդպես նա գնաց և այլևս երբեք նորից չերևաց այս կողմերում. բայց երբ ամեն ինչ մի փոքր ավելի խաղաղվեց, նրա և իմ տիրոջ մեջ հաստատվեց կանոնավոր նամակագրություն:

Միսիս Հիթքլիֆը, կարծեմ, հաստատվեց ինչ-որ տեղ հարավում, Լոնդոնից ոչ հեռու. փախուստից մի քանի ամիս հետո այդտեղ ծնվեց մի տղա: Նրան կնքեցին Լինթըն անունով և մայրը հենց սկզբից ևեթ հայտնեց, որ նա վատառողջ և կովարար էակ կլինի:

Միստր Հիթքլիֆը մի անգամ գյուղում հանդիպելով ինձ, հարցրեց, թե Իզաբելլան որտեղ է ապրում: Չասացի, նա նկատեց, որ դա կարևոր էլ չէ, միայն թե թող զգուշանա և չգա եղբոր մոտ. նա շի ապրի Լինթընի մոտ, իսկ եթե ինքուր, որպես օրինական ամուսին, կարիք զգա, կնոջը կվերցնի իր մոտ:

Թեպետես ես Հիթքլիֆին ոչինչ չասացի, բայց նա ուրիշ ծառաների միջոցով իմացավ, թե՛ կնոջ բնակավայրի, և թե՛ երեխայի գոյությունն մասին: Սակայն չէր անհանգստացնում Իզաբելլային. դրա համար վերջինս կարող էր շնորհակալ լինել իր նկատմամբ տաժաժ նրա դարշանքից:

Հաճախ հարցնում էր մանկան մասին, երբ տեսնում էր ինձ. և նրա անունը լսելուց հետո մռայլ տեսքով ծաղրում էր.

— Նրանք ուզում են, որ ես էլ ատեմ երեխային, այո՞:

— Կարծում եմ՝ նրանք չեն ուզում, որ դուք թեկուզև մի բան իմանաք նրա մասին,— պատասխանեցի ես:

— Բայց երեխան իմը կլինի,— ասաց Հիթքլիֆը,— երբ ուզեմ: Թող այդ բանը լավ իմանան:

Բարեբախտաբար, երեխայի մայրը ժամանակից ավելի շուտ սեռավ՝ Քեթրինի մահից տասներեք տարի հետո, ևրբ Լինթընը տասներկու տարեկանից մի փոքր ավել էր:

Իզաբելլայի անսպասելի այցից հետո, հաջորդ օրը, ես չկարողացա խոսել իմ տիրոջ հետ. նա խուսափում էր խոսակցությունից, և ոչ մի բան հնարավոր չէր քննարկել: Երբ կարողացա ստիպել նրան ինձ լսել, տեսա՝ նրան դուր եկավ, որ քույրը հեռացել էր ամուսնուց, որին ինքն ատում էր խոր

ատելությամբ. բայց դա հազիվ թե բնորոշ լիներ նրա բնավորությանը: Նրա զգվանքը այնքան խորն էր և ուժեղ, որ աշխատում էր շերևալ այն տեղերում, որտեղ կարող էր տեսնել Հիթլերիֆին կամ էլ լսել նրա մասին: Վիշտն ու այդ հոգսը միստր Լինթընին դարձրին իսկական ճգնավոր, նա հրաժարվեց դատավորի կոչումից, նույնիսկ դադարեց եկեղեցի դնալ, խուսափում էր գյուղ հաճախելու առիթներից. ապրում էր կատարյալ մեհնության մեջ իր պարտեզի և հողերի սահմաններում. միայն երբեմն դուրս էր գալիս մենակ թափառելու ցախիների դաշտերում կամ այցի գնալու կնոջ գերեզմանին՝ գլխավորապես երեկոյան ժամերին, կամ էլ վաղ առավոտյան, քանի դեռ ուրիշները դուրս չէին եկել ճեմելու:

Բայց միստր Լինթընը շափազանց բարի մարդ էր և երկար չէր կարող միայն իր վշտերով ապրել: Չէր աղերսում Քեթրինի հոգուն, որ հալածի իրեն: Ժամանակն իր հետ բերեց հաշտեցում և ավելի շատ քաղցր թախիժ, քան սովորական ուրախություն: Նա ջերմ ու քնքուշ սիրով հիշողության մեջ վերականգնանացրեց կնոջ հիշատակը, հույս փայփայելով, որ կհանդիպի նրան մի ավելի լավ աշխարհում, ուր չէր կասկածում, որ կինը գնացել է:

Նա ուներ և երկրային մխիթարություն: ու կապվածություն: Ինչպես ասացի, մի քանի օր կարծես չէր նկատում իր տկար փոխարինողին, որին թողել էր ննջեցյալը, բայց այդ սառնությունը ապրիլյան ձյան պես շուտ հալվեց, և մանուկը, որը դեռ չէր սովորել արտասանել առանձին բառեր և թույլ ոտիկներով քայլել, իր բռնակալական իշխանությունը հաստատեց հոր սրտի վրա:

Նրան տվեցին Քեթրին անունը, բայց հայրը նրան երբեք չրիվ անունով չէր կոչում, ինչպես և երբեք փաղաքշական անունով չէր կոչել առաջին Քեթրինին. հավանաբար այն պատճառով, որ Հիթլերիֆը սովորություն ուներ այդպես կոչելու Փոքրիկը միշտ էլ Քեթի էր, այդ անունը աղջկան տարբերում էր մորից և, սակայն, դա միաժամանակ նաև կապ էր հաստատում. հայրը նրա մեջ ավելի շուտ սիրում էր հանգուցյալ կնոջ աղջկան, քան իր սեփական միսն ու արյունը:

Ես երբեմն ասլշած համեմատում էի նրան Հինգլի էրընշուրի հետ և ոչ մի կերպ չէի կարողանում բավարար շափով

բացատրել, թե ինչու համանման հանգամանքներում նրանց վարքը այդքան տարբեր էր: Նրանք երկուսն էլ սիրող մասնակիցներ էին և կապված էին իրենց հրեխանների հետ. չէի հասկանում, թե ինչու նրանք չգնացին միևնույն՝ վատ թե լավ, ճանապարհով: Բայց, մտածում էի ես, Հինդլին էդգարից ակնհերևաբար ավելի համառ էր, սակայն, ցավալիորեն ավելի թույլ և ավելի վատ մարդ էր: Երբ նրա նավը բախվեց ստորջրյա ժայռին, կապիտանը լքեց իր պաշտոնը, նավակազմը շարաբախտ նավը փրկելու փոխարեն ըմբոստացավ և ընդվզեց: Լինթընը, ընդհակառակը, դրսևորեց հավատարիմ ու անձնվեր հոգու իսկական արիություն, ապավինեց աստծուն, և աստված սփոփեց նրան: Մեկը հույս էր փայփայում, մյուսը համակված էր հուսահատությունով. նրանք իրենք ընտրեցին իրենց սեփական ճակատագիրը և արդարություններ պետք է տանեին այն:

Բայց կարիք չկա, որ դուք լսեք իմ բարոյախոսական քարոզները, միտքը կոքվուդ: Ինք՝ արդ էլ կարող եք ինձնից ավելի լավ դատել այդ բոլոր երևույթների մասին. համենայն դեպս, ձեզ թվում է, թե կարող եք, իսկ դա նույն բանն է:

Էրնշտուի վախճանը եղավ այնպես, ինչպես ակնկալվում էր: Շուտով, իր քրոջ մահից գրեթե վեց ամիս հետո, նա մեռավ: Մենք Ազարակատանը ոչինչ չէինք լսել նրա հիվանդությունից մասին մեռնելուց առաջ: Այն ամենը, ինչ ես իմացա, ինձ հայտնի դարձավ միայն հետագայում, երբ գնացի, որ մասնակցեմ թաղման արարողություններին: Միտքը Քեննեթը եկավ իմ տիրոջը հաղորդելու պատահածի մասին:

— Դե, նեղի,— ասաց նա մի օր, ներս մտնելով մեր բակը այնպիսի վաղ ժամի, որ ես չէի կարող շանհանգստանալ վատ լուր լսելու նախազգացումից:— Այժմ մեր հերթն է միասին ողբալ հանգուցյալին: Ի՞նչ եք կարծում, ո՞վ հիմա հեռացավ մեզնից:

— Ո՞վ,— վախեցած հարցրի ես:

— Դե, գուշակեք,— պատասխանեց նա՝ իջնելով և սանձը զցելով դռան մոտ եղած կեռին:— Եվ բռնեք ձեր գոգնոցի փեշը. համոզված եմ, որ առանց դրան չի լինի:

— Ոչ միտքը Հիթլերի՞, իհարկե,— ճշացի ես:

— Ինչպես թե, մի՞թե, դուք լաց կլինեիք նրա համար,—
ասաց բժիշկը:

— Ո՛չ, Հիթթելիֆը պնդակազմ, ծաղկող առողջությամբ
երիտասարդ է, ես նրան հենց նոր տեսաւ: Իր թանկագին կնո-
ջից բաժանվելուց հետո նա արագորեն գիրանում է:

— Հապա էլ ո՞վ, միստր Քեննեթթ,— անհամբերությամբ
կրկնեցի ես:

— Հինգի էրնշտուն, Ձեր վաղեմի բարեկամ Հինգլին,—
պատասխանեց նա:— Եվ իմ շարաւեղու բարեկամը. վերջին
ժամանակներս նա շատ կատաղի էր դարձել: Եվ ահա: Ասում
էի չէ, որ ստիպված կլինեք արցունքներ սրբել... Բայց մի
վհատվեք, նա մեռավ առանց փոխելու իր բնավորութունը,
լորդի պես հարբած: Խեղճ մանչուկ. ես էլ եմ ցավում: Հին
ընկեր էր, շի կարելի չցավել հին ընկերոջ համար, թեև նա
ընդունակ էր ամենաաներևակայելի արարքների և հաճախ
իր նկատմամբ իրեն թույլ էր տալիս ստոր արարքներ: Նա
հազիվ քսանյոթ տարեկան լիներ. դա ձեր տարիքն է: Բայց
ո՞վ կասեր, որ դուք երկուսդ էլ ծնվել եք նույն տարում:

Խոստովանում եմ՝ այդ հարվածն ինձ ավելի ուժեղ ցնցեց,
քան միսիս Լինթընի մահը: Անցյալի հիշողութունները հա-
մակեցին ինձ, նստեցի առմուտքին և սկսեցի արտասվել,
ասես նա իմ արյունակից ազգականը լիներ, նույնիսկ խընդ-
րեցի միստր Քեննեթթին մի ծառա ուղարկել, որ այդ լուրը
հաղորդի տիրոջս:

Շարունակ մտածում էի, թե արդյո՞ք Հինգլի էրնշտուն իր
մահով մեռավ: Ինչ էլ որ անում էի, այդ միտքը գլխիցս
դուրս չէր գալիս. այն համառորեն այնպես էր տանջում ինձ,
որ որոշեցի թույլտվութուն վերցնել և գնալ Մուլիգին հող-
մերթի դարավանդ, որպեսզի օգնեմ նրանց, ովքեր պատրաստ-
վում էին իրենց վերջին պարտքը կատարել հանգուցյալի
նկատմամբ: Միստր Լինթընը չէր կամենում ինձ բաց թող-
նել, բայց ես աղերսում, պերճախոս կերպով նկարագրում էի
այն անօգնական դրությունը, որի մեջ ընկել էր նա, ասացի,
որ իմ նախկին տերն ու կաթնեղբայրը իմ ծառայութունների
նկատմամբ ունի նույնքան իրավունք, որքան և նորը: Բացի
այդ, հիշեցրի, որ փոքրիկ Հերթընը, իր հանգուցյալ կնոջ
եղբորորդին է, և քանի որ տղան ավելի մերձավոր ազգական

չունի, ապա միտար կինթընը երեխայի խնամքը պետք է իր վրա վերցնի. նա պարտավոր է իմանալ, թե կալվածքը ում է կտակված և աներձազը ինչպես է այն կարգավորել:

Իմ տերն այն ժամանակ ի վիճակի չէր զբաղվելու նման գործերով, բայց հանձնարարեց ինձ խոսել իր փաստաբանի հետ, և ի վերջո, թույլ տվեց, որ գնամ: Նրա փաստաբանը վարում էր նաև էրնշտուի գործերը: Գնացի գյուղ և փաստաբանին խնդրեցի, որ ուղեկցի ինձ: Նա զլուխը տարուրերեց և խորհուրդ տվեց Հիթքլիֆին հանգիստ թողնել. հաստատեց, որ Հերթընը, եթե ուզում եմ ճշմարտությունն իմանալ, կմնա որպես մուրացկան:

— Նրա հայրը պարտքերի մեջ խրված մեռավ,— ասաց նա,— ամբողջ կալվածքը գրավ է դրված, և միակ բանը, որ կարելի է անել նրա օրինական ժառանգի համար՝ պահպանել նրա համար հնարավորություն, կարեկցություն արթնացնել վարկատուի սրտում, որ նա ավելի ներողամիտ լինի ժառանգորդի հանդեպ:

Դարավանդ ժամանելուց հետո ես բացատրեցի, որ եկել եմ հետևելու, որպեսզի ամեն ինչ կատարվի պատշաճ ձևով. իմ գալը Զոզեֆին, որ խիստ վշտացած էր, ուրախացրեց: Իսկ միտար Հիթքլիֆն ասաց, որ իմ գալը ոչ մի միտք չուներ, բայց եթե ուզում եմ, կարող եմ մնալ և նախապատրաստել հուղարկավորությունը:

— Ավելի ճիշտ կլիներ,— նկատեց նա,— այդ հիմարի մարմինը հողին հանձնել ճանապարհների խաչմերուկում, առանց որևէ ծիսակատարության: Պատահեց այնպես, որ երեկ ճաշից հետո տասը բոպե ես նրան միայնակ թողեցի, իսկ նա այդ ժամանակամիջոցում տան երկու դուռը փակեց իմ առաջ և դիտավորյալ ամբողջ գիշեր խմում էր, մինչև որ մեռավ: Այսօր առավոտյան, լսելով, որ նա խոմփացնում է ձիու պես, դուռը ջարդեցինք և նրան պառկած գտանք բազմոցի վրա. թեկուզ կաշին քերթես, չի արթնանա: Ուղարկեցի Քեննեթի հետևից, եկավ, բայց այն բանից հետո, երբ այդ անասունը արդեն դարձել էր լեշ: Նա պառկած էր մեռած, սառած և անզգայացած, այնպես, որ ինքդ էլ համաձայնիր, արդեն անօգուտ էր աղմուկ բարձրացնել նրա համար:

Մեր ծառան հաստատեց այդ բանը, բայց փնթփնթաց.

— Հիթքլիֆը ինքը պետք է գնար բժշկի հետևից: Ես, թերևս, ավելի լավ կնայի տիրոջը. նա դեռ չէր մահացել, հրբ ես հեռանում էի, այսինքն, ոչ մի նման բան չկար:

Ես պնդում էի, որ հուղարկավորութունը կազմակերպվի պատշաճ ձևով: Միտեր Հիթքլիֆը ասաց, որ կարող եմ վարվել ուղածիս պես, միայն խնդրում էր շնորհակալ, որ այդ ամբողջ գործի համար փողը դուրս է գալիս իր գրպանից:

Նա պահպանում էր նույն կոպիտ, անփույթ շարժումները՝ ցույց շտալով ո՛չ ուրախություն և ո՛չ էլ վիշտ. այդ վարքը արտահայտում էր դժվարին աշխատանքի հաջող կատարումից ստացած դաժան հաճույք: Իրոք, մի անգամ նույնիսկ նրա դեմքին կարդացի հրճվանքի նման ինչ-որ բան: Պա կատարվեց հենց այն պահին, երբ մարդիկ դադարը տնից դուրս էին տանում: Նա կեղծավորությամբ իրեն ներկայացնում էր որպես սզացող. Հերթլնի հետ միասին մեռածին ճանապարհ դնելուց հետո նա դժբախտ հրեխային բարձրացրեց սեղանի վրա, անսովոր բավականություն բնաց.

— Այժմ, իմ լավ մանչուկ, դու իմն ես: Հապա տեսնենք ծառը արդյո՞ք չի աճի նույնքան կորածև, որքան և այս մեկը, եթե քամին նրան էլ թեթի:

Ոչինչ չկասկածելով, փոքրիկը հաճույքով լսում էր նրան, խաղում էր Հիթքլիֆի այտամորուքի հետ և շոյում նրա այտը, բայց ես գուշակեցի այդ խոսքերի նշանակությունը և խայթող տոնով հայտարարեցի.

— Երեխան, սըր, ինձ հետ միասին կվերադառնա Կեռնեխների ազարակատուն: Նա ավելի քիչ է ձերը, քան որևէ մեկը աշխարհում:

— Այդպե՞ս է ասում կինթընը, — հարցրեց նա:

— Իհարկե, նա հրամայել է, որ հրեխային վերցնեմ հետս, — պատասխանեցի ես:

— Լավ, — ասաց այդ սրիկան, — հիմա այդ մասին չենք վիճի, բայց իմ մեջ հրեխային դաստիարակելու ցանկություն ուռաջացավ, ուստի հայտնիր տիրոջդ, որ եթե փորձի հրեխային առնել ինձնից, ես նրա փոխարեն կվերցնեմ իմ տղային: Հերթլնին էլ առանց մարտի չեմ զիջի, բայց թող լավ իմանա՝ մյուսին էլ ես անհապաղ կվերցնեմ: Հիշիր և ասա նրան:

Այդ ակնարկը բավական էր, որ կաշկանդեր մեր ձևաբե-
րը: Տուն վերագառնալուց հետո այդ խոսքերի իմաստը հա-
ղորդեցի էդգար Լինթընին: Սկզբում նա շատ էլ շհետաքրքր-
վեց քրոջ երեխայով, այլևս չէր խոսում միջամտության մա-
սին: Եթե ուզենար էլ միջամտել, շեմ կարծում, որ որևէ բան
ստացվեր:

Հյուրն այժմ դարձավ Մոլեզին հողմերի դարավանդի
տերն ու տիրականը, նա հաստատուն կերպով տիրեց կալ-
վածքին և ապացուցեց փաստաբանին, որը իր հերթին ասա-
ցուցեց միստր Լինթընին, որ մոլախաղով տարված էրնշուն
կարիք ուներ կանխիկ դրամի, դրա համար էլ գրավ էր դրել
իր հողը, ամբողջապես, մինչև վերջին կտորը, և գրավ էր
դրել ոչ թե ուրիշ մեկի, այլ Հիթքլիֆի մոտ:

Այսպիսով, Հերթընը, որը պետք է դառնար գավառի առա-
ջին ջենտլմենը, լիովին կախման մեջ ընկավ իր հոր ռիսերիմ
թշնամուց. նա ապրում է իր հարապատ տանը, ծառայի
նման, բայց այն տարբերությամբ, որ ոռճիկ չի ստանում,
բոլորովին ի վիճակի չէ պաշտույանելու իր իրավունքները,
որովհետև բարեկամներ չունի և չի հասկանում, որ իրեն
խաբել են:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆՈՒԹԵՐՈՐԳ

Տասներկու տարիները,— շարունակում էր միսիս Դի-
նը,— որ հաջորդեցին այդ վշտալից ժամանակին, իմ կյանքի
ամենաներջանիկ տարիներն էին. այդ ընթացքում իմ ամե-
նամեծ տագնապներն առաջանում էին մեր փոքրիկ լեդիի
թևթև հիվանդություններից, որոնք նա ստիպված տանում էր,
ինչպես բոլոր՝ թե հարուստ, թե չբավոր, երեխաները:

Առաջին վեց ամիսներից հետո, նա աճում էր խեղճաճիճվի
պես, կարողանում էր քայլել և նույնիսկ խոսել իր ուրույն
լեզվով, նախքան երկրորդ անգամ ցախին կծաղկեր միսիս
Լինթընի աճյունի վրա:

Այդ ամենահամալիչ աղջիկն ստես արևի ճառագայթ
մաքրեց ամալի տան մեջ: Դեմքով նա իսկական գեղեցկուհի

էր՝ էրնշոուի գեղեցիկ թխագույն աչքերով, բայց Լինթընների սպիտակ մաշկով, նուրբ դիմագծերով ու խարտյաշ զանգուր մազերով: Նա կենսուրախ էր, առանց կուպտավուն ժեստերի և իր մտերմական կապերի մեջ աչքի էր ընկնում շափից ավելի զդայուն ու ջերմ սրտով: Ուժեղ զգացմունքների նկատմամբ ունեցած այդ ընդունակութունը նրա մեջ հիշեցնում էր մորը. բայց այդուհանդերձ, նա նման չէր մորը՝ առաջին Քեթրինին. կարողանում էր լինել քնքուշ ու մեղմ, աղավնու պես, ուներ դուրեկան ձայն և խոհուն հայացք, նրա զայրույթը ևրբևք անզուսպ չէր, իսպ սերը՝ մոլեգին. այն լինում էր խոր և մեղմ:

Սակայն պետք է խոստովանել, որ նա ուներ և թերություններ, որոնք փշացնում էին նրա դրական բնավորությունը: Նախ հանդուգն էր, և ապա՝ կամակոր, որ անփոփոխ կերպով դրսևորվում է երես առած երեխաների մոտ՝ լինեն նրանք բնավորությամբ բարի, թե շար, միևնույն է: Եթե պատահաբար աղախինը բարկանում էր նրա վրա, միշտ էլ լքվում էր. «Ես հայրիկին կասեմ»: Եվ եթե հայրը կշտամբում էր նրան, թեկուզև հայացքով, թվում էր, թե նրա սիրտը հիմա կպայթի. շեմ կարծում, որ նա երբևէ մի սուր խոսք ասած չլիներ:

Հայրը երևխայի ուսուցումը ամբողջապես վերցրեց իր վրա և դասերը վեր էր ածում զվարճանքի. բարեբախտաբար, հետաքրքրասիրությունն ու աշխույժ միտքը նրան դարձնում էին ընդունակ աշակերտուհի. նա ամեն ինչ յուրացնում էր արագ ու ազահաբար, հարգում էր հոր ուսուցումը:

Մինչև տասներեք տարեկան դառնալը, նա ոչ մի անգամ պարտեղի ցանկապատից դուրս չանցավ: Հազվադեպ էր պատահում, որ միստր Լինթընը նրան իր հետ տաներ զբոսանքի, ևթե տանում էլ էր, ապա տանում էր մեկ մղոնից ոչ հեռու, բայց նա ուրիշ ոչ մեկին չէր վստահում: Գիմմերթընը նրա ականջների համար անիրական անուն էր: Եկեղեցին, բացի տնից, միակ շենքն էր, որին աղջիկը մոտենում էր կամ շեմքից ներս անցնում: Մուլեդին հողմերի դարավանդը և միստր Հիթքլիֆը նրա համար զոյություն չունեին. Քեթին կատարյալ մենակյաց էր և, ըստ երևույթին, միանգամայն զոհ էր: Իհարկե, մանկական սենյակի պատուհանից շրջա-

կայքը դիտելով՝ նա երբեմն հարցնում էր.

— Էլլեն, դեռ երկա՞ր ժամանակ պիտի անցնի, որ կարողանամ բարձրանալ այդ սարերի ամենավերին գագաթը: Ուզում եմ իմանալ, թե ի՞նչ կա դրանցից այն կողմը՝ ծո՞վ:

— Ոչ, միսս Քեթի,— պատասխանում էի ես,— այնտեղ նորից սարեր են, ինչպես սրանք:

— Իսկ ինչի՞ նման են լինում այդ ոսկե ապառաժները, եթե կանգնես դրանց տակ,— մի անգամ հարցրեց նա:

Նրա ուշադրությունը հատկապես գրավում էր Փենիսթըն Քրեգսի զառիթափ լանջը: Մասնավորապես, երբ դրա ամենաբարձր գագաթների վրա շողում էր մայր մտնող արևը, իսկ բնապատկերի ամբողջ ընդարձակ տարածքը ընկած էր մնում ստվերի մեջ:

Ես բացատրեցի, որ դրանք քարե լեռկ զանգվածներ են. դրանց ճեղքվածքներում եղած հողը հազիվ է բավականանում, որ դալուկ ծառն աճի:

— Իսկ ինչո՞ւ դրանք այդքան երկար լուսավորված են, երբ այստեղ արդեն երեկո է,— շարունակում էր նա:

— Որովհետև դրանք շատ ավելի բարձր են, քան այն տեղը, որտեղ մենք ենք,— պատասխանեցի ես,— դուք այդտեղ չեք կարող բարձրանալ, դրանք շափազանց բարձր են ու դիք: Ձմեռը սառնամանիքն այդտեղ միշտ էլ ավելի շուտ է գալիս, քան մեզ մոտ. ամառվա կեսին ես ձյուն եմ գտել հյուսիս արևելյան ա՛յ այն խոռոչում:

— Օ՛, դու եղե՛լ ես այդ սարերում,— հրճվանքից ճշաց նա:— Ուրեմն ես էլ կկարողանամ, երբ մեծանամ: Իսկ հայրիկը եղե՛լ է, էլլեն:

— Հայրիկը կասեր ձեզ, միսս,— շտապ պատասխանեցի ես,— որ շարժե բարձրանալ այնտեղ: Հավամբզու դաշտերը, որտեղ դուք զբոսնում եք հայրիկի հետ միասին, շատ ավելի հաճելի են, իսկ Կեռնեխների պարտեզը աշխարհի ամենագեղեցիկ տեղն է:

— Պարտեզը տեսել եմ, իսկ սարերը՝ ոչ,— ինքն իրեն շշնջաց նա:— Ես հաճույքով կուզենայի ողջ շրջապատը դիտել այ այն ամենաբարձր գագաթից. իմ փոքրիկ ձին՝ Մինին, մի օր ինձ կտանի այնտեղ:

Երբ աղախիններից մեկը հիշեց Փերինների քարանձավը,

Քեթիի զուխը պտույտ եկավ իր պլանն իրականացնելու ցանկութունից. նա խնդրանքներով շարունակ ձանձրացնում էր միստր Լինթընին, որը խոստացավ և հայտնեց, որ այդ ճանապարհորդութիւնը տեղի կունենա լոկ այն ժամանակ, երբ աղջիկն ավելի մեծանաւ: Բայց միսս Քեթիինը ամիսներով հաշվում էր իր տարիքը և շարունակ հարցնում. «Ինչ ինչ, ես արդեն բավականին մեծ եմ, հիմա ինձ կարելի՞ է բարձրանալ Փենիսթըն Քրեգը»:

Այնտեղ տանող ճանապարհի մեկ զալարը անցնում էր Մոլեզին հողմերի դարավանդի մոտով: Էդգարը չէր համարձակվում անցնել այդ կողմով, որի համար էլ աղջիկը ստանում էր նույն պատասխանը.

— Ոչ, թանկագինս, դեռ վաղ է:

Ես ասացի, որ միսիս Հիթքլիֆը իր ամուսնուն լքելուց հետո տասներկու տարի ապրեց: Նրա ընտանիքի բոլոր անդամներն էլ նուրբ կազմվածքի տէր մարդիկ էին. Իզաբելլան ու Էդգարը զուրկ էին այն ծաղկող առողջութունից, որին դուք սովորաբար հանդիսւում եք այս վայրերի մարդկանց մոտ: Թե ինչ հիվանդությամբ էր Իզաբելլան վերջերս տառապում, չեմ կարող ասել, կարծում եմ՝ երկուսն էլ մեռան նույն հիվանդութիւնից՝ մի յուրահատուկ անեղից, որը սկզբնական շրջանում դանդաղ էր ընթանում, բայց վերջում դարձավ անբուժելի, մարդուն արագորեն հյուծեց և կյանքը մոտեցրեց վախճանին:

Իզաբելլան Էդգարին հաղորդեց շորս ամիս տևող իր հիվանդութեան հավանական ավարտի մասին, աղերսում էր եղբորը զալ իր մոտ, եթե հնարավոր է, որովհետև ինքը շատ բան պետք է կարգավորի, ցանկանում է հրաժեշտ տալ նրան և Լինթընին ապահով հանձնել նրա ձեռքը: Ինքը լիահույս է, որ Լինթընը միշտ կմնա նրա մոտ, ինչպես մնացել էր իր մոտ. երեխայի հայրը, հանգստացնում էր նա ինքն իրեն, չի ցանկանա իր ուսերի վրա վերցնել տղայի խնամքի ու դաստիարակութեան բեռը:

Իմ անըր մի բոպե անգամ շտատանվեց և որոշեց կատարել քրոջ խնդիրքը: Սովորական հրավերքների ժամանակ նա դժկամությամբ էր թողնում տունը, բայց վեր թռավ, որ այդ մեկին պատասխանի՝ հանձնարարելով ինձ իր բացակայու-

թյան ժամանակ հատուկ զգոնությունը հետևել Քեթրինին՝ բաղձաթիվ անգամներ կրկնելով, որ աղջիկը, նույնիսկ իմ ուղեկցությամբ, պարտեզի ցանկապատից դուրս չգա. հոր մտքով անգամ չէր անցնում, որ աղջիկը կարող էր դուրս գալ նաև առանց ուղեկիցների:

Նա բացակայեց երեք շաբաթ: Առաջին մեկ-երկու օրը Քեթին խորապես տխրությամբ համակված նստում էր գրադարանի մի անկյունում. ո՛չ կարողանում էր կարդալ և ո՛չ էլ՝ խաղալ: Այդպիսի հանդիսատ վիճակում նա ինձ շատ չէր նեղացնում, բայց լուռությունը փոխարինվեց ժամանակ առ ժամանակ դրսևորվող անհամբեր, նեղսիրտ ձանձրույթով. և քանի որ տնային աշխատանքը, ինչպես և մեծ տարիքը, թույլ չէին տալիս ինձ վազել ու ղվարճացնել նրան, իմ մեջ հղացավ մի միտք, որը հնարավորություն էր տալիս նրան ղվարճանալ առանց ինձ:

Ակսեցի նրան զբոսանքի ուղարկել պարտեզ մերթ ոտքով, մերթ էլ պոնի նստած. հետո, երբ վերադառնում էր, ես համբերատարությամբ լսում էի նրա պատմածները իրական ու երևակայական արկածների մասին:

Ամառվա ամենաթեժ պահն էր: Աղջիկն այնքան տարվեց իր միայնակ թափառումներով, որ հաճախ առավոտյան նախաճաշից մինչև թեյը տուն չէր գալիս և այդ ժամանակ երեկոները նվիրված էին լինում նրա ֆանտաստիկական պատմություններին: Ես չէի վախենում, որ նա դուրս կնետվի, ազատ կզգա իրեն, որովհետև դարպասը միշտ էլ փակ էր լինում, և ես չէի մտածում, որ նա կհամարձակվի միայնակ դուրս գալ, նույնիսկ եթե դարպասը լայն բացվեր նրա առաջ:

Դժբախտաբար, իմ վստահությունը խաբեց ինձ: Մի անգամ, առավոտյան ժամը ութին Քեթրինը եկավ ինձ մոտ և հայտնեց, որ այդ օրը ինքը արաբ վաճառական է և իր քարավանով պատրաստվում է անցնել անապատի միջով, իսկ ես իրեն պետք է ուտելիքի առատ պաշար տամ իր և իր կենդանիների՝ ձիու և երեք ուղտերի համար, այսինքն՝ մի մեծ բարակի և երկու փոյնտերի համար:

Ես հավաքեցի համեղ ուտելիքների բավականին մեծ պաշար, բոլորը դասավորեցի զամբյուղի մեջ և կախեցի թամբի կողքից: Հուլիսյան արևից պաշտպանվելու համար շղարշով

ծածկված լայնեզր գլխարկը գլխին՝ միսս Քեթին հավերժա-
հարսի պես ուրախ թուավ թամբին, վարզով քշեց և զվարթ
ծիծաղով պատասխանեց իմ զգուշացնող խորհուրդներին, որ
քառատրոփ շքշի և շուտ վերադառնա տուն:

Իմ շարաճճին թեյին շներկայացավ: Ճանապարհորդներից
մեկը, բարակը՝ պառավ շունը, որը հանգիստ էր սիրում, շու-
տով վերադարձավ, բայց Քեթին, պոնին և երկու փոյնտերը
ոչ մի տեղ չէին երևում: Ես հանձնակատարներ ուղարկեցի
և այս, և այն ճանապարհով, և վերջ ի վերջո, ինքս ճանա-
պարհ բնկա նրան փնտրելու:

Մեր աշխատողներից մեկը կալվածքի ծայրում նորոգում
էր տնկարանի շուրջը եղած ցանկապատը: Ես հարցրի, թե
չի տեսել արդյոք օրիորդին:

— Տեսա առավոտյան կողմ, — պատասխանեց նա, —
ինձ խնդրեց պնդուկենուց մի ճիպոտ կտրել, իսկ հետո ձիու
վրա նստած ցատկեց ցանկապատի վրայով, այնտեղ, որտեղ
ավելի ցածր էր, և սրարշավ անհետացավ տեսողաշտից:

Կարող եք պատկերացնել, թե ինչ զգացի այդ լուրը լսե-
լուց հետո: Իսկույնեթ գլխի ընկա, որ Քեթին գնացել է Փե-
նիսթըն Քրեգս:

— Ի՞նչ կլինի նրան հիմա, — ճշացի ես, նետվելով դեպի
ցանկապատի անցքը, որը նորոգում է բանվորը, և ուղիղ վա-
զեցի ճանապարհի կողմը:

Սլանում էի, ասես գրագ էի եկել, մղոն մղոնի հետևից,
մինչև որ ճանապարհի ոլորանի հետևում իմ աչքերի առաջ
կանգնեց Մոլեգին հողմերի դարավանդը, բայց Քեթինը ո՛չ
շրջակայքում, ո՛չ էլ հեռվում չէր երևում:

Քրեգսը մեկուկես մղոն հեռու է Դարավանդից, իսկ Դա-
րավանդը շորս մղոն էլ հեռու է Ագարակատնից, ուստի սկսե-
ցի վախենալ, որ գիշերը վրա կհասնի, նախքան ե՛ս կհասնեմ
այնտեղ: «Իսկ ի՞նչ կլինի, եթե ծայռերը մազլցելիս՝ սայթա-
քելով վայր ընկնի, — մտածեցի ես, — և սոյանվի կամ էլ
ոսկորները ջարդվեն»:

Անհայտությունը, իրոք, տանջալից էր: Սկզբում հաճելի
թեթևություն զգացի, երբ տան կողքով վաղելիս, տեսա մեր
Չարլիին՝ կատաղած փոյնտերներից մեկին, որը պառկած
էր լուսամուտի տակ՝ զլուխն ուռած, ականջն արյունակալած:

Բաց արի դոնակը, նետվեցի առմուտք և շատ ուժեղ թակեցի դուռը: Բաց արեց մի կին, որին ճանաչում էի. նա առաջ ապրում էր Գիմմերթընում, այժմ միստր էրնշոուի մահից հետո աշխատում էր այս տանը որպես աղախին:

— Ա՛խ, ասաց նա,— դուք փնտրում եք ձեր փոքրիկ օրիորդին. մի անհանգստացե՛ք: Նա ողջ և առողջ այստեղ է. ուրախ եմ, որ դուք եք, և ոչ թե սանտերը:

— Ուրեմն տերը տանը չէ՞,— արագընթաց քայլվածքից և հուզմունքից հազիվ էի շնչում:

— Ոչ ոք չկա,— պատասխանեց նա,— Լրկուսն էլ՝ թե՛ նա, թե՛ Զոպեֆը, զնացին, և կարծում եմ, մի ժամից շուտ շեն վերադառնա: Ներս անցեք, մի փոքր հանգստացե՛ք:

Ներս մտա և օջախի մոտ տեսա իմ մոլորված գառնուկին: Նա տաքանում էր՝ ճոճվելով փոքր բազկաթոռում, որը մի ժամանակ պատկանելիս էր Էդել իր մորը, երբ նա տակավին Լրկիսա էր: Գլխարկը կախել էր պատից, և շատ հանգիստ իրեն զգում էր ոնց որ տանը, ուրախ ծիծաղում, բարձր տրամադրություններ բլբլում էր, հիմա արդեն տասնութամյա ամրակազմ պատանի Հերթընի հետ, որ աչքը տնկած մեծ հետաքրքրություններ և զարմացած նայում էր աղջկան՝ շատ քիչ բան հասկանալով դիտողությունների ու հարցերի տարափից, որ անընդհատ դուրս էին թռչում աղջկա շուրթերից:

— Հրաշալի է, միսս,— ճշում էի ևս՝ թաքցնելով իմ ուրախությունը և ցույց տալով, որ բարկանում եմ:— Մինչև ձեր հոր վերադարձը, սա ձեր վերջին զբոսանքը կլինի, և սա ձեզ դռան շեմքից նորից դուրս շեմ թողնի, անհնազանդ, շարաճճի աղջիկ:

— Ա՛խ, էլլեն,— սկսեց գոռալ և ուրախ վեր-վեր ցատկելով, վազեց ինձ մոտ:— Այսօր քնելուց առաջ ես քեզ կպատմեմ մի հիանալի պատմություն. և այսպես, դու գտար ինձ այստեղ... Գեթ մեկ անգամ կյանքումդ դու եղե՞լ ես այստեղ:

— Դրեք ձեր գլխարկը և անմիջապես տուն,— ասացի,— ես սաստիկ նեղացած եմ, միսս Քեթի, դուք շատ վատ վարվեցիք: Նեղանալու և տրտնջալու կարիք չկա. և այդ ձևով եք վարձահատույց լինում իմ անհանգստության դիմաց, երբ ես ամբողջ գավառով մեկ վազվում, փնտրում եմ ձեզ: Ե՛վ

մտածել միայն, թե ինչպես էր միստր Լինթընը ինձ պատվիրում ձեզ պարտեզից դուրս շթողնել, մինչդեռ դուք թաքուն փախաք, դա ցույց է տալիս, որ դուք փոքրիկ խորամանկ աղվես եք, և այլևս ոչ ոք ձեզ չի հավատա:

— Ի՞նչ եմ արել,— հեկեկանքը հազիվ զսպելով ասաց նա:— Հայրիկը ինձ ոչինչ չի ասում. նա չի նախատի ինձ, էլլեն, նա երբեք քեզ նման չի բարկանում:

— Գնանք, գնանք,— կրկնեցի ես:— Թողեք ձեր ժապավենը կապեմ: Դե կարիք շկա նեղանալու: Օ՛հ, ամոթ է: Դուք տասներեք տարեկան եք, բայց կարծես երեխա լինեք:

Դա ես ավելացրի, որովհետև նա գլխարկը գլխից հանեց, դեն շարտեց և փախչելով ինձանից, բնկրկեց բուխարու կողմը:

— Ոչ,— ասաց աղախինը,— նա լավ աղջիկ է, անարդար մի եղեք լավ աղջկա հանդես, միսիս Դին: Այդ մենք նրան պահեցինք: Նա ուզում էր անմիջապես տուն գնալ, վախենալով, որ դուք կանհանգստանաք: Հերթընը առաջարկեց ճանապարհ դնել նրան, և ես մտածեցի, որ այսպես ավելի լավ կլինի՝ ճանապարհը բլուրների վրայով ամայի է:

Այդ վեճի պահին Հերթընը, ձեռքերը զրպանում կանգնած, ամաշկոտ անշնորհությունից շէր կարողանում խոսել, թեպետ նրա ամբողջ տեսքը խոսում էր այն մասին, որ ասես իմ ներխուժումը նրա համար հաճելի չէր:

— Երկա՞ր պիտի սպասեմ,— շարունակում էի ես՝ արհամարհելով այդ կնոջ միջամտությունը:— Տասը բույս հետո կմթնի: Որտե՞ղ է Պոնին, միսս Քեթի: Եվ որտե՞ղ է Ֆենիքսը: Ես կթողնեմ կզնամ, եթե դուք շատապեք, այնպես որ, խընդրում եմ արագացրեք:

— Պոնին բակում է,— պատասխանեց նա, իսկ Ֆենիքսը փակված է այ այնտեղ: Նրան կծել են, Չարլիին նույնպես: Ես ուզում էի այս ամենը պատմել քեզ, բայց քո տրամադրությունը վատ է, դրա համար էլ ոչինչ չես լսում:

Գլխարկը հատակից բարձրացրի և մոտեցա աղջկան, բայց տեսնելով, որ տնեցիք բոլորը պաշտպանում են իրեն, նա սկսեց ցատկոտելով սենյակում վազել դեսուդեն. նետվեցի, որ բռնեմ նրան, նա մկան պես փախչում մտնում էր սեղանի

տակ, նորից էր դուրս թռչում, իսկ ինձ չէր սազում վազվզել նրա հետևից:

Հերթընն ու աղախինը սկսեցին ծիծաղել, Քեթին միացավ նրանց և դարձավ ավելի ևս հանդուգն, մինչև որ ես խիստ զայրույթից գոռացի.

— Լավ, միսս Քեթի, բայց եթե իմանայիք, թե սա ում տունն է, դուք ուրախությամբ կուզենայիք դուրս պրծնել այստեղից:

— Սա ձեր հոր տունն է, այնպես չէ՞,— ասաց նա, շուռ գալով գեպի Հերթընը:

— Ո՛չ,— պատասխանեց նա, գլուխը կախելով և ամոթից կարմրելով:

Հերթընը չկարողացավ դիմանալ Քեթիի աչքերի սուր հայացքին, թեև դրանք իսկ և իսկ իր աչքերն էին:

— Ո՞ւմն է, ուրեմն, ձեր տիրո՞ջն է,— շարունակեց աղջիկը:

Հերթընը ավելի ևս կարմրեյ, բայց արդեն մի այլ զգացումից, ինչ-որ հայհոյանք շնչաց ու շուռ եկավ:

— Ո՞վ է դրա տերը,— անընդհատ շարունակում էր աղջիկը, դիմելով ինձ.— նա ասում էր՝ «մեր տունը» և «մեր աշխատողները»: Ես էլ կարծեցի, տանտիրոջ որդին է: Եվ նա ինձ երբեք միսս շանվանեց, իսկ պետք է ասեր, այնպես չէ՞, եթե ծառա է:

Հերթընը այդ մանկական խոսքերից սևացավ որոտացող ամպի պես: Ես լռելյայն քաշեցի հարցաքննող աղջկա թևը. ի վերջո, ինձ հաջողվեց նրան պատրաստել մեկնելու համար:

— Հիմա տվեք ինձ իմ ձին,— ասաց աղջիկը՝ դիմելով իր անծանոթ ազգականին, ինչպես կաներ Ադարակատանը՝ դիմելով ախոռի մի որևէ տղայի:— Եվ կարող եք գալ ինձ հետ: Ես ուզում եմ տեսնել, թե ինչպես է շար ոգին մորուտից դուրս գալիս, և լսել ջրապայներին, ինչպես դուք նրանց կոչում եք. դե, շուտ արեք: Հը, ի՞նչ է եղել: Ասացի՛ ձին բերեք:

— Դու ավելի շուտ դժոխք կմանես, քան ես կգառն: մ քա ծառան,— գոռաց պատանին:

— Ես ուր կմտնե՞մ,— զարմացավ Քեթրինը:

— Դժոխք... դու անզգամ վհուկ,— պատասխանեց նա:

— Դե, միսս Քեթի, հիմա տեսնում եք, թե ինչ հիանալի

հասարակութեան մեջ եք ընկել,— միջամտեցի ես:— Շատ հաճելի է այդպիսի՝ խոսքերով դիմել շահել լեզվին: Խընդրում եմ, հետք վեճի շրոնվեք: Գնանք ինքներս գտնենք Պոնիին և մեկնենք:

— Բայց, էլլեն, — բղավեց աղջիկը ապշած՝ աչքերն ուղիղ հառելով Հերթընի վրա, — ինչպե՞ս է համարձակվում այդպես խոսել ինձ հետ: Բայց չէ՞ որ նա պետք է կատարի իմ պահանջը: Դու, գարշելի տղա, թո՛ւ ասածը ես կհայտնեմ հայրիկիս: Դե, շուտ:

Հերթընը բուրբուրով շվախեցավ սպառնալիքից: Աղջկա աչքերում զայրույթի արցունքներ երևացին:

— Ուրեմն բերեք իմ ձին, — շուտ գալով դեպի աղախինը, ասաց նա, — և անմիջապես բաց թողեք իմ շանը:

— Կամաց, միսս, — պատասխանեց աղախինը, — դուք ոչինչ չեք կորցնի, եթե քաղաքավարի լինեք մարդկանց հետ: Թեկուզև միտար Հերթընը տիրոջ տղան չէ, բայց նա ձեր քեռու տղան է. իսկ ես էլ ձեր աղախինը չեմ:

— Նա՛ իմ քեռու տղա՞ն, — արհամարհական ծիծաղով ասաց Քեթին:

— Այո, իհարկե, — պատասխանեց կինը:

— Օհ, էլլեն, թույլ մի տուր նրանց, որ այդպիսի բաներ ասեն, — սաստիկ հուզված ասաց աղջիկը: — Հայրս գնացել է Լոնդոն իմ հորաբորոջ տղայի հետևից. հորաբորոջս տղան ջենտլմենի որդի է. իսկ սա... նա չավարտեց և իսկույն սկսեց լաց լինել՝ զայրացած այն մտքից, որ ինքը ազգակցական կապ ունի այդպիսի անձնավորութեան հետ:

— Դե, դե, — շնչացի ես, — մարդը կարող է ամեն տեսակ բազմաթիվ ազգականներ ունենալ, միսս Քեթի, և ոչ մեկին վատարանել պետք չէ. միայն կարիք չկա կապվել նրանց հետ, եթե նրանք ոչ հաճելի, շար մարդիկ են:

— Ոչ, նա... նա իմ ազգականը չէ, էլլեն, — շարունակեց աղջիկը՝ մտածելով ու ավելի խորը զգալով վիրտը, և նետվեց իմ գիրկը՝ ասպատարան փնտրելով այդ մտքից:

Ես շատ զայրացա թե՛ նրա, և թե՛ աղախնի վրա, նրանց միջև տեղի ունեցած այդ խոսակցութեան պատճառով: Զէի կասկածում, որ աղջկա խոսքերը Հերթընի գնալու մասին կհայտնեն միտար Հերթընի ֆին. հավատացած էի՝ Քեթրինը,

հենց որ հայրը վերադառնա, առաջին հերթին կձգտի պարզել աղախնի ասած խոսքերի իմաստը իրենց անդաստիարակ ազգականի մասին:

Հերթընը ուշքի դալով վիրավորանքից, որ իրեն դրել էին ծառայի տեղ, ըստ երևույթին, հուզվեց աղջկա վշտից. ձին բերելով առմուտքի մոտ, հյուրին սփոփելու համար ինքը բնից դուրս հանեց տերիերի ծուռտիկ ոտքերով հիանալի ձաղին և տալով աղջկան, կարծես ուզեց շեշտել՝ թող վերցնի ցանկացածը, ինքը չի նեղանում:

Աղջիկը սսկվեց, ահ ու սարսափով նայեց նրան, ապա սկսեց էլ ավելի ուժեղ արտասովել:

Դիտելով Քեթիի հակակրանքը խեղճ պատանու հանդեպ, ևս հազիվ էի կարողանում զսպել ժպիտս: Նա մի ուժեղ պատանի էր, ուներ սլացիկ կազմվածք, գեղեցիկ դիմագծեր, ամրակազմ էր ու առողջ, բայց նրա հազուստը համապատասխանում էր ֆերմայում կատարած ամենօրյա իր աշխատանքներին ու զբաղմունքներին, և ցախիներով ծածկված խոպան դաշտերում ճագարների ու թռչունների հետևից վազվզելուն: Այդուհանդերձ, ինձ թվում էր, թե Հերթընի դեմքն արտացոլում էր հոգեկան այնպիսի հատկանիշներ, որոնք նրա հայրը երբեք չէր ունեցել. լավ հասկերը կորչում են առատորեն աճող բարձր մուխոտերի մեջ, բայց, այնուամենայնիվ, դա խոսում է մի արգավանդ հողի մասին, որտեղ ավելի նպաստավոր հանգամանքներում կարող էր աճել հարուստ բերք: Ես կարծում եմ, որ միստր Հիթքլիֆը ֆիզիկապես նրան չէր նեղում: Իր անվախ բնավորության շնորհիվ պատանին հալածանքների փորձություն չէր ենթարկվում, նրա մեջ չկար երկշտ համակերպության ստվերն անգամ, որ Հիթքլիֆի պես մարդու մեջ վատ վարվեցողության ցանկություն առաջացնելու: Իր շարակամությունը Հիթքլիֆը սղղում էր այն բանին, որ Հինդլիի որդուն դարձնի կոշտ ու կոպիտ անասուն: Տղային կարգալ, գրել չէին սովորեցնում, երբեք չէին կշտամբում վատ սովորությունների համար, եթե դրանք չէին անհանգրստացնում տիրոջը, երբեք չէին դաստիարակում առաքինություն ոգով, չէին զգուշացնում արատավոր քայլերից: Լսել էի, որ պատանու այլասերմանը շատ էր նպաստում Զոզեֆը. երբ Հերթընը փոքր էր, ծեր, ծառան իր բթամիտ բծախնդրու-

թյամբ շողոքորթում, երես էր տալիս նրան, որովհետև հանձն
ձինս Հերթընի տեսնում էր հին ընտանիքի գլխավորին: Եվ
այդ բանում սովորականի պես նա մեղադրում էր այն ժա-
մանակ դեռ երեխա Քեթրին էրնշուուին ու փոքրիկ Հիթքլի-
ֆին, որոնք իրենց շարություններով տիրոջը համբերությու-
նից հանում, հարկադրում էին մխիթարություն փնտրել հար-
րեցողության մեջ. այդպես էլ այժմ Հերթընի թերությունների
ամբողջ ծանրությունը նա գցում էր նրա կալվածքի բռնա-
տիրոջ վրա:

Եթե տղան հայհոյում էր, Ջոզեֆը նրան չէր ընդհատում,
չէր պատժում, ինչքան էլ որ նա մեղավոր լիներ: Ըստ երևույ-
թին, հաճույք էր ստանում՝ տեսնելով, թե Հերթընը ինչպես է
վատ ճանապարհով ընթանում, թույլ էր տալիս, որ տղան
սնանկանա, հասնի կործանման եզրին, բայց դրա համար
նա՝ Հիթքլիֆը, պետք է պատասխան տա: Հերթընի արյունը
կթափվի նրա ձեռքով. այդ միտքը Ջոզեֆին անսահման մխի-
թարություն էր պատճառում:

Նա պատանուն սովորեցնում էր հպարտանալ իր անու-
նով ու ծագումով, և, եթե կարողանար, նրա մեջ ատելություն
կսերմաներ Գարավանդի նոր տիրոջ հանդեպ, բայց նրա վա-
խը տանտիրոջից հասնում էր սնահավատություն, իր զգաց-
մունքները նրա նկատմամբ բացահայտ կերպով ցույց չէր
տալիս՝ թույլ տալով իրեն միայն փնթփնթալ ինչ-որ շարա-
միտ ակնարկներ և սպառնալ երկնային պատժով:

Չեմ կարող ասել, որ այն օրերում հս լավ ծանոթ էի Մո-
լեյին հոգմերի դարավանդի սովորական ապրելակերպին:
Պատմում եմ սոսկ լսածս, քանի որ քիչ բան եմ տեսել: Գյու-
ղացիք հաստատում էին, որ միստր Հիթքլիֆը կծծի անգութ
մարդ է, կոպիտ է վերաբերվում վարձակալներին: Բայց տունը
կանացի խնամքի շնորհիվ նորից ստացավ իր նախկին հար-
մարավետ տեսքը, իսկ նրա հարկի տակ այլևս բուռն տեսա-
րաններ չէին լինում, ինչպես լինում էին Հինդլիի օրոք: Տան-
տերը շափազանց մոռյլ էր և մարդկանց հետ, լավ թե վատ,
բնկերություն չէր անում. այդպիսին է նաև այժմ...

Բայց այսպես հս իմ պատմությունը հրքեք չեմ ավարտի:
Միսս Քեթրինը մերժեց տերիերի ձագը, որպես հաշտեցնող
դո՛ւարերություն և պահանջեց վերադարձնել իր սեփական

շները՝ Չարլիոն ու Տենիքսը: Եւեորո չաւալով ու գլուխները կախ, քաշ գալով մոտեցան. մենք երկուսս էլ սաստիկ հուզված շարժվեցինք դեպի տուն:

Ես չկարողացա իմ փոքրիկ տիրուհուց խոսք դուրս քաշել և իմանալ, թե օրն ինչպէս անցկացրեց, լոկ իմացա, որ իր ուխտագնացութեան նպատակը, ինչպէս ենթադրում էի, Փենիսթըն Քրեգան էր, և որ նա հասաւ Մոլեզին հողմերի դարավանդը առանց արկածների, ու պատահեց այնպես, որ Հերթընը շների ոհմակի հետ դուրս եկաւ դարպասից. շները հարձակվեցին իր «քարավանի» վրա:

Տեղի ունեցաւ կատաղի ճակատամարտ, նախքան տերերը կարողացան շներին բաժանել իրարից. այդպէս սկսվեց ծանոթութիւնը: Քեթրինը Հերթընին հայտնեց, թե ով է ինքը և ուր է գնում: Խնդրեց, որ իրեն ճանապարհը ցույց տա, և վերջ ի վերջո, համոզեց նրան ուղեկցել իրեն:

Հերթընը հայտնեց նրան «Փերինների քարանձավի» և քսան այլ զարմանալի վայրերի գաղտնիքները. բայց անբարեհաճ լինելով, ես շարժանացա ուխտագնացի տեսած բոլոր հետաքրքիր երևույթների նկարագրութիւնը լսելուն:

Այնուամենայնիւ, ես հասկացա, որ ուղեկցողը արժանացել էր նրա ուշադրութեանը, քանի դեռ չէր վիրավորել նրա ինքնասիրութիւնը՝ դիմելով նրան որպէս ծառայի, և քանի դեռ Հիթքլիֆի աղախինը չէր վիրավորել հյուրի ինքնասիրութիւնը՝ Հերթընին անվանելով նրա ազգականը:

Իսկ հետո նրան վիրավորեցին Հերթընի կոպտութիւնները: Ազարակատանը նա բոլորի համար դարձել էր «սիրելիս», «թանկագինս», «թագուհիս», «հրեշտակս», և հանկարծ, մի օտար մարդու կողմից վրդովեցուցիչ կերպով ենթարկվել էր վիրավորանքի: Այդ բանը նա չէր կարողանում հասկանալ, և ես մեծ դժվարութեամբ համոզեցի նրան խոստանալ, որ այդպիսի վիրավորված տեսքով շներկայանա հորը:

Բացատրեցի նրան, թե որքան էր հայրը խորշում Մոլեզին հողմերի դարավանդի բնակիչներից և որքան կվշտանա նա, եթե իմանա, որ Քեթրին եղել է այնտեղ: Բայց ես ավելի շուտ շեշտը դնում էի հետևյալ փաստի վրա՝ եթե նա իմանա, որ ես իր պատվերները բանի տեղ չեմ դրել, իմ տերը գուցե այնքան բարկանա, որ ես ստիպված լինեմ թողնել հեռանալ

աշխատանքից: Իսկ այդպիսի միտքը Քեթրինի համար անտանելի էր: Նա խոսք տվեց և ի սեր ինձ կատարեց այն. ինչևէ, նա շատ անուշիկ աղջնակ էր:

ԳԼՈՒԽ ՏԱՍՆԻՆՆԵՐՈՐԴ

Սև երիզով նամակը հայտնեց մեզ տանտիրոջ վերադարձի օրվա մասին: Իզարելլան վախճանվեց: Միստր Լինթընը գրեց՝ հանձնարարելով ինձ իր աղջկա համար սգաշոր պատվիրել և պատրաստել սենյակ ու այլ հարմարություններ իր քրոջ տղայի համար:

Քեթրինը ուրախությունից խենթացել էր, որ շուտով կտեսնի հորը և բուռն կենսուրախությամբ համակված գուշակություններ էր անում իր «իսկական» հորաքրոջ տղայի անհաշիվ արժանիքների մասին:

Վրա հասավ այն երեկոն, երբ սպասվում էր նրա ժամանումը: Վաղ առավոտից Քեթրինը զբաղված էր՝ դասավորելով իր սեփական մանր գործերը. հագել էր նոր սև զգեստ, խեղճ աղջիկ, հորաքրոջ մահը նրա մեջ իսկական վիշտ չէր առաջացրել. շարունակ ձանձրացնելով ինձ, առաջարկում էր միասին դուրս գալ զբոսանքի և դիմավորել եկվորներին:

— Լինթընը ընդամենը կես տարով է ինձանից փոքր, — շատախոսում էր նա, հանդիստ քայլելով ինձ հետ ծառերի ստվերում մամռակալած դարափոսերի վրայով: — Որքան հաճելի կլինի այդպիսի խաղընկեր ունենալ: Հորաքույր Իզարելլան հայրիկին ուղարկել էր նրա մազերից մի գեղեցիկ փունջ. նրա մազերը իմից ավելի շատ վշագույն, ավելի բաց դեղին և շատ նուրբ են հղել: Նա այն զգուշությամբ պահում էի ապակե փոքրիկ արկղիկի մեջ և, հաճախ մտածում էի, թե ինչքա՛ն լավ կլիներ տեսնել դրա տիրոջը: Օհ, ես այնպես երջանիկ եմ... և հայրիկը, սիրելի, իմ սիրելի հայրիկը: Էլլեն, եկ վազենք, դե, վազեցի՛նք:

Նա վազում էր, հետ վերադառնում, նորից էր վազում, վազում էր շատ անգամներ, մինչև որ ես իմ հանգիստ քայլվածքով հասա դարպասին, ու այն ժամանակ նա նրս-

տեց ճաշապարհի կողքի ճիմապատ լիբին և աշխատում էր համբերությամբ սպասել, բայց դա անհնարին էր. մի բույն անգամ շէր կարողանում տեղում հանգիստ նստած մնալ:

-- Ի՞նչ դանդաղ են գալիս,— բացականչեց նա:— Ա՛հ, ճասարարհին փողի եմ տեսնում՝ գալի՞ս են: Ո՛ւշ: Հապա ե՞րբ կլինեն սյստեղ: Չի՞ կարելի, որ մի փոքր էլ առաջ գնանք՝ կես մղոն, էլլեն, միայն կես մղոն: Դե, ասա, «այո», մինչև շրջագարձի մոտի, ա՛յ, այն կեշիների խումբը:

Ես համառորեն մերժում էի: Եվ, վերջապես, նրա անհանգրստությունը փարատվեց. կառքը դղրդալով երևաց:

Միսս Քեթրինը հենց որ փոքր պատուհանի մոտ նկատեց հոր դեմքը, մի սուր ճիշ արձակեց և մեկնեց ձեռքերը: Հայրը կառքից դուրս ցատկեց համարյա նույնքան անհամբեր, որքան և ինքը. բավական ժամանակ անցավ, մինչև որ կարողացավ մտածել որևէ մեկի մասին, բացի իրենցից:

Քանի դեռ նրանք փոխանակում էին շոյանքներ, ես նայեցի կառքի մեջ, որպեսզի հոգ տանեմ ինձրնի մասին: Նա քնած էր մի անկյունում՝ փաթաթված բրդե տաք թիկնոցի մեջ, կարծես ձմեռ լիներ: Գժգույն, նուրբ, թուլակազմ մի տղա, որին կարելի էր ընդունել իմ տիրոջ կրտսեր եղբոր տեղ՝ այնքան նման էին իրար. բայց երեխայի տեսքի մեջ կար ինչ-որ հիվանդագին անբարեհամբույրություն, որ էդգար ինձրնի մեջ երբեք չէր եղել:

էգգարը տեսավ, որ ես նայում եմ կառքի ներսը և, ձեռքերը թափ տալով, խնդրեց դռնակը ծածկել, տղային շանհանգստացնել, որովհետև նա ճամփորդությունից հոգնել էր:

Քեթին շատ էր ուզում գեթ մի աչքով տեսնել նրան, բայց հայրը կանչեց աղջկան, և նրանք երկուսով սկսեցին քայլել պարտեզի միջով, մինչև ես վազեցի ծառաներին նախապատրաստելու:

— Գիտես ինչ, սիրելիս,— ասաց միստր Լինթընը՝ դիմելով աղջկան, երբ նրանք կանգնեցին գլխավոր մուտքի սանդուղքի մոտ,— քո հորաքրոջ տղան քեզ նման ուժեղ կամ ուրախ չէ, նա, հիշիր այդ, բուրդովին վերջերս կորցրել է մորը, հետևապես, մի սպասիր, որ անմիջապես սկսի քեզ հետ խաղալ և վազվզել: Եվ ավելորդ խոսակցություններով

մի հոգնեցրու նրան: Գոնե այս երեկո երեխային հա գիստ թող: Եղա՞վ:

— Այո, այո, հայրիկ,— պատասխանեց Քեթրինը,— բայց ես ուզում եմ տեսնել նրան, նա ոչ մի անգամ դուրս չնայեց:

Կառքը կանգ առավ: Քնածն արթնացավ, և քեռին նրան կառքից դուրս բերեց ու կանգնեցրեց գետնին:

— Սա, լինթըն, քո քեռու աղջիկն է՝ Քեթին,— ասաց նա, իրար միացնելով նրանց փոքրիկ ձեռքերը:— Նա արդեն սիրեց քեզ, իսկ դու նրան չվշտացնես, ալս գիշեր լաց չի նես: Հիմա աշխատիր ուրախ լինել. ճամփորդությունն ավարտվեց, այժմ դու ուրիշ անելիք չունես, բացի այն, որ հանգստանաս ու զվարճանաս, ինչպես կամենում ես:

— Քնել եմ ուզում,— պատասխանեց տղան, խուսափելով Քեթրինի բարեկից: Նա մատները մոտեցրեց աչքերին, որ սրբի երեացող արցունքները:

— Դե, դե, իմ լավ բալիկ,— շնչացի ես և նրան ներս տարա:— Հիմա Քեթրինն էլ լաց կլինի. հապա մի տեսեք, թե ինչպես է նա ձեզ խղճում:

Զգիտեմ, արդյոք Քեթին խղճո՞ւմ էր տղային, թե ոչ, բայց նրա դեմքը դարձավ նույնքան տխուր, որքան և տղայինն էր. նա վազեց հոր մոտ: Երեքը միասին մտան սուռն, բարձրացան գրադարան, որտեղ թեյն արդեն պատրաստ դրված էր:

Ես լինթընի հագից հանեցի թիկնոցն ու գլխարկը և նըստեցրի աթոռին՝ սեղանի մոտ, բայց հենց որ նստեց, նորից սկսեց արտաչալ: Տերս հարցրեց, թե ի՞նչ է պատահել:

— Ես չեմ կարող աթոռին նստել,— հեծկլտաց տղան:

— Այն ժամանակ պառկիր բազմոցին, իսկ էլլենը քեզ թեյ կտա,— համբերությունամբ պատասխանեց քեռին:

Ես տեսնում էի, որ քեռին քմահաճ ու հիվանդոտ տղայի պատճառով բավականին հոգնել էր ճանապարհից:

Լինթընը քարշ գալով մի կերպ մոտեցավ բազմոցին և պառկեց: Քեթին, բաժակը ձեռքին, նստեց նրա մոտ, ոտքերի տակ դրվող աթոռակին:

Սկզբում լուռ նստած էր, բայց դա երկար չէր կարող տևել: Քեթին վճռեց հորաքրոջ փոքր որդուն դարձնել շփաշած, հրես առած տղա, որպիսին ուզում էր, որ նա լինի,

սկսեց շոյել նրա գանգուրները, համբուրել այտիկը և թեյ խմացնել իր պնակից, ասես նա մանկիկ լիներ: Տղային դա դուր եկավ, որովհետև նա հենց փոքր երեխայի պես էր. աչքերը սրբեց, և մի թույլ ժպիտ լուսավորեց նրա դեմքը:

— Մեզ մոտ շատ լավ կզգա,— ասաց իմ տերը՝ մի րոպե ղննելով նրան:— Եթե միայն կարողանանք պահել նրան մեզ մոտ, էլլենու Իր հասակակցի ընկերակցութեամբ նա իսկույն կաշխուժանա: Կուզենա ուժ հավաքել և կկազդուրվի:

— Այո, եթե միայն կարողանանք նրան պահել մեզ մոտ,— մտածում էի ինքս ինձ և այդ մասին խորհելիս խոր վիշտ զգացի, շատ քիչ հույս կար: Իսկ հետո մտածեցի, ինչպե՞ս կասրի այս տկար կակր Մուկեզին հողմերի դարավանդում այնպիսի դաստիարակներով ու ընկերներով, ինչպիսիք էին նրա հայրն ու Հերթընր:

Մեր կասկածները շուտ իրականացան, նույնիսկ ավելի շուտ, քան ակնկալում էի: Թեյից հետո երեխաներին տարա վերև, նստեցի լինթընի մոտ, մինչև որ քնեց. նա ինձ ոչ մի կերպ բաց չէր թողնում: Ասյա իջա ներքև և նախասենյակում, սեղանի մոտ կանգնած վառում էի ննջասենյակի մոմը միստր լինթընի համար, երբ սպասուհին խոհանոցից ներս վազելով հայտնեց, որ դռան մոտ սպասում է Ջոզեֆը, միստր Հիթքլիֆի ծառան, և ուզում է խոսել տանտիրոջ հետ:

— Նախ կհարցնեմ, թե ի՞նչ է ուզում,— բավականին վախեցած ասացի ևս,— ինչպե՞ս կարելի է անհանգստացնել մարդկանց այս ուշ ժամին և այն էլ այն դեպքում, երբ նրանք երկար ճամփորդութունից հետո, նոր են տեղ հասել... շեմ կարծում, թե տերը համաձայնի խոսել նրա հետ:

Մինչ ևս խոսում էի, Ջոզեֆը խոհանոցով անցավ, մտավ նախասենյակ և կանգնեց իմ առջև: Կիրակնօրյա զգեստով, թթված ու կեղծավոր իր դեմքով, մի ձևով՝ դիխարկը բռնած, իսկ մյուսում՝ ձևավորապես, նա երկար մաքրում էր կոշիկները խորի վրա:

— Բարի երեկո, Ջոզեֆ,— ասացի սառնութեամբ:— Ի՞նչ գործ է ձեզ բերել այստեղ գիշերվա կեսին:

— Պետք է խոսեմ միստր լինթընի հետ,— պատասխանեց նա, արհամարհական շարժումով մի կողմ հրելով ինձ:

— Միստր լինթընը պատրաստվում է քնելու, հիմա, հա-



Վատացած եմ, շի ուզենա լսել ձեզ, եթե ձեր հաղորդելիք լուրը կարևոր լուր չէ, — շարունակեցի ես: — Ավելի լավ է, նստեք այդտեղ և ինձ վստահեք ձեզ հանձնարարված գործը:

— Ո՞րն է նրա սենյակը, — պնդում էր նա իրենը՝ զննելով փակ դռների շարքը:

Սա տեսա, որ նա հակված չէ ընդունելու իմ միջնորդությունը, ուստի բարձրացա դրադարան և հայտնեցի տիրոջս անկող այցելուի մասին, իւրհուրդ տվեցի հետ ուղարկել նրան և ասել, որ առավոտյան գա:

Միստր Լինթընը շհասցրեց ինձ լիազորել այդ անելու, որովհետև Ջոզեֆը, իմ հետևից բարձրանալով, իրեն գցեց սենյակ, բազմեց սեղանի հեռավոր անկյունում, երկու ափերը դրեց իր ձեռնափայտի զլխիկին և սկսեց խոսել բարձր ձայնով, կարծես կանխատեսելով ընդդիմություն:

— Հիթքլիֆը ինձ ուղարկել է իր տղային տանելու և պատվիրեց առանց նրա շվերադառնալ:

էդգար Լինթընը մի բոլոր լուռ մնաց, նրա դեմքը տխրությունից խիստ մռայլվեց: Նա առանց այդ էլ կխղճար տղային, բայց հիշեց Իզաբելլայի հույսերն ու վախը, նրա բուռն ցանկությունը, որ որդու խնամքը և հոգսը ինքը վերցնի իր վրա, վշտացավ քրոջորդուն հորը հանձնելու մտքից և մտահոգված մտածում էր, թե ինչպես խուսափի այդ բանից: Բայց ոչ մի բան չկարողացավ հնարել. եթե ցանկություն հայտնեք տղային թողնել իր մոտ, Հիթքլիֆն ավելի ուժեղ կպնդեր իրենը, ուրիշ բան չէր մնում անել, քան ենթարկվել: Եվ, սպայան, իմ տերը շցանկացավ քրոջ որդուն անկողնուց վերկացնել:

— Հայտնեք միստր Հիթքլիֆին, — հանգիստ պատասխանեց նա, — որ նրա որդին վաղը կգա Մուլեգին հողմերի դարավանդ: Նա արդեն քնած է, խիստ հոգնած, և հիմա շի կարող այդպիսի ճանապարհ գնալ: Կարող եք նրան նույնպես հայտնել, որ Լինթընի մայրն ուզում էր, որ երեխան մնա իմ խնամակալության ներքո. ներկայումս տղայի առողջությունը շատ հուսադրող վիճակում է:

— Ո՞՞՛շ, — ասաց Ջոզեֆը՝ գավազանը խփելով հատակին և ընդունելով կեղծ հեղինակավոր տեսք: — Ո՞՞՛շ: Դա մեզ համար ոչ մի նշանակություն չունի: Հիթքլիֆը հաշվի

չի առնի ո՛չ մոր, և ո՛չ էլ: ձեթ ցաւ-չութ յունց: Նա այստանա-
ջում է իր որդուն, ես նրան պետք է տանեմ. վճիռք:

— Այսօր դուք նրան շե՛ք տանի,— վճռականորեն ասաց
լինթընը:— Անմիջապես հեռացեր: Եվ իմ ասածը հայտնեք
ձեր տիրոջը: Էլլին, ցույց տվեք նրան աստիճանների տեղը:
Գնացեք. .

Նա բռնեց զայրույթով համակված ծերունու թևից, դուրս
տարավ սենյակից և դուռը կողպեց:

— Լա՛վ, — դուռաց Ջոզեֆը, դանդաղորեն հեռանալով:—
Վաղը նա ինքը կգա. հապա մի տեսնեմ, թե նրան ինչպես
եք տանից դուրս անում:

ԳՆՈՒՆ ՔՍԱՆԵՐՈՐԴ

Այդ սպառնալիքի վտանգից խուսափելու համար, միտք
լինթընը հանձնարարեց ինձ վաղ առավոտյան տղային միտք
Քեթիի ձիով տանել հոր մոտ և ասաց.

— Քանի որ մենք հիմա ոչ մի ազդեցութուն՝ ո՛չ լավ,
ո՛չ էլ վատ, չենք կարող ունենալ նրա ճակատագրի վրա,
աղջկաս մի ասեք, թե նա ուր է գնացել: Այսուհետև Քեթին
չի կարող շփվել նրա հետ և ավելի լավ է՝ շիմանա, որ նա
ապրում է մոտիկ մի տեղ, այլապես կձգտի այցի գնալ Դա-
րավանդ. միայն ասեք, որ հայրն անսպասելի կերպով ուղար-
կեց նրա հետևից և տղան հարկադրված էր գնալ:

Լինթընը չէր ուզում անկողնուց վերկենալ առավոտյան
ժամը հինգին և վարմացավ, լսելով, որ կրկին պետք է ճա-
նապարհ գնա, բայց նրան մխիթարելու նպատակով ես հայտ-
նեցի, որ մի որոշ ժամանակ նա պետք է ապրի իր հոր՝ միտք
Հիթթլիֆի մոտ, որ հայրը խիստ ցանկանում է տեսնել որ-
դուն և այդ բավականությունը չի ուզում հետաձգել, սպա-
սելով, որ տղան ճանապարհից հանգստանա:

— Լա՛յրս, — ճշաց տղան, շփոթված:— Մայրս երբեք
չէր ասում, որ ես հայր ունեմ: Որտե՞ղ է նա ապրում: Ավելի
լավ է, որ մնամ քեռուս մոտ:

— Նա մոտիկ է ապրում Ագարակատանը,— պատասխա-

նեցի էս, — այ ս'յն բուրքերի հեռեր, դա հեռու չէ, երբ կազդուրվեք, ոտքով կարող եք գալ այստեղ: Եվ դուք պետք է ուրախանաք, որ գնում եք տուն նրան տեսնելու: Պետք է աշխատեք սիրել նրան, ինչպես սիրում էիք ձեր մորը, այն ժամ սնակ նա էլ ձեզ կսիրի:

— Բայց ինչո՞ւ ես առաջ նրա մասին չէի լսել, — հարցրեց Լինթընը: — Ինչո՞ւ նա մորս հետ միասին չէր ապրում, ինչպես ապրում են ուրիշները:

— Գործերը նրան պահում էին հյուսիսում, — պատասխանեցի էս. — Իսկ ձեր մոր թույլ առողջությունը պահանջում էր, որ նա ապրի հարավում:

— Իսկ ինչո՞ւ մայրս ինձ չէր պատմում նրա մասին, — սնդում էր տղան: — Նա հաճախ խոսում էր քեռուս մասին, և ես շատ վաղ սովորեցի սիրել նրան: Ինչպե՞ս սիրեմ հայրիկին: Ես նրան չեմ ճանաչում:

— Օ՛հ, բուրք երեխաները սիրում են իրենց ծնողներին, — ասացի էս: — Գուցե ձեր մայրը մտածում էր, որ եթե հաճախ խոսեր նրա մասին, վայ թե ձեր մեջ ցանկություն առաջանար գնալ նրա մոտ: Դե, շուտ, շտապեք: Այսպիսի զեղեցիկ առավուր ձեզ կանուխ գնալը շատ ավելի հաճելի է, քան մի ավելորդ ժամ քնելը:

— Եվ նա էլ մեզ հետ կգա՞, — հարցրեց տղան, — այն փոքրիկ աղջիկը, որին երեկ տեսա:

— Ոչ հիմա, — պատասխանեցի էս:

— Իսկ քեռի՞ն, — շարունակում էր նա:

— Ոչ: Ես կուղեկցեմ ձեզ, — ասացի էս:

Լինթընը նորից դուրսը դրեց բարձին և ընկավ խոր մտածմունքի մեջ:

— Առանց քեռու չեմ գնա, — ի վերջո հայտարարեց նա: — Ինչպե՞ս իմանամ, թե ո՞ւր եք ինձ տանելու:

Փորձեցի համոզել նրան, ասացի՝ լավ չի անում, որ չի ցանկանում հորը տեսնել: Բայց նա համառորեն չէր ուզում հագնվել, և ես հարկադրված եղա օգնություն կանչել տիրոջը, որպեսզի Լինթընին մահճակալից դուրս բերիմ:

Մեր մի քանի խարուսիկ հավաստիացումներից հետո, որ կրացակայի միայն կարճ ժամանակով, և որ միստր էդգարն ու Քեթին կայցելեն իրեն, ի վերջո, խեղճ տղան վերկացավ:

Ես հնարում էի և այլ սին խոստումներ, որոնք ժամանակ առ ժամանակ կրկնում էի ամբողջ ճանապարհին:

Մաքուր օդը, հավամրգենու բուրմունքը, պայծառ արևը և Միննիի թեթև արշավը շուտով փարառեցին նրա հուսահատութունը: Նա սկսեց հարցեր տալ իր նոր տան և նրա ինակիչների մասին ավելի ու ավելի մեծ հետաքրքրությամբ ու աշխուժությամբ:

— Մուկգին հողմերի դարավանդը կեռնեխ ազարակատան պես հաճելի՞ տեղ է,— հարցրեց նա. շուտ հկավ և վերջին անգամ նայեց հովիտին, որտեղից բարձրանում էր թեթև մշուշ, որ դանդաղոր ամպի պես փովել էր երկնքի կապույտ եզրին:

— Տունը մերի պես շատ թաղված չէ կանաչ ծառերի մեջ,— պատասխանեցի ես,— և այնքան էլ մեծ չէ, բայց այդտեղից բացվում է ամբողջ գավառի գեղեցիկ տեսարանը, և օդն էլ այդտեղ ձեռք համար ավելի առողջարար, ավելի զով և ավելի շոր է: Շենքը գուցե սկզբում ձեռք հին ու մռայլատես թվա, բայց դա պատվարժան տուն է և ամենալավն է այս կողմերում, Ազարակատնից հետո: Եվ դուք հաճույքով կգրոսնեք հավամրգու դաշտերում: Հերթըն էրնշուն նույնպես միսս Քեթիի քեռու տղան է, ուրեմն և ձեր ազգականն է, նա ձեռք ցույց կտա բոլոր հրաշալի տեղերը, լավ հղանակին դուք կարող եք հետևել դիրք վերցնել և կանաչների մեջ մի որևէ տեղ նստել ու կարդալ. և ձեր քեռին էլ ձեռք իր հետ ժամանակ առ ժամանակ կտանի զրոսանքի. նա հաճախ է զբոսնում սարերում:

— Իսկ ինչպիսի՞ն է իմ հայրը,— հարցրեց նա:— Քեռուս պես նա՞ էլ է երիտասարդ ու գեղեցիկ:

— Նա էլ է երիտասարդ,— ասացի ես,— բայց նրա աչքերն ու մազերը թխագույն են. տեսքով ավելի խիստ, ավելի բարձրահասակ և ավելի խոշոր է: Սկզբում գուցե նա ձեռք սիրալիր ու բարի շթվա, որովհետև այլ խառնվածքի տեր մարդ է, բայց դուք պետք է նրա հետ անկեղծ ու սիրալիր լինեք: Նա, իհարկե, ձեռք ավելի շատ կսիրի, քան որևէ քեռի, որովհետև դուք նրա հարազատ որդին եք:

— Թխագույն մազեր ու աչքեր,— մտածկոտ կրկնեց կինթընը:

— Չեմ կարողանում նրան պատկերացնել: Ուրեմն ես նրան նման չեմ, մի՞թե նման եմ:

— Այնքան էլ չէ,— պատասխանեցի ես.— Ոչ մի բանով,— մտածեցի ես՝ աստուածանքով դիտելով իմ ուղեկցի դեմքի սպիտակ մաշկը և նուրբ կազմվածքը, նրա խոշոր թախծագորով աչքերը՝ իր մոր աչքերը, եթե մի պահ դրանք չէին փայլում հիվանդադին հուզմունքից:

— Ի՞նչ տարօրինակ է, որ նա երբեք չէր այցելում մայրիկին ու ինձ,— շնչաց կինթընը:— Երբևէ աեսե՞լ է նա ինձ: Եթե այո, ապա, երևի շատ: Գոքը երեխա եմ եղել: Ես ոչ մի բան նրա մասին չեմ հիշում:

— Դե, ինչ ասեմ, միստր կինթըն,— ասացի ես,— երեք հարյուր մղոնը մեծ տարածություն է, իսկ սուսը տարին մեծահասակ մարդուն այնքան երկար չի լիվում, որքան ձեզ: Հավանաբար միստր Հիթրիֆը ամեն տարի ցանկացել է գալ ձեզ մոտ, բայց երբեք մի որևէ առիթ չի եղել, իսկ այժմ արդեն շատ ուշ է: Նման հարցերով նրան մի ձանձրացրեք. իզուր տեղը միայն կվրդովեք նրան:

Տղան լիովին սուզվեց իր խոհերի մեջ և լուռ մնաց, մինչև որ մենք կանգ առանք Ազարակատան պարտեզի դարպասի առաջ: Ես հետևում էի նրա դեմքին, որպեսզի որսամ տպավորությունը: Նա լրջորեն և ուշադրությամբ զննում էր շենքի փորագրված ճակատը և ցածր պատուհանները, այս ու այն կողմ ցրված փշահարկաբեկի թվերը, կռացած եղևնիները և ապա գլուխը ճռճեց. հոգու խորքում նա հավանություն չտրվեց իր նոր բնակավայրի արտաքին տեսքին, բայց բանականությունը թելադրում էր զսպել դժգոհությունը, որի համար տանը կարող էր վարձատրում լինել: Նա դեռ ձիուց չէր իջել, երբ ես գնացի և բաց արի դուռը: Ժամը վեցն անց էր կես. ընտանիքը հենց նոր էր ավարտել նախաճաշը, և սպասուհին հավաքում էր սեղանը: Զոզեֆը կանգնած էր իր տիրոջ բազկաթոռի մոտ և ինչ-որ բան էր պատմում մի կաղ ձիու մասին, իսկ Հերթընը պատրաստվում էր գնալ խոտ հնձելու:

— Բարե՛, Նելլի,— ինձ տեսնելով, ասաց միստր Հիթրիֆը:— Վախենում էի, որ ինքս ստիպված կլինեմ գալ իմ

սեփականութեան հետևից: Դու նրան բերեցիր, այնպես չէ՞: Տեսնենք նրանից մի խելոք քան կատացվի, թե ոչ:

Նա վերկացավ, մոտեցավ դռներ: Հերթընն ու Ջողեֆը զարմանքից բերանները բաց հետևեցին նրան: Խեղճ կինընը իր երկշտ հայացքով նայում էր մերթ մեկին, մերթ մյուսին:

— Անկասկած,— ասաց Ջողեֆը, լուրջ հայացքով տղային զննելուց հետո:— Ձեզ խաբել են, տեր իմ, սա աղջիկ է:

Հիթթլիֆը սեևուն հայացքով շահեց շփոթված տղային և արհամարհանքով սկսեց ծիծաղել:

— Աստված իմ, ինչպիսի՜ գեղեցկություն: Ի՞նչ սիրելի, սքանչելի էակ է,— բացականչեց նա:— Մի՞թե նրան կերակրել են միայն խխունջով ու թթված կաթով, Նելլի: Թող հողիս անիծվի, շփրկվի, ախր, նա ավելի վատ է, քան ես ակընկալում էի: Իսկ ես, սատանան տանի, լավատեսներից շեմ:

Սա դողդողացող և շփոթված տղային խնդրեցի ձիուց ցած իջնել և ներս անցնել: Նա լիովին շհասկացավ, թե ինչ էին նշանակում հոր ասած խոսքերը և դրանք իրե՞ն էին վերաբերում, թե ոչ, դեռ համոզված չէր, որ այդ մոռյլատես ծաղրող անծանոթը իր հայրն է: Բայց նա տագնապած կպավ ինձ, իսկ երբ միտոր Հիթթլիֆը նստեց և ասաց նրան. «Եկ այստեղ», նա դեմքը սեղմեց ուսիս և սկսեց լաց լինել:

— Դե, դե,— ասաց Հիթթլիֆը և, ձեռքը մեկնելով, կոպտությունմբ իր կողմը քաշեց, սեղմեց նրան ծնկների արանքում, ապա, կզակից բռնելով, բարձրացրեց գլուխը:— Դա ինչ հիմարություն է: Մենք շենք ուզում վիրավորել քեզ, կինըն,— դա քո անո՞ւնն է: Դու քո մոր տղան ես, ամբողջապես նրան ես քաշել: Իսկ ինձնի՞ց ինչ կա քո մեջ, ծվծվացող ճուտ:

Նա հանեց տղայի գլխարկը և վշագույն խիտ գանգուրները հետ տվեց ճակատից, շոշափեց նրա նուրբ թևերը, փոքրիկ մատները, և քանի դեռ շարունակվում էր քննությունը, կինընը դադարեց լաց լինելուց և իր խոշոր կապույտ աշքերը բարձրացրեց, որպեսզի ինքն էլ զննի իրեն քննողին:

— Դու ինձ ճանաչո՞ւմ ես,— հարցրեց Հիթթլիֆը՝ համոզվելով, որ այդ մարմնի բոլոր անդամները հավասարապես թույլ ու նվազ են:

— Ոչ,— ասաց կինընը, անմիտ սարսափը աշքերում:

— Ք... Թ դու, իհարկե, լսե՞լ ես իմ մասին:

— Ոչ,— կրկնեց նա:

— Ո՛չ: Ամոթ քո մորը, որը իր որդուն երբեք որդիական հարգանք չի ներշնչել իմ նկատմամբ: Ուրեմն, ես կասեմ քեզ, դու իմ որդին ես, իսկ մայրդ շար, անպիտան կին էր, եթե քեզ չէր ասում, թե ինչ տեսակ հայր ունես դու: Հիմա հարկավոր չէ կծկվել և կարմրել: Թեև դա վկայում է, որ քո արյունը սպիտակ չէ: Լավ տղա եղիր և ինձ մոտ քեզ լավ կզգաս: Նեւի, եթե հոգնել ես, կարող ես նստել, եթե ոչ՝ վերադարձիր տուն: Ես հասկանում եմ, որ դու Ազարակատանը հաշիվ պիտի տաս այն ամենի մասին, ինչ լսել ու տեսել ես այսսեղ, բայց քանի դեռ դու այստեղ ես, այս գործը չի հարթվի:

— Լավ,— պատասխանեցի ես:— Հույս ունեմ, որ դուք լավ կվերաբերվեք տղային, միտք Հիթքլիֆ, և նրան երկար չեք պահի ձեզ մոտ: Մի մոռացեք, որ աշխարհում նա ձեր միակ հարազատ էական է, որպիսին դուք երբևէ ճանաչել եք:

— Ես շատ բարի կլինեմ նրա հանդեպ, մի վախեցեք,— ծիծաղելով ասաց նա:— Միայն թե թող ուրիշ ոչ ոք բարի չլինի նրա նկատմամբ. ես խանդոտ եմ և ուզում եմ ամբողջապես աիրել նրա ղգացմունքներին: Եվ որպեսզի անմիջապես ցույց տամ իմ բարությունը, Ջոզեֆ, երեխային նախաճաշելու մի բան բեր: Հերթըն, դու սատանայի ճուտ, կորիք գնա քո աշխատանքին: Հա, Նեւի,— ավելացրեց նա, երբ նրանք հեռացան,— իմ որդին ձեր Ազարակատան ապագա տերն է, և մինչև նրա ժառանգորդը դառնալը, ես չէի ուզենա, որ նա մեռնի: Բացի այդ, նա իմն է, ես ուզում եմ հաղթող հանդիսանալ և տեսնել, որ իմ շառավիղը դարձել է նրանց կալվածքների օրինական տերը, նրանց երեխաները կաշխատեն իմ որդու մոտ և օրավարձով կմշակեն իրենց հայրերի հողը: Սա է այն միակ նկատառումը, որի պատճառով ես պատրաստ եմ իմ տանը հանդուրժել այդ լակոտին, ես նրան արհամարհում եմ այն բանի համար, որ նա այդպիսին է, ատում եմ նրան այն հուշերի համար, որ նա վերակենդանացնում է: Բայց այդ նկատառումը միակ միջոցն է: Տղան ինձ մոտ միանգամայն ապահով կլինի, և նրա հետ կվարվեն նույնպիսի հոգատարությամբ, որպիսի հոգատա-

բությամբ քո տերը վարվում է իր աղջկա հօտի Շոտի վրո՛ւմ։
պատրաստել եմ տվել ամենալավ ճաշակով կահավորված մի
սենյակ, վարձել եմ ուսուցիչ, որը շաբաթը երեք անգամ
քսան մղոն տարածությունից կգա տղային սովորեցնելու աշխատեմ
ամենը, ինչ նա կուզենա սովորել։ Հերթընի՛ն հրամայել եմ,
որ հնազանդվի նրան, և, իրաք, ամեն ինչ կարգավորել եմ
այնպես, որ նա լինի վեհ և բարեկիրթ, ավելի բարձր կանգ-
նած լինի բոլոր նրանցից, ում հետ հաղորդակից կլինի։ Բայց
ցավում եմ, որ նա այդքան քիչ է արժանի իմ ջանքերին և
եթև ցանկանում եմ աշխարհում որևէ բարիք նրա համար,
ապա կուզենայի իմ որդու մեջ դտնել հպարտության արժանի
առարկա. ինձ դառնորեն հիասթափեցնում է ողորմելի լակոտի
դեմքը, այն ո՛նց որ շիջուկ լինի։

Նա դեռ չէր վերջացրել, ևրբ Ջոզեֆը վերադարձավ կա-
թով, վարսակով շիլայի ամանը ձեռքին և դրեց այն կինթընի
առաջ։ Նա զղվանքով նայեց հասարակ ուտելիքին և հայտա-
բարեց, որ չի կարող ուտել։

Ես տեսնում էի, որ ծեր ծառան նույնպես բաժանում էր
իր տիրոջ արհամարհանքը արեխայի նկատմամբ. թեև ստիպ-
ված էր թաքցնել իր զգացմունքները, որովհետև Հիթքլիֆը
ենթականերից պահանջում էր հարգանքով վերաբերվել իր
որդուն։

— Չե՞ք կարողանում ուտել,— կրկնեց Ջոզեֆը, նայելով
կինթընի երեսին, և շշնջոցով ասաց, վախենալով, որ իրեն
կլսեն։— Բայց միտար Հերթընը փոքր ժամանակ, ուրիշ բան
չէր ուտում, իսկ այն ինչ լավ էր նրա համար, կարծում եմ,
լավ է և ձեզ համար։

— Ես դա շեմ ուտի,— դայրացած առարկեց կինթընը։—
Տարեք։

Ջոզեֆը վրդովված ճանկեց ամանը և բերեց մեզ մոտ։

— Հապա ասեք, բա սա անհամ ուտելիք է,— հարցրեց
նա՝ ամանը խոթելով Հիթքլիֆի քթի տակ։

— Ինչո՞ւ է անհամ,— տասց Հիթքլիֆը։

— Բա ինչո՞ւ է ձեր նրբաճաշակ տղան ասում, որ չի կա-
րող ուտել։ Ամեն ինչ ճիշտ է արված։ Նրա մայրն էլ էր հենց
այդպիսին, մենք բոլորս երևի շափաղանց կեղտոտ էինք,
որ ցորեն Շանեհինք և հաց թխեհինք իր համար։

— Բարձե ինձ հիշեցնել նրա մեր մաւին, — ասաց բարկացած տերը: — Մի ուրիշ բան տուր, որ կարողանա ուտել, և վերջ: Ինչո՞վ էիք սովորաբար նրան կերակրում, Նելլի:

Ես խորհուրդ տվեցի տղային կաթ կամ թեյ թալ, և տընտեսուհուն հրամայվեց պատրաստել ինչ-որ հարկավոր է:

Գուցե, մտածում էի ես, հոր եսամոլութունը, օգտակար կլինի որդուն: Հիթքլիֆը տեսնում է, որ տղան նուրբ կազմվածք ունի, ուրեմն պետք է լավ վարվել նրա հետ: Միստր էդգարը կհանգստանա, երբ հայտնեմ նրան, թե Հիթքլիֆի քմահաճույքն ինչ շրջադարձ ընդունեց:

Եվ պատրվակ չգտնելով ավելի երկար մնալու, ես կամաց հեռացա, քանի դեռ լինթընը դբաղված էր նրանով, որ երկշտաբար մերժում էր գամփոերից մեկի բարեկամական խաղը իր հետ: Բայց նա շափից դուրս աշալուրջ էր, և ինձ շհաջողվեց խաբել նրան. հենց որ դուռը հետևիցս ծածկեցի, լսեցի հեկեկոց և մի սուր ճիչ:

— Մի լքեք ինձ: Ես այստեղ մնացողը չեմ, ես այստեղ չեմ մնա:

Ապա դռան փականքը բարձրացավ և ընկավ. լինթընին թույլ շտվեցին դուրս վազել: Ես նստեցի Միննիին և վարգով քշեցի: Սրանով ավարտվեց իմ կարճատև խնամակալութունը:

ԳՆՈՒՆ ՔՍԱՆՄԵԿԵՐՈՐԴ

Այդ օրը փոքր Քեթիի պատճառով մենք ընկանք անհաճելի վիճակի մեջ: Նա շատ ուրախ տրամադրությամբ վերկացավ՝ տենչալով տեսնել հորաքրոջ տղային, նրա գնալու լուրը լսեց այնպիսի անդուսպ արցունքներով ու գանգատներով, որ էդգարն ստիպված էր հանգստացնել նրան, հավաստիացնելով, որ տղան շուտով կվերադառնա, սակայն, ավելացրեց. «Եթե ինձ հաջողվի բերել նրան». իսկ դրա համար ոչ մի հույս չկար:

Խոստումը Քեթիին մի քիչ հանգստացրեց, բայց ժամանակն ավելի դուրավոր դուրս եկավ. թեև նա մերթ ընդ մերթ

հարցնում էր հորը, թե Լինթընը երբ կվերադառնա, բայց մինչև տղային նորից աեսնելը, նրա դիմագծերն այնքան աղուտացան աղջկա հիշողության մեջ, որ շճանաչեց նրան:

Երբ հանդիպում էի Մուեգին հողմերի դարավանդից գործով Գիմմերթըն եկած տնտեսուհուն, միշտ հարցնում էի, թե ինչպես է իրեն զգում ջահել տերը, որովհետև պատանին ապրում էր համարյա նույնպիսի ինքնամփոփ կյանքով, ինչպես Քեթրինը, և երբեք ոչ մի տեղ չէր երևում: Տնտեսուհու խոսքերից գիտեի, որ առաջվա պես նրա առողջությունը թույլ է, և նա բոլոր տնեցիների համար հուզեմաշ բեռ է դարձել: Ասում էր, որ միտար Հիթրլիֆը, ըստ երևույթին, շարունակում էր նրան ատել և գնալով ավելի խոր, թեսելտե ջանք էր թափում թաքցնել այդ: Տղայի ձայնի ամեն մի հնչյունը գարշանք էր ներշնչում նրան, և նա մի քանի րոպե անգամ չէր կարողանում նստել որդու հետ նույն սենյակում:

Նրանք հաղվազեպ են իրար հետ խոսում: Լինթընը դասերն է սովորում և երեկոներն անց է կացնում փոքր սենյակում, որը նրանք կոչում են հյուրասենյակ կամ էլ ամբողջ օրը պառկած է մնում անկողնում, որովհետև շարունակ հապում է, հարբուխ ընկնում, տառապում է թուլությունից և ամեն տեսակ ցավերից:

— Ես նրանից ավելի երկշոտ հրեխա երբևէ չեմ տեսել, — ավելացրեց կինը, — չեմ տեսել որևէ մեկին, որն այդպես հոգ տաներ ինքն իր մասին: Եթե ուշ երեկոյան պատուհանը բաց եմ թողնում, նա իրեն զցում է պատուհանի մոտ: Օ՛, պիշերվա օգը կսպանի նրան: Ամառվա կեսին էլ պետք է կրակ վառես նրա համար, իսկ Ջուզեֆի ծխամորճի ծո՛ւխը՝ թույն է նրա համար. նրան միշտ պետք է տալ քաղցրավենիք, համեղ ուտելիքներ և կաթ, կաթ, անվերջ, իսկ թե ինչպես ենք մենք ձմեռը տանջվում՝ դա նրան շի հետաքրքրում: Մորթե թիկնոցի մեջ փաթաթված նստում է իր բազկաթոռին, բուխարու մոտ. ամբողջ օրը տուր կրակարանի երկաթե դարակում բոված հաց, ջուր կամ էլ մի այլ թմրեցնող ջրալի բան, որ ըմպի, իսկ եթե Հերթընը, խղճալով, դա դբաղեցնի նրան՝ Հերթընը թեև կոպիտ է, բայց շարակամ չէ, ապա, հավատացե՛ք, նրանք կբաժանվեն իրարից՝ մեկը հայհոյելով, մյուսը՝ լաց լինելով: Կարծում եմ, որ եթե Լինթընը իր սրդին չլիներ,

տանտերը ուրախ կլինեն, որ Հերթընը ջարդի, սպանի նրան: Եվ նա, համոզված եմ, չէր հանդուրժի և շեմքից նրան դուրս կվճռեր, եթե կիսով չափ իմանար, թե ինչպես է Լինթընը ինքն իրեն խնամում: Բայց գայթակղության այդպիսի վտանգ չի սպառնում տիրոջը: Նա երբեք չի մտնում հյուրասենյակ, իսկ եթե իր ներկայութեամբ Լինթընը տանը սկսում է իր սովորությունները ցույց տալ, նա անմիջապես տղային ուղարկում է վերնահարկ:

Այդ պատժածից ես գուշակում էի, որ պատանի Հիթքլիֆը ոչ ոքի մեջ համակրանք չգտնելով, դարձել է եսամոլ ու տհաճ, եթե միայն ի սկզբանե նա այդպիսին չի եղել: Իմ հետաքրքրությունը նրա հանդեպ բնականաբար թուլացավ, թեև իմ մեջ նրա ճակատագրի նկատմամբ առաջացավ թախիժ. ասիստում էի, որ նրան չէինք պահել մեզ մոտ:

Միստր էդգարը խրախուսում էր իմ ջանքերը, որ ավելի շատ բան իմանամ տղայի մասին: Իմ կարծիքով, նա պատրաստ էր դիմել ոխակի, որպեսզի տեսնի իր քրոջ որդուն. մեկ անգամ խնդրեց ինձ տնտեսուհուց իմանալ, թե արդյոք Լինթընը երբևէ գյուղ գալի՞ս է:

Նա ասաց, որ միայն երկու անգամ ձիով, հոր ուղեկցութեամբ եկել է գյուղ և հավատացնում էր, որ հետո այդ երկու անգամ էլ երեք կամ չորս օր խիստ հոգնած ու դադրած էր լինում:

Այդ տնտեսուհին նրանցից հեռացավ, եթե հիշողությունս ինձ չի դավաճանում, փոքրիկ Լինթընի տանը երևալուց երկու տարի հետո: Նրան փոխարինեց մեկ ուրիշը, որին ես չէի ճանաչում: Նա մինչև օրս էլ ապրում է նրանց մոտ:

Օրերը Ադարակատանը դանդաղ սահում էին իրենց նախկին ուրախ հունով, մինչև որ միսս Քեթին դարձավ տասնվեց տարեկան: Նրա ծննդյան օրը ուրախ քեֆերով չէինք նշում, որովհետև դա միաժամանակ իմ տիրուհու մահվան տարիդարձի օրն էր: Միստր էդգարն անսիրտությամբ կերպով այդ օրն անց էր կացնում զրադարանում, մենության մեջ, իսկ երբ մթնշաղին դուրս էր գալիս զբոսնելու, գնում էր Գիմմերթընի գնդակահանատուն, որտեղ հաճախ մնում էր մինչև կեսգիշեր: Այնպես որ Քեթրինին թողնում էին մենակ, որսվեսզի ինքը գտնի իր զվարճալի զբաղմունքը:

Այդ տարվա մարտի 20-ին դարնանային գնդեցիկ օր էլ, և երբ էզգարը գնաց, ջահել լեզին, զբոսանքի համար հագնւրված, իջավ ինձ մոտ և խնդրեց միասին գնալ դաշտերի կողմը զբոսնելու. հայրը թույլ էր տվել՝ մի պայմանով, որ մենք հեռու շգնանք և վերադառնանք մի ժամ հետո:

— Այնպես որ շտապիր, էլլեն,— բղավեց նա:— Ես գիտեմ, թե ուր պիտի գնանք. այնտեղ մորահավերը իրենց համար գաղութ են հաստատել, ուղում եմ իմանալ, բներ սարքե՞լ են, թե ոչ:

— Բայց դա, երևի, շատ հեռու է,— ասացի ևս, — նրանք իրենց բները դաշտի եզրին շին սարքում:

— Ձէ, հեռու չէ,— ասաց նա, — հայրիկի հետ ևս գնացել եմ այնտեղ, շատ մոտ է:

Գլխարկս դրեցի և գնացի առանց մտածելու: Քեթին ցատկոտելով վազում էր առաջ, վերադառնում էր ինձ մոտ, ջահել բարակի պես նորից էր առաջ վազում: Սկզբում ես մեծ հաճույքով ականջ էի դնում, արտույտների մերթ մոտիկից, մերթ հեռվից եկող երգին և հիանում էի երկկոյան արևի մեղմ ու ջերմ լույսով: Ես նայում էի Քեթիին՝ իմ փայփայած ուրախությանը, նրա մեջքի վրա ծածանվող ոսկեգույն խոպոպիկներին, նրա վառվռուն այտիկին, վայրի վարդի պես քնքուշ ու անարատ իր ծաղկման մեջ, և անամպ բավականութամբ փայլող նրա աչքերին: Այդ օրերին նա երջանիկ էակ էր և, ասես հրեշտակ լիներ: Ափսո՛ս, որ ինքը շէր կարողանում զոհանալ այդ երջանկությամբ:

— Հասկա ո՞ւր են ձեր մորահավերը, միսս Քեթի,— հարցնում էի ևս:— Արդեն պետք է հասած լինեինք զրանց: Ազարակատան պարտեզի ցանկապատը մնացել էր բավական հեռու՝ հետևում:

— Օհ, մի քիչ էլ գնանք, միայն մի փոքր, էլլեն,— դա նրա անփոփոխ պատասխանն էր:— Հիմա կբարձրանանք այ այն բլրակը, կկտրենք կանցնենք այն հողապատնեշը, և մինչդուռ հասնես մյուս կողմը, ես այնտեղից կքշեմ թռչուններին:

Բայց այդ բլրակներն ու հողապատնեշներն այնքան շատ էին, որ ևս, ի վերջո, սկսեցի հոգնել և նրան ասացի, որ հարկավոր է կանգ առնել ու հետ վերադառնալ:

Ես բղավում էի նրա հետևից, որովհետև, ինձնից շատ

առաջ էր անցել, նա ոչ լսում էր, ոչ էլ ուշադրութիւն էր դարձնում, առաջվա պես թռչկոտելով սլանում էր առաջ, և ես ստիպված էի հետևել նրան: Ի վերջո, սուզվեց ինչ-որ փոսի մեջ, իսկ երբ ես նրան նորից տեսա, նա արդեն երկու մղոն ավելի էր մտնցել Մուկգին հողմերի դարավանդին, քան իր սեփական տանը, տեսա, թե ինչպես երկու հոգի կանգնեցրին նրան, զգացի, որ նրանցից մեկը միստր Հիթթլիֆն էր:

Քեթին բռնվեց մորահավերի բները կողոպտելիս կամ, համենայն դեպս, դրանք փնտրելիս:

Գարավանդի հողը պատկանում էր Հիթթլիֆին, և այժմ նա կշտամբում էր որսագողին:

— Ես ոչ մի բույն չեմ քանդել և ոչ մի հատ չեմ գտել,— ասաց աղջիկը, երբ ես հասա նրանց. ի հաստատումն իր խոսքերի, նա բաց արեց ձեռքի ափերը:— Ես չէի էլ մտածում որևէ բան վերցնել, բայց հայրս ասում էր, որ այստեղ դրանք շատ-շատ են, և ես ուղում էի նայել ձվիկներին:

Հիթթլիֆը շար ժպիտով նայեց ինձ, ցույց տվեց, որ հասկացել է, թե ում է հանդիպել, հետևապես, ցույց տվեց և իր շարակամութիւնը ու հարցրեց թե ո՞վ է նրա հայրը:

— Միստր Լինթընը Կեոնեխների ազարակատնից,— պատասխանեց սղջիկը:— Ես այդպես էլ հասկացա, որ դուք շղիտեք, թե ով եմ ես, այլապես այդպես չէիք խոսի ինձ հետ:

— Ուրեմն դուք ենթադրում եք, թե ձեր հայրը վայելում է մեծ հարգանք ու պատի՞վ,— ասաց նա, կծու հեզնական տոնով:

— Իսկ ո՞վ եք դուք,— հարցրեց Քեթրինը՝ հետաքրքրութեամբ դիտելով խոսողին:— Այս մարդուն ես մեկ անգամ արդեն տեսել եմ: Ձեր որդի՞ն է: Նա դիտով ցույց տվեց մյուսին՝ Հերթընին, որը, երկու տարի ավելացնելով իր տարիքին, ոչինչ չէր շահել, բայց դարձել էր ավելի խոշոր և ուժեղ, նա թողնում էր նույն անշնորհք ու անտաշ պատանու տպավորութիւնը:

— Միսս Քեթի,— ասացի ես,— մեկ ժամի փոխարեն երեք ժամ է, ինչ մենք զբոսնում ենք: Արդեն ժամանակն է որ վերադառնանք:

— Ոչ, այս մարդը իմ որդին չէ,— պատասխանեց Հիթթ-

քլիֆը, ինձ հրելով մի կողմ:— Բայց ես որդի ունեմ, դուք նրան նույնպես տեսել եք: Թեև ձեր դայակը շտապում է, բայց կարծում եմ, վատ չէր լինի, որ դուք, ինչպես և նա, մի փոքր հանգստանայիք: Չէի՞ք շրջանցի այդ բլրակը և անցնի մեր տուն: Հանգստանալուց հետո դուք ավելի շուտ կհասնեք ձեր տուն: Ձեզ մեր տանը սիրով կընդունեն:

Ես շնչացի Քեթրինին, որ ոչ մի դեպքում չընդունի հրավերը, դա լիովին բացառվում է:

— Ինչո՞ւ,— բարձրաձայն հարցրեց նա,— շատ վաղվը-
ղելուց ես հոգնել եմ, գետինն էլ ցողով է ծածկված, չեմ կարող նստել: Գնա՛նք, էլլեն: Բացի այդ, նա ասում է, որ ես տեսել եմ իր որդուն: Կարծում եմ, որ սխալվում է, բայց գլխի եմ ընկնում, թե որտեղ է նա ապրում՝ ա՛յ այն ֆերմայում, որտեղ ես՝ մեկ անգամ եղել եմ, երբ վերադառնում էի Փենիսթըն Քրեգսից: Չե՞ք հիշում:

— Հիշում եմ:

— Դե լավ, Նելլի, լռիր. նրա համար հաճելի կլինի տեսնել մեզ: Հերթըն, աղջկա հետ առաջ անցիր: Իսկ մենք միասին կգնանք նրանց հետևից, Նելլի:

— Ոչ, նա չի գնա այնտեղ,— բղավեցի ես՝ ջանալով աղատել իմ թևը, որ նա պինդ բռնել էր, բայց Քեթին վաղելով արագորեն շրջանցեց ապառաժի ելուստը և արդեն համարյա մոտեցել էր դարպասի շեմքի քարին: Նշանակված ուղեկիցը նրան շուղեկցեց, արահետից շեղվեց մի կողմ և չբացավ:

— Միստր Հիթքլիֆ, դա շատ վատ է,— շարունակում էի ես,— դուք ինքներդ էլ դիտեք, որ լավ չեք անում: Այդտեղ նա կտեսնի Լինթընին և, հենց որ տուն վերադառնա, բոլորը կպատմի հորը, և մեղավորը կլինեմ ես:

— Իսկ ես ուզում եմ, որ նա տեսնի Լինթընին,— պատասխանեց նա:— Այս վերջին մի քանի օրը նրա տեսքն ավելի լավ է. հաճախ չի պատահում, որ լավ տեսքով երևա մարդկանց: Մենք Քեթրին կհամոզենք, որ այս այցը գաղտնի պահի: Այստեղ ի՞նչ վատ բան կա:

— Վատն այն է, որ նրա հայրը կատի ինձ, եթե իմանա, որ ես նրան թույլ տվեցի ձեր փուն մտնել և, համոզված եմ,

որ դուք շար մտադրությամբ եք աղջկան խրախուսում դիմել այդ քայլին, — պատասխանեցի ես:

— Իմ մտադրությունն անկեղծ է: Կարող եմ ձեզ հայտնել իմ մտադրությունը, — ասաց նա: — Ուզում եմ, որ ջահելները սիրահարվեն և ամուսնանան: Ես մեծահոգի կլինեմ ձեր պարոնի նկատմամբ: Նրա աղջնակը ոչ մի բանի հույս չի ունենա, բայց եթե հեռի իմ ցանկություններին, միանգամից կապահովվի իրեն՝ որպես կինթրնի համաժառանգուհի:

— Եթե կինթրնը մեռնի, — առարկեցի ես, — իսկ նրա առողջությունը շատ անհուսալի է, ժառանգորդ կգառնա Քեթրինը:

— Ոչ, չի դառնա, — ասաց նա: — Կտակում այդ մասին ոչ մի կետ չկա: Կալվաժքները որդուս հետ միասին կանցնեն ինձ, բայց դատից խուսափելու համար, էս ցանկանում եմ, որ նրանք միանան, և որոշեցի իրադործել դա:

— Իսկ էս վճռեցի, որ նա այլևս երբեք ինձ հետ միասին նորից չի մոտենա ձեր տանը, — առարկեցի ես, երբ մոտենում էինք դարպասին, որտեղ միսս Քեթրին սպասում էր մեզ:

Հիթքլիֆը խնդրեց ինձ շանհանգստանալ և, շավիղով առաջ անցնելով, շտապեց բաց անել դուռը: Իմ երիտասարդ լեդին մի քանի անգամ նայեց նրան, ասես ոչ մի կերպ չէր կարողանում հասկանալ, թե ինչ մտածի նրա մասին, բայց հիմա Հիթքլիֆը ժպտաց, հանդիպելով աղջկա հայացքին, և, երբ դիմեց նրան, նրա ձայնը հնչեց ավելի մեղմ, իսկ էս՝ հիմարս, հրեակայեցի, որ, դուցե, աղջկա մոր հիշատակը դինաթափ անի Հիթքլիֆին և թույլ շտա վնաս հասցնել նրան:

Կինթրնը կանգնած էր օջախի մոտ: Նա հենց նոր էր լերադարձել դաշտերում դրոսնելուց, որովհետև զլխարկը դեռ զլխին էր, և գոռալով կանչում էր Ջոզեֆին, որ իր համար շոր կոշիկներ բերի:

Նա իր տարիքի համեմատ բարձրահասակ էր. տասնվեց տարին դեռ չէր լրացել: Դիմադծերը զրավիչ էին, իսկ աչքերն ու դեմքի գույնը՝ ավելի պայծառ, քան էս հիշում էի, թեև դա սոսկ ժամանակավոր փայլ էր, որ առաջացել էր առողջարար օդից և ջերմացնող արևից:

— Հը, ո՞վ է դա,— հարցրեց միստր Հիթքլիֆը, դիմելով Քեթիին:— Կարո՞ղ եք ասել:

— Ձեր որդի՞ն,— ասաց նա՝ կասկածանքով զննելով մերթ մեկին, մերթ մյուսին:

— Այո, այո,— պատասխանեց նա,— բայց մի՞թե առաջին անգամ եք նրան տեսնում: Հապա մի մտածեք: Ահ, ինչ կարճ հիշողություն ունեք: Լինթըն, շե՞ս ճանաչում քո քեռու աղջկան, որի պատճառով, հիշո՞ւմ ես, մեզ բոլորիս այնքան ձանձրացնում էիր, որովհետև ուզում էիր տեսնվել նրա հետ:

— Ինչպես թե Լինթընը,— ճշաց Քեթին, այդ անունից ցնծալից զարմանքով բորբոքված:— Մի՞թե սա փոքրիկ Լինթընն է: Նա ինձնից ավելի բա՛րձր է: Ուրեմն դուք Լինթընն եք:

Պատանին մոտեցավ և ներկայացավ, աղջիկը ջերմորեն համբուրեց նրան, և նրանք նայում էին իրար՝ ասլշած այն փոփոխությունից, որ ժամանակը կատարել էր նրանցից յուրաքանչյուրի մեջ:

Քեթրինը հասել էր իր հասակի բարձրագույն կետին: Նա թմբկիկ էր, բայց և նրբակազմ ու ճկուն. նրա ամբողջ կերպարանքը փայլում էր առողջությամբ ու կայսառությունով: Լինթընի արաաքին տեսքն ու շարժումները շատ ալարկոտ էին, իսկ մարմինը անսովոր նիհար էր, բայց շարժումների նրբությունը մեղմացնում էր այդ թերությունները և նրան դարձնում բավական հաճելի մի անձնավորություն:

Իրար հետ բազում շոյանքներ փոխանակելուց հետո Լինթընի քեռու աղջիկը մոտեցավ միստր Հիթքլիֆին, որը հասպաղում էր դռան մոտ՝ իր ուշադրությունը կենտրոնացնելով սենյակում ու դրա սահմաններից դուրս գտնվող առարկաների վրա, ավելի ճիշտ, ձևացնում էր, որ զննում է միայն վերջինը, մինչդեռ իրականում դիտում էր միայն առաջինը:

— Ուրեմն դուք իմ հորաքրոջ ամուսինն եք,— ճշաց Քեթին և նետվեց ողջագուրվելու նրան:— Ծս անմիջապես զգացի, որ դուք ինձ դուր եք գալիս, թեկուզև սկզբում ջղայնացար ինձ վրա: Ինչո՞ւ Լինթընի հետ շեք գալիս Ազարակատուն: Իկյա բոլոր տարիներին ապրել հարեանությունը և ոչ մի անգամ մեզ այցելություն չղալ, դա շատ տարօրինակ է. ինչո՞ւ եք այդպես վարվում:

— Մինչև ձեր ծնվելը, ես այնտեղ շատ հաճախ էի լինում,— պատասխանեց նա:— Սակայն... Գրողը տանի: Եթե չեք կարողանում զսպել ձեր համբույրները, նվիրեք դրանք կինթընին. համբուրել ինձ, նշանակում է համբույրները քամուն տալ:

— Չար էլլեն,— բացականչեց Քեթրինը, ապա նետվելով իմ կողմը, սկսեց շոռալորեն դուրգուրել ինձ:— Չար էլլեն, խոչընդոտել ինձ, որ ես ներս շմտնեմ: Բայց այսուհետ ես ամեն առավոտ այսպիսի զբոսանք կկատարեմ, կարելի՞ է, քեռի. իսկ երբեմն էլ հայրիկին կբերեմ: Դուք ուրա՞խ կլինեք մեզ տեսնել:

— Իհարկե,— պատասխանեց քեռին, հազիվ զսպելով դեմքի ծամածոթությունը, որ հետևանք էր այն զզվանքի, որ ինքը տածում էր դեպի երկու այցելուներն էլ:— Բայց սպասեք,— շարունակեց նա, դառնալով դեպի շահել լեզին:

— Ես, դիտեք, մտածեցի, և գտնում եմ, որ ավելի լավ է ճիշտն ասել ձեզ: Միտոր կինթընը կանխակալ կարծիք ունի իմ մասին: Մեր կյանքում մի անգամ մենք ընդհարվեցինք՝ ոչ քրիստոնեաբար, դաժանորեն, և եթե դուք ասեք նրան, որ եկել եք այստեղ, նա մեկընդմիջտ ձեզ կարգելի այցելել մեզ: Հետևաբար, դուք չպետք է հիշեցնեք այդ մասին, եթե միայն անսպասման ուզում եք հանդիպել ձեր հորաբրոջ որդուն: Կարող եք դալ, եթե ձեզ հաճելի է, բայց մի հայտնեք ձեր հորը:

— Ինչո՞ւ ընդհարվեցիք,— հարցրեց Քեթրինը, խիստ վհատված:

— Նա գտնում էր, որ ես շատ աղքատ եմ, որպեսզի ամուսնանամ իր քրոջ հետ,— պատասխանեց Հիթքլիֆը,— և շատ վշտացավ, երբ քույրն ամուսնացավ ինձ հետ, դա վիրավորեց նրա հպարտությունը, և նա է՛լ երբեք չի ների ինձ:

— Ինչպիսի՞ անարդարություն,— ասաց երիտասարդ լեզին:— Որոշ ժամանակ հետո ես դա կասեմ նրան: Բայց ես ու կինթընը չենք խառնվում ձեր վեճին: Ես այլևս չեմ գա ձեզ մոտ, թող նա դա Ագարակատուն:

— Ինձ համար դա շատ հեռու կլինի,— փնթփնթաց նրա հորաբրոջ տղան,— չորս մղոն ոտքով քայլելը կսպանի ինձ: Ոչ, ավելի լավ է, որ դուք ժամանակ առ ժամանակ գաք մեզ

մոտ, միսս Քեթրին, եթե ոչ ամեն առավոտ, շաբաթը գոնե մեկ կամ երկու անգամ:

Հայրը մի ծակող արհամարհական հայացք գցեց որդու վրա:

— Վախենում են, Նելլի, որ իմ ջանքերն ապարդյուն անցնեն,— մրթմրթաց նա:— Միսս Քեթրինը, ինչպես իմ հիմարն է նրան կոչում, կհասկանա, թե ինչ արժեք ունի նա և նրան կուղարկի գրողի ծոցը: Էհ, եթե դա Հերթլընը լիներ... Գիտեք, նա որքան էլ աչքիցս ընկած լինի, օրական քսան անգամ տենչում եմ նրան. ես կսիրեի այդ պատանուն, եթե նա մի այլ մեկը լիներ: Բայց կարծում եմ, որ աղջկա սերը նրա համար վտանգավոր չէ: Ես Հերթլընին կստիպեմ կովել այդ ողորմելի արարածի դեմ, եթե նա արագ շարժվի տեղից:— Մեր հաշիվներով Լինթընը հազիվ թե դիմանա մինչև տասնութը: Օհ, սատանան տանի այդ տղային: Նա գրադված է լոկ նրանով, որ շորացնում է ոտքերը և եշրեք լի նայում Քեթրին՝ Լինթըն.

— Այո, հայրիկ,— արձագանքեց տղան:

— Մի՞թե քեռուդ աղջկան ոչինչ չունես ցույց տալու, նույնիսկ ճագար կամ աքիսի բույն: Նրա հետ մտիր պարտեղ, քանի դեռ կոշիկներդ չես փոխել, տար նաև ախոռ, թող տեսնի քո ձին:

— Իսկ դուք չէի՞ք ուզենա նստել բուխարու մոտ,— հարցրեց Լինթընը՝ դիմելով Քեթրին, նրա ձայնը ցույց էր տալիս, որ չի ուզում տեղից շարժվել:

— Զգիտեմ,— պատասխանեց Քեթրին՝ անձկալից հայացք գցելով դուռն կողմը: Նա պարզապես չէր ուզում տանը մնալ: Լինթընը տեղից չվերկացավ և ավելի ևս մոտ քաշվեց կրակին:

Հիթքրիֆը վերկացավ, գնաց խոհանոց, այնտեղից էլ բակ, կանչելով Հերթլընին:

Հերթլընը արձագանքեց, և շուտով նրանք վերադարձան միասին: Պատանին լվացվել էր, դա երևում էր նրա կարմրած այտերից ու թոց մազերից:

— Հա, ուզում էի հարցնել ձեզ, քեռի,— բղավեց միսս Քեթրին, հիշելով անտեսուհու խոսքերը:— Մի՞թե սա քեռուս տղան է:

— Այո,— պատասխանեց նա,— ձեր քեռու որդին է: Նա ձեր դուրը չի՞ դալիս:

Քեթրինը շփոթվեց:

— Մի՞թե գեղեցիկ պատանի չէ,— շարունակում էր Հիթքլիֆը:

Փոքրիկ անքաղաքավարի աղջիկը կանգնեց ոտքի մատներին և իր ասելիքը շշուշաց Հիթքլիֆի ականջին:

Հիթքլիֆը ծիծաղեց: Հերթընը մթազնեց: Ես հասկացա, որ նա շատ զգայուն էր, և այդ կասկածելի անհարգալից վերաբերմունքից, ըստ երևույթին, ազոտ կերպով գիտակցում էր իր ոչ լիարժեք լինելու հանգամանքը: Բայց նրա տերը կամ խնամակալը, փարատեց նրա դեմքի մռայլութունը՝ բացականչելով.

— Մեր բոլորիս մեջ սիրվածը դու կլինե՛ս, Հերթըն: Քեթրին ասում է, որ դու... Հա, ինչպե՞ս ասաց: Մի խոսքով, ինչ-որ մի գովելի բան... Ահա թե ինչ: Զբոսնիր նրա հետ ֆերմայում: Եվ տես, քեզ պահիր ջենտլմենի պես: Ոչ մի վատ բառ չգործածես, ապշած հայացքով մի զննիր նրան, երբ լեզին քեզ չի նայում, և շուռ մի գա, երբ նայում է քեզ, իսկ երբ խոսես, բառերը արտասանիր դանդաղ, ձեռքերդ գրպանդ մի դիր: Դե, գնա, սիրով զբաղեցրու նրան, ինչպես կարող ես:

Հիթքլիֆը հետևում էր դուլգին, երբ վերջինս անցնում էր լուսամուտի տակով: Էրնշոուն երեսը լիովին շրջել էր ուղեկցուհուց: Թվում էր, թե նա օտարերկրացու ու նկարչի հետաքրքրություններ ուսումնասիրում է ծանոթ բնատեսարանը:

Քեթրինը պատանուն նայում էր գաղտագողի հայացքով, որը ոչ մի հիացմունք չէր արտահայտում: Հետո նա իր ուշադրությունը փոխադրեց մի այլ բանի վրա, շրջապատում փնտրելով հետաքրքիր առարկաներ և թեթև քայլվածքով անցավ առաջ՝ երգելով մի ինչ-որ ուրախ եղանակ, քանի որ խոսակցությունը չէր ստացվում:

— Ես նրա լեզուն կապ եմ դցել,— նկատեց Հիթքլիֆը:— Տղան այդպես էլ չի համարձակվի մի բառ անգամ արտասանել: Նեյլի, հիշո՞ւմ ես ինձ այդ տարիքում, ոչ, ես մի քանի տարով ավելի փոքր էի: Մի՞թե ես երբևիցե նայել եմ այդ-

պես հիմարաբար, «առանց պոկ գալու», ինչպես կասեր Զոզեֆը:

— Ավելի վատ եք նայել,— պատասխանեցի ես,— որովհետև դուք դրա հետ միասին նաև մոռալ էիք:

— Ես ուրախանում եմ նրանով,— բարձրաձայն մտածելով, շարունակեց Հիթթըիֆը:— Հերթընը արդարացրեց իմ ակնկալումները. եթե ի ծնե հիմար լիներ, ես էլի զոհ կլինեի: Բայց, ախր, նա հիմար չէ, և ես կարող եմ համակրանքով վերաբերվել նրա ամեն մի հուղմունքին, որովհետև ինքս էլ եմ զգացել այդ: Ես, օրինակ, ստույգ գիտեմ, թե ինչպես է նա հիմա տանջվում, բայց դա նրա դալիք տառապանքների սկիզբն է միայն: Նա երբեք դուրս չի գա գոհակության և ազիտության հորձանուտից: Ես նրան ավելի պինդ եմ պահում, քան պահում էր ինձ նրա ստոր, անարգ հայրը, որովհետև Հերթընը հպարտ է իր վայրագությամբ: Ես նրան սովորեցրել եմ արհամարհել այն ամենը, ինչը մարդուն կենդանուց վեր է դասում, ինչպիսիք են հիմարությունն ու թուլությունը: Զե՞ս կարծում, որ Հինդլին կհպարտանար իր որդով, եթե կարողանար տեսնել նրան: Համարյա նույնքան կհպարտանար, որքան հպարտանում եմ ես իմ որդով: Բայց տարբերությունն այն է, որ մեկը ոսկի է, որով քարի պես սալարկում են, իսկ մյուսը անագ է, որ հղկվելի, փայլացվել է, որպեսզի արծաթի տեղ անցկենա: Խճր իր մեջ ոչ մի արժեքավոր բան չի բովանդակում, բայց իմ ջանքերով այդ ողորմելի արարածից, այնուամենայնիվ, մի բան դուրս կգա: Հինդլին ունեցել է հիանալի հատկություններ, բայց դրանք, կորստյան են մասնավել, դարձել են լիովին անօգուտ, ես ավստոսալու բան չունեմ, իսկ նա ավստոսալու բան ավելի շատ կունենար, քան որևէ մեկը, բայց դա ոչ մեկին այնքան հայտնի չէ, որքան ինձ: Եվ ամենից լավն այն է, որ Հերթընը, գրողը տանի, սիրում է ինձ: Համաձայնիք, որ այդ բանում ես Հինդլիից առաջ եմ անցել և եթե սրիկան կարողանար գերեզմանից վերկենալ, որ վիրավորի ինձ իր դավակի մոլորությունների համար, ես կգոբարձանայի՝ տեսնելով, թե ինչպես է որդյակը դիքսակով հորը նորից պերեզման իջեցնում, զայրանալով, որ նա համարձակվել է վիրավորել աշխարհում իր միակ բարեկամին:

Հիթբլիֆը այդպես խորհելով սկսեց քրքշալ դիվային քրքրիչով. ես չէի պատասխանում, որովհետև տեսնում էի, որ նա շի էլ սպասում պատասխանի:

Մինչդեռ մեղնից բավականին հեռու նստած նրա որդին, որ շէր կարող մեր խոսակցությունը լսել, սկսեց անհանդուստության նշաններ ցույց տալ, հավանորեն զղջալով, որ մի փոքր հոգնելուց վախենալով, իրեն զրկել էր Քեթրինի հետ ժամանակ անցկացնելու հաճույքից:

Հայրը նկատեց, որ նրա անհանգիստ աչքերը դեգերելով նայում էին լուսամուտին, իսկ ձեռքն անվճռականորեն ձրգվում էր գլխարկի կողմը:

— Վեր կաց, ծուլի մեկը,— բացականչեց նա, կեղծ բարեսրտությամբ:— Դե՛, շուտ նրանց հետևից: Նրանք փեթակների մոտով հենց նոր անցան անկյան հետևը:

Լինթընը հավաքեց իր ուժերը և հեռացավ բուխարու մոտից: Լուսամուտը բաց էր, և երբ դուրս գնաց, ես լսեցի, թե ինչպես Քեթին հարցրեց իր անխոս ուղեկցին, թե ի՞նչ է նշանակում դռան վրայի այդ մակագրությունը:

Հերթընը սեեռուն հայացքով նայեց վերև և իսկական խեղկատակի պես գլուխը քորեց:

— Ինչ-որ խճճված գրություն է,— պատասխանեց նա:— Ես չեմ կարող կարդալ:

— Չե՞ք կարող կարդալ,— ճշաց Քեթրինը:— Ես ինքս կկարդամ... Դա անգլերեն է... Բայց ես ուզում եմ իմանալ, թե այն ինչո՞ւ է այդանդ գրված:

Լինթընը սկսեց հռհռալ: Դա նրա առաջին ուրախությունն էր:

— Նա տառերը դեռ չի ճանաչում,— ասաց Լինթընը իր քեռու աղջկան:— Կհավատայի՞ք դուք, որ աշխարհում գոյություն ունի այդպիսի աներևակայելի մի բթամիտ:

— Գուցե մի քիչ ցնդե՞լ է,— լրջորեն հարցրեց միսս Քեթին:— Կամ էլ պարզապես... Հիմա՞ր է: Երկու անգամ ես հարցով դիմեցի նրան, երկու անգամ էլ միայն բութ հայացքը հառեց ինձ. կարծում եմ, որ նա ինձ շհասկացավ, ես էլ, յսկապես, հաղիվ եմ կարողանում նրան հասկանալ:

Լինթընը կրկին ծիծաղեց և հեզնական հայացքով նայեց

Հերթընին, որը, անկասկած, այդ պահին բոլորովին էլ չհասկացողի տպավորություն չթողեց ինձ վրա:

— Այստեղ ոչ մի բան էլ չկա, բացի ծուլությունից, այնպես չէ՞, էրնշոու,— ասաց նա: Իմ քեռու աղջիկը կարծեց, որ դու ապուշ ես... Ահա քեզ տառակերության նկատմամբ, ինչպես ասում ես դու, ցուցաբերած քո արհամարհանքի հետևանքը: Իսկ դուք, Քեթրին, ուշադրություն դարձրե՞լ եք նրա յորքշիրյան սոսկալի առողջանության վրա:

— Իսկ գրագիտությունից, գրողը տանի, ի՞նչ օգուտ,— դռնաց Հերթընը, որը, ի պատասխան, իր ամենօրյա գրուցակցի հետ խոսելիս, բառեր խսկույն գտավ: Նա ուզում էր դարգացնել իր առարկումը, բայց այդ երկու պատանյակները սկսեցին աղմկալից ցնծալ. իմ փոփոխամիտ օրիորդն ընկավ հրճվանքի մեջ այն գյուտից, որ Հերթընի տարօրինակ խոսակցությունը կարելի է զվարճանքի առարկա դարձնել:

— Իսկ ի՞նչ օգուտ «գրողը տանի» բառերը խոթել ամեն խոսքի մեջ,— հռնաց Լինթընը:— Հայրիկը քեզ պատվիրեց ոչ մի վատ խոսք չասել, իսկ դու առանց դրան բերանդ չես կարողանում բանալ... Աշխատիր քեզ պահել ջենտլմենի պես, դե, աշխատիր:

— Եթե դու աղջիկ չլինեիր, այլ՝ տղա, ես քեզ այս բուպին այնպե՛ս կդնքսեիր: Խղճո՛ւկ արարած,— հեռանալիս ճշաց դայրացած գեղջուկը. մինչ դեմքն այրվում էր կատաղությունից ու վիրավորանքից: Նա հասկանում էր, որ իրեն վիրավորանք հասցրին, և շփոթված ընկել էր տհաճ վիճակի մեջ:

Միստր Հիթքլիֆն էլ ինձ պես, լսելով նրանց խոսակցությունը, ժպտաց, երբ տեսավ, որ Հերթընը հեռանում է, բայց անմիջապես հետո անսովոր դարշանքով նայեց թեթևամիտ զույգին, որը հապաղելով դռան մոտ, շարունակում էր շատախոսել: Հերթընի արատներն ու թերությունները քննարկելիս, տղան բավականին աշխուժացավ և անեկդոտներ էր պատմում նրա սովորությունների մասին, իսկ աղջիկը հաճույք էր ստանում այդ ամոթ ու խայթող սրամտությունից, առանց նկատելու նրա մեջ դրսևորվող շար բնավորության ցծերը, բայց ես սկսում էի ավելի շուտ ատել, քան կարեկցել Լինթընին և որոշ չափով ներում էի հորն այն քանի համար, որ չէր գնահատում իր որդուն:

Մենք մնացինք մինչև օրվա երկրորդ կեսը, ինձ հաջողվեց միսս Քեթիին ավելի շուտ սուկել նրանցից. բարեբախտաբար, իմ տերը իր սենյակից դուրս չէր գալիս և մեր երկարատև բացակայության մասին ոչինչ չիմացավ:

Տուն վերադառնալիս հստիքով կբացատրեի, թե ինչ ափսոսանքով մարդկանցից էինք մենք ավատվել, հեռացել, բայց նա գլուխը մացրել էր, որ ևս կանխակալ կարծիք ունեմ նրանց մասին:

— Ըհը, — բղավեց նա, — դու պաշտպանում ես հորս, էլլեն, դու անաշատ չես... ես գիտեմ, այլապես ինձ այսքան տարի չէիր խաբի, չէիր հավատացնի, որ Լինթընն այստեղից շատ հեռու է ապրում: Ծիշտն ասած, ես խիստ բարկացած եմ քեզ վրա, միայն թե այնքա՛ն ուրախ եմ, որ բարկանալ չեմ կարողանում: Բայց մի խոսիր իմ Հիթքլիֆ քեռու մասին... մ'ի մոռացիր, որ նա իմ քեռին է և ես հայրիկին կհանդիմանեմ նրա հետ վեճի բռնվելու համար:

Եվ այդպես շարունակում էր նա, մինչև որ ես այլևս չփորձեցի նրան համոզել, որ սխալվում է:

Այդ երեկո նա իր հանդիպման մասին հորը ոչինչ չասաց, որովհետև միատր Լինթընին չտեսավ: Հաջորդ օրը, ի դժբախտություն ինձ, ամեն ինչ հայտնաբերվեց, և, այդուհանդերձ, ես այնքան էլ չվշտացա, մտածեցի, որ հայրն ավելի շուտ, քան ես, կարող է իր աղջկան ճիշտ ճանապարհ ցույց տալ և զգուշացնել սպառնացող վտանգից, բայց նա շատ անհամարձակ գտնվեց, որ պատճառները բավարար չափով բացատրեի, թե ինչու է ինքը ցանկանում, որ Քեթին իր կապերը խզի Դարավանդի բնակիչների հետ, իսկ Քեթրինը բավարար հիմնավորում էր պահանջում իր ինքնահաճ կամքը ճնշող սահմանափակումների դիմ:

— Հայրիկ, — բացականչեց նա հետևյալ օրը, հորը բարեկեցությամբ: — Հապա գուշակիր, թե ո՞ւմ եմ հանդիպել երեկ դաշտերում զբոսնելիս... Ա՛հ, հայրիկ, դու ցնցվեցիր, դու ճիշտ չես վարվել, այնպես չէ՞: Սո հանդիպեցի... Բայց լսիր և կտեսնես, թե ինչպես ջրի երես հանեցի քեզ և քեզ միացած էլլենին, բայց այնպես էր ձևացնում, իբր շատ է խղճում ինձ, երբ ևս վրդովված զուր տեղը շարունակում էի հույսեր փայփայել, որ Լինթընը կվերադառնա:

Քեթին ազնվորեն պատմեց իր ճանապարհորդութեան և դրա հետևանքների մասին. իմ տերը թեև մի քանի անգամ հանդիմանական հայացքով նայեց ինձ, բայց ոչինչ չսասաց, մինչև որ Քեթրինը ավարտեց իր պատմությունը: Հետո հայրը մոտ քաշեց աղջկան և հարցրեց, գիտե՞ր նա արդյոք, թե ինչու էր ինքը թաքցնում, որ կինթընը ապրում է մոտակայքում: Մի՞թե նա կարծում է, որ ինքը դա անում էր, որպեսզի գրկի նրան այդ անվնաս բավականությունից:

— Դու այդ անում էիր, որվհետև շես սիրում միստր Հիթբրիֆին, — պատասխանեց Քեթրինը:

— Ուրեմն, դու ենթադրում ես, որ ես ավելի շատ մտածում եմ իմ, քան քո զգացումների մասին, Քեթի, — ասաց նա: — Ոչ, ոչ այն պատճառով, որ ես չեմ սիրում միստր Հիթբրիֆին, այլ նրա համար, որ միստր Հիթբրիֆը չի սիրում ինձ, իսկ նա շատ վտանգավոր անձնավորություն է և դիվային բավականությամբ կարծում է բոլոր նրանց, ում ատու՛ն է, եթե նրանք դրա համար տալիս են թեկուզև ամենաշնչի՛ն առիթը: Ես գիտեի, որ դու առանց նրա հոր հետ շփվելու, չլիր կարող ծանոթություն պահպանել քո հորաքրոջ տղայի հետ, գիտեի, որ նրա հայրը կասի քեզ իմ պատճառով, ուստի քո բարին ցանկանալով, և ուրիշ ոչինչ, դիմում էի բոլոր միջոցներին, որ դու նորից շահնդիպես կինթընին: Մտածում էի բացատրել դա քեզ, երբ ավելի կմեծանաս, և ափսոսում եմ, որ այդքան ժամանակ հետաձգում էի:

— Բայց միստր Հիթբրիֆը շատ սիրալիր էր, հայրիկ, — նկատեց Քեթրինը, չբավարարվելով հոր տված բացատրությունից, նա չի առարկում, որ մենք հանդիպենք, նա ասաց, որ ես կարող եմ գալ իր տունը, երբ կամենամ, միայն այդ մասին չպետք է քեզ ասեմ, որովհետև դու նրա հետ ընդհարված ես և շես ներում, որ նա ամուսնացավ հորաքրոջ Իդարելլայի հետ, շես ներում. միայն դու ես մեղավոր: Նա, համենայն դեպս, համաձայն է, որ մենք՝ կինթընն ու ես, ընկերություն անենք, իսկ դու դեմ ես:

Տեսնելով, որ աղջիկը չի հավատում փեսայի շար բնավորության մասին ասած իր խոսքերին, իմ տերը համառոտ կերպով պատմեց Իդարելլայի նկատմամբ Հիթբրիֆի ցուցաբերած վարքագծի մասին, և այն մասին, թե ինչ ձևով նա դարձավ

Մուկգին հողմերի դարավանդի տերն ու տիրականը: էղգար
Լինթընի համար անտանելի էր երկար կանգ առնել այդ նյութի վրա, թեև քիչ էր խոսում անցյալի մասին, բայց տակավին շարունակում էր իր երբեմնի ախոյանի հանդեպ զգալ նույն զգվանքն ու նույն ատելութունը, որոնք միսիս Լինթընի մահից ի վեր աիրել էին իր սրտին: «Նա գուցե ապրեր մինչև հիմա, եթե չլիներ այդ մարդը», — միշտ վշտալից մտածում էր նա: Հիթբլիֆը նրա աչքում մարդասպան էր:

Միսս Քեթին անծանոթ էր վատ արարքների, բացի իր անհնազանդությունից, անարդարությունից, սեփական աննշան գործերից ու բուն զգացումներից, որոնք բխում էին նրա տաքարյունությունից ու թեթևամտությունից և հենց նույն օրն էլ նրա մեջ առաջացնում էին զղջում. նա ապշել էր այդ հոգու սևությունից, որը տարիներ շարունակ իր մեջ թաքցրած կրում էր վրեժխնդրության ծրագիրը, որպեսզի հետո հանգիստ, առանց խղճի խայթ զգալու, այն ի կատար ածեր: Նա այնքան խորն էր տպավորվել, այնքան էր ցնցվել մարդկային բնավորության հանդեպ ունեցած նախկին բոլոր պատկերացումները բացառող իր այս նոր կարծիքից, որ միսսը էղգարը ավելորդ համարեց խոսակցությունը շարունակել: Միայն ավելացրեց.

— Այսուհետ, թանկագինս, կիմանաս, թե ինչու եմ ուզում, որ դու խուսափես նրա տնից և ընտանիքից, հիմա վերադարձիր քո նախկին պարապմունքներին ու զվարճանքին և այլևս մի մտածիր այդ մարդկանց մասին:

Քեթրինը համբուրեց հորը և ըստ սովորության, երկու ժամ հանգիստ նստեց ու զբաղվեց դասերով, հետո հոր հետ գնաց շրջագայելու իրենց հողերում, և, ամբողջ օրն անցավ սովորականի պես, բայց երեկոյան դեմ, երբ Քեթին անցավ իր սենյակը, և ես ներս մտա օդնելու, որ հանվի, նրան գտա ծնկի եկած, մահճակալի մոտ՝ հեկեկալիս:

— Թո՛ւհ, հիմա՞ր աղջիկ, — գոչեցի ես: — Եթե դուք իսկական վիշտ ունենայիք, կամաշեիք թեկուզ մի կաթիլ արցունք թափել այս աննշան վեճի պատճառով: Դուք երբեք չեք ունեցել իսկական վշտի սովերն անգամ, միսս Քեթրին: Մի բոպե պատկերացրեք, որ իմ տերն ու ես մեռել ենք, և որ դուք աշխարհում մնացել եք միայնակ, ինչպե՞ս կզգայիք

ձեզ այն ժամանակ, Համեմատեք այժմյան դեպքը նման մի դժբախտութեան հետ և շնորհակալ եղեք այն բարեկամներին, որ ունեք, փոխանակ երազելու նորերի մասին:

— Ինձ համար շեմ լաց լինում, էլլեն,— պատասխանեց նա,— լաց եմ լինում նրա համար: Նա հույս ունեւ վաղը նորից ինձ տեսնելու, և հիմա շատ կհիասթափվի. կսպասի ինձ, իսկ ես շեմ գնա:

— Դատարկ բան է,— ասացի ես,— մի՞թե կարծում եք, որ նա ձեր մասին նույնքան է մտածում, որքան դուք նրա մասին: Մի՞թե նա Հերթընի ընկերը չէ: Հարչուր մարդուց մեկն անգամ չէր սկսի լաց լինել իր բարեկամին կորցնելու համար, բարեկամ, որին տեսել է ընդամենը երկու անգամ: Լինթընը կկռահի, թե ինչ է պատահել և այլևս չի անհանգրստանա ձեզ համար:

— Բայց մի՞թե չի կարելի նրան մի երկտողով հայտնել, թե ինչու շեմ կարող գալ,— խնդրեց նա, տեղից վերկենալով:— Եվ իմ խոստացած այդ գրքերն ուղարկել նրան. նրա գրքերը իմի նման լավը չեն, նա շատ էր ուզում կարդալ իմ գրքերը, երբ ես պատմեցի, թե դրանք ինչքան հետաքրքիր են: Կարելի՞ է, էլլեն:

— Ոչ, չի կարելի, չի կարելի,— վճռաբար ատարկեցի ե: — Այն ժամանակ նա էլ կգրի ձեզ և այդպես կգնա անվերջ... Ոչ, միսս Քեթրին, այդ ծանոթութեանը պետք է լիովին վերջ դրվի, այդպես է ուզում ձեր հայրը, և ես կհետևեմ, որ այդպես էլ լինի:

— Բայց ինչպե՞ս կարող է մի փոքրիկ երկտողը...— նորից սկսեց նա աղերսանքով:

— Դե բավական է,— ընդհատեցի ես:— Ոչ մի փոքրիկ երկտող: Պառկեք:

Նա բարկացկոտ հայացք գցեց ինձ վրա, այնքան բարկացկոտ, որ սկզբում նույնիսկ չէի ուզում համբուրել նրան՝ բարի գիշեր ասելիս. մեծ դժգոհությամբ ծածկեցի նրան, դուռը փակեցի, բայց զղջալով կես ճամփից կամաց վերադարձա և ի՞նչ տեսնեմ. իմ օրիորդը մի կտոր մաքուր թուղթ առջևը դրած, մատիտը ձեռքին կանգնած էր սեղանի մոտ և իմ երևալուն պես մեղավորի նման դրանք թաքցրեց:

— Ոչ որ ձեր նամակը, Լթև գրեք էլ, շի տանի, Քեթրին,—
ասացի:— Իսկ հիմա ես կհանգցնեմ ձեր մոմը:

Ճրագմարիչով հանգցրի բոցը, հենց այդ սլահին նա հար-
վածեց ձեռքիս և ինձ անվանեց «զզվելի շար կին»: Ես նորից
հեռացա, իսկ նա խիստ զայրացած գցեց դռան սողնակը:

Նամակը գրվեց և ուղարկվեց իր նշանակման կետը մեզ-
նից կաթ տանող գյուղական մի տղայի միջոցով, բայց այդ
մասին ես իմացա մի որոշ ժամանակ հետո: Անցնում էին
շաբաթներ: ՔԼթին հանգստացավ, թեև տարօրինակ ձևով
սիրում էր թաքնվել ինչ-որ տեղ մի անկյունում, և հաճախ,
երբ կարդալիս ես անսպասելիորեն մոտենում էի նրան, նա
ցնցվում, հակվում էր գրքի վրա՝ ցանկանալով թաքցնել այն,
իսկ ես նկատում էի էջերի միջից դուրս ցցված թերթիկի
ծայրը:

Նա դիմում էր խորամանկության և ամեն օր վաղ առա-
վոտյան իջնում էր ներքև, խոհանոցում սկսում էր տնտնալ,
ասես, ինչ-որ բանի սպասելով. գրադարանում նրա սիրած
տեղը գրասեղանի փոքրիկ գլորոցն էր, որի մեջ պրպտում էր
ժամերով, իսկ երբ գնում էր, միշտ էլ հատուկ ուշադրությամբ
բանալին հանում, տանում էր հետը:

Մի անգամ, երբ Քեթին ստուգում էր իր գլորոցը, ես նկա-
սեցի, որ դրա բովանդակությունը կազմող մանր-մունր զար-
դերի փոխարեն երևացին իրար վրա դարսած թերթիկներ:

Գա իմ մեջ արթնացրեց հետաքրքրություն ու կասկածներ
և ես վճռեցի նայել նրա դաղանի գանձերին: Մի երեկո, Լրբ
միսս Քեթին ու իմ տերը փակվեցին իրենց սենյակներում,
ևս փնտրեցի և իմ բանալիների մեջ իսկույն գտա մի հարմար
բանալի, որը կրացեր կողպեքը: Գլորոցը բաց անելուց հետո
ևս դրա ամբողջ բովանդակությունը լցրի զոգնոցիս փեշը և
տարա իմ սենյակը, որպեսզի, ինչպես հարկն է, ազատ ժամին
ստուգեմ:

Թեև ես ոչ մի ուրիշ բան չէի կարող սպասել, այնուամե-
նայնիվ, ապշեցի, Լրբ տեսա նամակների մի ամբողջ կույտ,
նամակներ, որոնք գրված էին համարյա ամեն օր, Լինթըն
Հիթքլիֆի ձեռքով. դրանք Քեթիի գրած նամակների պատաս-
խաններն էին: Վաղուցվա թվերով գրված այդ նամակները
ամաչկոտ ու հակիրճ էին, որոնք, սակայն, աստիճանաբար

վեր էին ածվում ընդարձակ սիրային նամակները՝ գրված գրողների տարիքին համապատասխան միամիտ ոճով, բայց տեղ-տեղ դրանց մեջ նկատվում էր մի ոճաձև, որը ինձ թվում էր, թե փոխառնված էր ոչ այնքան էլ անփորձ աղբյուրից:

Այդ նամակներից մի քանիսը ապշեցրին ինձ անկեղծ բռնկման և անճաշակության իրենց անսովոր, տարօրինակ խառնուրդով. սկսվում էին դրանք ուժեղ զգացմունքի արտահայտություններ և ավարտվում էին հուզիչ, ճոռոմ ոճով, ինչպես մի դպրոցական կարող էր գրել իր երևակայական, անիրական սիրուհուն:

Արդյաք դրանք դո՞ւր էին գալիս Քեթին՝ շղիակ, բայց ինձ՝ անպետք բաներ թվացին:

Բավականին թվով նամակներ շուռումուռ տալուց հետո դրանք կապեցի թաշկինակի մեջ և տարա հետո, իսկ դատարկ գլոցը փակեցի:

Իր սովորության համաձայն, իմ երիտասարդ լեզին վաղ առավոտյան իջավ ցած և երևալ խոհանոցում, ես տեսնում էի, թե ինչպես մոտեցավ դռանը, երբ հայտնվեց փոքրիկ տղան: Մինչ մեր կաթնավաճառը լցնում էր նրա բիդոնը, Քեթին մի բան խոթեց նրա գրպանը և ինչ-որ բան հանեց այնտեղից:

Շրջանցելով պարտեզը, հսկեցի սուրհանդակին, որը արիաբար դիմադրում, պաշտպանում էր իրեն վստահված նամակը, և մենք կաթը թափթփեցինք, բայց ինձ, այդուհանդերձ, հաջողվեց նամակը առնել նրա ձեռքից. տղային սպասնալով մի լավ դնդստել, եթե չէ՛վի, ես կանգ առա ցանկապատի մոտ և ուշադիր կարդացի միսս Քեթի գորովալից նամակը: Նրա ոճն ավելի պարզ, հուզիչ ու ավելի պերճախոս էր, քան հորաքրոջ աղայինը, որը շատ սիրալիր և շատ հիմար ոճ ուներ:

Ես զուխս տարուբերեցի և մտա տուն: Քանի որ օրը խոնավ էր, աղջիկը չէր կարող պարտեզում զբոսնելով զվարճանալ, ուստի առավոտյան դասերի ավարտից հետո միսս Քեթին զնաց մխիթարություն փնտրելու իր գլոցի մոտ: Հայրը, սեղանի մոտ նստած, կարդում էր, իսկ ես դիտմամբ աշխատանք էի փնտրում, սկսեցի կարել վարագույրի պոկված ծո-

սիրը և, միաժամանակ, շարունակ հետևում էի աղջկա քայ-
լերին:

Թռչունը, վերադառնալով կողոպտված բույնը, որ ծվլա-
ցող ձագերով լի թողել էր ոչ վաղուց, վշտալից ճշոցներով
ու թևերը թափ տալով շէր արտահայտի այնպիսի մի կա-
տարյալ հուսահատութուն, որպիսին նա արտահայտեց իր
«օ՛հ» բացականչությամբ և դեմքի արագ փոփոխությամբ,
որը մինչ այդ հրջանիկ արտահայտութուն ուներ:

Միստր Լինթընը բարձրացրեց աչքերը:

— Ի՞նչ պատահեց, հոգիս: Հո շե՞ս վնասվել,— ասաց նա:
Նրա ձայնը և հայացքը համոզեցին աղջկան, որ գանձի
հայտնաբերողը նա չէ:

— Ոչ, հայրիկ,— շնչասպառ լինելով ասաց նա,— էլլին,
այ, էլլին, եկ վերև, ես վատ եմ դուստ:

Ես հնազանդվեցի ու բարձրացա վերև:

— Օ՛հ, էլլին, դրանք դու ես վերցրել,— իսկույն սկսեց
նա՝ ծնկի գալով, հենց որ մենք երկուսով փակվեցինք սենե-
յակում:— Օ՛հ, վերադարձու, էլ երբեք չեմ անի: Հայրիկին
մի ասա... դու դեռ շե՞ս հայտնել հայրիկին, էլլին, ասա, հո
շե՞ս հայտնել: Ես ինձ շատ վատ եմ պահել, բայց դա այլևս
չի կրկնվի:

Ձայնիս հանդիսավոր խստությամբ խնդրեցի վերկենալ:

— Եվ այսպես, միսս Քեթրին,— գոչեցի ես,— դուք ինչ-
պես երևում է բավականին հեռու եք գնացել և իզուր չէ, որ
դրա համար ամաշում եք: Անպետք բաների մի ամբողջ կա-
պոց, ըստ երևույթին, ուսումնասիրում եք ազատ ժամերին...
Դե ի՞նչ, դրանք այնքան գեղեցիկ են, որ արժե տպագրել:
Եվ ի՞նչ եք կարծում, ի՞նչ կմտածի իմ տերը, եթե ես դրանք
փոխեմ նրա առաջ: Ես դեռ ցույց չեմ տվել, բայց շերտակայեք,
որ կպահեմ ձեր ծիծաղելի գաղտնիքները... Ամաշե՛ք. իհար-
կե, առաջինը դուք սկսեցիք այդպիսի անհեթեթ բաներ գրել,
Լինթընը, հավատացած եմ, չէր էլ մտածում այդ մասին:

— Ոչ, ես չեմ սկսել,— հեկեկում էր Քեթրին այնպես,
ասես սիրտը պայթում էր:— Բոլորովին մտքովս չէր անց-
նում սիրել նրան, քանի դեռ...

— Սիրե՛՛լ,— ճշացի ես՝ արտասանելով այդ բառը, ինչ-
քան կարող էի արհամարհանքով:— Սիրե՛՛լ: Այդ նույնը ես

կարող էի ասել ջրաղացպանի սիրո մասին, որ տարին մէկ անգամ գալիս է մեզ մոտ հացահատիկ գնելու: Իրոք, չս' սեր է: Գուք կինթընին, երկու հանդիպման ժամանակ, հազիվ շորս ժամ եք տեսել: Իսկ հիմա՝ այդ երեխայական անհեթեթությունների կապոցը. ես այս բոպեիս կվերցնեմ դրանք, կգնամ զրադարան, տեսնենք, թե ինչ կասի ձեր հայրը այդպիսի սիրո մասին:

Նա նետվեց դեպի իր թանկագին նամակները, բայց ես դրանք բռնած պահեցի գլխիս վերևում, հետո սկսվեցին շերմ աղերսանքներ այն մասին, որ ես կարող եմ դրանք այրել, անել, ինչ ուզում եմ, միայն թե հայրիկին ցույց չտամ: Եվ քանի որ ես իսկապես ավելի շատ հակված էի ծիծաղելու, քան նախատելու նրան, որովհետև այդ ամենի մեջ տեսնում էի սոսկ մանկական դատարկ փառասիրութուն, ի վերջո, գթաշարժվեցի և հարցրի.

— Եթե համաձայնեմ այրել, ազնվորեն կխոստանա՞ք, որ էլ երբեք նամակներ ու զրքեր չեք ուղարկի ու չեք ստանա, որովհետև ես տեսնում եմ, որ դուք ուղարկել եք զրքեր և ոչ թե խոպոպներ, մատանի կամ խաղալիքներ:

— Խաղալիքներ մենք չենք ուղարկում, — բղավեց Քեթրինը: Նրա հպարտութունը հաղթեց ամաչկոտությանը:

— Ուրեմն, ոչ մի բան, իմ լեղի,— ասացի ես: — Եթե չեք խոստանում, ես գնում եմ:

— Խոստանում եմ, էլլեն, — ճշաց նա, բռնելով իմ շորից: — Օ՛հ, նետեք դրանք կրակի մեջ, շարտեք, այրեք:

Բայց երբ ես ակիշով սկսեցի ածուխները խառնել, զոհաբերութունը անտանելի դժվար թվաց: Միսս Քեթլին լըրջորեն թախանձագին խնդրում էր, որ խնայեմ գեթ մեկ-երկու նամակ:

— Գոնե մեկը կամ երկուսը, էլլեն, ես դրանք կպահեմ ի սեր կինթընի:

Բաց արեցի թաշկինակը, սկսեցի նամակները նետել, և բոցը բռնկվեց բուխարու մեջ:

— Գեթ մեկը թող ինձ, դու, դաժան արարած, — սուր ճիշարձակեց նա, ձեռքը մտցնելով կրակի մեջ, և մատներն այրելով դուրս քաշեց մի քանի կիսախանձված թերթիկներ:

— Շատ լավ, հայրիկիդ ցույց տալու մի բան կունենամ, —

պատասխանեցի ևս, մնացածը խոթելով կապոցի մեջ, և նորից շուռ եկա դեպի դուռը:

Նա իր սեւացած թերթիկները գցեց կրակի մեջ և նշան արեց, որ դո՛ւնաբերությունը վերջացնեմ: Այն ավարտվեց, ես թիակով շուռ տվեցի մոխիրը և թաղեցի ածուխների տակ, իսկ նա սուսփուս, ծանր վիրավորանքի զգացումով, առանձնացավ իր սենյակը: Ես իջա իմ տիրոջն ասելու, որ օրիորդի տկարության նոսրան համարյա անցել է, բայց հարկ համարեցի միառժամանակ պառկեցնել նրան անկողնում:

Օրիորդը չճաշեց, բայց թեյին երևաց՝ գունատ, կարմրած աչքերով և զարմանալիորեն հանգստացած տեսքով:

Հետևյալ առավոտ ես ինքս նամակին պատասխանեցի թղթի մի կտորով, որի մեջ գրված էր. «Խնդրում եմ միստր Հիթքլիֆին այլևս գրություններ չուղարկել միսս Լինթընին, քանի որ նա դրանք չի ընդունի»: Եվ այդ օրվանից այն փոքրիկ տղան մեզ մոտ գալիս էր դատարկ գրպաններով:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

Անցան ամառն ու վաղ աշունը, անցավ և Միքայելի օրը¹, բայց այդ տարին հունձը ուշացավ, և մեր մի քանի դաշտերում այն դեռ չէր ավարտվել:

Միստր Լինթընը և իր դուստրը հաճախ դնում էին հրնձվորների աշխատանքը դիտելու. երբ տանում էին վերջին խուրձերը, նրանք դաշտում մնում էին մինչև աղջամուղջ, և քանի որ երեկոն սառն էր ու խոնավ, իմ տերը ուժեղ մրսեց, սառնությունն անցավ թոքերին և ամբողջ ձմեռ նրան համարյա անընդհատ պահում էր տան պատերի մեջ:

Խեղճ Քեթին, որ վախից ստիպված էր հրաժարվել իր փոքրիկ սերավնայից, նկատելիորեն դարձել էր ավելի տխուր ու անտարբեր. դրա համար էլ հայրը սնդում էր, որ ավելի քիչ կարդու և սվեյի շատ լինի օդում: Նա ինքն այլևս չէր կարող ուղեկցել աղջկան և ես իմ պարտքն էի համարում, ըստ հնա-

¹ Այսինքն սեպտեմբերի 24-ը:

րավորին, հոր փոխարեն ուղեկցել նրան: Իհարկե, ես վատ փոխարինող էի, որովհետև իմ ամենօրյա բազմազան զբաղմունքներից զրոսանքի համար կարող էի հատկացնել լուկ երկու կամ երեք ժամ, մանավանդ, որ իմ ընկերակցությունը նրա համար ավելի քիչ ցանկալի էր, քան հոր ընկերակցությունը:

Մի անգամ, հոկտեմբերին կամ նոյեմբերի սկզբներին մի խոնավ հետկեսօրյա պահին, երբ դալուկ տերևներով ծածկված թաց ճիմն ու արահետը խշխշում էին ոտքերի տակ, իսկ սառը և կապույտ երկինքը կիսով շափ պատած էր ամպերով, որոնք մուսյլ գորշ շարքերով արագորեն բարձրանում էին արևմուտքից ու կանխագուշակում առատ անձրև, ես ինդրեցի իմ ջահել լեդիին՝ հրաժարվել զրոսանքից, որովհետև հավատացած էի, որ տեղատարափ անձրևը անխուսափելի էր: Նա չհամաձայնեց, ես դժկամորեն հազա վերարկուս, վերցրի հովանոցը, որպեսզի միասին մինչև ցանկապատը զբոսնենք պարտեզում: Դա մի տաղտկալի զրոսանք էր, որ նա սովորաբար ընտրում էր, երբ ընկճված էր լինում հոգեպես, իսկ այդպիսի վիճակում նա հաճախ էր լինում, երբ միտար էդգարը իրեն սովորականից ավելի վատ էր զգում, մի բան, որ երբեք չէր խոստովանում, բայց նրա հարաճուն լուսթյունից և թախծոտ դեմքից մենք երկուսս էլ կռահում էինք այդ:

Միսս Քեթին տխրությամբ պարուրված քայլում էր առջևից. հիմա նա չէր վազվզում կամ ցատկոտում, թեև թվում էր, սառը քամին գայթակղում էր նրան, որ վազի: Մի անգամ չէր, որ աչքի տակով ես նկատեցի, թե նա ինչպես էր ձեռքը բարձրացնում ու այտի վրայից ինչ-որ բան բշտում:

Ես նայում էի դեսուդեն, փնտրելով, թե ինչով ցրեմ նրա խոհերը: Մի կողմում, ճանապարհի երկայնքով բարձրանում էր անհարթ դարատափը, որտեղ անվստահ տիրություն էին անում պնդուկենիները և անաճ կաղնիները՝ կիսով շափ մերկացած իրենց արմատներով. կաղնիների համար հողն այստեղ շատ փափուկ էր, և ուժեղ քամիների ճնշման տակ դրանցից մի քանիսը աճել էին զրեթե հորիզոնական դիրքով: Լեւառը միսս Քեթրինը սիրում էր բարձրանալ այդպիսի բների վրա, նստել ճյուղերին և ճուճվել դետնից քսան մետր բարձ-

րության վրա, իսկ ես հիանալով նրա ճարպկությամբ, թե-
թևաշարժությամբ ու մանկական պարզամտությամբ, այ-
նուամենայնիվ, անհրաժեշտ էի համարում ամեն անգամ հան-
դիմանել, երբ նրան տեսնում էի այդքան բարձր տեղում. բայց
իմ արած հանդիմանությունը նրան հասկացնել էր տալիս,
որ կարիք չկա իջնելու: Ճաշից մինչև թեյը երբեմն պառկում
էր քամուց ճոճվող իր օրորոցում և ոչինչ չէր անում, միայն
իր համար երգում էր ինձնից սովորած հին երգեր կամ էլ
նայում էր թռչուններին՝ իր բարեկամներին, որոնք ձագերին
կերակրում, հրապուրում էին, որ թռչեն, կամ ծառի բնին
թիկնած՝ կոպերը փակում, սսկվում էր, խորասուզված, կի-
սանհինջ. բառերով շես կարող արտահայտել, թե ինչքա՛ն
երջանիկ էր:

— Հապա մի նայեք, օրիորդ,— գոչեցի ես,— մի անկ-
յունում ցույց տալով ծոմոված ծառի արմատը:— Այստեղ
դեռ ձմեռ չէ: Այնտեղ մի փոքրիկ ծաղիկ է երևում, վերջին
կոկոնը այն բազմաթիվ զանգակածաղիկներից, որոնք հու-
լիսին այս ճիմապատ լանջերը ծածկում են յասամանագույն
մշուշով: Չե՞ք ուզում բարձրանալ այնտեղ, պոկել ծաղիկը,
որ ցույց տանք հայրիկին:

Քեթին երկար ժամանակ աչքերը հառած նայում էր իր
հողե թաքստոցում դողացող այդ մենավոր ծաղիկին և, ի վեր-
ջո, պատասխանեց.

— Ոչ, ես դրան ձեռք չեմ տա, բայց ինչ տխուր տեսք
ունի, այնպես չէ՞, էլլեն:

— Այո,— ասացի ես,— տեսքը համարյա նույնքան
հյուծված ու տկար է, որքան և ձերը, ձեր այտերն էլ շատ
զուռնատ են. եկ իրար ձեռք բռնենք և վազենք: Դուք այնքան
թույլ եք, համարձակվում եմ ասել, որ ձեզանից ձեռք չեմ
բաշխ:

— Ոչ,— կրկնում էր նա և շարունակում էր ճեմել, բայց
երբեմն կանգ էր առնում և երազկոտ հայացքով նայում մի
կտոր մամուռին կամ գունաթափ եղած խոտի կապուկին
կամ սնկին, որը, իր պայծառ նարնջագույն գլխիկը դուրս
ցցած, երևում էր մոխրագույն տերևների կույտի միջից, և
շարունակ ձեռքը տանում էր ինձնից շուռ տված դեմքին:

— Քեթրին, ինչո՞ւ եք լալիս, հոգիս,— հարցրի, մոտե-

նայով և ձեռքս դնելով նրա ուսին:— Դուք երևի լաց եք լինում, որովհետև հայրիկը մրսած է. շնորհակալ եղեք, որ մի ավելի վատ բան չի պատահել:

Նա այլևս չէր զսպում իր արցունքները, հեկեկանքից շքնլահեղձ էր լինում:

— Օհ, դա կլինի ամենավատ բանը, — ասաց նա, — և ի՞նչ կանեմ ես, երբ հայրիկն էլ, դու էլ թողնեք ինձ, և ես միայնակ մնամ: Չեմ կարողանում մոռանալ քո խոսքերը, էլլեն, դրանք շարունակ հնչում են իմ ականջում: Ինչպես կյանքը կփոխվի, ինչ տաղտկալի կդառնա աշխարհը, երբ դուք՝ հայրիկը և դու, մեռնեք:

— Ոչ ոք չի կարող ասել, գուցե դուք մեզնից ավելի շուտ մեռնեք, — առարկեցի ես: — Կարիք չկա մտածել վատի մասին, հույսով ենք, որ կանցնեն տարիներ, և էլի տարիներ, նախքան մեզնից որևէ մեկը կմեռնի. իմ տերը երիտասարդ է, ես էլ դեռ պինդ եմ, հազիվ քառասունհինգ լինեմ: Մայրս ապրեց ութսուն տարի և մինչև իր կյանքի վերջը կայտառ էր: Ենթադրենք, որ միստր Լինթընը կապրի մինչև վաթսուն տարեկան, դա ձեր ապրած տարիներից ավելի շատ կլինի, միսս: Միթե հիմարութուն չէ քսան տարի առաջ վշտանալ դժբախտության համար:

— Բայց հորաքույր Իզաբելլան հայրիկից ավելի ջահել էր, — նկատեց նա՝ վախը սրտին հուսալով, ասես սպասում էր մի նոր սփոփանքի:

— Հորաքույր Իզաբելլան շուներ ձեզ և ինձ, որ խնամելինք իրեն, — պատասխանեցի ես: — Նա այնքան երջանիկ չէր, որքան իմ տերը. նրան քիչ բան էր կապում կյանքին: Չեզ հարկավոր է միայն լավ խնամել հայրիկին և ուրախացնել նրան՝ ցույց տալով, որ դուք ինքներդ էլ եք ուրախ, և աշխատեք առիթ շտալ, որ նա որևէ բանից հուզվի. լավ հիշեք այդ, Քեթի: Չեմ թաքցնում, բայց դուք կարող եք սպանել ձեր հորը, եթե լինեք անզուսպ ու անխոհեմ և հիմար ու մտացածին սեր փայփայեք մի մարդու որդու նկատմամբ, որն ուրախ կլիներ ձեր հորը գերեզման դնել, եթե նրան թույլ տաք նկատել, որ դուք վշտանում եք այդ անջատումից, որը նա ձեզ համար անհրաժեշտ համարեց:

— Ես աշխարհում ոչ մի բանի համար չեմ վշտանում,

բացի հայրիկի հիվանդութիւննից, — պատասխանեց իմ երիտասարդ տիրուհին: — Հայրիկի հետ համեմատած ոչ մի բան ինձ համար նշանակութիւն չունի, Եվ ես երբե՛ք, երբե՛ք, օ՛հ երբե՛ք, քանի դեռ առողջ դատողութիւն ունեմ, ոչինչ չեմ անի և չեմ ասի մի բառ, որը կարող է վշտացնել նրան: Ես նրան ավելի շատ եմ սիրում, քան ինքս ինձ, էլլեն, դա ես գիտեմ, ահա թե ինչու, ամեն դիշեր աղոթում եմ, որ հայրիկից ավելի երկար ապրեմ, որովհետև ավելի լավ է, ես դժբախտ լինեմ, քան նա: Ուրեմն ես նրան ավելի շատ եմ սիրում, քան ինձ:

— Բարի խոսքեր, — ասացի ես, — բայց դրանք հարկավոր է հաստատել զործով: Երբ նա ապաքինվի, լավ հիշեք, մի մոռացեք վախի պահին ընդունած ձեր որոշումները:

Այսպես խոսելով մոտեցանք դեպի ճանապարհը տանող դռնակին. իմ երիտասարդ տիրուհին, որի դեմքը արևի պես կրկին փայլեց, բարձրացավ ցանկապատի վրա, նստեց և սկսեց հատապտուղներ հավաքել, որոնք կարմրին էին տալիս ճանապարհի երկայնքով աճող մասուրի վրայի թփերի ծայրին. ներքևի ճյուղերին արդեն պտուղ չկար, իսկ վերևի ճյուղերին կարող էին հասնել միայն թռչունները, եթե Քեթին չբարձրանար ցանկապատի վրա, չէր կարող պտուղ հավաքել:

Երբ Քեթին ձգվեց, որ մասուր քաղի, գլխարկը գլխից թռավ, և, քանի որ դռնակը փակ էր, նա վճռեց իջնել ու վերցնել այն: Ես խնդրեցի՝ զգուշ լինի, որ չընկնի ներքև, և հանկարծ նա չքացավ իմ աչքից:

Բայց այն կողմից վերս բարձրանալ այնքան էլ հեշտ չէր. հարթ քարերը կոկիկ ցեմենտած էին, իսկ ցանկապատի հետևում եղած սասուրի ու մորենու այսուայն կողմ ցրված թփերը չէին կարող ուռչի հեծարան հանդիսանալ: Ես, հիմարս, ուշքի եկա այն ժամանակ, երբ լսեցի նրա ծիծաղն ու բացականչութիւնը.

— էլլեն, պետք է բանալի բերես, այլապես ես հարկադրված կլինեմ շրջանցելով վազել դռնապանի պահատնակը: Այս կողմից ես չեմ կարող բարձրանալ պատենշի վրա:

— Դե, սպասեք այստեղ, — պատասխանեցի ես, — իմ գրպանում կա մի կապ բանալի. գուցե մեկնումեկը բացի, ապա թե ոչ, կգնամ բանալու հետևից:

Քեթրինը դռան առաջ պար գալով հետուառաջ էր անում, մինչ ես մեկ առ մեկ փորձում էի բոլոր մեծ բանալիները: Փորձեցի վերջինը՝ չհարմարվեց: Կրկին պատվիրելով օրիորդին, որ տեղում մնա, ես այն է պատրաստվում էի, ինչքան կարող էի արագ վազել տուն, երբ ինձ կանգնեցրեց մոտեցող աղմուկը: Դա վարզող ձիու պայտերի դոփյուն էր. Քեթրին նույնպես դադարեց պարելուց: Նույն բուպեին կանգ առավ և ձին:

— Ո՞վ է,— շնչոցով հարցրի ես:

— Էլլեն, շե՞ս կարողանում դռնակը բացել,— անհանգրստացած շնչաց իմ ուղեկցուհին:

— Օհո՛, միսս Լինթը՛ն,— հնչեց մի կրծքային ձայն (Վիավորի ձայնը),— ուրախ եմ, որ հանդիպեցի ձեզ: Մի շտապեք ներս անցնել, ուզում եմ ձեզնից բացատրություն ստանալ:

— Ես չեմ խոսի ձեզ հետ, միտար Հիթքլիֆ,— պատասխանեց Քեթրինը:— Հայրս ասում է, որ դուք շար մարդ եք, որ դուք ատում եք թե՛ նրան, և թե՛ ինձ. նույն բանն ասում է և էլլենը:

— Բայց դա գործի հետ կապ չունի,— ասաց Հիթքլիֆը (դա նա էր):— Կարծեմ, ես չեմ ատում իմ որդուն, հենց ի սեր նրա, պահանջում եմ ձեր ուշադրությունը: Այո, դուք կարմրելու հիմք ունեք: Երկու-երեք ամիս առաջ մի՞թե դուք ձեզ համար սովորություն չէիք դարձրել նամակներ գրել Լինթընին, որ սեր խաղաք, հը՞: Ձեզ երկուսիդ էլ դրա համար հարկավոր է պատժել: Ձեզ առավել ևս, որովհետև դուք ավելի մեծ եք և, ինչպես պարզվեց, ավելի քիչ զգայուն եք: Ձեր նամակները ինձ մոտ են և եթե դուք սկսեք կոպտել, ես գրանք կուղարկեմ ձեր հորը: Ենթադրում եմ, որ այդ զվարճանքից ձանձրացաք և վերջ տվիք՝ այնպես չէ՞: Շատ լավ, բայց դրա հետ միասին, դուք Լինթընին նետեցիք ճահճուտի մեջ: Նա սիրո հարցին նայում էր լրջորեն՝ սիրեց իսկական սիրով: Երդվում եմ իմ կյանքով, նա մեռնում է ձեզ համար. դուք ձեր այդ քամահաճությամբ կոտրեցիք նրա սիրտը: Թեև Լերթրներ վեց շաբաթ է, ինչ նրան մշտական ծաղրի առարկա է պարձրել, իսկ ես ավելի լուրջ միջոցների դիմելով, փորձում էի վախեցնել և նրա գլխից դուրս վանել այդ հիմարու-

թյունը, օրեցօր քանի գնում ավելի ու ավելի է վատանում, նա մինչև ամառ գերեզման կմտնի, եթե դուք նրան չբուժեք:

— Ինչպե՞ս եք կարողանում նման բացարձակ սուտ ասել խեղճ երեխային,— գոռացի ցանկապատի հետևից:— Խնդրում եմ՝ թողնեք հեռանաք: Ինչպես եք կարողանում դիտավորյալ հնարել այսպիսի մի արգահատելի սուտ: Միսս Քեթի, ես քարով կշարդեմ կողպեքը: Դուք այդ ստոր դատարկաբանությանը մի հավատացեք: Ինքներդ էլ գիտեք՝ անհնարին է, որ մարդը մեռնի մի գրեթե անծանոթ մարդու սիրուց:

— Ես չգիտեի, որ այստեղ թաքուն լսում են,— փնթփնթաց հանցագործության տեղում բռնված սրիկան:— Հարգարժան միսիս Դին, դուք ինձ դուր եք գալիս, բայց ես չեմ սիրում ձեր երկերեսանիությունը,— բարձրաձայն ավելացրեց նա:— Ինչպե՞ս եք կարողանում զու՛ւ այդպես բացահայտորեն ստել, պնդելով, որ ես ատում եմ «խեղճ երեխային»: Եվ հեքիաթներ հնարել երևակայական հրեշի մասին, որպեսզի սարսափեցնեք, հեռու վանեք նրան: Լինթըն (այդ անունն ինքը ջերմացնում է իմ սիրտը), իմ բարի աղջիկ, ես մի շաբաթով բացակայելու եմ տնից, եկեք և տեսեք, որ ճիշտ եմ ասել, արևը այդ, սիրելիս, պարզապես պատկերացրեք ձեր հորը իմ տեղը, իսկ Լինթընին՝ ձեր. և դատեք, թե ինչ կմտածեիք դուք ձեր անհոգ սիրողի մասին, եթե Լինթընը շուգենար մի քայլ անգամ անել, երբ ձեր հայրը ինքը գար խնդրելու նրան, որ նա ձեզ սփոփի. ուրեմն, կատարյալ հիմարությունից մի ընկեք նույն սխալի մեջ: Երգվում եմ ի սրտե, որ նա մեռնում է, և միայն դուք կարող եք փրկել նրան:

Կողպեքը տեղի տվեց, և ես դուրս եկա:

— Երգվում եմ, Լինթընը մեռնում է,— կրկնեց Հիթքլիֆը, խստորեն նայելով ինձ:— Վիշտն ու հուսահատությունը արագացում են նրա մահը: Նեղի, եթե չեք ուզում թույլ տալ օրիորդին, ինքներդ կարող եք գալ: Բայց ես կվերագառնամ մի շաբաթ հետո այս նույն ժամին. կարծում եմ ձեր տեքը չի առարկի, որ իր դուստրը այցի գնա իր հորաքրոջ տղային:

— Կնանք,-- ասացի՝ Բևանցուկ անելով Քեթրինին և գրեթե ուժով նրան ստիպեցի, որ նորից պարտեզ մտնի, որովհետև հապաղում էր, անհանդիստ նայելով խոսողի դեմքին,

որ շտիազանց խիստ էր և չէր դրսևորում իր ներքին նենգությունը:

Հիթբլիֆը ընդհուպ մոտեցավ և, թամբի վրայից հակվելով, ասաց.

— Միսս Քեթրին, խոստովանում եմ, որ որդուս հետ ես շատ էլ համբերատար չեմ, իսկ Հերթընն ու Ջոզեֆը՝ առավել ևս: Խոստովանում եմ, որ նա գտնվում է բիրտ մարդկանց շրջապատում: Նա տոշորվում է բարության, ինչպես և սիրո համար. ձեր միակ բարի խոսքը նրա համար լավագույն դեղը կլինի: Միսիս Դինի դաժան նախազգուշացումներին մի լսեք, և դեք մեծահոգի և աշխատեք տեսնել Լինթընին: Նա զօր ու գիշեր հրազում է ձեր մասին և հնարավոր չէ համոզել նրան, որ եթե դուք չեք գրում ու չեք գալիս՝ դա նշանակում է, որ ատում եք նրան:

Ես դռնակը ծածկեցի և մի խոշոր քար դեմ տվեցի, քանի որ կողպեքը թուլացել էր և, հովանոցը բաց անելով, հոգեզավակիս քաշեցի տակը, որովհետև ծառերի հառաչող ոստերի միջից անձրև սկսեց կաթկթել՝ նախազգուշացնելով, որ չի կարելի հապաղել:

Մենք շտապեցինք առանց Հիթբլիֆի հետ հանդիպման մասին պայմանավորվելու և սկսեցինք քայլել ուղիղ դեպի տուն, բայց ես բնազդով կռահում էի, որ Քեթրինի սրտին մոռյլ ամպեր էին իջել, դեմքին այնքան տխրություն կար, որ ասես նրա դեմքը շիններ. այն ամենը, ինչ լսել էր նա, ակնհայտորեն ընդունել էր որպես զուտ ճշմարտություն:

Միստր Լինթընը, շտապելով մեր վերադարձին, զնայել էր հանգստանալու: Քեթրին մտավ նրա սենյակը հարցնելու, թե իրեն ինչպես է զգում. նա արդեն քնած էր: Քեթրին վերադարձավ և խնդրեց ինձ իր հետ նստել գրադարանում: Մենք միասին թեյիցինք, ապա նա պառկեց քնելու գորգի վրա և պատվիրեց, որ շնոսեմ, որովհետև հոգնած էր

Ես վերցրի մի դիրք և ձևացրի, որ կարգում եմ: Երբ նրան թվաց, թե ես ամբողջապես կլանված եմ ընթերցանությամբ, նորից սկսեց լռելյայն լաց լինել, այժմ կարծես այն դարձնելով իր սիրած զբաղմունքը: Ես նրան թողեցի, որ մի փոքր լաց լինի, ապա սկսեցի խրատել և անխնա ծաղրել Հիթբլիֆի ասածները իր որդու մասին, ասես հավատացած էի, որ նա

ինձ հետ կհամաձայնի: Ավա՛ղ: Ես փորձված չէի այնքան, որ կարողանայի շնորհացնել Հիթքլիֆի խոսքերի առաջացրած սպավորությունը. դա հենց այն էր, ինչ նա ինքը ծրագրել էր:

— Գուցե դու ճիշտ ես, էլլեն,— պատասխանեց Քեթին,— բայց ես չեմ հանգստանա, մինչև որ ճշմարտությունը չիմանամ: Եվ կինթրնին պետք է ասեմ՝ ևս մեղավոր չեմ, որ չեմ գրում և համոզեմ նրան, որ իր նկատմամբ ես չեմ փոխվել:

Անօգնուտ էր զայրանալ և առարկել նրա հիմար դյուրահավատության դեմ: Այդ երեկոյան մենք բաժանվեցինք որպես թշնամիներ, բայց հաջորդ օրը, լուսադեմին, ես արդեն քայլում էի դեպի Մոլեզին հողմերի դարավանդ տանող ճանապարհով, իմ քմահաճ ջահել տիրուհու ձիու կողքով: Ես այլևս չէի կարող աղջկան տեսնել վշտի մեջ, նայել նրա դժգույն ու տխուր դեմքին, հանդիպել նրա ծանր հայացքին. և զիջեցի, թույլ հույս տածելով, որ կինթրնը իր սառը ընդունելությամբ կապացույցի, թե ինչքան քիչ ճշմարտություն կար իր հոր խոսքերի մեջ:

ԳՆՈՒՆ ՔՍԱՆԵՐԵՔԵՐՈՐԴ

Անձրևոտ գիշերը փոխարինվեց միզապատ առավոտով. տեղում էր ձյունախառն բարակ անձրև. մեր ճանապարհը կտրում անցնում էին սարերից աղմկածայն ցած թավալվող ժամանակավոր վտակներ: Ոտքերս լրիվ թրջվել էին. ջղայնացել, ընկճվել էի, որ շատ հարմաշտ արամադրություն էր այնպիսի տհաճ մի գործի համար:

Տուն մտանք խոհանոցի միջով, որպեսզի պարզենք: միստըր Հիթքլիֆը տնից հսկապես բացակայում է թե ոչ. որովհետև ես այնքան էլ չէի հավատում նրա խոսքերին:

Ջոզեֆը, ըստ երևույթին, երանության մեջ մենակ նստած էր շոցկլտացող գրակի մոտ: Սեւանի վրա առջևը դրված էր մի կվարտ¹ գարեջուր, և իր մեջ Դեժ կտորներով զցած էր

¹ 1,14 էտր:

վարսակի բոված, կարմրացրած բլիթներ. իր սև, կարճ ծխամորճը դրել էր բերանին:

Քեթրինը վազեց օջախի մոտ տաքանալու: Ես հարցրի, թե տա՞նն է տերը:

Իմ հարցը երկար ժամանակ մնաց անպատասխան և մտածելով, որ ծերուկը խլացել է, հարցը կրկնեցի բարձրաձայն.

— Օհ,— մրթմրթաց նա կամ ավելի շուտ ֆսֆսաց քթի մեջ:— Օհ, վերադարձեք այնտեղ, որտեղից եկել եք:

— Ջոզեֆ,— ինձ հետ միաժամանակ ներսի սենյակից դուռում էր մի դայրացած ձայն:— Քանի՞ անգամ քեզ սլիտի կանչեմ: Այստեղ հիմա մնացել է միայն մի քանի հատ կարմիր ածուխ: Ջոզեֆ, անմիջապես եկ այստեղ:

Մերթ ընդ մերթ ծխամորճի արձակված ծխի քուլաները և բուխարու վանդակից հառած վճռական հայացքը հասկացնել տվեցին, որ ծերուկի ականջները խլացել էին այդ կանչի համար: Տնտեսուհին և Հերթընը շէին՝ երևում՝ կինը գործով պնացել էր ինչ-որ տեղ, իսկ Հերթընը, երևի, աշխատում էր: Մենք ճանաչեցինք Լինթընի ձայնը և ներս մտանք:

— Օ՛հ, դու մի օր կմեռնես քո այդ ձեղնահարկում, կսատկե՛ս քաղցից,— ասաց տղան, լսելով մեր քայլերի ձայնը և կարծելով, որ վերջապես, դալիս է իր թափթփված ծառան:

Նա լռեց՝ գիտակցելով իր սխալը. քեռու աղջիկը նետվեց նրա կողմը.

— Այդ դո՞ւք եք, միսս Լինթըն,— ասաց նա՝ գլուխը բարձրացնելով մեծ բազկաթոռի բազուկից, որին հենվել էր մեջքով:— Ոչ... մի համբուրեք ինձ, դրանից ես շնչահեղձ եմ լինում: Մի՞թե այդ դուք եք: Հայր... ասաց, որ դուք գալու եք,— շարունակում էր նա՝ սի փոքր սթափվելով Քեթրինի գրկելուց, մինչ աղջիկը, կանգնած, զզջալով նայում էր նրան:— Բարի եղեք դուռը ծածկալ, դուք այն բաց եք թողել: Իսկ այդ... այդ նողկալի արարածները ածուխ չեն բերում, որ պցեն կրակին: Այնպես մրսում եմ:

Աս խառնեցի մարմրող ածուխը և ինքս բերեցի մի դուլլ ածուխ: Հիփանդն սկսեց զանգատվել, որ ես մոխիր թոցրի նրա վրա. բայց նա հաղից աանջահար էր եղել և երևում է՝



դողացնում էր, այնպես որ շուգեցի քմահաճության համար հանդիմանել նրան:

— Դե, կինթըն, — շշնջաց Քեթրինը, երբ նրա կիտած հոնքերը բացվեցին: — Դու ուրա՞խ ես, որ տեսնում ես ինձ: Կարո՞ղ եմ մի լավ բան անել քեզ համար:

— Ինչո՞, ավելի շուտ շէիք գալիս, — հարցրեց նա: — Դուք պետք է այցելեիք ինձ և ոչ թե գրեիք: Այդ երկար նամակները սարսափիլի հոգնեցնում էին ինձ: Ավելի հաճելի կլիներ խոսել ձեզ հետ: Իսկ հիմա ոչ կարող եմ խոսել և ոչ էլ որևէ բան անել: Չեմ հասկանում, թե ուր կորավ Զիլահը: Գուցե դուք (նայեց ինձ) գնաք խոհանոց և տեսնեք այնտե՞ղ է, թե ոչ:

Իմ նախկին ծառայությունների համար ես ոչ մի շնորհակալության շէի արժանացել, և, շքանկանալով հրամանով հետ ու առաջ վազելի, պատասխանեցի.

— Այնտեղ, Զոպեֆից բացի, ուրիշ ոչ ոք չկա:

— Ես խմե՛լ եմ ուզում,— բորբոքված գոչեց նա և շուռ եկավ: Ինչ որ հայրիկը գնացել է, Զիլահը շարունակ թրև է գալիս Գիմմերթնում: Դա սարսափելի՛ է: Ես ստիպված եմ իջնել այստեղ՝ ներքև. նրանք որոշել են շլսել ինձ, երբ վե՛ւ է եմ կանչում:

— Իսկ ձեր հայրը ուշադի՞ր է ձեր նկատմամբ, սլարոն Հիթթլիֆ,— հարցրի ես, տեսնելով, որ աղջկա առաջարկված ընկերությունը մերժվեց:

— Ուշադի՞ր: Նա նրանց է միայն ստիպում, որ մի փոքր ավելի ուշադիր լինեն,— ըղավեց հիվանդը:— Թշվառականներ: Իսկ գիտե՞ք, միսս Լինթըն, այդ անասուն Հերթընը ծիծաղում է ինձ վրա, ես ատում եմ նրան. իսկապես, ատում եմ բոլորին, նրանք գարշելի արարածներ են:

Քեթին սկսեց ջուր փնտրել. դարակի վրայից վերցրեց սափսորը, լցրեց բաժակը, բերեց, տվեց նրան: Լինթընը խընդրեց սեղանի վրայի շշից մի գդալ գինի ավելացնել. մի քիչ խմելուց հետո նա ավելի հանգստացավ և ասաց. որ Քեթին շատ բարի է:

— Իսկ դու ուրա՞խ ես, որ տեսնում ես ինձ,— ասաց աղջիկը՝ կրկնելով իր նախկին հարցը և նրա դեմքին ժպտի փայլ նկատելով, ուրախացավ:

— Այո, ուրախ եմ: Դա ինչ-որ նոր բան է, երբ լսում ես այնպիսի ձայն, որպիսին ձերն է,— պատասխանեց նա:— Բայց ես նեղանում էի, որ դուք չէիք գալիս: Իսկ հայրիկը երդվում էր, որ մեղավորը ինքս եմ: Նա ինձ անվանեց ողորմելի, խղճուկ, անպետք արարած, ասաց, որ դուք ինձ արհամարհում եք, ասաց, որ եթե ինքը իմ տեղը լիներ, վաղուց Ադարակատան տերը կդառնար ձեր հոր փոխարեն: Բայց դուր ինձ չեք արհամարհում, այնպես չէ՞, միսս...

— Ես ուզում եմ, որ դու ինձ պարզասպես Քեթրին կամ Քեթի կոչես,— ընդհատեց իմ ջահել լեդին:— Արհամարհե՞լ բեյ: Ոչ, Հայրիկից ու էլլենից հետո ես ամենից շատ քեզ եմ սիրում: Բայց չեմ սիրում միստր Հիթթլիֆին: Ես չեմ համարձակվի գալ, երբ նա վերադառնա: Նա երկա՞ր կբացակայի:

— Ոչ շատ,— պատասխանեց Լինթընը,— բայց նա այժմ

հաճախ է գնում ճահճուտները, քանի որ սկսվել է որսի շրջանը, և դու կարող էիր մեկ-երկու ժամ նստել ինձ հետ, քանի դեռ նա տանը չէ: Ասա, որ համաձայն ես: Կարծում եմ, որ քեզ հետ ես քմահաճ չեմ լինի: Գու ինձ դատարկ տեղը չես նեղացնի, միշտ պատրաստ կլինես օգնել, այնպես չէ՞:

— Այո,— ասաց Քեթրինը՝ շոյելով նրա երկար փափուկ մաղերը,— Եթե միայն հայրս թույլ տար, ես ժամանակիս կեսը կանցկացնեի քեզ հետ: Սիրելի՛ Լինթըն, կուզենայի, որ իմ հարազատ Լոբայրը լինեիր:

— Եվ այն ժամանակ դու ինձ կսիրեիր, ինչպես քո հորը,— նկատեց նա ավելի ևս աշխուժանալով: Բայց հայրս ասում է, որ դու ինձ կսիրես ավելի շատ, քան քո հորը, և աշխարհում ամենից շատ, եթե դառնաս իմ կինը: Այնպես որ, ավելի լավ կլիներ, ամուսնանայիր ինձ հետ:

— Ոչ, ես երբեք ոչ ոքին հայրիկից ավելի շատ չեմ սիրի,— պատասխանեց Քեթին վճռականորեն: Մարդիկ երբեմն ատում են իրենց կանանց, իսկ քույրերին ու եղբայրներին՝ երբեք, և եթե դու ինձ Լոբայր լինեիր, կապրեիր մեզ հետ միասին, և հայրիկը քեզ կսիրեր նույնքան, որքան ինձ:

Լինթընը սկսեց ժխտել, որ մարդիկ երբեմն ատում են իրենց կանանց, բայց Քեթրինը հավատացնում էր, որ այդպես լինում է, և ոչ մի ավելի խելացի բան չգտավ, քան օրինակ բերել նրա իսկ սեկրական հոր հակակրանքը իր հանգուցյալ հորաքրոջ նկատմամբ:

Ես փորձեցի կանգնեցնել աղջկա անխոհեմ ասելիքը, բայց շահողվեց. Քեթին շարադրեց այն ամենը, ինչ գիտեր: Տեր Հիթքլիֆը ուժեղ բորբոքված վիճակում հայտարարեց, որ նրա պատմածը սուտ է:

— Ինձ դա ասաց հայրս, իսկ իմ հայրիկը երբեք սուտ չի խոսում,— համարձակ պատասխանեց Քեթրինը:

— Իմ հայրը արհամարհում է քո հորը,— գոռաց Լինթընը,— նրան անվանում է զրպարտիչ, հիմար արարած:

— Քո հայրը շար մարդ է,— առարկեց Քեթրինը,— և քո կողմից անվայել է կրկնել այն, ինչ նա ասում է: Նա, իհարկև, վատն է, բանի որ հորաքույր Իզաբելլան հարկադրված էր նրան թողնել, հեռանալ:

— Նա իմ հորը չի թողել, — ւսաց տղան: — Եվ դու չպետք է հակաճանոես ինձ:

— Թողել է, — ճշաց իմ ջահել տիրուհին:

— Դե լավ, ես Բեզ որոշ բաներ կասեմ, — հայտարարել է կինթընը: — Քո մայրը ատում էր հորդ՝ ահա թե ինչ:

— Օ՛հ, — բղավեց Քեթրինը այնպիսի կատաղությամբ, որ շկարողացավ շարունակել:

— Եվ նա սիրում էր իմ հորը, — ավելացրեց տղան:

— Դու ստախոսի մեկն ես: Հիմա ես ատում եմ քեզ: — Աղջիկը շնչահեղձ էր լինում, և դայրույթից դեմքը կարմրատակել էր:

— Սիրո՞ւմ էր, սիրո՞ւմ էր, — երզում էր կինթընը իր բազկաթոռի խորքից և գլուխը հենելով աթոռին, ուրախանում էր, որ հեռուում կանգնած ախայանը հուզվում էր:

— Սո՛ւս, տեր Հիթքլիֆ, — ասացի ես, — դա էլ երևի ձեր հոր ասածն է:

— Ոչ, դա նրա ասածը չէ: Իսկ դուք պապանձվեք, — պատասխանեց նա, — Այո, քո մայրը սիրում էր իմ հորը: Սիրո՞ւմ էր:

Քեթրինը սաստիկ հուզվեց, ուժեղ թափով հրեց բազկաթոռը, և կինթընը հետ ընկավ բաղուկին: Նրան իսկույն սկսեց խեղդել հալը՝ արագորեն վերջ գնելով նրա հաղթարշավին:

Հաղն այնքան երկար ատեց, որ վախեցրեց նույնիսկ ինձ: Իսկ Քեթրին իր արած շարիքի սարսափից ամբողջ ուժով սկսեց լաց լինել, թեև չէր խոստովանում դա:

Ոս գրկեցի տղային և բռնած պահեցի, մինչև որ հագի նսպան անցավ: Հետո նա հրեց ինձ մի կողմ և լռելյայն գլուխը կախեց: Քեթրինն էլ դադարեց լաց լինելուց, նսանց նրա դիմաց և, հանդիսավոր տեսքով հայացքը հանեց կրակին:

— Ինչպի՞ս էք զգում այժմ, տեր Հիթքլիֆ, — հարցրի ես, տասը րոպե սպասելուց հետո:

— Կկամենայի, որ Քեթրինը իրեն զգար այնպես, ինչպես ես եմ զգում, — պատասխանեց նա, — շարասիրտ, դաժան աղջիկ: Հերթընդ ինձ երբևր ձեռք չի տալիս, ոչ մի անգամ ինձ չի խփել: Ոս այսօր ինձ լավ էի զգում, և ահա... — նրա ձայնը երերում էր հեծկատուցից:

— Ոս քեզ շխիեցի, — փնթփնթաց Քեթրին և շրթունքը

կծեց, որպէսզի արգելակի զգացմունքներն մի նոր պոռթկում:

Լինթընը տնքում, հառաչում էր, ասես հույժ տառապելիս լինէր. դա ձգձգվեց քառորդ ժամ դիտավորյալ, որպէսզի հուսահատության մեջ զցի իր քեռու աղջկան, որովհետև ամեն անգամ, երբ նա որսում էր Քեթիի խեղդող հեծկտանքը, նրա ձայնի մեջ հնչում էր մի նոր ցալ ու թախիժ առաջացնող հուզմունք:

— Ափսոսում եմ, որ քեզ վնաս եմ պատճառել, Լինթըն, — ի վերջո ասաց Քեթրինը, շէրմանալով տանջանքին: — Բայց այդպէս թեթև հրելով ես չէի կարող քեզ վնասել, չէի կարծում, որ դա կարող էր քեզ շարիք պատճառել: Բայց ախր դա քեզ շատ էլ չվնասեց, այնպէս չէ՞, Լինթըն: Մի թող տուն գնամ այս մտքով, որ ես քեզ վնաս հասցրի: Դե, պատասխանի՛ր, խոսի՛ր հետս:

— Չեմ կարող խոսել քեզ հետ, — շնչաց նա: — Դու այնքան ուժեղ հրեցիր ինձ, որ ամբողջ գիշեր անքուն կմնամ՝ շնչասպառ լինելով հազից: Եթե դու էլ այդպէս հազայիր, կիմանայիր, թե ինչ բան է դա, բայց դու հանգիստ կքնես, մինչ ես տառապում եմ. մեն-մենա՛կ եկ, Կկամենայի իմանալ, թե դու ինքզ ինչպէս կանցկացնեիր այդպիսի սոսկալի գիշերները: — Եվ իր հանդեպ ունեցած կարեկցանքից նա սկսեց բարձրաձայն արտասովել:

— Եթե այդ սոսկալի գիշերները սովորական բան են ձեզ համար, — ասացի ես, — ուրեմն օրիորդի պատճառով չէ, որ դուք տանջվում եք. եթե նա չգար, դուք, միևնույն է, նույն վիճակում կլինեիք, բայց գուցե ձեզ ավելի հանգիստ զգաք, երբ մենք թողնենք հեռանանք:

— Գնա՛մ, — թախծալից հարցրեց Քեթրինը, հակվելով նրա վրա: — Ուղո՞ւմ ես, որ գնամ, Լինթըն:

— Դու շեռ կարող փոխել այն, ինչ արդեն արել ես, — բորբոքված պատասխանեց նա՝ հետ քաշվելով նրանից, — եթե անես էլ, կփոխես միայն դեպի վատը, կջլայնացնես ինձ, և իմ ջերմութունը կբարձրանա:

— Ուրեմն, ավելի լավ է, գնա՛մ, — կրկնեց Քեթրինը:

— Համենայն դեպս, ինձ հանգիստ թող, — ասաց Լինթընը, — տանել չեմ կարող, երբ շատ ես խոսում:

Քեթին հապաղում էր և մի քանի տանջալից բույս ընդդի-

մանում էր իմ հորդորներին՝ թողնել, հեռանալ, բայց քանի որ նա ոչ նայում և ոչ էլ խոսում էր, աղջիկը, վերջ ի վերջո, շարժվեց դեպի դուռը, և ես հետևեցի նրան:

Մի սուր ճշոց ստիպեց մեզ վերադառնալ, Լինթընը բազկաթոռից սահել, ընկել էր հատակին, կրակի առաջ, կծկվում էր երես առած, կամակոր երեխայի պես, որը վճռել է ինչքան կարելի է ավելի շատ վիշտ ու անհանգստություն պատճառել մարդկանց: Տղայի ամբողջ վարքից ինձ հայտնի դարձան նրա բնավորության գծերը, և ես զգում էի, որ հիմարություն կլինեք նրան զիջելու փորձ կատարել, բայց միսս Քեթրինը չկռահեց, սարսափահար մտտ վաղեց, շոքեց ծնկների վրա և արտասվելով սկսեց նրան շոյել՝ աղերսել, մինչև որ նա հանգստացավ, որովհետև սկսել էր շնչակտուր լինել: Գուցե զոջաց, որ աղջկան դառնություն պատճառեց:

— Նրան կտեղավորեմ բազմոցի վրա, — ասացի ես, — և թող այնտեղ թավալվի, ինչքան ուզում է, հո անվերջ չենք կանգնի, որ հսկենք նրան: Հույս ունեմ, հիմա համոզվեցիք, միսս Քեթի, դա՛ւ այն անձը չեք, որ օգնեք նրան. նրա հիվանդության պատճառը ձեզ հետ կապված լինելու հանգամանքը չէ: Դե, բավական է, գնանք. հենց որ տեսնի՝ կողքին մարդ չկա, որ ուշադրություն դարձնի իր հիմարության վրա, նա ուրախությունը հանգիստ կպառնկի:

Քեթին բարձ դրեց նրա գլխի տակ, ջուր բերեց տվեց. նա շրնդունեց բաժակը և բարձի վրա անհանգիստ շուռ ու մուռ եկավ, կարծես քար կամ փայտի կտոր լիներ:

Լեյդիկը փորձեց նրան ավելի հարմար դիրքով պառկեցնել: Լեյդիկես չեմ կարող, — ասաց նա, — զլուխս շատ ցածր է:

Քեթրինը բերեց երկրորդ բարձը և դրեց մյուս բարձի վրա:

Իսկ այդպես էլ շատ բարձր է, — փնթփնթաց զայրույթ տոաչաղնոզ արարածը:

Հասցա ի՞նչ ձևով սարքեմ, — հարցրեց հուսահատված Քեթին:

Լինթընը հակվեց աղջկա վրա, երբ նա բազմոցի մոտ շոբեց և դրանից ավելի հարմար բան չգտնելով, կռթնեց նրա ուսին:

— Ոչ, այդպես լավ չէ,— ասացի ես։— Բարձն էլ րա-
վական է, տեր Հիթքլիֆ, օրիորդն առանց այդ էլ շատ ժամա-
նակ վատնեց ձեզ վրա, հինգ րոպե անդամ չենք կարող մնալ
այստեղ։

— Ոչ, ոչ, կարող ենք,— առարկեց Քեթին։— Հիմա նա
լավ ու համբերատար է։ Սկսում է հասկանալ, որ այս գիշեր
ես նրանից ավելի շատ դժբախտ կլինեմ, եթե հավատամ,
որ իմ այցի պատճառով նա ավելի վատ զգաց իրեն. և հենց
զրա համար էլ չեմ համարձակվի նորից գալ։ Ճիշտն ասա,
կինթըն, ես իսկապե՞ս չպետք է գամ, եթե քեզ վնաս պատ-
ճառեցի։

— Դու պետք է գաս, որ բուժես ինձ,— պատասխանեց
նա,— անպայման պետք է գաս, որովհետև դու, իրոք, վնաս
հասցրիր ինձ։ Եվ այն էլ շատ մեծ՝ ինքդ էլ գիտես։ Երբ դուք
եկաք, ես այնքան էլ վատ չէի, ինչքան հիմա, մի՞թե վատ էի։

— Բայց ախր դուք ինքներդ լացով և կամակորուժյամբ
ձեզ զցեցիք տանջալից վիճակի մեջ,— ասացի ես։

— Ես քեզ ոչինչ չեմ արել,— ասաց նրա քեռու աղջի-
կը։— Ինչ-որ է, այժմ մենք բարեկամներ կլինենք։ Ես քեզ
հարկավոր եմ, դու իսկապե՞ս ուզում ես երբեմն տեսնել
ինձ։

— Ասացի, որ ուզում եմ,— անհամբերությամբ ասաց
տղան։— Նստիր բազմոցին և թույլ տուր, որ հենվեմ քո
ծնկներին։ Այդպես մայրս էր ժամերով նստում ինձ հետ։
Նստիր հանգիստ և մի խոսիր։ Բայց կարող ես երգել, եթե
կարողանում ես կամ էլ անգիր առել մի որևէ հետաքրքիր
երկար բալլադ՝ մեկն այն բալլադներից, որ խոստացար սո-
վորեցնել ինձ, նաև կարելի է մի որևէ պատմվածք։ Բայց
ապելի շուտ կուզենայի բալլադ լսել. դե, սկսիր։

Քեթրինը հիշողությամբ կրկնեց մի երկար բալլադ։ Այդ
զբաղմունքը երկուսին էլ շատ դուր եկավ։ Կինթընը ցանկա-
ցավ լսել մի ուրիշը, ապա էլի մեկը՝ հաշվի շառնելով իմ
վճռական առարկումները. այդպես ձգձգվեց, մինչև որ ժա-
մացույցը իսկեց առաներկուսը և մենք բակից լսեցինք Հեր-
թլի քայերի ձայնը, նա վերադարձել էր ճաշելու։

— Իսկ վա՞ղը, Քեթրին, վաղը կգա՞ս այստեղ,— հարցրեց

պատանի Հիթթլիֆը՝ բռնելով նրա շորից, երբ նա, հակառակ իր ցանկության, վերկացավ տեղից:

— Ոչ,— միջամանցի ես,— ո՛չ վաղը և ո՛չ էլ մյուս օրը:

Բայց Քեթրիէնը, Երեմի, այլ պատասխան էր տվել, որովհետև Լինթընը դեմքը փայլեց, երբ աղջիկը հակվեց և ինչ-որ բան շնչաց նրա ակունջին:

— Վաղը չեք գա, լավ իմացեք, միսս,— սկսեցի ես, երբ դուրս եկանք բակ:— Եվ մի էլ երազեք այդ մասին, այո, մի երազեք:

Նա ժպտաց:

— Օ՛հ, ես կդիմեմ լուրջ քայլերի,— շարունակում էի ես:— Այն կողպեքը նորոգել կտամ, և դուք այլևս ոչ մի ճանապարհով չեք կարող փախչել:

— Ես կարող եմ անցնել ցանկապատի վրայով,— ծիծաղելով ասաց նա:— Ազարակատունը բանտ չէ, էլլեն, և դու էլ իմ բանտապանը չես. բացի այդ, ես համարյա տասնյոթ եմ: Մեծահասակ կին եմ և հավատացած եմ, որ Լինթընը շատ շուտ կապաքինվի, եթե ինձ թույլ տրվի խնամել նրան: Աս նրանից մեծ եմ, գիտես այդ, և ավելի ինչլացի, այնքան էլ երեխա չեմ, ճի՞շտ է: Շատ շուտ, սիրաշահելով, ես նրան կտանեմ իմ ցանկացած ուղղությամբ: Նա հիանալի, ամենասիրելի տղան է, եթե իրեն լավ է պահում: Իմ ձեռքերում նա կդառնա սքանչելի մի տղա: Մենք երբեք վեճի չենք բռնվի՝ իրար բնակլանալուց հետո, մի՞թե այդպես չի լինի: Նու քեզ, էլլեն, դո՛ւր է դալիս:

Դո՛ւր է գալիս,— ճշացի ես:— Նա դեռ երեխա է, մի փոքր շփուկոտ բնավորություն: Բարերարտաբար, ինչպես ենթադրում էր միսսը Հիթթլիֆը, նա չի տարի մինչև քսան տարեկան: Աս նույնիսկ կասկածում եմ, որ տարի մինչև դարուն: Եթե նա կորչի էլ, դա մեծ կորուստ չի լինի ընտանիքի համար: Այ մեկ համար երջանկություն է, որ հայրը վերցրեց նրան իր մոտ: Արքան մեզմ վերաբերվեն նրա հետ, այնքան ավելի ձանձրալի աս կամայ կդառնա: Աս ուրախ եմ, որ նա ձեռք ամուսինը չի լինի, միսս Քեթրին:

Էլիբրինը լրջորեն մտալովեց՝ այդ խոսքերը լսելով: Այդ անփույլ խոսակցությունը սպառնում էր մասին, վերավորեց նրա գգայմունքները:

— Նա ինձանից ավելի ջահել է,— բավական երկար մտածելուց հետո պատասխանեց Քեթին,— ուրեմն նա պետք է ինձնից ավելի երկար ապրի և կապրի, պետք է ապրի, քանի դեռ ես ողջ կլինեմ: Նա հիմա նույնքան ամրակազմ է, որքան այն ժամանակ, երբ մենք նրան նոր բերեցինք հյուսիս, դրանում ես համոզված եմ: Նա հայրիկի պես միայն մրսել է: Դու ասում ես, որ հայրիկը կլավանա, իսկ ինչո՞ւ նա չպետք է լավանա:

— Լավ, լավ,— ասացի ես, վերջ ի վերջո, մենք անհանգըստանալու բան չունենք. լսեք, միսս, և հիշեք, որ ես իմ խոսքը կկատարեմ. եթե դուք մի անգամ ևս փորձեք Մուլեգին հողմերի դարավանդ գալ ինձ հետ կամ առանց ինձ, ես ամեն ինչ կպատմեմ միստր Լինթընին, և մինչև որ նա թույլ չտա, ձեր մտերմությունը հորաքրոջ տղայի հետ չպետք է վերականգնվի:

— Այն արդեն վերականգնվել է,— նեղացած փնթփնթաց Քեթրինը:

— Բայց դա այլևս չպետք է շարունակվի,— ասացի ես:

— Դե, կտեսնենք,— եղավ պատասխանը, և նա արագ վազեց, թողնելով ինձ, որ լարված քարշ դամ իր հետևից:

Երկուսս էլ տուն հասանք ճաշի ժամից առաջ. իմ տերը կարծում էր, թե մենք զբոսնելիս ենք եղել այգում, դրա համար էլ բացատրություն չպահանջեց: Հենց որ տուն մտանք, ես շտապեցի թրջված կոշիկներս ու գուլպաներս փոխել, բայց Դարավանդում կոշիկներով շատ երկար էի մնացել, և դա էժան շնտեց վրաս: Հաջորդ առավոտյան պառկեցի և երեք շաբաթ ի վիճակի չէի կատարելու իմ պարտականությունները. դա մի աղետ էր, որը մինչ այդ երբեք չէր պատահել ինձ և շնորհակալությունս պետք է ասեմ, որ ոչ մի անգամ չեղավ նաև հետագայում:

Իմ փոքրիկ տիրուհին հրեշտակի պես նստում, խնամում, խրախուսում էր ինձ իմ մենության պահերին: Ես իմ բանտարկությունից շատ ընկճվում էի, դա տաղակալի էր մի աշխույժ ու գործարար կնոջ համար: Բայց շատ քչերը հիմք կունենան գանգատվելու, քան ես: Միսս Քեթրինը, միստր Լինթընի սենյակից դուրս գալուց հետո, հայտնվում էր իմ անկողնու մոտ: Նրա օրը բաժանված էր մեր երկուսի միջև.

ոչ մի բուսական շէր վատնում իր գվարճության համար, նա անուշադրության մատնեց և՛ ճաշելը, և՛ ընթերցանությունը, թողեց խաղերը, դարձավ ամենաքնքուշ հիվանդապահուհի. ինչ ջերմ սիրտ ունեւր, եթե այդպես սիրելով հորը, նա այնքան շատ բան էր ինձ տալիս:

Ասացի, որ իր օրերը նա բաժանում էր մեր միջև. բայց իմ տերը շուտ էր մեկուսանում հանգստանալու, իսկ ինձ ժամը վեցից հետո սովորաբար ոչ մի բան հարկավոր չէր, այնպես որ նա իր երեկոները լիիրավ տերն էր:

Խեղճ աղջիկ, Ես երբեք չէի մտածում, թե թիջից հետո միայնակ մնալով, ինչով էր զբաղվում: Եվ, երբ հաճախ վաղելով գալիս էր ինձ «բարի գիշեր» ասելու, նրա այտերի վրա նկատվում էր թարմ կարմրություն, իսկ նուրբ մատներին՝ վարդագույն երանգ, և փոխանակ մտածելու, որ դա առաջաթել է ցրտին դաշտերում ձիով զբոսնելիս, ես դա վերագրում էի դրադարանի թեժ կրակին:

ԳՐՈՒԽ ՔՍԱՆՉՈՐՍԵՐՈՐԴ

Երեք շաբաթ հետո միայն ես ի վիճակի եղա դուրս գալ սենյակից և շարժվել տան մեջ: Առաջին երեկոն, երբ կարողացա նստել, Քեթրինին խնդրեցի կարգալ ինձ համար, որովհետև իմ տեսողությունը թուլացել էր: Նստեցի՞նք գրադարանում, քանի որ միտքը լինթրնը արդեն պառկել էր քնելու. Քեթրին համաձայնեց, բայց, ինչպես ինձ թվաց, հակառակ իր կամքին, մտածելով, որ ինձ մոտ եղած զրքերը նրա համար հետաքրքիր չեն լինի, առաջարկեցի իր ընտրությամբ մի բան կարդալ:

Նա բնարեց իր սիրած գրքերից մեկը և մոտ մեկ ժամ անընդմեջ կարդում էր, հետո սկսվեցին հաճախակի հարցեր տեղալ:

Էլիեն, դու չե՞ս հոգնել, ամելի լավ չէ՞ր լինի, պառկելի: Նորից կհիվանդանաս, եթե այդպես երկար նստես, էլիեն:

— Ոչ, ոչ, սիրելիս, չեմ հողնել,— շարունակ պատասխանում էի ես:

Տեսնելով, որ նստած եմ անշարժ, նա փորձեց իր համար անհրապույր այդ դրադմունքից ելք փնտրել: Հարցեր տալու փոխարեն սկսեց հորանջել, ձգվել և վերջապես, ասաց.

— էլլեն, հողնեցի:

— Ուրեմն կարդալը թողեք, կխոսենք,— պատասխանեցի ես:

Բայց ստացվեց ավելի վատ բան. մինչև ութը նա շարունակ նշարդանանում, հռուշում, նայում էր իր ժամացույցին. ի վերջո, քունը հաղթահարելով, գնաց իր սենյակը. հայացքը ձանձրալի էր, ծանր և անընդհատ տրորում էր աչքերը:

Երկրորդ երեկոյին նա դարձավ էլ ավելի անհամբեր, իսկ երրորդին, հրբ անցկացրեց իմ բնկերակցությամբ, սկսեց դանգատվել գլխացավից ու լքեց ինձ:

Նրա վարքագիծը ինձ տարօրինակ թվաց. բավական երկար ժամանակ նստած մնալուց հետո, որոշեցի գնալ հարցնել, թե արդյոք գլխացավը չթեթևացավ, և առաջարկել, որ վերևում մթնում նստելու փոխարեն, ավելի լավ է ցած իջնի և պառկի բազմոցին:

Քեթրինը ո՛չ վերևում էր և ո՛չ էլ ներքևում: Ծառանհորը հավաստիացրին, որ նրան չեն տեսել: Ականջ դրեցի միտոր էդգարի սենյակի դռանը՝ այնտեղ էլ յուրթյուն էր տիրում: Վերդարձա օրիորդի սենյակը, մոմը հանգրթի և նստեցի լուսամուտի մոտ:

Պայծառ փայլում էր լուսնյակը. ձյան թեթև փաթիլները ծածկել էին գետինը, և ես մտածեցի՝ գուցե աղջկա խելքին փչել է դուրս գալ պարտեզ թարմ օդում դբոսնելո՞ւ: Տեսա, որ պարտեզի ցանկապատի երկայնքով, նիրսի կողմից, անցնում է մի կերպարանք. բայց դա իմ ջահել տիրուհին չէր. հրբ նա երևաց լույսով ողողված տեղում, ես ճանաչեցի մեր ձիապաններից մեկին:

Նա սպասում էր բավական երկար ժամանակ, նայելով այդինների միջով անցնող ճանապարհին, ապա արագորեն հեռացավ, կարծես ինչ-որ բան էր նկատել և իսկույն նորից երևաց՝ սանձից բռնած բերելով օրիորդի ձին. հետո տեսա և

օրիորդին. նա հենց նոր էր իջել թամբից և քայլում էր ձիու կողքով:

Չիապանը գաղտագողի խոտի վրայով ձին տարավ ախոռ: Քեթին հյուրասենյակի լուսամուտից անցավ ներս և անաղմուկ սահեց վերև՝ իր սենյակը, որտեղ ես սպասում էի նրան:

Նա զգուշությամբ դուռը իր հետևից ծածկեց, հանեց ձուկնապատ կոշիկները, արձակեց գլխարկի ժապավենը և շկասկածելով, որ ես լրտեսում եմ իրեն, պատրաստվում էր իր վրայից հանել թիկնոցը, երբ հանկարծ ես վերկայացա և ներկայացա նրան: Նա, ապշած, անկապ ինչ-որ բան փնթփընթաց և քարացավ տեղում:

— Իմ սիրելի միս Քեթրին,— սկսեցի ես, շատ աշխույժ ձևով հիշեցի նրա վերջերս ցուցաբերած բարությունը և հանդիմանութուններով շհարձակվեցի նրա վրա,— այսպիսի ուշ ժամին ո՞ւր էիք ձիով գնացել: Եվ ի՞նչ կարիք կա ինձ խարել ինչ-որ հեքիաթներ հնարելով. որտե՞ղ էիք: Դե խոսեք:

— Պարտեզի հեռավոր ծայրում,— ասաց նա կմկմալով:— Ոչինչ չեմ հնարում:

— Եվ էլ ոչ մի տե՞ղ,— հարցրի ես:

— Էլ ոչ մի տեղ,— Եղավ նրա պատասխանը:

— Օ՛հ, Քեթրին,— ասացի ես վշտացած:— Դուք ինքներդ էլ գիտեք, որ ձեզ վատ էք պահում, այլապես սխալ բան չէիք ասի: Դա ինձ վշտացնում է: Ավելի լավ է, երեք ամիս հիվանդանամ, քան լսեմ, թե ինչպես եք դուք կանխահայտ ստեր ասում:

Նա նևտովից զեպի ինձ, սկսեց փղձկալով արտասովել և կախովից իմ վզից:

Ա՛խ, էլլին, այնպես վախենում եմ, որ դու բարկահաս,— ասաց նա,— խոստացիր չբարկանալ և դու կիմանաս ամբողջ ճշմարտությունը. ես չեմ սիրում թաքցնել:

Միասին նստեցինք լուսամուտի գոգին. ես Քեթրին համառապրի, որ չեմ նախատի իրեն, ինչպիսին էլ նրա գաղտնիքը լինի, և, իհարկե, առանց այդ էլ կուահում էի, թե ինչ պետք է եղած լինի. և այսպես նա սկսեց.

Ուս Մոյսեպին հողմերի դարավանդում էի, էլլին, և այն ժամանակվանից ի վեր, որ դու հիվանդացար, ամեն օր գնում էի այնտեղ. բայց թողեցի միայն՝ երեք երեկո սկզբում և

երկուսն էլ քո ապագինվելուց հետո: Ես Մայքլին տալիս էի նկարագարդ գրքեր, որպեսզի ամեն երեկո Միննին պատրաստեր, որ ևս Դարավանդից գնայի, իսկ վերադառնալուց հետո ձին տաներ ախոռը: Միայն իմացիր, դու նրան չպետք է հանդիմանես. վնցն անց կեսին գնում էի Դարավանդ, որտեղ մեռում էի մինչև ութն անց կեսը, իսկ հետո քառատրոփ սլանում էի տուն: Ես գնում էի ոչ թե հաճույքիս համար. հաճախ ամբողջ երեկոն ինձ այնտեղ դժբախտ էի զգում: Թերևս շաբաթը մեկ անգամ ինձ երջանիկ էի զգում: Սկզբում մտածում էի, թե դժվար կլինի քեզ համոզել, որ թույլատրեիր Լինթընին տված խոստումս կատարել. որովհետև երբ մենք հեռանում էինք, ևս նրան խոստացա հաջորդ օրը եորից գնալ մտար: Բայց հետևյալ օրը դու մնացիր վերնահարկում, և այսպես ամեն ինչ կատարվեց առանց զլխացավանքի. մինչ Մայքլը կեսօրից հետո նորոգում էր պարտեզի դռան կողպեքը, ևս բանալին վերցրի նրանից և պատմեցի, թե ինչպես իմ հորաքրոջ տղան խնդրում է ինձ այցելել իրեն, որովհետև հիվանդ է և չի կարող զալ Ագարակատուն, և ինչպես հայրս առարկում է, թույլ չի տալիս, որ գնամ այնտեղ: Հետո նրա հետ էլ պայմանավորվեցինք ձիու մասին: Նա սիրում է կարգալ, ուզում է շուտով այդ աշխատանքը թողնել և ամուսնանալ, ուստի առաջարկեց, որ վերադարձից հետո գրքեր տամ ընթերցելու, իսկ ինքն ինձ համար կանի ինչ-որ կամենամ, բայց ես գերադասում էի իմ սեփական գրքերից տալ, և դրանք միանգամայն բավարարում էին նրան:

Երբ երկրորդ անգամ գնացի, Լինթընը կարծես բարձր տրամադրություն մեջ էր. Զիլահը (այսինքն՝ տնտեսուհին) մեզ համար պատրաստեց մի մաքուր սենյակ, կրակ վառեց և սսաց, որ կարող ենք անել ինչ ուզում ենք, որովհետև Զողեֆը գնաց ազոթքի ժողովի, իսկ Հերթըն էրնշուուն իր շների հետ գնացել էր անտառներում փասխաններ որսալու, ինչպես հետո իմացա:

Տնտեսուհին ինձ տվեց թունդ գինի և մեղրաբլիթ՝ շատ բարեսիրտ էր երևում. կրակի մոտ Լինթընը նստած էր բազկաթոռում, իսկ ևս փոքրիկ ճոճվող աթոռին, և ծիծաղում, ուրախ շատախոսում էինք, և այսպես խոսեցինք շատ բա-

ների մասին. մենք ծրագրում էինք, թե ամառը ուր կզնանք և ինչ կանենք: Բայց զուցե չպատմեմ, որովհետև, միևնույն է, դու այդ ամենը հիմարություն կհամարես:

Այդուհանդերձ, մեկ անգամ քիչ մնաց ընդհարվեինք: Նա ասաց՝ ամենահաճելի բանը կլինի, որ հուլիսյան տաք օրը առավոտից մինչև երեկո պառկել մորուտների մեջ գտնվող հավամբզու թփերով ծածկված դարատափի մեջտեղում, լսել ծաղիկների մեջ պտտվող մեղունների երազանքներով լի բզզոցը, բարձր, զլխավերևում, թռչող արտույտների երգը, իսկ անհունում դիտել անընդհատ փայլին տվող անամպ, լազուր երկինքն ու պայծառ արևը: Այգալիսին է նրա դրախտային երջանկության կատարյալ ըմբռնումը: Ծս էլ նկարագրեցի իմը՝ ճոճվել սոսափող կանաչ ծառերի վրա, երբ փշում է արևմտյան քամին, և արագորեն երկնքով մեկ սահում են պայծառ սպիտակ ամպեր. և ոչ միայն արտույտները, այլև տորդիկները, սև կեռնեխները, կանեփահավերն ու կկուները օդը բոլոր կողմերից լցնում են հաճելի երաժշտությամբ, իսկ դաշտերը փովում յարածվում են սառը, սևին տվող անտառապատ ձորակներով կտրտված հեռավորության վրա, երբ զեփյուռից ալիքածև մեծ կոհակներով ծփում է բարձր խոտը. անտառները, կարկաչահոս ջրերը և ամբողջ աշխարհը արթուն ու անզուսպ ցնծության մեջ են: Լինթընը ուզում էր, որ ամեն ինչ լինի խաղաղության արբեցման մեջ, իսկ ես ուզում էի, որ ամեն ինչ ցուցլա ու պար գա բուռն սքանչանքի մեջ:

Ծս ասացի, որ նրա դրախտը կլինի լոկ կիսակենդան դրախտ, իսկ նա ասաց, որ իմը ինչ-որ հարբած բան կլինի. ես ասացի, որ նրա դրախտում ես կբնեի, իսկ նա՝ թե իմ դրախտում ինքը շէր կարողանա շնչել, և դարձավ շատ դյուրողորդի: Վերջապես, մենք համաձայնության եկանք, որ կփորձենք թե՛ մեկը և թե՛ մյուսը հենց որ համապատասխան եղանակ լինի, ապա համբուրվեցինք և նորից բարեկամներ դարձանք: Մի ժամ հանդիստ նստելուց հետո ես, դիտեցի ողորկ, մերկ հատակով սենյակը և մտածեցի, թե ինչքան լավ կլինի այստեղ խաղ անել, եթե մի կողմ քաշենք սևիկանը. խնդրեցի Լինթընին՝ կանչել Զիլահին, որ օգնի մեզ, մենք աչքակապուկ կխաղանք, թող նա փորձի մեզ բռնել:

Ճիշտ այնպես, էլլեն, ինչպես մենք անում էինք քեզ հետ միասին: Նա շուղեց. դրա մեջ, ասաց, ոչ մի հաճույք չկա, բայց համաձայնեց ինձ հետ գնդակ խաղալ: Պահարանում հին խաղալիքների՝ հուերի, օղերի, ռակետների ու փետրադնդակների կուլտի մեջ գտանք երկու գնդակ: Մեկը նշված էր «Ք» տառով, մյուսը՝ «Հ» տառով. ես ցանկացա վերցնել «Ք» տառով նշվածը, որովհետև դա կարող էր նշանակել «Քեթրին», իսկ «Հ»-ն հարմարվում էր «Հիթքլի»-ին՝ դա նրա ազգանունն էր. բայց «Հ»-ի տեսքը մաշված էր, և դա կինթրնին դուր չեկավ:

Ես խաղը շարունակ տանում էի, նա նորից շղայնացավ, սկսեց հաղալ և վերադարձավ իր բազկաթոռին. այդ երեկո, այնուամենայնիվ, նրա լավ տրամադրությունը հեշտությամբ վերականգնվեց, նա հիացած էր երկու-երեք ևրգով՝ քո երգերով, էլլեն, և երբ ես պատրաստվեցի դնալ, նա խնդրում, աղերսում էր, որ հետևյալ երեկոյան նորից գամ, և ես խոստացա:

Ես և Միննին թեթև քամու պես թռչում էինք դեպի տուն. գիշերը մինչև առավոտ երազում տեսնում էի Մուկեզին հողմերի դարավանդն ու իմ քաղցրիկ սիրելի հորաքրոջ տղային:

Հաշորդ օրը, առավոտյան, ես տխուր էի. մասամբ այն պատճառով, որ դու վատացար, մասամբ էլ՝ ուզում էի, որ հայրս իմանար իմ դժոխանքների մասին և հավանություն տար դրանց, բայց թեյից հետո գեղեցիկ լուսնյակ գիշեր էր, և երբ ձի նստեցի, խավարը ողողվեց լուսնի լույսով:

Մի երջանիկ գիշեր էլ կունենամ, մտածում էի ինքս ինձ. և ինձ ավելի շատ ուրախացնում էր այն, որ իմ սիրելի կինթրնը նույնպես կունենա:

Ես շտապ անցա նրանց պարտեզը և ուզում էի մոտենալ հետևի մուտքին, երբ այդ էրնշուսն հանդիպեց ինձ, վերցրեց սանձերը և հրամայեց ներս անցնել գլխավոր մուտքից: Նա շոյեց Միննիի բաշը, ասաց, որ դեղեցիկ ձի է, և, ըստ երեվույթին, ուզում էր, որ խոսեմ հետը: Բայց ես միայն կարգադրեցի ձին հանդիստ թողնել, այլապես քացի կտա իրեն:

Դրանից ձին մեծ վնաս չի կրի, — պատասխանեց իր կոպիտ առոգանությամբ և ժպտալով զննեց ձիու ոտքերը:

Ես գրեթե ուզում էի, որ Միննին ցույց տա իրեն, բայց

էրնշոուն գնաց դուռը բաց անելու և երբ սողնակը բարձրացրեց, նայեց վրայի մակագրութեանը, ապա ամաչկոտութեամբ և խանդավառութեան ինչ-որ հիմար խառնուրդով սասց.

— Մի՛սս Քեթրին: Ես հիմա այդ բանը կարող եմ կարգալ,

— Հրաշալի՛ է,— բացականչեցի ես,— հապա միլսենք... Դուք ուրեմն խելոքացել եք:

Նա տառ առ տառ վանկերը ծոր տալով, կարդաց «Հերթըն էրնշոուն» անունը:

— Իսկ թվե՞րը,— ասացի ես, որպէսզի քաջալերեմ նրան, որովհետև կմկմալով կանգ առավ:

— Դրանք դեռ չեմ կարող կարգալ,— պատասխանեց նա:

— Է՛հ, դժբո,— ասացի, սրտանց ծիծաղելով նրա ձախողման վրա:

Հիմարը զարմացած նայում էր ինձ, և նրա շուրթերին թրթռում էր քմծիծաղը, դեմքը մռայլվեց, կարծես վարանում էր՝ արդյոք ինքն է՞լ ծիծաղի ինձ հետ. նշանակո՞ւմ են արդյոք իմ խոսքերը հաճելի բարեկամութեան, թե՛ ինչպես էլ իրականում, արհամարհանք:

Հանկարծ լուրջ տեսք ընդունելով՝ ես փարատեցի նրա կասկածները և պահանջեցի, որ թողնի հեռանա, որովհետև եկել էի ոչ թե նրան, այլ Լինթընին տեսնելու:

Նա կարմրեց (դա տեսա լուսնի լույսի տակ), ձեռքը հետ քաշեց նիզից և գաղտագողի գնաց, հեռացավ որպէս խոցված փառասիրութեան մարմնավորում: Նա, կարծես, երկակայեց, որ ինքը նույնքան կատարյալ է, որքան և Լինթընը, որովհետև կարողանում էր իր անունը վանկերով կարգալ և խիստ ապշեց, որ ես այլ կերպ էի մտածում:

— Սպասե՛ք, միսս Քեթրին, սիրելիս,— ընդհատեցի նա:— Չեմ ուզում հանդիմանել, բայց ձեր վարքագիծը ինձ դուր չի գալիս: Եթե դուք հիշեիք, որ Հերթընը ձեզ համար նույնպիսի ազգական է, որպիսին է և տեր Հիթքլիֆը, դուք կզգայիք, որ ճիշտ չեք վարվել նրա հետ: Համենայն դեպս, Լինթընի պես կատարյալ լինելու նրա ցանկութեանը պետք է ընդունել որպէս գովելի փառասիրութեան, և, հավանաբար, նա չի սովորում միայն նրա համար, որ գլուխը գովի. դուք դեռ դրու՛նից առաջ նրան արդեն ստիպել եք ամաչել իր տգի-

տության համար, դա կասկածից դուրս է, և նա ուզեցել է ուղղել այն, որպեսզի ձեզ հաճույք պատճառի: Մաղրել նրան հաջող փորձը՝ դաստիարակության շատ վատ միջոց է: Եթե դուք դաստիարակված լինեիք նրա պայմաններում, կարծում եք, ավելի պակաս կուպիտ կլինեիք: Նա նույնքան խելացի ու աշխույժ երեխա էր, որքան և դուք, և ցանկալին այն է, որ այժմ նրան արհամարհում են, որովհետև այդ ստոր Հիթլերիֆը նրա հետ անարդարացի է վարվել:

— Դե լավ, էլլեն, ինչ է, պատրաստվում ես լա՞ց լինել,— բացականչեց Քեթին, զարմանալով, որ ես դա այդքան մոտ եմ ընդունում սրտիս:— Բայց սպասիր. դու հիմա կիմանաս, նա ԱԲԳԴ սովորեց, որպեսզի արժանանա իմ գովասանքին, և միթե արժիր սիրալիր լինել այդ անասունի հետ: Ես ներս մտա: Լինթընը պակաս էր բազմոցին և կիսով չափ բարձրացավ, որ ողջունի ինձ:

— Ես այսօր հիվանդ ևմ, Քեթրին, սիրելիս,— ասաց նա,— այնպես որ պետք է խոսես դու, իսկ ես կլսեմ: Մոտ եկ, նստիր ինձ մոտ. ես հավատացած էի, որ դու շես խախտի խոստումդ և գնալուց առաջ նորից կխոստանաս զալ:

Ես այժմ գիտեի, որ նրան չպետք է ջղայնացնել, որովհետև նա հիվանդ է, խոսում էի մեղմ, հարցեր չէի տալիս և աշխատում էի ոչ մի բանով նրան չզայրացնել: Ես նրա համար բերեցի իմ ամենալավ զրքերից մի քանիսը. նա խընդրեց դրանցից մեկը մի քիչ կարդալ իր համար, և ես պատրաստվում էի կատարել նրա խնդիրքը, երբ էրնշոուն լայն բաց արեց դուռը՝ մտածել և որոշել էր իր շարության թույնը թափել մեզ վրա: Ուղիղ մտեցավ մեզ, բռնեց Լինթընի թևից և ամբողջ ուժով նրան բազկաթոռից ցած քաշեց:

— Դեհ քո սենյակը,— զայրացած, հազիվ հասկանալի լեզվով ասաց նա. դեմքը ասես ուռած ու գազաղած լիներ:— Նրան էլ տար հետդ, եթե եկել է լոկ քեզ համար, ձեզ չի հաջողվի ինձ դուրս անել այստեղից: Զբվեք երկուսդ էլ:

Նա հայհոյանքներ թափեց մեր գլխին և ժամանակ չտվեց, որ Լինթընը պատասխանի. նրան ուղղակի շարտեց խոհանոց, երբ ես հետևեցի նրան, ինձ վրա էլ բռունցքը սեղմեց, ըստ երևույթին, բուռն ցանկությամբ, որ մի հարվածով գետին տապալի ինձ: Մի պահ ես վախեցա և զրքերից մեկը

վայր գցեցի, նա գիրքը քացով շարանց իմ հետևից և դուռը շրխկոցով փակեց:

Ես լսեցի շար, շոնդալից ծիծաղ օջախի մոտից և շուտ գալով տեսա այդ գարշելի Ջոզեֆին, որ կանգնած, իր ոսկրոտ ձեռքերը շփում և ցնցվում էր:

— Ես այդպես էլ գիտեի, որ նա ձեզ դուրս կվճնդի: Հրաշալի՛ տղա է: Նա ճիշտ զգացողութուն ունի: Գիտի... այո, գիտի ինձնից ոչ վատ, թե ով կլինի այստեղի տերը... հա՛, հա՛, հա՛: Ահա թե ինչու նա, ինչպես հարկն է, ձեզ ճարպկորեն դուրս քշեց. հա՛, հա՛, հա՛:

— Ո՛ւր գնանք, — հարցրի ես հորաքրոջս տղային՝ անուշադրության մատնելով ծերուկի ծաղրանքը:

Լինթընը գունատվել, դողում էր ամբողջապես: Այդ պահին նա անդուր էր, էլլեն: Օ՛, ոչ, սարսափելի էր: Նրա դեմքն ու խոշոր աչքերը ունեին վայրագ ու անզոր ցատումի արտահայտություն: Նա բռնեց դռան բռնակը և թափով քաշեց. դուռը կողպած էր ներսի կողմից:

— Ներս թող, եթե շոնդնես, կսպանեմ քեզ: Ներս թող, թե չէ կսպանեմ քեզ, — նա ոչ թե ասում, այլ ավելի շուտ գոռում էր: — Սատանա, շար ոգի, ես կսպանեմ քեզ... կըսպանեմ:

Ջոզեֆը նորից սկսեց ծիծաղել իր կոկոսն ծիծաղով:

— Ա՛յ դա արդեն հայրն է, — գոռում էր նա, — դա հայրն է: Մեր մեջ միշտ էլ ինչ-որ բան երկուսից էլ կա: Հերթըն, տղաս, ուշադրություն չդարձնես, երբեք չվախենաս... նա շի կարող քեզ հասնել:

Ես բռնեցի Լինթընի ձեռքից և փորձեցի նրան ետ քաշել, բայց նա այնպիսի սարսափելի ճիչ արձակեց, որ շհամարձակվեցի շարունակել:

Վերջապես նրա ճիչերը խեղդվեցին հազի սոսկալի նուպայի մեջ, արյուն հորդաց, և նա վայր ընկավ:

Սարսափից տանջահար ես դուրս վաղեցի բակ, սկսեցի բարձր ձայնով կանչել Զիլահին: Շուտով նա լսեց ինձ. շտեմարանի հետևի ծածկոցի տակ կռվն էր կթում և, աշխատանքը թողնելով, շտապեց ինձ մոտ, հարցրեց, թե ի՞նչ է պատահել:

Շունշս կտրվում էր, շէի կարողանում բացատրել: Նրան

քաշիցի խոհանոց և շուրջս նայելով փնտրում էի Լինթընին: Էրնշոուն դուրս էր եկել դիտելու, թե ինչ շարիք էր գործել, և հիմա դժբախտին տանում էր վերև: Զիլլահի հետ միասին սանդուղքով բարձրացանք նրա հետևից, բայց վերևի հարթակում նա կանգնեցրեց ինձ և ասաց, որ ես ներս շմտնեմ, և որ պետք է թողնեմ գնամ տուն:

Ես սկսեցի բղավել, որ նա սպանել է Լինթընին, և որ ես անսպասման պետք է ներս անցնեմ:

Զոզեֆը դուռը կողպեց և հայտարարեց, որ ինձ թույլ չի տա ներս մտնել, և հարցրեց, թե ես էլ հո ի ծնե խելագա՞ր չեմ, ինչպիսին է իմ հորաքրոջ տղան:

Ես կանգնած լաց էի լինում, մինչև որ տնտեսուհին դուրս եկավ Լինթընի մոտից: Ասաց, որ տղան մի փոքր լավ է, բայց ասվում են ու ճշոցները խանգարում են նրան, և համարյա զոռով ինձ քաշեց տարավ ճաշասենյակ:

— Էլլեն, ես պատրաստ էի դիտիս մազերը պոկել: Այնպես էի լալիս, հեկեկում, որ գրեթե ոչինչ չէի տեսնում, իսկ այդ սրիկան, որին դու այնպես համակրում ես, դիմացս կանգնած, մերթ ընդ մերթ համարձակվում էր ստիպել ինձ լաց չլինել, շեշտելով, որ ինքը ոչ մի բանում մեղավոր չէ՝ վերջ ի վերջո, վախենալով իմ սպառնանքներից, որ ես հորս կհայտնեմ, և նրան բանտ կնետեն ու կկախեն, ինքը սկսեց հեկեկալ և շտապեց դուրս գնալ, որպեսզի թաքցնի իր երկշոտ հուզումը:

Բայց ես դեռ չազատվեցի նրանից: Երբ ի վերջո, ինձ հարկադրեցին մեկնել, և երբ տնից արդեն հեռացել էի հարյուր մետր, նա հանկարծ խավարից դուրս պրծավ ճանապարհի վրա, բռնեց Միննիի սանձից և կանգնեցրեց ինձ:

— Միսս Քեթրին, շատ վշտացած եմ,— սկսեց նա,— բայց, անշուշտ, վատ բան ստացվեց...

Ես մտրակով հարվածեցի նրան, կարծելով, որ նա թերևս, կարող է սպանել ինձ: Նա սանձը բաց թողեց, իմ հետևից նողկալի հայհոյանքներ նետելով, համարյա կիսաուշաթափ, քառատրոփ սլացա դեպի տուն:

Այն երեկո ես չեկա քեզ մոտ, «բարի գիշեր» ասելու: Հաջորդ օրը Մոլեգին հողմերի դարավանդ շոնացի, թեև անշափ ուզում էի գնալ, բայց շափազանց հուզված էի, և մերթ սար-

սափում էի հանկարծ յսել, որ Լինթընը մեռել է, միշտ ^{սր} վա-
խենում էի Հերթընին հանդիպելու մտքից:

Երրորդ օրը ոխակի դիմեցի կամ, համենայն դեպս, երկար
շղիմացա անհայտութիւնը և նորից տնից դուրս սողոսկեցի:
Ճանապարհ ընկա ժամը հինգին, գնացի ոտքով, ենթադրե-
լով, որ ինձ կհաջողվի գաղտագողի թափանցել տուն և ան-
նկատելի կերպով մտնել Լինթընի սենյակը: Բայց շնորհ իմաց
տվին իմ մոտենալը. ինձ բնդունեց Զիլլահը և, ասելով, որ
«տղան լավ կադդուրվում է», ինձ տարավ մի փորրիկ, մա-
քուր, գորգով ծածկված սենյակ, որտեղ հուրախութիւն իմ,
տեսա մի փոքր բաղմոցի վրա պստկած Լինթընին, որ կար-
դում էր իմ աված գրքերից մեկը: Բայց մի ամբողջ ժամ,
էլլեն, նա ոչ ուզում էր խոսել ինձ հետ, ոչ էլ նայել ինձ վրա:
Այդպիսին է նրա դժբախտ բնավորութիւնը: Ինձ լիովին
շփոթեցրեց այն, որ նա բերանը բաց արեց, որ միայն սուտ
ասի, պնդելով, իբր աղմուկը բարձրացրել էի ևս, իսկ Հեր-
թընը մեղավոր չէր:

Եթե առարկելի, անպայման կբորբոքվեի, ուստի վերկացա
և դուրս եկա սենյակից: Նա կամաց կանչեց ինձ. «Քեթրին».
չէր կարծում, որ իրեն շնն պատասխանի, բայց ևս չվերա-
դարձա: Հաջորդ օրը երկրորդ օրն էր, որ ևս նստած մնացի
տանը, համարյա վճռելով, այլևս չգնալ նրա մոտ:

Բայց քանի որ դժվար էր քնել ու վերկենալ և նրա մասին
ոչինչ չլսել, իմ վճիռը հօդս ցնդեց առանց պատշաճ
կերպով ձևավորելու: Եթե առաջ իմ գնալն էր վատ թվում,
հիմա՝ չգնալն էր վատ թվում: Մայքլը եկավ և հարցրեց
Միննին թամբի, թե ոչ. ասացի, որ թամբի, կարծու՞մ էի, ևս
իմ պարտքն եմ կատարում, երբ նժույզը ինձ տանում էր
բլուրները վրայով:

Բակ ընկնելու համար ստիպված էի գնալ տան առջևի մասի
լուսամուտների տակով. անօգուտ էր փորձել՝ թաքցնել իմ
ներկայութիւնը:

— Երիտասարդ տերը տանն է, — ասաց Զիլլահը, երբ
տեսավ, որ ևս բարձրանում եմ վերև՝ հյուրասենյակ:

Ներս մտա. էրնշոուն էլ էր այնտեղ, բայց նա անմիջապես
դուրս եկավ սենյակից: Լինթընը ննջում էր մեծ բազկաթոռին

Նստած: Մոտենալով կրակին՝ ես սկսեցի լարջ տոնով, ինքս էլ կիսով շափ հավատալով խոսքերիս:

— Քանի որ ինձ շեռ սիրում, կինթըն, և քանի որ դու կարծում ես՝ դիտմամբ գալիս եմ, որ քեզ վնաս պատճառեմ, և այնդում էս, իրր ես ամեն անգամ, երբ գալիս եմ, իսկապես քեզ վնասում եմ, ապա սա կլինի մեր վերջին հանդիպումը: Հրաժեշտ տանք իրար, ասա միստր Հիթքլիֆին, որ դու շեռ ուզում ինձ տեսնել, և թող նա այլևս ստեր շհնարի այդ մասին:

— Նստիր և հանիր գլխարկդ, Քեթրին,— պատասխանեց նա:— Դու ինձնից ավելի շատ երջանիկ ես, դու պետք է ավելի բարի լինես: Հայրս այնքան շատ է խոսում իմ թերությունների մասին և այնքան է արհամարհում ինձ, որ ես, բնականաբար, ինքս էլ եմ սկսում կասկածել ինձ վրա, սկսում եմ մտածել, որ ես, իրոք, անպեպք եմ, ինչպես նա հաճախ ասում է. այն ժամանակ իմ մեջ եռում են շարությունն ու դառնությունը, և ես ատում եմ բոլորին: Այո, ես անպետք եմ, բնավորությունս վատ է և տրամադրությունս էլ համարյա միշտ վատ է: Եթե ուզում ես, կարող ես ինձ հրաժեշտ տալ. կազատվես ձանձրույթից: Բայց, Քեթրին, արդարացի եղիր իմ նկատմամբ, հավատա, որ եթե կարողանայի քեզ նման գրավիշ, քեզ նման բարի ու լավը լինել, ես կդառնայի... ես սիրով կուզենայի ավելին լինել: Եվ հավատա, որ քո բարությունը ստիպեց ինձ քեզ սիրել ավելի ուժեղ, քան եթե ես արժանի լինեի քո սիրույն: Թեև շեռ էլ կարող իմ բնավորությունը բացահայտել քո առաջ, ես զղջում, ակոսում եմ դրա համար և մինչև իմ մահը կափսոսամ ու կզղջամ:

Ես զգում էի, որ ճիշտ է ասում. հասկանում էի, որ պետք է ներեմ նրան. և եթե մի բոպե հետո նորից սկսի վեճի բռնվել ինձ հետ, ես կրկին պետք է ներեմ նրան: Մենք հաշտվեցինք, բայց երկուսս էլ արտասվում էինք ամբողջ ժամանակ, քանի դեռ նստած էի նրա մոտ: Արտասվում էինք ոչ միայն տխրությունից, թեև ինձ համար ցավալի էր, որ կինթընը այդպիսի այլանդակ խառնվածք ունի: Նա երբեք թույլ չի տա, որ ընկերները հոգեպես թեթև զգան, և ինքն էլ երբեք թեթևություն չի զգա:

Այդ երեկոյից սկսած ես միշտ էլ զնում էի սրտ փոքր հյուրասենյակը. որովհետև հաջորդ օրը վերադարձավ նրա հայրը: Մի երեք անգամ կարծես մենք ուրախ ու զվարթ էինք, ինչպես եղել էինք այն առաջին երեկոյին. իմ մնացած այցերը մոռալ ու հուզումնալից էին մերթ նրա եսամոլութան ու շարութեան, մերթ էլ նրա շարշարանքների պատճառով, բայց ես սովորեցի հանդուրժել նրա եսամոլութունն ու շարութունը, ինչպես և նրա շարշարանքները՝ համարյա առանց վրդովվելու:

Միստր Հիթքլիֆը դիտավորյալ խոստովում էր ինձնից: Ես նրան գրեթե չեմ տեսել: Ծիշտ է, անցյալ կիրակի. երբ ես եկա սովորականից ավելի շուտ, լսեցի. թե ինչպես էր նա դաժանորեն նախատում խեղճ Լինթընին, նախորդ օրվա նրա վարքագծի համար: Չեմ կարող ասել, թե ինչպես էր իմացել այդ մասին, եթե միայն դուան հետևից ականջ չէր դրել: Լինթընը, իհարկե, այն երեկո իրեն պահում էր զայրացուցիչ, բայց դա վերաբերում էր միայն ինձ: Ներս մտնելով, ես ընդհատեցի նրա կշտամբանքը և տնմիջապես այդ մասին ասացի իրեն: Նա սկսեց ծիծաղել և հեռացավ, ասելով, որ ինքը շատ ուրախ է, եթե ես իրերին այդպես եմ նայում: Այս դեպքից հետո ևս Լինթընին ասացի, որ իր շարամիտ խոսքերը շնջալով արտասանի:

Ահա, էլլեն, դու լսեցիր բոլորը. եթե ինձ արգելես Մոյնդին հողմերի դարավանդ դնալ, դու կդժբախտացնես երկու հոգու, մինչդեռ, եթե միայն հայրիկին շասես, իմ այնտեղ գնալը ոչ ոքի հանգիստը չի խանգարի: Դու չես ասի, չէ՞: Անխըղճութուն կլինի, եթե ասես:

— Այդ մասին իմ որոշումը կընդունեմ առավոտյան, միսս Քեթրին,— պատասխանեցի ես:— Հարկավոր է կշտադատել. և այսպես, ես ձեզ մենակ եմ թողնում, պառկեք քնելու, իսկ ես կգնամ և կմտածեմ:

Ես կշտադատում էի բարձրաձայն իմ տիրոջ ներկայութեամբ, Քեթրինի սենյակից ուղիղ գնացի նրա մոտ և պատմեցի ամբողջ կզկուլթունը՝ բաց թողնելով միայն աղջկա գրույցը իր հորաբոջ տղայի հետ և չհիշատակելով Հերթընի անունը:

Միստր Լինթընը անհանգստացավ և խիստ վշտացավ,

բայց շուրջից իր տաղնաւոր ցուցք տալ ինձ: Առավոտյան Քեթրինն իմացաւ, որ ես մատնել եմ իր վստահութիւնը, և իմացաւ նույնպէս, որ իր գաղտնի այցելութիւնները պետք է ընդհատուին:

Իզուր էր նա լաց լինում, տանջվում էր արգելքի պատճառով. աղաչում էր հորը, որ խղճաւ կինթընին: Միակ բանը, որ նա հորից պոկեց, դա նրա խոստումն էր այն մասին, որ ինքը կգրի տղային և թույլ կտա դալ Ազարակատուն, երբ ուզենա, բայց նամակում կշեշտվի, որ նա այլևս ոչ մի հույս չունենա Քեթրինին Մոլեգին հողմերի դարավանդում տեսնելու: Եթե միտար կինթընն իմանար իր քրոջ որդու խառնըվածքի ու առողջութեան վիճակի մասին, գուցե նպատակահարմար համարեր մերժել աղջկա նույնիսկ այդ թույլ սփոփանքը:

ԳՆՈՒԽ ՔՍԱՆՇԻՆԳԵՐՈՐԴ

Այդ դեպքերը կատարվեցին անցյալ ձմռանը, սրբ,— ասաց միսիս Դինը,— համարյա մի տարի առաջ: Անցյալ ձմռանը մտքովս էլ չէր անցնում, որ մի տարի հետո օտար մի մարդու ես կղբաղեցնեմ այդ ընտանիքի անդամների մասին իմ պատմութիւններով: Սակայն ով գիտի, թե մինչև ե՞րբ դուք ձեզ պետք է պահեք օտարականի պես: Դուք շատ երիտասարդ եք և չեք կարող միշտ բավարարվել մենակեցիկ կյանքով, իսկ ես մտածում եմ, որ Քեթրին կինթընին տեսնող մարդը չի կարող շփրել նրան: Դուք ժպտում եք. բայց ինչո՞ւ եք այդպէս աշխուժանում և հետաքրքրութիւն ցուցաբերում, երբ սկսում եմ խոսել նրա մասին, և ինչո՞ւ խնդրեցիք ինձ, որ նրա նկարը կախեմ բուխարու վերևում: Եվ ինչո՞ւ...

— Սպասեցե՛ք, իմ լավ բարեկամ, ասացի ես:— Շատ հնաշավոր է, որ ես կարողանամ սիրել նրան, բայց կսիրի՞ ես ինձ: Ես շատ կասկածում եմ, որ վտանգեմ իմ հանգրստութիւնը՝ ենթարկվելով գայթակղութեան. և, հետո, իմ տունն ալտուր չէ: Ես պատկանում եմ գործունյա աշխարհին և

պետք է վերադառնամ հրա գիրկը: Շարունակեք: Ենթարկվե՛ց Քեթրինը հոր հրամանին:

— Ենթարկվեց, — շարունակեց տնտեսուհին: Նրա սերը հոր նկատմամբ դեռ իր սրտի գլխավոր զգացմունքն էր: Նա խոսում էր առանց դայրույթի, խոսում էր խորին խանդաղատանքով որպես մեկը, որը պետք է թողնի իր թանկագին աղջկան՝ շրջապատված վտանգներով ու թշնամիներով, նրանց մեջ նրա խրատները կհանդիսանան միակ ուղեցույցը, որ նա կարող է կտակել աղջկան, որպեսզի վերջինս իր կյանքում դեկավարվի դրանով:

Մի քանի օր հետո նա ինձ ասաց:

— Ես կուղենայի, էլլեն, որ իմ քրոջ տղան գրի կամ գա մեզ մոտ: Անկեղծորեն ասացեք ինձ, դուք ինչ էք մտածում նրա մասին. արդյոք փոխվե՞լ է նա դեպի լավը, կամ, հո՛ւյս կա, որ ուղղվի, երբ մեծանա:

— Նա շատ հիվանդոտ է, — պատասխանեցի ես, — և հազիվ թե հասնի առնական հասակին, բայց մի բան կարող եմ ասել՝ նա նման չէ հորը, և եթե միտս Քեթրինը, ի դրժբախտություն իրեն, ամուսնանա նրա հետ, կարող է ուղղություն տալ նրան, եթե միայն հիմարության հասնող աստիճան համբերատար չլինի: Համենայն դեպս, տեր իմ, դուք դեռ շատ ժամանակ կունենաք նրա հետ ծանոթանալու և իմանալու, թե արդյոք նա Քեթրի համար հարմար զույգ կլինի՞. մինչև չափահաս դառնալը նա դեռ շորս տարուց ավել ունի:

էդգարը հառաչեց և մոտենալով պատուհանին, սկսեց նայել Գիմմերթըն եկեղեցուն: Օրը մշուշապատ էր, բայց փետրվարյան արևը շողում էր մշուշի միջից, մենք կարողանում էինք բակում նկատել երկու եղևնու ծառ և մի քանի դեռուղեն ցրված տասպանաքարեր:

— Ես հաճախ աղոթում էի, — էդգարը խոսում էր ինքն իր հետ, — և մտածում՝ ինչ լինելու է, թող շուտ լինի, իսկ հիմա ես սկսում եմ խուսափել ու վախենալ: Ես մտածում էի, որ այն ժամի հիշողությունը, երբ որպես փեսացու լեռնագողով գնում էի ներքե, ավելի քիչ քաղցր կլինի, քան այն կանխավայելումը, որ շուտով, մի քանի ամիս կամ գուցե և մի քանի շաբաթ հետո ինձ կտանեն այնտեղ և կդնեն դա-

Կարի փոսի մեջ՝ էլլեն, իմ փոքրիկ Քեթիի հետ ես շատ երջանիկ էի: Ձմռան վիշերները և ամռան օրերը նա աճում էր իմ կողքին որպես կենդանի հույս, բայց նույնքան երջանիկ էի, երբ քարերի մեջ, այդ հին մատուռի մոտ, հունիսյան երկար երեկոներին պառկում էի նրա մոր կանաչապատ գերեզմանաթմբին և սուղվելով մտքերի մեջ ցանկանում, կարոտով սուսում էի այն պահին, երբ ես էլ պառկած կլինեմ դրա տակ: Ի՞նչ կարող եմ անել Քեթիի համար: Ինչպե՞ս թողնեմ նրան: Ես երբեք չէի կարծի, որ կինթընը Հիթքլիֆի որդին է, ոչ էլ կմտածեի, որ նա ինձնից կխլի Քեթիին, եթե միայն կարողանար սիտիել աղջկաս, երբ ես շեմ լինի: Չէի տխրի, որ Հիթքլիֆը հասավ իր նստատեղիներին և հաղթանակ տոնեց՝ հափշտակելով իմ վերջին երջանկությունը: Բայց եթե կինթընը անարժան լինի, եթե նա լոկ թույլ գործիք է իր հոր ձեռքին, ես Քեթիին չեմ կարող թողնել նրա հույսին: Եվ որքան էլ դժվար լինի կոտորել Քեթիի կայտառ հոգին, ես պետք է պնդեմ իմը և վշտահար տեսնեմ նրան, քանի դեռ ապրում եմ, իսկ երբ մեռնեմ, նա լքված, մենակ կմնա: Իմ թանկագին աղջիկ: Ավելի լավ կլինի, որ ես նրան աստծուն վստահեմ և ինձնից առաջ հողին հանձնեմ:

— Հանգիստ հանձնեք նրան աստծուն, սրբ,— ասացի,— և եթե մենք կորցնենք ձեղ, աստված շանի, ես, աստծո աչքի առաջ, մինչև վերջ կլինեմ նրա բարեկամն ու խորհրդատուն: Միսս Քեթրինը լավ աղջիկ է, ես չեմ վախենում, որ նա դիտավորյալ կերպով գնա սխալ ճանապարհով, իսկ նա, ով կատարում է իր պարտքը, վերջ ի վերջո, միշտ էլ վարձահատույց է լինում:

Վրա հասավ գարունը, սակայն իմ տերը այդպես էլ մինչև վերջ չկազդուրվեց, թեև վերսկսեց աղջկա հետ միասին գրոսնել իր հողամասերում: Աղջկա անփորձ խելքին դա, ինքնըստինքյան, ապաքինման նշան էր թվում. հետո էդգարի այտերը շատ հաճախ կարմրում էին, աչքերը փայլում. Քեթին հավատացած էր, որ հայրը առողջանում է:

Աղջկա ծննդյան տասնյոթերորդ տարեդարձին էդգարը շինաց գերեզմանատուն. անձրևում էր, և ես ասացի.

— Այսօր դուք, իհարկե, տանից դուրս չեք գա, սրբ: էդգարը պատասխանեց.

— Ոչ, դուրս գալը այս տարի ես առայժմ կ'ենթանամ:

Նա կրկին անգամ գրեց Լինթընին, որ ինքը շատ կցանկանար տեսնել նրան, և եթե հիվանդը տանելի տեսք ունենար, հայրը անկասկած, թույլ կտար նրան, որ գա: Բայց տղան վատ վիճակում էր և, հետևելով հոր ցուցմունքին, իր պատասխանում հաղորդեց, որ միտքը Հիթքլիֆը իրեն թույլ չի տալիս գալ Ագարակատուն. բայց ինքը շատ ուրախանում է, որ բարի քեռին հիշում է իրեն և հույս ունի՝ զբոսանքի ժամանակ մի կերպ հանդիպել և անձամբ խնդրել, որ քեռու աղջիկն ու ինքը այդպես երկար ժամանակ իրարից հեռու չմնան:

Նամակի այդ մասը շատ պարզ էր գրված և, հավանաբար, առանց ուրիշի օգնության. Հիթքլիֆը գիտեր, որ Քեթրինին հանդիպելու համար իր որդին կարող է բավական պերճախոս կերպով խնդրել.

«Ես չեմ խնդրում,— գրում էր տղան, որ նրան թույլ տրվի գալ այստեղ, բայց մի՞թե նրան էլ երբեք չեմ տեսնի, որովհետև իմ հայրը արգելում է ինձ գնալ նրա տուն, իսկ դուք արգելում եք նրան գալ իմ տուն: Խնդրում եմ ձեզ, գոնե երբեմն, նրա հետ միասին, գալ Դարավանդ և թույլ տալ մեզ ձեր ներկայությունը փոխանակել մի քանի խոսք: Մենք առանձին ոչինչ չենք արել, ինչո՞ւ եք մեզ բաժանում իրարից: Դուք մի բարկացեք ինձ վրա, ախր, ինձ չսիրելու ոչ մի պատճառ չունեք, դուք ինքներդ դա խոստովանում եք: Սիրելի քեռի, մի բարի երկտող ուղարկեք ինձ վաղը և թույլ տվեք հանդիպել ձեզ, որտեղ որ ուզում եք, միայն ոչ Կեոնեխների ագարակատանը: Կարծում եմ, տեսակցությունը ձեզ կհամոզի, որ ես այնպիսին չեմ, որպիսին իմ հայրը. նա պնդում է, որ ես ավելի շատ ձեր քրոջ որդին եմ, քան նրա որդին, թեև ես ունեմ արատներ, որոնք ինձ դարձնում են Քեթրինին անարժան, նա դրանք ներում է ինձ, և ի սեր նրա դուք էլ պետք է ներեք: Դուք հարցնում եք, թե ինչպիսին է իմ առողջությունը. ավելի լավ է, բայց քանի դեռ ես զրկված եմ ամեն տեսակ հույսից, քանի դեռ դատապարտված եմ մենություն կամ էլ այն մարդկանց ընկերակցության, որոնք

երբևք ինձ շեն սիրել և շեն սիրում, ինչպե՞ս կարող եմ ուրախ
և առողջ լինել»:

Էդգարը թեև տղային համակրում էր, բայց չէր ուզում
համաձայնել և զիջել նրա խնդրանքին, որովհետև ինքը չէր
կարող միսս Քեթրինին ուղեկցել:

Նա պատասխանեց, որ ամառը գուցե կարողանան հան-
դիպել. միևնույն ժամանակ ուզում էր, որ Լինթրնը ժամա-
նակ առ ժամանակ շարունակի գրել իրեն. և ավելացրեց մի
քանի խորհուրդներ ու սփոփիչ խոսքեր, որովհետև լավ գիտեր,
թե ինչ դժվար կացության մեջ էր գտնվում քրոջ տղան ըն-
տանիցում:

Լինթրնը համաձայնեց, և էթե նրան չզսպեին, իր նամակ-
ները լցնելով գանգատներով ու արտունջներով, նա, երևի,
ամբողջ նամակը փշացնեի: Բայց հայրն աշալուրջ կերպով
հետևում էր նրան և, իհարկե, պնդում էր, որ իրեն ցույց տան
իմ տիրոջից եկած յուրաքանչյուր բառը: Այնպես որ, իր անձ-
նակա՛ն տառապանքներն ու ավերությունները նկարագրելու
փոխարեն, իսկ դրանք միշտ էլ նրա խոհերի ամենակարևոր
թեման էին, Լինթրնը անընդհատ կրկնում էր նույն բանը՝
զժգոհում էր իր բարի ընկերուհուց անջատ ապրելու դաժան
պարտավորությունից և մեղմորեն ակնարկում էր, որ միստր
Լինթրնը պետք է տեսակցությունը ավելի շուտ թույլատրի,
այլապես ինքը կսկսի անհանդստանալ, որ իրեն խաբում են
գատարկ խոստումներով:

Քեթին ասանք նրա հղոր դաշնակիցն էր, և նրանք, վերջ
ի վերջո, համոզեցին իմ տիրոջը, որ թույլ տա նրանց շաբաթը
մեկ անգամ, իմ հսկողության ներքո, միասին զբոսնեն ձիով
կամ ոտքով Ագարակատան հարակից դաշտերում, որովհետև
արդեն հունիս ամիսն էր, իսկ միստր Էդգարը դեռ շատ տկար
էր: Թեև ամեն տարի իր եկամտի մի մասը հետ էր գցում իմ
տիրուհու համար, նա, բնականաբար, ցանկություն ուներ,
որ Քեթին կարողանա իր ձեռքում սլահել կամ գոնե կարճ
ժամանակվա մեջ իր նախահայրերի տունը վերադարձնել
իրեն. այդ բանի միակ հույսը նա համարում էր նրա ամուս-
նությունը իր հոգերի ժառանգորդի հետ. նա սլատկերացում
չուներ, որ այդ ժառանգորդը մարում էր համարյա, նույն-
քան արագ, որքան և ինքը, և ոչ ոք, ես կարծում եմ, կասկած

շուներ այդ մասին: մշ յի բժիշկի շէր այցելում Դարավանդ,
ոչ ոք շէր տեսնում տեր Հիթքլիֆին և շէր կարող հաղորդել
մեզ, թե ինչպիսին է նրա առողջական վիճակը:

Ես իմ կողմից սկսեցի մտածել, որ իմ կանխատեսումները
ճիշտ չէին և տղան հսկայեա կազդուրվում է, եթե խոսում է
դաշտային զրոսանքէերի մասին և կարծես համառորեն ձրգ-
աում է իր նպատակին:

Ես շէի կարող երևակայել, որ հայրն ընդունակ էր այդ-
պիսի բռնութեամբ և շարակամութեամբ վերաբերվել մեռնող
տղային, ինչպես վառվում էր Հիթքլիֆը Լինթընի հետ. հար-
կադրելով նրան՝ այդ մասին ես շատ ուշ իմացա, այդ ան-
ցանկալի անհամբերութեանը: Իր նպատակին հասնելու հա-
մար նա ավելի ևս կրկնապատկում էր ջանքերը, բայց մահ-
վան անխուսափելի վտանգը սպառնում էր խորտակել նրա
ընչաքաղց և անգութ ծրարները:

ԳՆՈՒՆ ՔՍԱՆՎԵՑՆԵՐՈՐԳ

Ամառվա ետուն շրջանն էր, երբ էղզարը դժկամութեամբ
դիզեց նրանց խնդրանքին, և Քեթրինն ու ես ձիերով գնացինք
առաջին դրոսանքի. մեզ պիտի միանար նրա հորաքրոջ որդին:

Հեղձուձիչ և տոթ օր էր. արևոտ շէր, բայց ամպի քուլա-
ներով պատած միգամած երկնքից անձրև շէր նախատեսվում:
Մենք որոշել էինք հանդիպել ճանապարհների խաչմերուկի
ուղեցույց քարի մոտ: Սակայն երբ եկանք այդտեղ, փոքրիկ
հովիվը, որ ուղարկված էր որպես լրարեք, հայտնեց մեզ.

— Տեր Լինթընը Դարավանդից արդեն դուրս է եկել, և
դուք նրան շատ կպարտավորեցնեք, եթե մի փոքր ընդառաջ
գնաք նրան:

— Ուրեմն տեր Լինթընը մոռացել է իր քեռու կարգա-
դրությունը, — նկատեցի ես, — իմ տերը մեզ հրամայել է մնալ
այն հողերում, որոնք հարակից են Ագարակատանը, իսկ այս-
տեղ մենք արդեն դուրս ենք գալիս դրանց սահմաններից:

— Դե լավ, հենց որ հանդիպենք նրան, մենք ձիերի զլուխ-

Ներքը իսկույն շուռ կռտանք,— սլատասխանեց իմ տիրուհին,—
և զբոսնելով կվերագառնանք տուն:

Բայց երբ հանդիպեցինք նրան, դա հագիվ թե մի շորս
մղոն հեռու լինեք իր տանից, տեսանք, որ նա ոչ մի ձի չու-
նի, և մենք ստիպված էինք իջնել և ձիերը բաց թողնել արա-
ծելու:

Նա սլառկել էր հավամբգու թփերով պատած գետնին,
սպասում էր մեզ և վերկացավ միայն այն ժամանակ, երբ
մի քանի յարդ էր մնում, որ հասնեինք իրեն: Հետո սկսեց
քայլել այնքան երերուն, տեսքն այնքան գունատ էր, որ ես
անմիջապես ճշացի:

— Բայց տեր Հիթքլիֆ, այսօր ինչպե՞ս կարող եք զբոս-
նել: Ի՞նչ հիվանդագին տեսք ունեք:

Քեթրինը վշտացած և ապշած զննում էր նրան, ուրախ բա-
ցականչության փոխարեն նրա շուրթերից պոկվեց ահի ճիշը:
Երկար սպասվող բերկրալից հանդիպման փոխարեն սկսվեց
տագնապալից հարցուփորձը այն մասին, թե նա հո սովորա-
կանից ավելի վատ չի զգում:

— Ոչ... լավ եմ... ավելի՞ լավ եմ,— շնչասպառ լինելով
արտաբերեց Լինթընը՝ դողալով և բռնելով նրա ձեռքը, ասես
կարիք ուներ հենարանի, մինչ խոշոր կապույտ աչքերը երկ-
չտտությամբ հածում էին Քեթրի դեմքի վրայով. նրա աչքերը
փոս էին ընկել և դրանց նախկին անկենդան արտահայտու-
թյունը դարձել էր վայրագ ու անզուսպ:

— Բայց դու ավելի վատ ես,— պնդում էր քեռու աղջի-
կը,— ավելի վատ, քան երբ ես քեզ տեսա վերջին անգամ,
դու ավելի ես նիհարել, և...

— Հոգնած եմ,— շտապ ընդհատեց նա:— Զբոսանքի
համար շափազանց տաք օր է, և կ նստենք այստեղ: Առավոտ-
ները ես հաճախ եմ թուլություն զգում, հայրիկն ասում է,
որ դա արագ աճման հետևանք է:

Բոլորովին շքավարավելով, Քեթրին նստեց, իսկ նա տեղ
գրավեց աղջկա կողքին:

— Սա որոշ շափով նման է քո եղեմին,— ասաց Քեթրինը՝
ջանալով ուրախ երևալ:— Հիշո՞ւմ ես, երբ մենք պայմանա-
վորվեցինք երկու օր անցկացնել այնպես, ինչպես մեզանից
ամեն մեկը այն կհամարի ամենահաճելին: Հիմա գրեթե բո-

լորը քո ուզածի պես է, միայն աստպեր կան բայց գրանշ ալնքան մեղմ ու փափուկ են, ավելի հաճելի են, քան արևի լույսը: Մյուս շաբաթ, եթե կարողանաս, միասին կգնանք Ազարակատան պարտեզը և օրը կանցկացնենք իմ ուզած ձևով:

Լինթընը, երևի, մոռացել էր և շհասկացավ, թե ինչի մասին էր խոսում Քեթիս. ակնհայտ էր, որ նա շատ ջանք էր թափում զրույցը շարունակելու: Պարզ երևում էր, որ Քեթրինի շոշափած թեմաներից և ոչ մեկը նրան չ'ը հետաքրքրում, ինքը անընդունակ էր մասնակցելու նրա առաջ քաշած հարցերին: Քեթին չկարողացավ թաքցնել իր հիասթափությունը, ինչ-որ անհասկանալի փոփոխություն էր կատարվել նրա վարքագծի և ամբողջ էության մեջ: Բորբ... քվածությունը, որը փաղաքշանքով կարելի էր մեղմություն վերածել, ռեզը զիջել էր անտարբեր անզգայություն: Քիչ բան էր մնացել այդ անհաշտ բնավորության տեր երեխայից, որը դիտավորյալ ջղայնացնում, ձանձրացնում է, որպեսզի իրեն փաղաքշեն, ավելի շատ բացահայտվում էր նրա մեջ ամփոփված քրոնիկական հիվանդի մոռյլ տրամադրությունը, որը մերժում է մխիթարությունը և հակված է ուրիշների բարեհոգի ծիծաղը իր համար վիրավորանք համարել:

Քեթրինը ինձնից ավելի լավ էր տեսնում, որ մեղ հետ նստելը նրա համար ոչ թե ուրախություն, այլ պատիժ էր: Եվ նա առանց քաշվելու հայտնեց, որ ինքը կթողնի, կհեռանա իսկույնների:

Այդ առաջարկությունը անսպասելիորեն արթնացրեց Լինթընին իր լեթարգիական վիճակից, և նրան համակեց մի տարօրինակ աշխուժություն: Լինթընը սարսափով նայեց Դարավանդին և սկսեց խնդրել, որ Քեթրինը զեթ մի կես ժամ էլ մնա:

— Բայց կարծում եմ, — ասաց Քեթին, — ավելի լավ կլինի, որ դու տանը պառկես, հանգիստ լինես, քան նստես այստեղ: Տեսնում եմ, որ այսօր ես շեմ կարող քեզ զվարճացնել ո՛չ պատմություններով, ո՛չ երգերով, և ո՛չ էլ շատախոսությամբ. դու այս կես տարվա մեջ ինձնից ավելի խելացի ես դարձել, իմ զվարճալիքներն այժմ այնքան էլ

Յո ճաշակով շեն, այլապէս, եթե կարողանայի քեզ զբաղեցնել, սիրով կնստեի քեզ հետ:

— Նստիր, հանգստացիր,— առարկեց տղան:— Եվ, Քեթրին, մի մտածիր, մի էլ աւսա, որ ես շատ հիվանդ եմ. ես նեղվում եմ ծանր հղանակից, թույլ եմ տոթի պատճառով, բավական երկար զբոսնել եմ մինչև քո դալը: Ասա քեռուն, որ իմ առողջութիւնը հիմա բավականին լավ է, կասե՛ս:

— Կասեմ, որ դու այդպէս ասացիր, կինթըն: Ես չեմ կարող հաստատել, որ դու առողջ ես,— ասաց իմ ջահել տիրուհին, զարմանալով, թե ինչու է նա համառորեն պնդում այն, ինչը բացահայտորեն ճիշտ չէ:

— Նորից եկ հաջորդ հինգշաբթի,— շարունակեց կինթընը, խուսափելով աղջկա անշարժ հայացքից:— Իսկ նրան հաղորդիր իմ շնորհակալութիւնը, որ քեզ թույլ տվեց գալ իմ խորին շնորհակալութիւնը, Քեթրին: Եվ... և եթե հանդիպես հորս, և նա հարցնի իմ մասին, թույլ մի տա նրան կաշկածելու, որ ես եղել եմ ծայրաստիճան լուսկյաց ու հիմար: Այդպէս տխուր ու վհատված շնայես, ինչպէս հիմա, նա կզայրանա:

— Ինձ համար մեկ է, թող զայրանա,— բացականչեց Քեթրին, մտածելով, որ Հիթքլիֆի զայրույթը թափվելու է իր վրա:

— Բայց ինձ համար մեկ չէ,— ասաց նրա հորաքրոջ տղան՝ ջլածովելով:— Նրան մի բորբոքիր իմ դեմ, Քեթրին, նա շատ դաժան մարդ է:

— Նա խի՞ստ է ձեր նկատմամբ, տեր Հիթքլիֆ,— հարցրի ես:— Չանձրացե՞լ է իր ներողամտութիւնից և թաքուն ատելութիւնից, անցել է բացահայտ ատելությա՞ն:

Կինթընը նայեց ինձ, բայց չպատասխանեց: Նրա մոտ նստեցի ես մի տասր բոպե, որի բնթացքում նրա գլուխը քնկոտությամբ հակվում էր կրծքին, և նա ոչ մի խոսք չասաց, միայն հառաչում էր հոգնածութիւնից կամ ցավից: Քեթրին, մխիթարվելու նպատակով, սկսեց հավամրդի հավաքել, որից բաժին էր հանում և ինձ. կինթընին հատապատուղ չէր առաջարկում, տեսնելով, որ իր կողմից նրա նկատմամբ ցուցաբերած ամեն մի ուշադրութիւն նրա համար հոգնեցուցիչ էր ու տաղտկալի:

— Կես Գամն արդե՞ծ անցել է, էլլեն,— ի վերջո շնչաց Քեթին իմ ականջին:— Զգիտեմ, էլ ինչու պիտի նստե՞նք: Նա բնում է, իսկ հայրիկը տանը կսպասի մեզ:

— Ոչ, չի կարելի նրան թողնել քնած վիճակում,— պատասխանեցի ես.— սպասե՛ք մինչև արթնանա, համբերատար եղեք: Ինչպես էիք տենչում դուրս գալ զրոսանքի: Եվ ինչ, դժբախտ կինթընին տեսնելու ձեր ցանկությունը այդպես շո՞ւտ հոգս ցնդեց:

— Բայց նա ինչո՞ւ էր ուզում ինձ տեսնել,— հարցրեց Քեթրինը:— Առաջ նույնիսկ ամենավատ քմահաճությունների պահին էլ նա ինձ ավելի շատ էր գուր գալիս, քան հիմա ողու այդ տարօրինակ վիճակում: Իսկուպես. այդ տեսակցությունը նրա համար ասես մի ծանր պարսականություն է. նա այն կատարում է հարկադրաբար, վախենալով, որ հայրը հանկարծ կարող է իրեն նախատել: Բայց ես չեմ գալիս նրա համար, որ հաճույք պատճառեմ միստր Հիթքլիֆին՝ ինչ նպատակի համար էլ նա պատժելու լինի կինթընին: Թեև ուրախ եմ, որ նրա առողջությունը ավելի բարվոք վիճակում է, բայց ցավում եմ, որ նա դարձել է ավելի քիչ հաճելի և ավելի քիչ է սիրում ինձ:

— Ուրեմն դուք գտնում եք, որ նրա առողջությունը ավելի լավ է,— ասացի ես:

— Այո,— պատասխանեց Քեթին,— դու գիտես, որ նա միշտ էլ մաշվում, հյուծվում է անասելի տառապանքների բովում: Նա այնքան էլ բարվոք վիճակում չէ, ինչպես խնդրում է հայտնել հայրիկին, բայց, ըստ երևույթին, ավելի լավ է զգում:

— Դրանում ձեզ հետ համաձայն չեմ, միսս Քեթի,— ասացի ես,— ինձ յիշում է, թե նա շատ վատ վիճակում է:

Այստեղ կինթընը, սարսափից շփոթված, քնից արթնացավ և հարցրեց, թե որե՞նչ մեկը հո իր անունը շտվե՞ց:

— Ոչ,— ասաց Քեթրինը:— Դու երևի, երազ տեսար: Զեմ հասկանում, թե ինչպես ևս կարողանում առավույան ժամին բաց օդում քնել:

— Ինձ թվաց, թե լսեցի հորս ձայնը,— հազիվ շնչաց նա, նայելով մեր վերևում ցցված մռայլ լեռանը:— Հավատացած ես, որ ոչ ոք չի խոսել:

— Միանգամայն, — պատասխանեց նրա շեռու աղչիկը, — միայն էս և էլլենը վիճում էինք քո առողջության մասին: Գու իսկապե՞ս ավելի լավ ես, Լինթըն, քան էիր ձրմուանը, երբ մենք բաժանվեցինք: Եթե այդպես էլ է, համենայն դեպս, քո զգացմունքը դեպի ինձ, գիտեմ, բոլորովին շի խորացել, ասա, լա՞վ ես:

Լինթընի աչքերից արցունքներ հորվեցին, երբ պատասխանեց, -- այո, այո, լավ եմ:

Եվ, այդուհանդերձ, կախարդվելով երևակայական ծայնից, նրա հայացքը թափառում, փնտրում էր խոսողին:

Քեթին վերկացավ:

— Այսօրվա համար բավական է, պետք է բաժանվենք, — ասաց նա: — Եվ շեմ թաքցնում, որ դառնորեն հիասթափված եմ մեր հանդիպումից, թեև այդ մասին ոչ ոքի շեմ ասի, բացի քեզանից, և դա ոչ նրա համար, որ ես սարսափում եմ Հիթքլիֆից:

— Կամա՞ց, — շնչաց Լինթընը: — Ի սեր աստժո, կամա՞ց: Նա գալիս է: — Եվ տղան բռնեց Քեթրինի թևից, ջանալով պահել նրան, բայց այդ լսելուն պես Քեթին շտապեց ազատվել և սուղոցով կանչեց Միննիին, որը շան պես հնազանդվեց:

— Ես այստեղ կլինեմ հաջորդ հինգշաբթի օրը, — բարձրաձայն ասաց Քեթին՝ ցատկելով թամբին: Ցտեսություն: Շուտ արա, էլլեն:

Եվ այսպես մենք մեկնեցինք: Լինթընը հավիվ էր դիտակցում, որ մենք գնում ենք, շատ մտահոգված սպասում էր՝ ուր որ է հիմա հայրը կմոտենա:

Ճանապարհին Քեթրինի դժգոհությունը մեղմացավ և վերածվեց խղճահարություն ու զղջման բարդ զգացումի, որին խառնվում էին աղոտ ու տագնապալից կասկածանքներ Լինթընի իրական դրություն՝ առողջության և սնալին հանգամանքների մասին: Ես բաժանում էի այդ կասկածանքները, թեև խորհուրդ էի տալիս շատ շխտել, որովհետև երկրորդ ճանապարհորդությունը հնարավորություն կտա մեզ ավելի ճիշտ դատել ամեն ինչի մասին:

Իմ տերը մեզնից հաշվետվություն պահանջեց մեր արածների մասին. մենք ճիշտ ժամանակին նրան հաղորդեցինք

իր քրոջ տղայի հայտնած շնորհակալությունը. մնացածը Քեթին մի թեթև շոշափեց, ես էլ շուզեցի մանրամասնորեն պատասխանել նրա հարցերին, որովհետև ինքս՝ էլ շատ չգիտեի, թե ինչը կարելի է թաքցնել, ինչը՝ հայտնել:

ԳԼՈՒԽ ՔՍԱՆՅՈՒԹԵՐՈՐԳ

Յոթ օրը աննկատելի անցավ, իր յուրաքանչյուր ընթացքով էդգար Լինթընի վիճակի մեջ մտցնելով արագ փոփոխություն: Քայքայումները, որոնք առաջ կատարվում էին ամիսներով, այժմ իրենց արշավը կատարում էին ժամ առ ժամ: Մենք ուրախությամբ կխաբեհինք Քեթրինին, բայց նրա արթուն միտքը խաբեության շէր ենթարկվում: Գուշակելով դադանիքը, նա ընկնում էր սոսկալի կասկածանքների մեջ, որ աստիճանաբար հասունանում, վերածվում Լին համողվածության:

Նա սիրտ շարեց, որ խոսի ճամփորդության մասին, Երբ վրա հասավ հինգշաբթի օրը: Նրա փոխարեն ես ինքս հիշեցրի, թույլ տրվեց հրամայել, որ նա դրսում սպասի ինձ, որովհետև դրադարանը, որտեղ հայրն ամեն օր կարճ ժամանակով նրստում էր, քանի դեռ ի վիճակի էր նստելու, նրա անձնական սենյակը, դարձել էր Քեթիի ամբողջ աշխարհը: Աղջիկը ափսոսում էր յուրաքանչյուր բոպեի համար, որ շէր կարողանում հակվել հոր բարձի վրա կամ նստել նրա կողքին: Անքնությունից ու տխրությունից նրա դեմքը դարձավ դժգույն, և իմ տերը ուրախությամբ աղջկան բաց թողեց՝ շոյվելով այն մտքից, որ զբոսանքը նրա համար կլինի շրջապատի ու հասարակության երջանկաբեր փոփոխություն. հայրն իրեն սիրոփում էր այն հույսով, որ այժմ դուատրը իր մահից հետո բուրբուլին միայնակ չի մնա:

Միստր էդգարին տիրեց մի սևեռուն միտք, որը ես գուշակեցի իր արած մի քանի դիտողություններից, միտք այն մասին, որ Եթե քրոջ տղան արտաքինով նման է իրեն, նման կլինի և դատողությամբ, բանի որ Լինթընի նամակներում չկար նրա վատ բնավորությունը հաստատող որևէ մի նշան: Իսկ ես իմ ներելի թուլությամբ խուսափեցի սխալն ուղղել:

Ինքս ինձ հարցնում էի, թե ի՞նչ միտք ունի նրա վերջին լուսակները պղտորել տխուր տեղեկություններով, որոնք իր օգտին դարձնելը նա ոչ ուժ ունեւր, ոչ էլ հնարավորութուն:

Մենք մեր գրոսսանքը հետաձգեցինք հետկեսօրյա ժամին. դա օգոստոսյան օրվա մի ոսկե ժամ էր, երբ լեռներից փշող քամու բերած օդն այնքան լի էր կյանքով, որ թվում էր, թե նա, ով շնչի այդ օդը, թեկուզև մեռնելիս լինի, կկենդանանա:

Քեթրինի դեմքի հետ նույն բանն էր կատարվում. բնատեսարանի հետ՝ ստվերներն ու արևի լույսը իրար հետևից արագորեն սահում էին նրա դեմքի վրայով, բայց ստվերներն ավելի երկար էին մնում, մինչդեռ արևի լույսն ավելի անցողիկ էր, և նրա խեղճ սրտիկը հանդիմանում էր նրան նույնիսկ հոգսերի այդպիսի կարճատև մոռացութեան համար:

Մենք հեռվից նկատեցինք նույն տեղում սպասող Լինթընին, որ ընտրել էր անցյալ անգամ: Իմ տիրուհին ձիուց իջավ և սասաց, որ վճռել է երկար շմնալ, այնպես որ ավելի լավ է՝ ես նստած մնամ թամբի վրա և պահեմ իր ձին, բայց ես չհամաձայնեցի. ոչ մի բռնակ չէի ուզում աչքս հեռու պահել ինձ վստահված աղջկանից, ուստի միասին բարձրացանք ցախիներով պատած լանջնիվեր:

Այս անգամ տեր Լինթընը մեզ ընդունեց ավելի մեծ ոգևորությամբ, թեև ոչ շատ բարձր և ուրախ տրամադրությամբ. նա հուզվում էր, բայց դա ավելի շատ նման էր վախի:

— Դու ուշ եկար, — խոսեց նա դժվարությամբ, դյուրագրգիռ տոնով: — Հայրդ շատ է հիվանդ: Կարծում էի, որ շեռ գա:

— Ինչո՞ւ շեռ ուզում անկեղծ լինել, — ճշաց Քեթրինը՝ կուլ տալով ողջույնը: — Ինչո՞ւ միանգամից շեռ կարող ասել, որ դու ինձ շեռ ուզում տեսնել: Տարօրինակ է, Լինթըն, սա երկրորդ անգամն է, որ գիտավորյալ կանչում ես ինձ այստեղ, ըստ երևույթին, նրա համար, որ երկուսս էլ տանջվենք, և ուրիշ ոչինչ:

Լինթընը դողաց և նայեց նրան շգիտես աղերսական, թե ամոթահար հայացքով, բայց նրա քեռու աղջիկը համբերութուն չունեցավ, որ հանդուրժի այդպիսի առեղծվածային վարքագիծը:

— Այո, հայրս շատ հիվանդ է, — ասաց Քեթրինը, — ին-

չո՞ւ ինձ կանչեցիր նրա անկողնու մոտից: Ինչո՞ւ մեկի միջոցով շահատենեցիր, որ զու ազատում ես ինձ իմ խոստումից, եթե չէիր կամենում, որ ես այն դրժեմ: Դե, խոսի՞ր: Բացատրություն եմ ուզում. դվարճանալու և կատակելու միտք չունեմ, ես չեմ կարող ստորանալ քո սեթևեթանքի առաջ:

— Սեթևեթանք,— շշնջաց նա,— ո՞րն է իմ սեթևեթանքը: Ի սեր աստժո, Քեթրին, այդպես զայրալից մի նայիր: Արհամարհիր ինձ ինչքան ուզում ես, ևս անպետք, ողորմելի վախկոտի մեկն եմ, ինչքան ուզում ես արհամարհիր, բայց քո զայրույթի համար ևս ոչնչություն եմ: Ատիր իմ հորը, իսկ ինձ՝ բավական է և արհամարհանքը:

— Հիմարություն,— ճշաց Քեթրինը, զայրացած:— Հիմար, տխմար տղա: Մի տես, նա դողում է. կարծես, ես իսկապես ուզում էի հարվածել նրան: Կարիք չկա խոսել արհամարհանքի մասին, կինթըն, այն ինքնաբուխ կերպով առաջանում է յուրաքանչյուրիս մեջ. կարող ես ուրախանալ Գնա՛: Ես գնում եմ տուն. հիմարություն է քեզ բուխարուց պոկել և ձևացնել՝ իբր մենք... ուզում ենք... հա, ի՞նչ ենք մենք քեզ հետ ուզում: Փէշս մի բռնիր. եթե քեզ խղճացի արտասվելուդ ու շատ երկշոտ տեսք ունենալուդ համար, զու պետք է արհամարհանքով մերժեիր իմ խղճահարությունը: Էլլեն, բացատրիր նրան, թե ինչ ամոթալի վարքագիծ ունի նա: Վերկաց, մի նմանվիր խղճուկ սողունի, մի ստորայրու քեզ:

Աչքերից զլորվող արցունքներով և տառապալից դեմքով կինթընը իր անդոր մարմնով փովեց դեանին. թվում էր, թե սոսկալի վախի դուզն էր ցնցում նրան:

— Օ՛հ,— հեկեկում էր նա,— էլ չե՛մ կարող տանել այդ: Քեթրին, Քեթրին, ես էլ եմ դավաճան և չե՛մ համարձակվում ասել քեզ: Բայց եթե ինձ լքես, ես կկործանվե՛մ: Միրելի Քեթրին, իմ կյանքը քո ձեռքին է. ասում էիր, որ սիրում ես ինձ, իսկ եթե սիրում ես, դա քեզ չի վնասի: Ուրեմն դու չես գնա, չե՞, բարի՛, անուշի՛կ, լա՛վ Քեթրին: Եվ գուցե, համաձայնես... նա թույլ կտա ինձ մեռնել քո կողքին:

Իմ ջահել տիրուհին՝ տեսնելով նրա անհուն կարոտը, հակվից, որ բարձրացնի նրան: Ներողամիտ քնքշության հին

զգացումը... հազթահարեց վրդովմունքը, տիրուհիս խորապես հուղվեց ու անհանգստացավ:

— Ինչի՞ն համաձայնեմ,— հարցրեց Քեթին:— Մնա՞լ, Բացատրիր ինձ այդ տարօրինակ խոսքերի իմաստը, և ես կհամաձայնեմ: Դու ինքդ հակասում ես քեզ և շփոթեցնում ինձ: Հանգիստ ու անկեղծ եղիր և միանգամից խոստովանիր այն ամենը, ինչ կուտակված է քո սրտում: Դու չէիր ուզենա վնասել ինձ, Լինթըն, այնպես չէ՞: Ոչ մի թշնամու թույլ չէիր տա, որ ինձ շարիք պատճառի, եթե կարողանայիր այդ բանը կանխել: Ես համոզված եմ, որ զու վախկոտ ես, երբ գործն անձամբ քեզ է վերաբերում, բայց երկշտությամբ չես դավաճանի քո լավագույն բարեկամին:

— Բայց հայրս ինձ սպառնում էր,— շնչասպառ արտաբերեց պատանին՝ սեղմելով իր բարակ մատները,— և ես նրանից սարսափում եմ... վախենում եմ նրանից: Չե՞մ համարձակվում ասել:

— Դե լա՛վ,— արհամարհական կարեկցությամբ ասաց Քեթրինը. պահիր քո գաղտնիքները, ես վախեցողներից չեմ. փրկիր քեզ, ես չեմ սարսափում:

Աղջկա մեծահոգութունը արցունքներ առաջացրեց՝ Լինթընը լալիս էր հեծկլտալով, համբուրելով իրեն բռնած նրա ձեռքերը և, այդուհանդերձ, չկարողացավ քաջություն դրսևորել, որ խոսի:

Ես մտածում էի, թե այստեղ ինչ գաղտնիք կարող էր լինել և վճռեցի, որ իմ բարի կամքով Քեթրինը երբեք չպետք է տանջվի ի սեր Լինթընի կամ որևէ այլ մեկի, երբ շրջյուն լսեցի ցախու թփերի մեջ, բարձրացրի հայացքս և համարյա կողքներիս տեսա միստր Հիթքլիֆին՝ Դարավանդից իջնելիս: Նա որդուն ու Քեթրինին շնայեց, թեև նրանք այնքան մոտ էին, որ նա չէր կարող չսեսլ Լինթընի հեկեկոցը. նա կանչեց ինձ համարյա բարեկամական տոնով, որով ոչ մեկին չէր դիմի և որի անկեղծությանը ակամայից չէի կարող չկասկածել, . ասաց.

— Ձեզ իմ տան մոտ տեսնելը ինչ-որ բան նշանակում է, նեղի: Ազարակատանը ինչպե՞ս են, Պատմիր: Լուրեր են պտտվում,— ավելացրեց կամացուկ,— որ էդգար Լինթընը

մահվան մահիճում է. դուցե մարդիկ շափազանցնո՞ւմ են նրա հիվանդութիւնը:

— Այո, իմ տերը մեռնում է,— պատասխանեցի ես,— դա միանգամայն ճիշտ է: Նրա մահը մեզ բոլորիս համար դժբախտութիւն կլինի, բայց իր համար կլինի երջանիկ փրկութիւն:

— Ինչքա՞ն կձգձգվի, ի՞նչ ես կարծում,— հարցրեց Հիթթը:

— Չգիտեմ,— ասացի ես:

— Որովհետեւ,— շարունակեց նա, նայելով իր հայացքի առաջ անշարժ նստած երկու ջահելներին (կինթընը ասես շէր համարձակվում շարժվել կամ դուխը բարձրացնել, իսկ Քեթթրինը շէր կարողանում շարժվել կինթընի պատճառով), որովհետեւ այդ տղան, կարծես, վճռել է տապալել իմ գործը. ես ջնորհակալ կլինեի նրա քեռուց, եթէ շտապեր տղայից առաջ մեռնել: Էհե՛: Վաղո՞ւց է իմ շան ձագը սկսել այս խաղը: Ծս նրան մի փոքր սովորեցրի, թե ինչպես պետք է թնդվընգալ. ընդհանրապես նա գո՞հ է միսս կինթընից:

— Գո՞հ: Ոչ, երևում է, որ շատ է համակված վշտով,— պատասխանեցի ես:— Որ նայում ես վրան, մտածում ես. այսպիսի մեկին սիրելիի հետ բլուրները զբոսանքի ուղարկելու փոխարեն, ավելի լավ կլինի պառկեցնել անկողնում և բժիշկ կանչել:

— Կպառկեցնենք մի երկու օրվա մեջ,— փնթփնթաց ՀիթթըիՖը:— Բայց նախ վերկաց, կինթըն: Դե՛, վերկաց,— ասաց նա:— Մի սողա դետնին, անմիջապես վերկաց:

Կինթընն անզոր վախից շարունակում էր փոված մնալ հանկարծական նոպայի մեջ, որ, ըստ երևույթին, առաջացել էր հոր հայացքի ներքո. ուրիշ ոչինչ շէր եղել, որ կարողանար առաջացնել այդպիսի ստորացում: Նա փորձում էր ենթարկվել, սակայն նրա թուլը ուժերը ժամանակավորապես լքել էին իրեն, և նա նորից տնքալով ընկնում էր մեջքի վրա:

Միստր ՀիթթըիՖը մոտեցավ և, բարձրացնելով, հենեց նրան ճիմահողով ծածկված խորշին:

— Տե՛ս,— ասաց նա, սանձահարելով իր վայրագութիւններ,— ես կբարկանամ, և եթե դու շտիրապետես քո այդ ողորմելի սրտին... Գրո՞ւր տանի: Անմիջապես վերկաց:

— Վեր կկենամ, հայրիկ,— հնալուով արտաբերեց նա:— Միայն թող ինձ, այլապես ես կուշաթափվեմ: Ամեն ինչ արել եմ այնպես, ինչպես դու կամենում էիր. համոզված եմ: Քեթրինը քեզ կասի, որ ես... որ ես... ուրախ եմ եղել: Ահ, բռնիր ինձ, Քեթրին, ձեռքդ տուր:

— Հենվիր ինձ վրա,— ասաց հայրը,— և ոտքի կանդնիր: Այդպե՛ս: Այժմ բռնիր Քեթրինի թևը... շատ լավ, նայիր երան: Դուք, երևի, կկարծեք, որ ես սատանա եմ, միաս կինթրն, եթե աղայի մեջ առաջացնում եմ այդպիսի սարսափ: Բարի եղեք, տարեք նրան տուն, կտանեք, չէ՞: Նա սկսում է գողալ, երբ դիպչում եմ իրեն:

— Կինթրն, սիրելի՛ս,— շնչաց Քեթրինը,— ես չեմ կարող գալ Մոլեզին հողմերի դարավանդ... հայրս արգելել է... հայրիկդ քեզ ոչինչ չի անի, ինչո՞ւ ես այդպես վախենում:

— Ես չեմ կարող այդ տունը մտնել,— պատասխանեց Կինթրնը:— Չեմ կարող առանց քեզ տուն մտնել:

— Կանգնիր,— բղավեց հայրը:— Հարգենք Քեթրինի որդիական զգացմունքները: Նեւի, ներս տար նրան, իսկ ես անհապաղ կհետևեմ բժշկին վերաբերող ձեր խորհրդին:

— Եվ լավ կանեք,— պատասխանեցի ես:— Բայց ես պետք է մնամ իմ տիրուհու մոտ: Ձեր որդով զբաղվելը իմ գործը չէ:

— Դու շատ կտրուկ ես,— ասաց Հիթքլիֆը,— ես գիտեմ այդ. բայց դու ինձ կատիպես կամթել տղային, որ նրա ճվճվոցը կարեկցություն առաջացնի քո մեջ: Դե, հերոս, կգնա՞ս տուն, եթե ես քեզ տանեմ:

Նա մի անգամ ևս մտեցավ և ձևացրեց, իբր ուզում է բռնել տկար պատանուն. բայց հետ քաշվելով, Կինթրնը կառչեց քեռու աղջկանից և մերժում թույլ չտվող մոլեզին հաստատակամությամբ աղաչեց, որ Քեթրինը տանի:

Որքան էլ որ հավանություն չէի տալիս, բայց ես չհամարձակվեցի աղջկան խանդարել. և, իրոք, ինքը ինչպե՞ս կարող էր մերժել նրան: Թե ինչն էր նրան այդպիսի վախ ներշնչում, մենք չէինք կարող իմանալ, բայց պարզ էր, որ տղայի ուժերը վախից չբացել էին, իսկ եթե նրան ավելի ևս վախեցնես, ցնցումից կարող է զրկվել դատողությունից:

Հասանք տան շեմքին. Քեթրինը մտավ ներս, իսկ ես

կանդնած սպասում էի, մինչև որ նա հիվանդին տանի մի բաղկաթոռի մտա՝ կարծելով, որ նա իսկույն կգա, երբ միտար Հիթքլիֆը հրելով ինձ, բացականչեց.

— Իմ տունը՝ հո ժանտախտով վարակված չէ, Նելլի, այսօր ես ուզում եմ հյուրասեր լինել: Նստիր և թույլ տուր, որ դուռը ծածկեմ:

Նա ծածկեց ու կողպեց դուռը: Ես վեր թռա տեղիցս:
— Դուք տուն չեք գնա, մինչև որ թեյ չիմեք, — ավելացրեց նա: — Ես տանը մենակ եմ: Հերթընը փնասունները տարել է Լիիս, իսկ Ջիլլահն ու Ջոզեֆը գնացել են ղրոսնելու: Եվ թեպետ ես սովոր եմ մենության, դեմ չէի լինի ժամանակ անցկացնել հետաքրքիր ընկերակցության մեջ, եթե այդ հնարավորությունը կա: Միսս Լինթըն, նստեք սղաշի կողքին: Տալիս եմ ձեզ այն, ինչ ունեմ. հաղիվ թե արժե այդ նվերը ընդունել, բայց ես ուրիշ բան չունեմ, որ առաջարկեմ: Խոսքս Լինթընի մասին է: Եվ ի՞նչ զարմացած հայացքով է նա նայում ինձ: Տարօրինակ է, ինչպես եմ կատաղում, երբ որևէ մեկը վախենում է ինձնից: Եթե ծնված լինեի մի երկրում, որտեղ օրենքները այնքան խիստ չեն և ճաշակներն էլ այնքան նուրբ չեն, ես այդ երկուսին կենթարկեի կենդանահերձման, որպես երեկոյան գլխարկություն:

Նա հառաչեց, իսկից սեղանին, հայհոյեց:

— Դժոխքը վկա՝ ատում եմ նրանց:

— Ես ձեզնից չեմ վախենում, — գոչեց Քեթրինը, որը չէր լսել նրա ասածի վերջին մասը:

Նա առաջ եկավ. սև աչքերը վառվոտում էին կրքոտությունով ու վճռականությամբ:

— Տվեք բանալին. ես պահանջում եմ, — ասաց նա: — Ես չէի իմի և չէի ուտի այս տանը, նույնիսկ եթե քաղցից մեռնեի:

Բանալին ձեռքի մեջ սեղմելով, Հիթքլիֆը բռունցքը գրեց սեղանին: Քեթրինի համարձակությունից մի փոքր զարմացած՝ նայեց նրան, կամ դուցի նրա ձայնն ու հայացքը իրեն հիշեցրին այն անձնավորությանը, ումից նա ժառանգել էր այդ:

Քեթրինը ճանկեց բանալին և կիսով շափ դուրս քաշեց նրա կիսաբաց մատներով, բայց Քեթրինի արածը Հիթքլիֆին

վերագարձրեց ներկային. նա արագորեն ուղղեց իր սխալը: — Քեթրին Լինթըն,— ասաց նա,— բաց թողեք, այլապես ես մի հարվածով ձեզ գետին կտապալեմ. իսկ դա կխեղագարեցնի միսիս Դինին:

Հաշվի շառնելով այդ նախազգուշացումը, Քեթրին նորից բռնեց նրա ձեռքը, որի մեջ սեղմած պահում էր բանալին:

— Մենք կգնանք,— կրկնում էր նա ճիգ ու ջանք թափելով, որպեսզի ստիպի Հիթքլիֆին թուլացնել իր երկաթե մկանները. համոզվելով, որ իր եղունգներով ոչինչ անել չի կարող, նա գործի դրեց սուր ատամները:

Հիթքլիֆը հայացքն ուղղեց ինձ վրա և մի պահ զսպեց ինձ միջամտելուց: Քեթրինը խիստ զբաղված լինելով նրա մատներով, չէր նայում դեմքին: Հիթքլիֆը հանկարծ բաց արեց մատները և զիջեց վեճի առարկան. բայց աղջկան շհաջողվեց տիրել բանալուն, երբ ազատված ձեռքով նա բռնեց Քեթրին և կռացրեց իր ծնկին, մյուս ձեռքով սկսեց մեկ այս, մեկ այն կողմից նրա գլխին հասցնել սարսափելի հարվածներ, որոնցից յուրաքանչյուրը բավական կլիներ իրագործելու իր տված սպառնալիքը, եթե ծեծվողը կարողանար վայր ընկնել:

Այդ դիվային բռնությունը տեսնելով՝ ցասումից կատաղած ես նետվեցի նրա վրա:

— Սրիկայի՛ մեկը,— գոռացի,— ստո՛ր արարած:

Նվ կրծքիս բավական եղավ մի թեթև հարված, որպեսզի լռեցնեի ինձ. ես գեր եմ և շուտ շնչահատ եմ լինում. եթե դրան ավելացնենք և կատաղությունը՝ ես երերացի, գլուխս պտույտ եկավ, և ուր որ էր շնչասպառ կլինեի կամ արյան անոթ կայայթեր:

Պատկերը մի ակնթարթում փոխվեց. ազատված Քեթրինը ձեռքերը սեղմեց քունքերին և նայում էր այնպես, ասես համոզված չէր, որ ականջները տեղում են: Նա զողում էր եղեգների պես, և խեղճ աղջիկը բոլորովին շփոթված հենվեց սեղանին:

— Ինչպես տեսնում եք, ես կարողանում եմ պատժել յրեխաներին,— մոռյլ տեսքով ասաց սրիկան՝ հակվելով, որ վերցնի հատակին ընկած բանալին:— Այժմ զնացեք Լինթընի մոտ, ինչպես ասացի, և մի կուշտ լաց եղեք: Վաղը ես

կղառնամ ձեր հայրը, իսկ մի քանի օրից հետո դուք ուրիշ հայր չեք ունենա, այնպես որ դուք դեռ շատ արցունք կթափեք. դուք կարող եք դիմանալ, թուլլերից չեք. դրա համը կառնեք ամեն օր, եթե թեկուզև մեկ անգամ ձեր աչքերում նկատեմ այդ դիվային շարությունը:

Քեթին նետվեց ոչ թե կինթընի կողմը, այլ դեպի ինձ, ծնկի եկավ ոտքերիս մոտ, վառվող այտը դրեց ծնկիս և սկսեց բարձրաձայն արտասովել: Նրա հորաքրոջ տղան մկան պես սուսուփուս կուշ էր եկել բազմոցի անկյունում, և, կարծես, շնորհավորում էր իրեն, որ պատժվեց ոչ թե ինքը, այլ մեկ ուրիշը:

Միտար Հիթքլիֆը, տեսնելով, որ մենք բոլորս շփոթված ենք, վերկացավ և սկսեց թեյ պատրաստել: Բաժակներն ու քնակները դրեց սեղանին: Մի բաժակ լցրեց և տվեց ինձ:

— Վերացրու դրանց զայրույթը և լցրու այդ խելագարների բաժակները, — ասաց նա: — Թեյը թունավորված չէ, թեև պատրաստված է իմ ձեռքով. իսկ ես գնամ, տեսնեմ, որտե՞ղ են ձեր ձիերը:

Երբ նա դնաց, մեր առաջին միտքը եղավ մի ելք գտնել և դուրս գալ: Փորձեցինք խոհանոցի դուռը, բայց այն կողպած էր դրսի կողմից. նայեցինք լուսամուտներին՝ շատ նեղ էին, նույնիսկ Քեթիի նիհարիկ մարմնի համար:

— Տեր կինթըն, — ճշացի ես՝ տեսնելով, որ մենք պարզապես բանտարկված ենք: — Դուք գիտեք, թե ինչի հետևից է ընկել այդ սատանան՝ ձեր հայրը, դուք մեզ ամեն ինչ — կհայտնեք, այլապես ես կապտակեմ ձեզ այնպես, ինչպես նա ապտակեց ձեր քեռու աղջկան:

— Այո, կինթըն, դու պետք է հայտնես, — ասաց Քեթրինը: — Ես ի սեր քեզ եկա, և ապերախտություն կլինի, եթե շարակամորեն հրաժարվես:

— Թեյ տուր ինձ, ծարավ եմ, և այն ժամանակ ամեն ինչ կպատմեմ, — պատասխանեց նա: — Միսիս Դին, մի կողմ քաշվեք: Ինձ դուր չի գալիս, երբ դուք կանգնում եք իմ գլխավերև: Քեթրին, արցունքդ կաթեց բաժակիս մեջ: Չեմ խմի: Մի ուրիշը լցրու:

Քեթրինը նրան մոտեցրեց մի ուրիշ բաժակ և սրբեց իր



դեմքը: Այդ թշվառակտնի հանդարտութունը զզվեցնում էր ինձ այժմ, երբ նա այլևս վախենալու բան չուներ: Գաշտում նրա արտահայտած տազնապը հանդարտվեց, հենց որ մտանք Մուլեգին հողմերի դարավանդ. ևս հասկացա, որ նա սարսուփում էր արթնացնել հոր կատաղի ցասումը, եթե շկարողանար մեզ այստեղ բերել. և այժմ, երբ այդ բանը կատարված չէր, նրա համար անմիջական վտանգն անցել էր:

— Հայրս ուզում է, որ մենք ամուսնանանք, — շարունակում էր նա՝ կում անելով բաժակից: — Բայց նա դիտի՝ քեռին հիմա մեզ թույլ չի տա ամուսնանալ և վախենում է, որ մեռնեմ, եթե ձգձգենք: Ուստի դուք պետք է այստեղ դիշ-

րեք, իսկ առավոտյան մեզ կամուսնացնեն. և եթե դուք հորս ցանկութունը կատարեք, հաջորդ օրը կվերադառնաք տուն՝ ձեզ հետ տանելով նաև ինձ:

— Տանի իր հետ նաև քեզ, ողորմելի՛ փոխակերպուկ՝,— գոռայի ես:— Ամուսնանա՛ս: Բայց այդ մարդը ցնդել է կամ մեզ է հիմարի տեղ դնում: Եվ մի՞թե դուք երևակայում եք, որ գեղեցիկ երիտասարդ լեդին՝ այդ առողջ ու ուրախ աղջիկը, իր բախտը կկապի ձեզ նման մի կիսամեռ կապիկի հետ: Եվ դուք հույս եք փայփայում, որ մի ուրե՛ղ աղջիկ, թողնենք Քեթրին Լինթընին, կհամաձայնի ընտրել ձեզ որպես ամուսի՞ն: Ձեզ պետք է քոթակել այն բանի համար, որ ձեր ստոր նվոցներով մեզ հրապուրեցիք և բերիք այստեղ, և... այդպես ապուշ-ապուշ մի նայեք ինձ, ևս մեծ ցանկութուն ունեմ, որ մի լավ դնքստեմ ձեզ ձեր ստոր դավաճանություն և հիմար ինքնահավանության համար:

Ես իսկապես նրան մի քիչ թափ տվեցի, բայց դա առաջացրեց հազի նոպա, և նա, ըստ սովորության, սկսեց տնքտնքալ ու արտասվել, իսկ Քեթրինը սկսեց ինձ հանդիմանել:

— Ամբողջ գիշեր մնալ այստե՞ղ: Ո՛չ մի դեպքում, — ասաց նա՝ զգուշությամբ շուրջը նայելով: — Էլլեն, ևս կվառեմ այս դուռը, բայց դուրս կգնամ այստեղից:

Եվ նա անմիջապես ձեռնամուխ կլինե՛ր իրականացնել իր սպառնալիքը, եթե Լինթընը նորից չվախենար իր թանկարժեք անձի համար: Նա երկու թույլ ձեռքերով գրկեց Քեթրինին, արտասվելով.

— Դու շե՞ս ուզում ընդունել ու փրկել ինձ. շե՞ս կամենում, որ ևս զամ Ազարակատուն: Օ՛հ, սիրելի Քեթրին, դու չպետք է գնաս և լքես ինձ. դու պ ե տ ք է ենթարկվես իմ հորը, պետք է ենթարկվես:

— Ես պետք է իմ հորը ենթարկվեմ, — պատասխանեց Քեթրին, — և ազատեմ նրան տառապալից սպասումից: Մնա՛լ այստեղ ամբողջ գիշեր: Ի՞նչ կմտածի նա իմ մասին. հիմա

¹ Անգլիական ժողովրդական հերթաթնորում հաճախ պատմվում է, թե ինչպես էլֆերը առեանդված երեխային թաքուն փոխարինում են անճուրի էլֆով:

կընկնի մտահոգութեան մեջ: Պետք է տնից դուրս գալու մի
ևլք գտնել, այլապես ես կայրեմ այն: Հանգստացի՛ր: Քեզ
ոչ մի վտանգ չի սպառնում, բայց եթէ խանգարես ինձ...
Լինթըն, ես հորս ավելի շատ եմ սիրում, քան քեզ:

Հիթքլիֆի զայրույթի մահացու սարսափը տղային վերա-
դարձրեց նրա երկշոտ ճարտասանությունը: Քեթրինը քիչ
էր մնացել խելագարվեր նրա պատճառով. այդուհանդերձ,
պնդում էր, որ պետք է զնա տուն և իր հերթին սկսեց աղեր-
սել, համոզել տղային, որ զսպի իր ինքնասեր տառապանքը:

Մինչ նրանք վիճում էին այդ ձևով, մեր բանտապահը
վերադարձավ:

— Ձեր ձիերը փախել են,— ասաց նա,— և... հը, ինչ
կա, Լինթըն, նորի՞ց թնգթնգոցոց բռնեց: Քեթրինը ի՞նչ է արել
քեզ: Վերկաց, բարի գիշեր ասա... և՛ անկողի՛ն: Մեկ-երկու
ամիս հետո, տղաս, դու ի վիճակի կլինես ուժեղ ձեռքով
փոխհատուցել նրան իր այժմյան բռնություն համար: Դու
ծարավի ես իսկական սիրո, մի՞թե այդպես չէ. էլ աշխար-
հում քեզ ոչինչ հարկավոր չէ... և Քեթրին Լինթընը կամուս-
նանա՛ քեզ հետ: Դե, շուտ անկողին: Զիլահը գիշերը չի լի-
նելու, ինքդ պետք է հանվես: Դե՛, դե՛, առանց նվնվոցների:
Անցիր քո սենյակը, ես քեզ չեմ մոտենա, կարող ես շվա-
խենալ: Բարեբախտաբար դու բավական հաջող էիր գոր-
ծում: Մնացածը ես վերցնում եմ ինձ վրա:

Խոսելիս՝ դուրը բռնած բաց էր պահում, որ տղան կա-
րողանա անցնել. Լինթընը ճիշտ սպանիել շան պես արա-
գորեն սողոսկեց՝ կասկածելով, որ շեմքին կանգնած մարդը
պատրաստվում է կոպտորեն հարվածել իրեն:

Նորից շսկաց դռան բանալին: Հիթքլիֆը մոտեցավ բու-
խարուն, որի մոտ լռելյայն կանգնած էինք մենք՝ իմ տիրու-
հին ու ես: Քեթրինը նայեց և բնազդորեն ձեռքը տարավ այ-
տին՝ Հիթքլիֆի մոտիկությունը կենդանացրեց ցավի զգա-
ցումը: Ոչ ոք չէր կարող շմռայվել, նկատելով երեսայական
այդ շարժումը, բայց նա հայհոյեց ու փնթփնթաց.

— Օհ, դուք ինձնից չե՞ք վախենում: Կարողանում էիք
լ: վ թաքցնել ձեր արիությունը. դուք, գրողը տանի, Բավա-
կ. նին երկշոտ տեսք ունեք:

— Այժմ ես վախենում եմ ձեզնից,— պատասխանեց Քեթ-

րինը, — որովհետեւ եթե այստեղ մնամ, դա մեծ վիշտ կ'ապա-
ճառի հայրիկին, բայց ես ինչպե՞ս կարող եմ վիշտ պատ-
ճառել նրան, երբ նա... երբ նա..., միտար Հիթթլիֆ, բաց բո-
ղեֆ, տուն գնամ, խոստանում եմ ամուսնանալ Լինթընի հետ:
Հայրս կտա իր համաձայնությունը, ես սիրում եմ նրան:
Ինչո՞ւ եք ուզում ստիպել ինձ անել այն, ինչ պատրաստ եմ
անել իմ բարի կամքով:

— Թող միայն համարձակվի ստիպել, — գոռացի ես: —
Մեր երկրում օրենք գոյություն ունի, այն դեռ կա, փառք
աստծո. թեև ապրում ենք մի խուլ վայրում: Այո, այդպիսի
գործի համար հարազատ որդու մասին անգամ կհայտնեի
իշխանություններին. դա հանցագործություն է, դրա համար
քահանայի գլուխը շին շոյի:

— Լռե՛լ, — բղավեց սրիկան: — Գրողը տանի քեզ քո
գոռգոռոցի հետ միասին: Չեմ կամենում, որ դու խոսես
Միսս Լինթըն, ինձ համար շատ հաճելի է, որ ձեր հայրը
ողորմելի վիճակի մեջ է, ուրախությունից այսօր քունս չի
տանի: Դուք չէիք կարող մի ավելի լավ միջոց գտնել ստի-
պելու ինձ՝ մի օր ես ձեզ պահել իմ տան տանիքի տակ, քան
հաղորդել, որ դա կհանգեցնի այդպիսի հետևանքների: Իսկ
ինչ վերաբերում է ձեր խոստումին՝ ամուսնանալ Լինթընի
հետ, ապա ես միջոցներ ձեռք կառնեմ, որ դուք կատարեք
ձեր խոստումը. ձեզ դուրս չեն թողնի այստեղից, մինչև ձեր
սոված խոստումը չկատարեք:

— Այդ դեպքում էլլենին ուղարկեք հայտնելու, որ ես
ողջ եւ առողջ եմ, — ճշաց Քեթրինը, դառնորեն արտասովե-
լով: — Կամ էլ պսակեք մեզ անմիջապես: Խեղճ հայրիկ...
էլլեն, նա կկարծի, որ մենք կորել ենք: Ասա, ի՞նչ անենք:

— Ոչ, երբեք: Նա կկարծի, որ դուք ձանձրացել եք նրան
խնամելուց, փախել եք, որ մի փոքր զվարճանաք, — ասաց
Հիթթլիֆը: — Դուք չեք կարող ժխտել, որ դուք իմ տուն մտաք
ձեր սեփական ցանկությունք՝ հակառակ նրա հրամանների:
Եվ միանգամայն բնական է, որ ձեր հասակում փնտրում եք
զվարճություն. դուք ձանձրացել եք մի հիվանդի խնամելուց,
որ ընդամենը ձեր հայրն է: Քեթրին, նրա ամենաերջանիկ
օրերն անցան, գնացին, երբ դուք լույս աշխարհ եկաք: Նա
ձեզ անիծում էր և, կարծում եմ, այն բանի համար, որ դուք

ծնվեցիր (համենայն դեպս, ես էլ էի անիծում): Եվ ճիշտ կլինի, եթե թողնելով այս աշխարհը՝ նա նորից սկսի ձեզ նղովել: Ես էլ նրա հետ միասին: Ես ձեզ չեմ սիրում: Եվ ինչպե՞ս կարող եմ սիրել: Թողեք լացը: Ենթադրում եմ, որ այսուհետ դա կլինի ձեր հիմնական զբաղմունքը, եթե Լինթրնը շփոխհատուցի ձեզ այլ կորուստների համար. ձեր հեռատես ծնողը, երևի երևակայում է, որ իմ տղան ընդունակ է այդ բանին: Նրա նամակները իր խորհուրդներով ու սփոփանքներով շափազանց զվարճացնում էին ինձ: Իր վերջին նամակում՝ իմ գոհարին խորհուրդ է տալիս հոգատար լինել իր թանկարժեք աղջկա նկատմամբ, և սիրալիր լինել հետը, ե՞րբ տիրանա նրան: Հոգատար և սիրալիր. բա սա հայրական հոգատարություն չէ՞: Բայց հոգատարությունն ու սիրալիրությունը հարկավոր են հենց իրեն՝ Լինթրնին: Տղաս շատ լավ կսրողանում է փոքրիկ բռնակալ լինել. ինչքան ասես կտանջի կատուներին մի պայմանով, որ նրանց ատամները քաշած և եղունդները կտրած լինեն: Նրա քեռուն դուք կարող եք պատմել սքանչելի պատմություններ տղայի բարության մասին, երբ վերադառնաք տուն, հավատացնում եմ ձեզ:

— Այ դա դուք ճիշտ եք ասում, — ասացի ես: — Բացատրեք Քեթրինին ձեր որդու բնավորությունը: Յույց տվե՞ր, թե Լինթրնը ինչո՞վ է նման ձեզ և այն ժամանակ, լիահույս եմ, միսս Քեթրինը, այդ օձի հետ ամուսնանալուց առաջ, երկու անգամ կմտածի:

— Այժմ հարկավոր չէ, որ ես խոսեմ նրա հաճելի հատկությունների մասին, — պատասխանեց նա: — Որովհետև Քեթրինը կամ պետք է ամուսնանա նրա հետ, կամ էլ քեզ հետ միասին կալանավորված կմնա այստեղ, մինչև որ քո տերը մեռնի: Ես կարող եմ երկուսիդ էլ միանգամայն զաղտնի, փակի տակ պահել այստեղ: Եթե կասկածում ես, օգնիր, որ հետ վերցնի իր խոսքը, այն ժամանակ դու առիթ կունենաս համոզվելու դրանում:

— Խոսքս հետ չեմ վերցնի, — ասաց Քեթրինը: — Ես կամուսնանամ Լինթրնի հետ հենց այս պահին, եթե դրանից հետո ինձ թույլ տրվի վերադառնալ Կեռնեխների ազարակատուն: Միտեր Հիթքլիֆ, դուք դաժան մարդ եք, բայց շա-

րագործ շէք, դուք պարզապես շէք ուզենա շարությամբ ան-¹
ուղղելի կերպով խորտակել իմ երջանկությունը: Եթե հայրս
մտածի, որ ես դիտմամբ եմ լքել իրեն, և եթե մեռնի մինչև
իմ վերադարձը, ապա ինչպե՞ս կարող եմ ապրել դրանից
հետո: Ես այլևս լաց չեմ լինում, բայց ուզում եմ շոքել ձեր
ծնկների մոտ, տեղից չեմ վերկենա և աչքերս ձեր դեմքից
չեմ կտրի, մինչև որ շնայեք ինձ: Ոչ, մի շրջվեք, խնդրում
եմ, նայեք: Դուք շէք տեսնի ձեզ զղայնացնող որևէ բան: Ես
ձեր հանդեպ ատելություն չունեմ: Չեմ բարկանում, որ ինձ
հարվածեցիք: Մի՞թե դուք ձեր կյանքում որևէ մեկին երբևէ
չէք սիրել, քեռի, երբե՞ք: Ահ, դուք պետք է գեթ մեկ անգամ
նայեք ինձ. ես այնքան դժբախտ եմ, որ շէք կարող չկարեկ-
ցել և շխալել ինձ:

— Հետ քաշեք ձեր կաշուն մատները և կորեք գնացեք,
թե չէ քացով կտամ,— գոռաց Հիթքլիֆը՝ կոպտորեն հրելով
նրան:— Ես կգերադասեմ, որ օձը փաթաթվի ինձ: Գրողը
տանի, ինչպե՞ս կարող եք քծնել իմ առաջ: Ես զզվում եմ
ձեզնից:

Նա թոթվեց ուտերը, ցնցվեց, ասես նրա մարմնով իսկա-
պես նողկանքի դող անցավ, թափով հենվեց աթոռին, մինչ
ես վեր թռա, բաց արի բերանս, որպեսզի հանդիմանություն-
ների հեղեղ թափեմ զլիսին, բայց առաջին նախադասությունը
դեռ չավարտած, ինձ կտրեցին՝ սպառնալով, որ եթե մի կես
խոսք էլ ասեմ, ինձ կփակեն կից սենյակում:

Աղչամուղչն արդեն իջնում էր: Պարտեզի դարպասի մոտ
ձայներ լսեցինք: Մեր տերը անմիջապես շտապեց դուրս.
նա գլուխը շէր կորցնում, իսկ մենք ասես խելագարված լի-
նեինք: Խոսակցությունը շարունակվեց երկու-երեք րոպե,
ապա տանտերը վերադարձավ միայնակ:

— Ինձ թվաց, թե դա ձեր քեռու տղան՝ Հերթընն է,—
ասացի ես, դիմելով Քեթրինին:— Լավ կլինեք, եթե նա գար:
Ո՞վ գիտի, գուցե, անցնի մեր կողմը:

— Դրանք ծառաներից երեքն էին, որ Ագարակատնից
ուղարկված էին ձեզ որոնելու,— ասաց Հիթքլիֆը ինձ լսելուց
հետո:— Դու պետք է միայն լուսամուտը բաց անեիր ու
կանչեիր, բայց կարող եմ երգվել՝ աղջիկը ուրախ է, որ դու

այդ քայլին շղիմեցիր: Նա ուրախ է, որ հարկադրված է մնալ, հավատացած եմ:

Իմանալով, թե ինչ հնարավորութունն ձեռքից բաց թողեցինք, մենք երկուսս էլ անզուսպ անձնատուր եղանք մեր վշտին: Հիթքլիֆը թույլ տվեց մեզ լաց լինել մինչև գիշերվա ինը, հետո հրամայեց խոհանոցի միջով բարձրանալ վերև՝ Զիլահի սենյակը. ես շնջացի իմ ջահել տիրուհուն, որ հնթարկվի, գուցե մեզ հաջողվի այդտեղի լուսամուտից դուրս սողալ կամ էլ բարձրանալ ձեղնահարկ և փոքր լուսամուտից դուրս գալ կտուրը:

Սակայն լուսամուտը ներքևինի պես նեղ էր. շփորձեցինք դուրս գալ ձեղնահարկի սանդուղք, որովհետև մեզ վերստին փակեցին:

Երկուսս էլ ամբողջ գիշեր շպառկեցինք. Քեթրինը լուսամուտի մոտ նստած, անհամբերությամբ սպասում էր լուսաբացին և իմ հաճախակի աղերսանքներին՝ պառկել, հանգստանալ, նա պատասխանում էր լոկ խոր հառաչանքով:

Ես բազկաթոռում նստած ճոճվում, դաժանորեն դատապարտում էի ինձ այն բանի համար, որ շատ հաճախ խախտում էի պարտքս, որի պատճառով էլ, ինչպես այն ժամանակ թվում էր ինձ, առաջանում էր իմ տերերի ամբողջ դրժբախտությունը: Իրականում, ես հասկանում եմ, որ դա այդպես չէր, բայց իմ երևակայությամբ այդպես էր թվում այդ շարագուշակ գիշերը, և ես այդ բանում Հիթքլիֆին ավելի քիչ էի մեղադրում, քան ինձ:

Առավոտյան ժամը յոթին նա երևաց և հարցրեց, թե արդյոք միսս Լինթընը վե՞ր է կացել:

Քեթրինը վազելով իսկույն մոտեցավ դռանը և բղավեց.

— Այո:

— Դե շուտ այստեղ, — ասաց նա՝ բաց անելով դուռը, և աղջկան շեմքից դուրս քաշելով:

Ես մերկազա, որ հետևեմ նրան, բայց նա բանալին կրկին պտտեցրեց կողպեքի մեջ: Պահանջեցի, որ ինձ դուրս թողնի:

— Համբերիր, — պատասխանեց նա, — քեզ իսկույն նախաճաշ կուղարկեմ:

Ես ուժգին թխկթխկուցնում էի դուռը և կատաղած շրթա-

կացնում էի սողնակը: Քեթրիներ հարցրեց, թե ինչո՞ւ են շարունակում ինձ փականքի տակ պահել: Հիթքլիֆը պատասխանեց, որ ես պետք է համբերեմ մեկ ժամ ևս, և նրանք հեռացան:

Համբերում էի երկու-երեք ժամ. վերջապես լսեցի քայլերի ձայն, բայց ոչ Հիթքլիֆի քայլերի ձայնը:

— Ես ուտելիք եմ բերել,— ասաց մի ձայն,— բաց արեք դուռը:

Ուրախությամբ դուռը լայն բաց անելով՝ տեսա Հերթրենին, բռնակորոված ուտելիքի պաշարով, որը կբավարարեր ամբողջ օրվա համար:

— Վերցրեք,— ասաց, ձեռքս կոխելով սկուտեղը:

— Սպասեք մի րոպե,— սկսեցի ես:

— Զի կարելի,— ճշաց նա և հեռացավ, ուշադրություն չդարձնելով իմ թախանձանքին:

Եվ այսպես, կողպեքի տակ փակված մնացի ամբողջ օրը, և մի օր ևս, ու հետևյալ օրերը... Հինգ գիշեր ու շորս օր մնացի այդտեղ, շտենսելով և ոչ մեկին, բացի Հերթրենից, նրան էլ տեսնում էի օրը մեկ անգամ՝ առավոտները. նա, անշուշտ, օրինակելի բանտապան էր, մոռյալտես ու համր, խուլ էր մնում իմ ամեն մի փորձին՝ նրա մեջ արթնացնել արդարության ու կարեկցության վզացում:

ԳԼՈՒԽ ՔՄԱՆՈՒԹԵՐՈՐԳ

Հինգերորդ առավոտը, ավելի ճիշտ, հինգերորդ օրը, ուրիշ քայլերի ձայն լսվեց՝ ավելի թեթև ու ավելի մանր, և այս անգամ եկողը ներս մտավ սենյակ: Դա Զիլլահն էր՝ վրան ալ կարմիր շալ, մետաքս սև գլխարկը գլխին, իսկ ձեռքին ուռու ոստերից հյուսած դամբյուղ:

— էհ, միսիս Դին,— բացականչեց նա:— Իսկ Գիմմերթրենում միայն ձեր մասին են խոսում: Ես կարծեցի՝ անպայման խեղդված կլինեք Սև Զիու մորուստում, և օրիորդն էլ ձեզ հետ միասին, մինչև որ տերն ինձ ասաց, որ դուք գտնվել եք, և որ նա ձեզ տեղավորել է այստեղ: Ահա թե ի՞նչ: Պետք է Լեթազրել, որ դուք ընկել էիք մի կղզի: Եվ

ինչքա՞ն ժամանակ նստած մնացիք այդ փոսում: Տե՛րը ձեզ փրկեց, միսիս Դին: Բայց առանձնապես շքեք նիհարել, ինչպես երևում է, ձեզ այնքան էլ վատ չէիք զգում, այնպես չէ՞...

— Ձեր տերը իսկակա՞ն սրիկա է,— պատասխանեցի հստակ:— Բայց նա այս բոլորի համար պատասխան կտա: Իզուր է նա հեքիաթներ պատմում. միևնույն է, կմերկացվի:

— Ի՞նչ եք ուզում ասել,— հարցրեց Զիլլահը:— Բայց նա չի տարածել այդ լուրը: Գյուղում են ասում, որ դուք իբր խեղդվել եք մորուտում, իսկ հստակ, հենց որ եկա, այդ էրնշուռին ասում եմ. «Օ՛հ, ինչ սոսկալի բան է պատահել, միստր Հերթըն, իմ բացակայության ժամանակ: Զահել, սիրուն օրիորդը շատ ափսոս է, ափսոս է և աշխույժ միսիս Դինը»:

Իսկ էրնշուռն զարմանքից աչքերը շոկեց: Կարծեցի, որ նա ոչինչ չի լսել, ուստի լուրը հաղորդեցի նրան:

Իսկ տերը լսեց, ժպտաց ու ասաց.

— Եթե նրանք ընկած են եղել մորուտ, ապա այժմ նրանց հանել են, Զիլլահ: Նեւի Դինը այս պահին գտնվում է ձեր սենյակում: Կարող եք նրան ասել, երբ բարձրանաք ձեր սենյակը, որ չքվի գնա. ահա բանալին: Ճահճուտի գոլորշիները լցվել են նրա գլուխը, և նա ուզում էր մի շնչով վազել տուն, բայց հստակ նրան փակեցի, մինչև որ ուշքի գա: Իսկույնևեթ կարող եք նրան Ազարակատուն ուղարկել, եթե միայն նա ի վիճակի է գնալու, և իմ անունից հայտնեք նրան, որ իր ջահել տիրուհին ժամանակին կհետևի նրան, որպեսզի մասնակցի սկզբայրի թաղման արարողություններին:

— Մի՞թե միստր էդգարը մեռել է,— շնչասպառ ճշացի հստակ:— Օհ, Զիլլահ, Զիլլահ:

— Ոչ, ոչ. նստեք, իմ բա՛րի միսիս Դին,— պատասխանեց նա,— դուք իսկապես դեռ վատ եք զգում: Նա չի մեռել, բժիշկ Քեննեթը կարծում է, որ կդիմանա մի օր ևս. հստակ հանդիպեցի ճանապարհին և հարցրի:

Նստելու փոխարեն վերցրի իրերս և նետվեցի ներքև, յուվհետև ճանապարհին իմ առաջ բաց էր:

Մտնելով տուն՝ փնտրեցի մեկին, որ մի բան հայտնի Քեթրինի մասին:

Սենյակը ողողված էր արևի լույսով, դուռը լայն բաց էր, բայց ոչ ոք մոտիկ տեղում չերևաց:

Ես դեռ չէի կարողանում որոշել՝ զնա՞ն անմիջապես, թե՛ վերադառնալ ու փնտրել իմ տիրուհուն, երբ մի թեթև հաղ իմ ուշադրությունը գամեց օջախին:

Լինթընը միայնակ, բազմոցին պառկած նաբաթ էր ծծում և իր անտարբեր հայացքով հետևում ինձ:

— Ո՞ւր է միսս Քեթրինը, — խիստ տոնով հարցրի ես, ենթադրելով, որ կկարողանամ վախեցնել և նրանից իմանալ ինձ անհրաժեշտ տեղեկությունը, քանի դեռ նա մենակ էր:

Անմեղ տեսքով նա շարունակում էր ծծել նաբաթը:

— Գնացե՞լ է, — հարցրի ես:

— Ոչ, — պատասխանեց նա, — վերևում է. նա շպետք է զնա, թույլ չենք տա:

— Թույլ չե՞ք տա, հիմարի մեկը, — գոռացի ես: — Անմիջապես տարեք ինձ նրա սենյակը, թե չէ ես ձեր հախից դեռ կգամ:

— Այդ ի՞մ հայրիկը ձեր հախիցը կգա, եթե փորձեք զնալ այնտեղ, — պատասխանեց նա: — Հայրս ասում է, որ ես պետք է խիստ լինեմ Քեթրինի հետ, նա իմ կինն է, և ամոթալի բան կլինի, եթե թողնի հեռանա: Հայրս ասում է, որ Քեթրինը ասում է ինձ և ուզում է, որ ես մեռնեմ, որպեսզի իմ փողերը մնան իրեն, բայց նրան փող չի հասնի, և նա տուն չի գնա: Ոչ մի դեպքում: Որքան ուզում է թող լաց լինի և հոշոտվի:

Լինթընը վերսկսեց իր նախկին զբաղմունքը և կոպերը փակեց, ասես որոշեց մի քիչ քնել:

— Տեր Հիբլզի՞ք, — նորից խոսեցի ես, — մի՞թե մոռացել եք, թե այս ձմեռ Զեթրինը ինչքան բարի է եղել ձեր նկատմամբ, երբ դուք հավատացնում էիք, որ սիրում եք նրան, երբ նա ձեզ համար գոթեր էր բերում, երգեր էր երգում, և շատ անգամներ, բուր Եւ բորանին, գալիս էր, որպեսզի ձեզ տեսնի: Եթե ստիպված բաց էր թողնում մի երեկո, լալիս էր, որովհետև դուք կվրդովվեիք: Այն ժամանակ դուք զգում էիք, որ նա ձեր նկատմամբ հարյուր անգամ ավելի բարի էր, քան պետք էր, իսկ այժմ դուք հավատում եք ձեր հոր ասած

ատերին, թեև գիտեք, որ նա ատում է երկուսիդ էլ: Եվ դուք միացել էք նրա հետ ընդդեմ Քեթիի: Դա հրաշալի երախտագիտութուն է, այնպես չէ՞:

Լինթընի շրթունքների անկյունները կախվեցին, նաբաթը հանեց բերանից:

— Մի՞թե նա կգար Մուլեզին հողմերի դարավանդ, եթե ձեզ ատեր,— շարունակում էի ես:— Հասյա ինքներդ մտածեք: Իսկ ինչ վերաբերում է ձեր փողին, նա նույնիսկ չգիտի, որ դուք փող եք ունենալու: Դուք ասացիք, որ նա հիվանդ է, և այդուհանդերձ, նրան օտար տանը մենակ եք թողնում: Եվ այդ անում եք դուք՝ լավ իմանալով, թե ինչ ասել է տառապանք: Դուք ինքներդ խղճում էիք ձեզ ձեր սեփական տառապանքների պատճառով. Քեթրինն էլ է ձեզ խղճում, իսկ դուք նրան չեք խղճում: Այ ես արտասվում եմ, տեր, Հիթքլիֆ, դուք տեսնում եք, որ մեծահասակ կին եմ, այն էլ աղախին: Իսկ դուք, որ ասում էիք, թե սիրում, պաշտում եք նրան, ձեր արցունքները պահեցիք ձեզ համար և միանգամայն հանդիստ պառկել եք՝ այստեղ: Էհ, դուք՝ անսիրտ ու ինքնասեր տղա:

— Ես Քեթրինի հետ չեմ կարող նստել,— կտրուկ պատասխանեց Լինթընը:— Ձեմ կարող մնալ իմ սենյակում: Նա շարունակ արտասվում է, ես այդ տանել չեմ կարող: Նա չի դադարում, թեև ասում եմ, որ կկանչեմ հայրիկին. մի անգամ իսկապես կանչեցի և նա սպառնաց, որ կխեղդի նրան, եթե չհանգստանա, բայց հենց որ հայրս դուրս եկավ սենյակից, նորից սկսեց, և նվում, մորմոքվում էր ամբողջ գիշեր, թեև ես տանջվելով տնքում էի և չէի կարողանում քնել:

— Միստր Հիթքլիֆը տանը չէ՞,— հարցրի ես, տեսնելով, որ այդ ողորմելի մարդուկը անընդունակ է համակրելու իր քեռու ազգկա տվայտանքները:

— Նա բակում է,— պատասխանեց Լինթընը,— խոսում է բժիշկ Քեննեթի հետ: Բժիշկն ասում է, որ քեռին վերջապես, իրոք որ մեռնում է. ես ուրախ եմ, որովհետև նրա մահից հետո ես կդառնամ Ազարակատան տերն ու տիրականը: Քեթրինը միշտ խոսում էր Ազարակատան մասին, համարելով այն իր տունը: Բայց տունը նրանը չէ՝ իմն է, հայրս ասում

է, որ նրա բոլոր հրաշալի գրքերը իմն են: Քեթրինը ինձ առաջարկում էր և իր գրքերը, և իր գեղեցիկ թւշուռները և Միննի ձին, եթե ես գտնեմ մեր սենյակի բանալին և իրեն թողնեմ, որ գնա, բայց ես ասացի, որ նա ինձ առաջարկելու բան չունի՝ դրանք բոլորն էլ իմն են: Ապա նա սկսեց լաց լինել, վզից հանեց փոքրիկ նկարը և ասաց, որ կտա ինձ. ոսկե մեղալիոնի մեջ կա երկու նկար՝ մի կողմում իր մայրն է, մյուսում քեռին, երբ դեռ ջահել էին: Դա կատարվեց երեկ. ես ասացի, որ դրանք էլ իմն են և փորձեցի մեղալիոնը ձեռքից առնել: Իսկ շար աղջիկը շէր տալիս, նա ինձ հրեց և ցավ պատճառեց: Ես ճշացի, նա վախեցավ, լսեց, որ հայրս գալիս է, օղակները կոտրեց, մեղալիոնը բացեց և տվեց ինձ իր մոր նկարը. երկրորդ նկարը փորձեց թաքցնել, բայց հայրս հարցրեց, թե ինչ է պատահել, և ես բացատրեցի: Նա ինձնից առավ մի կեսը, հրամայեց նրան մյուս կեսն էլ տալ: Քեթրինը հրաժարվեց, և նա.. նա մի հարվածով աղջկան տասլալից գետին, մեղալիոնը շղթայից պոկեց և տրորեց ուքով:

— Եվ դուք հաճույքով նայում էիք, թե ինչպե՞ս են ծեծում նրան,— հարցրի ես դիտմամբ քաջալերելով նրան, որ խոսի:

— Աչքերս թարթեցի,— պատասխանեց նա,— ես միշտ էլ այդպես եմ անում, երբ հայրս իմ աչքի առաջ խփում է ձիուն կամ շանը, նա այդ անում է սոսկալի դաժանությամբ: Այնուամենայնիվ, ես սկզբում ուրախացա՝ Քեթին արժանի էր պատժի այն բանի համար, որ ինձ հրել էր, բայց երբ հայրս գնաց, նա ինձ տարավ լուսամուտի մոտ և ցույց տվեց իր այտը, որը դիպչելով ատամներին, ներսից պատռվել էր և արյունը լցվել էր բերանը, ապա հավաքեց նկարի կտորները, գնաց, նստեց՝ դեմքը դեպի պատը, և այդ պահից սկսած ոչ մի անգամ հետո չխոսեց. ժամանակ առ ժամանակ ինձ թվում էր, թե նա շի կարողանում խոսել ցավի պատճառով: Չեմ սիրում այդպես մտածել, բայց նա գարշելի է, որ անընդհատ լաց է լինում և այնքան գունատ ու վայրագ տեսք ունի, որ վախենում եմ նրանից:

— Իսկ դուք կարո՞ղ եք գտնել բանալին, եթե ուղենաք,— հարցրի ես:

— Այո, երբ վերև գնամ,— պատասխանեց նա:— Բայց ես հիմա չեմ կարող վերև բարձրանալ:

— Ո՞ր սենյակում է,— հարցրի ես:

— է, ոչ,— ճշաց նա,— ձեզ չեմ ասի, թե որտեղ է: Դա մեր գաղտնիքն է: Ոչ ոք չպետք է իմանա՝ ո՛չ Հերթընը, և ո՛չ էլ Զիլլահը: Բավական է, հոգնեցրիք ինձ. գնացեք, հեռացեք:

Նա զլուխը հակեց ափերի մեջ և նորից աչքերը փակեց:

Ես ավելի բարվոք համարեցի թողնել հեռանալ առանց միստր Հիթքլիֆին տեսնելու և իմ ջահել տիրուհուն ազատելու համար օգնություն կանչել Ազարակատան մարդկանց:

Երբ ես այնտեղ երևացի, ծառաները ինձ դիմավորեցին զարմանքով. նրանց ուրախությունն անսահման էր, իսկ երբ լսեցին, որ մեր տիրուհին էլ ողջ և առողջ է, նրանցից երկուերեք հոգի ուզում էին անմիջապես նետվել վերնահարկ և միստր էդգարի դռան առաջ բղավելով հայտնել այդ լուրը, բայց ես հայտարարեցի, որ այդ նորությունը ինքս կհաղորդեմ նրան:

Որքան է փոխվել նա այս մի քանի օրվա մեջ: Սպասելով մահվան՝ նա պառկած էր որպես վշտի ու հնազանդության մարմնացում: Շատ երիտասարդ էր երևում, իրականում երեսունինը տարեկան էր, բայց դուք նրան երեսուն հազիվ տայիք: Նա մտածում էր Քեթրինի մասին, որովհետև շնչում էր նրա անունը: Ես բռնեցի նրա ձեռքը և սկսեցի խոսել:

— Քեթրինը կգա, իմ սիրելի տեր,— կամաց ասացի ես,— նա ողջ և առողջ է, և հույս ունեմ, որ այս երեկոյան այստեղ կլինի:

Ես սկսեցի դողալ, երբ տեսա այդ խոսքերի առաջին ներգործումը. նա մի փոքր բարձրացավ տեղից, ազահարար նայեց շուրջը և ուշաթափ ընկավ բարձի վրա: Երբ ուշքի եկավ, պատմեցի նրան, թե ինչպես մեզ հարկադրեցին այցելել Դարավանդ և բռնություն բռնեցին այնտեղ: Ասացի, որ Հիթքլիֆը զոռով ինձ տարավ տուն, թեև դա այնքան էլ ճիշտ չէր: Ես աշխատում էի որքան հնարավոր է քիչ խոսել լինթընի դեմ, շնկարագրեցի նրա հոր ամբողջ վայրագությունը, որովհետև չէի ուզում դառնություն ավելացնել նրա առանց այդ էլ պոնկե պոունկ լցված բաժակում:

Նա հասկացաւ, որ իր թշնամու նպատակներէց մեկն էլ այն էր, որ ոչ միայն Լինթընների հողերը, այլև Քեթրինի անձնական սեփականութիւնը, ինչպես և կալվածքն ամրացնի իր որդու, ավելի ճիշտ, իր անունով. բայց թե ինչու Հիթքլիֆը չէր սպասում, մինչև ինքը մեռնի, դա իմ տիրոջ համար մնում էր առեղծված, որովհետև ինքն էլ չգիտեր, որ շատ շուտով իրենից հետո իր քրոջ որդին էլ կհեռանա աշխարհից:

Այդուհանդերձ, նա հասկացաւ, որ ավելի լավ է փոխել կտակը: Քեթրինի անձնական տրամադրութեան տակ կապիտալ թողնելու փոխարեն, նա որոշեց այն հանձնել խնամակալներին՝ կտակելով, որ այդիկը ցմահ օգտագործի, իսկ հետագայում կապիտալն անցնի նրա երեխաներին, եթե այդպիսիք ունենա: Դա նշանակում էր, որ եթե Լինթընը մեռնէ՝ ժառանգութիւնը չէր կարող անցնել միստր Հիթքլիֆին:

Իմ տիրոջ կարգադրութեամբ մարդ ուղարկեցի հավատարմատարի հետևից, իսկ շորս հոգի էլ անհրաժեշտ զենքով դինված ուղարկեցի, որ իմ ջահել տիրուհուն բանտապահից պահանջեն: Թե այն մեկը և թե սրանք հապաղեցին մինչև ուշ գիշեր: Առաջինը վերադարձավ միայնակ առաքյալը:

Նա հայտնեց, որ երբ տեղ հասավ, միստր Գրինը՝ հավատարմատարը, տանը չէր, և ինքն ստիպված էր երկու ժամ սպասել նրա վերադարձին, իսկ երբ վերադարձավ, ասաց ինքը դյուղում վբաղված է մի փոքր գործով, որը չի կարելի հետաձգել, բայց մինչև լուսաբաց կժամանի Կեռնելաների ագարակատուն:

Այն շորսն էլ իրենց հետ ոչ ոքի չբերին: Նրանք միայն հայտնեցին, որ Քեթրինը հիվանդ է, այնքան հիվանդ, որ չի կարող սենյակից դուրս գալ, և որ Հիթքլիֆը իրենց թույլ չտվեց տեսնել նրան:

Ես մի լավ հասցոյեցի հիմարներին, որ հավատացել էին այդ հեքիաթին, բայց շուրջից այն պատմել իմ տիրոջը՝ որոշելով ամբողջ խմբով առավոտյան գնալ Դարավանդ և բառիս բուն իմաստով գրոհով տունը վերցնել, և թե բանտարկյալին բարի կամքով շահանձնեն մեղ:

Հայրն աղջկան կառննի, երդվում էի նորից և նորից, որ և թե Հիթքլիֆն սկսեր դիմադրութիւն ցույց տալ, մենք կըսպանելինք այդ սատանային հենց իր տան շեմքին: •

Բարեբախտաբար, ես ազասովեցի՝ գնալու հոգսից և ավելորդ հուզմունքից:

Առավոտյան ժամը երեքին իջել էի ներքև ջուր բերելու և սափորը ձեռքիս անցնում էի նախասենյակի միջով. ուրախությունից ցնցվեցի՝ երբ լսեցի կտրուկ թակոց գլխավոր մուտքի դռանը:

... Օ՛հ, դա Գրինն է, սթափվելով ասացի ինքս ինձ. դա միայն Գրինը կլինի,— և առաջ գնացի՝ մտադրվելով մեկն ու մեկին ուղարկել, որ դուռը բաց անի: Թակոցը կրկնվեց, բայց ոչ բարձր, և այնուամենայնիվ, համառորեն:

Սափորը դրի բազրիքին և շտապեցի, որ ինքս բաց անեմ դուռը: Դրսում պայծառ լուսավորում էր աշնան լուսինը: Դա հավատարմատարը չէր: Իմ անուշիկ փոքր տիրուհին արտասովելով նետվեց առաջ և հեկեկալով կախվեց իմ վզից:

— էլլե՛ն, էլլե՛ն, հայրիկը կենդանի՞ է:

— Այո,— ճշալով ասացի ես:— Այո, հրեշտակս, նա կենդանի՞ է: Փառք աստծուն, որ դուք ապահով նորից մեզ հետ եք:

Նա ուզում էր անմիջապես, առանց շունչ առնելու, վազել վերև՝ միստր կինթընի սենյակը, բայց ես նրան ստիպեցի նստել աթոռին, ջուր տվեցի, որ խմի, գունատ երեսը լվացի և զոզնոցով այտերը շփելով մի թեթև կարմրացրի: Հետո ասացի, որ առաջ ես պետք է գնամ ու հայտնեմ իր վերադարձի մասին: Ես աղաչում էի նրան հայտնել հորը, որ ինքը պատանի ՀիթլերիՖի հետ երջանիկ կլինի: Նա տարակուսանքով նայեց ինձ, բայց իսկույն կռահեց, թե ինչու եմ խորհուրդ տալիս ճշմարտությունը շասել. նա ինձ հավատացրեց, որ չի գանգատվի:

Ես չէի կարող ներկա լինել նրանց հանդիպմանը: Քառորդ ժամ կանգնած մնացի դրսում, դռան մոտ, և հազիվ համարձակվեցի հետո մոտենալ մահճակալին:

Սակայն լոռիթյուն էր տիրում: Քեթրինի հուսահատությունը, ինչպես և հոր ուրախությունը, դրսևորվեց լռելյայն: Քեթրինը հանգիստ տեսքով բռնած պահում էր նրան, իսկ նա, հրճվանքից լայն բացած աչքերով, նայում էր աղջկա դեմքին:

Նա մեռավ երջանիկ մահով, միստր Լոքվուդ, մեռավ այդպե՛ս: Համբուրեիով Քեթրինի այտը՝ շշնջաց.

— Գնում եմ նրա մոտ, դու, սիրելի բալիկ, նույնպես կգաս մեզ մոտ, — և այլևս չշարժվեց, շխտեց, բայց նայում էր հիացած լուսաշող հայացքով, մինչև որ սիրտը աննկատելիորեն դադարեց բաբախելուց, և հոգին հեռացավ, գնաց: Ոչ ոք չնկատեց նրա մահվան ճիշտ րոպեն. վախճանվեց շատ հանգիստ, առանց պայքարի:

Արդյոք Քեթրինի արցունքները լիովին սպառվեցին, թե խոր վիշտը թույլ չէր տալիս, որ դրանք հորդեն, բայց նա նստած էր շոր աչքերով, մինչև որ արևը ծագեց. նստած մնաց մինչև կեսօր և հանգուցյալի մահճակալի մոտ այդպես էլ կմնար մտորումների մեջ սուղված, բայց ես պնդեցի, որ անցնի իր սենյակը և մի քիչ քնի:

Լավ էր, որ ինձ հաջողվեց հեռացնել նրան, որովհետև ճաշին եկավ փաստաբանը, որը դրանից առաջ գնացել էր Մուլեզին հողմերի դարավանդ, որպեսզի ցուցմունքներ ստանա, թե ինչպես պետք է գործը վարի: Նա վաճառված էր միստր Հիթքլիֆին, հենց դրա համար էլ ուշացումով արձագանքեց իմ տիրոջ կոչին: Բարեբախտաբար, աղջկա վերագարծից հետո աշխարհիկ գործերի մասին ոչ մի միտք միստր էդգարի գլխում այլևս չէր առաջանում, չէր վրդովում նրան:

Միստր Գրինը իր վրա վերցրեց կարգադրություններ անել ամեն ինչի մասին և բոլորին. բոլոր ծառաներին, բացի ինձնից, կարգադրեց աշխատանքը թողնել հեռանալ: Յուրովի մեկնաբանելով իր լիազորությունները, նա գտնում էր, որ էդգար Լինթընին պետք է թաղել ոչ թե կնոջ կողքին, այլ եկեղեցում՝ Լինթընների դամբարանում: Բայց այդ բանին խոչընդոտ հանդիսացան կտակն ու իմ բարձրաձայն բողոքները, որոնք ուղղված էին հանգուցյալի կտակում արտացոլված կամքի որևէ խախտման դեմ:

Շտապում էին թաղման արարողությունները վերջացնել. Քեթրինին, այժմ արդեն միսիս Լինթըն Հիթքլիֆին, թույլատրվեց մնալ Ագարակատանը, քանի դեռ հոր դիակը զբոսնում էր տանը:

Նա պատմեց, թե ինչպես իր տվյալստանքները վերջ ի վերջո Լինթընին ստիպեցին ռիսկի դիմել և ազատ արձակել

իրեն: Պատմում էր և այն մասին, որ ինքը լսում էր, թե ինչ-
պես իմ ուղարկած մարդիկ վիճում էին դռան մոտ, և կոտ-
հեց Հիթթըիֆի՝ նրանց տված պատասխանի, իմաստը. դա
իրեն գցեց հուսահատության մեջ: Լինթընին շատ շուտով,
իմ գնալուց հետո, տեղափոխեցին փոքր հյուրասենյակ, և
իմ ջահել տիրուհին նրան այնպես վախեցրեց, որ նա հա-
մաձայնեց, քանի դեռ հայրը վերև չէր բարձրացել, բանալին
հանձնել Քեթրինին:

Լինթընը կարողանում էր դուռը փակել ու բացել. և երբ
պետք է պառկեր քնելու, խնդրեց, որ իրեն թույլ տան Հեր-
թընի մոտ գիշերելու. նրան թույլ տվեցին:

Քեթրինը թաքուն դուրս պրծավ մինչև այգաբացը: Չէր
համարձակվում դռնից դուրս գալ՝ վախենալով, որ շներն
աղմուկ կբարձրացնեն. նա մտնում էր դատարկ սենյակները,
ստուգում պատուհանները, և, ի բարեբախտություն իրեն,
ընկավ հանգուցյալ մոր սենյակը, հեշտությամբ դուրս սո-
ղաց լուսամուտից և կողքին աճած եղևնու ծառի բնից սա-
հելով՝ իջավ ցած: Մեղսակիցը նրան օգնելու համար են-
թարկվեց պատժի՝ նրա երկշոտ արդարացումները շփրկեցին
նրան:

ԳՆԱԻՆ ՔՍԱՆԻՆՆԵՐՈՐԿ

Երեկոյան, թաղումից հետո, իմ ջահել լեզվի հետ նստած
էինք գրադարանում. մերթ տխրությամբ համակված սուղ-
վում էինք մտքերի մեջ, նաև հուսահատությամբ, մեր կո-
րուստի մասին, մերթ էլ փորձում էինք գուշակել մեր մուսյլ
ապագան:

Մենք պայմանավորվեցինք, որ Քեթրինի համար, ամե-
նալավ բանը կլինի այն, որ թույլատրեն նրան հետադաշում
էլ ապրել Ագարակատանը, քանի դեռ ողջ է Լինթընը. և լավ
' լինի, որ նրան էլ, համենայն դեպս, թույլատրվի տեղափոխ-
վել այստեղ, իսկ ինձ՝ մնալ տնտեսուհի: Հարցի այսպիսի
նպաստավոր ավարտի հույսը շափազանց համարձակ էր
թվում, բայց, այդուհանդերձ, այդ հույսը ես չէի կորցնում.

սկսեցի ուրախանալ՝ հավատալով, որ կմնամ տանը, կշարունակեմ աշխատել և, որ գլխավորն է, չեմ բաժանվի իմ սիրելի ջահել տիրուհուց, երբ աշխատանքից ազատված շորս ծառաներից մեկը, որ դեռ չէր գնացել, շտապ ներս վազեց և հայտնեց, որ «այդ գրողը տարած Հիթլերիֆը» բակի միջով գալիս է. հապա դրա քթի առաջ դուռը շփակեմ»:

Եթե անխելք լինեինք և ուզենայինք կատարել այդ կարգադրությունը, դրա համար ժամանակ չէինք ունենա: Նա հարկ չհամարեց դուռը ծեծել կամ իր ա՛ուռը հայտնել, ինքը տանտերն էր, օգտվեց տիրոջ իրավունքի՝ և առանց մի խոսք ասելու, ներս մտավ:

Լսելով մեր ձայները, նա ուղիղ եկավ գրադարան, առանց մի խոսք ասելու ծառային դուրս արեց ու դուռը փակեց:

Դա հենց այն սենյակն էր, որ նրան, որպես հյուր, ներս բերեցին տասնութ տարի առաջ. նույն լուսնի շողքը թափանցում էր լուսամուտից ներս, դրսում նույն աշնանային բնատեսարանն էր: Մենք մոմը դեռ չէինք վառել, բայց սենյակում երևում էր ամեն ինչ, երևում էին նույնիսկ պատին կախած դիմանկարները՝ միսիս Լինթընի գեղեցիկ գլուխը և ամուսնու նրբագեղ դեմքը:

Հիթլերիֆը մոտեցավ օջախին: Ժամանակը քիչ էր փոխել նրա տեսքը: Դա նույն մարդն էր. թուխ դեմքը մի քիչ գունատվել և ավելի հանգիստ էր, իսկ կազմվածքը՝ թերևս, մի փոքր ավելի գեր էր՝ ահա և ամբողջ տարբերությունը:

Նրան տեսնելուն պես Քեթրինը տեղից վեր կացավ, որ թողնի հեռանա:

— Սպասի՛ր, — ասաց նա, բռնելով աղջկա ձեռքը: — Փախուստներ այլևս չեն լինի: Եվ ո՞ր պիտի փախչեք: Եկել եմ ձեր հետևից և հույս ունեմ, որ դուք հլու-հնազանդ աղջիկ կլինեք և սրանից հետո իմ որդուն անհնազանդության չեք հրահրի: Ես շվարել էի, չգիտեի, թե ինչպես նրան պատժեմ, երբ իմացա, որ մասնակից է եղել այս պատմությանը: Նա, ասես, սարգոստայն լինի, մի կսմթոցն էլ նրան ի շիք կգարձնի, բայց դուք նրա տեսքից կհասկանաք, որ ստացել է իր բաժինը: Երբորդ օրը երեկոյան դեմ, նրան տարա ցած, նստեցրի աթոռին և այլևս չեմ մատուց դիպել: Հերթընին դուրս ուղարկեցի, և մենք մնացինք երկուսով: Երկու ժամ հետո

կանչեցի Ջոզեֆին, որ կինթընին նորից վերև տանի. դրանից հետո իմ ներկայությունն այնպես ուժեղ է ազդում նրա ջղերի վրա, որ ասես ուրվական է հայտնվել նրան: Կարծում եմ, որ նա ինձ հաճախ տեսնում է նաև այն ժամանակ, երբ ես մոտը չեմ: Հերթընն ասում է, որ գիշերվա մեջ նա արթնանում, ճշում է մի ամբողջ ժամ, ձեզ է կանչում, որ ինձնից պաշտպանեք իրեն: Այժմ դուր է պալիս ձեզ ձեր թանկագին ընկերակիցը, թե ոչ, դուք պետք է պնաք նրա մոտ, պետք է հոգ տանեք նրա մասին: Նրա ամբողջ հոգսը ձեզ վրա եմ դնում:

— Իսկ ինչո՞ւ Քեթրինին թույլ չտալ, որ այսուհետ էլ ապրի այստեղ, — միջամտեցի ես, — և տեր կինթընին էլ ուղարկել նրա մոտ: Քանի որ դուք երկուսին էլ ատում եք, ուրեմն նրանց շեք կարոտի. ձեզ պես անսիրտ մարդուն նրանք կարող են միայն ձանձրույթ պատճառել:

— Ազարակատունը ուզում եմ վարձով տալ, — պատասխանեց նա, — և, իհարկե, ուզում եմ, որ իմ երեխաները ինձ մոտ լինեն, բացի այդ, աղջիկը իմ տված հացի համար ինձ սկսեք է ծառայություններով փոխհատուցի: Եվ մտադիր չեմ նրան պահել ճոխության ու անբանության մեջ, երբ սր կինթընը կենդանի չլինի: Իսկ այժմ շուտ պատրաստվեք, և մի ստիպեք ինձ դիմել բռնի միջոցների:

— Կգամ, — ասաց Քեթրինը, — կինթընը միակ էակն է աշխարհում, որին պետք է սիրեմ, թեև դուք ամեն բան արիք, ինչ որ կարող էիք, որպեսզի կինթընը ինձ ատելի դառնար, ես էլ՝ նրան, բայց և այնպես դուք շեք կարող ստիպել մեզ, որ էլ շփրենք իրար: Եվ ես դեռ կտեսնեմ, թե ինչպես կհամարձակվիք իմ ներկայությամբ վնաս տալ նրան, իսկ ինձ էլ վախեցնել:

— Ախ, արիանում եք, պարծենկոտ մարտիկ, — պատասխանեց Հիթքլիֆը, — բայց ես էլ ձեզ այնքան չեմ սիրում, որ վնաս հասցնեմ: Գուրք սկսեք է լիուլի ճաշակեք ձեր տառապանքները, քանի դեռ դրանք կշարունակվին: Ես չէ, որ նրան ձեզ ատելի կդարձնեմ, դա կանի նրա մեղմ բնավորությունը: Ձեր կողմից նրան լքելը և դրա հետևանքները կինթընին դարձրել են լեղի: Շնորհակալություն մի սպասեք ձեր այդ վեհանձն նվիրվածության համար: Ես լսում էի՝ նա Զիլլահին նկարագրում էր, թե ինչեր կաներ, եթե ինձ նման ուժեղ լի-

ներ. հակումները կան և հենց իր թուլութիւնը ուժի փոխարեն կուժեղացնի նրա միտքը:

— Ես գիտեմ, որ նա շար բնավորութիւն ունի,— ասաց Քեթրինը,— նա ձեր որդին է: Բայց ուրախ եմ, որ ես ավելի բարի եմ և կարող եմ ներել այդ բանը. գիտեմ, որ նա սիրում է ինձ և հենց դրա համար ես էլ նրան եմ սիրում: Միստր Հիթքլիֆ, դուք ոչ ոք չունեք, որ սիրի ձեզ և ինչքան էլ աշխատեք դժբախտացնել մեզ, այդ ամենի համար մեզ կհասուցի մեր այն միտքը, որ ձեր դժբախտութիւնը ծնունդ է առել ձեր է՛լ ավելի մեծ դժբախտութիւնից: Ախր դուք դժբախտ եք, այդպես չէ՞: Մի՞թե սաղայելի պես միայնակ չեք, և նրա պես է՛լ՝ նախանձ: Զեզ ոչ ոք չի սիրում, ոչ ոք արցունք չի թափի ձեզ համար, երբ մեռնեք: Զէի կամենա ձեր տեղը լինել:

Քեթրինը խոսում էր մի տեսակ մռայլ հաղթատոնով, ասես, յուրացրել էր իր ապագա ընտանիքի ոգին և իր թշնամիների վշտից բավականութիւն էր զգում:

— Դու ստիպված կլինես խղճալ ինքդ քեզ,— ասաց նրա սկեսորայրը:— Եթե մի րոպե ևս հապաղես այստեղ: Զբվիր, վհճճ, և հավաքիր իրերդ:

Քեթրինը արհամարհանքով հեռացավ:

Քանի դեռ Քեթրինը բացակա էր, ես սկսեցի խնդրել, որ Զիլահի տեղը ինձ վերցնի Մուլեզին հողմերի դարավանդ՝ առաջարկելով նրան իմ տեղը. Հիթքլիֆը ոչ մի կերպ չհամարձայնեց: Նա հրամայեց, որ լռեմ, և ապա առաջին անգամ սկսեց զննել սենյակը ու նայել դիմանկարները: Դիտելով միսիս Լինթընի նկարը, ասաց.

— Այս մեկը ես կվերցնեմ հետս: Ոչ թե նրա համար, որ այն հարկավոր է ինձ, բայց...

Կտրուկ կերպով նա շրջվեց դեպի կրակը և դեմքին երևաց մի բան, որը այլ բառ չգտնելով ես կանվանեի ժպիտ...

— Կասեմ քեզ, թե երեկ ինչ արեցի,— շարունակում էր նա:— Լինթընի գերեզմանափորին խնդրեցի, որ Քեթրինի դագաղի կափարիչի վրայից հողը մաքրի և բաց անի այն: Սկզբում կարծում էի, որ ես կմնամ նույն տեղում, երբ կըրկին անգամ տեսա նրա դեմքը, դա տակավին նրա դեմքն էր. գերեզմանափորը դժվարութեամբ ինձ հետ հրեց, ասաց, որ

դեմքը կփոխվի, եթե քամի դիպչի, ուստի ես շարժեցի դա-
գադի պատը մի կողմից և այն նորից հողով ծածկեցի, բայց
ոչ այն կողմը, որտեղ գնելու էին կինթընին՝ թող անհիծվի նա,
ես կուզենայի, որ նրան զոգեհն արճիճով. կաշառք տվեցի
գերեզմանափորին, որ Քեթրինի դադադը հրի մի կողմ, երբ
ինձ էլ կդնեն այդտեղ, և իմն էլ հրի: Ես հոգ կտանեմ, որ
հենց այդպես լինի. և հետո, երբ կինթընը գա մեզ մոտ, նա
չի իմանա, թե մեզնից որ մեկը որ կողմումն է:

— Դուք շատ շար եք, միտար Հիթբլիֆ,— գոչեցի ևս,—
բա շամաշեցի՞ք, երբ անհանգստացրիք ննջեցյալին:

— Ես ոչ ոքի չեմ անհանգստացրել, Նելլի,— առարկեց
նա:— Ես ինձ համար տեղ ապահովեցի: Այժմ շատ ավելի
հանգիստ կլինեմ, և դուք էլ հույս կունենաք, որ ես պառ-
կած կմնամ գետնի տակ, երբ ինձ հողին հանձնեն: Անհան-
գրստացնե՞լ Քեթրինին: Ո՛չ: Այդ նա էր ինձ անհանգրս-
տացնում գիշեր-ցերեկ, տասնութ տարի... անընդհատ...
անգթորեն... մինչև երեկ գիշեր. երեկ գիշեր ես հանգիստ
գտա: Երազում էի, որ քնում եմ վերջին քնով Քեթրինի կող-
քին, և որ սիրտս կանգ է առնում, իսկ այտս սառած կպչում
է նրա այտին:

— Իսկ եթե նա քայքայվի, աճյուն դառնա կամ դառնա
մի ավելի վատ բան, ինչի՞ մասին կերազեիք այն ժամա-
նակ,— ասացի ես:

— Այն մասին, որ քայքայվեմ, աճյուն դառնամ նրա հետ
միասին և, սյնուամհնայնիվ, լինեմ ավելի երջանիկ,— սյա-
տասխանեց նա:— Կարծում եք կսոսկա՞լի այդ տեսակ փո-
փոխությունից: Ես սպասում էի այդպիսի փոխակերպության,
երբ բարձրացնում էի կափարիչը, բայց ուրախ եմ, որ դա
կլինի միայն այն ժամանակ, երբ այդ փոխակերպությանը
կենթարկվեմ և ես: Բացի այդ, եթե իմ ուղեղում այդպես
պարզորոշ կերպով շտպավորվեր նրա անխռով դեմքը, հազիվ
թե ես ազատվեի այդ տարօրինակ զգացումից: Դա սկսվեց
անսովոր կերպով: Դու գիտես, որ նրա մահից հետո ես հան-
չիստ շունեի. շարունակ, այգաբացից այգաբաց աղաչում կի
նլան, որ իր ուրվականը ինձ մոտ ուղարկի: Ես շատ խիստ
հավատում եմ ոպիների գոյությանը. համոզված եմ, որ
նրանք, իրոք, գոյություն ունեն և շրջում են մեր մեջ:

Այն օրը, երբ թաղեցին նրան, ձյուն տեղաց: Երեկոյան գնացի գերեզմանատուն: Ձմեռվա պես սառը քամի էր փչում... շուրջս տիրում էր ամայութիւն. շէի վախենում, որ նրա հիմար ամուսինը դուրս կգա այդ ուշ ժամին, կսկսի թափառել գերեզմանի շուրջը. ուրիշ որևէ մեկը չէր կարող երեւալ այստեղ:

Քեթրինի հետ մենակ մնալով և գիտակցելով, որ մեր մեջ լոկ երկու յարդ փափուկ հողը միակ անջրպետն է, ասացի ինքս ինձ.— ես նորից կգրկեմ նրան, եթե սառած լինի, կմտածեմ, որ հյուսիսային քամին թափանցում, սառեցնում է ինձ, իսկ եթե նա անշարժ լինի, կմտածեմ, որ քնած է:

Փայտանոցից վերցրի բահը և ամբողջ ուժով սկսեցի փորել, երկաթը շրխկոցով դիպավ դագաղին. սկսեցի աշխատել ձեռքերով: Փայտը սկսեց ճայթել պտուտակների մոտ, մի փոքր ևս, և ես կհասնեի նպատակիս, երբ թվաց, թե վերևից՝ գերեզմանի եզրից, լսեցի ինչ-որ մեկի հառաչանքը, և հակվեցի ցած: «Միայն թե կարողանայի բարձրացնել կափարիչը»,— շշնջացի ես,— և թող մեզ երկուսիս էլ միասին թաղեն: Եվ ես է՛լ ավելի հուսահատված սկսեցի գործել: Նորից լսվեց հառաչանք, հենց ականջիս տակ: Կարծես զգացի տաք շնչառութիւն, որը փոխարինեց սառը քամուն: Գիտեի, որ մոտիկ տեղ միս ու արյունով ոչ ոք չկա, բայց առանց կասկածելու ես խավարի մեջ նկատում էի կենդանի էակի մոտենալը, թեև չէի կարող այն տարբերել. շատ պարզորոշ կերպով զգացի, որ Քեթին այդտեղ է՝ ոչ թե հողի տակ, այլ հողի երեսին:

Հանկարծակի թեթևացման մի զգացում սրտիցս հոսելով, տարածվեց ամբողջ մարմնովս մեկ: Ես թողեցի իմ տանձալից աշխատանքը և անմիջապէս մխիթարվեցի՝ անասելի մխիթարվեցի: Քեթրինը իմ կողքին էր, հետս՝ էր, քանի: դեռ ես հողը նորից լցնում էի գերեզմանի մեջ և տուն գնալիս էլ ուղեկցում էր ինձ. կարող ես ծիծաղել, եթե ուզում ես, բայց հավատացած էի, որ տանը ես նրան կտեսնեմ: Համոզված էի, որ նա կողքիս էր, և չէի կարողանում շխոսել նրա հետ:

Մոլեգին հողմերի դարավանդ հասնելուց հետո ես անձ

համբերությամբ նետվեցի դեպի դուռը: Այն փակ էր, և հիշում եմ, որ այդ նդովյալ էրնշոուն և իմ կինը շէին թողնում, բո տուն մտնեմ: Հիշում եմ՝ կանգ առա, որպեսզի մի լավ դնքսեմ նրան, հետո շտապեցի վերև իմ և Քեթրինի սենյակը, անհամբերությամբ նայում էի շուրջս... Զգում էի, որ նա կողքիս է... համարյա տեսնում էի նրան և, այդուհանդերձ, շէի կարողանում տեսնել. երևի արյունաշաղախ քրտինք էր սվել վրաս կարոտից ու սվայտանքից... իմ ջերմ աղերսանքից՝ թույլ տալ, որ գեթ մեկ անգամ նայեմ իրեն: Զցանկացա՛վ: Սատանի պես երևաց այնպես, ինչպես կենդանության օրոք հաճախ ներկայանում էր ինձ: Եվ այն ժամանակվանից սկսած ես միշտ, մերթ ուժեղ, մերթ թույլ, հանդուրժում եմ այդ անտանելի, դժոխային տանջանքը: Ես իմ ջղերը պահում եմ այնպիսի լարվածությամբ, որ եթե դրանք լարերի պես ձյված չլինեին, վաղուց թուլացած կլինեին և կհասնեին կինթընի տկարությանը:

Երբ տանը նստում էի այդ Հերթընի հետ, թվում էր, թե տնից դուրս գալու պահին ես կհանդիպեմ Քեթրին: Երբ թափառում էի ցախիների թփերի մեջ, ես պիտի հանդիպեի նրան, հենց որ վերադառնայի տուն: Երբ տնից դուրս էի գնում, շտապում էի վերադառնալ, հավատացած լինելով, որ նա Դարավանդի ինչ-որ տեղում կլինի: Իսկ երբ պառկում էի քնելու նրա սենյակում, աչքիս քուն շէր գալիս. այդտեղ շէի կարողանում քնել, որովհետև երբ աչքերս փակում էի, նա կամ լուսամուտի մոտ էր լինում, կամ թեթևաքայլ անցնում էր միջնորմների հետև, կամ մտնում էր սենյակ, և կամ էլ գլուխը դնում էր իր սիրած բարձին, ինչպես անում էր աղջիկ ժամանակ: Եվ ես պետք է կոպերս բացեի, որպեսզի տեսնեի նրան: Եվ այսպես, հարյուր անգամ մի գիշերվա մեջ ես փակում բացում էի դրանք և միշտ էլ հուսախաբ էի լինում: Դա տանջում էր ինձ: Հաճախ տնքում էի բարձրաձայն, այնպես, որ այդ ծեղ սրիկա Զոզեֆն անտարակույս հավատացած էր, որ ինձ դժոխային տառապանքով խոշտանգում են խղճի խայթոցները:

Այժմ, երբ ես նրան տեսա, մի փոքր հանգստացա: Դա սպանելու տարօրինակ միջոց էր՝ ոչ թե աստիճանաբար,

այլ ամենափոքր մասնիկներով. տասնութ տարի հրապուրե՞լ
ինձ հույսի ուրվականով:

Միսոր Հիթթլիֆը լոնց և ճակատը սրբեց: Ճակատին
կողած մազերը թրջվել էին քրտինքից, աչքերը հառած նայում
էին բուխարու կարմրած մարմրող ածուխներին: Հոնքերը
չկիտեց, բայց ձգեց վեր, մարմրող ածուխներին: Հոնքերը
դարձնում էր ոչ շատ մռայլ, բայց դիմագծերին հաղորդում
էր տարօրինակ անհանգստություն և տանջալից լարվածու-
թյուն. ասես մտքի ուժը սևեռած էր մեկ առարկայի: Խոսե-
լիս՝ միայն կիսով շափ դիմում էր ինձ, իսկ ես լուռ էի, չէի
կամենում լսել նրա ճառերը:

Ապա նա նորից սկսեց մտածել դիմանկարի մասին. հա-
նեց այն և դեմ տվեց բաղձոցի մեջքին, որպեսզի ավելի լավ
դիտի, և, մինչ նա զբաղված էր նկարով, ներս մտավ Քեթ-
րինը ու հայտարարեց, որ պատրաստ է՝ թող իր ձին թամբեն:

— Կուղարկեք վաղը, — ասաց ինձ Հիթթլիֆը, առաջ
դառնալով դեպի Քեթրինը, ավելացրեց, — կգնաք առանց
ձիու. հրաշալի երեկո է, իսկ Մուլեգին հողմերի դարավանդում
ձեզ ոչ մի ձի էլ հարկավոր չի լինի, սրովհետև զբոսանքների
համար բավական կլինեն ձեր երկու ոտքը. դե, գնացինք:

— Յտեսություն, էլլեն, — շնչաց իմ սիրելի փոքրիկ
տիրուհին: Երբ համբուրեց ինձ, շուրթերը սառն էին սառույցի
պես: — Եկ այցելության, էլլեն, շմոռանաս:

— Այդ մասին շմտածեք, միսիս Գին, — ասաց նրա նոր
հայրը: — Երբ ուղենամ զրուցել ձեզ հետ, ես ինքս կգամ.
այստեղ: Չեմ կամենում, որ իմ տանը դուք թաքուն լրտե-
սեր ինձ:

Նա նշան տրեց, որ Քեթրինը առաջ ընկնի՝ ինձ ուղղելով
իբ հայացքը, որը խոցեց սիրտս, իմ տիրուհին ենթարկվեց:
Նուսամուտի մոտ կանգնած՝ հետևեցի նրանց, երբ անցնում
էին պարտեզի միջով: Հիթթլիֆը պինդ բռնեց Քեթրինի թևը,
թեև աղջիկը, ինչպես երևում էր, սկզբում առարկում էր, և
արագ քայլերով նրան շտապ տարավ ծառուղիով, որտեղ
ծառերը ծածկեցին նրանց:

Մի անգամ այցի գնացի Դարավանդ, բայց Քեթրինին, նրա գնալուց հետո, այդպես էլ շտեսաւ: Զոգեֆը ձեռքով դռան մուտքը փակեց, երբ ներս մտա ու հարցրի իմ տիրուհուն, և թույլ չտվեց, որ անցնեմ նրա մոտ: Նա ասաց, որ միսիս Լինթընը զբաղված է, իսկ տանտերը տանը չէ: Զիլլահը որոշ բան պատմել էր նրանց ապրելակերպի մասին, այլապես ես չէի իմանա, ով է մեռած, ով՝ կենդանի:

Զիլլահը Քեթրինին համարում է մեծամիտ և շի սիրում նրան, ինչպես կարողացա հասկանալ տնտեսուհու ասածներից: Իմ ջահել լեդին սկզբնական շրջանում նրան խընդրում էր, ինչ-որ բաներում օգնել իրեն. բայց միտքը Հիթքլիֆը պատվիրեց տնտեսուհուն զբաղվել իր սեփական գործերով և թողնել, որ իր հարսը ինքը հոգ տանի իր մասին, և չ'լլահը՝ այդ սահմանափակ ու եսամուլ կինը, սիրով ենթարկվեց հրամանին: Քեթրինը այդ անուշադրությունն ընդունեց մանկական սրտնեղությամբ՝ փոխհատուցում էր նրան արհամարհանքով և տնտեսուհուն մտցրեց իր թշնամիների ցուցակի մեջ. կարծես նա, իրոք, ծանր վիրավորանք էր հասցրել նրան:

Վեց շաբաթ առաջ ես երկար զրույց ունեցա Զիլլահի հետ, ձեր գալուց մի փոքր առաջ: Երբ մենք հանդիպեցինք ցախու դաշտում, ահա թե նա ինչ պատմեց.

— Միսիս Լինթընը հենց որ Դարավանդ եկավ, — պատմում էր Զիլլահը, — նրա առաջին գործը եղավ այն, որ, առանց ինձ ու Զոգեֆին բարևելու, վազեց վերև, փակվեց Լինթընի սենյակում և մինչև առավոտ մնաց այնտեղ. ապա, երբ իմ տերն ու էրնշոուն առավոտյան նախաճաշում էին, նա ամբողջ մարմնով դողալով ներս մտավ և հարցրեց, արդյոք շի՞ կարելի մարդ ուղարկել բժշկի հետևից. իր հորաքրոջ տղան շատ հիվանդ է:

— Մենք դա գիտենք, — պատասխանեց Հիթքլիֆը, — բայց նրա կյանքը քոռ կոպեկ չարժե, և ես ոչ մի կոպեկ չեմ վճարում նրա վրա:

— Բայց ես չգիտեմ, թե ինչ պետք է անել, — ասաց Քեթրինը, — և եթե մեկնում եմ ինձ շօղնի, նա կմեռնի:

— Դո՛ւրս այստեղից, — գոռաց տերը, — և այլևս ոչ մի խոսք չլսեմ նրա մասին: Այստեղ ոչ ոքի չի հետաքրքրում, թե ինչ կլինի նրա հետ. եթե ձեզ հետաքրքրում է, եղեք հիվանդապահ և նստեք մոտը, իսկ եթե ոչ՝ փակեք նրան և թողեք իր տեղում:

Այն ժամանակ նա սկսեց նեղացնել ինձ, իսկ ես նրան ասացի, որ բավական տանջվել եմ այդ ձանձրույթ պատճառող տղայի ձեռքից. մեզնից ամեն մեկն ունի իր գործը, իսկ նրա գործը հենց կինթընին խնամելն է. միստր Հիթթլիֆը հրամայեց ինձ այդ աշխատանքը թողնել նրան:

Թե ինչպես էին նրանք իրարից գլուխ հանում, շեմ կարող ասել: Բայց, կարծում եմ, որ կինթընը անհանգրստացնում, տրտնջում էր գիշեր-ցերեկ. Քեթրինը, իհարկե, նրա հետ քուն ու հանգիստ չունեի, դա երևում էր նրա գունատ դեմքից և բորբոքված աչքերից: Նա երբեմն շփոթված մտնում էր խոհանոց և, թվում էր, թե օգնություն է խնդրում, բայց ես չէի ուզում շանսալ իմ տիրոջը, երբեք չէի համարձակվում, միսիս Դին, նրան հակառակվել, թեև հոգուս մեջ դատապարտում էի տիրոջս, որը չէր ուզում ուղարկել Քեննեթի հետևից. իմ գործը չէր խորհուրդներով ու հանդիմանություններով միջամտել, և ես չէի միջամտում:

Մի երկու անգամ, երբ պառկում էին քնելու, երբեմն պատահում էր, դուռս նորից բաց անում, տեսնում էի, որ միսիսը, սանդուղքի վերին աստիճանին նստած, լաց է լինում: Ես արագորեն փակվում էի իմ սենյակում, վախենում էի, որ կհուզվեմ և կպաշտպանեմ նրան: Այն ժամանակ ես, իսկապես, խղճում էի նրան, բայց, այդուհանդերձ, զիտեք էլի, չէի ուզում տեղս կորցնել:

Վերջապես, մի անգամ, գիշերը, միսիսը համարձակ ներս մտավ իմ սենյակը և այնպես վախեցրեց ինձ, որ քիչ մնաց ուղաթափվեի, ու ասաց.

— Հայտնեք միստր Հիթթլիֆին, որ իր որդին մեռնում է, այս անգամ համոզված եմ, որ մեռնում է: Անմիջապես վերջ կացեք և հայտնեք նրան:

Այս խոսքերն արտասանելուց հետո նա իսկույն ևեթ նետվեց դուրս: Քառորդ ժամի շափ պառկած ականջ էի դնում, դողում էի. ոչ ոք չէր շարժվում, տունը հանգիստ էր:

«Միսիսը սխալվեց» մտածեցի ես: Լինթընն ապաքինվեց: Չարժե որևէ մեկին անհանգստացնել: Եվ ես սկսեցի ներհնել: Բայց քունս երկրորդ անգամ խախտվեց. այս անգամ տանը եղած միակ զանգի սուր ձայնից, որ հատուկ գնել ենք Լինթընի համար, և տերը կանչեց ինձ, որ տեսնեմ, թե ինչ է պատահել, ու հայտնեմ նրանց, որ ինքը չի ցանկանում նորից այդ աղմուկը լսել: Այստեղ ես նրան հաղորդեցի Քեթթինի ասածը: Նա քթի տակ հայհոյեց և հինգ րոպե հետո վառած մոմը ձեռքին դուրս եկավ ու գնաց նրանց սենյակը: Ես հետևեցի նրան: Միսիս Հիթքլիֆը նստել էր մահճակալի մոտ, ձեռքերը դրել ծնկներին: Նրա սկեսրայրը մոտեցավ, մոմը մոտեցրեց Լինթընի դեմքին, նայեց, շոշափեց, ապա դարձավ դեպի Քեթթինը:

— Հը, Քեթթին,— ասաց,— հիմա ինչպե՞ս եք զգում: Նա ոչ մի ձայն չհանեց:

— Ինչպե՞ս եք զգում ձեզ, Քեթթին,— կրկնեց նա:

— Նա հիմա ապահով է, իսկ ես ազատ եմ,— պատասխանեց Քեթթինը:— Ես ինձ ավելի լավ կզգայի,— շարունակեց նա՝ չկարողանալով թաքցնել իր շարունթյունը,— բայց դուք այնքան ևրկար թողեցիք ինձ միայնակ պայքարելու մահվան դեմ, որ ես միայն մահն եմ տեսնում: Ես հենց մահ եմ, որ կամ:

Եվ, իրոք, Քեթթինի տեսքը նման էր ննջեցյալի: Մի քիչ գրնի տվեցի նրան: Հերթընն ու Ջոզեֆը, որ արթնացել էին զանգից, ոտքերի ձայներից և դրսից լսում էին մեր խոսակցությունը, այժմ ներս մտան: Ջոզեֆը, կարծում եմ, ուրախ էր, որ ջահել տերը մեռավ. Հերթընը, ասես մի փոքր անհանգստացած էր, թեև հայացքը հառել էր ոչ այնքան Լինթընի, որքան Քեթթինի վրա: Բայց տերը հրամայեց նրան դուրս գնալ և պառկել քնելու. նրա օգնությունը, ասաց տերը, մեզ հարկավոր չէ: Հետո Ջոզեֆին հրամայեց, որ Լինթընի մարմինը տեղափոխի իր սենյակը, իսկ ինձ՝ վերադառնալ իմ սենյակը. միսիս Հիթքլիֆը մնաց մենակ:

Առավոտյան Հիթքլիֆն ինձ ուղարկեց հայտնելու միսիսին, որ ներքև իջնի նախաճաշելու: Քեթթինը հանվել էր, հրկում է, պատրաստվում էր պառկել. ասաց, որ ինքը հի-

վանդ է, և ես չզարմացա: Ես այդ մասին հայտնեցի միտք
Հիթքլիֆին, իսկ նա պատասխանեց.

— Լավ, մինչև թաղման արարողությունների ավարտը
թող նստի իր սենյակում. մեկ-մեկ անցեք մտքը, սարևք նրան
ինչ-որ հարկավոր է, և հենց տեսնեք, որ ավելի լավ է զգում
իրեն, հայտնեք ինձ:

Քեթին երկու շաբաթ մնաց վերևում, ինչպես ասաց Զիլ-
լահը, որը օրը երկու անգամ անձամբ այցելում էր նրան և
էլ ավելի սիրալիր կվարվեր նրա հետ, բայց օր ավուր աճող
իր բարեկամական փորձերը հպարտությամբ ու կարուկ կեր-
պով մերժվում էին:

Հիթքլիֆը լուկ մեկ անգամ եղավ նրա մոտ, որպեսզի
հարսին ցույց տա Լինթրնի կտակը: Իր ամբողջ ունեցվածքը
և իր կնոջ շարժական գույքը նա կտակել էր հորը: Սպառնա-
լով և համոզելով՝ դժբախտին ստիպեցին դիմել այդ քայլին
Քեթինի մի շաբաթվա բացակայության օրերին, երբ մե-
ռավ նրա քեռին: Լինելով անշահահաս, նա չէր կարող իր
հողերը տնօրինել: Սակայն միտքը Հիթքլիֆը իր կնոջ և որ-
դու մահից հետո տիրացավ այդ հողերին, ինչպես կարժում
եմ, օրինական կարգով: Համենայն դեպս, Քեթինը,
զրկվելով փողից ու բարեկամներից, չէր կարող իսնզարեղ
նրան:

— Ոչ ոք, բացի ինձնից,— ասում էր Զիլլահը,— երբեք
չէր մոտենում միսիսի դռանը, եթե չհաշվենք այդ միակ օրը,
և ոչ ոք ոչ մի բան չէր հարցնում նրա մասին: Առաջին ան-
գամ նա ներքև իջավ կիրակի օրը կեսօրից հետո:

Երբ ես նրան ճաշ բերեցի, նա բարձրաձայն գանգատվեց,
որ այլևս չի կարող ցրտում նստել: Ես ասացի, որ տերը
պատրաստվում է գնալ Կեռնեխների ագարակատուն, իսկ
էրնշտուն ու ես շենք խանգարի նրան, եթե ցած իջնի օջախի
մոտ: Հենց Վր Քեթին լսեց Հիթքլիֆի վարզով հեռացող ձիու
սմբակների զոփյունը, իջավ մեզ մոտ՝ սև հագած, իր դե-
ղին մազերը ականջների հետև սանրած՝ քվակերի՝ պես ան-
պաճույճ. սանրվել էլ չէր կարողացել:

Ջուլեֆի հետ կիրակի օրերը, ըստ սովորության մենչ

¹ Քրիստոնեական կրոնական ազանդավոր Անգլիայում:

գնում ենք մատուռ (եկեղեցին այժմ, ինչպես գիտեք, քահանա շունի,— բացատրեց միսիս Դինը, իսկ մատուռ է կոչվում շգիտես մեթոդիստներին¹, թե՛ բուպտիստների, սաուզգ շեմ կարող ասել որ մեկի, աղոթարանը Գիմմերթընում)։ Ջողեֆը գնաց,— շարունակում էր Զիլլահը, բայց ես հարկ համարեցի մնալ տանը։ Միշտ էլ հարկավոր է, որ իրենցից մեծ որևէ մեկը հետևի ջահելներին։ Հերթընը իր ամաչկոտ բնավորությամբ չի կարող լավ վարքագծի օրինակ լինել։ Ես նրան բացատրեցի, որ իր հորաքրոջ աղջիկը, հավանաբար, կգա, կնստի մեզ մոտ, իսկ Քեթին սովոր էր, որ հարգեն կիրակին, ուստի ինքը լավ կանի, որ թողնի իր զենքը, ինչպես և տնային ամեն տեսակի հոգսերը, երբ Քեթին գա իրենց մոտ։

Այդ լսելուց հետո նա կարմրեց և նայեց իր ձեռքերին ու հագուստին։ Վորվոնը¹ և վառողը մի ակնթարթում խցկեց ինչ-որ տեղ։ Տեսա, որ ուզում էր բնկերություն անել նրա նետ։ Հերթընի վարքագծից հասկացա, որ կամենում է վաշխուղ տեսքով երևալ նրան և, ծիծաղելով, ի դեպ, տիրոջ ներկայությունը երբեք չէի համարձակվի ծիծաղել, ես առաջարկեցի օգնել իրեն, եթե ցանկանում է, և սկսեցի կատակով ծաղրել նրա շփոթվածությունը։ Նա դեմքը խոժոռեց և սկսեց հայհոյել։

— Էհ, միսիս Դին,— շարունակում էր Զիլլահը, տեսնելով, որ ես նրա ասածին հավանություն չեմ տալիս,— դուք, երևի, գտնում եք, որ ձեր ջահել լեդին շափից ավելի լավ է միստր Հերթընի համար, գուցեև ճիշտ եք, բայց խոստովանում եմ, կուզենայի նրա գոռոզությունը մի լավ կտրել։ Եվ հիմա ո՞ւմ են հարկավոր նրա այդ ամբողջ կրթությունն ու պահվածքը։ Նա նույնքան չքավոր է, որքան և դուք, կամ էլ ես՝ նույնիսկ ավելի աղքատ է. դուք խնայողություն եք անում, ես էլ գնում եմ նույն ճանապարհով՝ քիչ-քիչ հետ եմ գցում։

— Հերթընը Զիլլահին թույլ տվեց, որ օգնի իրեն. նա փայփայանքով բարձրացրեց տղայի բարի տրամադրությունը, այնպես որ, երբ Քեթինը եկավ, Հերթընը զրեթե մտնեց

¹ Մովային կենդանու հալած ճարտ.

էր իրեն հասցրած նախկին վիրավորանքները և աշխատում էր, սնտեսուհու ասելով, սիրալիր լինել:

— Միսիսը ներս մտավ,— ասաց նա,— սառցալեզվակի պես սառը և իշխանուհու պես հպարտ: Սա վերկացա և առաջարկեցի իմ բազկաթոռը: Օ՛, ոչ, ի պատասխան իմ քաղաքավարութեան նա միայն քիթը ցցեց: Էրնշուուն նույնպես վերկացավ և հրավիրեց, որ նստի բազմոցին՝ կրակին ավելի մոտ, քանի որ համոզված էր՝ Քեթին մեռնում է ցրտից:

— Մի ամսից ավել է, ինչ տառապում եմ,— պատասխանեց Քեթրինը՝ արհամարհանքով շեշտը դնելով տառապում եմ բառի վրա:

Նա աթոռը վերցրեց, դրեց մեզանից հեռու:

Տաքանալուց հետո նայեց շուրջը և պահարանում տեսավ բազմաթիվ գրքեր. իսկույն վեր թռավ և ձգվեց դեպի գրքերը, բայց դրանք դրված էին շատ բարձր տեղում:

Քեռու տղան մի առ ժամանակ դիտում էր նրա փորձերը և, ի վերջո, սիրտ առնելով, վճռեց օգնել նրան. Քեթրինը փեշը բռնեց, իսկ նա ձևոքն ընկած գրքերը լցնում էր նրա փեշը:

Գա պատանու համար մեծ հաջողություն էր: Միսիսը նրան շնորհակալություն չհայտնեց, բայց տղան գոհ էր, որ Քեթին ընդունել էր իր օգնությունը, համարձակվեց կանգնել միսիսի թիկունքում, երբ վերջինս ստուգում էր գրքերը, և նույնիսկ հակվում, ցույց էր տալիս նրանց մեջ եղած հին նկարները, որոնք ցնցել էին նրա երեակայությունը. նրան չէր վախեցնում միսիսի մատի ամբարտավան շարժումը, որով նա կոպիտ ձևով շուռ էր տալիս էջը: Հերթընը գոհունակությամբ փոքր-ինչ հետ էր գնում և սկսում էր նայել ոչ թե գրքին, այլ նրան:

Քեթրինը շարունակում էր կարդալ կամ փնտրում էր, թե էլ ինչ կարդար: Բայց կամաց-կամաց Հերթընի ուշադրությունը գրավեցին միսիսի խիտ, մետաքսեման գանգուր մազերը. նրա դեմքը չէր կարողանում տեսնել և նայում էր միայն մազերին, Քեթրինն էլ բոլորովին չէր տեսնում նրա դեմքը: Գուցեև լրիվ չգիտակցելով, թե ինչ էր անում, մոմով հրապուրված երեխայի պես՝ նայում էր, նայում և, վերջա-

այես, շոշափեց՝ ձեռքը երկարեց և թեթևակի շոյեց մի գանգուր, կարծես այն թռչնակ լիներ: Հերթընը ասես դանակ խրեց նրա վիզը, Քեթրինը ցնցվեց և շուտ եկավ դեպի նա.

— Հեռացեք այս բոսիս: Ինչպես եք համարձակվում դիպչել ինձ: Ինչ եք ցցվել այստեղ,— գոռաց միսիսը ու նրա ձայնի մեջ դարշանք կար:— Ես ձեզ տանել չեմ կարող: Եթե մոտենաք ինձ, ես նորից կգնամ վերև:

Միստր Հերթընը հետ քաշվեց հիմար տեսքով, սուսուփուս նստեց բազմոցին, իսկ Քեթրինը դեռ կես ժամ էլ շարունակում էր մեկ առ մեկ նայել գրքերը. վերջապես, էրնշոուն մոտեցավ ինձ ու շնչաց.

— Զիլլահ, շեք խնդրի նրան, որ մի բան բարձրաձայն կարդա մեզ համար: Հոգնել եմ ոչինչ շանելուց, իսկ ես այնպես եմ սիրում... այնքան սիրով կլսեի նրան: Մի ասեք, որ ես եմ խնդրում, խնդրեք, իբր ձեզ համար:

— Միստր Հերթընը խնդրում է բարձրաձայն կարդալ լեզ համար, մադամ,— ասացի ես իսկույնեկեթ:— էրնշոուն հա կրնդունի որպես համակրանք, իրեն ջատ պարտական կհամարի:

Միսիսը խոժոռեց դեմքը և, գլուխը բարձրացնելով, պասաբխանեց.

— Միստր Հերթընը և դուք բոլորդ շատ բարի կլինեք, եթե հասկանաք, որ ես մերժում եմ ամեն տեսակ սիրալիրություն, որ դուք կեղծավորությունք առաջարկում եք ինձ: Ես ձեզ արհամարհում եմ և ոչ մի բանի մասին չեմ ուզում խոսել ձեզնից որևէ մեկի հետ: Երբ ես պատրաստ էի կյանքս տալ մի բարի խոսքի համար, նույնիսկ նրա համար, որ դուն մի մարդու դեմք տեսնեմ, դուք բոլորդ երես դարձրիք ինձնից: Բայց ես չեմ ուզում գանգատվել ձեզ: Ինձ այստեղ քշել է ցուրտը և ոչ թե ձեզ ուրախացնելու կամ ձեր ընկերակցությունք զվարճանալու ցանկությունը:

— Ի՞նչ կարող էի անել,— սկսեց էրնշոուն:— Ինչպե՞ս կարելի է ինձ մեղադրել:

— Օհ, դուք բացառություն եք,— պատասխանեց միսիս Հիլթը:— Ես երբեք ձեր մասնակցություն կարող եմ չէի քաշում:

— Բայց ես բազմիցս առաջարկել, խնդրել եմ,— ասաց

Հերթընը՝ բորբոքվելով նրա կամակորուստութեանց, — խնդրել
եմ միասր Հիթթլիֆին՝ թույլ տալ, որ ես ձեզ համար գիշերը
անքուն մնամ...

— Լռեցեք: Ես կթողնեմ, կգնամ բակ կամ ուր ասեա,
միայն թե իմ ականջներում չհնչի ձեր նողկալի ձայնը, —
ասաց միլեդին:

Հերթընը փնթփնթաց, ասելով, որ նա կարող է գնալ թե-
կուզ դժոխք, հրացանը վերցրեց, այլևս չզրկելով իրեն կի-
բակնօրյա իր զբաղմունքներից:

Նա այժմ խոսում էր բավական ազատ. միլեդին տեսնում
էր, որ ավելի արժանավայել կլինի նորից փակվել մենութեան
մեջ: Բայց սկսվեցին սառնամանիքները և, շնայած իր հպար-
տութեանը, նա ստիպված էր ավելի ու ավելի ներողամիտ
վերաբերվել մեր ընկերակցութեանը: Ես, սակայն, հոգ էի
տանում, որ իմ բարութեան դիմաց այլևս արհամարհանքով
չհատուցեն. այդ օրվանից սկսած, ես էլ նրա պես խիստ
պաշտոնական էի և մեզնից ոչ մեկը նրա հանդեպ սեր ու
համակրանք չէր ցուցաբերում. նա արժանի էլ չէր դրան,
որովհետև, եթե մի խոսք ասես, նա իսկույն կփքվի և ոչ ոքի
չի հարգի: Նույնիսկ տիրոջ վրա կհարձակվի և նրան կստիպի,
որ ծեծի իրեն. և ինչքան շատ էր ծեծվում, այնքան ավելի
էր թունավոր դառնում:

— Սկզբում, երբ Զիլահից լսեցի այդ պատմութեանը,
ես ուզում էի թողնել պաշտոնս, մի տնակ վարձել և համո-
զել Քեթրինին, որ գա և ապրի ինձ մոտ: Բայց միասր Հիթ-
թլիֆը թույլ չէր տա, ինչպես և թույլ չէր տա Հերթընին, որ
ապրի մի առանձին տան մեջ, և ես հիմա Քեթրի համար մի
այլ ելք չեմ տեսնում, քան՝ նորից ամուսնանալ. բայց այդ
բանը իմ իրավասութեանից դուրս էր:

Սրանով միսիս Դինը ավարտեց իր պատմութեանը: Հա-
կառակ բժշկի նախագուշակման, իմ ուժերը վերականգնվում
են, թեև հունվարի միայն երկրորդ շաբաթն է սկսվում՝ ես
մտադիր եմ ձիով մեկ-երկու օր գնալ Մոլեզին հողմերի դա-
րավանդ իմ տիրոջը հայտնելու, որ մոտակա կես տարին
ուզում եմ անցկացնել Լոնդոնում ու, եթե ինքը ցանկանում
է, կարող է իր համար մի այլ կենվոր գտնել և հոկտեմբերին
տունը վարձով տալ. ոչ մի զնով չեմ համաձայնի, որ մի
ձմեռ էլ մնամ այստեղ:

Երևկ պայծառ, խաղաղ ու ցուրտ օր էր: Ես, ինչպես մտածում էի, գնացի Դարավանդ: Իմ տան տնտեսուհին ինձ խնդրեց իր մի քանի տող գրութիւնը հանձնել ջահել լեդիին, և ես շմերժեցի, որովհետև այդ պատվավոր կիներ իր խնդիրքում ոչ մի տարօրինակ բան չէր տեսնում:

Տան դիմացի դուռը լայն բաց էր, բայց խանդոտ դարպասը կողպված էր, ինչպես արվել էր իմ վերջին այցելութիւն ժամանակ: Ես թակեցի դարպասը և կանչեցի պարտեզի մարգերում աշխատող էրնշուրին. նա շղթան հետ քաշեց, և ես ներս անցաւ: Պատանի գեղջուկն այնքան գեղեցիկ էր, որ դրանից ավելին լինել չէր կարող: Այս անգամ ես հատուկ ուշադրութեամբ դիտեցի նրան, բայց նա, ինչպես երևում է, ամեն ինչ տեսնում էր, որ իր առավելութիւնները նվազագույն չափով ցույց տաւ:

Ես հարցրի՝ միտք շիթքլիֆը տա՞նն է: «Ոչ,— պատասխանեց նա,— բայց ճաշին կլինի»: Ժամը տասնմեկը կլիներ. ես հայտարարեցի, որ մտադիր եմ ներս մտնել ու սպասել. նա իսկույն ցած գցեց իր գործիքները և եկավ, որ ուղեկցի ինձ որպէս մի պահապան շուն, բայց ոչ թե որպէս տիրոջ տեղակալ:

Ներս մտանք միասին: Քեթին տանն էր և զբաղված էր ճաշի համար բանջարեղեն մաքրելով, նրա տեսքը ավելի շատ մոայլ էր և ավելի քիչ ողևորված, քան այն ժամանակ, երբ ես նրան տեսա առաջին անգամ: Նա հաղիվ նայեց ինձ և նորից իր գործը շարունակեց: Նույն անտարբերութեամբ վերաբերվելով բոլորի կողմից ընդունված քաղաքավարութիւնն ձևերին, նա չպատասխանեց իմ ողջույնին ու բարի լուսին, և ցույց էլ չտվեց, որ ճանաչում է ինձ:

«Նա այնքան էլ սիրալիր չէ, որքան միսիս Դինն է ուզում հավատացնել ինձ,— մտածեցի ես:— Ծիշտ է, գեղեցիկ է, բայց հրեշտակ չէ»:

էրնշուրն կոպտորեն նրան առաջարկեց, որ իր իրերը վերցնի տանի խոհանոց:

— Ինքներդ տարեք,— ասաց Քեթրինը՝ մի կողմ հրելով դրանք հենց որ վերջացրեց, և, նստելով պատուհանի մոտի

աթոռին, սկսեց թռչուններ և դազաններ փորագրել գոգնոցի փեշին հավաքած շաղգամի կեղևի վրա:

Մոտեցա նրան՝ ձևացնելով, որ ուզում եմ նայել պարտեղին և հնարամտորեն, ինչպես ինձ թվաց, Հերթընից անկատելի, միսիս Դինի գրությունը գեցցի նրա ծնկին, բայց նա բարձրաձայն հարցրեց.

«Ի՞նչ է սա» — և թերթիկը ցած շարտեց:

— Նամակ ձեր վաղեմի ծանոթից՝ Ազարակատան տընտեսուհուց, — պատասխանեցի ես՝ նեղանալով, որ իմ բարի արարքը բացահայտվեց, և վախենալով՝ շլինի թե մտածեն, որ նամակը ինքս եմ գրել:

Այսպիսի բացատրությունից հետո նա ուրախությամբ թերթիկը կրարձրացնել գետնից, բայց Հերթընը կանխեց նրան. խլեց այն ու դրեց իր ժիլետի գրպանը՝ ասելով, որ նախ և առաջ նամակը պետք է կարդա միտքը Հիթքլիֆը:

Այն ժամանակ Քեթրինը լռելյայն շուռ եկավ մեզնից և թաշկինակը թաքուն հանելով, աննկատելիորեն տարավ աչքերին, իսկ իր քեռու տղան սկզբում ջանում էր մի պահ հաղթահարել բարի զգացումը, բայց հետո նամակը հանեց և գցեց նրա մոտ, հատակին, իրեն յուրահատուկ անքաղաքավարությամբ:

Քեթրինը նամակը վերցրեց և ազահաբար կարդաց: Հետո ինձ մի քանի հարց տվեց իր նախկին տան ապրողների մասին՝ խելացի ու ոչ խելացի, և նայելով բլուրների կողմը, փնթփնթաց ինքն իրեն.

— Կուզենայի Մինիին նստած զնալ այնտեղ: Կուզենայի ավելի վեր բարձրանալ: Ահ, հոգնել եմ... ձանձրացել եմ, Հերթըն:

Եվ նա իր գեղեցիկ գլուխը դրեց լուսամուտի գոգին՝ չզիտես հորանջելով, թե հառաչելով, և սուզվեց ինչ-որ ցրված տխրության մեջ, շցանկանալով ու շիմանալով հետևո՞ւմ ենք մենք իրեն, թե՛ ոչ:

— Միսիս Հիթքլիֆ, — ասացի, միառժամանակ լուռ նրստած մնալով, — դուք, Երևի, տեղյա՞կ չեք, որ ես ձեր հին ծանոթն եմ, և այնքան մտերիմ, որ ինձ համար տարօրինակ է, թե ինչու չեք մոտենում ու չեք խոսում ինձ հետ: Իմ տան տնակատուհին Երբեք չի հոգնում ձեր մասին խոսելուց և դրո-

վատանքի խոսքեր ասելուց և շատ կհիասթափվի, եթե ես վերադառնամ և ոչ մի լուր չտանեմ ու չհայտնեմ, որ դուք ստացաք նրա նամակը և ոչինչ չասացիք:

Նա երևի գարմացավ այդ խոսքերի վրա և հարցրեց՝
— Էլլենը սիրո՞ւմ է ձեզ:

— Այո և շատ, — ասացի ես առանց վարանելու:

— Դուք պետք է հայտնեք նրան, — շարունակեց նա՝ որ ես նրա նամակին կպատասխանեի, բայց գրելու ոչ մի բան չունեմ, նույնիսկ գրքույկ չունեմ, որտեղից կարողանայի մի թերթիկ պոկել:

— Ոչ մի գի՛րք, — բացականչեցի ես: — Բայց թույլ տվեք հայտնել, ինչպե՞ս եք կարողանում առանց դրանց ապրել այստեղ: Բեև Ազարակատանը իմ տրամադրություն տակ կա մեծ գրադարան, սակայն ես հաճախ ձանձրանում եմ. բավական է վերցնեն ինձնից իմ գրքերը, և ես կհուսահատվեմ:

— Ես միշտ կարդում էի, երբ գրքեր ունեի, — ասաց Քեթրինը, — իսկ միտոր Հիթքլիֆը երբեք չի կարդում. դրա համար էլ վճռեց ոչնչացնել իմ գրքերը: Շաբաթների շարունակ ես ոչ մի գրքի երես չեմ տեսնում: Միայն մեկ անգամ պրպտեցի Զոդեֆի աստվածաբանական գրքերի կույտը՝ մեծ զայրույթ պատճառելով նրան. մեկ անգամ էլ, Հերթըն, ձեր սենյակում տեսա մի գաղտնի գանձարան՝ լատինական և հունական դասագրքեր, հեքիաթների ու ոտանավորների մի քանի գիրք, դրանք բոլորն էլ իմ հին բարեկամներն էին: Այդ գրքերը բերեցի տուն, իսկ դուք դրանք հավաքեցիք, ինչպես կաշաղակն է հավաքում արծաթե գդալները, պարզապես գողություն սիրույն. դրանցից ձեզ օգուտ չկա. կամ, գուցե, թաքցրել եք շարությունից. եթե ինքներդ դրանցից հաճույք չեք ստանում, թող ուրիշներն էլ չստանան: Գուցե ձեր այդ նախաձեռնությունը Հիթքլիֆին գրդեց, որ հափշտակի իմ գանձերը: Բայց դրանք համարյա բոլորը գրված են իմ ուղեղում և տպված են իմ սրտում, իսկ դա չեք կարող | հլ ինձանից:

Էրնշտուն շիկնեց, երբ իր հորաքրոջ աղջիկը հայտարարեց թաքցրած գրքերի հավաքածուի մասին և, կմկմալով, սկսեց զայրացած ժխտել նրա մեղադրանքները:

— Միստր Հերթրենն սւզում է ավելացնել իր գիտելիք-
ների պաշարը,— ասացի ես, որ նրան դուրս բերեմ նեղ
կացությունից:— Ձեր գիտելիքները նրա մեջ առաջացնում են
ոչ թե նախանձանք, այլ կատարելագործման բուռն ձգտում:
Մի քանի տարի հետո նա կդառնա մի շնորհալի գիտուն
մարդ:

— Եվ նա ուզում է, որ ես այդ ընթացքում բուրբովին
բթանամ,— պատասխանեց Քեթրինը:— Այո, ես լսում եմ,
թե ինչպես է նա փորձում վանկ առ վանկ կարգալ և այդ
անելիս բավականին կոպիտ սխալներ է թույլ տալիս: Կցան-
կանայի, որ մի անգամ էլ կրկնի երեկվա «Ձեզյան սրսոր-
դությունը»¹. դա շատ ղվարճալի էր: Ես լսեցի ձեզ... լսեցի,
թե դուք ինչպես էիք բառարանը թերթում, փնտրելով զժվար
բառերը, իսկ հետո հայհոյում էիք, որովհետև չէիք կարո-
ղանում բացատրությունները կարգալ:

Երիտասարդ մարդը, ըստ երևույթին, իրեն շատ վատ
զգաց, երբ ծիծաղեցին իր տգիտության վրա, իսկ այժմ էլ
ծաղրում են այդ տգիտությունը հաղթահարելու իր ջանքե-
րը: Ես էլ նույն կարծիքին էի և, հիշելով միսիս Դինի պատ-
մածը Հերթրենի առաջին փորձի մասին՝ լուսավորել այն խա-
վարը, որի մեջ իրեն դաստիարակել էին, ասացի.

— Բայց, միսիս Հիթքլիֆ, մեզնից յուրաքանչյուրն էլ
ինչ-որ բանից սկսել է, բոլորն էլ սայթաքել են, երեքացել
շեմքին: Եթե մեր ուսուցիչները օգնելու փոխարեն ծաղրեին
մեզ, մենք մինչև հիմա էլ կերերայինք ու կսայթաքեինք:

— Մհ,— առարկեց Քեթրինը, — ես չեմ ուզում խանդարել
նրա առաջադիմությանը... բայց, այնուամենայնիվ, նա
իրավունք չունի յուրացնել իմը և այն ինձ համար դարձնել
ծիծաղելի նրանում եղած նողկալի սխալների և ոչ ճիշտ ար-
տասանության պատճառով: Այդ գրքերը՝ թե արձակը և թե
չափածոն, ինձ համար նվիրական են այլ հիշողությունների
հետ կապված և ինձ համար անտանելի է, երբ դրանք թոշ-
նում, պղծվում են նրա բերանում: Բացի դրանից, նա ասես
կանխակալ շարամտությամբ բնարում է իմ սիրած հատ-
վածները, որոնք ես շատ հաճախ կրկնում եմ:

¹ Clwy chase—16-րդ դարի սկզբների անդլ. ժողովրդական լայլադ.

Հերթընի կուրծքը լուսթյան մեջ մի պահ բարձրանում իջնում էր. նա աշխատում էր գսպել վիրավորանքի դաժան զգացումն ու ցասումը, որ այնքան էլ հեշտ չէր:

Շփոթված վիճակից նրան դուրս բերելու համար ես վերկացա և ջենտլմենի պես կանգնեցի դռան շեմին ու սկսեցի դիտել առջևում փռված բնատեսարանը:

Էրնշոուն հետևեց իմ օրինակին և դուրս եկավ սենյակից, բայց շուտով վերադարձավ հինգ-վեց գիրք ձեռքին ու նետեց Քեթրինի փեշը՝ գոչելով.

— Վերցրե՛ք: Այլևս չեմ ցանկանում ո՛չ լսել, ո՛չ կարգալ, ո՛չ էլ մտածել դրանց մասին:

— Իսկ հիմա ես դրանք չեմ վերցնի,— պատասխանեց միսիսը:— Դրանք ինձ կհիշեցնեն ձեր մասին և ատելի են ինձ:

Քեթրինը բաց արեց մեկը, որը, ըստ երևույթին, շատ էին թերթել և սկսնակի պես ծոր տալով կարդաց մի հատված, ապա սկսեց ծիծաղել ու գիրքը նետեց մի կողմ:

— Հապա լսեք,— շարունակում էր նա զրույց առաջացնող տոնով և սկսեց արտասանել մի ինչ-որ հին բալլադից բանաստեղծական տողեր:

Բայց Հերթընի ինքնասիրությունը շղիմացավ նոր փորձության. ես լսեցի, և ոչ առանց հավանության, թե ինչպես ձեռքի հարվածով նա լռեցրեց միսիսի հանդուգն լեզուն: Փոքրիկ շարասիրտ աղջիկը արեց ամեն բան, ինչ կարող էր, որ դիպչի քեռու տղայի հիվանդագին, թեպետև ոչ նրբազգաց ինքնասիրությանը, իսկ ֆիզիկական ուժ գործադրելը Հերթընի համար միակ միջոցն էր, որպեսզի ամփոփի և հաշիվ մաքրի իրեն վիրավորողի հետ:

Նա հավաքեց գրքերը և ջպրտեց կրակի մեջ: Ծս նրա դեմքին կարդացի, թե ինչպիսի տառապանքով նա զոհաբերեց դրանք իր զայրույթին: Երբ գրքերն այրվում էին, ինձ թվում էր, թե նա վերհիշում է դրանց՝ իրեն պատճառած հաճույքը. նա կանխատեսում էր այն հաղթանակն ու այն հարաճուն բավականությունը, որ ակնկալում էր գրանցից հետագայում, փճչպես և պատկերացնում, կռահում էի, թե ինչն էր նրան դրդում տարվելու այդ գաղտնի զբաղմունքով: Նա բավարարվում էր ամենօրյա աշխատանքով և անասնական կոպիտ

հաճույքներով, մինչև որ իր ճանապարհին հանդիպեց Քեթրինին: Վերջինիս ծաղրանքից առաջացած ամոթի զգացումը և նրա հավանությունը արժանանալու հույսը, իր, ավելի քարձր, ձգտումների առաջին խթանը հանդիսացան: Ոտքի կանգնելու իր ջանքերը նրա ծաղրանքից իրեն պաշտպանելու և զովասանքներին արժանացնելու փոխարեն, հանդեցրին հակառակ հետևանքի:

— Այո, ահա և այն ամբողջ օգուտը, որը ձեզ նման մի անասուն կարող է ստանալ դրանցից,— ճշաց Քեթրինը, լիզելով պատռված շուրթը և զայրալից հայացքով հետևելով, թե կրակը ինչպես է լափում իր գրքերը:

— Ավելի լավ կանեիք, որ լռեիք,— կատաղած սասց նրա քեռու տղան:

Հերթընը հուզմունքից շկարողացավ շարունակել և շտապեց դեպի ելքը. ևս քաշվեցի մի կողմ, որ ճանապարհ տամ նրան: Բայց շեմքից դեռ դուրս չեկած, միստր Հիթքլիֆը ներս մտավ և, ձեռքը նրա ուսին դնելով, հարցրեց.

— Ի՞նչ է պատահել, տղաս:

— Ոչինչ, ոչինչ,— սասց Հերթընը և նետվեց դուրս, որպեսզի մենություն մեջ վայելի իր վիշտն ու զայրույթը:

Հիթքլիֆը նայեց նրա հետևից և հառաչեց:

— Տարօրինակ կլինի, եթե ես ինքս ինձ հակասեմ,— փնթփնթաց նա, ստանց կռահելու, որ ես կանգնած եմ իր հետևում:— Բայց երբ ես Հերթընի դիմագծերի մեջ հոր նմանությունն եմ փնտրում, օրեցօր ավելի լավ եմ ճանաչում նրա հորաքրոջը: Գրողը տանի, ինչո՞ւ է նա այդքան նման Քեթրինին: Ես նրան տանել չեմ կարող:

Հիթքլիֆը հայացքը դեցեց գետնին և մթազնած մտավ տուն: Գեմքին կար մի անհանգիստ ու կարոտալից արտահայտություն, որը ես առաջ երբեք չէի նկատել. նա նիհարած տեսք ուներ:

Հարսը պատուհանից նկատելով նրան, խկույն վազեց խոհանոց, այնպես որ ես միայնակ մնացի:

— Ուրախ եմ, տեսնելով, որ դուք նորից դուրս եք գալիս, միստր Լոքվուդ,— սասց նա՝ ի պատասխան իմ ողջունին,— մասամբ եսամոլական նկատառումներով,— չեմ կարծում, որ այս ամսյի վայրում ես հեշտությունը ձեզ փո-

խարինող կգտնեմ: Հաճախ էի գարմանում, թե ինչն է ձեզ բերել այս կողմերը:

— Վախենում եմ, սըր, որ միայն դատարկ քմահաճույքը, — եղավ իմ պատասխանը: — Կամ գուցե մի դատարկ քմահաճույք ուզում է ինձ դուրս քշել այստեղից: Հաջորդ շաբաթ ես մեկնելու եմ Լոնդոն և պետք է նախազգուշացնեմ ձեզ, որ էլ մտադիր չեմ Կեռնեխների ազարակատունը մի տարուց ավել պահել իմ ձեռքում: Կարծում եմ, որ ես այլևս այստեղ չեմ ապրելու:

— Օհ, իրոք: Ձեր կամավոր աքսորը ձանձրացրել է ձեզ, այո՞, — ասաց նա, — բայց եթե դուք եկել եք խնդրելու, որ ձեզ ազատեն շղթաղեցրած տան վարձից, ապա ձեր զբոսանքը անօգուտ է. ես երբեք ոչ ոքի ոչ մի գիշում չեմ անում:

— Ես չեմ եկել խնդրելու, — բավականին ջղայնացած, գոռացի ես: — Եթե ուզում եք, ես կարող եմ հաշիվներս հենց հիմա փակել: — Եվ զրպանիցս հանեցի շեկագրքույկը:

— Ոչ, ոչ, — սառնասրտությամբ պատասխանեց նա, — դուք թողնում եք բավականին բարիք, որը կարող է ծածկել ձեր պարտքերը, եթե շվեդացիներն արժանանանք էլ... ես ձեզ չեմ շտապեցնում. նստեք և ճաշեք մեզ հետ. երբ գիտես, որ հյուրը հաճախ չի հայտնվելու, ինչո՞ւ սիրով լընդունես նրան: Քեթրին, սեղան բացեք, ո՞ւր եք կորել:

Քեթրինը նորից երևաց, հետը բերելով սկոտեղի վրա դարսած դանակներն ու պատառաքաղները:

— Դուք կարող եք ճաշել Զոզեֆի հետ, — փնթփնթաց Հիթչլիֆը: — Նստեք խոհանոցում, մինչև որ հյուրը մեկնի:

Քեթրինը ճշտությամբ կատարեց նրա կարգադրությունը՝ գուցե նա գայթակղված չէր խախտելու այն: Ապրելով խեղկատակների ու մարդատյացների մեջ, հազիվ թե կարողանար գնահատել բարձր կարգի մարդկանց, երբ հանդիպում էր այդպիսիներին:

Ունենալով մի կողմում մռայլատես և սակավախոս միսոր Հիթչլիֆին, իսկ մյուսում՝ բացարձակապես համր Հերթլենին, երբ ճաշեցի ոչ շատ ուրախ տրամադրությամբ և շատ շուտ ճր: Կեշտ տվեցի նրանց:

Ես ուզում էի դուրս դալ խոհանոցի միջով, որպեսզի վերջին անգամ նայեմ Քեթրինին և ջղայնացնեմ ծերուկ Զոզե-

Ֆին, բայց Հերթընին հրամայվեց, որ ձիս բերի, և տանտերը ինքը ուղեկցեց ինձ մինչև դուռը, այնպես, որ ես չկարողացա իրականացնել իմ ցանկությունը.

«Ի՛նչ տաղտկալի է անցնում կյանքը այդ տանը, — մտորում էի ես՝ ձիով գնալիս: Կյանքը միսիս Լինթըն Հիթքլիֆի համար ավելի շուտ կզառնար ոռոմանտիկա, քան հեքիաթ, եթե նա և ես նվիրական կապեր հաստատեինք միմյանց հետ, ինչպես փափագում էր նրա դայակը, և վերաբնակվեինք քաղաքի հուզիչ մթնոլորտում»:

ԳՆՈՒՆ ԵՐԵՍՈՒՆԵՐԿՈՒԵՐՈՐԳ

1802: Այդ տարվա սեպտեմբերին ես հրավիրված էի հյուսիս, ամայացնելու իմ բնկերոջ ցախիններով ծածկված հողերը, և ճանապարհվելով դեպի նրա բնակավայրը, անսպասելի կերպով հայտնվեցի Գիմմերթընից տասնհինգ մղոն հեռավորության վրա: Ջիապանը պանդոկի բակում դուլով ջուր էր տալիս իմ ձիերին, երբ մեր մոտով հենց նոր հնձած կանաչ վարսակով բռնավորված մի սայլ անցավ և ձիապանն ասաց.

— Գիմմերթընից են: Նրանց մոտ հունձը երեք շաբաթ ավելի ուշ է սկսվում, քան մյուսների մոտ:

— Գիմմերթը՞ն, — կրկնեցի ես. իմ բնակությունն այդ տեղերում արդեն դարձել էր մի աղոտ երազ: — Ա՛խ, հա, գիտե՛մ: Իսկ դա այստեղից ինչքա՞ն է հեռու:

— Մի տասնչորս մղոն կլինի՝ բլուրների վրայով, վատ ճանապարհներով, — պատասխանեց նա:

Հանկարծ մի ներքին մղում դրդեց ինձ այցի գնալ Կեռնեխների ագարակատուն: Կեսօրը մոտ էր, և ես մտածում էի, որ հյուրանոց գնալու փոխարեն կարող եմ գիշերել սեփական տանիքի տակ: Բացի այդ, ես հեշտությամբ կաբող էի մի օր տրամադրել, որ տանտիրոջ հետ գործերս կարգի բերեմ և այսպիսով ազատեմ ինձ նորից այս ծայրամասերը գալու ջանքերից:

Մի փոքր հանգստանալուց հետո ծառայիս ուղարկեցի,

որ հարցուփորձ անի ու իմանա, թե ինչպես կարելի է այդ գյուղը գնալ: Սաստիկ հողնեցնելով ձիերին՝ մոտ երեք ժամում մենք հաղթահարեցինք այդ տարածութունը:

Շառային թողեցի գյուղում, իսկ ինքս միայնակ, հովիտով առաջ շարժվեցի դեպի ներքև: Քորշ եկեղեցին ինձ ավելի ևս գորշ թվաց, իսկ ամայի գերեղմանատունը՝ էլ ավելի ամայի: Տեսնում էի, թե ինչպես ոչխարները ուտում էին գերեզմանների վրայի կարճ խոտը: Հաճելի տաք եղանակ էր, ճամփորդության համար շափազանց տաք. բայց ջերմությունը չէր խանգարում, որ ես հիանայի վերևում և ցածում սփռված սքանչելի բնատեսարանով. եթե ավելի մոտիկից դիտեի այդ տեսարանը օգոստոսին, համոզված եմ, որ այն կհրապուրեր ինձ և կստիպեր մի ամիս անցկացնել այդտեղի մենության գրկում: Չմոռնր ոչ մի բան ավելի տխուր չէր կարող լինել, իսկ ամուսնը ավելի հմայիչ, քան բլուրների մեջ փակված այդ լեռնագողերը ու հավամրդու թփերով ծածկված այդ ուղղարերձ գահավեժ բարձունքները:

Ազարակատուն հասա մայրամուտից առաջ և դուր թակեցի. բնտանիքի բոլոր անդամները առանձնացել են հետևի հարակից շենքում, մտածեցի ես, նկատելով խոհանոցի ծրխնելույվից բարձրացող կապույտ ծխի մի բարակ օղակ, և շլտեցին թակոցը:

Մտա բակ: Ամուտքի ծածկի տակ նստել էր ինը-տասը տարեկան մի աղջնակ և գործում էր, իսկ աստիճաններին՝ մեջքը կորացրած, նստել էր մի ծեր կին և մտադբաղ ծխում էր ծխամորճը:

— Միսիս Դինը տա՞նն է,— հարցրի ծեր կնոջը:

— Միսիս Դի՞նը: Ոչ, — պատասխանեց նա:— Այստեղ չի ապրում, տպրում է այնտեղ, վերևում՝ Դարավանդում:

— Ուրեմն այստեղի տնտեսուհին դո՞ւք եք,— շարունակեցի ևս:

— Այո, պահպանում եմ տունը,— պատասխանեց նա:

— Շատ լավ: Ես միտար խոբվուդն եմ՝ տերը: Ուզում եմ իմանալ, կգանվե՞ն այստեղ սենյակներ, ուր ես կարողանայի տեղավորվել: Ուզում եմ գիշերել այստեղ:

— Տե՛րը,— բացականչեց նա՝ զարմացած:— Բա ի՞նչ անե՞նք. ո՞վ դիտեր, որ դուք գալու եք: Գոնե մի բառով առա-

ջուց հայտնեիք: Այստեղ ոչ վառելիք կա, ոչ էլ մի հարմար տեղ:

Նա ծխամորճը դեն նետեց և շտապ ներս մտավ, փոքր աղջիկը հետևեց նրան, նրանց հետևից ներս անցաւ և ես: Շուտով համոզվեցի, որ նրա ասածը ճշմարտութիւնն էր, և դեռ ավելին՝ իմ անցանկալի ժամանումից քիչ էր մնացել պառավը խելքը թոցներ:

Սկսեցի նրան հանգստացնել՝ իբր կգնամ զրոսնելու, իսկ ինքն այդ ընթացքում թող հյուրասենյակում մի անկյուն պատրաստի, որ ես կարողանամ ընթրել, և մի ննջասենյակ՝ քնելու համար. կարիք չկա ավելի, փոշին մաքրել, միայն թե տաք կրակ ու շոր սավան լինի:

Թվում էր, թե նա ուրախ է ամեն ինչ անելու, թեև շփոթվելով, հատակի խողանակը ակիշի փոխարեն սխալմամբ մտցրեց բուխարու մեջ, ինչպես և իր արհեստի մյուս իրերն օգտագործեց ոչ իրենց ուղղակի նպատակով, բայց ես հեռացա՝ հավատալով, որ մինչև իմ վերադարձը նրա եռանդը հանգստանալու մի տեղ կապահովի ինձ համար:

Իմ ձեռնարկած զբոսանքի նպատակը Մուկիգին հողմերի դարավանդն էր: Բայց նոր էի բակ դուրս եկել, երբ իմ գլխում ծագած միտքը ստիպեց ինձ անմիջապես հետ վերադառնալ:

— Դարավանդում ամեն ինչ լա՞վ է, — հարցրի ես տընտեսուհուն:

— Այո, կարծես թե, — պատասխանեց նա և արագ սյացավ՝ վառվող ածուխներով լի թավան ձեռքին:

Ուղում էի հարցնել, թե միտիս Դինն ինչու էր հեռացել Աղարակասնից, բայց այսպիսի մի կրիտիկական պահին դժվար է կնոջը կանգնեցնել: Ես շրջվեցի, շեմքից նորից դուրս եկա և անշտապ քայլերով ճանապարհ ընկա հետևում մարող կարմրացուլ արևի շողքի ու առչեում բարձրացող լուսնայտակ լուսնյակի մեղմ լույսի տակ. մեկը հետզհետե աղոտանում էր, մյուսը պայծառանում, երբ ես դուրս եկա պարտեզից և սկսեցի բարձրանալ քարքարոտ արահետով, որը ճյուղավորվելով տանում էր դեպի Հիթքլիֆի բնակավայրը: Մինչև տան երևալը օրը լիովին մարեց, ապա արևմուտքում մնաց լոկ սալի մի աղոտ շերտ, բայց լուսնի պայծառ

փառքի առաջ ևս կարողանում էի տարրերել արահետի յուրա-
հանչուր ի ճարարը և խոտի ամեն մի ցողունը:

Նս դարսասի վրայով շանցա, ոչ էլ թակեցի այն. դար-
այասր զիջեց իմ ձեռքի առաջին հպումին:

Դա լավ նշան է, մտածեցի ևս: Քթածակերիս օգնությամբ
մի բան էլ զգացի՝ շահպրուկի ու դեղին շահոքրամի բուր-
մունքը տան պողատու ծառերի միջից տարածվել էր օդում:

Թե դռները, և թե լուսամուտները բաց էին և, այդուհան-
դերձ, ինչպես սովորաբար դա կարելի է տեսնել քարածխային
շրջանում, կրակի լույսի հաճելի կարմրավուն արտացոլումը
լուսավորում էր ծխնելույզը. այն հաճույքը, որ աչքն ստա-
նում է, սեղեղ ջերմությունը դարձնում է տանելի: Բայց Մո-
լեզին հողմերի դարավանդի տունն այնքան մեծ էր, որ դրա
բնակիչները լայն հնարավորություն ունեին իրենց հեռու պա-
հել ջերմությունից. և, նրանք, ովքեր տանն էին, հերթով
տեղավորվել էին լուսամուտների մոտ: Դռան շեմքից դեռ
ներս շմտած, ևս արդեն կարող էի տեսնել նրանց և լսել
նրանց խոսակցությունը. քանի դեռ վարանում էի ներս մտնել,
սկսեցի դիտել ու լսել նրանց՝ հարաճուն հետաքրքրությունից
ու նախանձից զրոգված:

— Ընդհակառակը,— ասաց մի ձայն, որ արծաթե զան-
դակի պես մեղմ էր:— Երրորդ անգամ, բթամիտի մեկը, էլ
չեմ կրկնի: Հապա մի հիշիր, այլապես մաղերդ կքաշեմ:

— Դե, ընդհակառակը,— ասաց բամբ, բայց մեղմ, մի
ուրիշ ձայն:— Իսկ հիմա համբուրիք ինձ, որ այդքան լավ
հիշում եմ:

— Ոչ, նախ՝ ճիշտ կարդա, առանց սխալի:

Բամբ ձայնով մարդը սկսեց կարդալ: Դա կարգին հաղ-
նրված մի երիտասարդ էր, որը նստած էր սեղանի մոտ՝
բացած գիրքը առջևը դրած, նրա սիրուն դեմքը փայլում էր
բավականությունից, իսկ աչքերը անհամբերությամբ հա-
ծում էին մեկ էջին, մեկ ուսին դրած փոքր սպիտակ ձեռքին,
որն ամեն անգամ այտին տված թեթև հարվածով նրան հաս-
կացնել էր տալիս, որ ձեռքի տիրոջ աչքից չի վրիպում անու-
շադրության սյդ շարժումը:

Ձեռքի տերը, ինքը, կանգնած էր նրա հետևում, և նրա
հետաքրքրված շեղ գիսակներն օղակները ժամանակ առ ժամանակ

խառնվում էին տղայի շաղանակագույն դանդուրների, և բրնա հակվում էր, որպեսզի ստուգի իր աշակերտին, իսկ դեմքը... լավ է, որ աշակերտը չէր կարողանում տեսնել նրա դեմքը, այլապես հազիվ թե այդպես ջանադիր լիներ: Բայց ես կարողանում էի տեսնել այդ դեմքը և զայրույթից կրծատում էի շրթունքներս, որ ձեռքից բաց թողեցի առիթը, որը, թերևս, ինձ թույլ տար չբավարարվել այդ դեմքի ասլշեցուցիչ գեղեցկությունը միայն դիտելով:

Դասն ավարտվեց ոչ առանց կոպիտ սխալների: Այդուհանդերձ, աշակերտը վարձատրություն պահանջեց և նվեր ստացավ անվազն հինգ համրույր, որոնց, ի դեպ, պատասխանեց անկեղծությամբ: Հետո նրանք միասին գնացին դեպի դուռը, և նրանց խոսակցությունից ես հասկացա, որ ուղում են գնալ դաշտերում գոսննելու: Ես մտածեցի, որ Հերթըն էրնշտուն, եթե ոչ խոսքերով, ապա հոգու խորքում կցանկանար, որ ես կորչեմ գեհենի խորքերը, եթե հիմա իմ շարաքստիկ անձը երևա նրա կողքին, և ես, ստորացման ու վիրավորանքի զգացումով համակված, ժլկեցի անկյան հետեր, որ ապաստան փնտրեմ խոհանոցում:

Այն կողմից մուտքը նույնպես ազատ էր. իմ վաղեմի բարեկամ Նելլի Դինը դռան մոտ նստած կար էր անում և երգում էր մի երգ, որը հաճախ բնդհատվում էր տան ներսից լավող արհամարհական ու անթույլատրելի կոպիտ խոսքերից, որոնք հնչում էին ատելությամբ, ոչ բարեհնչուն արտասանությամբ:

— Իմ կարծիքով, ավելի լավ է առավոտից մինչև դիշեր ականջիս տակ հայհոյեն, քան լսեմ ձեզ,— ասաց մի ձայն խոհանոցից, ի պասասխան Նելլի ականջին շհասած դիտողությունը:

— Բա խայտառակություն չէ՞, հենց որ ես սուրբ դիրքը բաց եմ անում, դուք սկսում եք փառաբանել սատանային և բոլոր շարագործ ուժերը, որ երբևէ ծնունդ էին առնում աշխարհում:

— Օ՛հ, դուք ստոր անպիտան, իրար արժեք. խեղճ տղան ձեր երկուսի պատճառով կկործանվի: Խե՛ղճ տղա,— կրկնեց նա՝ հառաչելով,— կախարչել են նրան, հաստատ գիտեմ:

Տե՛ր աստված, Էրանց դատաստանը տես, եթե մեր տիրա-
կալների մոտ ո՛չ արդարութիւն կա, ո՛չ էլ օրենք:

— Իհարկե չկա, թե չէ մեզ անկասկած կայրեին բոցա-
վառվող խարույկների վրա,— առարկեց երգողը:— Բայց
կուղենայի, որ լռեիր, ծերուկ, և բարի քրիստոնիայի նման
կարդայիր աստվածաշունչը ու ինձ շփալչեիր: Ես երգում
եմ «Կախարդուհի էննիի հարսանիքը» հրաշալի երգը. ուղ-
գակի պար գալու ցանկութիւն է առաջանում:

Միսիս Դինը ուզում էր նորից երգել, երբ ևս ներս մտա:
անմիջապես ճանաչելով ինձ՝ տեղից վեր թռավ ու ճչաց.

— Վա՛, աստված իմ, այդ դո՞ւք եք, միստր Լոքվուդ: Այդ
ինչպե՞ս որոշեցիք վերադառնալ այս կողմերը: Ազարակա-
տանը ամեն ինչ փակ է: Գոնե մեզ իմաց տայիք:

— Արդեն կարգադրել եմ, որ հարմարութիւններ ստեղ-
ծեն, քանի դեռ այստեղ կլինեմ,— պատասխանեցի ևս:—
Առավոտյան նորից մեկնելու եմ: Իսկ ինչպե՞ս պատահեց,
միսիս Դին, որ դուք տեղափոխվեցիք այստեղ: Մի պատմեք
տեսնեմ:

— Զիլլահը հեռացավ, և միստր Հիթքլիֆը, ձեր Լոնդոն
մեկնելուց անմիջապես հետո, ցանկացավ, որ տեղափոխվեմ
և մնամ այստեղ մինչև ձեր վերադարձը: Բայց ներս անցեք,
խնդրում եմ: Դուք Գիմմերթընի՞ց եք գալիս:

— Ազարակատնից,— պատասխանեցի,— մինչև նրանք
ինձ համար սենյակ պատրաստեն, ևս որոշեցի անցնել ձեր
տիրոջ մոտ և հաշիվներս փակել նրա հետ, որովհետև հա-
զիվ թե մեկ էլ հարմար առիթ ներկայանա:

— Ի՞նչ հաշիվներ, սրբ,— ասաց Նելլին՝ ներս առաջ-
նորդելով ինձ:— Նա հիմա այստեղ չէ և այնքան էլ շուտ
չի վերադառնա:

— Խոսքը տան վարձի մասին է,— պատասխանեցի:

— Օ՛հ, այն ժամանակ դուք այդ հարցը պետք է միսիս
Հիթքլիֆի հետ կարգավորեք,— ասաց նա,— կամ, ավելի
շուտ, ինձ հետ: Միսիսը իր գործերը վարելու արհեստը դեռ
չի սովորել, նրա փոխարեն գործերը վարում եմ ևս, էլ ուրիշ
մեկը չկա:

Ես ապշած նայեցի նրան:

— Ա՛խ, հա, դուք, ինչպես երևում է, շեք լսել Հիթթըլիֆի մահվան մասին, — շարունակեց միսիս Դինը:

— Հիթթըլիֆը մեռա՞վ, — բացականչեցի ես՝ զարմացած: — Ե՛րբ:

— Երեք ամիս առաջ, բայց նստեցեք, տվեք ձեր զըլխարկը, և ես հերթով ամեն ինչ կպատմեմ: Սպասեք, դուք, երևի, ոչինչ չեք կերել. չեք կերել, չէ՞:

— Ինձ ոչ մի բան հարկավոր չէ: Ընթրիք տանը պատվիրել եմ: Դուք էլ նստեք: Երբեք չէի կարծում, որ նա կմեռնի: Հապա մի պատմեք, տեսնեմ դա ինչպես պատահեց: Դուք ասացիք, որ ձեր ջահելները շուտ չե՞ն վերադառնա:

— Այո: Ամեն երեկո հանդիմանում եմ նրանց այդպիսի ուշ դբոսանքների համար, բայց նրանք ինձ չեն լսում: Դե, գոնե խմեք մեր հին էյլը, դա ձեզ կաշխուժացնի, հոգնած տեսք ունեք:

Միսիս Դինը շտապեց էյլ բերելու. շհասցնելով հրածարվել, ես լսում էի, թե ինչպես Զոզեֆը հարցնում էր ռբա աղաղակող խայտառակություն չէ՞, որ նա այդ տարիքում կավալերներ է ընդունում և տիրոջ նկուղից էլ սափորով էյլ է բերում, որ հյուրասիրի նրանց: Ուղղակի ամոթ է նայել այդպիսի բաներին և լռել:

Միսիս Դինը նրան շհակաճառեց և մի ըոպեից վերադարձավ, հետը բերելով բերնեբերան լցրած, փրփրակալած արծաթե աման, որի բովանդակությունը պատշաճորեն գովեցի: Իսկ հետո նա շարունակեց Հիթթըլիֆի պատմությունը: Վերջինս, միսիսի խոսքերով, «տարօրինակ» վախճան ունեցավ:

— Ինձ Մուկպին հողմերի դարավանդ կանչեցին ձեր գնալուց երկու շաբաթ հետո, — ասաց միսիսը, — և ես սիրով ենթարկվեցի՝ ի սեր Քեթրինի: Նրա հետ ունեցած իմ առաջին տեսակցությունը վշտացրեց ու ցնցեց ինձ. մեր անջատման ժամանակից ի վեր նա շատ էր փոխվել: Միստր Հիթթըլիֆը շուզեց բացատրել, թե ինչու իմ տեղափոխման հարցը հանկարծ այլ կերպ որոշեց, միայն ասաց, որ ես իրեն հարկավոր եմ և որ ինքը ձանձրացել է Քեթրինին տեսնելուց: Ես պետք է նստեմ փոքր հյուրասենյակում և նրա հարսին պահեմ իմ

կողքին: Բավական էր և այն, որ ինքն ստիպված էր լինում օրը մեկ-երկու անգամ նրան տեսնել:

Քեթրինը, ասես, ուրախացավ այդպիսի կարգավորումից: Ես մեկը մյուսի հետևից քարշ տվի բերեցի բազմաթիվ գրքքեր և այլ իրեր, որոնք Ագաբակատանը նրան բավականութուն էին պատճառում, և հույս էի փայփայում, որ մենք միասին վատ շենք ապրի:

Այդ պատրանքը երկար շտեկեց: Քեթրինը, որ սկզբում գոհ էր, շուտով դարձավ զղային ու անհանգիստ: Նախ՝ նրան արգելված էր պարտեզի ցանկապատից դուրս անցնել, և երբ գարունը եկավ, նա շատ վրդովվում էր, որ ինքը փակված էր մնում նեղ սահմաններում. երկրորդ՝ տան հոգսերը ինձ ստիպում էին հաճախ նրան մենակ թողնել, և նա գանգատվում էր մենակութունից. գերադասում էր խոհանոցում վեճի բռնվել Զոզեֆի հետ, քան խաղաղ նստել մենության մեջ:

Նրանց ընդհարումները ինձ չէին անհանգստացնում, բայց Հերթընն էլ հաճախ մտնում էր խոհանոց, երբ տերն ուզում էր օջախի մոտ միայնակ մնալ: Հերթընի երևալուն պես Քեթրինը սկզբում կամ թողնում հեռանում էր, կամ էլ սկսում էր հանգիստ օգնել ինձ աշխատանքիս պահին, ջանում էր շնկատել և շղիմել նրան, իսկ Հերթընը միշտ էլ խիստ մթազնած ու լուսկյաց էր, բայց մի որոշ ժամանակ անց Քեթրինը փոխեց իր վարքագիծը և նրան հանգիստ չէր տալիս: Սկսում էր խոսել հետը, քննադատական դիտողություններ անել նրա բթամտության ու ծուլության վերաբերյալ, դարմանք էր արտահայտում, թե ոնց է կարողանում հանդուրժել այդպիսի ապրելակերպը, թե ինչպես է կարողանում ամբողջ երեկո նստել հայացքը կրակին հառած և ննջել:

— Նա իսկը շան նման է, այդպես չէ՞, էլլեն, — մեկ անգամ ասաց Քեթրինը, — կամ՝ կառածի: Աշխատանքը միշտ կատարում է, ուտում և քնում: Եվ ի՞նչ դատարկ ու մոայլ հոգի պետք է ունենա նա... Դուք երբևէ երազ տեսնո՞ւմ եք, Հերթըն: Եվ եթե այո, հապա ի՞նչ եք տեսնում: Բայց ախր դուք չեք կարող խոսել ինձ հետ:

Ապա նայեց Հերթընին, բայց նա շուրթերը բաց չարեց և շպտատախանեց Քեթրինի հայացքին:

— Ահա այժմ էլ, երեի, երազում ինչ-որ բան է տեսնում,— շարունակեց Քեթրինը:— Նա ուսերը թոթվեց Յունոնայի նման: Հարցրու նրան, էլլեն:

— Միտար Հերթընը տիրոջը կխնդրի, որ ձեռք վերև ուղարկի, եթե դուք ձեզ լավ չպահեք,— ասացի ես:

Հերթընը ոչ միայն ուսերը թոթվեց, այլև բռունցքները սեղմեց, կարծես փորձում էր գործի դնել դրանք:

— Ես գիտեմ, թե ինչու է Հերթընը միշտ լռում, երբ ես խոհանոցում եմ լինում,— գոչեց Քեթրինը մի ուրիշ անգամ:— Վախենում է, որ կծիծաղեմ իր վրա: էլլեն, ի՞նչ ես կարծում: Մի անգամ Հերթընը ինքն իրեն սկսեց կարդալ սովորել, իսկ երբ ես ծիծաղեցի նրա վրա, նա գրքերը վառեց և թողեց այդ գործը. բա հիմար չէ՞ր:

— Իսկ դուք շարամիտ չէի՞ք,— հարցրի ես,— այ, դուք գրան պատասխանեք:

— Հնարավոր է, որ այդպես էր,— շարունակում էր Քեթրինը,— բայց ես չէի սպասում, որ նա այդքան հիմար կլիներ... Հերթըն, եթե գիրք տամ ձեզ, կվերցնե՞ք: Հիմա կփորձեմ:— Քեթրինը նրա ձեռքը տվեց իր կարդացած գիրքը: Նա դեռ ջարտեց այն և փնթփնթաց, որ եթե Քեթրինը իլենից ձեռք չբաշի, ինքը կոլորի նրա վիզը:

— Կա՛վ, գիրքը կդնեմ, այ, այստեղ,— ասաց նա,— սեղանի գորոցը և կզնամ քնելու:

Ապա ջնջաց ինձ, որ ես հետևեմ և տեսնեմ՝ արդյոք կվերցնե՞ի, իսկ ինքը գուրս գնաց: Բայց Հերթընը շմոտեցավ պեղանին: Առավոտյան ես այդպես էլ հայտնեցի Քեթրինին՝ ի հիասթափություն իրեն: Ես տեսնում էի, որ զղջում էր իր համառ շարամտության ցւ անտարբերության համար. խղճի խայթ էր զգում այն բանի համար, որ ինքը նրան վախեցրեց, երբ նա ուզում էր սովորել: Այդ բանում նա իսկապես հաջողության հասավ:

Բայց նրա միտքը շարունակ միջոց էր փնտրում, որ ուղղի իր պատճառած շարիքը. երբ սկսում էի արդուկ անել կամ տեղում մեխված դրաղվել մի այլ գործով, որը հյուրասենյակում չէի կարող անել, Քեթրինը բերում էր մի որեէ լավ գիրք և սկսում էր բարձրաձայն կարդալ ինձ համար: Եվ եթե Հերթընը ներկա էր լինում, ամենահետաքրքրական տեղում

նա ընդհատում, գիրքը թողնում էր խոհանոցում. և այդպես էր անում շարունակ. բայց Հերթընը համառ էր ջորու պես և, Քեթրինի խայծի վրա նետվելու փոխարեն, խոնավ եղանակին նստում էր Զոզեֆի կողքին ու ծխում: Նրանք նստում էին արձանների պես կրակի մոտ՝ մի կողմում նա, իսկ մյուսում՝ Զոզեֆը. բարեբախտաբար, ավագը շատ խուլ էր և չէր կարող հասկանալ Քեթրինի «հանցավոր բարբաջանքը», ինչպես ինքը դա կանվաներ, իսկ կրտսերը, ինչքան կարող էր, աշխատում էր ուշադրություն չդարձնել: Պարզկա երեկոներին Հերթընը գնում էր որսի, իսկ Քեթրինը հորանջում էր ու հառաչում, կաշում ինձ, որ խոսեմ հետը, բայց հենց որ սկսում էի, նա դուրս էր թռչում բակ կամ պարտեզ և, ի վերջո, դիմում էր վերջին միջոցի՝ լալիս էր, ասելով, որ ինքը ձանձրացել է ապրելուց և որ իր կյանքն անօգուտ է:

Միստր Հիթքլիֆը, որն ավելի ու ավելի էր խորշում մարդկանցից, էրնշոուին համարյա վոնդեց սենյակից: Իսկ մի գծբախտ դեպքից հետո, որ պատահեց նրա հետ մարտի սկզբներին, տղան մի քանի օր շարունակ հաստատվեց խոհանոցում: Երբ նա թափառում էր բլուրներում, հրացանն ինքն իրեն կրակեց. մի փոքր բեկոր վիրավորեց նրա թևը, և մինչև տուն հասնելը նա շատ արյուն կորցրեց: Հետևանքը եղավ այն, որ Հերթընը կամա-ակամա, մինչև լավանալը, դատապարտված էր հանգիստ նստել օջախի մոտ:

Քեթրինի համար դա հարմար առիթ էր. համենայն դեպս, դրանից հետո վերևի սենյակը նրա համար դարձավ էլ ավելի ատելի, և նա շարունակ ստիպում էր ինձ, որ իր համար խոհանոցում մի աշխատանք գտնեմ, որպեսզի ինքն էլ ինձ հետ միասին նստեր այնտեղ:

Զատիկի երկրորդ օրը Զոզեֆը անասուն տարավ Գիմմերթընի տոնավաճառ, իսկ ես ճաշից հետո խոհանոցում զբաղվեցի սպիտակեղենով. էրնշոուն, ինչպես միշտ, տխուր նըստած էր բուխարու մոտ, իսկ իմ փոքրիկ տիրուհին, որպեսզի մի կերպ ժամանակ անցկացնի, նկատում էր լուսամուտի ապակու վրա և երբեմն էլ հանկարծ սկսում էր կամաց երգել, շնչալ ինչ-որ բաներ և, վրդովված, արագ հայացք գցել իր քնու տղայի վրա, որ համառորեն շարունակում էր ծխել ու նայել բուխարու երկաթե վանդակին:

Ես դիտողութիւն արեցի, ասելով, որ այլևս չեմ կարող գործ անել, եթե նա շարունակի լուսի առաջը կտրել, ՔԼԹ-րինը թողեց իր զբաղմունքը և մտտեցավ օջախին: Ես այլևս ուշադրութիւն չդարձրի նրա մտադրութիւններին, բայց հանկարծ լսեցի այսպիսի խոսքեր.

— Ես, Հերթըն, հայտնաբերել եմ, որ կամենում եմ... որ ես ուրախ եմ... և կուրախանայի, որ դուք՝ իմ քեռու տղան եք, եթե միայն ինձ հետ այդպես բարկացկոտ ու կոպիտ չլինեիք:

Հերթընը շատասխանեց:

— Հերթըն, Հերթըն, Հերթըն, լսո՞ւմ եք,— շարունակում էր Քեթրինը:

— Հանգիստ թողեք ինձ,— մոնչաց նա անզիջում խստութեամբ:

— Թույլ տվեք վերցնել այս,— ասաց նա, զգուշութեամբ ձեռքը պարզեց և ծխամորճը հանեց նրա բերանից:

Հերթընը չհասցրեց փորձել ծխամորճը հետ խել, այն արդեն ջարդված, նետված էր կրակի մեջ: Նա հայհոյեց Քեթրին և վերցրեց մեկ ուրիշը:

— Սպասեք,— բղավեց Քեթրինը,— նախ դուք պետք է լսեք ինձ, իսկ ես չեմ կարող խոսել, երբ ծխի քուլաներ են փչում երեսիս:

— Չէի՞ք ցանկանա գնալ գրողի ծոցը,— գոռաց նա, ցատումնալից,— և ինձ հանգիստ թողնել:

— Ոչ,— համառում էր Քեթրինը,— չեմ գնա: Չգիտեմ, էլ ի՞նչ անեմ, որ ստիպեմ ձեզ խոսել ինձ հետ, երբ դուք որոշել եք չհասկանալ ինձ: Եթե ձեզ հիմար եմ կոչում, դա ոչինչ չի նշանակում. դա բոլորովին չի նշանակում, որ ես ձեզ արհամարհում եմ: Թողեք, Հերթըն, դուք չեք կարող չնկատել ինձ, դուք իմ քեռու տղան եք, և ժամանակն է, որ ճանաչեք ինձ:

— Ես արհամարհում եմ ձեր այդ գարշելի հպարտութիւնը, սնիծյալ ծաղրուծաւակով հանդերձ,— պատասխանեց նա:— Ավելի շուտ ողջ-ողջ դժոխք կգնամ, քան աչքի տակով կնայեմ ձեզ: Այս բոպէհս շքվեք իմ աչքից:

Քեթրինը հոնքերը կիտեց և գնաց պատուհանի մոտ՝

կընտենելով շրթունքը, մոմուսով տարօրինակ մի երգ և աշխատելով թաքցնել բարձրացող հեկեկոցը:

— Դուք ձեր հորաքրոջ աղջկա հետ պետք է բարեկամներ լինեք, միտար Հերթըն, — միջամտեցի ես, — եթե նա զղջում է իր անբաղաբավարության համար, դա ձեզ շատ օգտակար կլինի, բոլորովին այլ մարդ կդառնաք, եթե ձեր ընկերը լինի:

— Ընկե՞ր, — գոռաց Հերթընը, — երբ նա ատում է ինձ և անարժան է համարում իր կոշիկի կեղտը մաքրելու: Ո՞չ: Եթե դա ինձ թագավոր էլ դարձնի, ես այլևս չեմ հանդուրժի, որ նա իրեն դուր գալու իմ ջանքերը ծաղրի:

— Ոչ թե ես եմ ձեզ ատում, այլ դուք՝ ինձ, — լաց եղավ Քեթրին՝ այլևս չկարողանալով թաքցնել իր հուզմունքը: — Դուք ատում եք ինձ միտար Հիթթլիֆից ոչ պակաս, նույնիսկ ավելի շատ:

— Դուք պարսավանքի արժանի ստախոս եք, — սկսեց էրնշոուն, — հապա ինչի՞ էի նրան հարյուր անգամ ջգայնացնում՝ անցնելով ձեր կողմը. և դա այն ժամանակ, երբ դուք ինձ ծաղրում և արհամարհում էիք և... եթե դուք շարունակեք ինձ տանջել, ես կգնամ վերև և կասեմ, որ դուք ինձ գուրս արեցիք խոհանոցից:

— Ես չգիտեի, որ դուք ինձ կողմնակից էիք, — պատասխանեց Քեթրինը՝ աչքերը սրբելով, — ես դժբախտ էի, շարացած էի բոլորի դեմ, բայց այժմ ջնորհակալ եմ ձեզնից և ներում եմ խնդրում. էլ ուրիշ ի՞նչ կարող եմ անել:

Քեթրինը մոտեցավ օջախին և անկեղծորեն ձեռքը մեկնեց: Հերթընը հոնքերը կիտեց, մթազնեց ամպրոպաբեր ամպի պես և, վճռականությամբ սեղմելով բուռնքները, հայացքը հառեց հատակին:

Քեթրինը, ըստ երևույթին, բնագործին գուշակեց, որ այդպիսի վարքագիծը առաջացել է ոչ թե ատելությունից, այլ համառ կամակորուստներից. մի վայրկյան կանգնելով անվճռականության մեջ՝ նա կուսացավ ու մեղմորեն համբուրեց Հերթընի այտը:

Չարաճճի խորամանկը կարծում էր, թե ես ոչինչ չտեսա, և, հետ քաշվելով, միանգամայն հանգիստ, իր տեղը դրավեց պատուհանի մոտ:

Ես հանդիմանաբար գլուխս ձոճեցի, և այդ ժամանակ նա շիկնեց ու շշնջաց.

— Իսկ ի՞նչ կարող էի անել, էլլին: Հերթընը չէր ուզում իմ ձեռքը սեղմել և չէր կամենում նայել ինձ վրա, բայց, ախր, ես մի կերպ պետք է ցույց տայի նրան, որ նա ինձ դուր է գալիս... որ ես ուզում եմ ընկերություն անել նրա հետ:

Արդյոք համբու՞լյրը համոզեց Հերթընին՝ չեմ կարող ասել, բայց մի քանի րոպե նա ամեն կերպ աշխատում էր, որ մենք իր երեսը շտեպենք, իսկ երբ գլուխը բարձրացրեց, սարսափելի շփոթված էր և չգիտեր, թե հայացքը որ կողմը շրջի:

Քեթրինը զբաղմունք դտավ. սկսեց գեղեցիկ գիրքը խնամքով փաթաթել սպիտակ թղթի մեջ. ժապավենով կապելուց հետո այն հասցեագրեց՝ «Միստր Հերթըն էրնշոուին», խընդրեց ինձ իր միջնորդը լինել և նվերը հանձնել Հերթընին:

— Եվ ասա, եթե ընդունի, ես կդամ և նրան կսովորեցնեմ ճիշտ կարգալ,— ավելացրեց Քեթրինը,— իսկ եթե մերժի, կգնամ վերև և այլևս երբեք իրեն չեմ ձանձրացնի:

Ես տարա և նրա ասածը կրկնեցի իր իսկ ուշադիր հայացքի տակ: Հերթընը բռունցքները բաց շարեց, ուստի փաթեթը դրեցի նրա ծնկներին. նա դեռ չնետեց այն: Ես վերադարձա իմ աշխատանքին: Քեթրինը գլուխը հակել էր սեղանին դրած ձեռքերի վրա, մինչև որ լսեց բացվող փաթեթի թեթև խշշոցը. այն ժամանակ Քեթրինը աննկատելիորեն գնաց և կամաց նստեց իր քեռու տղայի կողքը: Հերթընը դողում էր, դեմքն այրվում էր, նրա ամբողջ կոպտությունը և ողջ մոռյլ խստությունը վերացել էին. սկզբում նա չհամարձակվեց, որ գոնե մի վանկ արտաբերի ի պատասխան Քեթրինի քննող հայացքի և շշնջոցով ասվող խնդրի:

— Ասացեք, որ ինձ ներում եք, Հերթըն, դե, ասացե՛ք: Գուք կարող եք այնպես երջանկացնել ինձ, եթե միայն ասեք այդ միակ բառը:

Հերթընը ինչ-որ անհասկանալի բան մրթմրթաց:

— Եվ դուք կդառնաք իմ ընկե՞րը,— ավելացրեց Քեթրինը հարցական:

— Ոչ, դուք ստիպված կլինեք ձեր կյանքում ամեն օր կարմրել ինձ համար,— պատասխանեց նա,— որքան ավել-



լի շատ ճանաչեք ինձ, այնքան ավելի ամոթահար կլինեք.
ես դա չեմ կարող հանդուրժել:

— Ուրեմն չե՞ք ուզում իմ ընկերը լինել, — մեղրածոր
ժպիտով ասաց Քեթրինը ու ավելի մոտ նստեց:

Քե ինչի մասին էին նրանք հետո խոսում, չէր լավում,
բայց երբ նորից նայեցի, տեսա նվիրած գրքի վրա հակված
երկու այնպիսի՝ լուսաշող դեմք, որ այլևս կասկած չունեի՝
պայմանագիրը հաստատված էր երկու կողմից. և երդվյալ
թշնամիները դարձան դաշնակիցներ:

Գրքում շատ կային հրաշալի նկարներ. թե դրանք, և թե
նրանք՝ իրար կողքի նստած, բավական հմայիչ էին: Նստել

էին անշարժ, մինչև որ ներս մտաւ Զոզեֆը: Այդ խեղճ մարդուն պարուրեց կատարյալ սարսափը, երբ տեսաւ, որ Քեթրինը Հերթըն էրնշոուի հետ միևնույն նստարանին նստած, ձեռքը դրել է նրա ուսին. նա շփոթվեց, երբ տեսաւ, որ իր սիրած տղան հանդուրժում է աղջկա մոտիկութիւնը: Դա այնպէս խորը վիրավորեց ծերուկին, որ այդ երեկո նա իրեն թույլ շտվեց որևէ դիտողութիւն անել նրանց հասցեին: Նրա հուզմունքը մատնում էին լոկ իր արձակած հուսահատ հառաչանքները, երբ հանդիսավորութեամբ սեղանի վրա բաց արեց մեծ աստվածաշունչը և դրա վրա սկսեց դարսել կեղտոտ բանկնոտներ՝ հանելով ծոցատետրի միջից. դա օրվա գործարքներից ստացած հասույթն էր: Ի վերջո, նա իր մոտ կանչեց Հերթընին:

— Սրանք տանտիրոջը տուր, տղաս,— ասաց նա,— և մնա այնտեղ, ես գնում եմ իմ սենյակը: Իսկ այս տեղը մեզ համար չէ, կարիք չկա մնալ. մենք պետք է ուրիշ տեղ գտնենք մեզ համար:

— Գնանք, Քեթրին,— ասացի ես,— մենք էլ պետք է առանձնանանք. ես արդուկելը վերջացրի. դուք պատրաստ եք:

— Դեռ ժամը ութը չկա,— պատասխանեց նա, դժկամորեն վեր կենալով:— Հերթըն, այս գիրքը կթողնեմ բուխարու դարակի վրա, մի քանի հատ էլ վաղը կրեմ:

— Ինչ գիրք էլ դուք թողնեք այստեղ, ես կտանեմ տուն,— ասաց Զոզեֆը,— և դեռ լավ կլինի, եթե նորից գտնեք այն: Դե, ինչպե՞ս կամենում եք:

Քեթրին սպառնաց, որ նա ստիպված կլինի իր սեփական գրադարանով հատուցել իր գրքերի դիմաց. և Հերթընի մոտով անցնելիս՝ ժպտաց ու երգելով դնաց վերև իր սենյակը: Դեռ երբեք, համարձակվում եմ ասել, այս տանիքի տակ, նա այդպիսի թեթևութիւն չէր զգացել, բացի, թերևս, կինթընի հետ ունեցած իր առաջին տեսակցութիւնների պահից:

Այդ սերտ բարեկամութիւնը արագորեն ամրապնդվում էր, թեև Լորենն տեղի կլին ունենում և կարճ ընդհարումներ: Էրնշոուն չէր կարող, միայն ցանկութեամբ, կուտուրական մարդ գտնար, իսկ իմ ջահել տիրուհին էլ ո՛չ փրկուսիք էր և ո՛չ էլ համբերատարութեան տիրուհի, բայց քանի որ երկուսի

մտտ էլ հողու բուլբու ուժերը ձգտում էին նույն նպատակին,— քանի որ մեկը սիրում և ցանկանում էր հարգել սիրելիին, իսկ մյուսը սիրում և ցանկանում էր, սր իրեն հարգեն,— նրանք, վերջ ի վերջո, հասան իրենց նպատակին:

Տեսնում եք, միստր Լոքվուդ, թե որքան հեշտ էր նվաճել միսիս Հիթթլիֆի սիրտը, բայց ես այժմ ուրախ եմ, որ դուք չէիք էլ փորձում: Այդ երկուսի միությունը կլինի իմ բոլոր ցանկությունների լուսատուսակը. նրանց հարսանիքի օրը ես ոչ մի մարդու չեմ նախանձի. Անգլիայում չի գտնվի մի կին, որ ինձնից ավելի երջանիկ լինի:

ԳԼՈՒԽ ԵՐԵՍՈՒՆԵՐԵՔԵՐՈՐԳ

— Հաջորդ օրը, երեքշաբթի առավոտյան, էրնշտուն դեռ ի վիճակի չէր զբաղվելու իր սովորական աշխատանքով և, իհարկե, տանն էր մնացել. ես շատ շուտ համոզվեցի, որ ինձ չի հաջողվի իմ կողքին պահել իմ խնամարկյալին, ինչպես պահել էի մինչ այդ:

Նա ինձնից ավելի շուտ իջավ ներքև, ապա գնաց պարտեզ, որտեղ Հերթընը ինչ-որ թեթև աշխատանք էր կատարում: Երբ ես դուրս եկա նրանց նախաճաշի կանչելու, տեսա Քեթրինը համոզել էր Հերթընին մի մեծ կտոր հողամաս մաքրել հաղարջենու և փշահաղարջենու թփերից, և երկուսով միասին քննարկում էին, թե Ագարակատնից ինչ սածիլներ բերեն ու տնկեն այդտեղ:

Ընդամենը կես ժամվա մեջ կատարված ամայացումից ես սարսափեցի. սև հաղարջենու թփերը աչքի լույսի պես թանկ էին Ջոզեֆի համար, և հենց դրանց մեջ էլ Քեթրինը մտածել էր ծաղիկների ածունիք գցել:

— Դե,— գոչեցի ես,— այս ամենը հենց որ բացվի, ցույց կտրվի տիրոջը: Դուք ինչպե՞ս եք արդարանալու, որ թույլ եք տալիս տիրություն անել պարտեզում: Եվ վայ ձեզ, միստր Հիրթըն, զարմանում եմ, մի՞թե ձեր խելքը միայն այդքան է կտրում, որ վիրցնեք ու անկարգություն անեք Քեթրինի ցուցմունքով:

— Ես մոռացել էի, որ դրանք Ջողեֆի թփերն են,— պատասխանեց էրնշտուն, վոքըր-ինչ շփոթվելով,— բայց նրան կասեմ, որ դա ես եմ արել:

Մենք միշտ էլ ուտում էինք միստը Հիթբլիֆի հետ միասին: Ես կատարում էի տանտիրուհու դերը՝ թեյ էի լցնում, միս ու հաց կտրատում. այնպես, որ ճաշին իմ ներկայութունն անհրաժեշտ էր. Քեթրինը սովորաբար նստում էր իմ կողքին. բայց այսօր նա նստել էր Հերթընին ավելի մոտ, և ես իսկույն հասկացա, որ նա այլևս չէր ուզում թաքցնել իր բարեկամութունը, ինչպես նախկինում չէր թաքցնում իր թշնամութունը:

— Դե, շատ մի խոսեք և շատ էլ մի նկատեք ձեր քնուտղային,— շնչացի ես, երբ ներս էինք մտնում ճաշասենյակ:— Դա, իհարկե, միստը Հիթբլիֆին դուր չի գա, և նա կկատաղի ձեր երկուսի վրա էլ:

— Մտքովս էլ չի անցնում,— պատասխանեց Քեթրինը:

Մի րոպե հետո նա թեքվեց Հերթընի կողմը և սկսեց դարնանածաղիկ խոթել նրա վարսակաշիլայով ամսեի մեջ:

Հերթընը չէր համարձակվում խոսել նրա հետ. նույնիսկ չէր համարձակվում նայել նրան, և, սակայն, Քեթին շարունակում էր նրան ձեռք առնել և երկու անգամ նրան այնպիսի դրուձյան մեջ գցեց, որ սա քիչ մնաց ծիծաղեր. ես հոնքերս կիտեցի, և Քեթրինը խեթ-խեթ նայեց ախրոջը, որի մտքերը ավելի շատ դբաղված էին այլ բաներով, քան շրջապատող հասարակությամբ, ինչպես ցույց էր տալիս նրա դեմքի արտահայտությունը. Քեթրինը մի րոպե խելոքացավ և խորին լրջությամբ զննում էր նրան: Հետո շուտ եկավ և նորից սկսեց անհեթեթություններ դուրս տալ. ի վերջո, Հերթընի զսպված ծիծաղը պայթեց:

Միստը Հիթբլիֆը ցնցվեց. նրա աչքերն արագորեն սուհեցին մեր դեմքերի վրայով: Քեթրինը դրան պատասխանեց իրեն հատուկ ջղագրգիռ և, այդուհանդերձ, մարտական հայացքով, որն այնպես կատաղեցնում էր տիրոջը:

— Կավ է, որ ձեռքս չի հասնում ձեզ,— գոռաց միստը Հիթբլիֆը:— Այդ ի՞նչ սատանա է նստած ձեր մեջ, որ այդ դիվային աչքերով շարունակ նայում եք ինձ: Գրողի՞ ծոցը:

Նորից մի հիշեցրեք ինձ ձեր գոյության մասին: Ես էլ կարծում էի, թե ձեզ հետ են սովորեցրել ծիծաղելուց:

— Այդ ևս էի ծիծաղում,— փնթփնթաց Հերթրնը:

— Ի՞նչ ասացիր,— հարցրեց տերը:

Հերթրնը աչքերը հռոնց ափսեին և խոսսովանությունը շարկնեց:

Միտոր Հիթքլիֆը թիթևակի նայեց նրան և ապա լռելյայն վերսկսեց իր նախաճաշը և վերագարծավ իր ընդհատված մտածմունքին:

Մենք համարյա ավարտելու վրա էինք, և ջահելները խելամտորեն բաժանվել էին իրարից, այնպես որ սեղանի շուրջը ես նոր տհաճություններ չէի կանխատեսում, երբ դռան մեջ երևաց Ջոզեֆը, որի դողացող շուրթերը և ցասումնալից հալացքը ցույց էին տալիս, որ նրա թանկագին թփերին հասցրած վնասը բացահայտվել էր:

Նա, հավանաբար, տեսել էր Քեթրին ու նրա քեռու տղային պարտեզի այդ տեղում և գնաց ստուգելու, թե ինչ էին արել այնտեղ: Նրա ծնոտները կոպի պես որոճում էին, այնպես որ դժվար էր մի բառ անգամ հասկանալ, և ասաց.

— Ստիպված եմ խնդրել ոռճիկս, քանի-որ պետք է թողնեմ, հեռանամ: Ես որոշել էի մեռնել այնտեղ, որտեղ ծառայել եմ վաթսուն տարի. կարծում էի՝ գրքերս կհավաքեմ, կտանեմ ինձ մոտ ձեղնահարկ իմ այլ իրերի հետ միասին, իսկ խոհանոցը կթողնեմ նրանց: Դժվար է հրաժարվել ընտանեկան օջախից: Ինչ որ է, վճռեցի զիջել նրանց իմ անկյունը: Բայց դա քիչ էր՝ հիմա Քեթրինը խլեց ինձնից նաև պարտեզը, իսկ դա, տեր իմ, խղճով ասած, ես չեմ կարող հանդուրժել: Մի ուրիշը գուցեև մեջքը ծոփ լծի տակ, ես այդ քանին սովոր չեմ և չեմ հաշտվի նոր դժվարությունների հետ: Ավելի լավ է, գնամ մուրճով ճգնեմ ճանապարհի վրա, քրպեսզի հաց և ապուր վաստակեմ ինձ համար:

— Դե, դե, ապուրի մեկը,— ընդհատեց Հիթքլիֆը,— կարճ կտրիր. ինչո՞վ են քեզ վշտացրել: Ես չեմ խառնվի քո և Նելլիի բանավեճին: Նա է քեզ նետել ածխի մառանը, ինձ համար միևնույն է:

— Ես Նելլի մասին չեմ ստում,— պատասխանեց Ջոզեֆը,— Նելլիի պատճառով չէ, որ ես հեռանում եմ, ինչքան

էլ նա շար, անպիտք արարած լինի: Նեղլին, փառք աստծո, ոչ ոքի հոգին չի գողանա: Նա երբեք այնքան գեղեցիկ չի եղել, որ նային նրան առանց աչքը կտրելու: Աստծու աչքից ընկած անառակի մասին է, որը իր այդ լկտի աչքերով ու անամոթ վարքով այնպես է կախարդել մեր Հերթընին, որ տղան... ոչ, սիրտս կտոր-կտոր է լինում: Նա մոռացել է այն ամենը, ինչ ես նրա համար արել եմ, և զնացել, արմատից պոկել է պարտեզի ամենալավ հաղարչինու թփերը:— Եվ այստեղ ծերուկը սկսեց, տղամարդուն ոչ վայել, անմիջապես զանգատվել իրեն հասցրած վիրավորանքից և ապերախտ էրնշուուից, որը բռնել է կործանման ուղին:

— Այս տխմարը հո հարբած չէ՞, — հարցրեց Հիթքլիֆը, — Հերթըն, բայց նա քե՞զ է մեղադրում:

— Այո, ես քոքահան եմ արել երկու-երեք թուփ, — պատասխանեց պատանին, — բայց ուզում եմ դրանք նորից տնկել:

— Իսկ ինչո՞ւ ես արել, — ասաց տերը:

Քեթրինը որոշեց ինչ-որ ձևով խառնվել խոսակցությանը:

— Մենք ուզում էինք այդտեղ ծաղիկներ տնկել, — ճշաց նա: — Մեղավորը ես եմ, որովհետև ես խնդրեցի նրան:

— Իսկ ձեզ ո՞ր սատանան թույլ տվեց դիպչել թեկուզև մեկ ձողիկի, — հարցրեց նրա սկիսրայրը, խիստ զարմացած: — Եվ ո՞վ քեզ հրամայեց լսել նրան, — ավելացրեց նա՝ դիմելով Հերթընին: Տղան լուռ մնաց. նրա փոխարեն պատասխանեց հորաքրոջ աղչիկը:

— Դուք հո չեք ափսոսա, որ մի քանի յարդ հող տաք ծաղկանոցի համար, երբ ինքներդ զավթեցիք իմ ամբողջ կալվածքը:

— Քո՞ կալվածքը, անպիտքի մեկը: Դու այն երբեք չես ունեցել, — ասաց Հիթքլիֆը:

— Եվ իմ փողերը, — շարունակեց Քեթրինը, համարձակորեն հանդիպելով նրա զայրալից հայացքին և, միաժամանակ կրծելով հացի շորուկը՝ իր նախաճաշի մնացորդը:

— Լո՞ւ, — գոռաց Հիթքլիֆը, — կեր վերջացրու և դուրս կորիր:

— Նաև Հերթընի հողը, նրա փողերը, — շարունակում էր

անխոհեմ աղջիկը:— Հերթընը և ես այժմ բարեկամներ, ենք. և ես նրան ամեն ինչ կպատմեմ ձեր մասին:

Տերը, ասես, մի պահ շփոթվեց, գունատվեց, ոտքի ելավ՝ մահացու ատելութւյան հայացքն անթարթ սևեռելով աղջկա վրա:

— Եթե ինձ հարվածեք, Հերթընն էլ ձեզ կհարվածի,— ասաց Քեթրինը,— ուստի ավելի լավ է, նստեք ձեր տեղը:

— Եթե Հերթընը քեզ սենյակից դուրս շվոնդի, ես մի հարվածով նրան կուղարկեմ տարտարոս,— որոտաց Հիթքլիֆը:— Նզովյա՛լ վհուկ: Դու համարձակվում ես նրան գրգռել ի՞մ դեմ: Դո՛ւրս այստեղից: Լսո՞ւմ ես: Շարտիր նրան խոհանոց... ես կսպանեմ նրան, էլլին Դին, եթե թույլ տաս նրան թեկուզև մեկ անգամ նորից երևա իմ աչքին:

Հերթընը շշուկով փորձեց համոզել Քեթրինին, որ հեռանա:

— Դո՛ւրս քարշ տուր դրան,— կատաղած գոռաց տերը:— Դու դեռ կանգնել ու խոսո՞ւմ ես,— և նա մոտեցավ, որ կատարի իր հրամանը:

— Հերթընը, շար մարդ, այլևս չի ենթարկվի ձեզ,— ասաց Քեթրինը:— Եվ շատ շուտով նա կսկսի ձեզ ատել նույնքան, որքան և ես:

— Հանդի՛ստ, կամա՛ց,— կշտամբանքով փնթփնթաց Հերթընը:— Ես չեմ ուզում լսել, թե դուք ինչպես եք նրա հետ խոսում: Բավակա՛ն է:

— Բայց դուք թույլ կտա՞ք, որ նա ինձ ծեծի,— ճշաց Քեթրին:

— Հեռացեք,— շնչաց նա լրջորեն:

Բայց շատ ուշ էր: Հիթքլիֆը արդեն բռնել էր աղջկան:

— Հիմա դու հեռացիր,— ասաց նա էրնշոուին:— Այդ անիծյալ վհուկը ջլայնացրեց ինձ և այն էլ այս պահին, երբ էլ չեմ դիմանում: Ես նրան կստիպեմ մեկընդմիշտ զղջալ:

Նա ձեռքը կոխեց աղջկա մազերի մեջ. Հերթընը փորձեց մազերն ազատել նրա ձեռքից՝ խնդրելով տիրոջը այս անգամ չխփել նրան: Հիթքլիֆի սև աչքերը վառվում էին, թվում էր, թե ուր որ է Քեթրինին կտոր-կտոր կանի. ես փորձեցի օգնութւյան հասնել և փրկել նրան, երբ հանկարծ տիրոջ մատնէր բացվեցին, հիմա էլ բռնեց աղջկա թևը և սևեռուն նայեց նրա դեմքին, ամուլ փակեց նրա աչքերը, մի պահ կանգ

առավ, ասես ուզում էր ուշքի գալ, և, նորից դառնալով Քեթ-րինին, շինծու հանդստույթյամբ ասաց.

— Դուք պետք է սովորեք ձեզ պահել այնպես, որ ես չկատաղեմ, այլապես մի օր իսկապես կսպանեմ ձեզ: Գնացեք միսիս Դինի մոտ, նստեք նրա կողքին և ձեր հանգիստ խոսքերը նրա ականջին ասեք: Իսկ ինչ վերաբերվում է Հերթըն էրնշոուին, ապա, եթե տեսնեմ, որ նա լսում է ձեզ, ես նրան կհեռացնեմ այստեղից և թող փնտրի, թե որտեղ կարող է հաց վաստակել: Ձեր սերը նրան կդարձնի վտարանդի ու մուրացկան... Նեյլի, տարեք սրան. և դուք բոլորդ էլ ինձ հանգիստ թողեք, հեռացեք:

Ես իմ ջահել տիկնոջը տարա հետս. նա շատ ուրախ էր, որ այդպես էժան պրծավ, և շղիմադրեց: Մյուսաները հետեցին մեզ, իսկ միստր Հիթքլիֆը մինչև ճաշ միայնակ փակված մնաց ճաշասենյակում:

Ես Քեթրինին խորհուրդ տվի ճաշել վերևում. բայց հենց որ Հիթքլիֆը նկատեց, որ նրա տեղը դատարկ է, ինձ ուղարկեց նրա հետևից: Ինքը ոչ մեկիս հետ չէր խոսում, ուստի էր շատ քիչ և ճաշից անմիջապես հետո գնաց՝ նախադուռը շարժելով, որ մինչև երեկո չի վերադառնա:

Երկու բարեկամները, նրա բացակայության պահին, տեղավորվեցին տան մեջ, և ես լսեցի, թե ինչպես Հերթընը խիստ տոնով ընդհատեց իր հորաքրոջ աղջկան, երբ սասկսեց սկեսրայրին մերկացնել իր հոր՝ Հինդլիի նկատմամբ ունեցած վարմունքի համար:

Հերթընն ասաց՝ ինքը թույլ չի տա, որ անարգեն տիրոջը: Եթե նա սատանա էլ լինի, դա ոչ մի նշանակություն չունի. ինքը միևնույն է, կպաշտպանի նրան և ավելի շուտ կուղինա, որ Քեթրինը, սովորականի պես, հայհոյի իր հորը և ոչ թե միստր Հիթքլիֆին:

Լսելով այդ՝ Քեթրինը դայրացավ, բայց Հերթընը միջոց գտավ ստիպելու նրան, որ լռի. նա հարցրեց, թե նրան ինչպես դուր կգար, եթե ինքը սկսեր վատաբանել նրա հորը: Այն ժամանակ Քեթին հասկացավ, որ էրնշոուն նեղանում է, երբ նսեմացնում են իր տիրոջը. նա ամուր կապերով կապված էր նրա հետ, բանականությունը չէր կարող քանդել սովորության շղթաներով ամրացված այդ կապերը, և անգթու-

թյուն կլինել փորձելը: Քեթրինը ցույց տվեց իր սրտի բարությունը. այդ պահից սկսած խուսափում էր գանգատվել Հիթլերիֆից և իր հակակրանքը արտահայտել նրա նկատմամբ. նա խոստովանեց ինձ, ասելով՝ ցավում է, որ փորձել էր թշնամություն սերմանել տիրոջ և Հեթթրնի միջև. իրոք, շեմ կարծում, որ Քեթրին այն ժամանակվանից սկսած, իր քեռու տղայի ներկայությամբ, երբևէ մի վանկ արտաբերած լիներ իր ճնշողի նկատմամբ:

Երբ այդ աննշան տարածայնությունը հարթվեց, նրանք նորից բարեկամներ դարձան, երկուսն էլ՝ թե աշակերտը և թե ուսուցչուհին, շատ ջանասեր էին իրենց բազմազան դրադմունքների մեջ: Աշխատանքն ավարտելուց հետո ես ներս մտա, որ նստեմ նրանց հետ, և ինձ այնքան շոյված ու հանդիստ էի դգում, երբ նայում էի նրանց, որ շնկատեցի, թե ինչպես անցավ ժամանակը: Դուք գիտեք, նրանք երկուսն էլ որոշ շափով ինձ համար ասես հարազատ երեխաներ լինելին. երկար ժամանակ ևս հպարտացել էի մեկով, իսկ հիմա համոզված էի, որ մյուսն էլ կդառնա իմ ուրախության աղբյուրը: Հերթընի ազնիվ, ջերմ բնավորությունը և բնածին խելքը շուտով թոթափեց տգիտության ու նվաստության խավարը, որի մեջ նա դաստիարակվել էր, իսկ Քեթրինի անկեղծ գովասանքները խրախուսում, հորդորում էին նրա ջանասիրությունը: Նրա պայծառացող միտքը լուսավորում էր գեմքը, և դրանից նրա տեսքը դառնում էր կայտառ ու վեհանձն. ևս հազիվ էի կարողանում պատկերացնել, որ իմ առաջ կանգնած էր մի մարդ, որին տեսել էի այն օրը, երբ իմ փոքր լեդիին, Քրեգս զնալուց հետո գտա Մոլեգին հողմերի դարավանդում:

Մինչ ևս հիանում էի նրանցով, նրանք աշխատում էին, մինչև որ մթնշաղը թանձրացավ, վերադարձավ նաև տերը: Նա գլխավոր մուտքից ներս մտավ անսպասելիորեն, տեսավ մեզ երեքիս, նախքան մենք կարողացանք գլուխներս բարձրացնել և նայել նրան:

Է՛հ, մտածեցի ևս, դեռ երբեք ավելի հաճելի ու անմեղ տեսարան չէր եղել, և աղաղակող խայտառակություն կլիներ, եթե նա սկսեր կշտամբել նրանց: Կրակի կարմիր ցուլքը լույս էր շողում նրանց գեղեցիկ գլուխների վրա և լուսավորում մանկական ազահ հետաքրքրությամբ աշխուժացած նրանց

դեմքերը. որովհետև, թեև տղան քսաներեք տարեկան էր, իսկ աղջիկը՝ տասնութ, բայց նրանցից յուրաքանչյուրը հետագայում դեռ շատ նորանոր բաներ պետք է զգար ու իմանար. նրանցից ոչ էեկը դեռ չէր ունեցել և չէր դրսևորել զգաստ, հիասթափված հասունությանը յուրահատուկ զգու՝ մունքներու:

Նրանք միասին աչքները բարձրացրին ու հանդիպեցին Հիթբլիֆի հայացքին. դուք, գուցե, հրբեք շեք նկատել, որ նրանց աչքերը շատ նման են, իսկ դրանք Քեթրին էրնշոուի աչքերն են: Այս Քեթրինը նման չէր առաջինին, բացի, թերևս, լայն ճակատից և ունզների յուրահատուկ կորագծից, որը նրան տալիս էր մի փոքր ամբարտաձան տեսք՝ ուզում էր նա այդ, թե ոչ: Հերթընի նմանությունը զնում էր ավելի հեռուն. այն միշտ էլ եղել էր անսովոր, իսկ այդ պահին հատկապես ապշեցուցիչ էր թվում, երբ նրա զգացմունքները ալեկոծվե՞լ էին և մտավոր ընդունակությունները արթնացել արտասովոր գործունեության համար:

Ես ենթադրում եմ, որ հենց այդ նմանությունն է, որ միստր Հիթբլիֆին զինաթափ արեց. ակնհայտ բորբոքվածությամբ համակված՝ նա մոտեցավ օջախին, բայց այդ վիճակը զատ շուտ էլ մեղմացավ, երբ նայեց հրիտասարդին կամ, ես կասեի, ընդունեց այլ բնույթ, որովհետև ինքը դեռ զբտնրվում էր հուզված վիճակում:

Նա Հերթընի ձեռքից վերցրեց պիրքը, նայեց բաց արած էջը, հետո վերադարձրեց առանց որևէ դիտողության, միայն Քեթրինին նշան արեց, որ հեռանա. նրա ընկերը նրանից հետո երկար չհապաղեց, և ես էլ վերկացա, որ հեռանամ, բայց տերը խնդրեց ինձ նստել տեղում:

— Այս վախճանը ողորմելի է, այնպես չէ՞, — նկատեց նա մի պահ խորհրդածելով այն տեսարանի շուրջ, որին ինքը հենց նոր ականատես եղավ: — Արդյոք սա իմ մոլիգին շանքերի հիմար ավարտը չէ՞: Ես ձեռք բերեցի լծակներ ու բրիչներ, որպեսզի երկու տուն քանդեմ, ինձ վարժեցնեմ այնպես, որ կարողանամ Հերկուլեսի նման աշխատել, և երբ ամեն ինչ պատրաստ է, ամեն ինչ իմ իշխանության տակ է, ես համոզվում եմ, որ երկու տանիքների քանդելու ցանկությունը այլևս չունեմ: Իմ հին թշնամիները չհաղթեցին ինձ: Հիմա

իսկը ժամանակն է, որ վրեժ լուծեմ նրանց երեխաներից: Դա ես կարող եմ, ոչ ոք չի խանգարի ինձ: Բայց դրանից ի՞նչ օգուտ: Ես չեմ ուզում հարված հասցնել, չեմ ուզում նեղություն տալ ինձ և ձեռք բարձրացնել: Դա այնպես է հնչում, ասես ես միայն աշխատում էի ցուցաբերել հիանալի մեծահոգություն, սակայն դա բոլորովին էլ այդպես չէ. պարզապես կորցրել եմ քանդելուց հաճույք ստանալու իմ ընդունակությունը, իսկ ես շափազանց ծուլլ եմ, որ իզուր տեղը քանդեմ:

— Նեւիլի, մոտենում է տարօրինակ փոփոխությունը, ես այժմ դրա ստվերի մեջ եմ: Այնքան քիչ հետաքրքրություն կա իմ ամենօրյա կյանքում, որ ես համարյա մոռանում եմ ուտելն ու խմելը: Այս երկուսը, որ դուրս գնացին սենյակից, միայն նրանք են, որ ինձ համար դեռ պահպանում են իրենց առարկայական գոյությունը, իսկ դա իրականություն է, որը ինձ անտանելի ցավ է պատճառում: Աղչկա մասին չեմ խոսի, նրա մասին մտածել անգամ չեմ ցանկանում. ես իսկապես չեմ ուզում նրան տեսնել, նրա ներկայությունը ինձ խելագարության է հասցնում: Իսկ տղան իմ մեջ արթնացնում է այլ զգացմունքներ, և, այդուհանդերձ, եթե միայն կարողանայի այդ անել առանց խելագար համարվելու, ես նրան հավիտյանս չէի ուզենա տեսնել: Դու, թերևս, մտածիր, որ ես իսկապես խելքս թոցնում եմ,— ավելացրեց նա, ջանալով ժպտալ,— եթե ես փորձեի նկարագրել քեզ անցյալի հազարավոր հիշողություններն ու տեսարանները, որոնք նա արթնացնում կամ մարմնավորում է: Բայց դու, իհարկե, չես խոսի այն մասին, ինչ ես քեզ ասում եմ, իսկ իմ միտքը միշտ էլ այնքան ինքնամփոփ է, որ ես, վերջապես, գայթակղություն եմ ունենում այն դուրս թափել մեկ ուրիշի ներկայությամբ:

Հինգ րոպե առաջ Հերթընը ինձ ոչ թե մի մարդկային՝ էակ էր թվում, այլ իմ երիտասարդության մարմնավորումը: Իմ զգացմունքները նրա հանդեպ այնքան բազմազան էին, որ հնարավոր չէր խելացի խոսքով մոտենալ նրան:

Նախ՝ ապշեցուցիչ նմանությունը Քեթրինին, սարսափելի կերպով տղային կապում է նրա հետ: Դու, երևի, կմտածես, որ դա ավելի ուժեղ պետք է ներգործի իմ Լրևակայության

վրա, բայց իրականում, դա ինձ համար երկրորդական բան է, որովհետև ի՞նչը ինձ շի կապում ՔԼԹրինի հետ, և ի՞նչը ինձ շի հիշեցնում նրան: Ես չեմ կարող ներքև նայել, նրա դեմքը ուրվագծված է սալաքարի վրա: Այդ դեմքը ա՛պի յուրաքանչյուր բեկորի, յուրաքանչյուր ծառի մեջ է. գիշ լցնում է օդը, ցերեկը հայտնվում ամեն մի առարկայի ուրվագծում, շուրջս ամենուրեք նրա պատկերն է: Տղամարդկանց ու կանանց ամենասովորական դեմքերը, իմ սեփական դիմագծերը նմանվում են նրան և հիշեցնում են նրան: Բովանդակ աշխարհը սարսափելի հուշաթերթ է, որը հիշեցնում է ինձ, որ ՔԵԹրինը գոյություն է ունեցել, և որ ես նրան կորցրել եմ:

Այնպես որ Հերթընի կերպարանքը իմ անմահ սիրո, իրավունքներս վերականգնելու իմ կատաղի ջանքերի, ստորացման ու հպարտության, երջանկության և տվալտանքների ուրվականն է...

Իմ այդ մտքերը վերապատմելը խելագարություն է, բայց դա՛ միայն կօզնի ձեզ հասկանալու, թե ինչո՞ւ, որքան էլ անցանկալի լինի ինձ համար իմ մշտնջենական մենությունը, Հերթընի ընկերակցությունը ինձ թեթևություն շի բերում. այն ավելի շուտ խորացնում է իմ հարատև տառապանքը և դա մասամբ էլ պրդում է ինձ անտարբեր լինել, ևրբ տեսնում եմ, թե ինչպես է նա իր հորաքրոջ աղջկա հետ հաշտ ու համերաշխ ապրում: Հիմա ես կարող եմ նրանց վրա այլևս ուշադրություն չդարձնել:

— Բայց դուք ի՞նչը նկատի ունեիք փոփոխություն ասելով, միստր Հիթքլիֆ,— ասացի ես՝ նրա տոնից անհանգստացած, թեև նրան մեռնելու կամ խելագարվելու ոչ մի վտանգ չէր սպառնում: Նա պինդ ու առողջ էր. իսկ ինչ վերաբերվում էր նրա բանականությանը, ապա պետք է ասել, որ մանկության տարիներից ի վեր սիրում էր կանգ առնել կյանքի սովորոտ կողմերի վրա և ընկնում էր անսովոր երեվակայության մեջ. գուցե տառապել է մենամոլությամբ, որի պատճառը իր հանդույցալ կուռքն էր, բայց մնացած բոլոր դեպքերում նրա քանականությունը նույնքան առույզ էր, որքան և իմը:

— Դա ես չդիտեմ, քանի դեռ չի հասել ժամը, — ասաց նա, — հիմա ես միայն նախազգում եմ այն:

— Իսկ դուք չե՞ք շարժվում, որ հիվանդ եք, — հարցրի ես:

— Ոչ, Նեյլի, ոչինչ չեմ զգում, — պատասխանեց նա:

— Ուրեմն դուք մահից չե՞ք վախենում, — շարունակեցի ես:

— Վախենո՞ւմ: Ոչ, — առարկեց նա: — Ոչ երկյուղ ունեմ, ոչ մահվան նախազգացում և ոչ էլ դրա հույսը: Եվ ինչո՞ւ պետք է ունենամ: Իմ պողպատյա կառուցվածքով, իմ շափավոր ապրելակերպով ու անվտանգ զբաղմունքներով, ես հավանաբար, պետք է մնամ երկրի երեսին այնքան ժամանակ, մինչև որ գլուխս լիովին սպիտակի: Եվ, այդուհանդերձ, այսպիսի պայմաններում գոյությունս շարունակել ես չեմ կարող, ստիպված եմ ինքս ինձ հիշեցնել, որ հարկավոր է շնչել... նաև հիշեցնել իմ սրտին, որ բաբախի. կարծես մի ձիգ զսպանակ ես ծռում... լոկ հարկադրված եմ կատարում ամենաթեթև գործողությունը, որին ինձ չի մղում իմ գլխավոր հոգսը և միայն հարկադրաբար նկատում եմ որևէ բան՝ կենդանի կամ մեռած, որը կապված չէ միակ, ամեն ինչ կլանող մտքի հետ... ես ունեմ միայն մեկ ցանկություն, և իմ ամբողջ էությունը, բոլոր ընդունակություններս ձգտում են հասնել դրան: Այն էլ այնքան երկարատև ու անշեղ են ձգտում, որ, համողված եմ, իմ ցանկությունը կկատարվի շուտով, որովհետև այն կլանել է իմ ամբողջ կյանքը. ես ամբողջապես կլանված եմ դրա կատարման նախազգացումներով:

Իմ խոստովանությունները շթեթևացրին ինձ, բայց, գուցե, դրանք բացատրեն վերջերս իմ բնավորության մեջ դրսևորվող մի քանի անմեկնելի շրջադարձներ: Օ՛, աստված իմ, ինչ հարատև պայքար է, գոնե շուտ վերջանար:

Նա սկսեց քայլել սենյակում, քթի տակ փնթփնթալով սարսափելի բաներ, մինչև որ հակվեցի այն մտքին, որին, ինչպես ինքն էր ասում, մոտեցել էր նաև Զոզեֆը, որ խիղճը նրա տիրոջ սիրտը դարձրել էր մի երկրային դժոխք: Ես զարմանում էի, թե սա ինչով է վերջանալու:

Առաջներում էլ Հիթլերիֆը հազվադեպ էր արտաքին տես-

քով մատնում իր հողեկան միճակը, սակայն ևս վաղուց արդեն շէի կասկածում, որ այն նրա համար դարձել էր մի սովորական բան. դա հաստատում էր և ինքը, բայց նրա ամբողջ ապրելակերպից ոչ ոք չէր կռահի այդ փաստը: Ախր դուք էլ, միստր Լոքվուդ, գլխի չէիք ընկնում, երբ հանդիպում էիք նրան, իսկ այն օրերին, որի մասին պատմում եմ, միստր Հիթքլիֆը ճիշտ նույնն էր, ինչպես այն ժամանակ, միայն ավելի շատ էր սիրում մենություն և, թերևս, էլ ավելի սակավախոս էր մարդկանց շրջապատում:

ԳՆՈՒՆ ԵՐԵՍՈՒՆՉՈՐՍԵՐՈՐԳ

Այդ երեկոյից հետո, մի քանի օր միստր Հիթքլիֆը խուսափում էր մեզ հետ սեղան նստելուց, սակայն, չէր կամենում Հերթընին ու Քեթրին ուղղակի դուրս անել: Նա խորշում էր այդպիսի լիակատար զիջում անել իր զգացմունքներին, ավելի շուտ գերադասում էր իրեն հեռու պահել. օրը մեկ անգամ ուտելը բավական էր թվում իր գոյությունը պահպանելու համար:

Մի անգամ գիշերը, երբ բոլորը տանր պառկած էին, ես լսեցի, թե ինչպես նա իջավ ներքև և դուրս գնաց շքամուտքից. նրա գալն ու ներս մտնելը չլսեցի, իսկ առավոտյան համոզվեցի, որ դեռ չէր վերադարձել:

Ապրիլ ամիսն էր, եղանակը մեղմ էր ու տաք, խոտն այնպես կանաչ էր, որպիսին լինում է միայն վարար անձրևների ժամանակ և արեգակի լույսի ներքո. հարավային պատի երկու գաճաճային խնձորենի լրիվ ծաղկել էին:

Նախաճաշից հետո Քեթրինը պնդեց, որ մի բազկաթոռ բերեմ և նստեմ տան ծայրում եղած եղևնիների տակ ու աշխատանքս կատարեմ. այն դժբախտ գեպքից հետո լիովին ապաքինված Հերթընին հրապուրելով համոզեց, որ փորի և մշակի իր փոքրիկ ծաղկանոցը, որը Զոզեֆի գանգատվելու պատճառով տեղափոխվել էր պարտեզի հեռավոր անկյունը:

Ես հանգիստ վայելում էի շրջապատի գարնանային բուրմունքը և իմ գլխավերևի հիանալի մեղմ կապույտը, երբ իմ ջահել տիրուհին, որ վազել էր դարպասի մոտ երիզազարդի համար գարնանածաղկի արմատներ բերելու, վերադարձավ մի քիչ բեռնավորված ու հայտարարեց, որ միտքը Հիթթիֆը գալիս է:

— Խոսեց հետս,— ավելացրեց նա, շփոթված դեմքով:

— Եվ ի՞նչ ասաց,— հարցրեց Հերթընը:

— Հրամայեց, որ շուտ չքվեմ,— պատասխանեց նա:— Բայց սովորականից այնքան էր տարբերվում, որ ես ակամա կանգ առա, որ նայեմ նրան:

— Հը, ի՞նչ կա,— հարցրեց նա:

— Դե, գրեթե զվարթ էր և ուրախ: Ոչ, ի՞նչ «գրեթե», շատ խիստ հուզված էր. և՛ կատաղած էր, և՛ ուրախ,— բացատրեց նա:

— Ուրեմն գիշերային զբոսանքներից էա հաճույք է ստանում,— նկատեցի ես շինծու անհոգ տոնով, իսկ իրականում, ապշել էի նրանից ոչ պակաս: Խորապես հուզված շտապեցի, որսևզվի ստուգեմ նրա խոսքի ճշմարտությունը, որովհետև ամեն օր չէ, որ տիրոջը կարելի է այդպես ուրախ տեսնել, ներողություն խնդրեցի ու գնացի տուն:

Հիթթիֆը կանգնած էր բաց դռան մեջ. նա դժգույն էր ու դողում էր, բայց աչքերն իսկապես պսպղում էին տարօրինակ ուրախ փայլով, որը փոխում էր նրա ամբողջ դեմքի արտահայտությունը:

— Չե՞ք ուզում նախաճաշել,— հարցրի ևս:— Դուք, երևի, ամբողջ գիշեր զբոսնելուց քաղցած կլինեք:

Ուզում էի պարզել, թե որտեղ էր եղել, բայց չէի համարձակվում անմիջապես հարցնել այդ մասին:

— Ոչ, քաղցած չեմ,— պատասխանեց նա՝ դեմքը շուտ տալով և խոսելով ավելի շուտ արհամարհանքով, կարծես կուահում էր, որ ես փորձում եմ գուշակել նրա ուրախ տրամադրությունն պատճառը:

Ես շփոթվեցի. չգիտեի, թե որքան հարմար կլինի նրան դիմել խրատական տոնով:

— Իմ կարծիքով դաշտերում թափառելու փոխարեն,—
ասացի ես,— ավելի լավ է անկողնում լինել. մանավանդ
այսպիսի խոնավ եղանակին: Կարող եք մրսել և ջերմել,
ձեզ հետ ինչ-որ բան է կատարվում:

— Ոչ այնպիսի բան, որին չկարողանամ դիմանալ,—
առարկեց նա,— և կդիմանամ շատ մեծ բավականությամբ,
եթե միայն ինձ հանգիստ թողնեք. ներս անցեք և մի ձանձ-
րացրեք ինձ:

Ենթարկվեցի ու կողքից անցնելով նկատեցի, որ նա կատ-
վի պես արագ էր շնչում:

«Այո,— մտորում էի ինքս ինձ,— հիվանդությունից մենք
չենք ազատվի: Չեմ կարողանում պատկերացնել, թե նա
ինչ էր անում»:

Կեսօրին մեզ հետ միասին նստեց ճաշի և իմ ձեռքից ըն-
դունեց պոունկե-պոունկ լցված ափսե՛ն, ասես ուզում էր
նախկին ծոմերի ժամանակ բաց թողածը լրացնել:

— Ծս մրսած չեմ և տենդ էլ չունեմ, Նելլի,— ասաց նա՝
ակնարկելով առավոտյան ասած իմ խոսքերի մասին:— Եվ
ես պատրաստ եմ պատշաճը հատուցել ձեզ, ինձ մատուցած
կերակրի համար:

Նա վերցրեց դանակն ու պատառաքաղը և պատրաստվում
էր սկսել ճաշը, երբ ուտելու ցանկությունը, ասես, միան-
գամից կորավ: Նա դանակ պատառաքաղը դրեց սեղանին,
անձկալից հայացքը գցեց լուսամուտին, ապա վերկացավ ու
դուրս գնաց:

Մենք տեսնում էինք, թե ինչպես էր նա անցուդարձ անում
պարտեզում, մինչև որ ճաշեցինք վերջացրինք, և էրնշոուն
ասաց, որ կզնա ու կհարցնի, թե ինչու չուզեց ճաշել. նա կար-
ծեց, թե մենք ինչ-որ բանով վշտացրել ենք տիրոջը:

— Հը, գալի՞ս է,— հարցրեց Քեթրինը, երբ վերադարձավ
նրա քեռու տղան:

— Ոչ,— պատասխանեց նա,— լայց բարկացած չէ.
կարծես, իրոք, իրեն լավ է զգում և ինչ-որ բանից դո՛հ է:
Միայն թե երկու անգամ հետը խոսելով նրան համբերությու-
նից հանեցի և այն ժամանակ հրամայեց ինձ վերադառնալ

ձեզ մոտ. նա զարմացած ասաց, թե ես ինչպես կարող եմ, բացի ձեզնից, մի այլ հասարակություն փնտրել:

Նրա ափսեան դրի բուխարու ցանցի վրա, որ ճաշը շատուշի: Մեկ-երկու ժամ հետո, երբ սենյակը դատարկվեց, նա վերադարձավ տուն, ամենևին էլ շխաղաղված. նույն անբնական, այո, անբնական ուրախությունը փայլում էր նրա սև հոնքերի տակ. դեմքը նույն անարյուն դեմքն էր, նույն սուր-սուր ատամները, որոնք ժամանակ առ ժամանակ մերկացնում էր ինչ-որ ժպիտի նման մի բանով: Գողում էր ամբողջ մարմնով, բայց ոչ այնպես, ինչպես դողում են ցրտից կամ թուլությունից, այլ այնպես, ինչպես դողում է պինդ ձգված լարը, ավելի շուտ ցնցվում էր, քան դողում:

«Մի հարցնեմ տեսնեմ, թե ինչ է կատարվում նրա հետ,— մտածեցի ես,— բա էլ ո՞վ հարցնի»: Եվ ես սկսեցի:

— Դուք որևէ բարի լո՞ւր եք ստացել, միտոր Հիթքլիֆ: Դուք անսովոր կերպով հուզված եք երևում:

— Որտեղի՞ց պիտի բարի լուր ստանամ,— ասաց նա:— Հուզված եմ քաղցից, բայց, ինչպես երևում է, չպետք է ուտեմ:

— Ձեր ճաշը պատրաստ է,— պատասխանեցի ես,— իսկ ինչո՞ւ չեք ուզում ուտել:

— Հիմա չեմ ուզում,— շտապով մրթմրթաց նա:— Կրսպասեմ մինչև ընթրիք: Եվ մեկընդմիջտ, Նելլի, խնդրում եմ զգուշացնել Հերթընին և մյուսներին, որ նրանք ինձնից հեռու մնան. ես չեմ ուզում, որ որևէ մեկը անհանգստացնի ինձ. կամենում եմ այս սենյակում միայնակ լինել:

— Ինչ-որ նոր պատճառ կա, որ նրանց վտարում եք,— հարցրի ես:— Ասեք ինձ, միտոր Հիթքլիֆ, ինչո՞ւ եք այդքան տարօրինակ: Որտե՞ղ էիք այս գիշեր: Ես հարցնում եմ ոչ թե զուտ հետաքրքրությունից, այլ...

— Դու հարցնում ես հենց ամենախսկական հետաքրքրությունից,— ծիծաղելով ընդհատեց նա:— Բայց կպատասխանեմ: Այս գիշեր ես դժոխքի շևնքին էի: Այսօր մոտիկից եմ տեսնում իմ երկինքը. աչքերս հառել եմ դրան՝ հաղիվ երեք ոտնաչափ է մեզ բաժանում: Իսկ հիմա ավելի

լավ կանես, որ հեռանաս: Գու քեզ վախեցնող ոչ մի բան չես տեսնի և շես լսի, եթե միայն չսկսես ինձ լրտեսել:

Օջախը մաքրելուց ու սեղանը հավաքելուց հետո դուրս եկա, ավելի շատ ապշած, քան երբևէ:

Այդ օրը նա տնից այլևս դուրս չեկավ, և ոչ ոք չէր խախտում նրա մենությունը, մինչև որ ժամը ութին ես հարկ համարեցի նրա համար բերել մոմ և ընթրիք, թեև ինձ չէին խնդրել:

Նա նստած էր արմունկներով բաց լուսամուտի դռգին հենված, բայց դուրս չէր նայում. նրա հայացքն ուղղված էր ներսի խավարին: Ածուխները անբոց մխալով այրվել, դարձել էին մոխիր, թխպոտ երեկոյի խոնավ ու մեղմ օդը լցրել էր սենյակը և այնքա՛ն խաղաղ էր, որ կարելի էր ոչ միայն տարբերել Գիմմերթընի մոտակայքում հոսող առվակի խըշխըշոցը, այլև կարկաչունն ու կլկլոցը՝ հղկված մանրաքարերի կամ ջրից դուրս ցցված խոշոր քարերի մեջ:

Գժգոհության բացականչություն դուրս թռավ իմ բերանից, երբ տեսա տխուր օջախը և սկսեցի մեկը մյուսի հետևից փեղկերը փակել, մինչև որ հասա նրա լուսամուտին:

— Կարելի՞ է փակել, — հարցրի ես, որպեսզի արթնացնեմ նրան, որովհետև նա անշարժ էր:

Օջախի կրակի բռնկումը լուսավորեց նրա դեմքը, երբ խոսում էի: Մ՛հ, միստր Լոբվուզ, շեմ կարող արտահայտել, թե ինչ սարսափելի ցնցում զգացի, երբ տեսա նրա դեմքը: Այդ փոս ընկած սև՝ աչքերը: Այդ ժպի՛տն ու մեռելային գունատությունը: Ինձ թվաց, թե իմ առջև կանգնած է ոչ թե միստր Հիթբլիֆը, այլ մի շար ոգի: Վախից ձեռքիս մոմը դեմ առավ պատին և խավարը պարուրեց մեզ:

— Այո, փակիր, — ասաց նա իր սովորական ձայնով: — էհ, ի՛նչ անշնորհքն ես: Ինչո՞ւ էիր մոմը թեք բռնած պահում: Շուտ արա, մեկ ուրիշը բեր:

Սարսափելի հիմար վիճակում դուրս նետվեցի և Ջոզեֆին ասացի.

— Տերը խնդրում է լույս բերել և կրակը վառել:— Ինքս չէի համարձակվում նորից ներս մտնել:

Ջողեֆը թրխկոցով կրակը լցրեց գոգաթիակի մեջ ու գնաց. բայց անմիջապես կրակը հետ բերեց, մյուս ձեռքին ընթրիքի սկուտեղը բռնած և բացատրեց, որ միսար Հիթբլիֆը պառկում է քնելու և մինչև առավոտ ոչինչ չի ուզում ուտել:

Հետո լսեցինք, թե նա ինչպես էր սանդուղքով վեր բարձրանում, բայց գնաց ոչ թե իր սովորական ննջասենյակը, այլ այն սենյակը, որտեղ դրված էր մեկուսացրած մահճակալը. սենյակի լուսամուտը, ինչպես ասել եմ, այնքան լայն էր, որ ամեն ոք կարող էր այդ տեղով անցնել. մտքովս անցավ, որ նա, երևի, որոշել է կեսգիշերային նոր զրոսանք կատարել, բայց չի ուզում, որ մենք կասկածենք այդ մասին:

«Չլինի շար ոգի է կամ արնախում հրեշ,— մտածում էի ես: Կարդացել եմ այդ զազիր, դիվային մարմնացումների մասին: Հետո սկսեցի մտածել այն մասին, թե ինչպես էի նրան դաստիարակել փոքր ժամանակ, թե ինչպես էի նրան խնամել մանկության տարիներին, ինչպես էի հետևում, որ աճի, առնականանա, իր ամբողջ կյանքում քայլել եմ նրա հետ կողք-կողքի: Ինչ հիմարություն է անձնատուր լինել սարսափի այդ զգացումին:

Բայց որտեղից հայտնվեց այդ փոքրիկ սև էակը, որին բարի մարդը ապաստարան տվեց ի կործանումն իրեն,— շշնջում էր սնահավատությունը, երբ նիրհում էի անզգա վիճակում: Եվ կիսաքուն վիճակում սկսեցի ինքս ինձ ձանձրացնել՝ նրա համար հնարելով պատշաճ ազգակցություն, և, կրկնելով զգաստամիտ դատողություններս, ես նորից հետևում էի նրա անցած կյանքը, ճամփաների մուշլ փոփոխություններով. և, ի վե՛րջո, պատկերացնում էի նրա մահն ու թաղումը. հիշում եմ միայն, որ ինձ համար ծայրահեղ տանջալից եղավ այն խնդիրը, թե ինչ մակազրություն թելադրեմ նրա շիրմաքարի համար և ինչպես պայմանավորվեմ գերեզմանափորի հետ. և քանի որ նա ազգանուն չուներ և չէինք կարող ցույց տալ նրա տարիքը, մենք ստիպված հղանք բավարարվել սոսկ «Հիթբլիֆ» բառով: Հենց այդպես էլ եղավ:

Եթե լինեք հանգստարանում, ապա նրա շիրմաքարի վրա կկարդաք միայն անունը և մահվան տարեթիվը:

Այգաբացը վերադարձրեց ինձ իմ ողջամտությունը: Վերկացա և հենց որ աչքերս սկսեցին ինչ-որ բան շոկել, դուրս եկա պարտեզ ստուգելու, թե արդյոք նրա լուսամուտի տակ ոտնահատքեր չկա՞ն: Հետքեր չկային:

«Գիշերել է տանը,— մտածեցի ես,— և այսօր նա իրեն լավ կզգա»:

Սովորականի պես նախաճաշ պատրաստեցի տնեցիներին համար, բայց Հերթընին ու Քեթրինին ասացի, որ արագ ուտեն վերջացնեն, քանի դեռ տերը ցած չի իջել. նա ուշ է պառկել քնելու: Նրանք զերադասեցին նախաճաշել պարտեզում ծառերի տակ, և ես նրանց համար այդտեղ հարմարեցրի մի փոքրիկ սեղան:

Նորից ներս մտնելով, ես ներքևում տեսա միստր Հիթքլիֆին: Նա և Ջոզեֆը խոսում էին դաշտային աշխատանքների վերաբերյալ ինչ-որ գործի մասին. տերը հասկանալի ու մանրամասն ցուցումներ էր տալիս քննարկվող գործի առիթով, բայց խոսում էր արագ և շարունակ նայում էր շուրջը, իսկ դեմքին՝ նույն հուզված արտահայտությունն էր, նույնիսկ է՛լ ավելի հուզված:

Երբ Ջոզեֆը սենյակից դուրս եկավ, նա նստեց այնտեղ, որտեղ սովորաբար նստում էր, և ես նրա առջև դրեցի մի գավաթ սուրճ: Նա գավաթը մոտ քաշեց, ապա ձեռքերը դրեց սեղանին և հայացքը հառեց հակառակ կողմի պատին ու սկսեց դրա մի որոշակի կտորը դիտել. և նրա անհանգիստ ու շողացող աչքերը այնպիսի ազահ հետաքրքրությամբ էին դրա վրա այս ու այն կողմ հաժում, որ ինչպես ինձ թվաց, մի պահ չէր շնչում:

— Դե կերե՛ք,— բացականչեցի ես, հացը հրելով նրա ձեռքի կողմը:— Կերեք և խմեք, քանի դեռ տաք է: Սուրճը մի ժամ կլինի, որ սպասում է ձեզ:

Նա ինձ չէր նկատում, բայց և այնպես ժպտում էր: Ես ավելի շուտ կուզենայի նրան տեսնել ատամները կոճտացնելիս, քան ժպտալիս:

— Միստր Հիթքլիֆ: Տե՛ր իմ,— ճշացի հա:— Ի սեր

աստծո, այնպես մի նայիք, որ կարծես տեսնում եք երկնային մի տեսիլք:

— Ի սեր աստծո, այդպես բարձր մի զոռացեք,— պատասխանեց նա:— Հապա նայեք ձեր շուրջը և ասեք, մենա՞րկ ենք մենք այստեղ:

— Իհարկե,— եղավ իմ պատասխանը,— իհարկե, մենակ ենք: Այնուամենայնիվ, ես ակամայից հնազանդվեցի, ասես այնքան էլ հավատացած չէի:

Ձեռքի մի շարժումով նա սեղանի վրայի ամանները հեռացրեց իրենից և հակվեց առաջ, որ էլ ավելի լավ նայի:

Այժմ ես հասկացա, որ նա պատին շէր նայում, շնայած ես միայն նրան էի տեսնում, բայց պարզ էր, որ նրա հայացքը սևեղծած էր իրենից երկու յարդ հեռու գտնվող ինչ-որ մի բանի: Եվ, ինչ էլ որ լիներ դա՝ թե ծայրահեղ նուրբ հաճույք, և թե ծայրահեղ սուր տառապանք էր առաջացնում: Համենայն դեպս, նրա դեմքի տառապալից ու խանդավառ արտահայտությունը հանգեցնում էր այդ մտքին:

Երևակայական առարկան անշարժ չէր. Հիթքլիֆի աչքերը հետևում էին դրան անխոնջ աշարջությամբ, նույնիսկ, երբ խոսում էր ինձ հետ, աչքերը հրբեք չէր կտրում դրանից: Իզուր էի նրան հիշեցնում, որ նա երկար ժամանակ է, որ ոչինչ չի ուտում, իսկ եթե զիջելով իմ հորդորներին, մի թեթև շարժվում էր, որ մի որևէ բան վերցնի կամ ձեռքը պարզում էր, որ մի կտոր հաց վերցնի, մատները փակվում, սեղմվում էին, նախքան մոտենալը, և անշարժ մնում սեղանի վրա, մոռանալով, թե ինչի համար էր ձեռքը պարզել:

Նստել, համբերությունամբ փորձում էի ցրել նրան ուշափողությունը կլանող մտորմունքից, երբ նա, բորբոքված, վերակացավ և ասաց, թե ինչո՞ւ իրեն հնարավորություն չեմ տալիս ուտել այն ժամանակ, երբ ինքն է կամենում, ապա ավելուցրեց, որ մյուս անգամ իզուր շսպասեմ, կարող եմ ամեն ինչ թողնել սեղանի վրա և հեռանալ:

Նյս խոսքերն ասելուց հետո՞ նա տնից դուրս եկավ, երբ զի միջով ձգվող շավղով դանդաղորեն շարժվելով՝ չէր ցցավ դարպասի հետևում:

ժամերը սահում էին տագնապով լի. վրա հասավ երև-
կոն... Մինչև ուշ գիշեր ես չէի պառկում, իսկ եթե պառկում
էլ էի, չէի կարողանում քնել: Նա վերադարձավ կես գիշերն
անց և ննջասենյակ գնալու փոխարեն փակվեց ներքևի սեն-
յակում: Ես ականջ էի դնում, անհանգիստ շուռումուռ գալիս,
և, ի վերջո, հագնվեցի ու ցած իջա: Չափազանց տանջալից
էր պառկած մնալ անկողնում և ուղեղս անհանգստացնել
հարյուրավոր վատ բաներ կասկածելով:

Ես տարբերում էի միստր Հիթքլիֆի ոտնաձայնը. նա ան-
դադար քայլելով շափում էր հատակը. և շատ հաճախ
տնքոցի նմանվող իր խոր շնչառությամբ խախտում էր լուռ-
թյունը: Կցկտուր բառեր էր փնթփնթում. միակ բանը, որ
կարողացա հասկանալ՝ Քեթրինի անունն էր, որ զուգորդվում
էր խանդաղատանքի կամ տանջանքի վայրագ արտահայ-
տություններով: Այդ անունը նա արտասանում էր այնպես,
կարծես դիմում էր ներկա եղող մի մարդու՝ հանգիստ ու
հաստատ և հոգու խորքից:

Ես սիրտ չէի անում գնալ և ուղիղ մտնել նրա սենյակը,
բայց ուզում էի նրա ուշադրությունը շեղել իր անունընկերից
և դրա համար զբաղված էի խոհանոցում վառարանի մոտ՝
խառնում էի կրակը. ապա սկսեցի մաքրել, հանել մոխիրը:
Դա ավելի շուտ զրավեց նրա ուշադրությունը, քան ես
ակնկալում էի: Նա անմիջապես դուռը բացեց և ասաց.

— Նեյլի, մոտ եկ. արդեն առավոտ է: Ներս արի, մո-
մը բեր:

— Ժամը չորսն է խփում,— պատասխանեցի ևս,— մոմ
եք ուզում, որ տանեք վե՞րև. դուք կարող եք այն վառել այս
կրակից:

— Ոչ, շեմ ուզում վերև գնալ,— ասաց նա:— Ներս եկ,
կրակը վառիր և արա ինչ-որ հարկավոր է:

— Նախ պետք է ածուխները լավ կարմրացնել այստեղ,
և նոր միայն կրակը ներս բերել,— առարկեցի ես և ամոռը
մոտ քաշելով, վերցրի փութսը:

Այդ միջոցին նա հետուառաջ էր անում գրեթե խելագար
վիճակում. նրա ծանր հառաչանքները այնքան հաճախակի

Լին հաջորդում մեկը՝ մյուսին, որ թվում էր, թե ժամանակ չէր մնում շնչելու:

— Երբ լույսը բացվի, ես կուղարկեմ Գրինի հետևից,— ասաց նա:— Ուզում եմ նրան մի քանի իրական հարցեր տալ, քանի դեռ կարողանում եմ մտքերս զբաղեցնել այդպիսի բաներով և քանի դեռ ի վիճակի եմ հանգիստ գործելու: Մինչև հիմա կտակս չեմ գրել. թե ինչպես պետք է տնօրինեմ իմ սեփականությունը՝ ոչ մի կերպ չեմ կարողանում որոշել: Կուզենայի այն ոչնչացնել, վերացնել երկրի երեսից:

— Ես այդպես չէի ասի, միստր Հիթքլիֆ,— միջամտեցի ես:— Ձեր կտակը մի փոքր հետաձգեք. դեռ ժամանակ կունենաք զղջալու ձեր կատարած բազմաթիվ անարդարացի գործերի համար: Երբեք չէի կարծում, որ ձեր ջղերը կարող են այդպես քայքայվել. հիմա, սակայն, ձեր ջղերը զարմանալիորեն խանգարված են, և գրեթե լիովին հենց ձեր սեփական մեղքով: Այն վերջին երեք օրը, ինչպես դուք եք անցկացրել, կտապալեր նաև հսկային: Մի փոքր կերեք և սյուսկեք քնեք: Հապա մի նայեք ձեզ հայելու մեջ և կտեսնեք, թե ինչքան անհրաժեշտ են թե՛ մեկը, և թե՛ մյուսը. ձեր այտերը փոս են ընկել, իսկ աչքերը արյունով լցվել, դուք նման եք մի մարդու, որը մեռնում է քաղցից և կուրանում է անքնությունից:

— Ես մեղավոր չեմ, որ չեմ կարողանում ոչ ուտել, ոչ քնել,— առարկեց նա:— Հավատացնում եմ, դա կատարվում է առանց որոշակի դիտաչորություն. ես կուտեմ ու կքնեմ հենց որ կարողանամ: Բայց դա նույնն է, թե ջրում խեղդվող մարդուն առաջարկես, որ հանգստանա, երբ մի շարժումով նա կարող է ափ հասնել: Նախ ևս պետք է ափ հասնեմ. այն ժամանակ կհանգստանամ: Լավ, միստր Գրինը հարկավոր չէ. իսկ ինչ վերաբերում է իմ զղջալուն անարդար գործերիս համար՝ ոչ մի անարդար բան չեմ արել և զղջալու բան չունեմ: Ես շափագունեց երջանիկ եմ, և, սակայն, բավականաչափ երջանիկ չեմ: Իմ հոգին իր երանություն մեջ սպառնում է մարմինս, բայց չի բավարարվում:

— Դուք երջանի՞կ եք, տեր իմ,— ճշացի ես:— Դա տարօրինա՞կ երջանկութիւնն է: Եթէ դուք լսեիք ինձ առանց զայրանալու, ես մի խորհուրդ կտայի, որը է՛լ ավելի կերջանկացնէր ձեզ:

— Ի՞նչ խորհուրդ,— հարցրեց նա:— Դե, խոսեք:

— Ինքնեդ գիտեք, միստր Հիթքլիֆ.— ասացի ես,— տասներեք տարեկանից սկսած դուք ապրել եք եսամուլական, ոչ քրիստոնեական կյանքով և, հավանաբար, հաղիվ թէ այդ ժամանակամիջոցում գեթ մեկ անգամ ձեռքում բռնած լինեք աստվածաշունչը դուք երևի, մոռացել եք, թէ սուրբ գրքում ինչի մասին է խոսվում, իսկ այժմ ժամանակ չունեք, որ փնտրեք հասկանաք: Մի՞թէ վնասակար կլինէր, որ ուղարկեիք որևէ մեկի հետևից՝ մի որևէ քահանայի, միևնույն է, թէ ինչ հավատի կլինէր նա, որ կարողանար բացատրել ձեզ աստվածաշունչը, ցույց տար, թէ ինչքան եք մոլորվել ու հեռացել նրա պատվիրաններից և պիտանի չեք լինի երկնքի համար, եթէ մինչև մեռնելը շփոխվեք:

— Ոչ միայն չեմ զայրանում, նեղի, ես ձեզ շատ պարտական եմ,— ասաց նա,— որովհետև դուք հիշեցրիք ինձ, թէ ինչ կարգադրութիւններ պիտի անեմ իմ թաղման կապակցութեամբ: Թող ինձ գերեզմանատուն տանեն երեկոյան դեմ: Դուք և Հերթընը կարող եք, Լթե ուզում եք, ուղեկցել ինձ և հատկապես հետևեք, որ գերեզմանափորը երկու դագաղի մասին իմ ցուցմունքները կատարի: Ոչ մի քահանա հարկավոր չէ և ոչ էլ դամբանական խոսք. ասում եմ ձեզ, որ համարյա հասել եմ իմ երկինքը. ուրիշների երկինքն ինձ համար ընդհանրապես ոչ մի արժեք չունի և բոլորովին ցանկալի չէ:

— Ենթադրենք, դուք կպնդեք ձեր համառ ծոմապահութեան վրա և այդպես էլ կմեռնեք, բայց չէ որ կարգելին ձեզ թաղել գերեզմանատանը,— ասացի ես՝ զայրանալով նրա անաստված անտարբերութեան վրա:— Դա ձեզ դո՞ւր կգա:

— Չեն արգելի,— առնրկեց նա:— Իսկ Լթե արգելեն, դուք ինձ թաքուն կտեղափոխեք. և Լթե դուք այդ շանք, դուք փաստերով կհամոզվեք, որ մեռյալները չեն դադարում գոյութիւն ունենալուց:

Երբ լսեց, որ ասնը մյուսներն էլ սկսեցին շարժվել, նա մեկուսացավ իր որջը, և ես ազատ շունչ քաշեցի: Բայց օրվա երկրորդ կեսին, երբ Զոզեֆն ու Հերթընը գնացին աշխատելու, նա կրկին հայտնվեց խոհանոցում և հուզված հայացքով խնդրեց ինձ գալ ու նստել տանը. ուզում էր, որ մեկը մտաը լինի:

Նա հրաժարվեցի՝ անկեղծորեն ասելով, որ նրա տարօրինակ խոսակցություններն ու վարքը վախեցնում են ինձ, և որ նրա ընկերակցության մեջ միայնակ գտնվելու ոչ ուժ ունեմ, ոչ էլ ցանկություն:

— Դուք իսկապես ինձ շարագործ եք համարում,— ասաց նա, շարագուշակ ծիծաղելով,— մի չափազանց նողկալի բան, որի հետ մի տանիքի տակ ապրելն անվայել է:

Ապա, դառնալով դեպի Քեթրինը, որն այդտեղ էր, և նրա գալուն պես թաքնվեց իմ թիկունքում, կիսածաղրական տոնով ավելացրեց.

— Չե՞ք գա, թոչնակս, չեմ վնասի ձեզ: Ո՛չ: Ձեզ համար ես սատանայից էլ վատն եմ: Դե ինչ, այստեղ կա մեկը, որ չի խուսափի իմ ընկերությունից: Բայց, վկա է աստված, նա անողորք է: Օ՛հ, անիծյալ: Դա անասելի շատ է, քան կարող են տանել միսն ու արյունը՝ նույնիսկ իմը:

Նա այլևս ոչ մեկի ընկերակցությունը չէր փնտրում: Երբ սկսեց մթնել, գնաց իր սենյակը. ամբողջ գիշեր, լուսաբացից հետո էլ մենք շարունակ լսում էինք նրա տնքոցն ու շշնջոցը: Հերթընը ուզում էր ներս մտնել, բայց ես նրան խնդրեցի, որ գնա և կանչի միստր Քեննեթին, որպեսզի միասին մտնեն նրա մոտ:

Երբ բժիշկը եկավ, ես պահանջեցի, որ մեզ ներս թողնեն և փորձեցի դուռը բաց անել, բայց այն կողպած էր ներսից, իսկ Հիթքլիֆը մեզ ուղարկեց գրողի ծոցը: Նա ասաց, որ ինքը լավ է և ցանկացավ, որ իրեն հանգիստ թողնենք, ուստի բժիշկը թողեց, գնաց:

Հաջորդ երեկո շատ խոնավ էր. տեղատարափ անձրևը յուշում էր մինչև լուսաբաց: Երբ սուսվոտյան դուրս եկա

պատույտ գործելու տան շուրջը, տեսա, որ տիրոջ լուսամուր
լայն բացված էր և անձրևն ուղիղ խփում էր ներս:

Ուրեմն նա մահճակալում պառկած չէ,— մտածեցի ես:—
Հորդ անձրևից լրիվ կթրջվեր: Նա կամ վեր է կացել, կամ էլ
դուրս է գնացել: Աղմուկ չեմ բարձրացնի, համարձակորեն
ներս կմտնեմ ու կստուգեմ:

Հաջողությամբ դուռը մյուս բանալիով բաց արի, մոտ
վազեցի մահճակալին՝ սենյակը դատարկ էր: Արագ հետ քա-
շելով միջնորմը, ներս նայեցի: Միստր Հիթքլիֆն այնտեղ
մեջքի վրա պառկած էր անկողնում: Նրա աչքերը հանդիպեցին
իմին այնպիսի սուր ու շար հայացքով, որ ես ցնցվեցի:
Թվում էր, թե նա ժպտում է:

Մտքովս շանցավ, որ նա մեռած է. բայց դեմքն ու վիզը
թրջվել էին անձրևից. անկողնից կաթկթում էր, և նա բո-
լորովին անշարժ էր: Լուսամուտի փեղկը կախված ճոճվում
էր, լուսամուտի զոզին դրած ձեռքը քերծվել էր, պոկված
մաշկից արյուն շէր ծորում, և երբ ես մատներս կայցրի ձեռ-
քին, այլևս չէի կարող կասկածել՝ նա մեռել էր, անդա-
յացել:

Ես լուսամուտը փակեցի. նրա երկար սև մազերը սան-
րեցի՝ ճակատից հետ տանելով փորձեցի աչքերը փակել,
որպեսզի, եթե հնարավոր է, հանգչնեմ դրանց սարսափելի,
ասես կենդանի սևեռուն հայացքը, քանի դեռ ոչ ոք չէր տեսել
այն: Աչքերը չէին փակվում, որոնք կարծես, ծաղրում էին
իմ ջանքերը, բաց շուրթերն ու սուր-սուր սպիտակ ատամ-
ները նույնպես ծաղրում էին: Վախի նոր նոպայով բռնված՝
ես ճշալով կանչեցի Ջոզեֆին: Ջոզեֆը քստքստացնելով եկավ
վերև և աղմուկ բարձրացրեց, բայց վճռականորեն հրաժար-
վեց դիպչել նրան:

— Սատանան նրա հոգին հանեց, տարավ,— ճշում էր
ես:— Իմ կարծիքով, թող վերցնի նաև նրա մարմինը, այն
հարկավոր չէ: Է՛հ, ինչ շարագործ ննչեցյալ է, ատամները
բացվել են, հապա մի նայիր. և ծեր մեղապարտը ատամ-
ները բաց անելով նրա տնազն արեց:

Ինձ թվաց, թե նա հենց հիմա կտկտի վազվզել մահճակալի

շորջը, բայց հանկարծ կանգ առավ, ձնկի եկավ, ձեռքերը բարձրացրեց և սկսեց գոհություն արտահայտել բարձրյալին այն բանի համար, որ օրինական սեփականատերը և հին առհմը վերահաստատվել են իրենց իրավունքների մեջ:

Այդ սարսափելի դեպքից ես ընկճվել էի. հիշողությունս անխուսափելի ճնշող տխրություն մեղրադարձավ անցած-դնացած դեպքերին: Բայց խեղճ Հերթընը միակ մարդն էր, որ վիշտ էր ապրում: Ամբողջ գիշեր ննջեցյալի մոտ նստած արտասվում էր դառնորեն: Սեղմում էր նրա ձեռքը, համբուրում կծու հեզնական վայրագ դեմքը, որին մյուս բոլոր մնացածները խուսափում էին նայել. նա ողբում էր խոր կակիծով, որը, բնականաբար, բխում էր նրա ազնիվ սրտից, թեև այն կոփված պողպատի պես ամուր էր:

Միտոր ֆեննեթը դժվարանում էր որոշել, թե տանտերը ինչ հիվանդությունից մեռավ: Ես նրանից թաքցրի այն, որ նա շորս օր ոչինչ չէր կերել, վախենալով, որ դա կարող էր հանգեցնել բարդությունների: Բացի այդ, ես համոզված էի, որ նա դիտավորյալ չէր խուսափում ուտելիքից. դա նրա տարօրինակ հիվանդության ոչ թե պատճառն էր, այլ հետևանքը:

Չնայած ամբողջ շրջանի զայրույթին, մենք նրան թաղեցինք այնպես, ինչպես կամեցել էր ինքը: Միայն էրնշոուն, ես, գերեզմանափորն ու դագաղը տանող վեց հոգին էինք ուզեկցում ննջեցյալին:

Այդ վեց հոգին հենց որ դագաղը իջեցրին գերեզման, թողին հեռացան: Մենք մնացինք տեսնելու, թե ինչպես էին գերեզմանը հողով ծածկում: Հերթընը արտասվալից դեմքով փորեց, հավաքեց կանաչ ճիմահողը և ծածկեց ծխաթույր գերեզմանը, որը հիմա էլ նույնքան խնամքով հարդարված ու կանաչապատ է, որքան և երկու հարևան թմբերը, և ես հուսով եմ, որ բնակիչը մյուս երկուսի պես պինդ քնած է: Բայց գյուղի մարդիկ, եթե հարցնեք նրանց, կերզվեն աստվածաշնչով, որ նա շրջում է. ոմանք ասում են, որ հանդիպել են նրան եկեղեցու մոտ և ցախիների թփուտների մեջ և նույնիսկ այս տան մեջ: Դատարկ բաներ են, կասեք դուք, ես էլ նույն կարծիքին եմ: Բայց խոհանոցում կրակի մոտ

նստած այդ ծերուկը պնդում է, որ երկուսին էլ տեսել է միասոր
Հիթթըլիֆի լուսամուտից դուրս նայելիս անձրևային գիշեր-
ներին նրա մահվան օրից ի վեր. ինձ հետ էլ մի տարօրինակ
բան պատահեց մեկ ամիս առաջ:

Մի անգամ երեկոյան դեմ գնում էի Ազարակատուն.
մութ երեկո էր, սպառնացող որոտը մոտենում էր, և հենց
Մուկգին հողմերի դարավանդի շրջադարձի մոտ հանդիպեցի
մի փոքրիկ տղայի, որը առջևն արած քշում էր մի ոչխար,
երկու գառնուկի հետ միասին: Նա սոսկալի լաց էր լինում,
և ես կարծեցի, թե գառնուկները են ենթարկվում նրան:

— Ի՞նչ է պատահել, փոքրիկս,— հարցրի ես:

— Այնտեղ կանգնած են Հիթթըլիֆը և մի կին, այ այն
սարի տակ,— ասաց նա, հեկեկալով,— վախենում եմ նրանց
մոտով անցնել:

Ես ոչինչ չէի տեսնում, բայց ոչ տղան, ոչ էլ ոչխարները
տեղից չէին շարժվում. ուստի ես խորհուրդ տվի նրան, որ
ներքևի ճանապարհով անցնի գնա:

Ցախիների դաշտերով մենակ անցնելիս՝ նա, երևի, հիշել
է ուրվականների մասին լսած այն հիմարաբանությունները,
որ նրա ներկայությամբ պատմել են իր ծնողներն ու բարե-
կամները. դրա համար էլ նրա աչքին ուրվականներ էին
երևում: Բայց, այնուամենայնիվ, ես հիմա շեմ սիրում մութն
քնկնելուց հետո տնից դուրս գալ, և շեմ սիրում միայնակ
մնալ այս մոռյլ տան մեջ. ոչինչ չեմ կարող անել ինձ հետ,
ես ուրախ կլինեմ, երբ նրանք այստեղից տեղափոխվեն Ազար-
ակատուն:

— Ուրեմն նրանք պատրաստվում են գնալ Ազարակա-
տուն,— ասաց լոքվուղը:

— Այո,— պատասխանեց միսիս Դինը,— հենց որ ամուս-
նանան. հարսանիքը նշանակված է նոր տարվա օրը:

— Հապա ո՞վ է ապրելու այստեղ:

— Ջոզեֆը կմնա, որ հետևի տանը և, գուցե, մի տղա
էլ վերցնի, որ մենակ չլինի: Նրանք կտեղավորվեն խոհանո-
ցում, իսկ մնացած ամեն ինչը կողպեքի տակ կպահվի:

— ... Եվ կտրվի ուրվականներին, որոնք կցանկանան
ապրել այս տանը,— ավելացրի ես:

— Ոչ, միտար Լորվուդ,— ասաց Նեյլին, գլուխը տարուբերելով,— ես հավատում եմ, որ մեռածները խաղաղ ենջում են, բայց լավ չէ, երբ այդպիսի թեթևամտությամբ են խոսում նրանց մասին:

Այդ պահին պարտեզի դարպասը բացվեց. զբոսաշրջիկները վերադառնում էին:

— Նրանք ոչ մի բանից վախ չունեն,— փնթփնթացի ես՝ լուսամուտից նայելով, թե ինչպես են մոտենում:— Նրանք երկուսով խիզախությամբ կգիմավորեն սատանի անթիվ զորքերին:

Սրբ նրանք բարձրացան առմուտք և կանգ առան, որ մի վերջին հայացք գցեն լուանյակին կամ, ավելի ճիշտ, իրար նայեն այդ լուսի տակ, ես անհաղթահարելի ցանկություն զգացի, որ խուսափեմ նրանց նորից հանդիպելուց: Ինչ-որ բան որպես հիշատակ ինձնից խոթելով միսիս Դինի ձեռքը և ուշադրություն շղարձելով անքաղաքավարության մասին ինձ արած նրա հանդիմանական խրատներին, խոհանոցի միջով անհետացա, հենց որ նրանք բաց արին տան դուռը և այնպես, ես կհաստատեի Ջոզեֆի կարծիքը տնտեսուհու թեթևաբարո, անխոհեմ արարքների մասին, եթե, բարեբախտաբար, ծերուկը ինձ հարգարժան մի մարդ չհամարեր, երբ իր ոտքերի տակ լսել էր սովերենի ¹ քաղցր հնչյունը:

Իմ վերադարձն ավելի երկար տևեց, որովհետև ես շեղվեցի ճանապարհից, ուղղություն վերցրի եկեղեցու կողմը: Կանգ առնելով պատերի տակ, տեսա, որ ավերումը շատ արագ էր կատարվել հենց այդ յոթ ամսվա ընթացքում. լուսամուտներից շատերը, առանց ապակիների, նման էին սեանցքերի. իսկ տանիքի հերձաքարերը տեղ-տեղ տանիքի գծից վերև դուրս էին ցցվել, որպեսզի աստիճանաբար ցած թափվեն վրա հասնող աշնան փոթորիկներից:

Ես սկսեցի փնտրել և շուտով գտա երեք շիրմաքար ճահիճի ծայրալանջին. մեջլեղիները գորշագույն էր և կիսով չափ թաղված էր ցախիների մեջ. միայն էդգար Լինթընի շիրմաքարը՝ ծածկված ճիմով ու մամուռով, մասամբ ներդաշնա-

¹ Ռսկե դրամ (անգլ.):

կում էր դրան. կանաչը փոփելով տարածվել էր մինչև ոտքերը, իսկ Հիթքլիֆինը տակավին մերկ էր:

Ես այդ բարի երկնքի տակ հարկ եղածից ավելի երկար մնացի. նայում էի թիթեռներին, որոնք թռչկոտում էին հավամբոս թփերի ու զանգակածաղիկների մեջ, ականջ էի դնում քամու մեղմ շնչին խոտի մեջ, և զարմանում էի, թե մարդիկ ինչպես կարող են մտածել, որ հանգիստ քուն շունեն նրանք, ովքեր քնել են այս խաղաղ հողի տակ:

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլուխ առաջին	3
Գլուխ երկրորդ	10
Գլուխ երրորդ	21
Գլուխ չորրորդ	38
Գլուխ հինգերորդ	43
Գլուխ վեցերորդ	54
Գլուխ յոթերորդ	63
Գլուխ ութերորդ	77
Գլուխ իններորդ	89
Գլուխ տասներորդ	110
Գլուխ տասնմեկերորդ	131
Գլուխ տասներկուերորդ	146
Գլուխ տասներեքերորդ	163
Գլուխ տասնչորսերորդ	173
Գլուխ տասնհինգերորդ	190
Գլուխ տասնվեցերորդ	201
Գլուխ տասնյոթերորդ	208
Գլուխ տասնութերորդ	230
Գլուխ տասնիններորդ	243
Գլուխ քսաներորդ	249
Գլուխ քսանմեկերորդ	256
Գլուխ քսաներկուերորդ	278
Գլուխ քսաներեքերորդ	286
Գլուխ քսանչորսերորդ	297
Գլուխ քսանհինգերորդ	310

Գլուխ քսանվեցերորդ	515
Գլուխ քսանյոթերորդ	321
Գլուխ քսանութերորդ	337
Գլուխ քսանիններորդ	346
Գլուխ երեսուներորդ	354
Գլուխ երեսունմեկերորդ	362
Գլուխ երեսուներկուերորդ	369
Գլուխ երեսուներեքերորդ	384
Գլուխ երեսունչորսերորդ	395

Գրական-գեղարվեստական հրատարակություն

ԷՄԻԼԻ ԲՐՈՆՏԵ

Մռլեգին հողմերի դարավանդ
Վեպ

Литературно-художественное издание
ЭМИЛИ БРОНТЕ

ГРОЗОВОЙ ПЕРЕВАЛ

Роман
(На армянском языке)

Խմբ. վարիչ՝ Գ. Գ. Եսայան

Խմբագիր՝ Գ. Գ. Խաչատրյան

Նկարիչ՝ Հ. Մ. Մատուռյան

Գեղ. խմբագիր՝ Հ. Ս. Մալխասյան

Տեխ. խմբագիր՝ Ս. Գ. Շահվերդյան

Վերստուգող սրբագրիչ՝ Հ. Ն. Զարյան

ИБ 6840

Հանձնված է շարվածքի 17.01.91: Ստորագրված է տպագրության
17.09.91: Զտփսը՝ $84 \times 108^{1/32}$: Քուղթ՝ տպագր. № 2: Տառատեսակ
«Գրքի սովորական»: Տպագրություն բարձր, 21,84 պայմ. տպ. մամ.,
22,26 պայմ. ներկ. թերթ., 18,8 հրատ. մամ.: Տպաքանակ 30.000:
Պատվեր՝ 525: Գինը՝ պայմանագրային:

«Նաիրի» հրատարակչություն, Երևան—9, Տերյան 91:

Издательство «Наири», Ереван-9, ул. Теряна, 91.

Հակոբ Մեղապարտի անվան պոլիգրաֆիական արտադրական միա-
վորում, Երևան-9, Տերյան 91:

Հայաստանի Հանրապետության նախարարների խորհրդին առընթեր
մամուլի վարչություն:

Полиграфическое производственное объединение имени Акопа
Мегапарта Ереван-9, ул. Теряна, 91

Управление по печати при Совете Министров Республики
Армения.